



Հայ-գերմանական
դիվանագիտական
հարաբերությունների
30 տարի



**Հայ-գերմանական
դիվանագիտական
հարաբերությունների 30 տարի**

Երևան
2022

ՀՏԴ 327
ԳՄԴ 66.4
Հ 240

Հայ-գերմանական դիվանագիտական հարաբերություն-
Հ240 ների 30 տարի.—Եր.: Կոնրադ Ադենաուեր հիմնադրամ,
2022.— 496 էջ:

ՀՏԴ 327
ԳՄԴ 66.4

ISBN 978-9939-1-1579-5
© Կոնրադ Ադենաուեր հիմնադրամ, 2022

Բովանդակություն

ԱՌԱՋԱԲԱՆ

Կոնրադ Ադենաուեր հիմնադրամ (գ. մ.)

(Շտեֆան Մալերիուս) 7

Գերմանա-հայկական ֆորում (գ. մ.)

(Ալբերտ Հ. Վայլեր) 11

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Գերմանա-հայկական հարաբերություններ.

նոր հնարավորություններ և հեռանկարներ

գերմանական տեսանկյունից (Թիլ Մանսման) 15

Գերմանա-հայկական հարաբերություններ.

նոր հնարավորություններ և հեռանկարներ

հայկական տեսանկյունից (Րաֆֆի Քանդյան) 23

ԳԼՈՒԽ I. ՀԱՅ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 41

Հայ-գերմանական տնտեսական

հարաբերությունների առանցքային ուղղությունները

(Մերի Նավասարդյան, Սոս Խաչիկյան) 43

Տնտեսական գործակցությունը նպաստում է քաղաքական

երկխոսությանը (Հարցազրույց Շտեֆան Քեզեքայնի հետ) 64

ԳԼՈՒԽ II. ՀԱՅ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ	71
Հայ-գերմանական քաղաքական հարաբերությունների զարգացումը Հայաստանի եվրոպական քաղաքականության համատեքստում (<i>Աշոտ Ալեքսանյան</i>).....	73
Հայաստանի և Գերմանիայի միջև իրավական համագործակցության հիմնական ուղղությունները. հետադարձ հայացք – 30 տարի (<i>Օթթոն Լուիսթերհանդթ</i>).....	114
Գերմանա-հայկական դիվանագիտական հարաբերություններ. հիշողություն և հեռանկար (<i>Հարցազրույց Աշոտ Սմբատյանի հետ</i>).....	162
ԳԼՈՒԽ III. ՀԱՅ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՈԼՈՐՏՈՒՄ	181
Ակադեմիական շարժունության դերը բարձրագույն կրթության ոլորտում հայ-գերմանական համագործակցության մեջ (<i>Նարեկ Գալստյան</i>).....	183
Գերմանագիտության զարգացումը անկախ Հայաստանում (<i>Ելենա Էթարյան</i>).....	232
Հայագիտության դերը Գերմանիայում (<i>Արմենուհի Դրոստ-Արզարյան</i>).....	256
Բավարար չէ, բայց անհրաժեշտ է. մշակույթն ու կրթությունը միջազգային հարաբերություններում (<i>Էքարթ Շթրաթենշույթեն</i>).....	280
Լռելը ինձ վրա մեծ հետք է թողել (<i>Հարցազրույց Լաուրա Քվիրթնիայի հետ</i>).....	304

Մշակույթը ունիվերսալ լեզու է (Հարցազրույց Կատերինա Փոլադյանի հետ).....	308
Կամուրջներ՝ մշակույթի և կրթության միջոցով (Հարցազրույց Նաթիա Միկելաձե-Բախտոլիանիի հետ)	313
 ԳԼՈՒԽ IV. ՀԱՅ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	325
Երկար ճանապարհի դեպի պառլամենտական ճանաչում. Հայոց ցեղասպանությունը՝ ետնապատկերներ և փոխկապակցություններ (Թեսսա Հոֆման).....	327
Յոհաննես Լեփսիուսը և գերմանա-հայկական հարաբերությունների պատմական ժառանգությունը (Ռոյ Քնոքե).....	366
Երկկողմ հարաբերությունների զարգացումը Հայաստանի և Գերմանիայի միջև (Մարտին Թովմասյան).....	386
Ազատության մարտահրավերը (Հարցազրույց Աշոտ Ոսկանյանի հետ).....	436
ՎԵՐՋԱԲԱՆ	
Մի հաջող գործընթացի հանրագումար (Հանս-Յոախիմ Զոլմա)	453
ՀԱՎԵԼՎԱԾ	
Հեղինակների անվանացանկ	475
Խմբագրական	493

Առաջարան

Կոնրադ Ադենաուեր հիմնադրամ (գ. մ.)

Կոնրադ Ադենաուեր հիմնադրամը (KAS) 2008 թվականից իր գրասենյակով ու թիմով գործունեություն է ծավալում Երևանում՝ աջակցելու ժողովրդավարական վերափոխման գործընթացին և Եվրամիության հետ Հայաստանի մերձեցմանը: Ընդգրկուն կրթաթոշակային ծրագրով և համալսարանների, քաղաքական ինստիտուտների ու քաղաքացիական հասարակական կազմակերպությունների հետ սերտ համագործակցությամբ «Կոնրադ–Ադենաուեր» հիմնադրամը ավելի քան 14 տարի աջակցել է բազմաթիվ նախագծերի ու նախաձեռնությունների իրականացմանը՝ ուղղված լավ կառավարմանը, իրավական պետության և պետականության ամրապնդմանն ու մարդու իրավունքների պահպանմանը:

Հայաստանը, որը Վրաստանի հետ մեկտեղ Կովկասի տարածաշրջանում միակ ժողովրդավարական ձևավորված երկիրն է, գնալով ավելի է կողմնորոշվում դեպի Եվրոպա, փնտրում է նոր դաշնակիցներ՝ այդ թվում հույսը կապելով նաև Գերմանիայի հետ, որը պատմական պատասխանատվություն է կրում, քանի որ Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ բացահայտորեն հանդուրժել էր Օսմանյան կայսրության իրականացրած Հայոց ցեղասպանությունը: Այդ պատճառով էլ 2016 թվականի հունիսի 2–ին Գերմանիայի Բունդեսթագի կողմից հայերի Ցե-

դասպանության ճանաչումը շրջադարձային կետ եղավ գերմանա-հայկական հարաբերություններում:

Հայաստանը Եվրոպայի քրիստոնեական մշակույթի ամենահին ազգերից է. 301 թվականին Տրդատ III թագավորը մկրտվեց և մկրտել տվեց իր հպատակներին, որի շնորհիվ երկիրը քրիստոնեությունն ընդունեց որպես պետական կրոն, որի ավանդույթը արդեն ավելի քան 1700 տարվա պատմություն ունի: Հայկական գրավոր մշակույթը սկսել է զարգանալ դեռևս 5-րդ դարի սկզբին, իսկ Երևանի Մատենադարանի կենտրոնական արխիվում պահվող ավելի քան 17000 ձեռագրերի հավաքածուն 1997 թվականից ՅՈՒՆԵՍԿՕ-ի՝ Փաստաթղթերի համաշխարհային ժառանգության ցանկում է: 1990 թվականի օգոստոսին Հայաստանը դարձավ առաջին հանրապետությունը բալթյան երկրներից հետո, որը հայտարարեց Խորհրդային Միությունից իր անկախանալու մասին: Գերմանիայի Դաշնային Հանրապետությունն էլ իր հերթին առաջին երկրներից էր, որը ձանաչեց այս անկախությունը և դիվանագիտական հարաբերություններ հաստատեց Հայաստանի Հանրապետության հետ: Այդ ժամանակից սկսած Գերմանիան աջակցում է Հայաստանին՝ նրա ժողովրդավարական վերափոխման, ինչպես նաև Եվրամիության և ՆԱՏՕ-ի հետ մերձեցման գործում: Գերմանա-հայկական հարաբերությունները բազմազան են. Գերմանիան Հայաստանի կարևորագույն առևտրային գործընկերն է Եվրամիությունում և կարևորագույն օտարերկրյա ուղղակի ներդրողներից մեկը: Հալլեի համալսարանի ՄԵՍՐՈՊ (MESROP) կենտրոնը, Պոտսդամի Լեփսիուսի տունը, Երևանի «Գյոթե» կենտրոնը և Գերմանական ակադեմիական փոխանակումների ծառայությունը (DAAD) ընդամենը մի քանիսն են այն հաստատություններից, որոնք նպաստում են երկու երկրների միջև գիտական ու մշակութային փոխանակմանը: Հայ ժամա-

նակակից դասական երաժշտության հիմնադիր Կոմիտաս վարդապետը 19–րդ դարի վերջին մի քանի տարի անցկացրել է Բեռլինում, որտեղ եղել է միջազգային երաժշտական ընկերության հիմնադիրներից մեկը և մշակութային կարևոր կամուրջներ գցել Հայաստանի ու Գերմանիայի միջև:

Հայաստանի և Գերմանիայի միջև երկկողմ հարաբերությունները սերտորեն կապված են Եվրոպայի հետ. 2009 թվականից սկսած Հայաստանը մի քանի տարի ինտենսիվ բանակցում էր Եվրամիության հետ ասոցացման համաձայնագրի շուրջ, բայց հետո միացավ Եվրասիական տնտեսական միությանը, որտեղ գերիշխում է Ռուսաստանը: Որպես այլընտրանք՝ 2015 թվականի վերջից մշակվեց Հայաստանի և Եվրամիության միջև համապարփակ և ուժեղացված գործընկերության համաձայնագիրը (CEPA), որն ուժի մեջ մտավ 2021 թվականի մարտից և սահմանեց գործակցության շրջանակը՝ ամրապնդել և խորացնել գործընկերությունը շատ ոլորտներում՝ այդ թվում նաև արևելյան տարածաշրջանային ձևաչափից դուրս: Հարաբերությունների շրջանակի սահմանների վերաբերյալ մտորումները հստակեցրին այն ոլորտները, որոնցում Հայաստանը կարող է համագործակցել Եվրամիության հետ՝ չխախտելով իր պարտավորությունները Եվրասիական տնտեսական միության հանդեպ՝ որպես դրա անդամ:

Հայաստանի Հանրապետության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման 30–ամյակը երկու երկրների համար էլ համընկնում է նոր դարաշրջանի սկզբի հետ: Ուկրաինայի դեմ Ռուսաստանի դաժան զավթողական պատերազմը երկար ժամանակով ցնցեց անվտանգության և դաշինքի ճարտարապետությունը Եվրոպայում և Հարավային Կովկասում: Պատերազմը ցույց է տալիս, որ ժամանակակից Ռուսաստանին հետաքրքրում է սոսկ

իշխանությունն ու գերակայությունը, այլ ոչ թե լավ հարաբերությունները հարևանների հետ: Դրա հետ մեկտեղ 2022 թվականի սեպտեմբերին Հայաստանի ինքնիշխան տարածքի վրա Ադրբեյջանի հարձակումը, որը ցուցադրաբար հանդուրժեց Ռուսաստանը, պարզ դարձրեց, որ Հայաստանը չի կարող հույս դնել իր դաշնակցի վրա:

Եթե ներքոշարադրվածը կոչված էր ներկայացնելու գերմանա-հայկական հարաբերությունների 30 տարիների նվաճումները, ապա այս տեքստերը պետք է դիտվեն նաև որպես ոգեշնչում, թե Հայաստանի եվրաինտեգրման համատեքստում ինչպես կխորացվեն այդ հարաբերությունները առաջիկա տարիներին:

Շտեֆան Մալերիուս

Կոնրադ Ադենաուեր հիմնադրամի

«Քաղաքական երկխոսություն Հարավային Կովկաս»

տարածաշրջանային ծրագրի ղեկավար

Գերմանա-հայկական ֆորում (գ. մ.)

Հայաստան. փոքր երկիր՝ մեծ պատմությամբ

Մշտապես նպատակ եմ ունեցել ուղևորվելու Հայաստան՝ այդ գեղեցիկ ու խորհրդավոր վաղ քրիստոնեական երկիրը՝ տպավորիչ պատմությամբ ու հրաշագեղ բնապատկերներով: Սակայն իմ սերն այս երկրի հանդեպ ամենից առաջ ունեցավ քաղաքական ու պատմական հիմք, որին կրթոտ հետևում էի որպես քաղաքական գործիչ:

Լինելով գերմանացի՝ ես հաճախ ստիպված էի ինքս ինձ հարց տալ. ինչո՞ւ միլիոնավոր հայերի և այլ քրիստոնյա փոքրամասնությունների ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում հարյուր տարի անց դեռ պաշտոնապես չի ճանաչվել և դատապարտվել Գերմանիայում: Եվ դա էր պատճառը, որ ես՝ որպես Բունդեսթագի պատգամավոր, նվիրվեցի այս կարևոր խնդրին: 2015 թվականի ապրիլին պատիվ ունեցա ներկայացնելու Բունդեսթագի այն ժամանակվա նախագահ, պրոֆեսոր Լամերթին և ելույթ ունենալ Երևանում՝ Ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված ոգեկոչման միջազգային ֆորումում: Մեծ հիացմունքով և խորին հարգանքով եմ հիշում մինչև այսօր Երևանում տեղի ունեցած հիշատակի միջոցառումը: Ինձ վրա մեծ տպավորություն թողեց, թե ինչպես են հարյուր հազարավոր հայեր ամբողջ աշխարհից ապրիլի 24-ին այցելում Ծիծեռնակաբերդի հուշահամալիր, և ինչպես է ընդհանուր ցավն ու ողբերգական անցյալը կապում և միավորում մի ամբողջ ժողովրդի:

2016 թվականի հունիսին Բունդեսթագի կողմից ընդունվեց համապատասխան բանաձև: Մինչ օրս ես դա որպես մեծ հաջողություն եմ ընկալում գերմանա-հայկական հարաբերություններում: Շատերը չէին հավատում այս հաջողությանը: Սակայն մենք պայքարեցինք դրա համար: Շնորհակալ եմ բոլոր մարտակիցներին, որոնք իրենց ներդրումն ունեցան այս հաջողությանը հասնելու գործում:

Բայց դեռ չենք հասել նպատակին. մինչ օրս Թուրքիան հստակ չի ընդունել իր պատմության այս մութ էջը՝ մեր ընդհանուր պատմության: Մենք ցանկանում ենք երկարաժամկետ հաշտության հասնել Հայաստանի և Թուրքիայի, նրանց երկու հասարակությունների միջև: Դրա համար անհրաժեշտ է, որ թուրքական կառավարությունը քննադատորեն առերեսվի անցյալի հետ, ճանաչի և վերանայի այն: Առանց ճանաչման չկա՝ հաշտություն: Մենք առաջվա պես այս հարցում պատրաստ ենք աջակցելու Թուրքիային:

Գերմանա-հայկական ֆորումի հիմնադրումը 2015 թվականին համախմբեց հոգուս Հայաստանի ձայները թե՛ Բունդեսթագում և թե՛ խորհրդարանից դուրս: Ես երախտապարտ եմ ֆորումի բոլոր անդամներին, ովքեր հնարավոր դարձրին այս համատեղ ծրագիրը:

Մեծ առաջընթացներ ժողովրդավարության և իրավական պետության կառուցման հարցերում

Մենք այսօր դժվար ժամանակներ ենք ապրում Եվրոպայում, այստեղ նորից պատերազմ է. Ռուսաստանը հարձակվել է Ուկրաինայի վրա: Կարևոր է, որ այս ռազմական բռնությունը շատ սուր դատապարտության է արժանացել ինչպես մեր, այնպես էլ միջազգային հանրության կողմից: Բայց նման միջազգային մի-

ջամտություն պետք է սպասելի լիներ նաև 2020 թվականին, երբ Լեռնային Ղարաբաղի բնակչությունը ռմբակոծության ենթարկվեց ու վտարվեց: Այդուհանդերձ, դեռ հավատում եմ Հայաստանի ու Ադրբեյջանի ժողովուրդների միջև փոխըմբռնմանը և խաղաղ երկխոսությանը: Սակայն պարտադիր է, որ երկու երկրներն էլ ազնվորեն ու կառուցողականորեն մասնակցեն դրան: Դա արիություն ու ջանք է պահանջում, բայց դա է միակ ճանապարհը միասնական ապագայի համար:

Մեր երկրները այս տարի նշում են դիվանագիտական հարաբերությունների հաստատման 30-ամյակը: Արդեն 30 տարի է, ինչ Հայաստանն անկախ է: Դա հրաշալի է, բայց նաև պարտավորեցնող: Աշխարհաքաղաքական բարդ միջավայրում գտնվող երկիրը կարողացել է մեծ առաջընթաց ապրել ժողովրդավարություն և իրավական պետություն կառուցելու առումով: Դա շատ ողջունելի զարգացում է, որին պետք է շարունակենք աջակցել, առաջին հերթին նաև այն պատճառով, որ Հայաստանը հավատարիմ է մեր ընդհանուր ժողովրդավարական արժեքներին: Բացի դրանից՝ երկիրը շատ բան ունի առաջարկելու. որոշ ոլորտներ կարող են առանձնապես գրավիչ լինել մեզ համար, ինչպես, օրինակ՝ զբոսաշրջությունն ու գյուղատնտեսությունը: Ով մեկ անգամ եղել է Հայաստանում, կրկին ու կրկին հաճույքով է մեկնում այնտեղ: Ինձ հատկապես տպավորել են ամբողջ երկրով մեկ ցրված վանքերն ու խաչքարերը, որոնք երկրի հազարամյա պատմության մասին են վկայում: Հարուստ մշակույթը, ինչպես նաև տպավորիչ բնաշխարհը անմոռանալի կդարձնեն այս երկիր կատարած յուրաքանչյուր այցելություն, բայց ամենից առաջ՝ հենց մարդիկ՝ իրենց հյուրընկալությամբ և ստեղծարար ներուժով: Այնքան սրտալիություն ես ապրում այստեղ...

Ես շնորհակալ եմ հայերի հետ յուրաքանչյուր հանդիպման
համար Հայաստանում և ամենուր: Աստված օրհնի բոլորիդ:

Ալբերտ Վալեր, պատվավոր դոկտոր (Հայաստանի
Ճարտարապետա-շինարարական
ազգային համալսարան),
գերմանացի քաղաքական գործիչ (ԲԴՄ)
Գերմանա-հայկական ֆորումի հիմնադիր

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Գերմանա-հայկական հարաբերություններ. նոր հնարավորություններ և հեռանկարներ գերմանական տեսանկյունից

Թիլ Մանսման

Հայաստանում ասում են. «Միայն բառերով բարեկամության չես հասնի». գեղեցիկ նախադասություն, որն ուղեկցում է իմ պատգամավորական աշխատանքին Տնտեսական գործակցության և զարգացման հանձնաժողովի անդամի պաշտոնում: Գերմանա-հայկական բարեկամությանը ձգտելու դրդապատճառը գալիս է Բունդեսթագի՝ իմ առաջին ընտրարշավի ժամանակներից: Դա թերևս ավելի շուտ պատահականություն էր, որ ծանոթացա հայկական մշակույթին և նրա պատմությանը անձնական շփման միջոցով: Հայկական կոնյակը այդտեղ նույնպես դեր խաղաց: Եվ երբ Բունդեսթագ մտնելուց հետո հարց ծագեց՝ երկրների ո՞ր խմբի վերաբերյալ խորհրդարանական աշխատանքներում կցանկանայի առաջիկայում ներգրավված լինել, ընտրությունն ինձ համար այլևս դժվար չէր: Գերմանական Բունդեսթագի Հարավային Կովկասի երկրների խմբում իմ աշխատանքի արդյունքում ներգրավվեցի նաև Գերմանա-հայկական ֆորումին (DAF), որն անգամ որպես նախագահող ղեկավարելու իրավունք եմ ունեցել 2022 թվականից: Գերմանիայի և Հայաստանի միջև երկխո-

սության ու փոխըմբռնման խթանումը, որը ձևակերպված է նաև որպես DAF-ի առաջնային նպատակ, այժմ միաժամանակ իմ և մտահոգությունն է, և պարտականությունը:

Իմ նախորդի՝ 2013–2021 թվականների Բունդեսթագի անդամ Ալբերտ Վայլերի ավանդույթի համաձայն՝ կցանկանայի կամուրջներ կառուցել Դաշնային Գերմանիայի խորհրդարանում. Գերմանիայում և Հայաստանում հավասարապես առկա բաց և ժողովրդավարական հասարակություն կառուցելու, և դա հետագայում զարգացնելու կամքը դրա համար բարենպաստ հիմք է ձևավորում:

Ցավոք, Հարավային Կովկասը քիչ է ծանոթ գերմանական լայն հասարակությանը: Նույնիսկ կրկին ու կրկին բռնկվող և անհանգստություն առաջացնող ռազմական հակամարտությունները, որոնք միշտ պետք է մեզ Գերմանիայում մեծ մտահոգություն պատճառեն, գրեթե չեն նկատվում: Նաև 2016 թվականին՝ Հայոց ցեղասպանության վերաբերյալ Բունդեսթագի ընդունած բեկումնային բանաձևը, որը բովանդակային առումով վաղուց էր հասունացել, քիչ բան փոխեց այդ հարցում: Մենք Կենտրոնական Եվրոպայում պետք է ավելի ուշադիր նայենք, թե ինչ է կատարվում հենց Եվրոպայի դարպասների շեմին՝ հետխորհրդային տարածքում, որտեղ հին ժողովուրդներն իրենց մշակույթներով ու կրոններով կենտրոնացած են մի փոքր տարածքում, որտեղ խաչվում են մեծ ու միջին այնպիսի տերությունների հետաքրքրությունների ոլորտները, ինչպիսիք են Ռուսաստանը, Թուրքիան և Իրանը՝ իրենց տեսանելի հավակնություններով:

Հաշվի առնելով այս չափազանց լարված աշխարհաքաղաքական իրավիճակը՝ տարածաշրջանի դերը պետք է միանշանակ ավելի զգալի լինի Գերմանիայի զարգացման ու արտաքին քաղաքականության մեջ:

Առաջին անգամ, երբ ես՝ որպես քաղաքական գործիչ, առնչվեցի տարածաշրջանի խնդիրներին, փաստացի դա այն ժամանակն էր, երբ Բունդեսթագում ընդունվեց Ցեղասպանության մասին բանաձևը, և այն քննարկվում էր հրապարակայնորեն: Ես այդ ժամանակ դեռ լրագրող էի աշխատում և ուշադիր հետևում էի 2016 թվականի մայիսի 31-ին և դրան ուղեկցող հասարակական ու քաղաքական բանավեճերին: Ինձ համար շատ արագ պարզ դարձավ, որ Գերմանիայի Բունդեսթագի այս բանաձևը ճիշտ և վաղուց հասունացած քայլ էր՝ հայ ժողովրդի Ցեղասպանության մեղքի գերմանական բաժինը ճանաչելու և դրա հետ առերեսվելու համար: Մեղք, որը գործել էր Գերմանական կայսրությունը՝ երիտթուրքական վարչակարգի այն ժամանակվա դաշնակիցը, և իր թողությունով փաստացի նպաստել միլիոնավոր մարդկանց սպանություններին: Սա պահանջում է նաև այսօրվա Գերմանիայի հատուկ պատասխանատվությունը, քանի որ դարասկզբի այս ցեղասպանությունով ոգեշնչված նացիստները «Մեծ գերմանական ռայխում» իրագործեցին հազարամյակի սարսափելի հանցագործությունը՝ եվրոպացի հրեաների ցեղասպանությունը:

Ցավոք, Հարավային Կովկասի վրա ուղղված մեր ուշադրությունը, որի շարժառիթը հանրային բանավեճերն էին, շատ արագ տեղի տվեց անհետաքրքրությանն ու անտարբերությանը, ինչը ոչ վերջին հերթին վտանգավոր է նաև Կենտրոնական ու Արևմտյան Եվրոպայի համար: Ընդամենը մի քանի տարի անց Լեռնային Ղարաբաղի շուրջ սարսափելի հակամարտությունը չարժանացավ այն ուշադրությանը, հատկապես քաղաքական, որն այնքան անհրաժեշտ էր կրիտիկական այդ փուլում: Այդ ժամանակ ԵՄ Խորհրդում նախագահող Գերմանիան, ինչպես և ամբողջ Եվրամիությունը համառեցին հակամարտող կողմերի նկատմամբ իրենց համահավասարեցման քաղաքականության մեջ և բաց թո-

ղեցին միջազգային իրավունքի սկզբունքները հստակ ճանաչելու հնարավորությունը: Չնայած հակամարտության ամբողջ բարդությանը՝ ուժի չկիրառման միջազգային իրավունքի սկզբունքը միակողմանիորեն խախտվեց Ադրբեյջանի կողմից: Դա չի կարող հանգեցնել այս հարցում ազատ աշխարհի չեզոք դիրքորոշմանը:

Որտեղից է գալիս այս անտարբերությունը, հակամարտության կարևորության այս թերագնահատումը: Հատկապես Գերմանիան, որը Եվրոպայի սրտում գտնվող իր բազմաթիվ հարևանների հետ դարերի ընթացքում հաճախ դարձել է նման զարգացումների զոհ, հաճախ անտարբերություն է ցուցաբերում սեփական խաղաղության ժամանակներում: Դա ինձ միշտ հիշեցնում է Գյոթեի «Ֆաուստի» մի տեսարան, որտեղ Ֆաուստն իր «Զատկի զբոսանքի» ժամանակ ականատես է դառնում երկու «քաղաքացիների» խոսակցությանը.

*Ոչինչ ավելի լավ չգիտեմ կիրակի և տոնական օրերին,
Քան զրույցները պատերազմի և պատերազմական ճիչերի մասին,
Երբ ետևում՝ հեռավոր Թուրքիայում,
Ժողովուրդները իրար են զարկում.
Կանգնած ես պատուհանի մոտ, իմում ես քո բաժակը մինչև վերջ
Եվ տեսնում ես, թե ինչպես են գետն ի վար սահում զույնզգույն նավերը,
Հետո երջանիկ վերադառնում ես երեկոյան տուն
Եվ օրհնում խաղաղությունը և խաղաղ ժամանակները.¹*

¹ Գյոթե Յոհան Վոլֆգանգ, Ֆաուստ, Գլուխ՝ «Դարպասի դիմաց», այստեղ՝ տող 860–867, հրատ. պատրաստեցին՝ Աննե Բոհնենբամփը, Սիլկե Հենկեն և Ֆոտիա Ջանիդիսը՝ Գերիտ Բյունիցգի և այլոց համագործակցությամբ: Göttingen, 2018: Հղումը՝ https://faustedition.net/print/faust.5#scene_1.1.2 (վերջին մուտք՝ 15.11.2022):

Սակայն Ռուսաստանի զավթողական պատերազմը Ուկրաինայի դեմ Գերմանիայում շատերին արթնացրեց անտարբերության նիքից: Ուստի ակնկալում եմ, որ մեր հայացքը ավելի ու ավելի շատ և ավելի ուշադիր կուղղենք հետխորհրդային տարածքի երկրներին: Դա ձիշտ է և կարևոր, քանի որ Գերմանիան իր արտադրողական հզորությունների շնորհիվ կապված է առևտրային հարաբերություններով աշխարհի բազմաթիվ երկրների հետ և, հետևաբար, պետք է հետաքրքրվի, թե ինչպես են զարգանում այդ երկրները, և ինչ մշակութային ու պատմական պատճառներ են հանգեցրել այդ զարգացումներին: Քանի որ միայն իրար հանդեպ բաց ու շիտակ հայացք ունենալով է կարելի փոխըմբռնում զարգացնել և կայուն գործընկերություն ձևավորել հավասար հիմքերի վրա:

Հայաստան պետության զարգացումը Խորհրդային Միության փլուզումից հետո մեզ հստակ ցույց է տալիս, որ Հայաստանի մարդիկ ունեն ազատ հասարակություն կառուցելու և զարգացնելու ամուր կամք: Ամենավերջին խորհրդարանական ընտրությունների արդյունքները դրա վկայությունն են: Բնավ էլ ինքնըստինքյան չի ենթադրվում, որ վարչապետը, որը պետք է քաղաքական պատասխանատվություն կրի Լեռնային Ղարաբաղի հակամարտությունում ռազմական պարտության համար, դրան հաջորդած ընտրություններում նման հավանություն կստանա: Սա ապացույցն է այն բանի, որ Հայաստանի քաղաքացիները ցանկանում են կառուցողականորեն առաջ գնալ իրենց սկսած ճանապարհով և հարևանների հետ կայուն ու ապահով խաղաղության հարաբերություններ հաստատել: Հայ բնակչության կամքով ընտրված՝ այսպես կոչված «թավշյա հեղափոխության» ուղին պետք է աջակցության արժանանա Գերմանիայում, դրան պետք է սատարենք մեր ուժերի կարողությամբ ու լիովին հարգենք երկրի թոփաբային զարգացումները:

Հայ ժողովրդի ազատության ձգտումը մեծապես տեսնում եմ նաև հայկական մեծ սփյուռքի մեջ: Արտասահմանում ապրող հայերի մշակութային ինքնությունը ամուր ավանդույթներ ունի, և այն զարգացվում ու պահպանվում է սերնդեսերունդ: Այնպիսի մի հասարակություն, ինչպիսին հայկականն է, որն այնքան սերտորեն կապված է աշխարհի բոլոր տարածաշրջանների հետ, ստիպված է մշտապես առնչության մեջ լինել տարբեր հեռանկարների, կենսածրագրերի ու օտար մշակութային ազդեցությունների հետ՝ ընդ որում չկորցնելով սեփական ինքնությունը: Թերևս հակառակը. այդ շարունակական բանավեճում աշխարհի առջև բաց ազգային ու մշակութային գիտակցությունը նույնիսկ էլ ավելի կամրապնդվի:

Քաղաքական և սոցիալական իրավիճակը Հայաստանում, հետևաբար նաև գերմանա-հայկական հարաբերություններում հստակորեն ազդված է նաև Լեոնային Ղարաբաղի վերջին տարիների հակամարտությամբ: Չնայած մեր երկրների միջև առկա բարեկամությանը՝ որոշակի հիասթափություն եմ զգում այս տարածաշրջանի համար այդքան կարևոր հարցում Գերմանիայի և Եվրամիության դիրքորոշումից: Ուստի մեր նպատակը պետք է լինի դրականորեն ազդել այս հակամարտության վրա, որը դեռ բնավ լուծված չէ, այլ ընդամենը սառեցված է, և աշխատել երկու կողմերի շահերից բխող լուծում գտնելու ուղղությամբ: Տարածաշրջանի հայ բնակչության, ինչպես նաև դեռևս պահվող հայ ռազմագերիների պաշտպանությունը, Լեոնային Ղարաբաղում հայկական մշակութային արժեքների պահպանումը, Ադրբեջանի կողմից վերահսկվող տարածքներում մարդու ազատ և ինքնորոշ կյանքի իրավունքի ապահովումը կա և կմնա անսակարկելի՝ ի հեճուկս ներկայիս թվացյալ խաղաղ իրավիճակին, որն ավելի շուտ անկայուն զինադադար է հիշեցնում:

Ուկրաինական պատերազմը վերջերս հայ-գերմանական հարաբերությունների նոր մակարդակ սկզբնավորեց, որովհետև

Հայաստանը հստակ հակազդեցություն չի ցուցաբերում Ռուսաստանին, ինչպես եվրոպական երկրները: Այդուհանդերձ, կարողացա հաստատել, որ քաղաքական Բեռլինում ավելի ու ավելի է ընկալվում այն բարդ իրավիճակը, որում հայտնվել է Հայաստանը: Միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում, այնուամենայնիվ, Հայաստանի անվտանգային շահերը կարող են պաշտպանվել միայն հարևանների հետ հաշտեցման միջոցով: Մենք՝ գերմանացիներս, գիտենք, թե որքան բարդ և երկարատև են նման գործընթացները: Բայց նաև գիտենք, որ դրանք կարող են հաջողությամբ պսակվել: Մեր սեփական պատմության հետևապատկերի վրա մեր պատասխանատվության պարտքը պետք է լինի նման գործընթացներում այն ժողովուրդներին ու պետություններին աջակցելը, որոնք կիսում են նույն արժեքները: Ես հիացած եմ այն պրագմատիզմով, որ ցուցաբերում են հայերը այս հարցում՝ չնայած Ցեղասպանության իրենց դառը փորձին: Հեշտ և, ի վերջո, նաև հասկանալի կլիներ Ադրբեյջանի ու Թուրքիայի նկատմամբ համառ, շարունակաբար մերժողական դիրքորոշում որդեգրելը: Հայ ժողովուրդը հաճախ պրագմատիկ իմաստություն է ցուցաբերում այս հարցում, որով ես հիացած եմ:

Ընդհանուր առմամբ, այսօր կարող ենք ասել. Գերմանիայի և Հայաստանի հարաբերությունները լավ են զարգանում: Դաշնային Հանրապետությունը առաջընթաց է գրանցել՝ դառնալով Եվրոպական միության ամենակարևոր առևտրային գործընկերը և հինգերորդը աշխարհում և հետևաբար Հայաստանի համար կայուն գործընկեր է զարգացման գործակցության հարցերում: Այդ գործակցության արգասիքները կարելի է տեսնել շատ տեղերում: Այստեղ փարոս է «ԹՈՒՄՈ» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնը: Այս տեխնոլոգիական կենտրոնը հաջողակ մոդել է, որի շրջանակներում հայ երիտասարդները ստեղծարար աշխատանքը խթանող փորձեր են կատարում և զարգացնում նոր տեխ-

նողոգիաներ, այնքան հաջող, որ այն արդեն կարողացել է նմանատիպ ջանքերի օրինակ ծառայել Փարիզում ու Բեռլինում:

Զարգացման քաղաքականության տեսանկյունից սա հատկապես հաճելի է, քանի որ տպավորիչ կերպով հերքում է հաճախ կրկնվող ասույթը, համաձայն որի՝ զարգացման գործակցությունը գործում է միայն զարգացող գործընկեր երկրների ուղղությամբ: Այդ պատճառով էլ հատկապես ուրախ էի, որ *Լուսացույց* կոալիցիան կրկին վերահաստատեց Հայաստանի՝ Գերմանիայի հետ երկկողմ զարգացման գործընկեր երկրի վարկանիշը: Սա հստակ ազդանշան է Գերմանիայի արտաքին և վաղուց հասունացած վերախմաստավորման զարգացման քաղաքականության համար: Թագավարակի պատճառով բազմաթիվ ձանապարհորդական ծրագրերի ի չիք դառնալուց հետո այս առիթով վերջապես կարողացա առաջին անգամ ինքս այցելել Երևան՝ Դաշնային նախարար Սվենյա Շուլցեի ուղեկցությամբ:

Հայաստանի մայրաքաղաքը դիմավորեց ինձ ազատ, աշխարհի համար բաց՝ մեծ քաղաքի տրամադրությամբ, ինչպիսին զգացել եմ միայն եվրոպական մի քանի խոշոր քաղաքներում: Հուզիչ ճարտարապետությունը, հարավկովկասյան մշակույթի փայլը, պատմությունը, որը տարածված է օդում՝ այդ ամենը ուժեղ տպավորություն գործեցին ինձ վրա, և հատկապես հուզվեցի Ծիծեռնակաբերդի հուշահամալիր այցելությունից:

Հայաստանը Գերմանիայի համար կարևոր երկիր է՝ որպես կամուրջ դեպի Մերձավոր Արևելք՝ անվտանգության քաղաքականության և աշխարհառազմավարական կարևորություն ունեցող տարածաշրջանում: Գերմանա-հայկական բարեկամությունն այսպիսով նաև խաղաղության գործ է: Եվ գերմանա-հայկական ֆորումի միջոցով մենք ցանկանում ենք այդ գործում մեր ներդրումն ունենալ:

Գերմանա-հայկական հարաբերություններ. նոր հնարավորություններ և հեռանկարներ հայկական տեսանկյունից

Րաֆֆի Քանդյան

1991 թվականի վերջին՝ Խորհրդային Միության փլուզումից անմիջապես հետո, Գերմանիայի Դաշնային Հանրապետությունը 1992 թվականի սկզբին ձանաչեց երիտասարդ Հայաստանի Հանրապետությունը: Բայց գերմանա-հայկական հարաբերությունները սկիզբ էին առել արդեն 1988 թ. դեկտեմբերից: Սկզբնապատճառը Հայաստանի հյուսիսում տեղի ունեցած երկրաշարժն էր, որին, ըստ պաշտոնական տվյալների, զոհ գնաց 25000 մարդ, և որը հող ու մոխիր դարձրեց Հայաստանի հյուսիսային շրջանների զգալի մասը: Այս աղետը դրդեց այն ժամանակվա խորհրդային առաջնորդ Մ. Գորբաչովին օգնություն խնդրելու Արևմուտքից: Խորհրդային Միության՝ հերմետիկ կողպված սահմանները բացվեցին, երկիր եկան անհամար օգնողներ, իսկ առաջին հերթին՝ Գերմանիայից, և քաղաքացիական հասարակության անհաշվելի թվով նախաձեռնություններ օգնության ձեռք մեկնեցին Հայաստանում ապրող մարդկանց: Դաշնային Հանրապետության պետական հիմնարկներից զատ՝ նաև մասնավոր անձինք և ընկերություններ իրենց հնարավորությունների շրջանակներում ֆինանսական և այլ օգնություն տրամադրեցին երկրին ու բնակչությանը: Գործը դրանով չվերջացավ: Ի լրումն անհապաղ օգնության՝ Գերմանիայի Դաշնային Հանրապետու-

թյունը հանձն առավ աջակցելու ավերված համայնքների վերականգնմանը: Այն ժամանակ գերմանական լրատվամիջոցները շարունակաբար ու մանրամասնորեն անդրադառնում էին Հայաստանում տիրող իրավիճակին: Հետադարձ հայացքով պարզվել է, որ Հայաստանում գերմանական առաքելությունը Գերմանիայի ամենամեծ ընդգրկվածությունն է եղել արտասահմանում երբևէ տեղի ունեցած որևէ աղետի ժամանակ: Տարիներ անց Հայաստանի հյուսիսում մի հայ մարդ, երբ իմացավ, որ ես Գերմանիայից եմ, ասաց ինձ, որ երբ վերադառնամ, նրանց փոխանցեմ հայ ժողովրդի երախտագիտությունը:

Երկրաշարժից ամիսներ առաջ Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը շեղել էր քաղաքական և լրատվական ուշադրությունը, նաև Արևմտյան Գերմանիայում, Հայաստանի և Ադրբեջանի խորհրդային հանրապետությունների վրա: Այդ հակամարտությունը թեժացավ Երևանում 1988 թվականին տեղի ունեցած փետրվարյան խաղաղ ցույցերով և դրան հաջորդած հակահայկական ջարդերով Սումգայիթում ու Խորհրդային Ադրբեջանի այլ վայրերում: Սկսվեցին զինված բախումներ: Լեռնային Ղարաբաղի համար շարժումն այն ժամանակվա Հայաստանում հանգեցրեց անսովոր ժողովրդավարացման: Այսպես կոչված «Ղարաբաղ կոմիտեն» վերաձևավորվեց քաղաքական հոսանքի, որն իրեն անվանեց Հայոց համազգային շարժում: 1990 թվականի գարնանը Շարժումը մասնակցեց Գերագույն խորհրդի ընտրություններին (որոնք ընդհանուր առմամբ ձանաչվեցին ազատ և արդար), տալով Հայաստանի կոմունիստական կուսակցության իշխանությունը և իր անդամներից մեկին ընտրեց այդ կառույցի խոսնակ (նախագահ): Թեժ քննարկումների արդյունքում ամրապնդվեցին Խորհրդային Հայաստանի անջատման օգտին հանդես եկող ուժերը: Գերագույն խորհուրդը 1990 թ. օգոստոսի 23-ին ընդունեց

Հայաստանի անկախության հռչակագիրը: Դրանում հստակորեն նշվում էր ժողովուրդների ազատ ինքնորոշման իրավունքը: 1991 թ. մարտի 17-ին Հայաստանը, մերձբալթյան երկրները, Վրաստանն ու Մոլդովան բոյկոտեցին համապետական հանրաքվեն, որի ժամանակ բոլոր ընտրողների 78 տոկոսը քվեարկեց խորհրդային Միությունը բարեփոխված վիճակում պահպանելու օգտին: 1991 թվականի օգոստոսին Հայկական ԽՍՀ-ն իրեն վերանվանեց Հայաստանի Հանրապետություն՝ հղում անելով 1918–1920 թվականների առաջին հանրապետությանը: Մոսկվայում օգոստոսյան ձախողված հեղաշրջումից հետո Հայաստանը 1991 թ. սեպտեմբերի 21-ին հռչակեց իր անկախությունը: 1991 թվականի վերջին խորհրդային Միությունը պաշտոնապես դադարեց գոյություն ունենալուց. վճռական փոփոխությունները Հայաստանում նախապես արդեն իրականացվել էին: Երբ 1992 թվականի սկզբին Գերմանիայի Դաշնային Հանրապետությունը ձանաչեց Հայաստանի Հանրապետությունը, նախկին խորհրդային Միության մյուս իրավահաջորդ պետությունների հետ միասին այն արդեն գործ ուներ մի պետության հետ, որն ուներ ժողովրդավարական ձանապարհով ընտրված խորհրդարան: Այս առումով Հայաստանը համեմատելի էր մերձբալթյան երկրների հետ, որոնք անկախանալու նման ձգտում ունեին: Այս հանգամանքը մերօրյա քննարկումների ժամանակ երբեմն մոռացվում է:

Երկկողմ կապեր. ընդհանուր ակնարկ

1992 թվականին՝ Հայաստանի Հանրապետության ձանաչումից անմիջապես հետո, Գերմանիայի Դաշնային Հանրապետությունը նաև դիվանագիտական հարաբերություններ հաստատեց այդ երկրի հետ: Սակայն Գերմանիայի առաջին դեսպան Գյունթեր Դալհոֆի նստավայրը Թբիլիսին էր: Միայն նրան հաջորդած

Նորբերթ Հայնցեն, որին Հայաստանում նախկինի պես շատ են գնահատում, տեղափոխվեց ժամանակավոր մի կացարան, իսկ քիչ ավելի ուշ նա տեղափոխվեց ներկայիս նստավայրը: Դրանից մեկ տարի առաջ Հայաստանն էր Բոննում բացել իր դեսպանությունը: Այսօր այն տեղակայված է դաշնային մայրաքաղաք Բեռլինում:

Եթե ուզենք երկու երկրների հարաբերությունները կապել քաղաքական գործիչների այցերի հետ, ապա ցուցակը բավականին ուշագրավ է: Թեև Հայաստանի նախագահ Ռոբերտ Քոչարյանի առաջին այցը Գերմանիա բավականին ուշ եղավ (2003 թվականի հունվարին, այսինքն՝ դիվանագիտական հարաբերությունների հաստատումից տասնմեկ տարի անց), նա, այդուհանդերձ, ևս երկու անգամ եղավ Գերմանիայում՝ 2004 թ. նոյեմբերին և 2006 թ. նոյեմբերին, պաշտոնում նրան փոխարինած Սերժ Սարգսյանը՝ նույնպես երեք անգամ (2009 թ. փետրվար, 2010 թ. հունիս, 2016 թ. ապրիլ՝ Քառօրյա պատերազմից անմիջապես հետո): Հայաստանի արտգործնախարարները հաճախ են եղել Բեռլինում. այսպես՝ Վարդան Օսկանյանը առաջին անգամ 2003 թ. նոյեմբերին, այնուհետև՝ 2006 թ. մարտին և 2008 թ. փետրվարին: Պաշտոնում նրան հաջորդած Է.Նալբանդյանը՝ բազմիցս (2008 թ. հունիս, 2010 թ. մարտ, 2011 թ. հոկտեմբեր, 2012 թ. փետրվար, 2013 թ. մարտ, 2013 թ. հոկտեմբեր, 2014 թ. հունիս, 2015 թ. դեկտեմբեր, 2016 թ. նոյեմբեր): Հարկ է նշել նաև Հայաստանի վարչապետ Ա. Մարգարյանի այցը 2004 թվականի հունիսին:

Հայաստան այցելած գերմանացի քաղաքական գործիչների ցանկն այդքան էլ երկար չէ, բայց ոչ պակաս նշանավոր. արտաքին գործերի նախարար Քինքելը՝ 1995 թ. դեկտեմբերին: Որոշ ընդմիջումից հետո՝ 2004 թ. ապրիլին, Հայաստան եկավ փոխկանցելը և արտգործնախարար Յոշկա Ֆիշերը, 2007 թ. փետրվարին՝

Ֆրանկ-Վալթեր Շտայնմայերը՝ նույնպես որպես փոխկանցիլեր և արտաքին գործերի նախարար: 2012 թ. մարտին նրան հաջորդեց փոխկանցիլեր և արտաքին գործերի նախարար Գիդո Վեսթերվելեն: Մեկ տարի անց՝ 2013 թ. մարտին, Հայաստանում էր Բունդեսբազի նախագահ, Հայաստանում մեծ ժողովրդականություն վայելող պրոֆեսոր Լամերթը: Ֆրանկ-Վալթեր Շտայնմայերը ևս երկու անգամ եղավ Հայաստանում՝ 2014 թ. հոկտեմբերին և 2016 թ. հունիսին, այլևս ոչ որպես փոխկանցիլեր, այլ միայն որպես արտգործնախարար:

Այս ցուցակը մինչև Թավշյա հեղափոխությունը չի ներառում երկու երկրների պատգամավորների և պատգամավորական խմբերի բազմաթիվ այցելությունները: Այլապես ցուցակը շատ ավելի երկար կլիներ:

Թավշյա հեղափոխությունից հետո բոլորովին այլ դինամիկա է նկատվում: Դաշնային կանցլեր Մերկելը Հայաստան այցելեց 2018 թ. օգոստոսին՝ Թավշյա հեղափոխությունից ընդամենը մի քանի ամիս անց: Տվյալ պահին դեռ պարզ չէր, թե ինչ արդյունք կունենա այդ զարգացումը, քանի որ Ազգային ժողովի ընտրությունները տեղի էին ունենալու 2018 թ. դեկտեմբերին միայն: Անսովոր էին նաև վարչապետ Փաշինյանի հաջորդական արագ այցերը Գերմանիա՝ 2019 թ. հունվարի վերջից փետրվարի սկզբին և 2020 թ. փետրվարին: Նախագահ Արմեն Սարգսյանը նույնպես արագ հաջորդականությամբ եղավ Գերմանիայում՝ սկզբում 2018 թ. նոյեմբերին, ապա՝ 2019 թ. փետրվարին: Հատկանշական է նաև 2019 թ. մարտին Հայաստանի Ազգային ժողովի պատվիրակության բազմօրյա այցը Գերմանիա՝ խոսնակ Արարատ Միրզոյանի գլխավորությամբ, որը ներկայում Հայաստանի արտգործնախարարն է: Այս ժամանակային պատուհանի մեջ է

տեղավորվում նաև Գերմանիայի Բունդեսթագի այն ժամանակվա փոխնախագահ Թոմաս Օփերմանի հայաստանյան այցը:

Վերջին շրջանից հիշատակության են արժանի 2022 թ. հուլիսին Տնտեսական համագործակցության և զարգացման դաշնային նախարար տիկին Սվենյա Շուլցեի և նույնպես 2022 թ. հուլիսին Բունդեսթագի փոխնախագահ տիկին Կատրին Գյորինգ-Էքարդթի այցերը Հայաստան: Եվրախորհրդարանի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի պատվիրակության կազմում, որը նույնպես հուլիսին էր Հայաստանում, ընդգրկված էին երկու գերմանացի պատգամավորներ՝ Դեյվիդ ՄքԱլիսթերը (ղեկավար) և Վիոլա ֆոն Քրամոնը:

Փոխայցելությունների ընդհանուր առմամբ ուրախալի այս ցանկից բացակայում էր Բունդեսթագի գերմանա-հարավկովկասյան խորհրդարանական խումբը: Այս ընթացքում մահացած և որպես Ադրբեյջանի լոբբիստ հայտնի դարձած Կարին Շտրենցը կարողանում էր ձախողել Հայաստան ուղևորությունները: Այս խմբի նախագահի պաշտոնում նրան փոխարինած Յոհաննես Քարսը, որն այլևս Բունդեսթագի անդամ չէ, ի վիճակի չեղավ կազմակերպելու նման ուղևորություն: Ենթադրվում է, որ իր նոր նախագահ դոկտոր Յոհան Վադեֆուլի ղեկավարությամբ 2023 թվականի առաջին կեսին խումբը կայցելի Հայաստան:

Վերջում նշենք, որ երկու երկրները կնքել են բազմաթիվ համաձայնագրեր ու պայմանագրեր, արձանագրություններ, հուշագրեր, արել ծանուցումներ ու հայտարարություններ, որոնց այստեղ տեղի սղության պատճառով հնարավոր չէ անդրադառնալ:

Երկկողմ համագործակցության որոշակի մանրամասներ՝ ապագայի հեռանկարով

ա) Պատմությունը

Գերմանիայի Դաշնային Հանրապետությունը Գերմանական կայսրության իրավահաջորդն է, որն Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ Օսմանյան կայսրության դաշնակիցն էր: Դրանով հայերի ցեղասպանության ճանաչման վերաբերյալ բանավեճը Գերմանիայում առանձնահատուկ նշանակություն ուներ: Ի վերջո՝ գրեթե մեկ հարյուրամյակ այդ մասին լռել էին:

Այս բանավեճն առանձնահատուկ թափ ստացավ այն բանից հետո, երբ Հայաստանը՝ որպես ինքնիշխան պետություն, դարձյալ հայտնվեց համաշխարհային քաղաքական քարտեզի վրա: Հայկական կողմի առաջին փորձը եղավ 2000 թ. ապրիլին¹ Գերմանիայի Բունդեսթագին ուղղված դիմումի տեսքով: Այն ձախողվեց:

Այդ ժամանակ Գերմանիայի պաշտոնական դիրքորոշումն այն էր, որ Դաշնային Հանրապետությունը միայն 1955 թվականին է միացել ՄԱԿ-ի 1948 թվականի «Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին» կոնվենցիային: Հետևաբար այն չի կարող 1915–1916 թվականների իրադարձությունները ցեղասպանություն որակել: Մեկ այլ փաստարկ 2001 թվականին ներկայացրել էր Գեռնոթ Էռլերը Գերմանիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցության խորհրդարանական խմբին ուղղված իր նամակում. «Սակայն սկզբունքային պատ-

¹ Հայոց ցեղասպանության վերաբերյալ մեծ թվով պաշտոնական և այլ փաստաթղթեր կարելի է գտնել Գերմանա-հայկական ընկերության (ԳՀԸ, DAG) կայքում, հետևյալ հղումով՝ <https://www.deutscharmenischegesellschaft.de/materialien/der-genozid-an-den-armeniern/>

Ճառներով մենք դեմ ենք հայերի նկատմամբ որևէ ցեղասպանության պաշտոնական հաստատման վերաբերյալ խորհրդարանական որոշում ընդունելուն: Մեր կարծիքով պատմական իրադարձությունների պաշտոնական գնահատականը պատմագիտության խնդիրն է, այլ ոչ թե ինչ-որ օտար խորհրդարանների»: Գերմանա-հայկական ընկերության (ԳՀԸ) հարցմանն ի պատասխան՝ Գերմանիայի լիբերալ-դեմոկրատական կուսակցության խորհրդարանական խմբի նախագահ դոկտոր Վոլֆգանգ Գերհարդը նույնպես 2001 թվականին մեկ այլ փաստարկ ներկայացրեց. «Ինձ մտահոգիչ է թվում հայերի տեղահանության ու բնաջնջման համար Գերմանական կայսրության և գերմանական կառավարության պատասխանատվությունը, որն առանձնահատուկ կերպով ընդգծված է դիմումում»:

Այնուամենայնիվ, 2001 թվականին Ֆրանսիայի կողմից ցեղասպանության ճանաչումը բորբոքեց քննարկումներն ու հանգեցրեց Գերմանիայի կողմից հետագա ջանքերի: Այսպես՝ Գերմանիայի այն ժամանակվա արտգործնախարար Յոշկա Ֆիշերը 2004 թ. ապրիլին եղավ Հայաստանում, այցելեց մայրաքաղաք Երևանում գտնվող Ցեղասպանության հուշահամալիրը և ծաղկեպսակ դրեց: Դա առաջին անգամն էր:

Դրանից մեկ տարի անց Բունդեսթագի այն ժամանակ ընդդիմադիր ՔԴՄ/ԲՍՄ խորհրդարանական խմբակցությունը ներկայացրեց բանաձևի նախագիծ («Հիշատակ՝ 1915 թ. ապրիլի 24-ին հայերի տեղահանության ու կոտորածների մեկնարկի 90-ամյակի առթիվ. Գերմանիան պետք է նպաստի թուրքերի և հայերի հաշտեցմանը»), որի մշակման աշխատանքների ղեկավարն էր պատգամավոր դոկտոր Քրիստոֆ Բերգները: Այդ նախագիծը հիմք դարձավ ԳՍԴԿ-ի, ՔԴՄ/ԲՍՄ-ի, ԴԱՇԻՆ-Բ 90/ԿԱՆԱՉՆԵՐ-ի և ԼԴԿ-ի միջխմբակցային առաջարկի համար, որը միաձայն ըն-

դունվեց 2005 թ. հունիսի 15-ին: Թեև առաջարկի վերնագրում խուսափեցին «ցեղասպանություն» բառից, սակայն այդ ձևակերպումը հայտնվեց բացատրական մասում. «Ըստ անկախ հաշվարկների՝ տեղահանությունների և զանգվածային սպանությունների զոհ է դարձել ավելի քան 1 միլիոն հայ: Բազմաթիվ անկախ պատմաբաններ, խորհրդարաններ և միջազգային կազմակերպություններ հայերի արտաքսումն ու բնաջնջումը բնորոշում են որպես ցեղասպանություն»: Ծանոթագրություն. ՔԴՄ/ՔՍՄ-ի ներկայացրած նախագիծը շատ ավելի ճշգրիտ ու քննադատական է հատկապես Գերմանական կայսրության դերի առումով:

Օսմանյան կայսրությունում հայերի բնաջնջման 90-րդ տարելիցին արդեն լրատվամիջոցները մանրամասն անդրադարձել էին այս թեմային: Տասը տարի անց՝ 2015 թվականին, լրատվամիջոցների հետաքրքրությունն անհամեմատելիորեն աճել էր: Քաղաքականության առջև ծառացավ այս թեմային համարժեքորեն անդրադառնալու խնդիրը: Սակայն այն նախկինի պես վարանում էր օգտագործել «ցեղասպանություն» բառը:

2015 թվականի ապրիլի 23-ին վճռորոշ դերակատարում ունեցավ այն ժամանակվա դաշնային նախագահ Յոախիմ Գաուկը՝ «Հայերի, արամեացիների, ասորիների և Պոնտոսի հույների նկատմամբ ցեղասպանության 100-րդ տարելիցի հիշատակին» նվիրված միջոցառմանը, որին մասնակցելու համար եկեղեցիները հրավիրվել էին Բեռլինի Մայր տաճար: Որպես քաղաքականության ներկայացուցիչ՝ դաշնային նախագահ Գաուկն ասաց. «Հայերի ճակատագիրն օրինակ է զանգվածային կոտորածների, էթնիկ զտումների, տեղահանությունների, ավելին՝ ցեղասպանությունների պատմության համար, որով այդքան սարսափելիորեն խարանված է 20-րդ դարը»:

Դրանով նախանշվեց 2015 թ. ապրիլի 24–ին Բունդեսթագի լի-ազումար նիստի ուղղությունը: Բունդեսթագի նախագահ պրոֆ. Նորբերթ Լամերթն իր ներածական խոսքում հստակեցրեց դա. «Միջազգային իրավունքում ցեղասպանությունը քրեական հան-ցակազմ է՝ ազգային, էթնիկ, ռասայական կամ կրոնական խում-բը որպես այդպիսին ամբողջությամբ կամ մասամբ ոչնչացնելու դիտավորություն ունեցող արարքների համար: Առաջին համաշ-խարհային պատերազմի ընթացքում Օսմանյան կայսրությունում համաշխարհային հանրության աչքի առջև տեղի ունեցածը ցե-ղասպանություն էր: Ճշմարտության ինքնաքննադատական խոս-տովանությունը հաշտեցման նախադրյալ է: Դա ներառում է 100 տարի առաջ կատարված հանցագործությունների համար Գեր-մանական կայսրության համապատասխանատվությունը նշելը: Թեև կայսրության ղեկավարությունն ընդգրկուն կերպով տեղե-կացված էր, սակայն իր ազդեցությունը չօգտագործեց: Նրա հա-մար Օսմանյան կայսրության հետ ռազմական դաշինքն ավելի կարևոր էր, քան մարդկային կյանքեր փրկելու համար միջամտու-թյունը: Այս մեղսակցությունն ընդունելը Հայաստանի, ինչպես և Թուրքիայի առջև մեր արժանահավատության նախադրյալն է»:²

Չնայած բոլոր պատգամավորների հստակ ու շահագրգիռ ելույթներին՝ 2015 թ. ապրիլի 24–ին համատեղ որոշում չընդուն-վեց: Դա տեղի ունեցավ միայն 2016 թ. հունիսի 2–ին: Հիրավի

² 2014 թ. հուլիսի 3–ին Գերմանիայի Բունդեսթագում տեղի ունեցած «Առա-ջին համաշխարհային պատերազմի 100 տարին» ոգեկոչման ժամանակ պրոֆեսոր Լամերթը միակն էր, որ հիշեցրեց հայերի ցեղասպանության մասին: Նա ասաց. «Հայերի տեղահանությունն ու բնաջնջումը պատե-րազմ վարելու միջոց դարձրին բռնազաղթն ու զանգվածային սպանությու-նը»: Պրոֆեսոր Աֆրեդ Գրոսերը, որ հանդես եկավ հիմնական ելույթով, ակներևաբար որևէ դրդառիթ կամ անհրաժեշտություն չէր տեսնում նման բան ասելու համար:

պատմական էր 2016 թ. փետրվարի 25-ի լիազումար քննարկումը, որի ժամանակ պատգամավոր Ջեմ Օզդեմիրը առանցքային դեր խաղաց բանաձևի անհապաղ ընդունման համար: Ի դեպ՝ բովանդակային առումով Գերմանական կայսրության դերի առնչությամբ այն միանշանակ ավելի ճշգրիտ ու մանրամասն է («Բունդեսթագն ափսոսանք է հայտնում Գերմանական կայսրության անփառունակ դերի համար, որը, որպես Օսմանյան կայսրության հիմնական ռազմական դաշնակից, չնայած հայերի կազմակերպված տեղահանության ու բնաջնջման մասին նաև գերմանացի դիվանագետների և միսիոներների հստակ հաղորդումներին, չփորձեց կասեցնել մարդկության դեմ այս հանցագործությունները»), քան 2005 թ. իր տարբերակը: Հատկապես կարևոր է «1915 և 1916 թվականներին հայերի և այլ քրիստոնյա փոքրամասնությունների նկատմամբ ցեղասպանության հիշատակ և ոգեկոչում» վերնագրի «Ցեղասպանություն» (Völkermord) բառը:

Դաշնային երկրամասերին (չհաշված թվով քիչ բացառությունները, օրինակ՝ Բրանդենբուրգը և Սաքսոնիա-Անհալթը³) 2016 թվականի բանաձևում արված առաջարկությունը՝ «Ներկայումս Գերմանիայում դպրոցական, համալսարանական և քաղաքական կրթության առջև դրված է հայերի տեղահանության ու բնաջնջման թեմային՝ որպես 20-րդ դարի էթնիկ հակամարտությունների պատմության իմաստավորման ու հաղթահարման մա-

³ 1996 թ. փետրվարից Սաքսոնիա-Անհալթի մշակույթի և կրթության նախարարությունը մշակույթի և կրթության նախարարների համաժողովի հանձնարարությամբ Հայաստանի Հանրապետության հետ կնքված մշակութային համաձայնագրի շրջանակներում ներկայացնում է Գերմանիայի բոլոր դաշնային երկրամասերը: Նշված ժամանակից ի վեր այս հիմքի վրա Սաքսոնիա-Անհալթի և Հայաստանի միջև երկկողմ շփումներն ինտենսիվացել են՝ տարածվելով ոչ միայն մշակութային ոլորտի, այլև կրթության ու գիտության ոլորտում համագործակցության վրա: 1998 թվականին այս կապակցությամբ ստորագրվել է համապատասխան պայմանագիր:

սի՝ ուսումնական ծրագրերում և նյութերում անդրադառնալու և ապագա սերունդներին փոխանցելու խնդիր: Այստեղ հատկապես կարևոր դեր ունեն դաշնային երկրամասերը» (այս հատվածը համադրելի ձևով պարունակում է նաև 2005 թվականի տարբերակը), մինչ օրս չի իրականացվել:

բ) Ներկան

Թեև Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրն ունի միջազգային տեղորոշվածություն, այդուհանդերձ, այն անթերագնահատելի դեր է խաղում Գերմանիայի և Հայաստանի երկկողմ հարաբերություններում: Գերմանիայի Դաշնային Հանրապետությունը ԵԱՀԿ Մինսկի խմբի մաս է կազմում, սակայն համառոտագրում են ԱՄՆ-ը, Ռուսաստանը և Ֆրանսիան: Ընդհանուր առմամբ՝ հայ քաղաքական գործիչները գերմանական մոտեցումը գնահատում են որպես հավասարակշռված: Դաշնային Հանրապետությունից սպասումը մեծ էր հատկապես 2016 թվականին, երբ նախագահում էր ԵԱՀԿ-ում: Լեռնային Ղարաբաղի դեպքում, որտեղ 2016 թվականի ապրիլի սկզբին ծանր մարտեր սկսվեցին, ԵԱՀԿ-ն կարողացավ առնվազն զսպիչ ազդեցություն ունենալ նաև ԱԳ նախարար Շտայնմայերի ջանքերի շնորհիվ: 2016 թվականի ապրիլի սկզբին Մինսկի խումբը համաձայնության եկավ համատեղ հայտարարության շուրջ: 2016 թվականին ԵԱՀԿ-ում գերմանական նախագահությունը առաջարկներ մշակեց հակամարտության հարցերով ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցիչ, դեսպան Կասպժիկի դիտորդական խմբի ընդլայնման, ինչպես նաև հրադադարի խախտումների դեպքում արձագանքման մեխանիզմ ստեղծելու վերաբերյալ: Բայց դրանք չընդունվեցին:

Թեև Դաշնային Հանրապետությունը, ինչպես միջազգային դերակատարների ճնշող մեծամասնությունը, ներառյալ ԵՄ-ն, 2020 թվականի աշնանը 44-օրյա պատերազմի ընթացքում բացի ընդհանուր կոչերից՝ որևէ որոշակի քայլ չձեռնարկեց, այդուհանդերձ, թեման քննարկումների առարկա դարձավ Գերմանական Բունդեսթագում 2020 թ. հոկտեմբերի 7-ին տեղի ունեցած հարցուպատասխանի ժամին, 2020 թ. հոկտեմբերի 29-ին՝ Բունդեսթագում հրատապ հարցերի ժամին, և Բունդեսթագում՝ 2020 թ. նոյեմբերի 26-ի բանավեճի ժամանակ: Ընդունված որոշումը՝ «Աջակցություն Լեռնային Ղարաբաղում խաղաղության երկարաժամկետ լուծման զարգացմանը», հնարավոր է, որ եղել է Բունդեսթագի փոխնախագահ Կատրին Գյորինգ-Էքարդթի և Տնտեսական համագործակցության ու զարգացման դաշնային նախարար Սվենյա Շուլցեի այցի սկզբնապատճառներից կամ պատճառներից մեկը: Իսկ ԵՄ դեկլարության նախաձեռնությունները (Եվրամիության խորհրդի նախագահ Շառլ Միշելի այցը տարածաշրջան 2021 թվականի ամռանը, շարունակվող եռակողմ հանդիպումները (Փաշինյան, Ալիև, Միշել)), ԵՄ Արևելյան գործընկերության աշխուժացումից, տարածաշրջանային կայունացումից զատ, առանց որի չէր աշխատի ԵՄ-ի և Ադրբեյջանի միջև հեռահար էներգետիկ գործընկերությունը, նաև ունեին Ռուսաստանին որոշ չափով սահմանափակելու նպատակ:

Հնարավոր է, որ այն ժամանակվա Դաշնային կանցլեր Անգելա Մերկելի այցը Հայաստան դիտարկվել է Ղարաբաղյան հակամարտության համատեքստում: Հայաստանում տեղի ունեցած իշխանափոխությունից հետո արևմտյան որոշ շրջանակներում հույս կար, որ առաջիկայում հնարավոր է այս երկարամյա հակամարտության շուտափույթ խաղաղ կարգավորում: Փաշինյանը համարվում էր այն քաղաքական գործիչներից մեկը, որը

կարող էր դա իրականացնել: Համենայն դեպս, այդպիսին էր այն ժամանակվա պատկերացումը:

Ամեն դեպքում, Գերմանիայի Դաշնային Հանրապետությունը արևմտյան այլ գործընկերների հետ միասին վերջերս պարբերաբար առաջ է քաշել Ղարաբաղյան հակամարտության կարգավորման Մինսկի գործընթացի շարունակությունը՝ ի տարբերություն Ադրբեյջանի և Թուրքիայի, որոնք համատեղ հաղթանակից հետո Մինսկի խումբը համարում են իր դարն ապրած:

Երկար ժամանակ է, ինչ Հայաստանը վարում է ԵՄ–ի հետ մերձեցման քաղաքականություն: Սկզբում թվում էր, թե ասոցացման համաձայնագիրը իրատեսական նպատակ է: Ռուսական կողմի միջամտությունը կանխեց դա: Այնուհետև Հայաստանը նշանառության տակ առավ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը (ՀԸԳՀ), որը ստորագրվեց 2017 թ. նոյեմբերի վերջին: Այս համաձայնագրի ինչպես ստեղծմանը, այնպես էլ հետագայում ԵՄ անդամ երկրների կողմից վավերացմանը Գերմանիայի Դաշնային Հանրապետությունը ակտիվ աջակցություն է ցուցաբերել:

Երկկողմ համագործակցության կարևոր բաղադրիչ է իրավաքաղաքական աջակցությունը: 2018 թվականի Թավշյա հեղափոխությունից հետո վարչապետ Նիկոլ Փաշինյանի կառավարության աշխատանքի առանցքային ուղղություններից մեկը հատկապես արդարադատության ոլորտում բարեփոխումների հավակնոտ ծրագրերն են: Այստեղ առանցքային նախագծեր են կայուն ժողովրդավարական ինստիտուտների ստեղծումը, կոռուպցիայի դեմ պայքարը, ինչպես նաև բարեփոխումները քրեական իրավունքի, քրեակատարողական իրավունքի և քրեական դատավարության իրավունքի, ինչպես նաև սահմանադրական իրավունքի ոլորտներում: Դրանում կարևոր մասնակցություն ունի

«Միջազգային իրավական համագործակցության» գերմանական հիմնադրամը (ՄԻՀ, IRZ), որը Հայաստանում ներկայացված է իր գրասենյակով: Ստորև ներկայացվող փոքր ընտրանին պատկերացում է տալիս Հայաստանում ՄԻՀ-ի աշխատանքի մասին. սեմինար Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական խորհրդի հետ՝ «Նոր դատավորների նշանակման կարգը» և «Դատավորի անձեռնմխելիություն» թեմաներով, սեմինար Հատուկ քննչական ծառայության հետ՝ «Ապօրինի ձանապարհով ձեռք բերված գույքի վերադարձ արտերկրից, փողերի լվացում և այլն» թեմայով, ինչպես նաև ապագա և ակտիվ դատավորների ու դատախազների համար սեմինար Արդարադատության ակադեմիայի հետ համագործակցությամբ՝ «Ենթադրությունները և ապացուցման բեռը քրեական դատավարությունում» թեմայով: Անհրաժեշտության դեպքում Հայաստանը դիմում է նաև Վենետիկի հանձնաժողովին, որը Եվրախորհրդի՝ պետություններին սահմանադրական իրավունքի վերաբերյալ խորհրդատվություն տրամադրող կառույց է:

Հայաստանում քաղաքացիական հասարակության զարգացմանը կարևոր նպաստ են բերում կուսակցամերձ քաղաքական հիմնադրամները, ինչպիսիք են «Ֆրիդրիխ Էբերտ» հիմնադրամը, Կոնրադ Ադենաուեր հիմնադրամը, «Ֆրիդրիխ Նաուման» հիմնադրամը և «Հայնրիխ Բյոլ» հիմնադրամը: Ի տարբերություն Ադրբեջանի, որտեղ նրանց գործունեությունը չի թույլատրվում, նրանք Հայաստանում նաև Թավշյա հեղափոխությունից առաջ կարող էին ազատ ու անկաշկանդ աշխատել:

Պետության կողմից իրականացվող՝ զարգացմանն ուղղված համագործակցության (տեխնիկական համագործակցության) կարևոր հենասյուն է Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերությունը (ԳՄՀԸ, GIZ): Ընկերության կողմից իրա-

կանացվող ծրագրերից են Հայաստանում սիրիացի փախստականների տնտեսական ինտեգրումը, ինչպես նաև աջակցությունը Հայաստանի փոքր և միջին ձեռնարկությունների (ՓՄՁ) զարգացմանը կամ Հարավային Կովկասում եվրոպական չափանիշներին իրավական մերձեցումը:

Բացի տեխնիկական համագործակցությունից՝ կա ֆինանսական համագործակցություն, որի համար իրավասու է Վերականգնման վարկային հաստատությունը (ՎՎՀ, KfW): ՎՎՀ-ն «Գերմանա-հայկական» հիմնադրամի (ԳՀՀ, GAF) միջոցով ծրագրային վարկեր է տրամադրում բնակարանային պայմանների բարելավման, ՓՄՁ-ներում էներգաարդյունավետության, ՓՄՁ-ների աջակցության և գյուղատնտեսության աջակցության նպատակներով, աջակցում է ՓՄՁ-ներին առևտրային բանկերի միջոցով, ֆինանսավորում հայկական բարձրավճար էլեկտրացանցերի արդիականացման աշխատանքները և շատ այլ ծրագրեր:

ՎՎՀ-ն առավել լայն հանրությանը հայտնի դարձավ հայաստանյան ուղենշային նախագիծ «ԹՈՒՄՈ» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի Բեռլինի մասնաճյուղի հետ կապված, որին Դաշնության տարածքում հաջորդելու են նորերը: Ինչպես հայտնի է, դա ստեղծվեց Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելի հայաստանյան այցի արդյունքում: 2018 թվականի ամռանը նա այցելել էր «ԹՈՒՄՈ» կենտրոն, շատ էր տպավորվել հայեցակարգով, իսկ վերադառնալուց հետո նախաձեռնել էր Գերմանիայում հայկական մոդելի հիման վրա «ԹՈՒՄՈ» կենտրոններ ստեղծելու գործը:

Այստեղ նշված զարգացման համագործակցության համար Գերմանիայի Դաշնային Հանրապետությունը Հայաստանին

1992 թվականից ի վեր տրամադրել է ավելի քան 750 միլիոն եվրո շատ պատկառելի գումար:

Բացի դրանից՝ Գերմանիան Հայաստանի կարևորագույն առևտրային գործընկերն է ԵՄ շրջանակներում: Գերմանական արտահանման ամենակարևոր ապրանքներն են ավտոմեքենաները, սարքավորումները, քիմիական նյութերը և էլեկտրատեխնիկան, ներմուծման ամենակարևոր ապրանքներն են երկաթը, պողպատը, պղինձը, մոլիբդենը և այլ մետաղներ, ինչպես նաև տեքստիլ ապրանքներ:

Թեև ասվում է, որ Գերմանիան Հայաստանի կարևորագույն օտարերկրյա ուղղակի ներդրողներից է, բայց դա, անշուշտ, կարող է ավելի ընդլայնվել: Ուղղակի ներդրումներն ապահովում են աշխատատեղեր, և դրանք Հայաստանի համար հրատապ անհրաժեշտություն են: Թե Գերմանական տնտեսության արևելյան հանձնաժողովի զանազան այցելություններն արդյոք ինչ-որ արդյունք տվել են կամ ինչ արդյունք են տվել, այդ մասին, հավանաբար, կիմանանք ավելի ուշ:

Վերադառնանք տնտեսական համագործակցության և զարգացման նախարար Սվենյա Շուլցեի հայաստանյան այցին: Նրա նախարարության մի հայտարարությունից տեղեկանում ենք, որ նա Հայաստանի կառավարության հետ պայմանավորվել է զարգացմանն ուղղված գերմանա-հայկական համագործակցությունը վերափոխել երկկողմ գործընկերության: Դա նշանակում է, որ ապագայում միջկառավարական կանոնավոր բանակցություններում կհամաձայնեցվեն զարգացման համագործակցության համար համատեղ հիմնաթեմաներ և դրանց համար կհատկացվեն համապատասխան միջոցներ:

Այդ կապակցությամբ նախարարն ասել էր. «Վերջին տարիներին Հայաստանը մեծ բարեփոխումների է հասել կոռուպցիայի

դեմ պայքարում, անկախ դատական համակարգի զարգացման և ընտրական համակարգի բարեփոխման գործում: Մենք ապրում ենք մարտահրավերային ժամանակներում, երբ Ուկրաինայի դեմ Ռուսաստանի հարձակողական պատերազմը սպառնում է ամբողջ տարածաշրջանի կայունությանը: Այս առձակատումային ժամանակաշրջանում հատկապես կարևոր է սերտ համագործակցությունը մեր արևելյան բարեփոխամետ հարևանների հետ: Մենք ցանկանում ենք զարգացմանն ուղղված մեր համագործակցության միջոցով աջակցել Հայաստանին բարեփոխումների իր ճանապարհին և ԵՄ-ի հետ իր հետագա մերձեցման գործում: Մեր հանդիպումը մեկնարկային ազդանշան էր Գերմանիայի և Հայաստանի միջև զարգացմանն ուղղված նոր ամուր երկկողմ համագործակցության համար»:

Սա խոսում է երկու երկրների միջև երկկողմ գործընկերության ընդլայնման օգտին: Եթե նկատի ունենանք, որ ԵՄ-ն Հայաստանում և Հայաստանի հետ աշխատում է նույն ոգով, ապա հայաստանյան տեսանկյունից ավելի լավ ապագայի նոր հնարավորություններ ու հեռանկարներ կան, որոնք հատկապես կարևոր են արտաքին քաղաքական փոթորկալից ժամանակներում:

ԳԼՈՒԽ I

ՀԱՅ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայ-գերմանական տնտեսական հարաբերությունների առանցքային ուղղությունները

Մերի Նավասարդյան, Սոս Խաչիկյան

Միջազգային տնտեսական հարաբերություններում երկրների միջև կնքված միջպետական պայմանագրերը, համաձայնագրերն ու այլ փաստաթղթեր ունեն մեծ նշանակություն: Այս առումով հայ-գերմանական տնտեսական հարաբերությունները զարգացել են ոչ միայն երկկողմանի պայմանավորվածությունների, այլև վերազգային կառույցների՝ Եվրոպական միության և Եվրասիական տնտեսական միության կանոնակարգային դրույթներին համապատասխան: Ակնհայտ է, որ վերջին տարիներին Հայաստանի ու Եվրոպական միության կողմից քննարկումների մեծ ընթացակարգ անցած և ընդունված «Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը»,¹ ինչպես նաև ԵՄ քաղաքականության նոր հիմնադրույթներ ներառող «Համաշխարհային դարպաս» (The Global Gateway²) նախաձեռնությունը կարող են արդի խթան լինել հայ-գերմանական տնտեսական փոխհարաբերությունների համար:

¹ Ուժի մեջ է մտել 2021 թ. մարտի 1-ից:

² The Global Gateway. Joint Communication to the European Parliament, the Council, the European Economic and Social Committee, the Committee of the Regions and the European Investment Bank. Brussels, 1.12.2021.

Փորձագիտական քննարկումներում կարծիք կա, որ 1990–ական թվականներին հայ–գերմանական տնտեսական համագործակցության հիմնական ասպեկտը ֆինանսական ու տեխնիկական օժանդակությունն էր՝ ուղղված հակամարտության հետևանքների վերացմանը, մրցունակ շուկայական տնտեսության և հանրային կառավարման արդյունավետ համակարգի ձևավորմանը, աղքատության և դրա սոցիալական հետևանքների դեմ պայքարին:³ Այս առումով պետք է նշել, որ Գերմանիան Հայաստանի Հանրապետությանը մշտապես տրամադրել է նաև մարդասիրական օգնություն մեքենասարքավորումների տեսքով, որը 2020 թ. կազմել է ԵՄ կողմից հատկացված ամբողջ օժանդակության մոտ 20%–ը:⁴

Հայ–գերմանական տնտեսական համագործակցության հիմքերը դրվել են դեռևս ՀՀ անկախության ձեռքբերման սկզբնական շրջանում: Տնտեսական ոլորտի միջպետական առաջին փաստաթղթերից է «Հայաստանի Հանրապետության կառավարության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարության միջև ուսումնասիրությունների և մասնագետների հիմնադրամ ստեղծելու վերաբերյալ» համաձայնագիրը:⁵ Այդ փաստաթղթով նախատեսվել է ստեղծել կառույց՝ նպատակ ունենալով խթանելու զործընկերային տնտեսական համագործակցությունը:

Տնտեսական հարաբերությունների ձևավորման ու զարգացման նպատակային քայլերից է եղել «Հայաստանի Հանրապե-

³ Թովմայան Մարտին, «Հայ–գերմանական տնտեսական համագործակցությունը 1991–2008 թթ.», ԵՊՀ ՈՒԳԸ գիտական հոդվածների ժողովածու, 2016, N 1.6 (16), էջ 64:

⁴ ՀՀ սոցիալ–տնտեսական վիճակը 2021 թվականին, Վիճակագրական կոմիտե, 2022, 4.1.2 Մարդասիրական օգնություն բաժին:

⁵ Ընդունվել է 1995 թ. մայիսի 25–ին, ուժի մեջ է մտել 1998 թ. դեկտեմբերի 1–ից:

տության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության միջև կապիտալ ներդրումների խրախուսման ու փոխադարձ պաշտպանության մասին» միջպետական պայմանագիրը,⁶ որի դրույթները նախատեսում են խորացնել երկու երկրների տնտեսական համագործակցությունը՝ ձգտելով բարենպաստ պայմաններ ստեղծելու տնտեսական գործունեություն իրականացնող սուբյեկտների կողմից կապիտալ ներդրումներ կատարելու համար: Մասնավոր սեփականության պաշտպանությունը կապիտալ ներդրումների բոլոր ոլորտներում եղել է պայմանագրի հիմնական բովանդակությունը: Այդ պայմանագիրը կարևոր դեր է ունեցել պլանային տնտեսությունից շուկայական տնտեսության անցնելու համատեքստում՝ տնտեսական հարաբերությունների մեջ ներմուծելով տնտեսության ազատականացման հիմնարար դրույթներ:

ՀՀ տնտեսության ազատականացմանը զուգահեռ գերմանական կառավարությունը առաջնահերթ համարեց աջակցել հատկապես էներգետիկ ոլորտի արդիականացմանը: Դա հիմնավորվում էր տնտեսության շարժիչ ուժ համարվող էներգիայի կարևորությամբ: Ելնելով էներգետիկ անկախության ապահովման անհրաժեշտությունից՝ այդ ոլորտում ֆինանսական համագործակցության համաձայնագիր է կնքվել,⁷ որը համարվում է ՀՀ էներգետիկ նախագծերի զարգացման կարևոր փուլը:

⁶ Ընդունվել է 1995 թ. դեկտեմբերի 21-ին, ուժի մեջ է մտել 2000 թ. օգոստոսի 4-ից: Ուժի մեջ մտնելու պահից սկսած Հայաստանի Հանրապետության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության միջև դադարել է գործելուց ԳԴՀ-ի և ԽՍՀՄ-ի միջև 1989 թ. հունիսի 13-ին կնքված «Կապիտալ ներդրումների փոխադարձ պաշտպանության և խրախուսման մասին» պայմանագիրը:

⁷ Հայաստանի Հանրապետության կառավարության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարության միջև ֆինանսական համագործակցության վերաբերյալ համաձայնագիր («Էներգետիկայի բնագավառում անհապաղ օգնության միջոցառումներ (Քանաքեռի հիդրոէլեկտ-

Հայ-գերմանական տնտեսական հարաբերությունների զարգացման էական գործընթաց է նաև օդային հաղորդակցության մասին միջպետական համաձայնագրի⁸ կնքումը, քանի որ ՀՀ բեռնափոխադրումների և ուղևորափոխադրումների բնականոն կազմակերպման մեջ օդային տրանսպորտը կարևոր գործոն է: Երկու երկրների միջև օդային հաղորդակցության զարգացման անհրաժեշտությունը դրսևորվում է նաև այսօր, քանի որ զբոսաշրջությունը ՀՀ տնտեսության գերակա ուղղություններից մեկն է: Այս համատեքստում կարևոր է նշել, որ ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների համաձայն՝ 2021 թ. Գերմանիայից Հայաստան ժամանած զբոսաշրջիկների թիվը 2020 թ. համեմատ կտրուկ աճի միտում է գրանցել՝ ավելացել է 5,7 անգամ:⁹

Հետխորհրդային Հայաստանի տնտեսական հիմքերի ամրապնդման շրջանակում կնքված հայ-գերմանական փաստաթղթերի շարքին է դասվում նաև տեխնիկական համագործակցության մասին համաձայնագիրը:¹⁰ Քանի որ այն վերաբերում է սոցիալ-տնտեսական առաջընթացին, ապա տնտեսական առումով համաձայնագրի կարևորությունն ակնհայտ դրսևորվում է 2-րդ հոդվածի դրույթների միջոցով. Գերմանիայի կառավարության կողմից աջակցություն կարող է ցուցաբերվել ՀՀ կրթական,

րակայան) նախագիծ»): Կնքվել է 1997 թ. հունիսի 25-ին, ուժի մեջ է մտել 1998 թ. փետրվարի 9-ից:

⁸ Հայաստանի Հանրապետության կառավարության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարության միջև օդային հաղորդակցության մասին համաձայնագիր: Կնքվել է 1998 թ. մայիսի 4-ին, ուժի մեջ է մտել 2000 թ. դեկտեմբերի 1-ից:

⁹ ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2021 թվականին, Վիճակագրական կոմիտե 2022, 4.2.1, Միջազգային զբոսաշրջություն:

¹⁰ Հայաստանի Հանրապետության կառավարության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարության միջև տեխնիկական համագործակցության մասին համաձայնագիր: Կնքվել է 1998 թ. հուլիսի 27-ին, ուժի մեջ է մտել 1999 թ. հունիսի 28-ից:

խորհրդատվական և հետազոտական հաստատություններին, ինչպես նաև ծրագրերի մշակման, ուսումնասիրությունների և փորձաքննությունների անցկացման գործընթացներին: Դա նշանակում է, որ տեխնիկական աջակցության առումով կարևորվում է տնտեսական գործունեության գիտակրթական ասպեկտը, որը առաջնահերթություն է ինչպես համաշխարհային զարգացման, այնպես էլ ՀՀ կառավարության ծրագրերի համատեքստում:

Հայ-գերմանական տնտեսական փոխգործակցության զարգացման կարևոր ոլորտ է ավտոմոբիլային ձանապարհներով ուղևորափոխադրումների և բեռնափոխադրումների կանոնակարգումը¹¹: Հատկանշական է, որ համաձայնագրի հիմնավորման մեջ ընդգծվում է երկու երկրների առևտրային և տնտեսական հարաբերությունների փոխշահավետ զարգացումը, իրենց տարածքների տարանցմամբ ավտոմոբիլային ձանապարհներով իրականացվող միջազգային ուղևորափոխադրումները և բեռնափոխադրումները: Այս փաստաթուղթը կարող է արդիական լինել Հարավային Կովկասի տարածաշրջանում հաղորդակցությունների բացման այժմյան քաղաքականության ձևավորման շրջանակում: Դրա տնտեսական արդյունավետությունը մեր հանրապետության համար կլինի շատ ավելի նշանակալի, եթե այդ քաղաքականությունը մշակվի հարավային միջանցքի զբոսաշրջության զարգացման ծրագրի¹² և Հյուսիս-Հարավ տրանսպորտային միջանցքի¹³

¹¹ Հայաստանի Հանրապետության կառավարության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարության միջև ավտոմոբիլային ձանապարհներով միջազգային ուղևորափոխադրումների և բեռնափոխադրումների մասին համաձայնագիր: Կնքվել է 2011 թ. մայիսի 26-ին, ուժի մեջ է մտել 2012 թ. ապրիլի 20-ից:

¹² Հայաստան. հարավային միջանցքի զբոսաշրջության զարգացման ռազմավարություն, 2015 թ. հանրայնացված փաստաթուղթ N103149, 155 էջ:

¹³ North-Sought Rout Corridor, Investment program, Yerevan 2021, <https://publiccontent.sinpro.cz/PublicFiles/2022/02/17/Priloha%202%20-%20>

դրույթներին համապատասխան: Այդ նախագծերն ունեն ոչ միայն տնտեսական, այլև աշխարհաքաղաքական կարևոր նշանակություն, որոնց արդյունավետ կառավարումը կապահովի ՀՀ զարգացման նոր օրակարգ՝ նպաստելով դիմակայունության բարձրացմանն ու միջազգայնացմանը: Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի կարևորությանն անդրադարձել է ՀՀ-ում ակտիվ գործունեություն իրականացնող գերմանական կառույցներից մեկը՝ «Ֆրիդրիխ Էբերտ» հիմնադրամը: Հայաստանի տնտեսական վիճակին վերաբերող վերլուծական հրապարակումներից մեկում ներկայացված է հետևյալ տեսակետը. «Տնտեսական կապերի դիվերսիֆիկացումը Եվրասիական տնտեսական միությունից դեպի ԵՄ, Մերձավոր և Հեռավոր Արևելքի երկրներ կարևոր է Հայաստանի համար: Մասնավորապես տնտեսական կապերի հետագա զարգացումն Իրանի հետ և հատկապես հաղորդակցության ուղիների գործարկումը հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի միջոցով կարող է նշանակալի փոփոխություններ ապահովել: Դա հնարավորություն կտա հարավին միանալու Ռուսաստանին Վրաստանի, իսկ ԵՄ-ին՝ Սև ծովի միջոցով՝ ուժեղացնելով Հայաստանի տնտեսությունը և բարձրացնելով նրա տարածաշրջանային դերը»:¹⁴ Ըստ էության, տնտեսական վերլուծության այսպիսի շեշտադրումները նշանակում են, որ Հայաստանի միջոցով ինչպես Գերմանիան, այնպես էլ ԵՄ այլ երկրներ կարող են ձևավորել տնտեսական հարաբերություններ Իրանի, Ռուսաստանի, Մերձավոր և Հեռավոր Արևելքի, ինչպես նաև այլ երկրների հետ:

Sisian_Kajaran_Eng_21.07.2021-163925392.pdf (վերջին մուտք՝ 2022 թ. օգոստոսի 16):

¹⁴ The Economic Situation in Armenia: Opportunities and Challenges in 2017. February 2017, p. 20.

Միջպետական համաձայնագրերի մեջ տնտեսական գործունեության ոլորտներ կանոնակարգող փաստաթղթերից է նաև գաղտնի տեղեկատվության փոխադարձ պաշտպանության մասին համաձայնագիրը,¹⁵ որի կարգավորման շրջանակը՝ ի թիվս այլ ոլորտների, ընդգրկում է տնտեսական և գիտատեխնիկական տեղեկատվությունը: Այդ համաձայնագրի կարևորությունը մեծ է հատկապես այժմ, քանի որ տեղեկատվական հոսքերի ու տվյալների բազաների կառավարումն այսօր տնտեսական քաղաքականության առանցքային ուղղություններից է, իսկ դրանց պաշտպանությունը վստահության ու լավ կառավարման կարևոր ցուցիչ է:

Ակնհայտ է, որ հայ-գերմանական տնտեսական հարաբերությունների պատմությունը նշանավորվել է իրավական լուրջ հիմքերի ստեղծմամբ, որը շարունակվում է նաև այժմ: Մասնավորապես ՀՀ կառավարության հաղորդագրության մեջ նկատելի է հետևյալ արձանագրումը. «ՀՀ-ԳԴՀ տնտեսական օրակարգում հեռանկարային են համարվել արևային էներգետիկայի, տեխնոլոգիաների ոլորտներում ծրագրերը: Այս առումով վերահաստատվել է փոխգործակցությունը շարունակելու պատրաստակամությունը»:¹⁶ Ըստ էության, էներգետիկան և տեխնոլոգիաներն ընդգծվել են որպես տնտեսական համագործակցության թիրախային ուղղություններ: Ակնհայտ է, որ այդ առումով ՀՀ-ում կան ինչպես խնդիրներ, այնպես էլ զարգացման մեծ հնարավորություններ:

Սակայն պետք է նշել, որ տնտեսական հարաբերությունների ձևավորման ու զարգացման իրավական ուժեղ հիմքերին համար-

¹⁵ Հայաստանի Հանրապետության կառավարության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարության միջև գաղտնի տեղեկատվության փոխադարձ պաշտպանության մասին համաձայնագիր: Ընդունվել է 2013 թ. հուլիսի 30-ին, ուժի մեջ է մտել 2016 թ. մայիսի 4-ից:

¹⁶ <https://www.primeminister.am/hy/press-release/item/2022/07/20/Nikol-Pashinyan-meeting/> 20.07.2022 (վերջին մուտք՝ 2022 թ. օգոստոսի 16):

ժեք չեն արձանագրվել առևտրատնտեսական բարձր ցուցանիշներ: Այսինքն՝ այն ներուժը, որն ամրագրված է միջպետական կանոնակարգերի դրույթներով, ամբողջությամբ չի իրացվում: Դա երևում է ՀՀ վիճակագրական կոմիտեի արտաքին տնտեսական գործունեության մի շարք ցուցանիշների վերլուծության շրջանակում, որն արտացոլված է Աղյուսակ 1-ում:

**Աղյուսակ 1. ՀՀ արտաքին և փոխադարձ առևտրաշրջանառությունը 2018–2021 թթ. ժամանակահատվածում
17 (հազ. դոլար)**

	2018	%	2019	%	2020	%	2021	%
ՀՀ ընդամենը	7 387 970.2	100	8 154 073.6	100	7 120 267.4	100	8 379 234.2	100
ԵՄ մասնաբաժին	1 838 708.0	24.9	1 733 402.3	21.3	1 285 885.8	18.1	1 587 280.7	18.9
որից՝ Գերմանիա	432 947.1	5.9	451 297.0	5.5	297 251.2	4.2	289 814.1	3.5

Ներկայացված տվյալները ցույց են տալիս, որ ՀՀ արտաքին և փոխադարձ առևտրաշրջանառության ցուցանիշները ԵՄ հետ ունեցել են հիմնականում նվազման միտում: Միայն 2021 թ. նախորդ տարվա համեմատ արձանագրվել է 0,8 տոկոսային կետով աճ, որը միանշանակ չի արտահայտում ՀՀ–ԵՄ տնտեսական փոխգործակցության ամբողջական ներուժը: Եթե այդ ցուցանիշները դիտարկենք ՀՀ–Գերմանիա առևտրաշրջանառության տեսանկյունից, ապա 2018–2021 թթ. ժամանակահատվածում դրանք

¹⁷ Կազմվել է հեղինակների կողմից ՀՀ վիճակագրական կոմիտեի սոցիալ–տնտեսական ցուցանիշների 2018–2021 թթ. տարեկան զեկույցների հիման վրա:

ցուցաբերել են կայուն նվազման միտում ԵՄ մասնաբաժնի հետ ունեցած համամասնության շրջանակում՝ 5,9 տոկոսից նվազելով մինչև 3,5 տոկոս:

Հայ-գերմանական տնտեսական հարաբերություններն ինչպես երկկողմ, այնպես էլ ԵՄ շրջանակում բարձր արդյունավետություն չեն ցուցաբերել նույնիսկ 2014 թ. հետո, երբ Եվրոպական հանձնաժողովի որոշմամբ Հայաստանի Հանրապետությունն ընդգրկվել է ԵՄ վերանայված «Արտոնությունների ընդհանրացված և համալրված համակարգի (GSP+)» արտոնյալ առևտրային ռեժիմի նոր փուլում:¹⁸ Ինչպես նշված է այդ համակարգի 2018–2019 թթ. հաշվետվության մեջ,¹⁹ արտոնյալ առևտրային ռեժիմի առավելություններն օգտագործվել են հիմնականում մետաղական արտադրանքի իրացման նպատակով: Այսինքն՝ առևտրատնտեսական արդյունավետ համակարգ չի ձևավորվել նույնիսկ արտոնությունների այդպիսի պայմաններում, որը նշանակում է, որ միայն իրավական–փաստաթղթային հենքը բավարար չէ գործարար ակտիվության մակարդակի բարձրացման համար: Հետևաբար անհրաժեշտ է իրականացնել խորքային և բազմաշերտ վերլուծություն՝ պատճառահետևանքային կապերն ուսումնասիրելու և համապատասխան քաղաքականություն մշակելու նպատակով:

Էներգետիկ ոլորտում հայ-գերմանական տնտեսական արդի հարաբերություններում առկա է զարգացման մեծ ներուժ: Դա պայմանավորված է ՀՀ էներգետիկայի բնագավառի զարգաց-

¹⁸ ՀՀ Էկոնոմիկայի նախարարության պաշտոնական կայք. <https://www.mineconomy.am/page/790> (վերջին մուտք՝ 18.08.2022)

¹⁹ The EU Special Incentive Arrangement for Sustainable Development and Good Governance ('GSP+') assessment of Armenia covering the period 2018–2019. Joint Staff Working Document, Brussels, 10.2.2020, p. 4.

ման ռազմավարական ծրագրով,²⁰ որտեղ «Թվային էներգետիկա» բաժնում նշված է հետևյալը. «Տեղեկատվական տեխնոլոգիաներն ու դրանց ստեղծած նոր հնարավորությունները շարունակաբար վերափոխում են շուկաները՝ առաջարկելով տվյալների կառավարման վրա հիմնված ամբողջովին նոր բիզնես մոդելներ ու կենսակերպ, և էներգետիկան ամբողջ աշխարհում այդ տրանսֆորմացիայի մաս է կազմում: Կայուն և խելացի էներգետիկան տնտեսության դինամիկ զարգացման կարևորագույն պայմաններից մեկն է՝ ուղղված մարդկանց կյանքի բարելավմանն ու կենսամակարդակի բարձրացմանը»: Այս համատեքստում պետք է նշել, որ Հայաստանի թվայնացման ռազմավարությունը²¹ տեխնոլոգիական լուծումների առումով լրացնում է էներգետիկ բնագավառի զարգացման ռազմավարությանը²²՝ իրավական դաշտի նոր կարգավորումներ ապահովելով տնտեսական մոդելների ներդրման շրջանակում: Ակնհայտ է, որ էներգետիկ և թվայնացման ռազմավարությունները նախապայման են ստեղծում՝ համատեղելու հետևյալ ոլորտները.

- էներգետիկա,
- տնտեսական նոր մոդելներ,
- թվային տնտեսություն:

²⁰ Հայաստանի Հանրապետության էներգետիկայի ոլորտի զարգացման ռազմավարական ծրագիր (մինչև 2040 թվականը), ՀՀ կառավարության 2021 թ. հունվարի 14-ի N48-Լ որոշում:

²¹ ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 11-ի N183-Լ որոշում Հայաստանի թվայնացման ռազմավարությանը, ռազմավարության միջոցառումների ծրագրին և արդյունքային ցուցանիշներին հավանություն տալու մասին:

²² Մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է Հայաստանի թվայնացման ռազմավարության 3-րդ մասում՝ «Տնտեսություն», որտեղ նաև շեշտադրված է Գերմանիան՝ որպես միջազգային առաջավոր փորձի օրինակ:

Այսպիսի մոտեցումը հնարավորություն կտա տնտեսության կառուցվածքային փոփոխություններ ապահովելու՝ նպաստելով նոր տնտեսական համակարգի ձևավորմանն ու դիվերսիֆիկացնելով ռիսկերը:

Անհրաժեշտ է նշել, որ Հայաստանի էներգետիկ ոլորտը հետաքրքրում է նաև Գերմանիային, որտեղ փորձագիտական մակարդակի հրապարակումներում կարևորվում է ՀՀ կառավարության կողմից ընդունված 2022–2030 թթ. էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ծրագիրը,²³ որի շրջանակներում պետք է նվազեցնել էներգառեսուրսների ներմուծումը և էներգետիկ շուկայում խթանել մրցակցությունը:²⁴

Հայ-գերմանական տնտեսական համագործակցության ձևավորման համատեքստում մեծ դերակատարում ունեն ոչ միայն տնտեսվարողները, այլև այնպիսի կազմակերպություններ, որոնք տնտեսության ոլորտում ուսումնասիրություններ, հետազոտություններ ու վերլուծություններ են իրականացնում: Այդպիսի կառույցներից է Գերմանական միջազգային համագործակցության (ԳՄՀ) կազմակերպությունը (GIZ), որն օժանդակում է Հայաստանի տնտեսությանը՝ տեղական և միջազգային ներդրողների համար բարելավելու ներդրումային միջավայրը, բարեփոխումների շրջանակում խորհրդատվություն մատուցելով կառավարությանը՝ կենտրոնանում տեղեկատվական տեխնոլոգիաների, ճարտարագիտության, զբոսաշրջության ու գինեգործության

²³ Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի 2022–2030 թվականների ծրագիր, ՀՀ կառավարության 2022 թ. մարտի 24–ի N398–Լ որոշում:

²⁴ Pavel Bilek, German Economic Team, July–August 2022. See at: <https://www.german-economic-team.com/en/newsletter/armenias-energy-sector-recent-developments-out-look/> (Last access in 23 August 2022).

ոլորտների վրա:²⁵ Գերմանական միջազգային համագործակցության առաջնահերթություններից է նաև տեղական տնտեսական զարգացումը և մասնավոր հատվածի զարգացումը, որոնց վերաբերյալ ծրագրեր են իրականացվում ոչ միայն Հայաստանում, այլև ամբողջ Հարավային Կովկասում²⁶:

ՀՀ տնտեսության ոլորտի հիմնախնդիրների հետ կապված հետազոտություններ են իրականացվում գերմանական Կոնրադ Ադենաուեր հիմնադրամի միջոցով: Այդ առումով բազմակողմ ուսումնասիրություններ և վերլուծություններ են մշակվել այնպիսի հետազոտական աշխատանքներում, ինչպիսիք են «Հայաստանի ներդրումային միջավայրը. իրավական դաշտը և առկա հիմնախնդիրները»,²⁷ «Ղարաբաղյան երկրորդ պատերազմի ազդեցությունը ՀՀ տնտեսության վրա»,²⁸ «ՀՀ էներգետիկ համակարգի զարգացման հեռանկարները. էներգետիկ անվտանգություն և վերականգնվող էներգիա»²⁹: Այս և նմանատիպ այլ աշխատանքներում հիմնադրամը շեշտադրում է կատարում տնտեսա-

²⁵ <https://www.giz.de/en/worldwide/374.html> (վերջին մուտք՝ 18.08.2022):

²⁶ GIZ South Caucasus, Together in Europe. Available at: https://www.giz.de/en/downloads/giz2016-en-Regional_Folder_with_Factsheets.pdf (վերջին մուտք՝ 18.08.2022):

²⁷ <https://www.kas.de/documents/269781/0/Investitionsumfeld+in+Armenien+Gesetzliche+Rahmenbedingungen+und+Herausforderungen.pdf/cf99bd95-1e25-fdc1-ea87-5d6095ae2197?version=1.0&t=1558444559578> (վերջին մուտք՝ 20.08.2022):

²⁸ https://www.kas.de/de/web/suedkaukasus/publikationen/einzeltitel/-/content/auswirkungen-des-zweiten-berg-karabakh-krieges-auf-die-armenische-wirtschaft?fbclid=IwAR3BrjGOzV6qHlBTQo-Adxvq1aqtLua_jM8wODYBiSbbNcF8verxxjcfBLo (վերջին մուտք՝ 20.08.2022):

²⁹ <https://www.kas.de/documents/269781/0/Entwicklungsperspektiven+f%C3%BCr+das+Energiesystem+der+Republik+Armenien%D6%89+Energiesicherheit+und+Erneuerbare+Energien.pdf/3d05ad83-8215-01b2-92ff-c6de903faf9e?version=1.0&t=1645085172101> (վերջին մուտք՝ 20.08.2022):

կան քաղաքականության մշակման վրա: Պետք է նշել, որ Կոնրադ Ադենաուեր հիմնադրամի ուշադրության կենտրոնում է նաև տնտեսական լրագրողական համայնքը՝ նպաստելով արդյունավետ գործընկերության հաստատմանը «Տնտեսական լրագրողների ակումբ» հասարակական կազմակերպության հետ:³⁰

«Ֆրիդրիխ Էբերտ» հիմնադրամի գործունեությունը Հայաստանում առնչվում է նաև տնտեսության ոլորտներին: Աղքատության հաղթահարմանը, գյուղական համայնքների զարգացմանն ու դրանց համատեքստում տնտեսական ակտիվության խթանմանը վերաբերող հետազոտություններից կարելի է նշել հետևյալները. «Զբաղված աղքատների ֆենոմենը Հայաստանում»,³¹ «Համայնքների ձևավորումը որպես սոցիալ-տարածական պրակտիկա»,³² «Գյուղականության ճգնաժամը Հայաստանում»³³ և այլ աշխատանքներ, որոնց առանցքում հիմնականում տեղական ինքնակառավարման մակարդակում տնտեսության զարգացման հիմնախնդիրների ուսումնասիրությունն է:

Հայաստանում գործունեություն իրականացնող գերմանական հասարակական կառույցներից է «Ֆրիդրիխ Նաուման» հիմնադրամը, որի տնտեսական գործունեության շրջանակը կանանց գործարար ակտիվությանն աջակցելն է, ինչպես նաև նորարարության ու ձեռնարկատիրության վերաբերյալ հանրային միջոցառումներ կազմակերպելը:³⁴

³⁰ <https://www.ejc.am/hy> (վերջին մուտք՝ 20.08.2022):

³¹ <https://library.fes.de/pdf-files/bueros/georgien/17944-20210722.pdf> (վերջին մուտք՝ 20.08.2022):

³² <https://library.fes.de/pdf-files/bueros/georgien/18436.pdf> (վերջին մուտք՝ 20.08.2022):

³³ <https://library.fes.de/pdf-files/bueros/georgien/19277.pdf> (վերջին մուտք՝ 20.08.2022):

³⁴ <https://www.freiheit.org/south-caucasus/work-friedrich-naumann-foundation-armenia> (վերջին մուտք՝ 20.08.2022):

Հայ-գերմանական տնտեսական համագործակցության զարգացմանը նպաստող կազմակերպություն է «Գերմանական տնտեսական միավորում» հասարակական կազմակերպությունը,³⁵ որի նպատակն է գործարար դաշտի հայաստանյան ու գերմանական կազմակերպությունների համար քննարկումների հարթակ ստեղծելը, նրանց փոխգործակցության նպատակով համապատասխան տեղեկատվությամբ ապահովելը, գործարար միջոցառումների կազմակերպումն ու նմանատիպ այլ գործառույթներ: Այս կազմակերպության գործունեությունը նպատակաուղղված է նաև հայ-գերմանական գործարար հատվածի ներկայացուցիչների միջև վստահության միջավայրի ստեղծմանը, ինչն էական նշանակություն ունի գործընկերության հաստատման ու համագործակցության զարգացման առումով:

«Գերմանական տնտեսական միավորման» գործունեության կարևոր ուղղություններից է նաև գերմանացի ավագ փորձագետների ծառայությունների մատուցմանն ուղղված գործողությունների խթանումը Հայաստանում,³⁶ որը մեծ նշանակություն ունի հայ-գերմանական տնտեսական միջավայրի ձևավորման գործում: Ավագ փորձագետների ծառայության գործունեության շրջանակը³⁷ տնտեսական ակտիվության խթանման առումով բավականին լայն է, և այս կառույցի ներգրավվածության ընդլայնումը ՀՀ գործարար դաշտում նշանակալի փոփոխություններ կառաջացնի ինչպես Հայաստանի տնտեսության, այնպես էլ հայ-գերմա-

³⁵ <https://dvw.am/hy/home-%d5%b0%d5%a1%d5%b5%d5%a5%d6%80%d5%a5%d5%b6/> (վերջին մուտք՝ 20.08.2022):

³⁶ <https://dvw.am/hy/services/ses/> (վերջին մուտք՝ 20.08.2022):

³⁷ <https://www.ses-bonn.de/en/activities/international> (վերջին մուտք՝ 20.08.2022):

նական տնտեսական հարաբերությունների արդիականացման առումով:

Հայաստանի և Գերմանիայի միջև տնտեսական հարաբերությունների զարգացմանն ուղղված հիմնարար փաստաթուղթ է «Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը»:³⁸ Այս փաստաթուղթը տնտեսական հարաբերությունների կարգավորման առումով մի շարք անկյունաքարային դրույթներ է պարունակում, որոնք ամրագրված են ներածական մասում և վերաբերում են դրանց հիման վրա քաղաքականության կառուցմանը: Մասնավորապես, ըստ համաձայնագրի, կողմերը «հայտնում են տնտեսական համագործակցությունը խորացնելու պատրաստակամություն», «ստեղծում են նոր միջավայր տնտեսական հարաբերությունները և առավելապես առևտրի ու ներդրումների զարգացումը, ինչպես նաև մրցակցությունը խթանելու համար, որոնք տնտեսության վերակառուցման և արդիականացման համար ունեն կարևոր նշանակություն»: Էական նշանակություն ունեցող պարտավորվածություն է նաև այն, որ կողմերը «հանձն են առնում ապահովելու միջուկային ապահովության և միջուկային անվտանգության բարձր մակարդակներ»: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ այս համաձայնագրի շրջանակում Հայաստանը դիտարկվում է ԵՄ–ի՝ ներառյալ Գերմանիայի, ինչպես նաև քիչ թվով այլ երկրների հետ միասին միջուկային անվտանգության հանձնառու, իսկ Գերմանիան տիրապետում է միջուկային լուրջ տեխնոլոգիաների, ապա դա կարող է էականորեն բարձրացնել Հայաստանի գործարար և գիտական միջավայրի հետ համագոր-

³⁸ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիր մի կողմից՝ Հայաստանի Հանրապետության, մյուս կողմից՝ Եվրոպական միության և Ատոմային էներգետիկայի եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների միջև, ուժի մեջ է մտել 2021 թ. մարտի 1-ից:

ծակցելու հնարավորությունները՝ նպաստելով տնտեսական նոր մեխանիզմների ստեղծմանը: Միջուկային գիտահետազոտական կառույցների շրջանակում մեծացնելով էներգետիկ և տնտեսական հզորությունները՝ Հայաստանը կարող է բարձրացնել անվտանգային միջազգային երաշխիքները:

Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի 4-րդ մասը վերաբերում է տնտեսական համագործակցությանը, որտեղ տնտեսական երկխոսությանը վերաբերող դրույթները ներկայացված են առաջին պլանով: Այս առումով Գերմանիան կարող է առաջատար դեր ունենալ ԵՄ հետ ՀՀ գործարար միջավայրի ինտեգրման ու գործընկերության հաստատման տեսանկյունից: Այդ նպատակով հայ-գերմանական տնտեսական քաղաքականության ուղղություններից պետք է լինի բոլոր այն հայեցակարգային մոտեցումների բացահայտումը, որոնք համընկնում են ԵՄ առաջնահերթությունների ու այդ շրջանակում ՀՀ հետ կնքված պայմանագրային դրույթների հետ: Դա պետք է վերաբերի համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի «էներգետիկ համագործակցությունը՝ ներառյալ միջուկային անվտանգությունը» հատվածին, որի 42-րդ հոդվածում ամրագրված են հետևյալ դրույթները.

- վերականգնվող էներգիայի աղբյուրների օգտագործման, էներգաարդյունավետության և էներգախնայողության խթանում,
- էներգիայի և տարածաշրջանային շուկաների ինտեգրման շուրջ տարածաշրջանային համագործակցության խթանում,
- քաղաքացիական միջուկային էներգետիկայի ոլորտում համագործակցության ընդլայնում՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության առանձնահատկություն-

ները և կենտրոնանալով, մասնավորապես, միջուկային անվտանգության բարձր մակարդակների վրա՝ հիմք ընդունելով Ատոմային էներգիայի միջազգային գործակալության (ԱՏԷՄԻԳ) ստանդարտները և Եվրոպական միության ստանդարտներն ու փորձը, նաև կենտրոնանալով միջուկային անվտանգության բարձր մակարդակների վրա՝ հիմք ընդունելով միջազգային ուղենիշներն ու փորձը:

Այս դրույթները լայն հնարավորություններ են ընձեռում միջազգայնացման ու Գերմանական ընկերությունների հետ համագործակցության ընդլայնված ցանցի ստեղծման համար:

Առաջիկա երկու տասնամյակի համար՝ մինչև 2040 թ., ԵՄ կողմից ընդունվել է «Համաշխարհային դարպաս» (The Global Gateway) ծրագիրը, որը կապակցությունների ընդլայնված ռազմավարություն է՝ նպատակ ունենալով ստեղծելու խելացի, կայուն և ապահով ուղիներ աշխարհի տարբեր երկրների միջև՝ թվային, էներգիայի և տրանսպորտի ոլորտներում:³⁹ Թեև շեշտը հստակ դրված է կոշտ և փափուկ (hard and soft) ենթակառուցվածքների զարգացման ու դրանց կարգավորող շրջանակների վրա, նախաձեռնությունը նաև նպատակ ունի ամրապնդելու առողջապահական, կրթական և հետազոտական համակարգերն ամբողջ աշխարհում: Իսկ հետազոտական, տեխնոլոգիական զարգացման ու նորարարության ոլորտում համագործակցության բաղադրիչները ներառված են ՀՀ-ԵՄ համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի 13-րդ գլխում: Սակայն գիտական, հետազոտական ու վերլուծական կառույցներ ստեղծելը և դրանք տնտեսական գործունեության նպատակով կիրառելը մեր հան-

³⁹ The Global Gateway: A Recipe for EU Geopolitical Relevance. Discussion paper No323, by Chloe Teevan, San Bilal, Ennatu Domingo, and Alfonso Medinilla, June 2022, ECDPM, p.1.

րապետությունում դեռևս հեռու է բավարար լինելուց: Հետևաբար անհրաժեշտ է քաղաքականություն մշակել և կարողություններ զարգացնել, որոնք հնարավորություն կտան հետազոտական ու վերլուծական բաղադրիչները փոխակերպել տնտեսական հնարավորությունների: Այսինքն՝ ստեղծելով փաստաթղթային հենքը՝ պետք է ներդրվեն նաև այն ձևավորող դրույթների կիրարկման մեխանիզմները: Հակառակ պարագայում որևէ քաղաքականության մշակման նպատակով ծախսվող հանրային միջոցները կարող են լինել անարդյունավետ, ինչպես արտոնյալ առևտրային ռեժիմի (GSP+) պարագայում էր:

Պետք է հաշվի առնել, որ Գերմանիան ԵՄ ենթակառուցվածքային խոշոր նախագծերի հիմնական ֆինանսավորողներից է,⁴⁰ և ՀՀ կողմից ներկայացվող հետազոտական հայտերում տնտեսական (էներգետիկ, միջուկային և այլ) ենթակառուցվածքների զարգացման ոլորտում առաջնահերթությունների սահմանումը նոր հնարավորություններ կստեղծի հայ-գերմանական գործարար ծրագրերի համար:

Գերմանիան մեծ նախաձեռնողականություն է ցուցաբերում Եվրոպայի և Ասիայի միջև հաղորդակցության նոր ուղիների ու ենթակառուցվածքների ստեղծման ռազմավարական ծրագրում:⁴¹ Լինելով տնտեսական ենթակառուցվածքների ձևավորման մեզանախագիծ՝ այն ենթադրում է նաև Հայաստանի մասնակցություն ցամաքային տրանսպորտային ցանցի միջոցով՝ որպես ԵՄ արևելյան գործընկերության երկիր:⁴² Ակնհայտ է, որ դեպի ասի-

⁴⁰ Նույն տեղում, էջ 8:

⁴¹ Connecting Europe and Asia – Building blocks for an EU Strategy. Joint Communication to the European Parliament, the Council, the European Economic and Social Committee, the Committee of the Regions and the European Investment Bank. Brussels, 19.9.2018.

⁴² Նույն տեղում, էջ 5 (Land Transport):

ական շուկաներ ստեղծվող հաղորդակցության ուղիներն ունեն տնտեսական բազմաթիվ բաղադրիչներ, որոնց հետ փոխկապվածությունը Հայաստանի համար կապահովի նոր որակական հարաբերությունների ստեղծում: Այս նախագիծը հայ-գերմանական տնտեսական համագործակցության ձևավորման նոր հարթակ է, որը մեծ ներուժ ունի Հայաստանի միջազգայնացման ու գործարար նոր մշակույթի ներդրման առումով:

Պետք է նշել, որ Հայաստանը, ընդգրկվելով ԵՄ ինտեգրացիոն գործընթացների մեջ, կարող է ակտիվություն ցուցաբերել տարբեր նախագծերում ներգրավվելու տեսանկյունից, քանի որ առկա են ինչպես համաշխարհային նախագծեր, այնպես էլ Ֆինանսավորման հնարավորություններ: Այստեղ անհրաժեշտ են նախաձեռնողականություն և վստահելի ԵՄ գործընկեր: Ի թիվս այլ երկրների՝ Գերմանիան դրանց շարքում է, և տնտեսական նոր հեռանկարները աննախադեպ հաջողություններ կարող են արձանագրել հայ-գերմանական հարաբերություններում: Այդ ուղությամբ աշխատանքները պետք է ներառեն պետության, մասնավոր հատվածի և քաղաքացիական հասարակության կառույցների համատեղ գործունեությունը:

Ամփոփելով հայ-գերմանական տնտեսական հարաբերությունների 30-ամյա զարգացման առանձնահատկությունների վերաբերյալ ուսումնասիրությունները՝ կարելի է արձանագրել հետևյալ բնորոշ գծերը.

- Հայաստանի անկախության առաջին տարիներին Գերմանիան ցուցաբերել է իրավական, ֆինանսական, տեխնիկական, տեխնոլոգիական և այլ բնույթի օժանդակություն շուկայական տնտեսության սկզբունքների ամրապնդման և սոցիալ-տնտեսության քաղաքականության իրականացման նպատակով:

- Հայ-գերմանական տնտեսական հարաբերությունները բնութագրող ցուցանիշները մշտապես առաջավոր դիրք են ունեցել Եվրամիության այլ երկրների հետ համեմատության համատեքստում: Դա վկայում է արդեն իսկ ստեղծված գործընկերային հարաբերությունների առկայության և դրանց ընդլայնման հնարավորությունների մասին:
- Չնայած հայ-գերմանական առևտրատնտեսական ցուցանիշները մշտապես եղել են ԵՄ երկրների շարքում ամենաբարձրը, սակայն բացարձակ մեծության արժեքով չեն արտացոլում այն ամբողջ ներուժը, որը հնարավոր է իրացնել առկա համաձայնագրերի և համաշխարհային նախագծերի շրջանակում:
- Հայեցակարգային մոտեցումների ընդարձակ բազա է առկա ինչպես հայ-գերմանական երկկողմ հարաբերություններում, այնպես էլ ԵՄ հետ վերագգային մակարդակում: Փաստաթղթային հենքը համատեղ գործողությունների հսկայական դաշտ է ապահովում ՀՀ տնտեսության բոլոր ոլորտներում գործունեություն իրականացնելու առումով:
- Տարածաշրջանային ու միջազգային նշանակության այնպիսի ծրագրեր, ինչպիսիք են ՀՀ-ԵՄ միջև կնքված Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը, ԵՄ «Համաշխարհային դարպաս» նախագիծը, «ԵՄ-Ասիա» հաղորդակցությունների զարգացման ռազմավարական ծրագիրը, «Հորիզոն Եվրոպա» գիտահետազոտական ծրագիրը, ՀՀ հյուսիս-հարավ ձանապարհային միջանցքի նախագիծը հնարավորություն են տալիս Գեր-

մանիայի հետ զարգացնելու տնտեսական գործընկերության բազմաձյուղ մոդել:

- Էներգետիկան, թվային տեխնոլոգիաները և միջուկային նախագծերը կարևոր ոլորտներ են, որոնց շրջանակում մեծ ներուժ է առկա գիտության առևտրայնացման ու տնտեսության զարգացման համար:

Ակնհայտ է, որ չնայած հայ-գերմանական տնտեսական հարաբերությունները հետխորհրդային 30-ամյա ժամանակահատվածում ունեցել են զարգացման բավականին ընդարձակ նախադրյալներ, այնուամենայնիվ, դրանց կիրառական մեխանիզմները թույլ են: Այժմ ստեղծված են ինչպես Գերմանիայի հետ երկկողմ, այնպես էլ ԵՄ հետ վերազգային հարաբերությունների ձևավորման նոր, հսկայական հնարավորություններ, և պետական քաղաքականության ու մասնավոր նախաձեռնությունների շրջանակում անհրաժեշտ է ապահովել հայ-գերմանական տնտեսական փոխգործակցության արդիականացում:

Բանալի բառեր՝ հայ-գերմանական տնտեսական հարաբերություններ, առևտրային հարաբերություններ, տնտեսության ազատականացում, էներգետիկ ոլորտի արդիականացում, տնտեսական համագործակցություն, էներգետիկ անվտանգություն, էներգակիրներ, Գերմանական տնտեսական միավորում, ներդրումային միջավայր, Եվրասիական տնտեսական միություն, Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիր

Տնտեսական գործակցությունը նպաստում է քաղաքական երկխոսությանը

Հարցազրույց **Շթենֆան Քեզերայնի** հետ
Գերմանական տնտեսության արևելյան հանձնաժողովի (գ. մ.)
Արևելյան Եվրոպայի տարածաշրջանային տնօրեն

— Ինչպե՞ս է զարգացել հայ-գերմանական տնտեսական գործակցությունը Հայաստանի անկախացումից հետո:

— Գերմանիայի Դաշնային Հանրապետությունը առաջին երկրներից էր, որ ձանաչեց Հայաստանի Հանրապետությունը 1991 թվականին՝ նրա անկախության հռչակումից հետո: Գերմանիան դեռևս շատ շուտ էր սկսել բազմատեսակ հարաբերություններ զարգացնել Հայաստանի հետ, այդ թվում, իհարկե, նաև տնտեսական կապերը: Գերմանական արտահանման գծով այսօր Հայաստանը զբաղեցնում է 102-րդ տեղը, իսկ գերմանական ներմուծման գծով՝ 112-րդը: Գերմանիայի Դաշնային Հանրապետությունը աճող կարևորություն ունեցող տնտեսական գործընկեր է Հայաստանի համար: Հայկական արտահանումների շուրջ չորս տոկոսը ուղղվում է Գերմանիա, իսկ գերմանական ապրանքներին բաժին է ընկնում հայկական ներմուծման շուրջ 1,6 տոկոսը: Իր գործունեությամբ Արևելյան կոմիտեն՝ իր գործընկերների հետ համատեղ, աշխատում է տնտեսական հարաբերությունների ինտենսիվացման վրա:

— Ի՞նչ գնահատական կտայիք ներկայիս շրջանակային պայմաններին այդ գործակցությունը խթանելու համար:

— Անցած տարիներին Հայաստանի կառավարությունները շարունակաբար աշխատել են ներդրումային պայմանների բարելավման վրա: Հատկապես 2019 թվականից սկսած Հայաստանը զգալի առաջընթաց է գրանցել կոռուպցիայի դեմ պայքարում և այս հարցում կարողացել է էապես բարելավել իր դիրքերը: Վերջին տարիներին բարելավվել են նաև հարկման և վարչարարական գործընթացների պարզեցման շրջանակային պայմանները, և այդ իսկ պատճառով դրանք ավելի գրավիչ են դարձել գործարարների համար: Այս ուղին անհրաժեշտ է շարունակել և ամրապնդել:

— Ո՞ր ոլորտներն են առանձնապես գրավիչ երկու կողմերի համար:

— Գերմանական ընկերությունների համար Հայաստանը մի շարք հետաքրքիր հնարավորություններ է առաջարկում: Գերմանական ընկերությունները վերջին տարիներին իրենց համար բացահայտել են Հայաստանը հատկապես հանքարդյունաբերության և զբոսաշրջության ոլորտներում, ինչպես նաև թվայնացման կամ բիզնես գործընթացների տեղափոխման (աութսորսինգի — BPO) ոլորտներում:

Հայաստանը շատ լավ է զարգացել որպես SS ծառայությունների և այդ ոլորտում գործակցության վայր: Միևնույն ժամանակ պետք է հաշվի առնել, որ խոշոր աշխատախմբերի համար այդ վայրը հարմար չէ: Արտասահմանյան ընկերությունները հիմնական շեշտը դնում են որակապես բարձրարժեք գործակցության, ինչպես նաև տեղական SS ոլորտի գաղափարների ու ստեղծագործական մտքի վրա: Հայաստանը շահում է բուհերի և դպրոցնե-

րի կրթական լավ կառուցվածքից, որոնք պատմականորեն ուժեղ կողմնորոշում ունեն դեպի բնագիտությունը: Դրա լավ օրինակն է «ԹՈՒՄՈ» կենտրոնը, որն այժմ բազմաթիվ միջազգային մասնաձյուղեր ունի, այդ թվում՝ Բեռլինում: «ԹՈՒՄՈ» կենտրոնում պատանիներն ու երիտասարդները կարող են արտադարոցական պայմաններում բարելավել իրենց հմտությունները թվայնացման բնագավառում և պատրաստվել համապատասխան մասնագիտությունների:

Ընդլայնվելու հնարավորություն ունեն գյուղատնտեսության և պարենային ոլորտները, հատկապես՝ տեխնոլոգիական ավելի բարձր աստիճան պահանջող նեղ կիրառման ապրանքների հետ կապված:

— Ինչ դեր է խաղում թվայնացման ասպարեզում Հայաստանի հետ գործակցությունը, և ինչ ծրագրեր են իրականացվել/պլանավորվել դրա հետ կապված:

— Գերմանիայի և Հայաստանի տարբեր գործընկերների հետ համատեղ Արևելյան կոմիտեն այս տարի կազմակերպել է համացանցային սեմինարների (վեբինարների) շարք, որպեսզի գերմանական ընկերությունների համար ավելի պարզ դարձնեն հայկական SS ոլորտը: Արդեն իսկ շատ հաջողված է «SAP ստարտափ ֆաբրիկա» («SAP Startup Factory») նախագիծը, որը նախաձեռնել է գերմանական SAP ծրագրային ընկերությունը՝ Հայաստանում Business Angel Network Armenia-ի և Տեխնիկական գործակցության ընկերության (GIZ-ի) հետ համատեղ: «SAP ստարտափ ֆաբրիկա»-ն միջազգայնացման հարցում աջակցում է Հայաստանի SS ստարտափներին և օգնում նրանց գտնելու նոր բիզնես գործընկերներ: SAP-ը իր հաճախորդների բազան և զարգացման կառույցները հասանելի է դարձնում հայկական ստարտափներ-

րին: Այսպես են օգտագործվում և նպատակաուղղված խթանվում Հայաստանի ուժեղ կողմերը: Նման դրական օրինակների թիվը անհրաժեշտ է ընդլայնել:

— Ինչպե՞ս եք գնահատում Հայաստանի կառավարության ներկայիս շահագրգռվածությունը Գերմանիայի հետ տնտեսական գործակցության հարցում:

— Մեր փորձը վկայում է, որ Գերմանիան միշտ կարևոր գործընկեր է եղել Հայաստանի կառավարությունների համար: Դա վերաբերում է նաև ներկայիս կառավարությանը: Մենք պարբերաբար շփման մեջ ենք: Դա են վկայում վերջին տարիների բազմաթիվ փոխայցելությունները, որոնց ընթացքում Արևելյան կոմիտեն կարողացել է իր անդամների համար հանդիպումներ կազմակերպել Հայաստանի կառավարության ներկայացուցիչների հետ: Այնտեղ մեզ համար դռները բաց են:

Թագավարակի համաձայնակի ժամանակ ուղևորությունների սահմանափակումների պատճառով ֆիզիկական այցելությունները, ցավոք, ստիպված պետք է կրճատվեն: Այդուհանդերձ, 2020 և 2021 թվականներին երկկողմ բազմաթիվ բանակցություններ են կայացել թվային ձևաչափով Հայաստանի կառավարության և գերմանական արդյունաբերության ներկայացուցիչների միջև: Աշնանը Արևելյան կոմիտեն իր պատվիրակության հետ կմեկնի Հայաստան:

— Կարո՞ղ է արդյոք տարածաշրջանային տնտեսական համագործակցությունը նպաստել Հարավային Կովկասում տեղական քաղաքական երկխոսությանը:

— Համոզված եմ, որ տնտեսական գործակցությունը և ինտեգրումը կարող են նպաստել քաղաքական երկխոսության զար-

զացմանը: Դա Արևելյան կոմիտեի հիմնարար համոզմունքն է ոչ միայն Հայաստանի առնչությամբ: Գործարար հարաբերությունները խթանում են մարդկանց հանդիպումը և նպաստում բոլոր ներգրավվածների բարեկեցության աճին: Ընդհանուր տնտեսական շահերն ու նախագծերը կարող են կամուրջներ կառուցել:

Այնուամենայնիվ, պարզ է, որ քաղաքականությունը սահմանում է տնտեսական գործունեության շրջանակային նախադրյալներ, և որ գործակցության համար անհրաժեշտ է քաղաքական կամքի առկայություն: Առանց դրա դժվար կլինի նաև տնտեսական գործակցությունը:

— Տնտեսական գործակցության վրա ինչ ազդեցություն կարող են ունենալ Ուկրաինայի պատերազմն ու դրա հետ կապված Հայաստանի դիրքորոշումը:

— Ռուսաստանի պատերազմը Ուկրաինայում սարսափելի տառապանքներ է պատճառում Ուկրաինայի բնակչությանը: Իր աշխարհագրական դիրքի, տարբեր դաշինքների հետ կապվածության և տնտեսական ինտեգրումների պատճառով Հայաստանը հեշտ վիճակում չէ: Երկիրը մի կողմից՝ ԵԱՏՄ անդամ է, մյուս կողմից՝ ԵՄ-ի հետ ասոցացման համաձայնագիր ունի: Ինչ վերաբերում է Գերմանիայի հետ տնտեսական գործակցությանը, ապա 2022 թվականի առաջին կիսամյակում, այդուհանդերձ, տեսնում ենք երկկողմ առևտրի հսկայական աճ, իսկ համեմատած նախորդ տարվա հետ՝ ավելի քան երկու երրորդով:

Հայաստանում դիտվում է տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի ձեռներեցների մեծ հոսք Ռուսաստանից, որոնք պատերազմի բռնկումից հետո եկել են Երևան և գոնե ժամանակավոր աշխատում են այնտեղ: Սա մեծացնում է այս ոլորտում ծառայությունների համար երկրի ներուժը, սակայն միևնույն ժամանակ

ընկերությունները հայտնում են, որ ռուսաստանցի SS ձեռներեց-ների ներհոսքը Հայաստան հանգեցնում է երկրում մասնագետ-ների պահանջարկի աճի, ինչը դժվար է բավարարել:

— Ինչ տնտեսական հետևանքներ են առաջացնում Ռուսաստա-նի դեմ արևմտյան պատժամիջոցները ողջ հարավկովկասյան տարածաշրջանի համար:

— Ռուսաստանի դեմ արևմտյան պատժամիջոցները տար-բեր կերպ են ազդում տարածաշրջանի երկրների վրա: Բոլոր այդ երկրների համար բնորոշ է Ռուսաստանում «հրավիրված աշխա-տողների»՝ հայրենիք փոխանցվող դրամային միջոցների նվա-զումը: Նրանք վերադառնում են Ռուսաստանից կամ ավելի քիչ եկամուտ են ստանում տնտեսական իրավիճակի պատճառով: Ակնկալվում է նաև, որ դա կազդի դեպի Ռուսաստան արտահա-նումների վրա, հատկապես գյուղատնտեսական ապրանքնե-րի, ինչպես նաև կազդի զբոսաշրջության վրա: Այնուամենայնիվ, բեռնափոխադրումների երթուղիների վերակողմնորոշման տե-սանկյունից տարածաշրջանը կարող է կարևոր դեր խաղալ: Ամեն դեպքում, Կասպից ծովով, Հարավային Կովկասով և դրանից հե-տո Սև ծովով դեպի ԵՄ երթուղին ավելի երկար ու թանկ է, քան ռուսական տարածքով գոյություն ունեցող երթուղիները: Բացի դրանից՝ գոյություն ունեցող լոգիստիկ ենթակառուցվածքը աշ-խատում է արդեն իր կարողությունների սահմաններում:

Այստեղ մասշտաբի հաշվին զգալի էֆեկտի հասնելու համար պարտադիր է տարածաշրջանի բոլոր երեք երկրներում նավա-հանգիստների, երկաթուղիների և ճանապարհների ընդլայնումը: Այս զարգացմանը պետք է ուղեկցեն ավելի սերտ համաձայնեց-ված առաքումները, թվային գործիքակազմի և ինտեգրված լու-ծումների միջոցով լավ կազմակերպումներն ու ձևակերպումները:

Այդ զարգացումը պետք է առաջ մղվի քաղաքական մակարդակում ավելի սերտ գործակցության շնորհիվ: Ամեն դեպքում, Ասիայի և Եվրոպայի միջև տրանսպորտային այս միջանկյալ երթուղու պահանջարկը ընկերությունների կողմից մեծ է:

ԳԼՈՒԽ II

ՀԱՅ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ
ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ

Հայ-գերմանական քաղաքական հարաբերությունների զարգացումը Հայաստանի եվրոպական քաղաքականության համատեքստում

Աշոտ Ալեքսանյան

Ներածություն

Գերմանիան Եվրոպայում առաջատար դիրք է զբաղեցնում հասարակական կյանքի բոլոր ոլորտներում՝ դեմոկրատական քաղաքական համակարգով, բնակչության թվաքանակով, տնտեսական ու գիտատեխնիկական ներուժով, ռազմարդյունաբերական համալիրի զարգացման առումով: Իհարկե, մինչև առաջատար դիրք գրավելը Գերմանիան լուծել է բազմաթիվ խնդիրներ ինչպես ներքին, այնպես էլ՝ միջազգային:

Միավորումից հետո Գերմանիայում տեղի ունեցան ոչ միայն աշխարհագրական, քաղաքակրթական ու մշակութային, այլև տնտեսական ու քաղաքական փոփոխություններ, որոնք ազդեցին միջազգային հարաբերությունների ժամանակակից համակարգում Գերմանիայի կարգավիճակի վրա: Հետերկրեո ժամանակաշրջանում հայ-գերմանական քաղաքական հարաբերությունները դիտարկելիս կարելի է առանձնացնել մի քանի հիմնական ուղղություններ՝

- 1) Եվրոպական ուղղությունը,

- 2) ԱՄՆ-ի և ՆԱՏՕ-ի հետ հարաբերությունների ամրապնդումը,
- 3) ՄԱԿ-ի համակարգում Գերմանիայի կարգավիճակի բարձրացումը,
- 4) ԱՊՀ երկրների հետ համագործակցությունը:

21-րդ դարասկզբին Գերմանիայի արտաքին քաղաքական ռազմավարությունը ցույց է տալիս, որ երկիրը միջազգային ասպարեզում հասել է զգալի առաջընթացի և ազդեցիկ կշիռ ունի գլոբալ խնդիրների լուծման գործում:

Այս հոդվածի նպատակն է բացահայտել ժամանակակից Գերմանիայի արտաքին քաղաքականությանն ու սոցիալական կառուցվածքին բնորոշ առանձնահատկությունները, որոնք նպաստել են Հայաստանի հետ համագործակցության խորացմանը, որի հետագա զարգացումը մեծ մասամբ ընկալվում էր որպես իրական քաղաքական և տնտեսական գործընկերություն: Սա չափազանց կարևոր է, քանի որ հայ-ռուսական դաշնակցային պայմաններում Գերմանիան կոշտ պատժամիջոցների և քաղաքական ճնշման պրակտիկա է կիրառում Ռուսաստանի նկատմամբ՝ նվազագույնի հասցնելով Ռուսաստանի հետ երկխոսության ձևաչափերի մեծ մասը: Թերևս հատկանշական էր Շրյոդերի և Պուտինի պաշտոնավարման տարիներին հայ-գերմանական հարաբերություններում ձևավորված համագործակցության մթնոլորտը: Դրա հիման վրա երկու երկրներին հաջողվել է առաջ շարժվել փոխգործակցության մի շարք ոլորտներում, առաջին հերթին՝ տնտեսական, ռազմաքաղաքական և միջազգային ահաբեկչության դեմ պայքարի:

1. Արմատական փոփոխություններ տարածաշրջանային և եվրոպական քաղաքականության մեջ

20-րդ դարի վերջին և 21-րդ դարի սկզբին Հարավային Կովկասում, Եվրոպայում և ամենուր աշխարհաքաղաքական իրավիճակն արագորեն փոխվեց: Յալթա-Պոտսդամի միջազգային հարաբերությունների համակարգը, որը պայմանավորված էր հետպատերազմյան աշխարհակարգով, վերափոխվեց: Սա հանգեցրեց եվրոպական անվտանգության ոլորտում մարտահրավերների որակական փոփոխությունների: Հայաստանի դեպքում դրանք բնութագրվում են առաջին հերթին ռազմաքաղաքական սպառնալիքների նոր բովանդակությամբ: Համաշխարհային և տարածաշրջանային մասշտաբով լայնածավալ պատերազմի սահմանափակ հավանականության ֆոնին զինված՝ հակամարտությունների թիվն աճեց և շարունակում է աճել՝ տարածվելով աշխարհի տարբեր տարածաշրջաններում: Ի թիվս բազմաթիվ զինված հակամարտությունների ու կոնֆլիկտների՝ պատերազմական գործողություններ բռնկվեցին Լեռնային Ղարաբաղում և Հայաստանի ու Ադրբեյջանի միջև: Եթե Հայաստանի դեպքում ռազմաքաղաքական սպառնալիքները և մարտահրավերները հիմնականում կապված էին Լեռնային Ղարաբաղում պատերազմական գործողությունների հետ, ապա Գերմանիայի դեպքում՝ միջազգային ահաբեկչական կառույցների գործունեության ակտիվացման, զենքի, թմրանյութերի անօրինական տեղաշարժի, զանգվածային ոչնչացման զենքերի և դրանց կրիչների տարածման հավանականության աճի հետ: Այս բոլոր սպառնալիքները և առաջին հերթին զինված հակամարտությունները չափազանց վտանգավոր և կործանարար են իրենց հետևանքներով և, իհարկե, առավել մանրակրկիտ ուսումնասիրություն են պահանջում:

Մարտահրավերների դրսևորումների հաճախականության և մասշտաբների աճող իրավիճակում Հայաստանը բախվում է զինված հակամարտությունների ամբողջական կարգավորման և դրանց հետևանքների հաղթահարման անհրաժեշտությանը: Այս առումով կենսական նշանակություն ունի Գերմանիայի՝ որպես Արևմուտքի առաջատար և գլոբալ դերակատարներից մեկի դերը Հայաստանի համար՝ զինված հակամարտությունների քաղաքակիրթ կարգավորման ոլորտում: Ի թիվս այլ գործոնների՝ դա պայմանավորված էր Գերմանիայի՝ իր զինված ուժերը ՆԱՏՕ-ի պատասխանատվության գոտուց դուրս օգտագործել հրաժարվելուց՝ ի տարբերություն այլ արևմտյան երկրների: Գերմանիան, ունենալով հզոր ռեսուրսային բազա, 1990-ականների վերջերից աստիճանաբար ընդլայնեց Բունդեսվերը՝ առաջին հերթին կայունության և խաղաղության պահպանման համար:

Վերջին տասնամյակում տեղի են ունեցել լուրջ փոփոխություններ, որոնք հանգեցրել են նրան, որ Գերմանիան դարձել է եվրոպական ինտեգրման ոչ միայն տնտեսական, այլև քաղաքական առաջատարը:

Գերմանիայի և Հարավային Կովկասի երկրների միջև գործընկերության ընթացակարգերը ամրագրված են նաև Հարևանության քաղաքականության և ԵՄ արտաքին ու անվտանգության քաղաքականության գլոբալ ռազմավարության մեջ: Դրանք նաև դիտարկում են այն դժվարությունները, որոնց Գերմանիան և ԵՄ անդամ-երկրները բախվում են տարածաշրջանի երկրների հետ համագործակցության ծրագրերի իրականացման հարցում: Դրանց թվում են նման նախաձեռնությունների համակարգման, նպատակների սահմանման և արդյունավետության հետ կապված տեսանկյունները, ինչպես նաև ընդհանուր արտաքին քաղաքական իրավիճակը, որը էապես խոչընդոտել է եվրաինտեգրման՝

որպես հարավկովկասյան պետությունների զարգացման վեկտորներից մեկի խթանմանը:

Եվրոպական հարևանության քաղաքականությունը, Արևելյան գործընկերությունը և ԵՄ արտաքին ու անվտանգության քաղաքականության գլոբալ ռազմավարությունը քաղաքական հիմք են հայ-գերմանական, ինչպես նաև ԵՄ հարևանների հետ հարաբերությունների համար (Christou 2010; Korosteleva 2011; Börzel and Lebanidze 2015; Gylfason and Wijkman 2017): ԵՄ հարևանության քաղաքականության վերանայումը 2015 թ., ԵՄ նոր գլոբալ ռազմավարության ընդունումը՝ «Համատեղ տեսլական, ընդհանուր գործողություն. ավելի ուժեղ Եվրոպա» (EUR-Lex 2016), արտացոլեցին հարևան երկրներում ԵՄ արտաքին քաղաքականության զարգացման կարևոր փուլը: Դրա հիմնական առանձնահատկությունը ԵՄ արտաքին քաղաքական շահերի դերի ուժեղացումն է հարևան երկրների հետ փոխգործակցության ծրագրային գործիքների ձևավորման գործում (Barbé and Morillas 2019): Այս հանգամանքը հանգեցրեց ԵՄ աշխարհաքաղաքական բաղադրիչի բացահայտ ձանաչմանը նաև Հարավային Կովկասի երկրներում (EUR-Lex 2016, EEAS 2019):

ԵՄ արտաքին և անվտանգության քաղաքականության գլոբալ ռազմավարությունը, ներկայացնելով կենսունակություն (resilience) հայեցակարգը (European Commission 2017, 2022), ընդգծում է մարտահրավերներին և սպառնալիքներին ինքնուրույն հարմարվելու երկրների կարողությունը՝ գիտակցելով, որ ԵՄ-ն ի վիճակի չէ և չի կարող գործընկեր երկրներին պաշտպանել ձգնաժամերից:

Հայ-գերմանական հարաբերությունների և Հարավային Կովկասի տարածաշրջանի ապակայունացման լուրջ սպառնալիքներից մեկը ռուս-եվրոպական հարաբերությունների ձգնաժամային

գործոնն է: Թեև ընդհանուր առմամբ հասկանալի է, որ ԵՄ արտաքին քաղաքականության անցումն իդեալիզմից դեպի քաղաքական ռեալիզմ կարող է նպաստել Ռուսաստանի հետ զգուշավոր համագործակցությանը, կառուցողական երկխոսության տարածքը սահմանափակ է, և հարևան երկրների հետ հարաբերությունները շարունակում են մնալ ներգրավվածության հասնելու ամենադժվար ոլորտը: ԵՄ գլոբալ ռազմավարությունը, այսպիսով, հաստատեց, որ ԵՄ-ն Ռուսաստանը չի տեսնում որպես ռազմավարական գործընկեր, որի հետ հնարավոր է փոխադարձ շահերի վրա հիմնված համագործակցություն, ինչն ապրիորի ենթադրում է հակամարտություն Ռուսաստանի և ԵՄ-ի միջև հետխորհրդային տարածքում:

Հայաստանի ազգային անվտանգության ոլորտում որակական փոփոխությունների հաջորդ հատկանիշը սոցիալ-տնտեսական սպառնալիքների աճն է: Այդ սպառնալիքներն են կենսական ռեսուրսների բացակայությունը, ժողովրդագրական խնդիրները, աղքատությունը, գործազրկությունը, ինչպես նաև կրթության ու առողջապահության ցածր մակարդակը, բնապահպանական ու սանիտարահամաճարակային խնդիրները, կլիմայի փոփոխությունը: Հայաստանի դեպքում այդ սպառնալիքների ի հայտ գալը մեծ մասամբ ռազմաքաղաքական մարտահրավերներին անարդյունավետ հակազդեցության հետևանքն է:

Հայ հասարակության քաղաքական կյանքի ազատականացումն ու ժողովրդավարացումը դարձան 20-րդ դարավերջի և 21-րդ դարասկզբի վճռական փոփոխությունների հանգրվանները: Դրան նպաստեցին քաղաքական այնպիսի գործընթացներ, որոնցից էին ԽՍՀՄ տոտալիտար քաղաքական համակարգի և սոցիալիստական ճամբարի փլուզումը, Ռուսաստանի՝ որպես

ԽՍՀՄ իրավահաջորդի կառուցակցումը, Գերմանիայի միավորումը, եվրոպական ինտեգրման ակտիվացումը:

20-րդ դարավերջի աշխարհաքաղաքական առանցքային իրադարձություններից մեկը, որն առ այսօր որոշում է ուժերի հավասարակշռությունը Եվրոպայում և աշխարհում, Գերմանիայի միավորումն էր: 1990 թ. հոկտեմբերի 3-ից Եվրոպայի կենտրոնում հայտնվեց նոր ԳԴՀ, որը դարձավ եվրոպական քաղաքակրթության առանցքային դերակատար՝ ավելի քան 80 միլիոն բնակչությամբ, ժողովրդավարական քաղաքական համակարգով, հզոր տնտեսությամբ, զարգացած գիտությամբ ու մշակույթով:

Ցիվիլիզախիկ պետության արտաքին քաղաքականությունը և նրա հարաբերությունները գործընկերների հետ միջազգային ասպարեզում պետք է հիմնված լինեն վեց հիմնարար հենասյուների վրա՝ քաղաքականություն, տնտեսություն, գիտություն, կրթություն, մշակույթային և հումանիտար դաշտ: Հայաստանի և Գերմանիայի երկկողմ հարաբերությունները կարևոր դեր են խաղում երկու երկրների արտաքին քաղաքականության մեջ:

Հայ-գերմանական հետերկրկետ շրջանի քաղաքական հարաբերությունների ուսումնասիրության արդիականությունը պայմանավորված է մի շարք գործոններով: Նախ՝ Հայաստանն ու Գերմանիան քաղաքական սերտ համագործակցություն ունեն հատկապես եվրոպական ինտեգրման ոլորտում:

Երկրորդ՝ 2014 թվականին Ուկրաինայում տեղի ունեցած իրադարձությունների, 2020 թվականին Լեռնային Ղարաբաղում 44-օրյա պատերազմի, ինչպես նաև 2022 թվականին Ուկրաինայում ՌԴ հատուկ ռազմական գործողության համատեքստում Գերմանիան Հարավային Կովկասի երկրների հետ բազմակողմ հարաբերությունների զարգացման դինամիկան ակտիվացնելու ուղղությամբ է վերցրել զրեթե բոլոր ոլորտներում:

Երրորդ՝ Գերմանիան Ռուսաստանի դեմ տնտեսական պատ-
ժամիջոցների կիրառման առանցքային դերակատարն է՝ որպես
«պատիժ» Ղրիմի «բռնակցման», Ուկրաինայում իրավիճակի
«ապակայունացման» և պատերազմի համար:

Չորրորդ՝ քաղաքացիական հասարակությունների փոխգոր-
ծակցությունը կարևոր դեր է խաղում հայ-գերմանական հարա-
բերություններում քաղաքական, մշակութային, հումանիտար, սո-
ցիալական և երիտասարդական ոլորտներում:

Հինգերորդ՝ քաղաքական երկխոսության ու գործընկերու-
թյան ոլորտում վերջին իրադարձությունների շրջանակներում
նախատեսվում է շահավետ հիմքերի վրա բարելավել խորհրդա-
րանական կուսակցությունների փոխհարաբերությունները:

Վեցերորդ՝ Վրաստանի եվրաստցացման գործընթացը, Իրանի
միջուկային համաձայնագիրը պահպանելու Գերմանիայի և եվրո-
պական այլ երկրների քայլերը մերձեցնում են Հայաստանն ու ԵՄ-ն:

2. Հայաստանի ներքաղաքական հիմնախնդիրները և վստահության ձգնաժամը

Քաղաքական վերափոխումների դարաշրջանն անփոփոխ են-
թադրում է որոշակի ուղենիշերի առկայություն, որոնք, միահյուս-
վելով սոցիալական զարգացման բազմաթիվ որոշիչ գործոնների
հետ, սահմանում են դրա ընդհանուր վեկտորը, որը ժամանակի
ընթացքում ավելի ու ավելի հստակ ուրվագծեր է ձեռք բերում:
Կասկածից վեր է, որ ՀՀ-ում քաղաքական զարգացման նման
վեկտորը կուսակցական մրցակցության արմատավորմանն ու
ինստիտուցիոնալացմանն ուղղված շարժումն էր: Ակնհայտորեն
հայ հասարակության միջանկյալ հանգրվաններից մեկը, ինչպես
Գերմանիայում և արևմտյան այլ երկրներում, պետք է լինի բազ-
մակուսակցական համակարգի կայացումը:

Վերլուծելով ժամանակակից Հայաստանի ներքաղաքական իրողությունները՝ ակնհայտ է դառնում, որ դրանք անուղղակի կամ ուղղակիորեն առնչվում են արմատական վերափոխման փուլում գտնվող խորհրդարանական և ոչ խորհրդարանական կուսակցություններին: ՀՀ կուսակցությունների ու բազմակուսակցական համակարգի գործունեության խնդիրների նկատմամբ գերմանական կուսակցությունների հետաքրքրությունը պայմանավորված է այն բանով, որ դրանք եղել և մնում են ամենակարևոր քաղաքական ինստիտուտն ու հանրային քաղաքականության կիզակետը: Իսկ կուսակցությունների խնդիրները ինչ-որ իմաստով կարող են ծառայել որպես ցուցիչ, որը թույլ է տալիս որոշել պետության և հասարակության միջև տեղի ունեցող գործընթացների իրական բնույթը:

Գերմանիան և Հայաստանը երկու հետադիմալիստական պետություններ են, որոնք 1980-ականների վերջին բախվեցին քաղաքական դաշտի բարեփոխման և կուսակցական համակարգերի վերափոխման անհրաժեշտությանը:

Ժամանակակից Գերմանիան դինամիկ զարգացող երկիր է՝ բազմակուսակցական համակարգով, ԵՄ-ի և ՆԱՏՕ-ի անդամ: Ժամանակակից Հայաստանը քաղաքական ձգնաժամ վերապրած և դեռևս դրանում գտնվող երկիր է, և այս պահին նրա կուսակցական համակարգը հերթական տրանսֆորմացիայի փուլում է:

20-րդ դարի վերջում զգալի փոփոխություններ են տեղի ունենում Գերմանիայում և Հայաստանում, որոնք կապված են տեղի ունեցած ժողովրդավարական փոխակերպումների հետ, որոնց ընթացքում փոխվեցին կոմունիստական ռեժիմները: Անկասկած, թե՛ ներքին, թե՛ արտաքին գործոնների մի ամբողջ համալիրով պայմանավորված այս իրադարձությունները չէին կարող չազ-

դել այդ երկրների կուսակցական համակարգերի վրա: Տեղին է շեշտել, որ նախընտրական քարոզարշավի հիմնական դերակատարները կուսակցություններն են, որոնք որոշում են դրանց ձևն ու բովանդակությունը: Կուսակցությունները նաև կարևոր, իսկ երբեմն էլ որոշիչ դեր են խաղում օրակարգի ձևավորման գործում՝ միաժամանակ մասնակցելով քաղաքական որոշումների կայացմանը, արտաքին քաղաքական կուրսի մշակմանն ու իրականացմանը:

Իհարկե, միշտ չէ, որ կուսակցությունների առաջացումը նպաստում է ժողովրդավարական համակարգի ձևավորմանը: Եթե Գերմանիայի պարագայում կուսակցությունները նպաստեցին ներկայացուցչական ժողովրդավարության կայացմանը, ապա Հայաստանի պարագայում խորացավ ժողովրդավարացման ձգնաժամը: Դրա հիմնական պատճառն այն էր, որ Հայաստանում ձևականորեն ժամանակակից ընթացակարգերի ստեղծման պրակտիկաների միջոցով ամրապնդվեց արտոնյալ խմբերից մեկի իշխանության մենաշնորհը:

Անկախացումից ի վեր Հայաստանում տեղի են ունեցել խորհրդարանական ութ (1995 թ., 1999 թ., 2003 թ., 2007 թ., 2012 թ., 2017 թ., 2018 թ. և 2021 թ.) և նախագահական ութ ընտրություններ (1991 թ., 1996 թ., 1998 թ., 2003 թ., 2008 թ., 2013 թ., 2018 թ. և 2022 թ.):¹ Չնայած այն հանգամանքին, որ դրանցում ակտիվ են եղել կուսակցությունների դերակատարությունները, այնուամենայնիվ, հանրապետության հինգ նախագահներից երկուսն են եղել կուսակցական, իսկ խորհրդարանական ութ ընտրություններում գերակա դիրք ստացած կուսակցությանն այդպես էլ չի հա-

¹ Ավելի մանրամասն տե՛ս OSCE ODIHR-ի պաշտոնական կայքում՝ «Elections in Armenia» – <https://www.osce.org/odihr/elections/armenia> (վերջին մուտք՝ 01.08.2022):

ջողվել «իշխանության» կուսակցությունց դառնալ «կառավարող» կուսակցություն: Դրա հիմնական պատճառն այն էր, որ ինչպես նախկինում Հայոց համազգային շարժումը (ՀՀԾ) և Հայաստանի հանրապետական կուսակցությունը (ՀՀԿ), այնպես էլ հիմա «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը (ՔՊ) չկարողացան դառնալ հանրային իշխանության քաղաքական օրակարգը և մարդկային ռեսուրսները ձևավորող լիարժեք ինստիտուտ: Փաստորեն «իշխանության» կուսակցությունը գործիք է, որը «պաշտոնականացնում» է իշխող բյուրոկրատիայի որոշումները տարբեր ոլորտներում: Մյուս կողմից՝ ՔՊ-ն ձգտում է իր դիրքերն ամրապնդելու համար օգտագործել իր առաջնորդի՝ վարչապետ Նիկոլ Փաշինյանի հեղինակությունը:

Նույնիսկ 2018 թ. Թավշյա հեղափոխությամբ պայմանավորված և ժողովրդավարացման ճանապարհը հաջողությամբ անցած կարճ ժամանակահատվածում դրսևորվեց կուսակցական համակարգի անկայունությունը, քանի որ իշխանություն ունեցող քաղաքական ուժն ու խորհրդարանական կուսակցությունները չկարողացան պահպանել այն գործառույթները, որոնք ունեն զարգացած ժողովրդավարություն ունեցող երկրներում: Այս հատկանիշները մեծ մասամբ կապված են պառլամենտարիզմի և կառավարող կուսակցության մշակույթի զարգացման հետ, որոնք հանդես են գալիս որպես այս փուլի հաղթահարում:

Կուսակցական համակարգի ինստիտուցիոնալացումն ուղղակիորեն կապված է ոչ միայն ընտրությունների մասնակցող կուսակցությունների քանակի, ընտրական համակարգի և կառավարման ձևի, այլև բուն կուսակցական համակարգի կայունության աստիճանի, կուսակցությունների ձայների կայուն քանակի հետ՝ մի ընտրական շրջափուլից մյուսը: Այսպիսով՝ որքան փոքր է կուսակցությունների կողմից ընտրությունից ընտրություն ստացած

ձայների տոկոսի փոփոխականությունը, այնքան բարձր է կուսակցական համակարգի ինստիտուցիոնալացման մակարդակը որպես ամբողջություն:

20-րդ դարի վերջին նախկին խորհրդային տարածքում ձևավորված անկախ հայկական պետականությունը շարունակում է ապրել սոցիալ-տնտեսական, քաղաքական և մշակութային վերափոխումների բարդ գործընթացներ: Հայաստանը, ի տարբերություն Գերմանիայի, չկարողացավ ոչ ժողովրդավարական ռեժիմից և պլանային տնտեսությունից սահուն անցում կատարել դեպի ժողովրդավարություն և շուկայական տնտեսություն: Ժողովրդավարական անցումը ավելի երկար ու դժվար ստացվեց, քան կանխատեսում էին քաղաքագետները: Եվ բանն այստեղ միայն այն չէ, որ հետխորհրդային հասարակական-քաղաքական տարածքը բարդ է և բազմազան՝ առկա բոլոր տեսական և մեթոդաբանական մոտեցումներով: Անցումային գործընթացը սրվել է մի շարք լրացուցիչ գործոններով, մասնավորապես քաղաքական իրականության անկանխատեսելիությամբ, պատերազմով ու տնտեսական շրջափակմամբ, տարածաշրջանային յուրահատկությամբ՝ հաճախ զրոյացնելով առկա քաղաքագիտական գիտելիքներն ու պրակտիկան:

ԽՍՀՄ փլուզումը և Հայաստանում միջկուսակցական մրցակցության ի հայտ գալը հանգեցրին նրան, որ հատկապես կուսակցությունների վրա ընտրական համակարգի ազդեցության խնդիրը արդիական դարձավ: Ժողովրդավարացումն ի հայտ բերեց կուսակցական հատվածում որոշակի արմատականացման միտումներ: Այնտեղ առկա քաղաքական ուժերի կոալիցիոն ներուժը թույլ էր՝ անհնար դարձնելով հզոր և արդյունավետ քաղաքական կենտրոնի ստեղծումը: 1990-ական թվականների պատերազմը, Թուրքիայի և Ադրբեջանի կողմից Հայաստանի անօրինական

շրջափակումը, 2008 թվականին աշխարհում սկսված ֆինանսատնտեսական ճգնաժամը նպաստեցին արմատական տրամադրությունների աճին, քանի որ կուսակցությունների համար առաջնահերթություն դարձավ քաղաքական և սոցիալ-տնտեսական հավասարակշռության պահպանման խնդիրը:

Գերմանիան և Կենտրոնական ու Հարավարևելյան Եվրոպայի երկրները զգալի արդյունքների են հասել ինստիտուտների կայացման գործում: Կասկածից վեր է, որ այստեղ որոշիչ դեր է խաղացել «եվրոպական ընտրությունը» էլիտաների ու հասարակության մեծ մասի համար՝ որպես կոնսենսուսային զարգացման ռազմավարական ուղեգիծ: Նախ՝ ընդհանուր ռազմավարական կուրսի շուրջ կոնսենսուսը կանխորոշեց Գերմանիայի հիմնական քաղաքական ուժերի միջև հակասությունների ոչ անտագոնիստական բնույթը. նրանք պայքարում էին հանրային իշխանության համար և վիճում կոնկրետ ծրագրային հարցերի շուրջ՝ կասկածի տակ չդնելով քաղաքականության հիմքերը: Երկրորդ՝ Գերմանիայի եվրոպական կողմնորոշումը ընդլայնեց դեմոկրատական մոտեցումները. քաղաքական էլիտաները գիտակցաբար ձգտում էին իրենց պահել «եվրոպական ձևով», հասարակական կյանքի տարբեր ոլորտներում համապատասխանել եվրոպական քաղաքականության չափանիշներին: Երրորդ՝ «եվրոպական ընտրությունը» նշանակում էր Գերմանիայի սերտ փոխազդեցություն արևմտաեվրոպական երկրների ինստիտուտների և քաղաքական գործիչների հետ, ինչը քաղաքականության մեջ ամրապնդեց «արևմտյան վեկտորը»:

Կուսակցական համակարգի զարգացման որոշիչ գործոնը «աջ» և «ձախ» ուժերի առձակատումն էր: Հայաստանում և բոլոր հետխորհրդային պետություններում նկատվում է զաղափարական հակասությունների դեֆորմացիա, բացակայում է «աջ-ձախ»

հատվածի տրամաբանությունը (տե՛ս Աղյուսակ 1): Քաղաքացիները, ըստ էության, տարբեր նշանների ներքո քվեարկում են միևնույն կուսակցության օգտին: Խոսքը, ըստ էության, աջակենտրոն և ձախակենտրոն թևերի կուսակցական–գաղափարական պայքարի մասին է: Թերևս այս վիճակը կապված է Հայաստանի բազմակուսակցական համակարգում գաղափարախոսության ինստիտուցիոնալ ձգնաժամի հետ:

Աղյուսակ 1. ՀՀ Ազգային ժողովում կուսակցությունների պատգամավորական տեղերի հարաբերակցությունը²

ՀՀ Ազգային ժողովի ընտրություններ			
Կուսակցություններ, դաշինքներ, մասնակիցներ	2017	2018	2021
«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն	դաշինք	դաշինք	71
«Հայաստան» դաշինք			29
«Պատիվ ունեմ» դաշինք			7
«Իմ քայլը» դաշինք		88	
«Լուսավոր Հայաստան» կուսակցություն		18	–
«Բարգավաճ Հայաստան» կուսակցություն	դաշինք	26	–
«Ծառուկյան» դաշինք	31		
Հայաստանի հանրապետական կուսակցություն	58	–	դաշինք
Հայ հեղափոխական դաշնակցություն	7	–	դաշինք
«ԵԼԲ» դաշինք	9		
Ընդամենը	105	132	107

² Ավելի մանրամասն տե՛ս OSCE ODIHR–ի պաշտոնական կայքում՝ «Elections in Armenia» – <https://www.osce.org/odihr/elections/armenia> (վերջին մուտք՝ 01.08.2022):

Ընդհանուր առմամբ, Հայաստանի կուսակցական համակարգին բնորոշ է որոշակի անկայունություն, թեև քաղաքական «ձոձանակի» ամպլիտուդն անընդհատ նվազում է: Նոր կուսակցություններն ու կուլիցիաները, որպես կանոն, ձևավորվում են ոչ թե գաղափարական հենքի վրա, այլ պրագմատիկ ցենտրիզմի սկզբունքով: Ժողովրդավարական բարեփոխումները քաղաքական կուսակցությունների կողմից ստեղծված դաշինքների բազմաթիվ օրինակներ են տալիս: Հայկական կուսակցական համակարգը, որն ավելի մասնատված է, քան արևմտյան ժողովրդավարությունները, դաշինքների մեջ կուսակցությունները խմբավորելու շատ ինքնաբերական օրինակներ է առաջարկում (*տես Աղյուսակ 1*):

«Ցենտրիզմը» Հայաստանի կուսակցական կյանքում 1990-ականների սկզբից և մինչ այժմ գործնականում աղավաղված է: Ցենտրիզմը սովորաբար հասկացվում է որպես «ոսկե միջին ձանապարհ», ազգը միավորելու ընդունակ հզոր ուժ, զարգացման արևմտյան մոդելների մերժում: Սակայն միջկուսակցական կուլիցիաների ձևաչափում ցենտրիստներն ամենից հաճախ հասարակությանն առաջարկելու ոչինչ չունեին՝ բացառությամբ «աջ» և «ձախ» միջին ծրագրային մի շարք թեզերի:

Հայաստանում կուսակցությունների զարգացման վրա գաղափարական գործոնի ազդեցության մասշտաբները աստիճանաբար նվազում են: Հիմա գաղափարական քաղաքական գործընթացներից: Կուսակցությունները գաղափարական աշխատանքն ակտիվացնում են միայն ընտրություններից առաջ: Ինչպես հայտնի է, դրանց դասակարգումն ըստ գաղափարական առաջնահերթությունների սկզբունքային նշանակություն ունի ժամանակակից Գերմանիայի կուսակցությունների տիպաբանության համար: Սակայն հայ քաղաքական իրականության մեջ, երբ շատ կուսակցությունների արժեհամակար-

գային կողմնորոշումները բավականին արտահայտիչ չեն, նման դասակարգումը պետք է ընդունել որոշակի վերապահումներով: Ներկայումս հայ ընտրողների կողմնորոշումների ձևավորման գործում ոչ գաղափարական և ոչ ծրագրային գործոնների դերի մեծացման միտում է նկատվում: Հաղորդակցության ժամանակակից միջոցների ընձեռած հնարավորությունների համաձայն՝ անհատական և խմբակային նույնականացման բարդ համակարգ ունեցող հայ հասարակության մեջ քաղաքական իրականության նկատմամբ վերաբերմունքի հիմնական չափորոշիչները պրագմատիզմն ու պոպուլիզմն են:

Քաղաքական պրագմատիզմը, չնայած իր ողջ հիմնավորմանը, որոշակի սպառնալիքներ է թաքցնում ՀՀ կուսակցական համակարգի համար: Այն կարողանում է քաղաքական գործիչներին անհեռատես դարձնել, քաղաքական ծրագրերը զրկել լայն հեռանկարից, թույլ չտալ, որ դրանք համարժեք լինեն ներկա խնդիրներին: Այս պայմաններում պոպուլիզմը կարող է ՀՀ-ում դառնալ քաղաքական գաղափարախոսության յուրօրինակ և բավականին վտանգավոր իմիտացիա՝ նախատեսված սպառողական մշակույթի կողմից դաստիարակված ապաքաղաքական և չմտածող զանգվածի համար:

Գաղափարախոսությունների անբավարար զարգացման արդյունքը տեսականորեն դառնում է հենց գաղափարախոսությունների թուլությունը, որոնք հաճախ կրկնօրինակում են պատրաստի արևմտյան մոդելները, որոնք առաջացել են բոլորովին այլ պատմական պայմաններում և ուղղված են այլ խնդիրների կատարմանը:

Վերոնշյալը թույլ է տալիս եզրակացնել, որ ՀՀ կուսակցությունները և դրանց առաջնորդները, որոնք ձգտում են հենվել գերմանական փորձի վրա, ցանկանում են ամրապնդվել քաղա-

քական դաշտում, պետք է հենվեն առաջին հերթին վստահելի ընտրական բազայի վրա: Միևնույն ժամանակ պետք է հիշել, որ կուսակցական լոյալության վրա ավելի քիչ է ազդում քաղաքական ավանդույթների ուժը: ՀՀ խորհրդարանական և՛ առաջին, և՛ երկրորդ սերնդի կուսակցությունների համար կարևոր է ողջ երկրում կայուն կուսակցական կազմակերպություններ ստեղծելը՝ հիմնված համախոհների ժողովրդավարական ինտեգրման և կառուցվածքային ու կադրային բարելավման վրա, որոնք ընտրական լայն աջակցության կհասնեն: ՀՀ կուսակցությունների անկայունության մասին են վկայում նաև կուսակցությունների միջև մրցակցության տեսակը և դրանց ընտրական ռազմավարությունը: Սկզբում դրա վրա ազդում են անցումային շրջանի առանձնահատկությունները, այսինքն՝ մրցակցային պայքարում «քաղաքական կամքի» գերակայությունը:

Ինչպես տեսնում ենք, հետպատերազմական Հայաստանում նկատվում են քաղաքական անորոշության և կուսակցական համակարգերի գործունեության անկայունության խնդիրներ: Ի վերջո, կուսակցաշինության և պետական կառավարման համակարգի զարգացումը մեծապես կախված է հենց քաղաքական էլիտայից և կառավարող կուսակցությունից: Միևնույն ժամանակ սա քաղաքական արժեքների, քաղաքական վարքագծի և քաղաքական մշակույթի փոփոխման երկար գործընթաց է, որի շնորհիվ հնարավոր կլինի գտնել քաղաքական գոյության արդյունավետ կազմակերպչական և գաղափարական կառույցներ:

Խնդիրներ են ծագում հայ-գերմանական կուսակցությունների համագործակցության ոլորտում, որոնցից ամենաառաջնայինը դրանց նույնականացման դժվարությունն է, երբ ՀՀ-ում կուսակցությունները բնորոշվում են ոչ թե իրենց անունով և գաղափարախոսությամբ, այլ միայն իրենց գործելաոճով: Դրա պատճա-

որով ՀՀ կուսակցական համակարգում դիտոնանս է առաջանում դրանց գործունեության անվանման ու բովանդակության միջև:

Հետխորհրդային հայ հասարակության մեջ կարելի է առանձնացնել երեք հիմնական արժեքային կողմնորոշում՝ 1) սոցիալ-դեմոկրատական (սոցիալական արդարություն, մարդկանց իրավահավասարություն, բարոյական արժեքների ճանաչում բոլորի կողմից, վստահություն մարդկանց միջև), 2) պահպանողական (բոլորի կողմից կիսված ապագայի մասին գաղափարներ, ժողովրդին պատկանելություն, սոցիալական համակարգի մեծամասնության համաձայնություն, բարոյական արժեքների ճանաչում, վստահություն քաղաքական գործիչների նկատմամբ), 3) ազատական (ազատություն բոլորի համար, ինքնաիրացում մարդկանց մեծ մասի համար, աջակցություն ժողովրդավարական համակարգի, Եվրոպային պատկանելու գիտակցություն, տնտեսական բարեկեցություն):

Նոր կուսակցություններն ու կոալիցիաները, որպես կանոն, ձևավորվում են ոչ թե գաղափարական, այլ պատեհապաշտական հիմքի վրա: Գոյություն ունի ՀՀ կուսակցական համակարգի կոմպենսացիոն բնույթ՝ փոխհատուցելու քաղաքական շուկայում գաղափարական և կազմակերպչական դեֆիցիտը՝ ձևավորելով նոր կուսակցություններ, պատեհապաշտորեն բավարարելու ընտրողների կարիքները: Կոմպենսատոր կուսակցություններն առաջանում են կուսակցական համակարգի լուրջ դեֆորմացիայի, իրենց որակներով ընտրողներին իսկապես անհրաժեշտ կուսակցությունների սակավության պայմաններում: Կոմպենսատոր կուսակցությունները լիովին կախված են արտաքին գործոններից, նրանք ի վիճակի չեն ինքնուրույն ձևավորելու սեփական ընտրազանգվածը և կարող են հեշտությամբ մարգինալացվել ապագայում:

3. Գերմանիայի խորհրդարանական կուսակցությունների արտաքին քաղաքականության ուղենիշերը

Հարավային Կովկասն այսօր մնում է հետխորհրդային տարածքի ամենաանհանգիստ շրջաններից մեկը, և, հետևաբար, նրա անվտանգ ու կայուն զարգացման խնդիրն առանձնահատուկ մտահոգության առարկա է դառնում ինչպես միջազգային կազմակերպությունների, այնպես էլ ԱՄՆ–ի, Ռուսաստանի և ԵՄ անդամ երկրների համար: Տվյալ դեպքում խոսքը ոչ միայն անվտանգության ռազմական բաղադրիչի, այլև այս երևույթի այնպիսի կարևոր չափումների մասին է, ինչպիսիք են քաղաքական, սոցիալ-տնտեսական, հումանիտար չափումները: Հարավային Կովկասի տարածաշրջանի երկրներում անկայունությունը սրող ռիսկերից շատերը կարող են արագ վերածվել անվտանգության սպառնալիքների, ուստի դրանց դիմակայելը հատկապես կարևոր է:

Խորհրդարանական կուսակցությունները կենտրոնական դեր են խաղում Գերմանիայի քաղաքական համակարգում՝ Գերմանիայի Հիմնական օրենքի 21–րդ հոդվածի համաձայն՝ դառնալով ազատ և ժողովրդավարական կարգի անհրաժեշտ բաղադրիչ:³

Ժամանակակից Գերմանիայի խորհրդարանական կուսակցությունները հանրային վերահսկողություն են իրականացնում ընդունված քաղաքական որոշումների նկատմամբ: Վերջիններս, ի տարբերություն ՀՀ կուսակցական համակարգի, միշտ բնութագրվել են ժողովրդավարական կայունությամբ: Գերմանիայի առաջին գումարման Բունդեսթագի երեք հիմնադիր կուսակցու-

³ Այդ մասին տե՛ս Deutscher Bundestag. 2022. Grundgesetz für die Bundesrepublik Deutschland (vom 23. Mai 1949 (BGBl. S. 1), zuletzt geändert durch Artikel 1 des Gesetzes vom 28. Juni 2022 (BGBl. I S. 968))՝ <https://www.bundestag.de/gg> (վերջին մուտք՝ 01.08.2022):

թյուններին՝ Քրիստոնեական-դեմոկրատական միություն (ՔԴՄ, CDU)⁴ / Քրիստոնեա-սոցիալական միություն (ՔՍՄ, CSU)⁵ դաշինքին, Գերմանիայի սոցիալ-դեմոկրատական (ԳՍԴԿ, SPD) և Ազատ դեմոկրատներ (ԱԴԿ, FDP)⁶ կուսակցություններին ավելացել են միայն «Դաշինք 90/Կանաչներ» կուսակցությունն (Կանաչներ, B'90/Grüne)⁷ ու Չախերը (Die Linke),⁸ իսկ 2017 թվականից՝ «Այլընտրանք Գերմանիայի համար» կուսակցությունը (ԱԳՀ, AfD)⁹: Մինևույն ժամանակ վերջին 30 տարիների ընթացքում նույնքան անշեղորեն է ընթանում նաև ԳԴՀ-ի կուսակցական համակարգի վերափոխման գործընթացը: Դա հիմնականում կապված է ավանդական կուսակցությունների (CDU, CSU և SPD) աջակցության մակարդակի տատանումների հետ (*տե՛ս Աղյուսակ 2*):

⁴ Ավելի մանրամասն տե՛ս «Քրիստոնեական-դեմոկրատական միություն» (ՔԴՄ, CDU) կուսակցության պաշտոնական կայք՝ <https://www.cdu.de/> (վերջին մուտք՝ 01.08.2022):

⁵ Ավելի մանրամասն տե՛ս «Քրիստոնեա-սոցիալական միություն» (ՔՍՄ, CSU) կուսակցության պաշտոնական կայքում՝ <https://www.csu.de/> (վերջին մուտք՝ 01.08.2022):

⁶ Ավելի մանրամասն տե՛ս «Ազատ դեմոկրատներ» կուսակցության (ԱԴԿ, FDP) պաշտոնական կայք՝ <https://www.fdp.de/> (վերջին մուտք՝ 01.08.2022):

⁷ Ավելի մանրամասն տե՛ս «Դաշինք 90/Կանաչներ» կուսակցության (Կանաչներ, B'90/Grüne) պաշտոնական կայքում՝ <https://www.gruene.de/> (վերջին մուտք՝ 01.08.2022):

⁸ Ավելի մանրամասն տե՛ս «Չախեր» (Die Linke) կուսակցության պաշտոնական կայքում՝ <https://www.die-linke.de/start/> (վերջին մուտք՝ 01.08.2022):

⁹ Ավելի մանրամասն տե՛ս «Այլընտրանք Գերմանիայի համար» կուսակցության (ԱԳՀ, AfD) պաշտոնական կայքում՝ <https://www.afd.de/> (վերջին մուտք՝ 01.08.2022):

Աղյուսակ 2. Գերմանիայի Բունդեսթագում կուսակցությունների պատգամավորական տեղերի հարաբերակցությունը¹⁰

Գերմանիայի Բունդեսթագի ընտրություններ			
Կուսակցություններ, դաշինքներ, մասնակիցներ	2013	2017	2021
Christlich Demokratische Union (CDU)	255	200	152
Sozialdemokratische Partei Deutschlands (SPD)	193	153	206
Die Linke	64	69	39
Bündnis 90/die Grünen	63	67	118
Christlich-Soziale Union (CSU)	56	46	45
Alternative für Deutschland (AfD)	–	94	83
Freie Demokratische Partei (FDP)	–	80	92
SSW (Südschleswiger Wählerverband)	–	–	1
Ընդամենը	631	709	736

Գերմանիայի խորհրդարանում, ի տարբերություն հայ իրակա-
նության, քաղաքական որոշումների կայացման գործընթացները
որոշվում են կառավարող և ընդդիմադիր կուսակցությունների
խմբակցությունների կողմից, որոնք անկախ են, բայց սերտորեն
համագործակցում են ինչպես միմյանց, այնպես էլ ոչ խորհրդա-
րանական կուսակցությունների և առանցքային սոցիալական դե-
րակատարների հետ (ՔՀԿ-ներ, քաղաքացիական նախաձեռնու-
թյուններ, փորձագետներ և այլն):

Հայաստանի խնդիրներն այսօր էլ Բեռլինի ուշադրության
կենտրոնում են: Իհարկե սա ամենակարևոր գործոններից մեկն է,

¹⁰ Ավելի մանրամասն տե՛ս OSCE ODIHR–ի պաշտոնական կայքում՝ «Elec-
tions in Germany» – <https://www.osce.org/odihr/elections/germany> (վերջին
մուտք՝ 01.08.2022):

որը պայմանավորել և պայմանավորում է կանցլերի ժամանակակից քաղաքականությունը Հարավային Կովկասում: Բացի դրանից՝ արդեն Լևոն Տեր-Պետրոսյանի կառավարման առաջին տարիներին Բեռլինը կարողացավ համոզվել, որ ունի այն ռեսուրսներն ու լծակները, որոնք թույլ կտան ինչ-որ կերպ ազդել Երևանի քաղաքականության՝ մասնավորապես Ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման, հայ-թուրքական հարաբերությունների նորմալացման վրա: Այս երկու հանգամանքներն էլ, իհարկե, վերաբերում են տեսանելի ապագայում Գերմանիայի քաղաքականության անփոփոխ հիմքին:

Ընդդիմադիր հասարակական-քաղաքական շրջանակներում գերակայող է այն համոզմունքը, որ Գերմանիան ժողովրդավարական արժեքների հետ միասին հետապնդում է նաև Realpolitik-ը, որը բաղկացած է Հարավային Կովկասում կառավարող էլիտաների անվերապահ աջակցությունից և գերմանական բիզնեսի շահերի լոբբինգից: Ընդ որում՝ Հարավային Կովկասում իրավիճակի ապակայունացումը շարունակում է բորբոքել գերմանական հասարակական կարծիքի քննադատական տրամադրությունները: Շրյոդերի հեռանալով՝ այս գործոնն ավելի ու ավելի ազդեց ու շարունակում է ազդել ընդդիմության քաղաքականության վրա:

2017 թ. մարտից Գերմանիայի դաշնային նախագահի պաշտոնը զբաղեցնում է Ֆրանկ-Վալտեր Շտայնմայերը: Գերմանիայում նախագահը կատարում է խորհրդարանական հանրապետության կառավարման ձևին բնորոշ ներկայացուցչական գործառույթներ, իսկ առանցքային որոշումները կայացնում է Գերմանիայի դաշնային կանցլերը: 1990-ականների սկզբից Գերմանիայում կանցլերի պաշտոնում ընտրվեցին 4 ներկայացուցիչներ տարբեր կուսակցություններից: Այսպես՝ 1990-ականների սկզբին

այն ժամանակվա դաշնային կանցլերը Հելմուտ Կոլն¹¹ էր, որն ընտրվեց չորրորդ անգամ՝ 1991–1994 թթ., և հինգերորդ ժամկետը՝ 1994–1998 թթ.: 1998 թ–ին կառավարությունը փոխվում է, և սոցիալ–դեմոկրատական կուսակցության ներկայացուցիչ Գերհարդ Շրյոդերը¹² ընտրվում է կանցլերի պաշտոնում, նա դաշնային կանցլեր էր մինչև 2005 թ.: Այնուհետև հետպատերազմյան Գերմանիայի պատմության մեջ առաջին անգամ երկրի կառավարությունը գլխավորեց Դեմոկրատ քրիստոնյանների դաշինքի կին ներկայացուցիչ Անգելա Մերկելը:¹³ 2018 թ. մարտին նա ընտրվեց չորրորդ անգամ և պաշտոնավարեց մինչև 2021 թ. դեկտեմբերի 8–ը: Հենց նրա պաշտոնավարման տարիներին՝ 2016 թ–ին, Գերմանիայի Բունդեսթագը քննարկեց և ընդունեց Հայոց ցեղասպանությունը ճանաչող բանաձևը (Deutscher Bundestag 2016): Ընդ որում՝ այդ Բանաձևն ուղղված է Գերմանիայի կառավարությանը և կոչ է անում մասնավորապես լրացուցիչ միջոցներ հատկացնելու ցեղասպանության պատմության ուսումնասիրությանը, ակտիվորեն աշխատելու Թուրքիայի և Հայաստանի իշխանությունների հետ՝ որպես մշակութային ծրագրերի միջնորդ և նախաձեռնող:

2018 թ. օգոստոսի 24–ին պաշտոնական այցով Հայաստան ժամանեց Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելը՝ Թավշյա հեղափոխությունը նոր հանգուցալուծում համարելով Հայաստանի արտաքին և ներքին քաղաքականության մեջ (Маркедонов, 2018): Շեշտը դրվում էր եվրոպական ինտեգրման խորացման,

¹¹ **Հելմուտ Կոլ** (Գերմանիայի 6–րդ դաշնային կանցլեր, 1982 թ. հոկտեմբերի 1 – 1998 թ. հոկտեմբերի 27):

¹² **Գերհարդ Շրյոդեր** (Գերմանիայի 7–րդ դաշնային կանցլեր, 1998 թ. հոկտեմբերի 27 – 2005 թ. նոյեմբերի 22):

¹³ **Անգելա Մերկել** (Գերմանիայի 8–րդ դաշնային կանցլեր, 2005 թ. նոյեմբերի 22 – 2021 թ. դեկտեմբերի 8):

կայուն զարգացման, քաղաքացիական հասարակության կայացման, հակակոռուպցիոն միջոցառումների կազմակերպման, ստվերային տնտեսության դեմ պայքարով մրցունակ, մասնակցային և ներառական տնտեսության ստեղծման վրա:

2021 թ. դեկտեմբերի 8-ից Օլաֆ Շոլցը Գերմանիայի 9-րդ դաշնային կանցլերն է՝ ներկայացնելով Գերմանիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը: Կարևոր է նշել, որ նա եղել է Գերմանիայի փոխկանցլերը և Ֆինանսների նախարարը 2018–2021 թթ. Անգելա Մերկելի կառավարությունում: Շոլցը նույնպես շարունակում է ընդլայնել Գերմանիայի ջանքերն աջակցելու ԱԳ երկրների համապարփակ ինտեգրմանը՝ փորձելով ստեղծել նոր «Եվրոպական քաղաքական համայնք»՝ ԵՄ անդամ չհանդիսացող գործընկերների հետ ավելի սերտ փոխգործակցության համար: Թերևս Հայաստանը կարող է նման ձևաչափում Գերմանիայի և եվրոպացի առաջնորդների հետ քննարկել համագործակցության կենտրոնական խնդիրները:

4. Հայաստանի և Արևմուտքի քաղաքական հարաբերությունների նորմալացում

1991 թվականին Հարավային Կովկասում երեք նոր անկախ պետությունների ի հայտ գալը համաշխարհային դերակատարներին նոր հնարավորություն ընձեռեց տարածաշրջանում տեղ գրավելու, և Գերմանիան բացառություն չէր: Երկբևեռ աշխարհի փլուզումից և ԵԱՀԿ, ԵԽ ոչ միայն Արևելյան Եվրոպայի երկրների, այլև նախկին ԽՍՀՄ երկրների հաջորդական մուտքից հետո սկսվեց նոր եվրոպական համայնքի կառուցումը:

Տարածաշրջանի նկատմամբ Գերմանիայի արտաքին քաղաքականությունը հետևողականորեն փոփոխվել է՝ նորմատիվ և տնտեսական առաջնահերթությունների շարքում աստիճանա-

բար սկսեց հայտնվել քաղաքական բաղադրիչը: Գերմանիան դարձավ տարածաշրջանում առաջին գլոբալ դերակատարը, որն իր ռազմավարական փաստաթղթերում ձևակերպեց ընդհանուր հայեցակարգային մոտեցումներ Հարավային Կովկասի երկրների նկատմամբ: Այնուամենայնիվ, չնայած ընդհանուր նպատակներին հասնելու հարցում կողմերի շահերի առկայությանը՝ կային մի շարք գործոններ, որոնք բացասաբար ազդեցին երկկողմ և բազմակողմ համագործակցության արդյունավետության վրա: Նախ՝ տարածաշրջանի հետ կապված՝ Գերմանիայի արտաքին քաղաքականության քաղաքական և տնտեսական բաղադրիչների անհավասարակշռություն կար, որը նվազեցրեց Գերմանիայի համար տարածաշրջան լիարժեք մուտք գործելու իրական հնարավորությունները:

Գերմանիայի արտաքին քաղաքականությունը Հարավային Կովկասի երկրներում անցել է զարգացման մի քանի փուլ: Փոփոխությունները համընկան Գերմանիայի և ԵՄ-ի գլոբալ դերի վերափմաստավորման հետ (Mölling and Schwarzer 202): Մի կողմից՝ վերջին տասնամյակում Հարավային Կովկասի պետություններն ամրապնդել են ազգային ինքնության և քաղաքական առաջնահերթությունների վերաբերյալ սեփական պատկերացումները: Չնայած մեկ տարածաշրջանին պատկանելուն և Գերմանիայի հետ գործընկերության սկզբնական շրջանում համանման պայմաններին՝ երկրներից յուրաքանչյուրը հավատարիմ է համագործակցության իր պարադիգմին (Maihold 2021; Major, Stelzenmüller and Mölling 2021): Դա պայմանավորված է նաև նրանով, որ Ռուսաստանի և ԵՄ-ի հարևան երկրների քաղաքական էլիտաների պահանջները վերջին տասնամյակների ընթացքում ավելի լայն են դարձել, քան տնտեսական և քաղաքական փոխգործակցության պրագմատիկ տեսանկյունները:

Արդիական են դարձել ազգային ինքնության և արժեքային տեսանկյունների ձևավորման խնդիրները. իշխանության են գալիս նոր քաղաքական էլիտաներ՝ ձգտելով ձևավորելու երկրի ժամանակակից կերպարը, որը տարբերվում է նախկինից: Այս իրավիճակում տարբեր խաղացողների հետ գործընկերությունը խթան է տարածաշրջանի երկրների պետականության հիմքերը քննարկելու, հաստատված կապերը վերանայելու և միջազգային հանրություն մուտք գործելու սեփական ռազմավարությունը ձևավորելու համար (Boyko 2020; Deutsch–Armenische Juristenvereinigung e.V. 2018; Deutscher Bundestag 2015a, 2015b):

Վրաստանի, Հայաստանի և Ադրբեջանի հետ Գերմանիայի քաղաքական հարաբերությունները ներկա փուլում կարող են պայմանականորեն նույնականացվել գոյություն ունեցող ԵՄ երեք սցենարներով. Վրաստանի դեպքում խոսքը ԵՄ–ի հետ ասոցացման և ԵՄ–ի հետ Վրաստանի մերձեցման առավելագույն ձևի մասին է, որի դեպքում Վրաստանը կարճաժամկետ հեռանկարում ԵՄ անդամակցության թեկնածու չէ, այլ ջանքեր է գործադրում՝ կատարելու երկրի պետական կառուցվածքին ներկայացվող ԵՄ պահանջների ողջ շրջանակը, քաղաքական, տնտեսական ու այլ բարեփոխումներ և ընդունելու պետական կառավարման որոշակի արակտիկաներ: Կարևոր ցուցիչ է, որ Վրաստանը գնում է այս ճանապարհով: Քաղաքական էլիտաների կողմից եվրոպական ուղու անվիճելի հռչակումն է, որին անվերապահորեն աջակցում է Գերմանիան: Համագործակցության երկրորդ ձևաչափը ընդլայնված գործընկերությունն է, որը կիրառելի է Գերմանիա–Հայաստան հարաբերությունների դեպքում: Չնայած այլ քաղաքական և տնտեսական միություններին երկրի մասնակցության պատճառով փոխգործակցության սահմանափակ շրջանակին՝ պետության քաղաքական ղեկավարությունը ձգտում է համապա-

տասխանելու ԵՄ հիմնական պահանջներին՝ գիտակցելով այդ հարաբերությունների կարևորությունը ոչ միայն պրագմատիկ տեսանկյունից, այլև մատնանշելով նրանց հավատարմությունը եվրոպական արժեքներին: Եվ, վերջապես, երրորդ սցենարը, որն առավել հստակ նկատվում է Ադրբեջանի հետ Գերմանիայի հարաբերություններում, հիմնված է այն բանի վրա, որ երկիրը չմիանա ոչ մի քաղաքական դաշինքի, կատարի միայն ԵՄ այն պահանջները, որոնք ուղղակիորեն առնչվում են պետական շահերին, ինչպես նաև ԵՄ արտաքին քաղաքականության սկզբունքներին ու արժեքներին: Կարևոր է նշել, որ այս երեք սցենարներն էլ կախված են միջազգային հարաբերությունների ոլորտում ընդհանուր իրավիճակից, Գերմանիայից բացի տարածաշրջանի այլ դերակատարների գործողություններից, երկրներում տարբեր քաղաքական ուժերի միջև մրցակցությունից, արտաքին փոփոխություններից, ԵՄ-ի քաղաքականությունից և այլն: Այսպիսով՝ այս օրինաչափություններից և ոչ մեկը անփոփոխ չեն, այլ վկայում են գոյություն ունեցող միտումների մասին:

Եվրոպական և եվրասիական նախագծերը Հայաստանի համար մրցակցող ընկալելու մի քանի պատճառ կա՝

1) Արևելյան գործընկերության ծրագրին մասնակցության դիտարկումը՝ որպես ԵՄ-ին պոտենցիալ անդամակցության քայլ, և այս առումով եվրոպական ինտեգրման ենթադրյալ հակառուսական բնույթը,

2) Եվրասիական տնտեսական միությանն անդամակցելու տնտեսական և քաղաքական սահմանափակվածությունները,

3) Հայաստանի հետ մաքսային սահման չունեցող Լեռնային Ղարաբաղի Եվրասիական տնտեսական տարածության փաստացի մոտաքը, ինչը դիտարկվում է որպես Հայաստանի ան-

վտանգության երաշխավորի՝ Ռուսաստանի ռազմավարական նշանակության ևս մեկ հաստատում:

Ռուսաստանի և Հայաստանի միջև կնքվել է բարեկամության, համագործակցության և փոխօգնության համաձայնագիր: Դրանում ամրագրված պայմանագրերով Հայաստանում գործում են ռուսական ռազմակայաններ, երկրները համագործակցում են ռազմատեխնիկական քաղաքականության, ռազմական տեխնոլոգիաների և զենքի արտահանման ու ներմուծման ոլորտում քաղաքականություն վարելու հարցում: Հայաստանի վրա զինված հարձակման դեպքում կողմերը ելնում են պաշտպանական օբյեկտների համատեղ շահագործման սկզբունքից: Դեռևս 1997 թվականին ստորագրված փաստաթղթում ամրագրված է նաև տնտեսական բարեփոխումների անցկացման, տնտեսական ինտեգրման խորացման, միասնական տնտեսական տարածքի ձևավորման համար պայմանների ստեղծման կարևորությունը: Այսպիսով՝ Ռուսաստանի հետ լայն ինստիտուցիոնալ մերձեցման նպատակ դրվեց նույնիսկ համաձայնագիրը ստորագրած ՀՀ առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի օրոք: Այն, որ Հայաստանը շարունակում է համագործակցությունը Ռուսաստանի հետ՝ համարելով նրան կարևոր ռազմավարական գործընկեր, սկսվել է դեռ այն տարիներից, երբ երկիրը նոր էր անկախացել:

Երկրի արտաքին քաղաքականության նպատակներով Հայաստանի միջազգային հեղինակության ամրապնդում, նրա միջազգային ինտեգրման աստիճանի բարձրացում, հայության ինքնության պահպանում. Հայաստանի քաղաքական գործիչները՝ անկախ իրենց գաղափարական հայացքներից, հակված են հավատարիմ մնալու այս օրակարգին՝ ընդգծելով դարաբաղյան հիմնախնդրի խաղաղ լուծման կարևորությունը,

Ճանաչելով Հայոց ցեղասպանությունը որպես մարդկության դեմ հանցագործություն՝ օգտագործելով դիվանագիտական հաղորդակցության և լոբբինգի միջազգային բոլոր հասանելի ուղիները: Վարչապետ Նիկոլ Փաշինյանի պաշտոնի ստանձնմամբ միջազգային գործընկերների հետ շփվելիս էլ ավելի է հաստատվել այն փաստարկը, որ «Հայաստանը չի լինելու որևէ մեկի ազդեցության տակ»՝ չնայած թե՛ ԵՄ-ի, թե՛ Ռուսաստանի հետ համագործակցելու ցանկությանը:

Ելնելով Հայաստանի փորձից՝ չպետք է ակնկալել ԵՄ-ի և ԵԱՏՄ-ի փոխգործակցության աճ, չնայած այն հանգամանքին, որ մինչև 2020 թ. երկրին իսկապես հաջողվում էր համատեղել ինտեգրման երկու ուղղությունները: Հետագոտողները օգտագործում են «ողջամիտ եվրոպականացում» անվանումը, որը ենթադրում է օգուտների միավորում ինչպես ԵԱՏՄ-ին և ՀԱՊԿ-ին անդամակցելու, այնպես էլ ԵՄ-ի հետ նորացված համաձայնագիր կնքելու առումով: Այնուամենայնիվ, «ինտեգրացիաների ինտեգրում» (հնարավորությունների ռազմավարություն) անվանումը դժվար թե կիրառելի է այս փորձի համար. երկու նախագծերն էլ զարգանում են միմյանց զուգահեռ, բայց ԵԱՏՄ և ԵՄ միջև փոխգործակցություն չկա: Հիմնական պատճառը ռուս-եվրոպական հարաբերությունների ձգնաժամն է, գերատեսչությունների ու քաղաքական առաջնորդների մակարդակով այս հարցի շուրջ երկխոսության բացակայությունը:

Կարևոր է նշել, որ Հայաստանի նման փոքր երկրի համար ինտեգրացիոն խմբերին միանալը հնարավորություն է արտաքին ռեսուրսներն օգտագործելու քաղաքական և տնտեսական ինստիտուտներն արդիականացնելու համար (The Prime Minister of the RA 2022): Երկարաժամկետ հեռանկարում ԵՄ ծրագրերը հարևան երկրներում և եվրասիական ինտեգրումը՝ որպես քա-

ղաքական և ինստիտուցիոնալ արդիականացման նախագծեր, հայեցակարգային առումով տարբերվում են: Սա մասնավորապես արտացոլված է հայաստանյան քաղաքական դիսկուրսում: Հայ քաղաքական գործիչների հրապարակային հայտարարություններում ԵՄ-ն ընկալվում է որպես արդիականացման շարժիչ ուժ, իսկ Ռուսաստանը՝ որպես ռազմավարական գործընկեր և անվտանգության երաշխավոր: Թեև առաջինը չունի որևէ էական գործիք տարածաշրջանում անվտանգությունն ապահովելու համար և կենտրոնանում է այլ միջազգային կազմակերպությունների միջնորդական դերի վրա (ինչպես ԵԱՀԿ Մինսկի խումբը Ղարաբաղյան հակամարտության դեպքում), երկրորդը չի առաջարկում որևէ ծրագիր և զարգացման մոդել՝ հենվելով երկու երկրների ռազմական համագործակցության և պատմական ճակատագրերի ենթադրյալ ընդհանրության վրա:

Հայաստանի շուկան Ռուսաստանի և ԵՄ-ի համար շատ ավելի քիչ էական է, քան ռուս-եվրոպական առևտրային հարաբերությունները: Այս տեսանկյունից Հայաստանի հետ հարաբերությունները և խաղի կանոնները որոշելու ունակությունը Ռուսաստանի հայտն են տարածաշրջանային առաջնորդության համար: Նշված երկու դերակատարների միջև քաղաքական երկխոսության բացակայությունը հանգեցրեց դիվանագիտական ձգնաժամի, երբ հայկական կողմը ստիպված եղավ ընդհատելու բանակցությունները ԵՄ-ի հետ և համեմատելու ոչ այնքան երկու ինտեգրացիոն նախագծերի տնտեսական գործոնները, որքան դրանց քաղաքական կողմերը: Արդյունքում ԵՄ-ն ավելի ձկուն եղավ, քան Ռուսաստանը, և առաջարկեց հարաբերությունների նոր ձևաչափ: Միևնույն ժամանակ ԵՄ-ը, գտնվելով ռուս-եվրոպական հարաբերությունների խորացող ձգնաժամի իրավիճակում, լիարժեք երկխոսության չի գնացել եվրասիական ինտեգրացիոն

նախագծի և Եվրամիության փոխգործակցության շուրջ: Այսպիսով Ռուսաստանը կարողացավ պաշտպանել իր կարճաժամկետ շահը Հայաստանում, այն է՝ առավել բարենպաստ առևտրային ռեժիմ ռուս արտադրողների և ընկերությունների համար: Երկարաժամկետ հեռանկարում և՛ Ռուսաստանը, և՛ ԵՄ-ը բաց են թողել Եվրասիական տնտեսական միության և ԵՄ-ի առևտրային չափանիշները մերձեցնելու հնարավորությունը:

Հայաստանը ՀԱՊԿ-ում Ռուսաստանի միակ դաշնակիցն է Հարավային Կովկասում, ինչը նրան հնարավորություն է տալիս ներքին գներով ռուսական զինտեխնիկա ձեռք բերելու: Հայաստանում կա նաև ռուսական երկու ռազմակայան՝ Գյումրի քաղաքում և Թուրքիայի հետ սահմանին:

Ռուսաստանի և ԵՄ-ի միջև առձակատման հռետորաբանության համատեքստում Հարավային Կովկասի երկրները ստիպված են կառուցել իրենց դիվանագիտական դիրքորոշումը, որը թույլ կտա նրանց համագործակցելու երկու դերակատարների հետ: Չնայած այն հանգամանքին, որ տեխնոլոգիաների փոխանակման, հումանիտար, գիտակրթական համագործակցության ոլորտները Ռուսաստանի համար առաջնահերթություն չեն, սակայն հենց այդ ոլորտներում է, որ Ռուսաստանի նախաձեռնած ինտեգրացիոն նախագծերը պետք է մրցակցեն Հարավային Կովկասի երկրներում: Այսպիսով՝ տարածաշրջանում արտաքին քաղաքականությունը կարող է համալրվել համագործակցության ոլորտներով, որոնք կարող են մեծացնել քաղաքական գործընկերության գրավչությունը ոչ միայն պետությունների կառավարությունների, այլև բնակչության ավելի լայն սոցիալական շերտերի համար:

Եզրակացություններ

Դիտարկելով հայ-գերմանական քաղաքական հարաբերությունների տարբեր չափումները՝ կարելի է ներկայացնել հետևյալ եզրակացությունները.

- Հայ-գերմանական հարաբերությունների քաղաքագիտական վերլուծությունը բացահայտում է Հայաստանի և Գերմանիայի միջև պետական և ինստիտուցիոնալ մակարդակներում փոխգործակցության նախադրյալները՝ պատմական հետահայաց ընթացքում դիտարկելով ներկա փուլում երկու պետությունների աշխարհաքաղաքական դիրքի ձևավորման հիմնական գործոնները: Ակնհայտ է, որ պետք է հատուկ ուշադրություն դարձնել հայ-գերմանական համագործակցության հիմնական ոլորտների բացահայտմանը և առաջնահերթությանը, ինչպես նաև տարբեր ոլորտներում փոխգործակցության հնարավոր հեռանկարներին:
- Դիտարկվող հիմնախնդիրների համատեքստում բոլոր հիմքերն ունենք նշելու, որ քաղաքական ինստիտուտների միջև փոխգործակցությունը դեռևս հնարավորություն չի տվել վերջին երեսուն տարիների ընթացքում հայ-գերմանական համագործակցությունը քաղաքական ամենաբարձր մակարդակի հասցնելու: Չնայած այն հանգամանքին, որ Երևանի և Բեռլինի քաղաքական հարաբերություններում բազմաթիվ հարցեր են բարձրացվում և լուծվում, որոնց մասին նախկինում Հայաստանն ու Գերմանիան չէին էլ համարձակվում մտածել:
- Հայ-գերմանական համագործակցության վրա բացասաբար է ազդում ՀՀ քաղաքական համակարգի տրանսֆորմացիոն ոչ զծային գործընթացը, որը տեղի է ունենում

ձգնաժամի ժամանակ՝ ընդգրկելով հայ հասարակության բոլոր ոլորտները: Այս առումով ՀՀ-ում ժողովրդավարական վարչակարգի զարգացման ընդհանուր հատկանիշը վերափոխումներ իրականացնելու անհրաժեշտությունն էր ոչ միայն քաղաքական, այլև տնտեսական ու սոցիալական ոլորտներում: Դրանցում զգալի են եղել՝

- 1) պատերազմի և տարածաշրջանային հակամարտության գոյության երկար ժամանակաշրջանը,
 - 2) ազատ շուկայական տնտեսական հարաբերությունների փորձի բացակայությունը,
 - 3) երկրի զարգացման ռազմավարական ուղղությունների վերաբերյալ ռեֆորմիստական էլիտայի և խորհրդարանական կուսակցությունների հարաբերություններում կոնսենսուսի և համախմբման բացակայությունը,
 - 4) ժողովրդավարացման հետ մեկտեղ պետականություն կառուցելու և «քաղաքական ազգ» ձևավորելու անհրաժեշտությունը,
 - 5) քաղաքացիական հասարակության կազմակերպությունների զարգացած համակարգի բացակայությունը,
 - 6) արտաքին քաղաքական անբարենպաստ իրավիճակը, որն արտահայտվել է ժողովրդավարական բարեփոխումներին արևմտյան երկրների քաղաքական աննշան աջակցությամբ:
- Գերմանիայում պետական իշխանության ինստիտուտների մոդելի ձևավորման բնորոշ առանձնահատկությունն այն էր, որ անցման հենց սկզբից այն ընտրեց հավասարակշռված խորհրդարանական-նախագահական համակարգի ձևավորման ճանապարհը: Մյուս կողմից՝ Հայաստանում անհավասարակշիռ են եղել և՛ նախագահական-

խորհրդարանական, և՛ խորհրդարանական-նախագահական մոդելները: Դրանցից առաջինը բնութագրվում էր նախագահական կառույցների հիպերտրոֆիկ ազդեցությամբ, որոնց փաստացի լիազորությունները դուրս էին սահմանադրականից, երկրորդը՝ բարձրագույն իշխանության ինստիտուտների հիմնական լիազորությունների անհամապատասխանությամբ, որը պայմաններ ստեղծեց կոնֆլիկտի առաջացման և կատաղի մրցակցության համար՝ փորձելով սահմանափակել մի ինստիտուտի իրավասությունները մյուսով, որն ուղեկցվեց ոչ քաղաքական ազդեցության միջոցների կիրառմամբ:

- ՀՀ-ում, ի տարբերություն Գերմանիայի, կուսակցությունների իրավական կարգավորումը և ընտրական օրենսդրության բարեփոխումը չնպաստեցին խորհրդարանական կուսակցությունների ինստիտուցիոնալացմանը: Դրա պատճառով էլ վերջիններս ձգտում են արտախորհրդարանական միջոցներով ձնշում գործադրելու գործադիր իշխանության վրա: Այս առումով գերմանական փորձը ցույց է տալիս, որ ժողովրդավարական կոնսոլիդացիայի աստիճանը սերտորեն կապված է կուսակցական համախմբման աստիճանի հետ, և կուսակցական կոնսոլիդացիան, իր հերթին, ժողովրդավարության համախմբման աստիճանի ցուցիչներից է:

Համառոտագիր

Հոդվածը նվիրված է հայ-գերմանական երկկողմ հարաբերությունների գործընթացների քաղաքագիտական վերլուծությանը, որոնք 2013 թվականի աշնանից և 2014 թ. գարնանից սկսած արմատական փոփոխություններ են առաջացրել Հայաստանի և Գերմանիայի քաղաքական երկխոսության մեջ: Համեմատական վերլուծությունը ուղղված է Հայաստանի եվրոպական ինտեգրման նախաձգնաժամային տարիներին քաղաքական գործընկերության ոլորտում փոխգործակցության վիճակին՝ բացահայտելով Հարավային Կովկասի քաղաքական կայունության պահպանման թեմաներով Գերմանիայում քաղաքական դիսկուրսի որոշ առանձնահատկություններ, ցույց տալով դրա դինամիկան և որակը, ինչը մեծապես պայմանավորեց Հայաստանի ուղղությամբ Գերմանիայի արտաքին քաղաքականության հետագա փոփոխությունները:

Հոդվածում բացահայտված են նաև երկկողմ հարաբերություններում ձգնաժամային դրսևորումների հաղթահարման դիվանագիտական աշխատանքի որոշ հարցեր: Դիտարկված են 2013–2014 թթ. Գերմանիայում ձևավորված ներքաղաքական այն նախադրյալները, որոնք հետագայում ձևավորվել են Հայաստանի հետ քաղաքական հարաբերությունների վերանայման համար՝ հաշվի առնելով եվրաինտեգրման և Ուկրաինայի շուրջ տեղի ունեցող իրադարձությունները:

Վերլուծված են երկկողմ հարաբերությունների ապագայի, ընդհանուր առմամբ միջազգային հարաբերություններում նրանց տեղի ու դերի վերաբերյալ Գերմանիայում հասարակական-քաղաքական քննարկման հիմնական ուղղությունները:

Բերված են ՀՀ քաղաքական համակարգի դեմոկրատացման օրինակներ, որոնք հնարավորություն են տվել բարելավելու հայ-

գերմանական քաղաքական երկխոսության դինամիկան, որը, սակայն, չնայած 2018–2019 թթ. որոշակի դրական զարգացումներին, դեռևս անցնում է եվրահինտեգրման և հետպատերազմական ձգնաժամի միջով:

Քաղաքագիտական գրականության և տեղեկատվական աղբյուրների հետ մեկտեղ հողվածում օգտագործված են նաև հեղինակի անձնական դիտարկումներն ու եզրակացությունները, որը 2002–2022 թվականներին աշխատել է Հանովերի Լայքնից համալսարանի, Մյունխենի Լյուդվիգ Մաքսիմիլիան համալսարանի, Բեռլինի Ազատ համալսարանի և Յենայի Ֆրիդրիխ Շիլլեր համալսարանի քաղաքագիտության ինստիտուտներում:

Օգտագործած գրականության ցանկ

1. Barbé, E. and P. Morillas (2019) “The EU global strategy: the dynamics of a more politicized and politically integrated foreign policy.” *Cambridge Review of International Affairs* 32 (6): 753–770. <https://doi.org/10.1080/09557571.2019.1588227>.

2. Bernarding, N., Menninger, J., Provan, A., Scheyer, V., & Standke-Erdmann, M. (2021). Wie militarisiert ist die deutsche Außenpolitik? Berlin: Centre for Feminist Foreign Policy CFFP gGmbH: 1–35. <https://www.boell.de/sites/default/files/2021-09/CFFP-HeinrichBoll-DE-Final2.pdf>.

3. Börzel, T. A., and B. Lebanidze (2015) “European Neighbourhood Policy at the Crossroads:

Evaluating the Past to Shape the Future.” MAXCAP Working Paper Series 12, July, 2015. “Maximizing the integration capacity of the European Union: Lessons of and prospects for enlargement and beyond” (MAXCAP).

4. Boyko, A. (2020) “Die armenisch-deutschen Beziehungen entwickeln sich dynamisch.” *Berliner Telegraph*, 29.09.2020. <https://berliner-telegraph.de/de/die-armenisch-deutschen-beziehungen-entwickeln-sich-dynamisch/nachrichten/>.

5. Christou, G. (2010) “European Union security logics to the east: the European Neighbourhood Policy and the Eastern Partnership.” *European Security* 19 (3): 413–430. <https://doi.org/10.1080/09662839.2010.526110>.

6. Council of the EU (2018) “Joint press statement following the first Partnership Council meeting between the European Union and Armenia.” Press release 21 June 2018. <https://www.consilium.europa.eu/de/press/press-releases/2018/06/21/joint-press->

statement-following-the-first-partnership-council-meeting-between-the-european-union-and-armenia/.

7. Deutsch-Armenische Juristenvereinigung e.V. (2018) "Deutsch-armenische Beziehungen: Antwort der Bundesregierung auf die Kleine Anfrage des Abgeordneten Dr. Anton Friesen und der Fraktion der AfD." *Deutscher Bundestag – 19. Wahlperiode*, 14.05.2018. <https://dearjv.de/wp-content/uploads/2020/12/Antwort.pdf>.

8. Deutscher Bundestag (2015a) „Antwort der Bundesregierung auf die Kleine Anfrage der Abgeordneten Sevim Dağdelen, Ulla Jelpke, Wolfgang Gehrcke, weiterer Abgeordneter und der Fraktion DIE LINKE.“ *Deutscher Bundestag – 18. Wahlperiode*. 23.02.2015. <https://dserver.bundestag.de/btd/18/040/1804085.pdf>.

9. Deutscher Bundestag (2015b). „Antwort der Bundesregierung der Abgeordneten Sevim Dağdelen, Ulla Jelpke, Wolfgang Gehrcke, Heike Hänsel, Andrej Hunko, Niema Movassat, Dr. Alexander S. Neu und der Fraktion DIE LINKE.“ *Deutscher Bundestag – 18. Wahlperiode*. 05.02.2015. <https://dserver.bundestag.de/btd/18/039/1803970.pdf>.

10. Deutscher Bundestag (2016) „Antrag der Fraktionen CDU/CSU, SPD und BÜNDNIS 90/DIE GRÜNEN: Erinnerung und Gedenken an den Völkermord an den Armeniern und anderen christlichen Minderheiten in den Jahren 1915 und 1916.“ Drucksache 18 / 8613. <https://dserver.bundestag.de/btd/18/086/1808613.pdf>.

11. EEAS (2019) "The European Union's global strategy – Three years on, looking forward." 13 June 2019. https://www.eeas.europa.eu/sites/default/files/eu_global_strategy_2019.pdf.

12. EUR-Lex (2016) "A Global Strategy for the European Union's Foreign And Security Policy: "Shared Vision, Common Action: A

Stronger Europe”.” Council of the European Union, 28 June 2016. https://www.eeas.europa.eu/sites/default/files/eugs_review_web_0.pdf.

13. European Commission (2017). “Joint Communication to the European Parliament and the Council: A Strategic Approach to Resilience in the EU’s external action.” Brussels, 07.06.2017. JOIN(2017) 21 final. https://www.eeas.europa.eu/sites/default/files/join_2017_21_f1_communication_from_commission_to_inst_en_v7_p1_916039.pdf.

14. European Commission (2022). “EU Science Hub: Resilience.” https://joint-research-centre.ec.europa.eu/resilience_en.

15. Gylfason, T., and P.M. Wijkman (2017). “Which Conflicts Can the European Neighbourhood Policy Help Resolve?” In: Globalization, ed. by B. Christensen, and C. Kowalczyk, 363–395. Springer, Berlin, Heidelberg. https://doi.org/10.1007/978-3-662-49502-5_16.

16. Hofmann, T. (2017). “25 Jahre deutsch-armenische diplomatische Beziehungen: Geografie ist Schicksal.” *Der Tagesspiegel*, 25.04.2017. <https://www.tagesspiegel.de/politik/25-jahre-deutsch-armenische-diplomatische-beziehungen-geografie-ist-schicksal/19696238.html>.

17. Korosteleva, E. A. (2011). “Change or Continuity: Is the Eastern Partnership an Adequate Tool for the European Neighbourhood?” *International Relations* 25(2): 243–262. <https://doi.org/10.1177/0047117811404446>.

18. Maihold, G. (2021). Auf dem Weg zu einer internationalen Politik demokratischer Resilienz. In: G. Maihold, S. Mair, M. Müller, J. Vorrath, und C. Wagner (Hg.) *Deutsche Außenpolitik im Wandel: Unstete Bedingungen, neue Impulse*. SWP-Studie

15 (September): 74–77. https://www.swpberlin.org/publications/products/studien/2021S15_Deutsche_Aussenpolitik.pdf.

19. Major, C., Stelzenmüller, C., and C. Mölling (2021). Aktionsplan Sicherheits- und Verteidigungspolitik: Was Deutschland für Sicherheit, Verteidigung und Frieden tun muss. In: C. Mölling, and D. Schwarzer (Hrsg.), *Smarte Souveränität: 10 Aktionspläne für die neue Bundesregierung* (S. 27–37). Berlin: Forschungsinstitut der Deutschen Gesellschaft für Auswärtige Politik e.V. <https://nbn-resolving.org/urn:nbn:de:0168-ssaoar-75662-1>.

20. Mölling, C., and D. Schwarzer (Hrsg.) (2021). *Smarte Souveränität: 10 Aktionspläne für die neue Bundesregierung* (DGAP-Bericht 16). Berlin: Forschungsinstitut der Deutschen Gesellschaft für Auswärtige Politik e.V. <https://nbn-resolving.org/urn:nbn:de:0168-ssaoar-75638-6>.

21. Nietschmann, A. (2014) “The political response of Germany to the annexation of Crimea by the Russian Federation.” *Regional Dialogue*, 10.05.2014. <http://regional-dialogue.com/en/anne-nietschmann-the-political-response-of-germany-to-the-annexation-of-crimea-by-the-russian-federation/>.

22. Rat der EU (2018) “Tagung des Partnerschaftsrats EU-Armenien.” 21. Juni 2018. <https://www.consilium.europa.eu/de/meetings/international-ministerial-meetings/2018/06/21/armenia/>.

23. Schwarzer, D., and C. Mölling (2021). Aktionsplan Strukturen deutscher Außenpolitik: Wie Deutschland außenpolitische Entscheidungen besser treffen, vermitteln und umsetzen kann. In: C. Mölling, and D. Schwarzer (Hrsg.), *Smarte Souveränität: 10 Aktionspläne für die neue Bundesregierung* (S. 19–25). Berlin:

Forschungsinstitut der Deutschen Gesellschaft für Auswärtige Politik e.V.

24. The Prime Minister of the RA (2022) “Press releases: Armenian–German partnership is based on political, economic and value system interests. PM Pashinyan receives Vice President of Bundestag.” 20.07.2022. <https://www.primeminister.am/en/press-release/item/2022/07/20/Nikol-Pashinyan-meeting/>.

25. Маркедонов, С. (2018) “Кавказское турне Ангелы Меркель: три страны и три повестки.” *Sputnik Грузия*. 24.08.2018. <https://sputnik-georgia.ru/20180824/Kavkazskoe-turne-Angely-Merkel-tri-strany-i-tri-povestki-241823589.html>.

26. Ничманн, А. (2014) “Интересы Германии на Южном Кавказе.” *Regional Dialogue*, 09.06.2014. <http://regional-dialogue.com/ru/ru/анне-ничманн-интересы-германии-на-южн/>.

Բանալի բառեր՝ հայ-գերմանական հարաբերություններ, եվրոպական ինտեգրացիա, արտաքին քաղաքականություն, հանրային դիվանագիտություն, կայուն զարգացում, տարածաշրջանային համագործակցություն

**Հայաստանի Հանրապետության և
Գերմանիայի միջև իրավական
համագործակցության հիմնական
ուղղությունները.
հետադարձ հայացք–30 տարի**

Օթթո Լուիսթերհանդթ

Նախնական դիտողություններ

Հոդվածի առարկան 1993–2020 թթ. Հայաստանի Հանրապետությունում Գերմանիայի կողմից իրականացված խորհրդատվությունն է սահմանադրական և իրավական հարցերով: Հեղինակը սկզբից նեթ առանց ընդհատումների ուղեկցել ու համադրելովարել է այն: Նա այդ առաջադրանքի համար լավ նախապատրաստվածություն ուներ հետևյալ պատճառներով. նախ՝ դոկտորական ատենախոսություն է պաշտպանել պետական և վարչական իրավունքի, ինչպես նաև արևելաեվրոպական իրավունքի բնագավառում, Համբուրգի համալսարանում ուներ պրոֆեսուրա այս մասնագիտական ոլորտների համար և ղեկավարել է արևելաեվրոպական իրավունքի հետազոտությունների բաժինը, որը կապված էր այդ պրոֆեսուրայի հետ: Երկրորդ՝ նա նաև ուսանել է սլավոնագիտություն և Արևելյան Եվրոպայի պատմություն, իսկ 1970–1990 թվականներին որպես Քյոլնի համալսարանի Արևելյան իրավունքի ինստիտուտի գիտական ասիստենտ համապարփակ հետազոտություններ է կատարել Խորհրդային Միության

իրավունքի ու քաղաքականության վերաբերյալ, 1974 թվականին Քյոլնում Բորիս Մայսների ղեկավարության ներքո թեկնածուական ատենախոսություն է պաշտպանել խորհրդային պետության և ռուս ուղղափառ եկեղեցու վերաբերյալ ու այս համատեքստում զբաղվել նաև Հայաստանի Խորհրդային Հանրապետությունում տիրող եկեղեցական պայմաններով: Երրորդ՝ հեղինակը Հայկական ուսումնասիրությունների հիմնադրամի (Էսսեն) նախաձեռնությամբ 1992 թվականին, այսինքն՝ դեռ Ղարաբաղյան առաջին պատերազմի ժամանակ (1992–1994 թթ.), հողված է հեղինակել (փորձագիտական կարծիք) ժողովուրդների ինքնորոշման իրավունքի ուժով Լեռնային Ղարաբաղի պետական անկախության իրավունքի վերաբերյալ և մանրամասն հիմնավորել նման իրավունքը¹:

Մասնագիտական որակավորումների այս համակցությունը հիմք եղավ, որ «Ֆրիդրիխ Նաուման» հիմնադրամը (ՖՆՀ) 1993 թվականից և Գերմանիայի տեխնիկական համագործակցության ընկերությունը (ԳՏՀԸ) 1995 թվականից հեղինակին՝ որպես իրավախորհրդատուի, գործուղեն միջազգային իրավունքով անկախացած Հայաստանի Հանրապետություն՝ նպաստելու ժողովրդավարական իրավական պետության, սոցիալական ուղ-

¹ Das Recht Berg-Karabaghs auf staatliche Unabhängigkeit aus völkerrechtlicher Sicht (Լեռնային Ղարաբաղի պետական անկախության իրավունքը միջազգային իրավունքի տեսանկյունից), Միջազգային իրավունքի արխիվ, հ. 31 (1993), էջ 30–81. ամերիկյան տարբերակը՝ Nagorny Karabakh's Right to State Independence according to International Law, Boston 1993 (Armenian Rights Council Publication No. 1): Հեղինակին Հիմնադրամի կողմից աջակցություն է ցուցաբերել Բոխումի համալսարանի դոկտոր, պրոֆեսոր Միհրան Դաբաղը, որը հետագայում Բոխումի Ռուսիի համալսարանին կից հիմնադրել և մինչ օրս ղեկավարում է Սփյուռքի և ցեղասպանության հետազոտությունների ինստիտուտը, իսկ 1999 թվականից հրատարակում է «Ցեղասպանության հետազոտությունների հանդես»-ը:

վածություն ունեցող շուկայական տնտեսության և ազատական քաղաքացիական հասարակության ձևավորմանը:

Հայաստանի և Գերմանիայի միջև իրավական ոլորտում համագործակցության տեսանկյունից սահմանադրական և իրավական խորհրդատվության առնչությամբ կարելի է առանձնացնել վեց (6) փուլ կամ ժամանակահատված.

1. Խորհրդատվական մասնակցություն 1995 թ. հուլիսի 5-ի սահմանադրության մշակմանը (1993–1994 թթ.):

2. Քաղաքացիական դատավարության օրենսգրքի նախագծերի, ինչպես նաև ընթացակարգային օրենսդրության նախագծերի մշակում, որոնք էական նշանակություն ունեն շուկայական տնտեսության կայացման համար և վերաբերում են մասնավորապես տնտեսական արդարադատությանը, իրավարարությանը, ընկերությունների գրանցմանը, նոտարությանը, առևտրաարդյունաբերական պալատներին, ինչպես նաև անվճարունակության մասին օրենսդրությանը (1995–1999 թթ.), այնուհետև պրակտիկային ուղղվածություն ունեցող միջոցառումների, հատկապես իրավական վերապատրաստման սեմինարների անցկացում:

3. Անցում ընդհանուր վարչական իրավունքի հիմունքների մշակմանը՝ վարչարարության հիմունքների մասին օրենքի և վարչական դատավարության օրենսգրքի նախագծերի (2000–2007 թթ.):

4. Մասնակցություն եռաստիճան վարչական արդարադատության (առաջին ատյանի դատարան, վերաքննիչ դատարան, վճռաբեկ դատարանի վարչական պալատ) ինստիտուցիոնալացմանը, ինչպես նաև ուսուցման ու վերապատրաստման միջոցառումների իրականացում՝ ներառյալ վարչական արդարադատության համակարգում դատավորի պաշտոնները զբաղեցնելու հա-

մար առաջադրված թեկնածուների որակավորման և ավարտական քննությունները (2005–2017 թթ.),

5. Մասնակցություն Հայաստանի Հանրապետության նախագահի կողմից նշանակված սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի աշխատանքային խմբին՝ մշակելու 1995 և 2005 թվականների սահմանադրության ամբողջական վերանայման նախագիծ՝ մասնավորապես 2005 թվականին ներդրված նախագահական–խորհրդարանական խառը համակարգից զուտ խորհրդարանական կառավարման համակարգի անցման նպատակով, մասնակցություն 2015 թվականի դեկտեմբերին հանրաքվեով ընդունված, ամբողջությամբ վերանայված 1995 թվականի սահմանադրության վերաբերյալ հեղինակային մեկնաբանություն կազմելուն (2016–2019 թթ.):

6. Հայաստանի սահմանադրական և վարչական իրավունքի վերաբերյալ մի շարք «սեզոնային դպրոցների» անցկացում (2017–2020 թթ.):

Հաջորդիվ ներկայացվող շարադրանքն էապես հիմնված է իրականացված ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետություն կատարած իր գործուղումների վերաբերյալ հեղինակի կողմից ծրագրի պատվիրատուների համար գրված (չհրապարակված) նյութերի և հաշվետվությունների վրա:

1. Հայաստանի Հանրապետությունում քաղաքական և իրավական իրավիճակը սահմանադրական և իրավական հարցերում խորհրդատվության սկզբին

1921–1923 թվականներին Ստալինի կողմից Ռուսաստանի կոմունիստական կուսակցության անունից Ադրբեջանի Խորհրդային Հանրապետության կազմ մտցրած, հնագույն ժամանակներից

հայերով բնակեցված Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը Հայաստանի խորհրդային Հանրապետությանը միավորելու կոչով ոգևորված Հայոց համազգային շարժումը (ՀՀՇ) գործաչովյան վերակառուցման ժամանակ՝ 1990 թ. մայիսին կայացած խորհրդարանական ընտրություններում հաղթել էր իշխող Հայաստանի կոմունիստական կուսակցությանը:²

Ընդդիմադիր այլ խմբերի հետ միասին Գերագույն խորհրդում այժմ առաջին անգամ կար ոչ կոմունիստական մեծամասնություն: ՀՀՇ առաջնորդներից Լևոն Տեր-Պետրոսյանն ընտրվել էր խորհրդարանի նախագահ՝ պետության ղեկավարի գործառնություններով:

1990 թվականի օգոստոսի 23-ին Գերագույն խորհուրդն ընդունեց «Հայաստանի անկախության մասին» հռչակագիրը, այնուհետև տարբեր օրենքներ՝ հռչակագիրն իրագործելու համար: 1991 թ. օգոստոսին Մոսկվայում նախագահ Միխայիլ Գորբաչովի դեմ ձախողված հեղաշրջումից հետո Հայաստանի քաղաքացիները 1991 թ. սեպտեմբերի 21-ին հանրաքվեով հաստատեցին անկախության հռչակումը: 1991 թ. սեպտեմբերի 25-ին Գերագույն խորհուրդն ընդունեց սահմանադրական օրենքի պես մի բան՝ «Հայաստանի պետականության հիմքերի մասին», որով ուժը կորցրեց 1978 թ. ապրիլի 14-ի՝ ձևականորեն դեռևս գործող խորհրդային սահմանադրությունը: 1991 թ. հոկտեմբերի 16-ին

² Հայաստանի Սահմանադրության պատմության վերաբերյալ տե՛ս Օթթո Լուխթերհանդթի ակնարկը. Einführung in die Verfassung der Republik Armenien, in: Brunner, Georg (Hrsg.): Verfassungs- und Verwaltungsrecht der Staaten Osteuropas. VSO (արագակարային ժողովածու), Բեռլին, 22-րդ կազմությունը՝ 1999 թ. (էջ 1-30, Սահմանադրության տեքստի թարգմանությամբ), 1990 թվականից սահմանադրության զարգացման վերաբերյալ մանրամասն տե՛ս Վարդան Պողոսյան, Die verfassungspolitische Entwicklung in der Republik Armenien (1990 – 1995), մագիստրոսական թեզ, Բոնն, 1996, էջ 10 հհ:

Լևոն Տեր-Պետրոսյանը ժողովրդի կողմից ընտրվեց «Հայաստանի Հանրապետության» նախագահ և պետության ղեկավար: Արտաքին և ներքին գործերում ունեցած մեծ լիազորությունները նախագահին դարձրին նաև գործադիր իշխանության ղեկավար, մինչդեռ Գերագույն խորհրդի լիազորությունները, որոնք մինչ այդ հիմնված էին խորհուրդների մոդելի վրա, սահմանափակվեցին խորհրդարանին բնորոշ գործառույթներով:

Լևոն Տեր-Պետրոսյանը և նրա ստեղծած սահմանադրական հանձնաժողովը ձգտում էին այդ ուժային հարաբերությունները տեղափոխել Հայաստանի առաջին հետկոմունիստական սահմանադրություն: Սակայն նրա հույսը, որ սահմանադրությունը կմշակվի և կընդունվի արագ ու առանց մեծ դիմադրության, չիրականացավ: Աշխարհաքաղաքական հակամարտությունները, ինչպես նաև քաղաքական ու վարչական, սոցիալ-տնտեսական, մտածելակերպային ու հոգեւոցիալական թուլություններն ու կառուցվածքային հիմնախնդիրները, որոնք ԽՍՀՄ փլուզումից հետո հատուկ էին ոչ միայն Հայաստանի Հանրապետությանը, նոր սահմանադրության ձանապարհը դարձրին անսպասելիորեն բարդ, կոնֆլիկտներով լեցուն ձեռնարկում: Դրանում հիմնական դեր խաղացին հետևյալ ընդհանուր հիմնախնդիրները.

Առաջին՝ Հայաստանի մեկուսացումն ու ծանր կացությունը, որոնք պայմանավորված էին արևելքում Ադրբեյջանի, արևմուտքում Թուրքիայի և որոշ ժամանակ փաստացի նաև հյուսիսում Վրաստանի հետ սահմանների էներգետիկ, տրանսպորտային և տնտեսական շրջափակմամբ: Անվտանգ արտաքին կապ կար միայն Իրանի հետ՝ Հայաստանի հարավարևելյան մասի նեղ շերտով և ոչ բարվոք ձանապարհով, որը, Երևանից և երկրի կենտրոնական հատվածներից սկսվելով, ձգվում էր յոթ լեռնանցքներով և տարիներ շարունակ ընդամենը ժամանակավոր պոնտոնային

կամրջով հատում Հայաստանն Իրանից բաժանող սահմանային Արաքս գետը:

Երկրորդ՝ խորհրդային տնտեսական համակարգի փլուզումը, համակարգ, որտեղ Հայաստանին վերապահված էր բարձր տեխնոլոգիայի և գիտության երկրի գործառույթ, որից և այդ համակարգը զգալիորեն օգտվում էր: Այժմ գործարանների մեծ մասը չէր աշխատում, առաջացել էր զանգվածային գործազրկություն, և բնակչության մի զգալի մասը լքել էր երկիրը՝ հայկական սփյուռքում՝ Եվրոպայում, ԱՄՆ-ում կամ Ռուսաստանում և ԱՊՀ այլ երկրներում ապրող հարազատների մոտ ապրուստի միջոցներ գտնելու նպատակով:

Երրորդ՝ Լեռնային Ղարաբաղի անկախության հասնելու համար պատերազմը, որը Մոսկվայի ու Ադրբեյջանի հետ 1986 թվականից ի վեր մարմրող քաղաքական հակամարտությունից հետո բռնկվել էր 1992 թվականին, այսինքն՝ խորհրդային Միության վախճանից անմիջապես հետո (25.12.1991 թ.), ծանր բեռի պես ընկած էր Հայաստանի Հանրապետության ուսերին, որը, չնայած իր քայքայված տնտեսական վիճակին և դեռևս շատ թույլ, նոր ձևավորվող ազգային զինված ուժերին, ուժերի ներածին չափով և նաև հայկական սփյուռքի օգնությամբ աջակցում էր Լեռնային Ղարաբաղին:

Չորրորդ՝ այն, ինչ ի սկզբանե Հայոց համազգային շարժման ուժն էր, երբ հակադրվում էր հանրապետությունում իշխող կոմունիստական կուսակցության վարչակազմին, այն է՝ նրա բնույթը՝ որպես տարբեր քաղաքական ուղղությունների, հոսանքների ու դիրքորոշումների համար բաց շարժում, այժմ՝ խորհրդային համակարգի ավարտից հետո, դուրս եկավ որպես թուլություն, քանի որ քաղաքական հակառակորդի վերացման հետ մեկտեղ ՀՀԾ-ի քաղաքական համախմբվածությունը դարձավ ավելի երերուն,

ներքին վեճերն աճեցին, և նրա մեծամասնությունը խորհրդարանում («Գերագույն խորհրդում») փլուզվեց: Ղարաբաղի հարցում քաղաքական կուսակցությունների և նրանց գլխավոր դերակատարների բռնած դիրքորոշումը կոնֆլիկտային քաղաքական հիմնախնդիրներից ամենակարևորն էր, ամենազգայունը և, հետևաբար, ամենավտանգավորը, քանի որ առնչվում էր հայկական ինքնության բուն էությանը, սերտորեն կապված էր Օսմանյան կայսրությունում հայ ժողովրդի ցեղասպանության տրավմատիկ փորձառության հետ և այդ պատճառով, ինչպես 1988 թվականից ի վեր ցույց էր տվել Ղարաբաղյան շարժումը, ուներ քաղաքացիներին բողոքի ցույցերի հրահրելու և ոտքի հանելու ներուժ: Դրանում մինչ օրս սկզբունքորեն ոչինչ չի փոխվել:

2. Մասնակցություն 1995 թ. հուլիսի 5-ի Սահմանադրության մշակմանը

Սահմանադրության մշակումն ընթացավ երեք փուլով. **առաջին փուլում**, որն ավարտվեց 1993 թ. ամռանը, սահմանադրական հանձնաժողովում մեծապես գերակշռում էր նախագահի ձամբարը: Հանձնաժողովի ներկայացրած սահմանադրության նախագիծը նախատեսում էր նաև օրենսդիր ու դատական իշխանության գերիշխող դեր ունեցող, ուժեղ նախագահով կառավարման համակարգ: Քանի որ երկրի սոցիալ-տնտեսական աղետալի իրավիճակի արդյունքում նախագահ Տեր-Պետրոսյանի կուսակցության և անձամբ նրա հեղինակությունը խիստ նվազել էին, ընդդիմությունը մեծ թափ ստացավ: Ընդդիմության վեց կուսակցություններ սահմանադրական հարցի շուրջ դաշինք («Վեցյակ») կազմեցին: Երևանի պետական համալսարանի պետական իրավունքի պրոֆեսոր, Վերակառուցման շրջանում կարճ ժամանակ

հանրապետության գլխավոր դատախազ աշխատած Վլադիմիր Ռուբենի Նազարյանը դաշինքի պատվերով կազմեց սահմանադրության այլընտրանքային նախագիծ:

Ընդդիմության հզորացմամբ սկսվեց սահմանադրության քննարկումների **երկրորդ փուլը**:

Այն բանից հետո, երբ սահմանադրական հանձնաժողովն իր նախագծին խորհրդատվական աջակցություն ցուցաբերելու նպատակով ներգրավել էր Գերմանիայի Բունդեսթագի գիտական ծառայության աշխատակից, նախարարական խորհրդական դոկտոր Հինսթրոֆերին, Վեցյակի անդամ լիբերալ-դեմոկրատական Ռամկավար-ազատական կուսակցությունը (ՌԱԿ),³ Ազատական ինտերնացիոնալում ունեցած կապերի շնորհիվ խնդրեց իր գերմանական քույր կուսակցությանը՝ Ազատ դեմոկրատական կուսակցությանը (ԱԴԿ), ընդդիմության մշակած սահմանադրության նախագծի քննարկման նպատակով Գերմանիայից Երևան գործուղել պետական իրավունքի որևէ մասնագետի՝ նաև չեզոք, արտաքին խորհրդատվություն ապահովելու համար: Լեռնային Ղարաբաղի ինքնորոշման իրավունքի մասին միջազգային իրավական տեսանկյունից գրված հոդվածի արդյունքում որպես Հայաստանի հարցերով մասնագետ հայտնի դառնալուց հետո հեղինակը «Ֆրիդրիխ Նաուման» հիմնադրամի (Քյոնիգսվիլնթեր) պատվերով 1993 թվականի նոյեմբերին մեկնեց, ինչպես վերևում

³ Կուսակցությունը «Արմենական» անվանմամբ հիմնադրվել էր 1885 թվականին Օսմանյան կայսրությունում և «Ռամկավար ազատական» անվանմամբ 1921 թվականից գործունեությունը շարունակել բազմաթիվ երկրների հայկական սփյուռքում, հատկապես Լիբանանում: Հայաստանի Հանրապետությունում կուսակցությունը 1991 թվականին վերստին հիմնադրվել էր ազատական տրամադրություններ ունեցող երիտասարդ կոմունիստների և մտավորականության ներկայացուցիչների կողմից և Գերագույն խորհրդում ներկայացված էր տասներկու պատգամավորով:

ասվեց, Երևան⁴ և պրոֆեսոր Նազարյանի հետ քննարկեց ընդդիմության նախագիծը:

Այդ նախագիծը սահմանադրական հանձնաժողովի մշակած նախագծից տարբերվում էր չորս էական կետով.

1. Այն միանշանակորեն առավելությունը տալիս էր խորհրդարանական կառավարման համակարգին:

2. Ընդգծում էր հայ ազգային ձգտումները (Թուրքիայի կողմից ցեղասպանության դատապարտում, սփյուռքահայերի հպատակագրման դյուրինացում, Հայ առաքելական եկեղեցու դերի շեշտադրում և այլն):

3. Տեղական ինքնակառավարման դերի բարձրացում:

4. Սահմանադրության ընդունում սահմանադիր ժողովի կողմից:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նաև ընդդիմության մշակած նախագիծն էր նախատեսում սահմանադրական դատարան և որ փորձը ցույց է տվել, որ դատարանի իշխանությունը մեծանում է նույնքան, որքան սահմանադրության տեքստը լեցուն է քաղաքական կարևորություն ունեցող նորմերով, հեղինակը խնդրահարույց համարեց հիմնարար իրավունքների մասին շատ մանրամասն դրույթները և հատկապես նախագծի երկարաբան գլուխը քաղաքացիական հասարակության մասին: Բացի դրանից՝ նա քննադատության ենթարկեց այն փաստը, որ կառավարման համակարգի վերաբերյալ դրույթներում դեռևս չափից շատ է զգացվում խորհուրդների համակարգի ավանդույթը: Ուստիև իր խորհրդատվական աշխատանքի ընթացքում նա հետամուտ էր

⁴ Հեղինակին ուղեկցում էր դոկտոր Միհրան Դաբաղը (վերջինիս մասին տե՛ս *Ծանոթ. 1*), որը Հայաստանի Հանրապետությունում իր կապերի շնորհիվ անգնահատելի ծառայություններ է մատուցել հեղինակին և նշանակալի ներդրում ունեցել առաքելության հաջողության գործում:

երկու նախագծերն իրար մոտեցնելու գծին՝ հանձնաժողովի ներկայացրած նախագծի պարագայում նվազեցնել նախագահական պաշտոնի գերակշռությունը և հասնել օրենսդիր ու գործադիր իշխանությունների միջև հավասարակշիռ հարաբերակցության, իսկ ընդդիմության ներկայացրած նախագծի պարագայում, ընդհակառակը, ուժեղացնել նախագահի դիրքերը՝ հատկապես այն հիմնավորմամբ, որ հանրապետությունում դեռևս անկանխատեսելի ժամանակով տիրող ճգնաժամային ու ծանր վիճակը պահանջում է արտաքին ու ներքին հարցերում գործունակ գործադիր իշխանություն: Իսկ սահմանադրական հանձնաժողովի նախագծում տեղական ինքնակառավարման ինստիտուտի նկատմամբ անտեսված վերաբերմունքի խորապատկերին նախընտրելի էր ընդդիմության նախագիծը:

Քանի որ հեղինակը Վեցյակին խորհրդատվությամբ աջակցելիս դրսևորում էր սահմանադրական հանձնաժողովի հետ համակարծության միտված մոտեցում, և խմբի որոշ անդամներ ցուցաբերում էին փոխզիջման պատրաստակամություն, նրան ընձեռվեց տարբեր վիճելի հարցերի վերաբերյալ իր փաստարկները սահմանադրական հանձնաժողովում և Գերագույն խորհրդի լիազումար նիստում ներկայացնելու հնարավորություն: Բացի դրանից՝ Երևանի հեռուստատեսության ստուդիայում սահմանադրության հարցի վերաբերյալ հեղինակի հետ անցկացված ու հեռարձակված մանրամասն հեռուստահարցազրույցը և դրան հաջորդած մամուլի լուսաբանումն ապահովեցին, որ Վեցյակի գաղափարները լայնորեն հայտնի դառնան շահագրգիռ հանրությանը: Հեղինակին դրական համբավ ապահովեց ոչ վերջին հաշվով այն փաստը, որ ինքը ղարաբաղյան հարցում հայկական կողմին աջակցող դիրք էր գրավել: Այդ իսկ պատճառով խորհրդատվական առաքելության ընթացքում նա փոխարտգործնախարար Ժիրայր Լիպա-

րիտյանի կողմից հրավիրվեց նախարարության «Ղարաբաղյան հանձնաժողովի» հետ հանդիպման:

1994 թ. փետրվարին պրոֆեսոր Նազարյանի հետ հեղինակի շարունակվող, ինտենսիվ աշխատանքի արդյունքում ընդդիմությունը կարողացավ 1994 թ. գարնանը սահմանադրության նոր նախագիծ ներկայացնել և ապրիլին խորհրդարանում սահմանադրության վերաբերյալ տեղի ունեցած առաջին մեծ քննարկմանը հասնել այն բանին, որ հանձնաժողովի մշակած սահմանադրության նախագիծը ձայների մեծամասնություն չստանա: Իսկ սահմանադրության վերաբերյալ 1994 թ. հունիսին տեղի ունեցած երկրորդ քննարկման ժամանակ մեծամասնությունը նույնիսկ դեմ արտահայտվեց հանձնաժողովի պաշտոնական նախագիծը հետագա քննարկման հիմք դարձնելուն:

Նախագահի ճամբարի այդ ծանր քաղաքական պարտությունը հանգեցրեց սահմանադրության նախագծի մշակման **երրորդ փուլին:**

Նախագահ Տեր-Պետրոսյանը և նրա կուսակցությունը պարտությունից հետևություն արեցին, որ պետք է ձևավորվի նոր սահմանադրական հանձնաժողով, որում կներգրավվի ընդդիմությունը, և պրոֆեսոր Նազարյանը կնշանակվի նոր նախագիծ մշակելու առաջադրանք ստացած աշխատանքային խմբի նախագահ: Դա շատ ճարպիկ շախմատային քայլ էր, քանի որ պրոֆեսոր Նազարյանը պատրաստ էր իր կողմից ծրագրված իրավախորհրդատվական կենտրոնին պետական միջոցներ հատկացնելու դիմաց սահմանադրության հարցում ընդառաջ գնալ նախագահին:

Այն բանից հետո, երբ Վեցյակի անդամ որոշ կուսակցություններ, այդ թվում՝ Ռամկավար ազատական կուսակցությունը, անցան նախագահական ճամբար, աշխատանքային խմբի նախագիծը բացահայտ մեծամասնությամբ հաստատվեց խորհրդարա-

նի կողմից և 1995 թվականի հուլիսի 5–ին հանրաքվեի միջոցով ընդունվեց ժողովրդի կողմից:

Երրորդ փուլում նախագծի մշակման աշխատանքներին հեղինակն այլևս չէր մասնակցում, քանի որ Վեցյակը լուծարվել էր, և «Ֆրիդրիխ Նաուման» հիմնադրամի տեսանկյունից հեղինակի խորհրդատվական առաջադրանքի համար առանձնահատուկ քաղաքական պատճառ այլևս չկար:

Սահմանադրության վերջնական տեքստը ցույց է տալիս, որ կառավարման համակարգի ձևավորման հարցում նախագահն էական կետերում հասել էր հաջողության:⁵ Դա նախագահական կառավարման խառը համակարգ էր, որտեղ ԱՄՆ նախագահի և Ֆրանսիայի նախագահի իրավասությունները համակցված էին այնպես, որ քաղաքական իրողության մեջ այն նմանվում էր «սուպերնախագահական» կառավարման համակարգի:⁶

3. ԳՏՀԸ–ի «Աջակցություն Հայաստանի Հանրապետությունում տնտեսական իրավունքի բարեփոխումներին» ծրագրի մեկնարկը (1995–1999 թթ.)

Իրավական խորհրդատվության ծրագիրը սկսվեց 1995 թվականի նոյեմբերին, երբ Հեսսենի արդարադատության և եվրոպական հարցերի նախարարության աշխատակից դոկտոր Վեռներ

⁵ 1995 թվականի հուլիսի 5–ի Սահմանադրության բովանդակության վերաբերյալ տե՛ս Luchterhandt, Otto. Einführung in die Verfassung der Republik Armenien (Ծանոթ. 2), էջ 24 հհ:

⁶ Անգլո–սաքսոնական քաղաքագիտության մեջ տարածված, առաջին հերթին՝ ԱՊՀ պետությունների վրա կիրառված և միանգամայն դիպուկ հասկացության վերաբերյալ ընդամենը տե՛ս Ishiyama, John T./Kennedy, Ryan: Superpresidentialism and Political Party Development in Russia, Ukraine, Armenia and Kyrgyzstan, in: Europe–Asia Studies Vol. 53 (2001), № 8, էջ 1177–1191:

Շույց են և հեղինակը Գերմանական տեխնիկական համագործակցության ընկերության (ԳՏՀԸ) հանձնարարությամբ մեկնեցին Երևան՝ հանդիպելու պրոֆեսոր Վլադիմիր Նազարյանի հետ և քննարկելու Հայաստանի Հանրապետության քաղաքացիական և տնտեսական օրենսդրության բարեփոխումների աջակցության ծրագրի հնարավորությունը:

Հեսսեն երկրամասի մայրաքաղաք Վիսբադենում տեղակայված արդարադատության նախարարության ներգրավվածությունը խորհրդատվական ծրագրի նախապատրաստմանը հիմնված էր ոչ թե այն փաստի վրա, որ ԳՏՀԸ-ի կենտրոնական գրասենյակը մոտակայքում էր՝ Ֆրանկֆուրտի հարևանությամբ գտնվող Էշբոռնում, այլ այն հանգամանքի, որ դեռ ԽՍՀՄ ժամանակներում Հեսսեն դաշնային երկրամասը գործընկերություն էր հաստատել Հայաստանի Խորհրդային Հանրապետության հետ: Հատկապես Բադ Հոմբուրգից Բունդեսթագի պատգամավոր ընտրված Դիտրիխ Շպեռլինգը (ՍԴԿ) մեծապես նպաստել էր ծրագիրը կյանքի կոչելուն: Ինչպես մինչ այդ Վրաստանի Հանրապետության դեպքում էր, որի հետ ԳՏՀԸ-ն 1992 թվականին հանձին Բրեմենի համալսարանի պրոֆեսոր Ռոլֆ Քնիփերի արդեն սկսել էր իրավական խորհրդատվության ծրագիր և հետզհետե Բրեմենի արդարադատության ամբողջ համակարգը ներգրավել համագործակցության մեջ, ԳՏՀԸ-ն մտադրվեց Հեսսենի դաշնային երկրամասի իրավաբանական հիմնարկներն օգտագործել Հայաստանի Հանրապետության հետ նախատեսվող համագործակցության համար: Ինչպես ցույց տվեց ծրագրի աշխատանքների զարգացումը 25 տարիների ընթացքում, ԳՏՀԸ-ի այդ պրակտիկան իրեն գերազանց արդարացրեց նաև այստեղ:

Ուղևորության ժամկետը պատահական չէր, քանի որ դրան նախորդել էր այն ժամանակվա տնտեսական համագործակցության

դաշնային նախարար Դիթեր Շպրանգերի (ԲՍՄ) աշխատանքային այցը Հարավային Կովկասի երեք պետություններ 1995 թ. մայիսին: Հայաստանի Հանրապետություն կատարած այցի ժամանակ կառավարությունը նրան խնդրել էր քննել այն հարցը, թե արդյոք Գերմանիան պատրաստ է աջակցելու Հայաստանի Հանրապետությունում իրավական համակարգի զարգացմանը հուլիսին սահմանադրության ընդունումից հետո: Հարցը միանգամայն հիմնավորված էր, քանի որ այժմ իրավական քաղաքականության օրակարգում էր հիմնական օրենսգրքերի և առանցքային օրենքների սխտեմատիկ մշակումը քաղաքացիական իրավունքի, քրեական իրավունքի, տնտեսական իրավունքի, դատարանակազմության իրավունքի և դատավարական տարբեր օրենսգրքերի, ինչպես նաև պետական և վարչական իրավունքի ոլորտներում, այսինքն՝ հանրապետության գրեթե ողջ իրավական համակարգի նորացում:

Նախարարի այցը նաև Հայաստան հնարավոր և նպատակահարմար էր դարձել այն պատճառով, որ 1994 թ. մայիսին Ղարաբաղի հայերի անկախության պատերազմն ավարտվել էր Ադրբեյջանի նկատմամբ հաղթանակով, և Ռուսաստանին հաջողվել էր Ղրղզստանի մայրաքաղաք Բիշքեկում միջնորդել Հայաստանի, Ադրբեյջանի և Լեռնային Ղարաբաղի միջև հրադադարի եռակողմ անժամկետ պայմանագրի վերաբերյալ, որը 1994 թ. մայիսի 9–11–ը առանձին–առանձին ստորագրվեց Ստեփանակերտում, Երևանում և Բաքվում:⁷ Թեև ռազմական գործողությունների դադարեցումը չէր հանգեցրել Ադրբեյջանի և Թուրքիայի կողմից Հայաստանի Հանրապետության շրջափակումների վերացմա-

⁷ Luchterhandt, Otto: Der Krieg Aserbaidshans gegen Berg–Karabach im April 2016 aus völkerrechtlicher Sicht, in: Միջազգային իրավունքի արխիվ (ՄԻԱ), հատոր 55 (2017), պրակ 2, էջ 185 – 233 (218 հ):

նը, սակայն քաղաքական վճռորոշ շրջանակային պայմաններ էր ստեղծել Գերմանիայի Դաշնային Հանրապետության և Հայաստանի Հանրապետության միջև հանգիստ, սերտ և նպատակաուղղված համագործակցության համար:

Նպաստավոր հանգամանք էր այն, որ սահմանադրության մշակման ավարտից հետո պրոֆեսոր Նազարյանը զբաղված էր իրավաբանական խորհրդատվության հասարակական կենտրոն ստեղծելով և դրա համար պատվերներ հայթայթելով: ԳՏՀԸ-ում տեղյակ էին, որ հեղինակը և պրոֆեսոր Նազարյանը լավ համագործակցել էին սահմանադրության նախագծի քննարկումների շրջանակում, ուստի սահմանադրության ընդունումից հետո համագործակցության շարունակությունը իմաստալից էր:

Հեսսենի արդարադատության և եվրոպական հարցերի նախարարության ներկայացուցիչ դոկտոր Վեռներ Շուլցեի հետ ուղևորության նպատակն էր հայկական կողմի հետ երկխոսություն սկսել նախատեսվող իրավական խորհրդատվության ծրագրի իրականացման ինստիտուցիոնալ, կազմակերպչական ու կադրային նախադրյալների և ռեսուրսների վերաբերյալ և կազմել օրենսդրական այն թեմաների ցանկը, որոնց պարագայում հայկական կողմն առաջնահերթ անհրաժեշտություն ուներ:

Կառավարության ներկայացուցիչների հետ քննարկումների արդյունքում ողջունվեց տնտեսական իրավունքի հիմունքների բարեփոխման ծրագիրը և որպես հայկական կողմի ինստիտուցիոնալ գործընկեր նշվեց Էկոնոմիկայի նախարարությունը՝ ի դեմս Կառավարման և տնտեսական բարեփոխումների ինստիտուտի տնօրեն, տնտեսագետ Արա Դարբինյանի, իսկ իրավական աշխատանքային մակարդակում պրոֆեսոր Նազարյանը և նրա հիմնադրած «Իրավական բարեփոխումների կենտրոնը» պետք է զբաղվեին ծրագրի իրականացման հարցերով:

ԳՏՀԸ-ի՝ այժմ արդեն մեկնարկող իրավական խորհրդատվության ծրագրում արտաքուստ ընդամենը օժանդակ տեխնիկական, բայց փաստացի ինտելեկտուալ առումով հիմնական և առանցքային դեր խաղաց Երևանի պետական համալսարանի ռոմանագերմանական լեզուների և գրականության ֆակուլտետի գերմաներենի դասախոս Լևոն Սարգսյանը: Կարելի է միայն երջանիկ դեպք համարել այն հանգամանքը, որ Լևոն Սարգսյանը՝ որպես թարգմանիչ, ընդգրկվեց ծրագրի աշխատանքներում, քանի որ ծրագրի շրջանակներում գործածվող երեք լեզուների՝ գերմաներենի, ռուսերենի և, իհարկե, հայերենի, հանձարեղության աստիճանի հասնող իմացության և շուտով այդ լեզուների նաև իրավաբանական մասնագիտական եզրույթների տիրապետման շնորհիվ նա գերմանական ու հայկական կողմերի միջև անխափան հաղորդակցություն ապահովեց: Ծրագրի շրջանակներում անցկացված բոլոր քննարկումները, կարդացված զեկույցները, պատրաստված ու մեկնաբանված փորձագիտական կարծիքները և գրված մյուս տեքստերը նախ բառացիորեն անցնում էին Լևոն Սարգսյանի գլխի միջով: Որպես կանոն՝ նա ծրագրի ժամանակացույցով նախատեսված օրերին Հայաստանում կամ Գերմանիայում ժամեր շարունակ համաժամանակյա թարգմանություն էր անում, այսինքն՝ առանց ժամանակի կորստի: Լևոն Սարգսյանը գործնականում առանց ընդհատումների ծառայել է ծրագրին մինչև դրա ավարտը՝ քառորդ դար, չնվազող արդյունավետությամբ ու մասնագիտական բարձր վարպետությամբ: Առանց նրա իրավական խորհրդատվության՝ ծրագիրն անգամ մոտավորապես չէր ունենա այն հաջողությունը, որի մասին հավաստում էր հայկական կողմը:

1990-ականների կեսերին, երբ սկսվեց ծրագիրը, Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիական, տնտեսական ու դա-

տավարական իրավունքում մեծ բացեր կային: Քանի որ պրոֆեսոր Նազարյանը մինչ այդ պայմանավորվել էր ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (Դեյվիդ Բրոնհեյմ) ֆինանսավորմամբ գործող Նիդերլանդների իրավական խորհրդատվության կենտրոնի (Լեյդեն) պրոֆեսոր Սնիյդերսի հետ համատեղ մշակել Հայաստանի Հանրապետության քաղաքացիական նոր օրենսգիրք, որոշվեց զուգահեռաբար օրենքների նախագծեր մշակել դատավարման ու տնտեսության համար կարևոր վարույթային թեմաների, ինչպես նաև արդարադատություն իրականացնող հաստատությունների վերաբերյալ: Դա պայմանավորված էր այն կրկնակի նկատառմամբ, որ արդարադատություն իրականացնող հաստատությունները հետկոմունիստական իրավական համակարգի ամենաթույլ օղակներից էին և որ նույնիսկ բարձր զարգացած նյութական տնտեսական իրավունքը մեռած տառ կմնա առանց դրա կիրարկումն ապահովող արդյունավետ վարույթների ու հաստատությունների:

Քանի որ Հայաստանի Սահմանադրությամբ նախատեսվում էր ստեղծել հատուկ տնտեսական դատարաններ, այսինքն՝ առևտրային արդարադատության պես մի բան, որպես վարչական մարմին նախագծված խորհրդային «պետական արբիտրաժի» փոխարեն պայմանավորվածություն ձեռք բերվեց, որպեսզի նախ և առաջ տնտեսական դատարանների մասին օրենքների, տնտեսական դատավարության օրենսգրքի, միջնորդ դատարանների մասին օրենքի և արբիտրաժային օրենսգրքի նախագծեր մշակվեն:

Բացի դրանից՝ նախատեսվում էր ստեղծել շուկայական տնտեսության գործունակության համար էական նշանակություն ունեցող մի շարք այլ օրենքներ՝ իրավաբանական անձանց և հատկապես ընկերությունների գրանցման մասին, նոտարական

համակարգի մասին, առևտրաարդյունաբերական պալատների մասին և հողային ռեգիստրի մասին, ինչպես նաև սնանկության կամ անվճարունակության իրավունքի մասին օրենքների նախագծեր:

Մեթոդաբանական տեսանկյունից երկու կողմերն ի սկզբանե լիովին միակարծիք էին այն սկզբունքի հարցում, որ «հայերն իրենք պետք է գրեն իրենց օրենքները» և, ի վերջո, միայնակ կրեն արդյունքի համար պատասխանատվությունը: Գերմանական կողմն իր խնդիրը տեսնում էր օրենքների նախագծի վրա աշխատանքները գրավոր եզրակացություններով և տեքստի վերաբերյալ բանավոր խորհրդակցություններով աստիճանաբար ուղեկցելու մեջ՝ սկսած օրենքի հայեցակարգից, առաջին և երկրորդ նախագծով մինչև օրենքի վերջնական տարբերակը:

Այդ մոտեցումն անբացառ կերպով պահպանվել է բոլոր նախագծերի վրա աշխատելիս և երկու կողմերի կարծիքով՝ իրեն լավագույնս արդարացրել: Այսպես, 1996 թվականին՝ ծրագրի առաջին տարում, գրավոր եզրակացությունների և աշխատանքային հանդիպումների խիտ հերթագայության պայմաններում մեծ ինտենսիվությամբ և արագությամբ մշակվեց տնտեսական դատավարության օրենսգրքի նախագիծը:

Այնուամենայնիվ, քաղաքացիական օրենսգրքի վրա հոլանդացի գործընկերների հետ աշխատանքի արագ առաջընթացը պարզ դարձրեց, որ դա կասկածելի հաջողություն էր, քանի որ հայ գործընկերները գիտակցեցին այն, ինչը կանխատեսել էր գերմանական կողմը, որ բացակայում է քաղաքացիական օրենսգրքի անփոխարինելի լրացումը՝ ժամանակակից քաղաքացիական դատավարության օրենսգիրքը: Լուծումն արագ գտնվեց. 1996 թ. վերջին որոշվեց տնտեսական դատավարության օրենսգրքի նախագիծը վերափոխել ընդհանուր, քաղաքացիաիրավական և

տնտեսաիրավական վեճերի համար հավասարապես կիրառելի քաղաքացիական դատավարության օրենսգրքի: Թեմաների մոտիկության պատճառով դա հաջողվեց արագ անել:

Մյուս կողմից՝ (առանձին) տնտեսական արդարադատության մասին օրենքի նախագիծը պահպանվեց, քանի որ հնարավոր չէր շրջանցել Սահմանադրության համապատասխան պահանջը:

1996 թվականին ձեռնարկված օրենսդրական թեմաները պետք էր ավարտին հասցնել 1997 թվականին, քանի որ 1995 թվականի հուլիսի 5-ի Սահմանադրությունն իր անցումային դրույթներով սահմանում էր, որ Սահմանադրության երրորդ տարեդարձին, այսինքն՝ 1998 թվականի հուլիսի 5-ին, բոլոր դատավորները պետք է նշանակված լինեին Հայաստանի նախագահի կողմից: Քանի որ արդարադատական օրենքները ֆունկցիոնալ միասնություն էին կազմում և այդ պատճառով նաև պետք է միասին ընդունվեին խորհրդարանի կողմից, ապա անհրաժեշտություն առաջացավ ոչ միայն դատարանակազմության մասին օրենքը, այլ նաև դատավարական օրենսգրքերն ավարտել մինչև 1997 թվականի վերջը՝ փաթեթը մինչև վերջնաժամկետը ժամանակին ու հաջողությամբ խորհրդարանական արգելքներով անցկացնելու համար: Այսպիսով՝ 1997 թվականին ծրագրի օրակարգում ընդգրկված էին հետևյալ հինգ օրենքների նախագծերը.

1. Քաղաքացիական դատավարության օրենսգիրք,
2. Տնտեսական դատարանների մասին օրենք,
3. Միջնորդ դատարանի մասին օրենք և միջնորդ դատավարության օրենսգիրք,
4. Դատական ակտերի հարկադիր կատարման մասին օրենք,
5. Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության, այսինքն՝ դատական կատարածուների գերատեսչության մասին օրենք:

Կարիք չկա շեշտելու, որ այս ծրագիրը երկու կողմերի ծրագրային գործընկերների աշխատունակությունը հասցրել էր առավելագույնի և բոլոր մասնակիցներից պահանջում էր առավելագույն կարգապահություն, գործելու պատրաստակամություն ու նաև ձկունություն: Նրանք հաջողությամբ հաղթահարեցին այս մարտահրավերը, քանի որ 1997 թվականի վերջին բոլոր նախագծերը ներկայացվել էին կառավարություն՝ որոշում կայացնելու համար պատրաստ վիճակում: Դրանք կառավարության կողմից կարող էին հաստատվել և ներկայացվել խորհրդարան:

Ելնելով ավելի հեռուն գնացող խորհրդատվական պլաններից՝ ծրագրային գործընկերները 1997 թվականին սկսեցին մշակել նաև Առևտրաարդյունաբերական պալատների մասին օրենքի նախագծի հայեցակարգը և բացի դրանից՝ մասնագիտական հանդիպումների ժամանակ հայեցակարգային նախնական քննարկումներ սկսել Նոտարության մասին և դրա հետ սերտորեն կապված Հոդային ռեգիստրի մասին օրենքների վերաբերյալ: Դրանք պրակտիկային սերտորեն առնչվող թեմաներ էին, որոնք այդ պատճառով կազմում էին Հեսսենի համապատասխան հաստատություններ՝ ծրագրի հայաստանյան գործընկերների կատարած տեղեկատվական այցելությունների առանցքը:

1997 թվականը ծրագրի առաջին փուլում առանցքային տարի էր նաև այն պատճառով, որ ինստիտուցիոնալ գործընկերոջ կողմում կարևոր փոփոխություն տեղի ունեցավ: Կոռուպցիոն դեպքերի պատճառով Էկոնոմիկայի նախարարությունը լուծարվեց, և նրա գործառույթները ստանձնեց Ֆինանսների նախարարությունը: Ծրագրի նախորդ գործընկեր Արա Դարբինյանը փախավ Մոսկվա, իսկ Ֆինանսների նախարարությունը հետաքրքրություն չուցաբերեց նախագծի նկատմամբ: Այս իրավիճակում պրոֆեսոր Նազարյանը դարձավ ծրագրի ամենակարևոր գործընկերը: 1996

թվականին նա ստանձնել էր խորհրդարանի («Ազգային ժողով») իրավաբանական ծառայության ղեկավարությունը և իր իրավաբանական խորհրդատվության գրասենյակի աշխատակիցներին տեղավորել իրավաբանական բաժնում: Ծրագրի համար միանգամայն շահեկան էր, որ այս կադրային և ինստիտուցիոնալ փոփոխությունների շնորհիվ մոտեցել էր խորհրդարանին:

Գործունակ շուկայական տնտեսության համար հատկապես կարևոր ինստիտուցիոնալ և պրոցեսուալ-իրավական օրենքների նախագծերի փաթեթն ավարտելուց հետո գործընկերները 1998 թվականին պայմանավորվեցին փոխել ծրագրի իրավաբանական շեշտադրումը, այն է՝ այլևս ոչ թե զբաղվել օրենքների դրույթների վրա կենտրոնացած աշխատանքով, այլ անցնել պրակտիկային կողմնորոշված խորհրդատվական գործունեության, մասնավորապես զբաղվել իրավաբանական ուսուցման ու վերապատրաստման հարցերով և գործնական միջոցառումներով աջակցել արդարատություն իրականացնող հաստատությունների աշխատանքին: Դրան զուգահեռ պետք է շարունակվեր հրատապ օրենսդրական նախագծերի խորհրդատվական աջակցությունը՝ ըստ հայաստանյան ծրագրային գործընկերների ցանկությունների:

Հայաստանում ծրագրի շրջանակում ինտենսիվ աշխատանքի անցած երկու տարիների ընթացքում գերմանացի խորհրդատուների ձեռք բերած փորձը 1997 թ. հոկտեմբերին Վրաստան կատարած կարճատև աշխատանքային այցի ժամանակ համադրվեց ԳՏՀԸ-ի կողմից այնտեղ զուգահեռ իրականացվող, 1992 թվականից պրոֆեսոր Քնիփերի և նրա վրացի գործընկերոկտոր Լադո Ճանտուրիայի կողմից ղեկավարվող իրավական խորհրդատվության ծրագրի շրջանակներում ձեռք բերված փորձի հետ և ենթարկվեց քննական վերանայման: Վրացական ծրագրի հետ համեմատությունը հանգեցրեց այն կարևոր հանգամանքի

գիտակցմանը, որ ծրագրի աշխատանքը Հայաստանում պետք է դնել ավելի լայն ինստիտուցիոնալ ու կադրային հիմքերի վրա, խնդիր, որը Վրաստանի գործընկերներն օրինակելի կերպով լուծել էին ի նպաստ ծրագրի:

Բարեբախտաբար, 1998 թվականին երևան եկան նաև Հայաստանում խնդիրը լուծելու համար հանգամանքներ, քանի որ հայաստանյան ծրագրի հիմնական թույլ կողմը՝ նրա նեղ ինստիտուցիոնալ բազան, հնարավոր եղավ շտկել: Ֆինանսների նախարարության փոխարեն կառավարության կողմից նոր ինստիտուցիոնալ գործընկեր դարձավ արդարադատության նախարարությունը, որն իրականում սկզբից ևեթ պետք է լիներ ծրագրի «ի ծնե» գործընկերը: Այն ղեկավարում էր Դավիթ Հարությունյանը՝ գործույնյա, ծրագրով խիստ շահագրգռված և իրավաբանորեն փորձառու, շատ ինքնավստահ, հաստատամիտ մի անձնավորություն, որն այսուհետ հայ-գերմանական ծրագրային հարաբերություններում թեև տարբեր պաշտոններում, բայց մշտապես պետք է խաղար կարևոր դեր: 1998 թվականի օգոստոսին արդարադատության նախարարի՝ Գերմանիա կատարած աշխատանքային այցով (Ֆրանկֆուրտ, Վիսբադեն, Բոնն) ինստիտուցիոնալ փոփոխությունը ստացավ արարողակարգային հաստատում:

Նույնքան կարևոր էր նաև արդարադատության համակարգի բարձրագույն օղակում տեղի ունեցած փոփոխությունը: «Տնտեսական դատարանների մասին» օրենքի հիման վրա, Սահմանադրությանը ձգբոստորեն համապատասխան, 1998 թ. հուլիսին խորհրդային դարաշրջանից ժառանգված Գերագույն դատարանի փոխարեն ստեղծվեց Վճռաբեկ դատարան՝ 13 դատավորի նշանակմամբ: Դատարանի նախագահ դարձավ քրեական գործերով դատավոր դոկտոր Հենրիկ Դանիելյանը, որը նախկինում եղել էր շրջանային դատարանի ղեկավար, իսկ նախագծի համար

հատկապես կարևոր՝ քաղաքացիական և տնտեսական գործերի պալատի նախագահ դարձավ դոկտոր Արման Մկրտումյանը, որը, որպես Ազգային ժողովի իրավաբանական ծառայությունում պրոֆեսոր Նազարյանի տեղակալ, շատ սերտորեն կապված էր ԳՏՀԸ-ի ծրագրի հետ: Վճռաբեկ դատարանն այդպիսով դարձավ ԳՏՀԸ-ի ծրագրի փաստացի երրորդ գործընկերը: Բացի դրանից՝ համագործակցության մեջ ընդգրկվեցին նաև հանրապետության երկու վերաքննիչ դատարանները՝ տնտեսական վերաքննիչ դատարանը (նախագահ՝ Մանուկյան) և քաղաքացիական վերաքննիչ դատարանը (նախագահ՝ Կատվալյան):

Արդյունքում 1998 թվականի աշնանից ծրագիրն ընթացավ սահմանադրական բոլոր երեք իշխանությունների հետ համագործակցությամբ՝ օրենսդիր իշխանության հետ՝ խորհրդարանի իրավաբանական ծառայության միջոցով, գործադիր իշխանության հետ՝ արդարադատության նախարարության միջոցով, և դատական իշխանության հետ՝ Վճռաբեկ դատարանի ղեկավար օղակի և Վերաքննիչ դատարանների միջոցով:

Գերմանիայում և Հեսսենում ևս ծրագրի աշխատանքների ինստիտուցիոնալ հիմքերը շարունակաբար ընդլայնվեցին: Արդարադատության նախարարությանը (դոկտոր Շուլթցե, դոկտոր Հոֆման, դոկտոր Շրայբեր) ավելացան Մայնի Ֆրանկֆուրտում գտնվող Գերագույն երկրամասային դատարանը (նախագահ՝ Բրիգիթե Թիլման, դատավոր՝ Շտյորմեր, նախագահող դատավոր՝ դոկտոր Ռոթվայլեր), Լիմբուրգի երկրամասային դատարանը (նախագահ՝ Ռոթվայլեր, 1998 թվականից) և Լիմբուրգի ընդհանուր իրավասության դատարանը (նախագահ՝ Գեմեր): Հազարամյակի վերջից, երբ իրավական խորհրդատվությունը ընդլայնվեց՝ ներառելով Հայաստանի վարչական իրավունքը, ծրագրի շրջանակներում ընդգրկվեցին Հեսսենի գերագույն վար-

չական դատարանի նախագահ Վոլֆգանգ Ռայմերսը (Քասել) և պրոֆեսոր, դոկտոր Ռյուդիգեր Ռուբելը (Գիսենի համալսարան, Լայպցիգի դաշնային վարչական դատարանի նախագահող դատավոր):

Քանի որ իրավական խորհրդատվության ծրագիրն ընդամենը մի քանի տարվա ընթացքում շարունակ ավելի էր ընդլայնվել, անհրաժեշտություն առաջացավ հեղինակին և Հեսսենի արդարադատության նախարարությանը ազատելու ծրագրի կազմակերպման և հայ գործընկերների հետ նախատեսված ու համաձայնեցված միջոցառումների իրականացման պատասխանատվության բեռից: Այդ նպատակով 1999 թվականին Երևանում ստեղծվեց ծրագրի գրասենյակ: Գրասենյակը ղեկավարելու համար հնարավոր եղավ ներգրավել պարոն Վարդան Պողոսյանին: 1999 թ. նոյեմբերի 1-ից նա ստանձնեց գրասենյակի ղեկավարումը:

Պարոն Պողոսյանը Մոսկվայի միջազգային հարաբերությունների պետական ինստիտուտն ավարտելուց հետո որպես պրակտիկանտ աշխատում էր Բոննում՝ Խորհրդային Միության դեսպանությունում, երբ ԽՍՀՄ-ը փլուզվեց: Այնուհետև նա Կոնրադ Ադենաուեր հիմնադրամի կրթաթոշակով Բոննում ուսանել է քաղաքագիտություն: Ուսումն ավարտել է Հայաստանի սահմանադրության ստեղծման վերաբերյալ մագիստրոսական թեզով՝ նախկին Դաշնային Հանրապետության ամենանշանավոր քաղաքագետներից մեկի՝ Հանս Պետեր Շվարցի ղեկավարության ներքո:⁸ 1998 թվականին պարոն Պողոսյանն իր ընտանիքով Բոննից վերադարձել էր Հայաստան և պրոֆեսոր Նազարյանի կողմից աշխատանքի ընդունվել Ազգային ժողովի իրավաբանական ծառայությունում:

⁸ Տե՛ս Ծանոթ. 2:

Տասնամյակներ շարունակ պարոն Պողոսյանը Հայաստանի Հանրապետության քաղաքագիտության և համեմատական սահմանադրական իրավունքի ամենափայլուն ուղեղներից մեկն է: Նրա ղեկավարությամբ ԳՏՀԸ-ի իրավական խորհրդատվության ծրագիրը՝ վերանվանվելով «Իրավական մերձեցում եվրոպական չափանիշներին, Հարավային Կովկաս», հսկայական որակական թռիչք է ունեցել: Հայաստանում գրասենյակը մինչև 2020 թվականի մարտի 31-ին փակվելը մեծ հարգանք էր վայելում քաղաքական սպեկտրի բոլոր կողմերում: Այն ակնառու հեղինակություն էր ձեռք բերել իրավական ու սահմանադրական բոլոր հարցերում, և դրանում քիչ չէր պարոն Պողոսյանի դերը:

ԳՏՀԸ-ի իրավական խորհրդատվության երևանյան գրասենյակում երկու քարտուղարուհիներից և մեկ վարորդից բացի՝ ընթացիկ ծրագրերի սպասարկման նպատակով ներգրավված էին երկու-երեք բարձր որակավորում ունեցող մասնագետ-իրավաբաններ:

Ծրագրի վերապրոֆիլավորումը գործնական ուղղվածություն ունեցող աջակցության միջոցառումների, մասնավորապես իրավաբանական վերապատրաստման սեմինարների կազմակերպման (նախարարական խորհրդական դոկտոր Հոֆման, Հեսսենի արդարադատության նախարարություն, Բարձրագույն երկրամասային դատարանի դատավոր Շտրյոմեր) ժամանակացույցին համապատասխան սկսվեց 1998 թ. հունվարին, բայց Ղարաբաղի հարցում հակասությունների պատճառով նախագահ Տեր-Պետրոսյանի հարկադիր հրաժարականի (1998 թ. փետրվար) հետևանքով խաթարվեց, մի քանի ամիս տևողությամբ ընդհանրապես խաթարվեց նաև ծրագրի իրականացումը: Չնայած ներքաղաքական սուր կոնֆլիկտներին և մեծ կադրային փոփոխություններին, մասնավորապես վարչապետ Ռոբերտ Քոչարյանի՝

նախագահ և պետության ղեկավար դառնալուն (այս մասին ավելի մանրամասն տե՛ս ստորև 6–րդ կետը)՝ ծրագրի շրջանակներում մշակված օրինագծերը նախատեսված ժամանակացույցին համապատասխան և բովանդակային առումով հիմնականում անփոփոխ հաղթահարեցին խորհրդարանական խոչընդոտները: Այս փաստը կարելի է անուղղակիորեն ապացույց դիտարկել, որ ծրագրի շրջանակում մշակված օրինագծերի իրավական և իրավաքաղաքական որակն ըստ էության համոզիչ է եղել քաղաքական գործիչների՝ թե՛ կառավարության և թե՛ Ազգային ժողովի անդամների համար:

Ուսուցման և վերապատրաստման միջոցառումները 1998 թվականին վերսկսվեցին և 1999 թվականին շարունակվեցին հանրապետության դատավորների միության ու նրա նախագահ, Սահմանադրական դատարանի դատավոր Ալվինա Գյուլումյանի հետ համատեղ դատավորների համար կազմակերպված սեմինարներով՝ համաձայն ծրագրի հիմնական ուղղությունների:

4. Խորհրդատվական գործունեության ընդլայնումը հանրային իրավունքի վրա (2000 թվականից սկսած)

Արդարադատության նախարար Հարությունյանի հետ իրավական խորհրդատվության ծրագիրը հանրային իրավունքի և մասնավորապես վարչական իրավունքի վրա ընդլայնելու վերաբերյալ նախնական քննարկումներից հետո՝ 2000 թվականին, արդարադատության նախարարությունում ձևավորվեց ընդհանուր վարչական իրավունքի բարեփոխման հարցերով հայ–գերմանական խառը աշխատանքային խումբ, որին հանձնարարվեց մշակել Վարչական վարույթի մասին օրենքի առաջին նախագիծը՝ քաղաքացիների և վարչական մարմինների միջև շփումները իրավական պետության սկզբունքներին համապատասխան

կարգավորելու նպատակով, և երկրորդ՝ Վարչական դատավարության օրենսգրքի նախագիծ: Աշխատանքային խմբի կորիզը բաղկացած էր վեց հոգուց և համալրված էր հավասարության սկզբունքով (Գ. Մուրադյան, Վ. Պողոսյան, Հ. Թովմասյան / Օ. Լուխթերիանդթ, Վ. Ռայմերս, Ռ. Ռուբել):

Աշխատանքային խմբի կողմից մշակվելիք օրենքները Հայաստանում նախօրինակներ չունեին, քանի որ ԽՍՀՄ-ում ընդհանուր վարչական իրավունքի կարգավորում չի եղել՝ չխոսելով իրավապետական կարգավորման մասին: Այդ պատճառով աշխատանքային խումբը մտավ լիովին խոպան տարածք: Այն հաջողությամբ կատարեց իր խնդիրը. Վարչարարության և վարչական վարույթի մասին օրենքը ուժի մեջ մտավ 2004 թվականի մարտին: Սերտորեն կապված լինելով Սահմանադրության հետ՝ այն ունի վարչական մարմինների գործողությունների համար հիմնական օրենքի բնույթ, առաջին անգամ կարգավորում է դրանց իրավապետական սկզբունքները և վարչական վարույթի բոլոր ձևերը, ներառյալ բողոքարկման վարույթը և վարչական ակտերի հարկադիր կատարումը:

2007 թ. դեկտեմբերին ընդունված «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի մասին» օրենքը ամենայն մանրամասնությամբ կարգավորում է բոլոր ֆիզիկական և իրավաբանական անձանց վերապահված լիազորությունը՝ դատարանում բողոքարկելու վարչական մարմինների ակտերը՝ իրենց իրավունքներին դրանց կողմից ապօրինի միջամտության հիմքով, և նման հայցերից բխող գործընթացը: Դատավարական օրենսգիրքը կարգավորում է նաև նորմատիվ իրավական ակտերի դեմ բողոքները, որոնք (ինչպես, օրինակ, հրամանագրերը) իրենց աստիճանով ցածր են խորհրդարանի կողմից ընդունված օրենքներից, ինչպես նաև այլ հատուկ վարույթներ, ինչպիսիք են

ընտրական իրավունքին վերաբերող հայցերը, հավաքների ազատության սահմանափակումների դեմ հայցերը և նոտարների գործողությունների դեմ հայցերը:

Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր վարչական իրավունքի՝ երկու օրենքներով իրականացված կողիֆիկացիան համապատասխանում է իրավապետական ամենաբարձր չափանիշներին: Առաջին ատյանի վարչական դատարանից՝ որպես առաջնային դատարան, վարչական գործերով վերաքննիչ դատարանից՝ որպես երկրորդ ատյան, և վճռաբեկ դատարանի վարչական գործերի պալատից՝ որպես երրորդ և բարձրագույն ատյան, բաղկացած եռաստիճան հատուկ վարչական արդարադատության ստեղծման հետ մեկտեղ իրավապետական վարչական իրավունքի հիմքերի ստեղծումը ԳՏՀՀ/ԳՄՀՀ-ի իրավական խորհրդատվության ծրագրի ամենակարևոր ձեռքբերումներից մեկն է, եթե ոչ ամենակարևորը Հայաստանի Հանրապետությունում:

Ընդհանուր վարչական իրավունքի բարեփոխումը չի դադարել այս ձեռքբերումներով: Վարչական մարմինների և դատարանների կողմից նոր կարգավորումների իրավապետական կիրառման խթանման ու ամրապնդման հայեցակարգին համապատասխան, ծրագիրը դեռևս ընդհանուր վարչական իրավունքն ուժի մեջ մտնելուց առաջ սկսել է նախ դատավորների թեկնածուների, այնուհետև վարչական դատավոր նշանակված անձանց համար կազմակերպված սեմինարներում հայաստանյան իրավունքի պրակտիկայից վերցված դեպքերի հիման վրա ուսուցանել նոր վարչական իրավունքի և վարչական դատավարական իրավունքի կիրառումն ու մեկնաբանությունը:

Գերմանացի իրավախորհրդատուների, մասնավորապես Հեսսենի գերագույն վարչական դատարանի նախագահ Ռայմերսի

և պրոֆեսոր Ռուբելի, ինչպես նաև հեղինակի կողմից անցկացված թե՛ Գերմանիայում, թե՛ Հայաստանում կազմակերպված սեմինարներն իրականացվել են տարին մի քանի անգամ՝ ավելի քան մեկ տասնամյակ շարունակ: Հայկական կողմից վերապատրաստման սեմինարների կազմակերպման հիմնական գործընկերներ են եղել, որպես կանոն, վարչական գործերով վերաքննիչ դատարանն իր մեծապես նվիրված և մասնագիտորեն աչքի ընկնող նախագահ Տիգրան Մուկուչյանի ղեկավարությամբ, ինչպես նաև վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի նախագահ Երվանդ Խունդկարյանը, որը հետազայում նշանակվեց Սահմանադրական դատարանի դատավոր:

Ելնելով Հայաստանում վարչական դատարանների ինստիտուցիոնալացումից ոչ շատ անց տարբեր լուրջ կողմերից հրապարակայնորեն հնչած կարծիքից, թե վարչական դատավորներն ամենաքիչն են կոռումպացված, կարելի է նաև այս առումով խոսել իրավական խորհրդատվության ծրագրի հաջողության մասին:

Ոչ միայն դատավորների, այլև հատկապես Հայաստանի Հանրապետության իրավաբանական ֆակուլտետների ուսանողների շրջանում վարչական իրավունքի և դրա մեթոդաբանության իմացության մակարդակի բարձրացմանն ուղղված մեկ այլ միջոցառում էր «Հայաստանի Հանրապետության ընդհանուր վարչական իրավունք» ձեռնարկի ստեղծումը: Հեղինակները արդարադատության նախարարության վարչական իրավունքի բարեփոխումների աշխատանքային խմբի վեց անդամներն են: Այն բանից հետո, երբ 2008 թվականին ուժի մեջ մտան Վարչարարության մասին օրենքը և Վարչական դատավարության օրենսգիրքը, աշխատանքային խմբի գերմանական կողմը գրքույկի տեսքով սկզբում կազմեց ընդհանուր վարչական իրավունքի վերաբերյալ «Ուղեցույց», այնուհետև հրատարակվեց դասագիրք, որի գերմանացի

հեղինակների (Լուիսթերհանդթ, Ռայմերս, Ռուբել) կողմից գրված բաժինները երկար տարիներ խորհրդատվական ծրագրի համար անխոնջ թարգմանիչ Լևոն Սարգսյանը թարգմանել է հայերեն: Այն միակ դասագիրքն է, որը գիտական մակարդակով ներկայացնում է Հայաստանի գործող ընդհանուր վարչական իրավունքը:

Պրակտիկային կողմնորոշված ծրագրային միջոցառումներին զուգահեռ, ընդհանուր վարչական իրավունքի բարեփոխման ավարտից հետո, այսինքն՝ մոտավորապես 2010 թվականից, անընդհատ շարունակվել է օրենսդրական նախագծերի և օրենքների փոփոխությունների մասով խորհրդատվությունը: Փոփոխության ենթակա օրենքները հիմնականում պետական և վարչական իրավունքի ոլորտից էին, առանց գերմանական խորհրդատվության՝ մշակվել էին հազարամյակի ավարտից անմիջապես հետո: Պարզվել էր, որ դրանք նաև հանրապետությունում արագ իրականացված «հետխորհրդային» հասարակական փոփոխությունների պատճառով անբավարար էին: Խորհրդատվության անհրաժեշտության աճի մեկ այլ պատճառ էր նաև այն հանգամանքը, որ 2015 թվականի դեկտեմբերին վերանայված Սահմանադրության ուժի մեջ մտնելուց հետո պետական իրավունքի շատ օրենքներ պետք է համապատասխանեցվեին սահմանադրական փոփոխություններին: Եվրոպական միության հետ գործընկերության և համագործակցության համաձայնագրի կնքումից հետո (2001 թ.) պետք էր հաշվի առնել եվրոպական իրավունքի աճող նշանակությունը Հայաստանի իրավական համակարգի համար:

Խոսքը հստակ վերաբերում էր հավաքների և ցույցերի իրավունքի և դրա հետ սերտորեն կապված՝ «Ոստիկանության մասին» օրենքի (2011 թ.), «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի (2015–2017 թթ.), «Քաղաքացիների առաջարկությունները, դիմումները և բողոքները քննարկելու կարգի մասին» օրեն-

քի (2016 թ.), «Կուսակցությունների մասին» օրենքի (2016 թ.), «Սահմանադրական դատարանի մասին» օրենքի (2016 թ.), «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքի (2016 թ.), «Իրավական ակտերի մասին» օրենքի (2016–2017 թթ.), «Հանրաքվեի մասին» օրենքի (2017 թ.), «Խորհրդարանական քննիչ հանձնաժողովների մասին» օրենքի (2017 թ.) և «Ազգային ժողովի կանոնակարգի մասին» օրենքի (2017 թ.) համար խորհրդատվությանը:

Գերմանական կողմից խորհրդատվությունը սովորաբար միայնակ, շնորհիվ իր կարողությունների՝ որպես պետական իրավունքի դասախոս, տրամադրում էր հեղինակը, ընդ որում, հատկապես խորհրդարանաիրավական նյութի պարագայում, ինտենսիվ կերպով համագործակցում էր պարոն Պողոսյանի հետ, որը համապատասխան գերմանական մասնագիտական գրականության և Դաշնության Սահմանադրական դատարանի նախադեպային իրավունքի վերաբերյալ իր իմացության պատճառով մասնագիտական առումով իրականում պիտի դասվեր գերմանական կողմում:

Հայկական կողմից պաշտոնական գործընկերներն էին պետաիրավական հարցերում Ազգային ժողովի իրավաբանական ծառայությունը, Սահմանադրական դատարանը՝ դատարանի նախագահ Գազիկ Հարությունյանի ղեկավարության ներքո, և արդարադատության նախարարությունը, որն այն ժամանակ ղեկավարում էին նախարար Հրայր Թովմասյանը և նրա տեղակալ Գրիգոր Մուրադյանը: Այս երկու պարոնայք հանրային իրավունքի և միջազգային իրավունքի կարկառուն մասնագետներ էին: Պարոն Մուրադյանը մագիստրոսի ակադեմիական կոչում ստացել էր Հայդելբերգի Մաքս Պլանկի անվան հանրային իրավունքի և միջազգային իրավունքի ինստիտուտում՝ տնօրեն պրոֆեսոր Յ. Ա.

Ֆրովայնի ղեկավարության ներքո: Թե՛ պարոն Թովմասյանը և թե՛ պարոն Մուրադյանը 1999 թվականից հետո երկար տարիներ աշխատել են ԳՏՀՀ-ի իրավախորհրդատվական գրասենյակում՝ նախքան հանրապետության իրավաբանական հաստատությունների ղեկավար պաշտոնների անցնելը:

Հեղինակի կողմից այդ տարիներին իրականացված իրավական խորհրդատվության հիմնական թեմաներից հատկապես ուշագրավ էր 1985 թվականից, այսինքն՝ դեռևս Խորհրդային Հայաստանի ժամանակներից եկող «Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրքը (կողեքս)»: Թեև ընդունվելուց հետո այն մի քանի անգամ փոփոխվել էր, սակայն 1995 թվականի նոր, իրավապետական սահմանադրության համաձայն՝ երբեք չէր ենթարկվել հիմնարար բարեփոխումների: Այժմ «կողեքսը» պետք է փոխարինվեր նոր, իրավապետական չափանիշներին համապատասխանող օրենսգրքով: Նյութը համապատասխանում էր վարչական իրավախախտումների վերաբերյալ գերմանական օրենսդրությանը և, ըստ իր իրավաբանական յուրահատկության, քրեական ու վարչական իրավունքի խառնուրդ էր: Խորհրդային տարիներին օրենսգիրքը պարզապես նույնացվել էր վարչական վարույթի օրենսդրության հետ, և գերմանացի իրավախորհրդատուները ընդհանուր վարչական իրավունքը բարեփոխելիս հաճախ ստիպված էին ուղղել հայ քաղաքական գործիչների և մասնագետ գործընկերների այս թյուր տեսակետը:

Հայկական կողմից բարեփոխումների պատասխանատուն արդարադատության նախարարությունն էր: Այդ նպատակով նախարարությունը ստեղծել էր աշխատանքային խումբ՝ փոխնախարար Մուրադյանի ղեկավարությամբ: Աշխատանքային խմբի հետ հեղինակը 2012–2015 թվականներին սիստեմատիկորեն աշխատել է նոր օրենսգրքի նախագծի վրա: Համագործակցության

սկզբում եղել է բարեփոխումների հայեցակարգի մշակումը: Վերջինիս հարցում խումբը կանգնել էր այլընտրանքի առջև՝ ստեղծել կամ վարչական իրավախախտումների ընդհանուր օրենսգիրք, որը կսահմանափակվեր վարույթի վերաբերյալ դրույթներով (ինչպես Գերմանիայում), կամ, ըստ խորհրդային «կոդեքսի» ավանդույթի, մի օրենսգիրք, որը «հատուկ մասով» կողիֆիկացնում էր «վարչական իրավախախտումների» բոլոր փաստակազմերը՝ վարչական իրավունքի բոլոր բնագավառների կտրվածքով:

Սկզբում, բացի հեղինակից, խորհրդատվական աշխատանքին մասնակցում էր նաև Հանովերի համալսարանի դասախոս, քրեական իրավունքի մասնագետ պրոֆեսոր, դոկտոր Հենինգ Ռադկեն: Բայց 1-ին քրեական պալատի դատավորի կարգավիճակով Դաշնային գերագույն դատարան տեղափոխվելու կապակցությամբ նա ժամանակի սղության պատճառով չկարողացավ շարունակել խորհրդատվությունը: Դա շատ ցավալի էր այն պատճառով, որ նյութը մոտ էր քրեական իրավունքի և քրեական դատավարության իրավունքին, իսկ քանի որ հայկական կողմը վճիռ էր կայացրել վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի համապարփակ կարգավորման օգտին՝ ներառելով նաև հատուկ մաս, ապա քրեական իրավունքի մասնագետի մասնակցությունը վարչական իրավախախտումների որոշակի փաստակազմերի մասով խորհրդատվությանը օգտակար կլիներ:

Վարչական իրավախախտումների մասին օրենսդրության բարեփոխումներին խորհրդատվական ծրագրի, ինչպես նաև հեղինակի մասնակցությունն ավարտվեց, երբ արդարադատության նախարար Թովմասյանը նշանակվեց Ազգային ժողովի իրավաբանական ծառայության ղեկավար, իսկ փոխնախարար Մուրադյանը տեղափոխվեց Սահմանադրական դատարանի աշխատակազմ:

Չնայած ղեկավարության կտրուկ փոփոխությանը՝ արդարադատության նախարարությունն, այդուհանդերձ, չկորցրեց իր կարևորությունը ԳՏՀԸ-ի խորհրդատվական ծրագրի համար, քանի որ արդարադատության նախարարությունը մնաց կարևոր գործընկեր պետական իրավունքի տարբեր օրենքներ 2015 թվականին ամբողջությամբ վերանայված սահմանադրությանը համապատասխանեցնելու գործում:

5. Հայաստանի սահմանադրական և վարչական իրավունքի վերաբերյալ «ամառային դպրոցներ» անցկացնելը

Իրավական խորհրդատվության ծրագրի վերջին փուլում «ամառային դպրոցների» իրականացումը դարձավ ծրագրային միջոցառումների ամենակարևոր ձևաչափը: Որպես միջինից բարձր գիտելիքներ ունեցող իրավաբանական ուսանողների համար իրավաբանական վերապատրաստման միջոցառում՝ դրանք շատ արդյունավետ էին: «Ամառային դպրոցները», որոնք անցկացվում էին նաև տարվա մյուս եղանակներին, կազմակերպվել են սահմանադրական իրավունքի և վարչական իրավունքի վերաբերյալ, որոնք ղեկավարում էր Հեսսենի գերագույն վարչական դատարանի նախագահ Ռայմերսը:

Ստորև շարադրվածը սահմանափակվում է սահմանադրական իրավունքի վերաբերյալ Հայաստանում կազմակերպված «ամառային դպրոցներով», որոնք հեղինակը ղեկավարել է 2018–2020 թվականներին: Դրանք թվով հինգն էին, որոնցից վերջինն իրականացվել է 2020 թ. փետրվարին պետական իրավունքի մասնագետ պրոֆեսոր Քրիստիան Հիլգրուբերի (Բոննի համալսարան) հետ համատեղ:

Հիմնարար և մարդու իրավունքների վերաբերյալ 2020 թվականի «ձմեռային դպրոցի» հայեցակարգը, որն այստեղ ընտրվել է որպես օրինակ, բաղկացած էր երկու մասից՝ ներածություն, որը, սահմանադրական-պատմական հետահայաց ակնարկից զատ, կենտրոնացած էր հիմնարար տեսական հարցերի վրա (տերմինաբանություն, հիմնարար իրավունքների գործառույթներ և այլն), և հիմնական մաս, որտեղ թեև մտացածին, բայց կյանքին ու պրակտիկային մոտ իրավական դեպքերի հիման վրա մասնակիցներին հաղորդվում էր հիմնարար և մարդու իրավունքների հարցերով վեճերի լուծման մեթոդաբանությունը:

Իրավական դեպքերը հարմարեցվել էին Հայաստանի Հանրապետության սահմանադրական և իրավական համակարգին և պետք է լուծվեին Հայաստանի Սահմանադրության հիմնարար իրավունքների դրույթներին համապատասխան:

Դեպքերի լուծումները սովորեցնելն ու սիստեմատիկ վարժությունները նախ իրականացվում էին երկու դասախոսների հրահանգավորմամբ ու ղեկավարությամբ՝ համաձայն գերմանական համալսարաններում դասավանդվող հիմնարար իրավունքների՝ վեճերի լուծման համակարգային կառուցվածքի ու սխեմայի, և քայլ առ քայլ՝ դրա համար հարմար դեպքերի հիման վրա, որոնք սկզբում քննարկվում էին լիազումար նիստում: Դեպքերի լուծման մեթոդոլոգիան ու տեխնիկան այնուհետև խորացվում էին փոքր խմբերում: Դասախոսները խմբերում մշակված լուծումային առաջարկները մասնակիցների կողմից ներկայացվելուց անմիջապես հետո ենթարկում էին քննության՝ աշխատանքային խմբի հետ մտնելով ինտենսիվ երկխոսության մեջ, որը շարունակվում էր նաև լիազումար նիստում:

«Ամառային դպրոցների» մինչայժմյա փորձը ցույց է տվել, որ այս մոտեցման պարագայում մասնակիցները դրդվում են նախ

ակտիվորեն մասնակցելու դեպքերի լուծմանը և մշակելու իրավաբանական փաստարկումներ, որոնք ապահովված են սահմանադրական դրույթներով ու այլ իրավական նորմերով, և երկրորդ՝ կիրառելու և վարժվելով սովորելու սահմանադրության մեկնաբանության միջազգայնորեն ընդունված մեթոդները: Այդ մեթոդները, ինչպես պարբերաբար պարզվում էր, մասնակիցներին հայտնի էին միայն մասամբ և այդ դեպքում էլ՝ մակերեսորեն: Նրանց հայտնի չէր և հայտնի չէ սահմանադրական իրավունքում որոշակի վեճերի լուծման մեթոդաբանությունը: Դա պայմանավորված է Հայաստանի Հանրապետությունում բուհական իրավաբանական կրթության շատ ակադեմիական, պրակտիկային քիչ կողմնորոշված ոճով, որը դեռևս մեծապես խորհրդային դասավանդման ավտորիտար ավանդույթների կապանքներում է: Դրա հետևանքով պարադոքսալ կերպով «ամառային դպրոցների» մասնակիցները գրեթե չէին գիտակցում սահմանադրության գերակա գործնական նշանակությունը ժողովրդավարական սահմանադրական և իրավական պետության մեջ: Դա փոխելը «ամառային դպրոցներ» գլխավոր նպատակներից մեկն է:

Արդյունքում 2020 թվականի «ձմեռային դպրոցը» մասնակիցներին տվեց պարադոքսալ կերպով իրենց համար շատ անսովոր, աշխույժ մի պատկեր իրենց իսկ Սահմանադրության հիմնարար և մարդու իրավունքների, միաժամանակ նաև Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի դրույթների վերաբերյալ, որը Եվրոպայի խորհրդում Հայաստանի անդամության պատճառով ուսանողների համար ունի անմիջական իրավական ու գործնական նշանակություն:

Մինչայժմյա «ամառային դպրոցների» փորձը ցույց է տվել, որ դրանք ուսանողներին խիստ մոտիվացնում են՝ խորապես զբաղվելու սեփական երկրի Սահմանադրությամբ և հիմնարար ու մարդու իրավունքներով:

6. Մասնակցություն 2015 թվականի դեկտեմբերի 6-ի Սահմանադրությունն ամբողջովին վերանայելու գործընթացին և դրան տանող ձանապարհը

Յուրատեսակ պարադոքս է, որ ԳՏՀԸ/ԳՄՀԸ-ի⁹ իրավական խորհրդատվության ծրագիրն իր գոյության քառորդ դարում շարունակական զարգացում է ապրել, ընդլայնվել է ինչպես բովանդակության, այնպես էլ հայկական ու գերմանական կողմից ներգրավված մարդկանց ու կառույցների առումով, հասել տեսանելի արդյունքների և ընդհանուր առմամբ, ինչպես այս ակնարկը, թերևս, պետք է բավականաչափ ցույց տար՝ ունեցել է մեծ հաջողություն: Մինչդեռ դրա հետ մեկտեղ Հայաստանի ներքաղաքական զարգացումը շարունակ տուժել է ծանր կոնֆլիկտներից, խոր ձգնաժամերից ու դրամատիկ իրադարձություններից և դրանցից տուժում է մինչ օրս, ամենավերջինը՝ 2020 թվականի աշնանը Ադրբեյջանի դեմ պատերազմում պարտության արդյունքում:

Եթե հարց տանք շարունակ դրսևորվող ձգնաժամային սրացումների խորքային պատճառների մասին, ապա, հետադարձ հայացք գցելով անկախացած Հայաստանի Հանրապետության ամբողջ ներքին զարգացմանը, կարելի է ասել, որ բացի չլուծված դարաբաղյան հակամարտության անկանխատեսելի հետևանքներից ու հսկայական բեռից՝ նկատելի է հիմնական մի պատճառ՝ անհավասարակշռությունը նախագահի իշխանության տակ գտնվող, ժողովրդից կտրված, ինքն իր իսկ մասին հոգ տանող գործադիրի և օրենսդիր մարմնի՝ խորհրդարանի միջև, որի իշխանությունը համարժեքորեն չի արտացոլում երկրի քաղաքացի-

⁹ Զարգացմանն ուղղված օգնության այլ կազմակերպությունների հետ միաձուլվելուց հետո Գերմանիայի տեխնիկական համագործակցության ընկերությունը (ԳՏՀԸ, GTZ) 2011 թվականին վերանվանվել է Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ, GIZ):

ական հասարակության հասունությունն ու ուժը. համարժեքորեն չի արտացոլում այն պատճառով, որ կոմունիստական միակուսակցական պետության երկարատև ամբողջատիրական իշխանությունից հետո չկան փորձառու և լավ կազմակերպված քաղաքական կուսակցություններ, որոնք ի գործու են իրականացնելու հասարակությունից եկող քաղաքական շահերի փոխակերպումը խորհրդարանի:

Համակարգի այս թուլությունն արդեն իսկ հատկանշական է 1995 թվականի հուլիսի 5–ի սահմանադրությանը, որի դրույթները, ինչպես և ԱՊՀ մյուս երկրներում, սպասարկում էին գործող նախագահի անձնական իշխանատենչությունը, և հետին պլան մղում քաղաքական համակարգում խորհրդարանական տարրերն ավելի շատ հաշվի առնելու այն ժամանակ հայ հասարակության մեջ բարձրացված, պոպուլյար պահանջները: Թե որքան հզոր էր նախագահական գործադիր իշխանության նկատմամբ քննադատական վերաբերմունքը, երևաց 1996 թ. սեպտեմբերի 29–ի նախագահական ընտրություններում, երբ Լևոն Տեր–Պետրոսյանին, որպես գործող նախագահի, ընտրությունների առաջին իսկ փուլում անարդարացիորեն հաղթանակ շնորհվեց իր հանրաճանաչ մրցակից Վազգեն Մանուկյանի նկատմամբ: Այդկերպ հնարավոր եղավ խուսափել անհրաժեշտ երկրորդ ընտրական փուլից, որի դեպքում, մեծ հավանականությամբ, նախագահ Տեր–Պետրոսյանը կպարտվեր, քանի որ կոմունիստ ընտրողներն իրենց ձայները կտային Մանուկյանին:¹⁰

¹⁰ Այսուհետ մանրամասն տե՛ս Luchterhandt, Otto: Präsidentialismus in den GUS-Staaten, in: Luchterhandt, Otto (Hrsg.): Neue Regierungssysteme in Osteuropa und der GUS. Probleme der Ausbildung stabiler Machtinstitutionen, հրատարակությունը՝ Օթթո Լուխթերհանդթի, 2–րդ հրատ., Բեռլին 2002, էջ 255–371 (345 հհ.):

1996-ի նախագահական ընտրությունները երկրի ներքաղաքական զարգացման մեջ խոր բեկվածք էին և հետագա ճգնաժամերի արմատը, քանի որ ընտրությունների կեղծված արդյունքների պատճառով Լևոն Տեր-Պետրոսյանը կորցրել էր իր լեգիտիմությունը՝ որպես պետության ղեկավար, և հեղինակությունը՝ որպես նախագահ: Նրա շրջապատի անձանցից ոմանք ևս այն ժամանակ ընդունում էին, որ նրա իշխանությունն այլևս հիմնված է ոչ թե ընտրողների կամքի, այլ գործադիր իշխանության ուժայինների վրա: Հետևանքները երևացին 1997 թվականի աշնանը, երբ Լևոն Տեր-Պետրոսյանը բավականին ընդառաջեց դարաբաղյան հակամարտության առանցքային հարցում Ադրբեյջանի պահանջները: Երբ վարչապետ Ռոբերտ Քոչարյանը և պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանը Ազգային ժողովի ազդեցիկ ուժերի աջակցությամբ հակադրվեցին նախագահին և չցանկացան հրաժարական տալ, Լևոն Տեր-Պետրոսյանին մնում էր ընդամենը, որ ինքը հրաժարական տար (1998 թ. փետրվարի 3):

Ռոբերտ Քոչարյանը դարձավ նախագահի ժամանակավոր պաշտոնակատար, և այժմ կրկնվեց 1996 թվականի նախագահական ընտրությունների սցենարը: Անցկացված նոր ընտրություններում Քոչարյանն անհրաժեշտ բացարձակ մեծամասնությունից շատ քիչ ձայներով՝ համեմատաբար ոչ մեծ տարբերությամբ, առաջին փուլում հաղթեց իր մրցակից, այդ ընթացքում մեծ հարգանք ու ժողովրդականություն ձեռք բերած, հանրապետության նախկին կոմունիստական կուսակցության առաջնորդ Կարեն Դեմիրճյանին, սակայն ընտրությունների 2-րդ փուլում ձայների մոտ 60%-ով հաղթանակը Քոչարյանը տարավ՝ շնորհիվ միայն խորհրդարանում և Կենտրոնական ընտրական հանձնաժողովում պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանի կողմից վե-

րահսկվող ռազմական լոբբիի զանգվածային ընտրակեղծիքների (ինչը ամենքին էր հայտնի):

1999 թվականի խորհրդարանական ընտրությունների նախաշեմին պաշտպանության նախարար Սարգսյանը շրջադարձ կատարեց և միավորվեց Դեմիրճյանի կուսակցության հետ՝ ստեղծելով «Միասնություն» նախընտրական դաշինքը, որը ստացավ խորհրդարանի մանդատների շուրջ 70%-ը: Դեմիրճյանը դարձավ Ազգային ժողովի նախագահ, Վազգեն Սարգսյանը՝ վարչապետ, այդպիսով՝ նախագահ Քոչարյանի տեղակալ: Վերջինիս անկումն այժմ կարծես թե օդում կախված էր: Միաժամանակ նշմարվում էր քաղաքական համակարգի «խորհրդարանականացում»:

Այնուհետև՝ 1999 թվականի հոկտեմբերի 27-ին, տեղի ունեցավ սարսափելի բան. անհայտ անձինք ներխուժեցին խորհրդարանի նիստերի դահլիճ և ի թիվս այլոց գնդակահարեցին խորհրդարանի նախագահ Դեմիրճյանին ու վարչապետ Սարգսյանին: Մահափորձը մի հարվածով ամբողջությամբ փոխեց հանրապետության ներքաղաքական իրավիճակը:¹¹

Հաջորդած իշխանական պայքարում Ռոբերտ Քոչարյանն իր նախագահական իրավասությունների շնորհիվ թեև կարողացավ ինքնահաստատվել երկու սպանված քաղաքական գործիչների կողմնակիցների դեմ, վերականգնել նախագահական գործադիր իշխանության հզորությունը և իշխանական-քաղաքական առումով հետին պլան մղել խորհրդարանը, բայց իր նախագահական վարչակազմը մնաց անկայուն, որովհետև, անկասկած, չունեի ժողովրդավարական լեգիտիմություն: Հասարակության մեջ քաղաքական բազմակարծության բարձր աստիճանը, որն ամրապնդվում էր ուժեղ և ազատորեն լուսաբանող լրատվամիջոցներով,

¹¹ Sanjian Ara: Der 27. Oktober und danach, in: Armenisch-Deutsche Korrespondenz 1999, Պրակ 4, էջ 2-6:

էականորեն նպաստում էր նախագահական վարչակարգի անկայունությանը:

1995 թվականից ի վեր նախագահական կառավարման համակարգի դրսևորած թուլություններից ակնհայտորեն դրված՝ վերստին դրվեց Սահմանադրության հարցը: «Միասնություն» կուսակցությունը հանդես էր գալիս խորհրդարանական սկզբունքի ամրապնդման օգտին, և պարադոքսալ կերպով նախագահ Քոչարյանը նույնպես պահանջում էր Սահմանադրության՝ նույն ուղղությամբ գնացող վերանայում: Ուստիս հետագա ընթացքում նախագահը սահմանադրական փոփոխությունների օրենքի մշակման համար ձևավորեց սահմանադրական հանձնաժողով: Երբ պրոֆեսոր Նազարյանը¹² հրաժարվեց մասնակցելուց այդ ձեռնարկությանը, հանձնաժողովում գլխավոր դերը ստանձնեց Սահմանադրական դատարանի նախագահ Գագիկ Հարությունյանը:

Երբ նախարարների կաբինետը կրկին կայունացավ և հատկապես արդարադատության նախարար Դավիթ Հարությունյանը ամրապնդվեց իր պաշտոնում, նա ձևավորեց աշխատանքային խումբ՝ նախագիծը մինչև 2001 թվականի սկիզբը ավարտին հասցնելու համար: Քննարկումներում ընդգրկվեցին նաև խորհրդատվական ծրագրի գերմանացի փորձագետները, բայց միայն ավելի ոչ պաշտոնական ձևով՝ տեղեկատվական նպատա-

¹² Պրոֆեսոր Նազարյանը 2002 թ. հունիսին ինքնասպանությամբ հեռացավ վերելքներով ու վայրէջքներով լի իր կյանքից: Նրա կնոջ՝ դոկտոր Անահիտ Էլոյանի մահից հետո նա դեպրեսիվ էր դարձել: Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի վերաբերյալ Գերմանիայի քաղաքացիական օրենսգրքի «Մյունխենի մեկնաբանության» օրինակով հեղինակային մեկնաբանություն գրելու նպատակով ձևավորված խումբը ղեկավարելու ԳՏՀԸ-ի առաջարկը պրոֆեսոր Նազարյանը 2001 թվականի աշնանը մերժեց, քանի որ այլևս վատահ չէր, որ նման խնդիրը կիրադործի:

կով: Դա այդպես էլ մնաց, քանի որ նրանք այդ տարիներին լիովին ծանրաբեռնված էին ընդհանուր վարչական իրավունքի բարեփոխումներով: Ընդհակառակը, համեմատական սահմանադրական իրավունքի բնագավառում, քաղաքական իմպլիկացիաները ներառյալ, իր գերազանց բանիմացության շնորհիվ այժմ արդեն կարևոր դերակատարում ունեն Վարդան Պողոսյանը:

Սահմանադրական փոփոխությունների մասին օրենքի՝ 2002 թվականին մշակված նախագիծն ընդունվեց Ազգային ժողովի կողմից և 2003 թ. մայիսի 25-ին դրվեց համաժողովրդական քվեարկության: Սակայն այն ձախողվեց, քանի որ քվեարկության իրավունք ունեցողների՝ սահմանադրությամբ սահմանված նվազագույն թիվը հեռու էր ապահովված լինելուց:

Ընդհակառակը, սահմանադրական փոփոխությունների մասին արագ մշակված նոր օրենքը հաջողություն ունեցավ: Այն ընդունվեց 2005 թվականի նոյեմբերի 27-ին՝ համաժողովրդական քվեարկությամբ:

Սահմանադրության փոփոխությունն էապես ամրապնդեց խորհրդարանական սկզբունքը՝ ի հաշիվ նախագահի իշխանության: Այսպես՝ նախագահն այսուհետ կառավարություն կազմելիս պարտավոր էր կառավարության ղեկավար նշանակել այն անձին, որն իր թիկունքում ուներ պատգամավորների մեծամասնությունը: Նախագահը կորցրեց նաև կառավարության որոշումները հաստատելու (և դրանով իսկ՝ նաև արգելափակելու) և կառավարության նիստերը վարելու իրավունքը: Նշանակալիորեն սահմանափակվեց խորհրդարանի դեմ նախագահի ամենաուժեղ զենքը՝ Ազգային ժողովը ցրելու և նոր ընտրություններ նշանակելու իրավունքը:

Ընդհանուր առմամբ, սահմանադրական փոփոխությունները ստեղծեցին խառը խորհրդարանական-նախագահական համա-

կարգ՝ այդկերպ սահմանադրության տեքստում հստակ ուղղում մտցնելով նախագահին կողմնորոշված 1995 թվականի համա-կարգում:

Նախագահ Ռոբերտ Քոչարյանի պաշտոնավարման ավար-տը և նախագահ Սերժ Սարգսյանի առաջին (հնգամյա) պաշտո-նավարման ժամկետի սկիզբը (2008 թ.) անակնկալ կերպով ցույց տվեցին, որ չնայած սահմանադրական զգալի փոփոխություննե-րին՝ երկրի սահմանադրական իրականության և քաղաքական ռեալության մեջ ոչինչ չի փոխվել. նախագահը հանրապետության քաղաքական դաշտում նախկինի պես գերիշխող կերպարն էր:

Չորս (4) գործոն կար, որոնք անգամ 2005 թ. սահմանադրա-կան փոփոխությունից հետո նախագահի համար ապահովում էին կառավարության և Ազգային ժողովի նկատմամբ ակնհայտ գե-րակշռություն. 1) նախագահի ուղղակի ընտրությունն ամբողջ ժո-ղովրդի կողմից, որը նրան տալիս էր ժողովրդավարական շատ ուժեղ լեգիտիմություն, 2) նախագահի պաշտոնը՝ որպես զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատար, որը հատկապես կարևոր էր դարաբաղյան հակամարտության պատճառով, 3) Սահմանադրությամբ չարգելված հնարավորությունը, որ հանրա-պետության նախագահը կարող է լինել քաղաքական կուսակցու-թյան անդամ և, ինչպես Ֆրանսիայում, որպես Ազգային ժողովի ամենաուժեղ կուսակցության ղեկավար, ուղղորդել խորհրդա-րանը, և 4) չգրված, ավանդական ու խորապես արմատավորված պատկերացումը, որ նախագահն ու իր աշխատակազմը պետք է լինեն պետության մեջ քաղաքական իշխանության կենտրոնը և կարող են ու իրավունք ունեն որոշելու երկրի ոչ միայն արտաքին և անվտանգային քաղաքականությունը, այլև երկրի ներքին և տնտեսական քաղաքականությունը:

Նախագահ Սերժ Սարգսյանի համար իր երկրորդ ժամկետի ավարտից հետո (2018 թ.) նախագահությունը կորցնելու հեռանկարը պատճառներից մեկն էր, որ իր երկրորդ ժամկետի մեկնարկից անմիջապես հետո՝ 2013 թ. աշնանը, նա ստեղծեց Սահմանադրական դատարանի նախագահ Գագիկ Հարությունյանի ղեկավարությամբ սահմանադրական հանձնաժողով՝ գործող սահմանադրությունը վերանայելու ցուցումով: Ընդ որում՝ բաց գաղտնիք էր, որ նախագահը խորհրդարանական կառավարման համակարգին միանգամայն պոպուլյար անցումը նկատի էր առել, որովհետև փոփոխությունն իրեն հնարավորություն կտար գլխավորելու խորհրդարանական կառավարությունն ու շարունակելու կառավարել հանրապետությունը որպես վարչապետ:

Թեև սահմանադրական հանձնաժողովը ձևականորեն չէր ստեղծել աշխատանքային խումբ, սակայն, ըստ էության, սահմանադրական փոփոխությունների նախագծի վրա աշխատանքն առաջին հերթին պարոն Պողոսյանն է կատարել՝ համագործակցելով հանձնաժողովի նախագահի և նախագահի աշխատակազմի հետ: Նա ներգրավեց սահմանադրական իրավունքի մի շարք գերմանացի մասնագետների, որոնց մասնակցությունը սահմանադրական հանձնաժողովն էր ուղղակիորեն առաջարկել: ԳՄՀԸ-ի իրավական խորհրդատվության ծրագրի պատվերով նախագծի աշխատանքներին, հեղինակից զատ, գործակցեցին նաև սահմանադրական իրավունքի մասնագետներ պրոֆեսոր Միխայել Զաքար (Բյուլն), պրոֆեսոր Քրիստոֆ Դեգենհարթը (Լայպցիգ), պրոֆեսոր Վոլֆրամ Քրեմերը (Բոխում), պրոֆեսոր Կառլ-Պետեր Զոմերմանը (Շպայեր) և քրեական իրավունքի մասնագետ պրոֆեսոր Հենինգ Ռադկեն (Հանովեր/Կառլսրուհե): Նրանց ներգրավվածության ծավալը տարբեր էր: Միայն հեղինակն էր ներգրավված ամբողջ ընթացքում՝ մինչև

2015 թվականի օգոստոսին նախագծի ավարտը: Դա պայմանավորված էր նրանով, որ նա սահմանադրության վրա աշխատանքին զուգահեռ մասնակցում էր խորհրդատվական ծրագրի այլ աշխատանքներին:

2013 թվականի սեպտեմբերին ձևավորված սահմանադրական հանձնաժողովը 2014 թ. մարտին ներկայացրեց մանրամասն մշակված «սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ», որն անխնա քննադատության էր ենթարկում 1995 թվականից ի վեր սահմանադրության զարգացման թուլություններն ու բացերը, ինչպես նաև քաղաքական իրականության մեջ սահմանադրության ունեցած աննշան դերը: Դրա հետ մեկտեղ հանձնաժողովը ձևակերպեց փոփոխությունների վերաբերյալ մանրամասն առաջարկություններ՝ որպես հայեցակարգի հանրային քննարկման հիմք և որպես առաջարկ ապագա մասնագիտական քննարկումների և կարծիքների համար:

Շուրջ մեկուկես տարվա ընթացքում գերմանացի փորձագետները փորձագիտական կարծիքների և Գերմանիայում աշխատանքային խմբերի նիստերի միջոցով մեծ նվիրվածությամբ ու խիտ հաճախականությամբ մասնակցեցին նախագծի մշակմանը և դրանով ակնառու ներդրում ունեցան ժողովրդավարական իրավական ու սահմանադրական պետության կառուցման գործում, ինչպես նաև դրան համապատասխանեցված իրավական ու վարչական մշակույթում: Սահմանադրական փոփոխությունների մասին օրենքը ժողովրդի կողմից ընդունվեց 2015 թ. դեկտեմբերի 6-ին կայացած հանրաքվեով և դրանով մտավ ուժի մեջ:

2015 թվականին ամբողջությամբ վերանայված սահմանադրությունը գրեթե ոչ մի ընդհանուր բան չունի 1995 թվականի սահմանադրության սկզբնական տեքստի հետ: Հարկ է ընդգծել հետևյալ տարբերությունները և առանձնահատկությունները.

1. Սահմանադրության վերանայումը նախագահական համակարգը փոխարինել է զուտ խորհրդարանական կառավարման համակարգով: Քաղաքական իշխանության և պետական իշխանության կենտրոնը նախագահից միանշանակ տեղափոխվել է խորհրդարան և, հետևաբար, անուղակիորեն՝ քաղաքական կուսակցություններ և նրանց կողմից ձևավորված խորհրդարանական կառավարություն, ինչպես նաև քաղաքացիական հասարակության ինստիտուտներ ու միավորումներ՝ իրենց ՀԿ-ներով, լրատվամիջոցներ և տնտեսական ձեռնարկություններ:

2. Նախագահի պաշտոնն արմատապես վերափոխվել է: Նախագահը թեև մնում է պետության ղեկավարը, բայց այլևս չունի ուժեղ իշխանական լիազորություններ կամ կառավարության գործառույթներ: Նա այլևս զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատար չէ: Նա այսուհետ ընտրվում է ոչ թե անմիջապես ժողովրդի, այլ անուղակիորեն՝ Ազգային ժողովի կողմից: Նախագահը չի կարող լինել քաղաքական կուսակցության անդամ: Այսինքն՝ Հայաստանի Հանրապետության ղեկավարը նախագծված է որպես խիստ անկուսակցական, քաղաքականապես չեզոք սահմանադրական մարմին: Նրա հիմնական գործառույթներն են պետությունը ներկայացնել պետության ներսում ու պետությունից դուրս և պետության, քաղաքացիական հասարակության ու քաղաքացիների ինտեգրումը:

3. Ներքին և արտաքին քաղաքականության ուղենիշները սահմանում է խորհրդարանի կողմից ընտրված վարչապետը, որի թեկնածությունը նախագահը չի կարող մերժել, այլ պարտավոր է նշանակել: Կառավարության ղեկավարը նաև զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատարն է: Խորհրդարանը վճռորոշ դեր է խաղում սահմանադրական ու պետական մյուս մարմինների, հատկապես Սահմանադրական դատարանի, գլխավոր դատախազի և Կենտրոնական բանկի ձևավորման գործում: Այսուհետ այս բոլոր դեպքերում կպահանջվի բոլոր պատգամավորների 3/5

մեծամասնությունը: Դրա շնորհիվ, և սա է այս նոր կարգավորման նպատակը, խորհրդարանական ընդդիմությունն ուժեղանում է և ստանում քաղաքական հարցերում ավելի ծանրակշիռ խոսք ունենալու հնարավորություն:

4. Հիմնարար և մարդու իրավունքներին վերաբերող բաժինն ամբողջությամբ վերադասավորվել, ընդլայնվել և հնարավորինս ճշգրտորեն հայեցակարգային մշակում է ունեցել՝ հաշվի առնելով Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը:

5. Արդարադատության ոլորտում հաստատվել է վարչական արդարադատությունը, իսկ սահմանադրական դատարանի իրավասություններն ավելի են ամրապնդվել:

2015 թվականի Սահմանադրության վերանայմանը մասնակցելը Հայաստանի Հանրապետությունում ժամանակակից իրավապետական և ժողովրդավարական կարգի հաստատման գործում Գերմանիայի Դաշնային Հանրապետության ամենանշանակալից ներդրումն է:

Բանալի բառեր՝ Քաղաքական զարգացում, սահմանադրական և օրենսդրական խորհրդատվություն, ԳՏՀՀ / ԳՄՀՀ – GTZ / GIZ, վարչական արդարադատություն, ամառային դպրոցներ

Գերմանա-հայկական դիվանագիտական հարաբերություններ. հիշողություն և հեռանկար

Հարցազրույց Աշոտ Սմբատյանի հետ
Գերմանիայում Հայաստանի Հանրապետության դեսպան
(2015–2021թթ.)

— Պարոն դեսպան, Դուք պաշտոնավարել եք 2015 թվականից մինչև 2021 թվականը: Կարո՞ղ եք նկարագրել, թե ինչ պատկերացումներ ունեիք Ձեր առջև ծառացած նոր առաջադրանքների կատարման վերաբերյալ:

— Այո, 2015 թվականին ես հավատարմագրերս հանձնեցի այն ժամանակվա Դաշնային նախագահ պարոն Յոահիմ Գաուքին և Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում հավատարմագրվեցի Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան: Դա ինքնին տպավորիչ պահ էր:

Բայց Գերմանիան ինձ համար նոր տարածք չէր: Սովորել եմ Դրեզդենում, Լայպցիգում և Բեռլինում, այսինքն՝ արդեն ինչ-որ չափով կողմնորոշվում էի: Այնուհետև աշխատել եմ ինչպես Բոննի և Բեռլինի դեսպանատանը, այնպես էլ՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունում: Հատկապես շնորհակալ եմ այն ժամանակի համար, երբ կարողացա աշխատել դեսպան Կարինե Ղազինյանի ղեկավարության ներքո՝ սկզբում որպես անձնական ասիստենտ, հետո՝ դեսպանատան գրասենյակի ղեկավար: Այդ տարիներն ինձ համար շատ արժեքավոր էին և

առաջին հերթին՝ ուսանելի: Հետևաբար, երբ ստանձնեցի դեսպանի պաշտոնը, ես համապատասխան պատրաստվածություն ունեի և սկսեցի ոգևորությամբ աշխատել: Իհարկե, ժամանակները փոխվում են, և ժամանակի հետ նոր քաղաքական դեմքեր են գալիս, դրանով նաև՝ նոր շփումներ, բայց պետք է պատրաստ լինել դրան: Յուրաքանչյուր օրն իր հետ բերում էր նոր առաջադրանքներ, երբեմն էլ՝ խնդիրներ, որոնք հարկ էր լուծել: Միօրինակություն ու առօրեականություն չկար, ընդհակառակը, իմ հանդիպումների օրացույցը միշտ հագեցած էր նաև հանգստյան օրերին: Ինձ համար միշտ կարևոր է եղել լիովին գործին տրվելը՝ լինի բարձրաստիճան քաղաքական գործիչների, հայ համայնքների ներկայացուցիչների հետ հանդիպումների ժամանակ, թե ուսանողների ու դպրոցականների մոտ հյուրընկալվելիս, որոնք ինձ հրավիրում էին Հայաստանի մասին զեկուցում կարդալու:

— Դուք վեց ու կես տարի եղել եք Հայաստանի Հանրապետության դեսպանը Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում: Այդ ընթացքում, անշուշտ, եղել են իրադարձություններ, որոնք առանձնահատուկ տպավորություն են թողել Ձեզ վրա: Կարո՞ղ եք մի քանի օրինակ բերել:

— Վեց տարվա ընթացքում ինձ համար մի քանի շատ զգացմունքային պահեր են եղել: Այդպիսի իրադարձություններից մեկը Գերմանիայի Բունդեսթագի կողմից 2016 թվականին «101 տարի առաջ հայերի և այլ քրիստոնյա փոքրամասնությունների ցեղասպանության հիշատակը և ոգեկոչումը» բանաձևի ընդունումն էր: Այդ «ոգեկոչման ու հիշատակի» ոգով այնուհետև հնարավոր եղավ հուշաքարեր ու խաչքարեր կանգնեցնել Գերմանիայի տարբեր քաղաքներում, հատկապես Բեռլինի սրտում: Դա

Հայաստան երկրի, հայ ժողովրդի ու նաև անձամբ ինձ համար շատ կարևոր էր:

Ինձ համար մշակութային բարձրակետ էր նաև Գեորգ Ֆիլիպ Տելեմանի՝ Հայաստանի գիտությունների ակադեմիայում հայտնաբերված *Ցնծության կանտատի* ձեռագիր–բնօրինակ պարտիտուրի հանդիսավոր հանձնումը 2014 թվականին՝ Ալտոնա քաղաքի հիմնադրման 350–ամյակի առթիվ:

Գերմանիան տեխնիկական ու ֆինանսական մեծ աջակցություն է ցուցաբերել և ցուցաբերում է Հայաստանի Հանրապետության տնտեսության ու ենթակառուցվածքների զարգացմանը, իսկ Արևելյան գործընկերության շրջանակներում օժանդակել է ԵՄ–ի հետ մերձեցմանը: Գերմանական հիմնադրամներն աջակցում են տաղանդավոր հայ երիտասարդ գիտնականներին ու տարբեր հետազոտական նախագծերին: Կան ավելի քան 15 միջհամալսարանական համագործակցություններ, մի քանի միջքաղաքային և շատ միջդպրոցային գործընկերություններ: Հայաստանը բացառիկ առաջնահերթություն է տալիս Գերմանիայի հետ համագործակցությանը:

Հայաստանի և Գերմանիայի միջև դիվանագիտական հարաբերությունների 30 տարիների ընթացքում 2018 թվականին այդ ժամանակվա դաշնային կանցլեր տիկին դ–ր Անգելա Մերկելի հայաստանյան այցը կանցլերի մակարդակով առաջինն այցն էր: Իր ընդգրկուն օրակարգով ու պատվիրակությամբ այս այցն աննախադեպ էր, քանի որ նոր լիցք հաղորդեց հայ–գերմանական հարաբերություններին: Այս համատեքստում կցանկանայի նշել նաև Բեռլինում ԹՈՒՄՈ կենտրոնի բացումը, որն իրականացվեց կանցլերի անմիջական նախաձեռնությամբ Երևանի ԹՈՒՄՈ կենտրոն այցելելուց հետո: Ինձ համար կարևոր էր, որ իմ պաշտոնավարման օրոք Երևանում հիմնադրվեց «Գյոթե» կենտրոնը:

Հուսով եմ, որ կենտրոնը մոտ ապագայում վերջապես կստանա «Գյոթեն» ինստիտուտի լիարժեք կարգավիճակ:

Մենք կարողացանք նոր հաջողությունների հասնել նաև տնտեսական մակարդակում: 2021 թվականի օգոստոսից գերմանական «Լուֆթհանզա» ավիաընկերությունը կրկին ուղիղ թռիչքներ է իրականացնում Երևան, ինչը մեծ նշանակություն ունի մեր երկրի համար: Իմ պաշտոնավարման շրջանում Հայաստանում հիմնադրվեց Գերմանական տնտեսական միավորումը: Քաղաքականության ոլորտում կցանկանայի հատկապես ընդգծել Գերմանիայի Դաշնային Հանրապետության՝ որպես ԵԱՀԿ Մինսկի խմբի մշտական անդամի, հավասարակշռված դիրքորոշումը՝ ի աջակցություն Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման գործում Մինսկի խմբի համանախագահների ջանքերին: 2020 թվականի 44-օրյա պատերազմից հետո Գերմանիայի կառավարությունը վերահաստատեց իր հանձնառությունը՝ շարունակելու աջակցել Մինսկի խմբի՝ հակամարտության խաղաղ լուծում գտնելուն ուղղված ջանքերին, ինչպես նաև բարեփոխումների ձանապարհին օգնելու Հայաստանին՝ որպես վստահելի գործընկերոջ:

Ավարտելով կուզեի ընդգծել մարդասիրական տեսակետից արված քայլը. կորոնավիրուսի համավարակի ծանր պահին՝ 2020 թվականին, Դաշնային պաշտպանության նախարարության աջակցությամբ մենք կարողացանք կազմակերպել գերմանական հայտնի «Միջազգային որոնողափրկարարական աշխատանքներ» (International Search-and-Rescue /I.S. A. R. Germany/) կազմակերպության մասնագետների 14-օրյա առաքելությունը Հայաստան: Դա բացառիկ օգնություն էր Հայաստանի բնակչության համար:

Կարող եմ թվարկել նաև մշակութային, կրթական ու գիտական բազմաթիվ նախագծեր: Այստեղ կնշեի 2018 թվականին Բեռլինի

համերգասրահում Հայաստանի ֆիլիհարմոնիկ նվագախմբի հյուրախաղային ելույթը, ինչպես նաև Հայաստանի ու Գերմանիայի համալսարանների միջև համագործակցության բազմաթիվ համաձայնագրերը: Առանձնահատուկ կարևորում են ապակենտրոնացված համագործակցության շրջանակներում ձեռքբերումները, այդ թվում՝ Երևանի և Լայպցիգի, Յուխաուի և Գետտաի կամ Մուզգենսթուրմի և Դավթաշենի (Երևանի վարչական շրջան) միջև գործընկերության համաձայնագրերի ստորագրումը:

Պակաս կարևոր չեն համարում այն հանգամանքը, որ այսօր մեր քաղաքացիները կարող են օգտվել դեսպանատան շատ ավելի ժամանակակից և ավելի որակյալ հյուպատոսական ծառայություններից, որոնք հասել են եվրոպական որակի մակարդակին: Ես դեսպանատան աշխատանքը ղեկավարել ու դեսպանի պարտականությունները կատարել եմ խղճմտաբար՝ միշտ ելնելով մեր հայրենի երկրի շահերից: Թե ինչը կմնա, կամրապնդվի ու կխորանա, ի վերջո, կախված է բոլորիցս:

Ամփոփելով կարող եմ նշել, որ Գերմանիայում անցկացրած վեց տարիները միշտ չէ, որ հեշտ տարիներ են եղել Հայաստանի համար: Այնուամենայնիվ, դրանք հետաքրքիր, երբեմն նաև հիասթափեցնող, բայց բոլոր առումներով իմ գիտելիքների և իմացության համար շատ հարստացուցիչ ժամանակներ էին:

— Ավելի քան 100 տարի տևեց մինչև 2016 թվականին Գերմանիայի Բունդեսթագը Օսմանյան կայսրությունում հայերի նկատմամբ իրականացված հանցագործությունները ճանաչեց որպես ցեղասպանություն: Ինչ գնահատական կտայիք այն փաստին, որ Դաշնային կառավարությունը քիչ բան է արել Բունդեսթագի բանաձևի դրույթները կյանքի կոչելու համար:

— Ինչպես ժամանակագրական, այնպես էլ իր կարևորության առումով 2016 թվականը միանշանակորեն պետք է առանձնացնել: 2016 թվականի հունիսի 2-ին Գերմանիայի Բունդեսթագի կողմից Հայոց ցեղասպանությունը ճանաչող բանաձևի ընդունումը ոչ միայն առաջընթաց քայլ էր ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացում, այլև արտացոլում էր Գերմանիայի Դաշնային Հանրապետության վերաբերմունքը մարդկության դեմ նման հանցագործությունների հանդեպ:

Բացի դրանից՝ բանաձևի ընդունմամբ նոր էջ բացվեց հայ-գերմանական հարաբերություններում, որը գերմանական հասարակության ուշադրությունը հրավիրեց ոչ միայն Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացի, այլև հենց Հայաստանի վրա: Երկիր, որն ունի հարուստ մշակութային ժառանգություն և Եվրոպայի համար, թերևս, ավելի լայն քաղաքական, տնտեսական և այլ կարևոր նշանակություն: Ի դեպ՝ 20-րդ դարի ամենաաղետալի իրադարձություններից մեկի՝ Հայոց ցեղասպանության թեման չի անտեսվել աշխարհի տարբեր, այդ թվում նաև թուրքական ծագում ունեցող արվեստագետների կողմից, ինչը միանգամայն արժանի է գովեստի: Այս առնչությամբ կուզեի նշել նաև Նոբելյան մրցանակակիր Օրհան Փամուկին:

Ես ներկա էի ռեժիսոր Ֆաթիհ Աքընի «Սպի» ֆիլմի պրեմիերային և անձամբ ճանաչում էի, ցավոք, վաղամեռիկ Դոդան Ախանլիին: Նրանք շատ խիզախ էին թուրք հասարակության հետ մայրենի լեզվով շփվելու և ճշմարտությունը ներկայացնելու ազնիվ փորձի մեջ: Հետադարձ հայացք գցելով՝ դժբախտաբար, կարող ենք փաստել, որ այս առումով թուրքական մտավորականությունն այն ժամանակ ավելի հանդուրժող էր, քան ոչ վաղ անցյալում, եթե նայեք վերջին տարիներին Թուրքիայում ժողովրդա-

վարության զարգացմանը: Ուստի նման մարդկանց միշտ պետք է խրախուսել ու աջակցել:

Բանաձևի ընդունումը Գերմանիայի Բունդեսթագի կողմից առանցքային իրադարձություն էր, դա միանգամայն պարզ է: Այնուամենայնիվ, Դաշնային հանրապետության ներկայացուցիչների կողմից արդեն նախապես կային կարևոր և արժեքավոր ազդակներ: Նման ազդակներն արդեն իսկ կարող էին կենսունակ դարձնել հետագա բանաձևը: Օրինակ՝ հիշում եմ 2015 թվականին այն ժամանակվա Դաշնային նախագահ Յոախիմ Գաուկի և Բունդեսթագի այն ժամանակվա նախագահ դոկտոր, պրոֆեսոր Նորբերթ Լամերթի ելույթները Հայոց ցեղասպանության տարելիցի կապակցությամբ: Նրանց ավանդը ներկայացնում է ցեղասպանությունն ու մարդկության դեմ ուղղված այլ հանցագործությունները կանխելու համընդհանուր պայքարը. կարևոր էր, որ այս բանաձևով հիշվի այդ ոճրագործությունը, դրանով էլ՝ արժանապատվորեն հիշվեն նաև զոհերը, և դա դառնա, լինի և մնա գերմանական ու եվրոպական հիշողության մշակույթի մի մասը: Այո՛, Դաշնային կառավարությունը դեռ պաշտոնական հայտարարություն չի արել, սակայն չպետք է մոռանալ, որ Գերմանիան խորհրդարանական երկիր է: Շատ հուսով եմ, որ նաև կառավարության հայտարարությունը կլինի: Որովհետև Նամիբիայի վերաբերյալ Գերմանական Բունդեսթագի բանաձևով և Դաշնային կառավարության կողմից Նամիբիայի ցեղասպանության ձանաչմամբ Գերմանիան ևս մեկ անգամ ցույց տվեց հիշողության քաղաքականության հանդեպ իր հատուկ վերաբերմունքը: Կարծում եմ, որ Գերմանիան՝ որպես իր պատմությանը խիզախորեն առերեսված և հիշողության քաղաքականությունը հստակորեն կրող երկիր, կարող է նաև նպաստել Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը համընդհանուր «եվրոպական հիշողության»

մեջ ինտեգրելուն: Այս առումով Ձեր հարցը շատ տեղին էր, քանի որ կրթության միջոցով, հատկապես դպրոցական տարիներին, պետք է խոսել նման հանցագործությունների մասին: Միայն այդ-կերպ կարելի է դրանք կանխել:

— Այդ տարիների ընթացքում Դուք բազմիցս նաև հնարավորություն եք ունեցել ծանոթանալու Գերմանիայում ապրող հայերի համայնքներին և կազմակերպություններին: Ինչ համագործակցություն կար Հայաստանի Հանրապետության դեսպանության և այդ կառույցների միջև:

Թեև Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում ապրող հայերի թիվն այնքան էլ մեծ չէ, սակայն նրանք առանձնահատուկ դեր են խաղում հայ-գերմանական հարաբերությունների զարգացման ու խորացման գործում: Բացի դրանից՝ հայ համայնքները մշտապես աջակցություն են ցուցաբերել իրենց հայրենիքին: Այդպես էր 44-օրյա պատերազմի ժամանակ, երբ Հայաստանին ու Արցախին աննախադեպ օգնություն էր տրամադրվում համայնքային բոլոր կառույցների, ինչպես նաև անհատների կողմից: Օգտվելով առիթից՝ ցանկանում եմ ևս մեկ անգամ անկեղծ շնորհակալություն հայտնել: Իհարկե, շատ ցանկալի կլիներ ավելի սերտ համագործակցությունը համայնքների և միությունների միջև: Շատ կարևոր է նաև, որ Գերմանիայում հայերը համախմբվում են խոշոր, կայացած համայնքային կառույցների շուրջ, և որ համայնքի առանձին անդամներ եռանդուն մասնակցություն ունեն համայնքային տարբեր ծրագրերի իրականացմանը: Անհատական նախաձեռնություններ միշտ եղել են ու միշտ էլ նորերը կլինեն, բայց պատմությունը մեզ ցույց է տվել, որ համայնքների կողմից իրականացվող նախաձեռնություններն ավելի կայուն են: Հայ ժողովրդի պատմությունը և սփյուռքը դեռևս

նշանակալից դեր են խաղում Հայաստանի համար: Այդ իսկ պատճառով Գերմանիայի հայ համայնքը շարունակում է մնալ երկկողմ բարեկամական հարաբերությունների զարգացման կարևորագույն հիմնաքարերից մեկը:

Այսօր մեր մի շարք հայրենակիցներ ակտիվ գործունեություն են ծավալում Գերմանիայի Դաշնային Հանրապետության տարբեր ոլորտներում, հատկապես երաժշտության մեջ, որտեղ փայլում են բարձր և բարձրագույն նվաճումներով: Նրանցով մենք կարող ենք արդարացիորեն հպարտանալ: Ինձ համար նրանցից յուրաքանչյուրը հայ ժողովրդի հրաշալի դեսպան է, որը հայկական դարավոր հարուստ մշակույթը պատշաճորեն ներկայացնում է գերմանացի արվեստասեր հանդիսատեսին:

— Ինչպե՞ս եք գնահատում Գերմանիայի հայ համայնքի աշխատանքը գերմանա-հայկական հարաբերությունների բարելավման ուղղությամբ: Հետագա բարելավման հնարավորություններ տեսնո՞ւմ եք:

— Հարաբերությունների բարելավումը միշտ եղել է մեր ուշադրության կենտրոնում: Կարծում եմ, որ այստեղ և՛ դեսպանատունը, և՛ հայ համայնքը մեծ անելիք ունեն, քանի որ ընդամենը չորս դաշնային երկրամաս կա, որտեղ Հայոց ցեղասպանության թեման պաշտոնապես ներառված է կրթական ծրագրերում: Սակայն Գերմանիան ունի 16 դաշնային երկրամաս, այսինքն՝ դեռ շատ անելիքներ կան:

Նշենք, որ նաև Գերմանիայի մշակույթի ու կրթության նախարարների համաժողովը, որը համակարգում է դպրոցական կրթությունը Գերմանիայում, առաջարկ է ներկայացրել դաշնային երկրամասերին, որ յուրաքանչյուրն ինքը քննարկի այդ հարցը և որոշում կայացնի: Բնականաբար, հայ համայնքը նույնպես որոշ

անելիքներ ունի այս երկրամասերի խորհրդարանների ուշադրությունը թեմայի վրա հրավիրելու համար: Այսպիսով, դեռ շատ անելիքներ կան, քանի որ այս գիտելիքը պետք է շարունակ նորից փոխանցվի հաջորդ սերնդին:

Ինչպես արդեն ներկայացրի, հայ համայնքը, համագործակցելով հասարակական հիմունքներով ներգրավված բազմաթիվ ուժերի, բայց նաև երկրամասերի կառավարությունների հետ, խիստ բազմաբնույթ մշակութային աշխատանք է կատարում: Օրինակ՝ գրեթե ավանդույթ է դարձել հայկական մշակույթի օրեր անցկացնելը (ինչպես օրինակ՝ Բաղեն-Վյուրթեմբերգում կամ Սաքսոնիա-Անհալթում), ֆիլմերի ցուցադրության երեկոներ և արվեստի ցուցահանդեսներ կազմակերպելը: Երկու երկրների արվեստագետների մասնակցությամբ իրականացվում են նաև համատեղ մշակութային միջոցառումներ:

— Դաշնային երկրամասերում (Բավարիա, Բաղեն-Վյուրթեմբերգ, Սաքսոնիա-Անհալթ, Սաքսոնիա, Շլեզվիգ-Հոլշտայն, Համբուրգ) պատվո հյուպատոսները ներկայացնում են Հայաստանի Հանրապետության շահերը: Ինչ ներդրում ունեն նրանք հայ-գերմանական հարաբերությունների հետագա զարգացման գործում:

— Ներկայում մենք դաշնային տարբեր երկրամասերում ունենք Հայաստանի Հանրապետության պատվո վեց հյուպատոսություն՝ Բաղեն-Վյուրթեմբերգ, Սաքսոնիա-Անհալթ, Բավարիա, Համբուրգ, Շլեզվիգ-Հոլշտայն և Սաքսոնիա: Պատվո հյուպատոսները համապատասխան հյուպատոսական շրջաններում նպաստում են հայ-գերմանական հարաբերությունների ընդլայնմանն ու խորացմանը: Նրանք, ըստ հնարավորության, աջակցում են համապատասխան դաշնային երկրամասերում ապրող

հայազգի քաղաքացիներին, ինչպես նաև բազմաթիվ համատեղ գերմանա-հայկական ծրագրեր իրականացնում Հայաստանում և Գերմանիայում: Այս կապակցությամբ ցանկանում եմ անկեղծորեն շնորհակալություն հայտնել պատվո հյուպատոսներին՝ 2020 թվականի 44-օրյա պատերազմից հետո Հայաստանին, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի ժողովրդին բարեգործական ծրագրերի միջոցով ցուցաբերած արտակարգ աջակցության համար: Այստեղ կցանկանայի նաև նշել, որ պատվո հյուպատոսները, որպես Գերմանիայի քաղաքացիներ, առանձնահատուկ զգում են գերմանական քաղաքականության զարկերակը և այդպիսով անմիջականորեն ու արդյունավետորեն նպաստում հայ-գերմանական հարաբերությունների զարգացմանը: Նրանց գործունեությունը հարաբերությունների դինամիկ զարգացման ակնառու օրինակ է:

— Անկախությունից հետո հանրապետությունը ձեռնամուխ եղավ ազատ և ժողովրդավարական իրավական պետության կառուցման գործին: Ինչ եք կարծում՝ Հայաստանում ժողովրդավարության հետագա զարգացման համար կարելի է դասեր քաղել գերմանական փորձից:

— Գաղտնիք չէ, որ Հայաստանը երիտասարդ ժողովրդավարական երկիր է: Այս տեսանկյունից Հայաստանը շատ բան ունի սովորելու եվրոպական կայացած ժողովրդավարություններից, այդ թվում՝ Գերմանիայից: Ժողովրդավարության որոշ ասպեկտներ կարելի է վերցնել գերմանական քաղաքական համակարգից, ինչը, ի դեպ, որոշ չափով արդեն տեղի է ունեցել Հայաստանում խորհրդարանական կառավարման համակարգի ներդրմամբ, որը շատ նման է գերմանական մոդելին: Միննույն ժամանակ, սակայն, այս բարեփոխումները նաև պետք է համապատասխանեցվեն Հայաստանի քաղաքական մշակույթի առանձնահատ-

կություններին: Ինչպես գիտեք, Հայաստանի և Գերմանիայի ընտրական համակարգերը քիչ թե շատ նման են: Հայաստանը փորձում է ուժեղացնել քաղաքական կուսակցությունների դերը ժողովրդավարական որոշումների կայացման գործում ինչպես պետական, այնպես էլ տարածաշրջանային մակարդակներում: Անձամբ ես կցանկանայի, որ Հայաստանում քաղաքական կուսակցությունները նմանվեն գերմանական կուսակցություններին, հատկապես, երբ խոսքը գաղափարական ամուր հիմքի մասին է, և որ կողմնակիցները կենտրոնանան համապատասխան կուսակցության առաջարկած գաղափարների ու ծրագրերի վրա: Այս տեսանկյունից մենք կարող ենք սովորել գերմանական փորձից, քանի որ դա առնվազն արվում էր, երբ ես Գերմանիայում ուսանող էի:

Մի քանի տարի առաջ Պոտսդամի Լեյփտուսի տուն–հաստատությունում կարդացածս զեկուցման ժամանակ ես խոսեցի արտաքին հարաբերություններում հավասարակշռություն գտնելու Հայաստանի ջանքերի մասին՝ նշելով, որ Հայաստանը գտնվում է «Եվրոպայի և Ասիայի աշխարհագրական խաչմերուկում»: Հայաստանն ավելի սերտ կապեր է զարգացրել Եվրոպայի և Եվրամիության հետ՝ միաժամանակ Եվրասիական տնտեսական միության միջոցով լավ հարաբերություններ պահպանելով այլ պետությունների հետ: Աշխարհագրական դիրքի շնորհիվ Հայաստանը և ողջ տարածաշրջանը կարող են կամրջել Եվրոպան ու Ասիան: Այս մոտեցումը երկար տարիներ ի վեր Հայաստանի արտաքին քաղաքականության հենասյուներից մեկն է: Մի կողմից՝ այս համատեքստում Ռուսաստանը մնում է Հայաստանի ռազմավարական գործընկերը: Մյուս կողմից՝ Հայաստանը սերտ գործընկերություն է պահպանում ԱՄՆ–ի և Եվրամիության (ԵՄ), ինչպես նաև նրանց անդամ երկրների հետ երկկողմ մակարդակով: Հայաստանի անկախացումից ի վեր ԵՄ–ն մեծ ներդրում է

ունեցել Հայաստանում մի շարք ոլորտներում բարեփոխումներ իրականացնելու գործում և նշանակալի աջակցություն ցուցաբերել ժողովրդավարացման գործընթացին: Ինչպես գիտեք, ԵՄ–ն 2009 թվականին կյանքի է կոչել Արևելյան գործընկերությունը (ԱԷԳ), որտեղ հինգ այլ երկրների հետ միասին ընդգրկված է նաև Հայաստանը: Արևելյան գործընկերության շրջանակներում հարաբերությունների խորացման արդյունքում 2017 թվականին ստորագրվեց Հայաստանի և ԵՄ–ի միջև *Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը*՝ նոր փուլ բացելով Հայաստան–ԵՄ հարաբերություններում և նախանշելով առաջիկա տարիներին համագործակցության հեռանկարները: Դա կարող ենք նույնիսկ անվանել Հայաստանի և Եվրամիության միջև այսօրվա հարաբերությունների «սահմանադրություն»: Հայաստանում ժողովրդավարացման շարունակվող գործընթացի շնորհիվ կարելի է ակնկալել Եվրամիության ֆինանսական և այլ աջակցության հետագա աճ:

Եզրափակելով՝ նշեմ, որ ժողովրդավարության ուղին ընտրած հայ հասարակությունը 2020 թվականի 44–օրյա պատերազմի ժամանակ շատ ավելին էր սպասում Եվրամիությունից: Վստահ եմ, որ դա հաշվի կառնվի և պատշաճ կերպով կվերլուծվի մեր եվրոպացի գործընկերների կողմից:

— Լեռնային Ղարաբաղում 2020 թվականի 44–օրյա պատերազմը դրամատիկ իրավիճակ ստեղծեց ամբողջ տարածաշրջանի համար: Նույն խաղացողները դեռ ակտիվ են տարածաշրջանում, թե՛ ինչ–որ բան փոխվել է: ԵԱՀԿ (Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն) Մինսկի խումբը և ԵՄ–ն դեռևս որևէ դերակատարում ունեն: Դիվանա-

գիտական լուծման հեռանկար կա: Ինչ դեր կարող է խաղալ Գերմանիան այս հարցում:

— 2020 թվականի սեպտեմբերի 27–ին Ադրբեջանը, խախտելով Հելսինկյան եզրափակիչ ակտի՝ ուժից և ուժի կիրառումից հրաժարվելու հիմնարար սկզբունքը, 44–օրյա պատերազմ սանձազերծեց Լեռնային Ղարաբաղի բնակչության դեմ: Թուրքիայի ակտիվ աջակցությամբ Ադրբեջանի վարած այս պատերազմը, որը հազարավոր մարդկանց կյանք խլեց և շատերին տեղահանեց իրենց պապենական հայրենիքից, լուծում չբերեց: Ներկայումս ռուսական խաղաղապահ ուժերն են հետագա արյունահեղության կանխման երաշխավորը:

Լեռնային Ղարաբաղի ապագա կարգավիճակի համար պետք է խաղաղ լուծում գտնվի տվյալ տարածքի բնակչության ներգրավմամբ և Մինսկի խմբի համանախագահության գլխավորությամբ: ԵՄ–ն և միջազգային հանրությունն այստեղ մեծ պատասխանատվություն ունեն տեղում հումանիտար իրավիճակը կայունացնելու գործում: Հայաստանն իր ներդրումը կունենա դրանում:

Նույնիսկ եթե Հայաստանի, Ռուսաստանի և Ադրբեջանի 2020 թվականի նոյեմբերի 9–ի եռակողմ հայտարարությունը վերջ դրեց Ադրբեջանի ագրեսիային, իրավիճակը մնում է փխրուն: Ադրբեջանը մինչ օրս չի պահպանում հայտարարության դրույթները: Եվ ես այստեղ նկատի ունեմ հատկապես հայ գերիներին ազատ չարձակելը, ռազմատենչ հռետորաբանությունը և Հայաստանի ինքնիշխան տարածք ներխուժելը:

Ֆրանսիան, Ռուսաստանը և ԱՄՆ–ը՝ որպես ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներ, որն ունի միակ միջազգային մանդատը, շարունակում են կրել Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման հիմնական պատասխանատվու-

թյունը: Խաղաղության կարելի է հասնել միայն երկխոսության ու փոխզիջման փոխադարձ պատրաստակամության միջոցով: Մեր միակողմանի բարի կամքը բավարար չէ:

ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահությունը մնում է միջազգայնորեն ճանաչված միակ ձևաչափը, որն ուղղված է Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորմանը: Հարկ է նշել, որ ԼՂ հիմնախնդրի առանցքային և հիմքում ընկած խնդիրը՝ ԼՂ կարգավիճակի և ժողովրդի անվտանգության երաշխիքների հարցը, դեռևս լուծված չէ: Դրան կարելի է հասնել միայն Լեռնային Ղարաբաղի ժողովրդի կամարտահայտությամբ: Այսօր ԵԱՀԿ Մինսկի խմբի աշխատանքին խիստ խոչընդոտում է Ադրբեյջանի ապակառուցողական վերաբերմունքը: Ադրբեյջանը հրաժարվում է վերադարձնել հայ գերիներին՝ միջազգային հանրության առջև երեսպաշտորեն քարոզելով տարածաշրջանում խաղաղ գոյակցություն ու խաղաղություն, և դրանով խախտում նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարության համապատասխան դրույթը, որտեղ հստակ ասվում է, որ երկու կողմերը պարտավոր են վերադարձնելու բոլոր գերիներին, որն ամբողջությամբ իրականացրել է հայկական կողմը: Բացի դրանից՝ 2021 թվականի մայիսից Ադրբեյջանը ագրեսիա է իրականացնում Հայաստանի Հանրապետության ինքնիշխան տարածքի դեմ, ընդ որում՝ նման ևս մի միջադեպ տեղի ունեցավ բառացիորեն մի քանի օր առաջ: Պարզապես անհամատեղելի է խոսել երկու ժողովուրդների խաղաղ գոյակցության մասին՝ սպանելով խաղաղ բնակիչներին, ինչպես եղավ վերջերս:

Ուստի՝ դեռ վաղ է խոսել կայուն խաղաղության կամ արդյունավետ բանակցությունների մասին, քանի դեռ Ադրբեյջանը չի դադարեցրել ոչինչ հաշվի չառնող ու անպատասխանատու իր պահվածքը: Սոսկ մի կողմի ցանկությունն ու մեկնած ձեռքը եր-

բեք բավարար չեն տևական խաղաղություն հաստատելու համար: Ինչ վերաբերում է Գերմանիայի կառավարության դիրքորոշմանը, ապա Հայաստանը մշտապես բարձր է գնահատել Գերմանիայի հավասարակշռված դիրքորոշումը:

Նշենք նաև, որ ԵՄ–ն այժմ կարողանում է նպատակային մարդասիրական օգնություն տրամադրել Լեռնային Ղարաբաղի հայ բնակչությանը՝ դրանով նպաստելով տարածաշրջանում իրավիճակի կայունացմանը: Նաև այս առումով մենք Բեռլինից, ինչու չէ, պետք է ակնկալենք ակտիվ քայլեր:

Ներկայիս Դաշնային կառավարությունը ցանկանում է վարել արժեքներով ղեկավարվող, ֆեմինիստական արտաքին քաղաքականություն: Լավ մտադրություն է, այդ դեպքում ցանկանում եմ, որ դա կիրառվի նաև Լեռնային Ղարաբաղի բնակչության համար: Որովհետև, ըստ իս, մարդու իրավունքները ամենաբարձր արժեքն են, որ պետք է ապահովվի՝ անկախ նրանից, թե որտեղ:

— Ինչպե՞ս եք գնահատում Հայաստանի և Գերմանիայի միջև տեղեկատվության փոխանակումը 30 տարվա դիվանագիտական հարաբերություններից հետո: Այստեղ ես նկատի ունեմ նաև լրատվությունը գերմանական լրատվամիջոցներում:

— Հայաստանի և Գերմանիայի համագործակցությունը մշակույթի և արվեստի ոլորտներում մինչ այժմ բավականին արդյունավետ է եղել: Այստեղ գլխավորը ոչ միայն փորձված հարաբերությունների պահպանումն է, այլև նոր ընդհանրություններ փնտրելը, որոնք, ի վերջո, կարող են ձանապարհի հարթել համագործակցության նոր ոլորտների համար:

Իմ կարծիքով, մեր արտաքին քաղաքականության մեջ ռազմավարական տեղ պետք է զբաղեցնի մեր դարավոր ու հարուստ մշակույթը պատշաճ կերպով ներկայացնելը, քանզի ինչպես մշա-

կութային ներկայանալիության, այնպես էլ մեր տաղանդավոր մշակութային գործիչների ներուժի առումով միանգամայն հնարավոր է Հայաստանի մշակութային հարստությունը ներկայացնել արտերկրում, ընդլայնել և միննույն ժամանակ Հայաստանը գրավիչ դարձնել օտարերկրացիների համար: Իմ պաշտոնավարման ընթացքում ես մշտապես ջանացել եմ պատասխանել լրագրողների բոլոր հարցումներին: Այդուհանդերձ, պետք է փաստեմ, որ գերմանական լրատվամիջոցներում Հայաստանի Հանրապետության վերաբերյալ տեղեկատվությունը դեռ էապես բարելավվելու կարիք ունի:

Իմ երկրի զարգացման վերաբերյալ առարկայականորեն հիմնավորված լրատվության պակաս կա՝ ներքին թե արտաքին քաղաքականության առումով: Էլ չենք խոսում ստեղծված իրավիճակի մասին, երբ 2022 թվականի սեպտեմբերին Ադրբեջանն ագրեսիա իրականացրեց Հայաստանի տարածքի նկատմամբ: Ափսոսանքով փաստեցի, որ այս ագրեսիվ գործողությունը համապատասխան ուշադրության չի արժանացել ո՛չ լրատվամիջոցներում, ո՛չ էլ քաղաքականության մեջ:

— Կնկարագրե՞ք հայ-գերմանական հարաբերությունների ներկա վիճակը: Որտե՞ղ կա բարելավման անհրաժեշտություն հատկապես համաշխարհային ներկայիս իրավիճակի հետ կապված:

— Գերմանիան ավանդաբար եղել է Հայաստանի կարևորագույն գործընկերներից մեկը ինչպես երկկողմ, այնպես էլ բազմակողմ հարթությունում: Միայն այն փաստը, որ Դաշնային Հանրապետությունը Հայաստանի համար ԱՄՆ-ից հետո երկրորդ ամենամեծ ֆինանսական և տեխնիկական դոնոր երկիրն է, ինքնին խոսում է:

Հարկ է ընդգծել վերջին տարիների պարբերական փոխայցելությունները ամենաբարձր մակարդակով, այդ թվում նաև Դաշնային կանցլերի այցը Հայաստան, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության նախագահի և վարչապետի այցերը Գերմանիա: Ցավոք, այդ երկխոսությունը, որն արդեն այդքան ակտիվացել էր, կորոնավիրուսի համավարակի պատճառով որոշակի անկում է ապրել:

Բարեբախտաբար, իրավիճակը վերադառնում է բնականոն հուն, և հարաբերություններն աստիճանաբար վերադառնում են նախկին բարձր մակարդակին: Ես լիովին վստահ եմ, որ հայ-գերմանական համագործակցությունը, չնայած արդեն տեսանելի դրական արդյունքներին, զարգացման է՝լ ավելի մեծ ներուժ ունի: Սա չի վերաբերում միայն ավանդական ոլորտներին, ինչպիսիք են քաղաքական ու տնտեսական համագործակցությունը, գիտությունն ու կրթությունը, մշակույթը, այլ նաև համեմատաբար նոր ոլորտներին, ինչպիսիք են տեխնոլոգիական զարգացումն ու թվայնացումը:

Հայաստանը միշտ ջանքեր է գործադրել, որպեսզի գերմանական խոշոր տեխնոլոգիական ընկերությունները հետազոտական ինչ-ինչ աշխատանքների պայմանագրեր կնքեն Հայաստանում, քանզի ներուժն առկա է: Ես վերջերս ուրախությամբ տեղեկացա, որ Տնտեսական համագործակցության և զարգացման դաշնային նախարարությունը (BMZ) որոշել է վերադառնալ Հայաստանի հետ երկկողմ համագործակցությանը: Ես մնում եմ լավատես և հավատում եմ, որ ոչինչ այնքան լավ չէ, որ էլ ավելի լավը չդառնա:

ԳԼՈՒԽ III

ՀԱՅ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՅՈՒԹՅՈՒՆԸ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ
ՈԼՈՐՏՈՒՄ

Ակադեմիական շարժունության դերը բարձրագույն կրթության ոլորտում հայ-գերմանական համագործակցության մեջ

Նարեկ Գալստյան

Երախտիքի խոսք

Ես իմ երախտագիտությունն եմ հայտնում այն անձանց ու կազմակերպություններին, առանց որոնց աջակցության անհնար կլիներ սույն հոդվածի հիմքում ընկած վերլուծությունը:

Մասնավորապես՝ վիճակագրական տվյալներ տրամադրելու և համակողմանի օգնության պատրաստակամության համար շնորհակալ եմ Գերմանական ակադեմիական փոխանակության ծառայության Թբիլիսիի տարածաշրջանային գրասենյակի ուսումնական ծրագրերի խորհրդատու Արևիկ Հարությունյանին և Երևանի պետական համալսարանի միջազգային համագործակցության վարչության պետ, պրոֆեսոր Ալեքսանդր Մարգարովին, վարչության աշխատակցուհիներ Լիա Էվոյանին ու Հայկուհի Մկրտչյանին:

Հայաստանում Գերմանական ակադեմիական փոխանակության ծառայության գործունեության վերաբերյալ հարցազրույցի համար շնորհակալ եմ ԳԱՓԾ հայաստանյան տեղեկատվական կենտրոնի ծրագրերի նախկին համակարգող Մերի Նավասարդյանին:

Գերմանական գործընկերների հետ համագործակցության անձնական և ինստիտուցիոնալ փորձառության վերաբերյալ հարցազրույցների համար շնորհակալ եմ ԵՊՀ քաղաքագիտության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Աշոտ Ալեքսանյանին, հեռահաղորդակցության և ազդանշանների մշակման ամբիոնի վարիչ, դոցենտ Հովհաննես Հարոյանին, սոցիոլոգիայի ֆակուլտետի դեկան, պրոֆեսոր Արթուր Մկրտիչյանին, կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի դոցենտ Հովիկ Փանոսյանին, տեղեկատվական համակարգերի ամբիոնի դասախոս Ելենա Պետրոսյանին, Գերմանիայի Լեփսիուսի տուն-արխիվի գիտաշխատող Հայկ Մարտիրոսյանին, «Օրակլ» ընկերության տարածաշրջանային խմբի ղեկավար Աննա Վարդանյանցին:

Բարձրագույն կրթության ոլորտում հայ-գերմանական հարաբերությունների մասին պաշտոնական տվյալներին մուտք ստանալու հարցում աջակցության համար շնորհակալ եմ ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանին և նախարարության արտաքին կապերի վարչության աշխատակից Մարգարիտա Մաթևոսյանին:

Հետազոտական ու փորձի փոխանակության այցերի միջոցով գերմանական բուհական մշակույթին հաղորդակցվելու հնարավորություն տալու համար ես շնորհակալ եմ Գերմանական ակադեմիական փոխանակության ծառայությանը, Եվրոպական միության «Էրազմուս+» ծրագրին ու ԵՊՀ ղեկավարությանը:

Ներածություն

Պետությունների փոխկապվածությունը և միմյանց համար կարևորությունը որպես կանոն որոշում ու գնահատում են առևտրատնտեսական ցուցանիշներով: Կրթության ոլորտում համագործակցության զարգացածությունը գուցե չունի ռազմավարական այն ազդեցությունն ու որոշիչ նշանակությունը, ինչ առևտրատնտեսական հարաբերությունները, այդուհանդերձ, այն միջպետական հարաբերությունների ընդհանուր զարգացածության կարևոր ցուցիչ է: Կրթությունը և գիտությունը՝ որպես պետության մշակութային քաղաքականության քաղաքիչներ, հարկ է դիտարկել պետության փափուկ ուժի համատեքստում: Իսկ փափուկ ուժի քաղաքականությունն այսօր մի շարք պետությունների (օրինակ՝ ԱՄՆ-ի, Գերմանիայի, Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի, Չինաստանի, Ռուսաստանի) արտաքին քաղաքականության առանցքային ուղղություններից է: Ուստի՝ միջպետական հարաբերությունների ուսումնասիրության և գնահատման տեսանկյունից փափուկ ուժի քաղաքիչների, այդ թվում կրթության ոլորտում համագործակցության քննությունն ունի առանձնահատուկ կարևորություն:

Սառը պատերազմից հետո, ինչպես հետխորհրդային մյուս երկրները, Հայաստանը ևս հայտնվեց խոշոր տերությունների փափուկ ուժի թիրախում: Ստորև շարադրված վերլուծության օբյեկտը այդ երկրներից մեկի՝ Գերմանիայի փափուկ ուժի արտածումն է Հայաստանում, վերլուծության առարկան՝ ակադեմիական շարժունության նշանակությունն ու ազդեցությունը Գերմանիայի և Հայաստանի միջև միջբուհական գիտակրթական համագործակցության մեջ:

Վերլուծության վերջնանպատակն է գործնական օրինակների քննության հիման վրա պարզել, թե Հայաստանի ու Գերմանիայի

բուհերի միջև ակադեմիական շարժունության ծրագրերն ինչ ազդեցություն են ունեցել միջբուհական համագործակցության, ինչպես նաև Հայաստանի գիտական համայնքի ներկայացուցիչների մասնագիտական կարողությունների զարգացման վրա:

Այդ նպատակին հասնելու համար մենք փորձել ենք պատասխանել հետևյալ հարցերին՝

1. Ինչ դեր է խաղում «գիտակրթական դիվանագիտությունը» Գերմանիայի արտաքին քաղաքականության մեջ, և որո՞նք են դրա հիմնական դերակատարները:

2. Հայաստանի ու Գերմանիայի բուհերի միջև ակադեմիական շարժունության ինչ ծրագրեր են գործում, և գործնական ինչ ազդեցություն ունեն դրանք միջբուհական գիտակրթական համագործակցության վրա:

Հարցերի առաջին խմբին մենք արձագանքել ենք փաստաթղթերի վերլուծության միջոցով: Հարցերի երկրորդ խումբը քննել ենք վիճակագրական տվյալների վերլուծության և խորացված հարցազրույցների միջոցով: Մենք ուսումնասիրել ենք, մասնավորապես, Գերմանական ակադեմիական փոխանակության ծառայության (Deutscher Akademischer Austauschdienst – DAAD, ԴԱԱԴ) տրամադրած՝ 2018–2021 թթ. ընթացքում Ծառայության ծրագրերի շահառուների քանակական տվյալներն ըստ բուհերի, մասնագիտությունների և կարգավիճակների: Քանի որ հայաստանյան բուհերից յուրաքանչյուրն ունի գերմանական գործընկերների հետ համագործակցության իր ուրույն պատմությունը, որն ամբողջությամբ ուսումնասիրել մեկ հոդվածի շրջանակներում հնարավոր չէր, մենք թիրախավորել ենք Երևանի պետական համալսարանը (ԵՊՀ): Այս համատեքստում մենք ուսումնասիրել ենք 2016–2021 թթ. ընթացքում ԵՊՀ-ի և գերմանական բուհերի միջև ակադեմիական շարժունության քանակական տվյալ-

ները, ինչպես նաև բուհի ձգբիտ, բնական և հասարակական գիտություններով մասնագիտացած ֆակուլտետների մասնագետ-դասախոսների և ուսանողների հետ հարցազրույցների միջոցով քննել ենք գերմանական բուհերում նրանց անձնական ու ինստիտուցիոնալ համագործակցության փորձը:

1. Գերմանիայի «գիտական դիվանագիտությունը»

Ամերիկյան քաղաքագետ Ջոզեֆ Նայ կրտսերի բնորոշմամբ՝ փափուկ ուժն ունակություն է հրապուրելու, համոզելու միջոցով մեկ ուրիշից ստանալ ցանկալին: Ի տարբերություն կոշտ ուժի, որը հենվում է ռազմական ուժի և հարկադրանքի այլ միջոցների վրա, փափուկ ուժը բխում է երկրի մշակույթի, քաղաքական իդեալների և քաղաքականության գրավչությունից:¹ Ջ.Նայի փափուկ ուժի հայեցակարգում հանրային դիվանագիտության կարևոր բաղադրիչ են կրթական փոխանակման ու վերապատրաստման ծրագրերը, դրամաշնորհները, որոնց միջոցով փափուկ ուժ արտածող պետությունը ոչ միայն նպաստում է գործընկեր պետության զարգացմանը, այլ նաև նրա հանրային առաջնորդներին կրթելուն:² Ինչպես նկատում են որոշ հետազոտողներ, այսօր միայն ժամանակի պահանջներին համապատասխանող կրթական համակարգ ունեցող երկրներն են ունակ ուղեղների համար գլոբալ մրցապայքարում մրցունակ դիրքեր զբաղեցնելու: Եվ հենց այդ երկրներն են արտասահմանցի ուսանողներին առաջարկում առավել հրապուրիչ պայմաններով կրթական ծրագրեր:³ Հետա-

¹ Nye J. S. J., *Soft Power: The Means to Success in World Politics*, New York: Public Affairs Group, 2004.

² Նույն տեղում, էջ 109–110:

³ Amirbek A. and K. Ydyrys, “Education as a Soft Power Instrument of Foreign Policy,” *Procedia – Social and Behavioral Sciences*, No. 143, էջ 501–503,

գոտոողների գնահատմամբ, քանի որ այդ ծրագրերն ուղղված են տարբեր երկրների հասարակությունների փոխըմբռնմանն ու հենց այդ երկրների փոխհարաբերությունների զարգացմանը, այդ ծրագրերը դառնում են պետության փափուկ ուժի կարևոր գործիք: Արտասահմանում ուսանելու ընթացքում այդ մարդիկ ոչ միայն հարստացնում են իրենց մասնագիտական գիտելիքներն ու հմտությունները, այլ նաև յուրացնում հյուրընկալող երկրի լեզուն, դրա միջոցով ավելի շատ հաղորդակցվում այդ երկրի մշակույթին ու գիտատեխնիկական ձեռքբերումներին, փոխվում են այդ մարդկանց աշխարհընկալումն ու արժեքային նախընտրությունները: Այդ մարդիկ իրենց հետ հայրենիք են տանում ողջ այդ փորձառությունը, տարածում դրա բաղադրիչներն իրենց միջավայրում և նպաստում հյուրընկալած երկրի ու նրա մշակույթի մասին իրազեկմանը, հանրային դրական ընկալումների զարգացմանը:⁴

Թերևս հենց սա է Գերմանիայի գիտակրթական քաղաքականության փիլիսոփայական շարժիչներից մեկը: Եվ պատահական չէ, որ տարբեր հեղինակներ փափուկ ուժին Գերմանիայի արտաքին քաղաքականության մեջ յուրահատուկ նշանակություն են տալիս՝ դրա առաջնահերթություններից համարելով գերմաններենի և գերմանական մշակույթի ժողովրդականացումը գործընկեր երկրներում, գերմանական կրթական հաստատությունների միջազգային հեղինակության ամրապնդումը, միջազգային ակադեմիական փոխանակության և գիտատեխնիկական համագործակցության զարգացումը:⁵ Գերմանիայի արտաքին քաղաքականու-

այստեղ՝ էջ 502, 2014:

⁴ Ostashova Y., “Higher Education as a Soft Power Tool of State’s Foreign Policy,” *Advances in Social Science, Education and Humanities Research*, vol. 489, էջ 259–265, այստեղ՝ էջ 260, 2020:

⁵ Ланьшина Т., “«Мягкая сила» Германии: культура, образование, наука”, *Вестник международных организаций*, Том 9, Ном. 2, էջ 28–58,

թյան պաշտոնական հայեցակարգում մշակութային հարաբերություններն ու կրթական քաղաքականությունը դիտարկվում են որպես Գերմանիայի արտաքին քաղաքականության երրորդ հենասյուն, որի գործիքների թվում նշվում են ակադեմիական փոխանակությունը, աջակցությունը գերմաներենի՝ որպես օտար լեզվի տարածմանն ու գերմանական միջազգային դպրոցներին:⁶

Գիտակրթական համագործակցության ոլորտում Գերմանիայի փափուկ ուժի քաղաքականությանը նվիրված հրապարակումների⁷ ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այդ ոլորտի կառավարումը ցանցային է: Այդ ցանցում կարելի է առանձնացնել առանցքային դերակատարների հինգ խումբ:

Առաջին խումբը Գերմանիայի դաշնային և հողերի իշխանության մարմիններն են, որոնք իրավական ակտերի և բյուջետային հատկացումների միջոցով ազդում են կրթական ծրագրերի ուղղվածության, դրամաշնորհների ու շահառուների թվի, դրանց պահանջների ձևավորման վրա:

Երկրորդ խումբը կազմում են Գերմանիայի կառավարության հիմնած ու պետական կամ մասամբ պետական ֆինանսավորմամբ գործող կրթամշակութային և գիտակրթական հիմնադրամ-

այստեղ՝ էջ 29, 2014.

⁶ Federal Foreign Office, “Cultural relations and education policy: A basis for strong international relations,” [Online]. Available: <https://www.auswaertiges-amt.de/en/aussenpolitik/themen/cultural-relations-and-education-policy/229306> (վերջին մուտք՝ 07 08 2022):

⁷ Ланьшина Т., նշված տեղում, Gotkowska J., “German Networks in The East. German soft power in Eastern Europe, Central Asia and the South Caucasus: politics – administration – culture – science – society,” Centre for Eastern Studies, Warsaw, 2010, Megem M., Maksimov I. and Gritsaenko P., “Key actors of German “soft power” in the Baltics,” *The Baltic Region*, No. 1, էջ 49–59, 2016, Adick C., “German Foreign Cultural and Educational Policy as a Means of Soft Power,” *HERJ Hungarian Educational Research Journal*, No. 3, էջ 11–22, 2016.

ներն ու կազմակերպությունները (օրինակ՝ ԴԱԱԴ–ն, «Գյոթե» ինստիտուտը, «Ալեքսանդր Ֆոն Հումբոլդտ» հիմնադրամը), որոնք միջազգային գիտակրթական քաղաքականության հիմնական իրականացնողներն ու ծրագրերի բովանդակային ուղենիշերը մշակողներն են:

Երրորդ խումբը գերմանական քաղաքական հիմնադրամներն են (օրինակ՝ Կոնրադ Ադենաուեր, «Ֆրիդրիխ Էբերտ», «Ֆրիդրիխ Նաուման», «Հայնրիխ Բյոլ» հիմնադրամները):

Չորրորդը քաղաքացիական հասարակության և տարատեսակ այլ կազմակերպություններն են, այդ թվում՝ առևտրային, տեխնոլոգիական, կրոնամշակութային և այլն, որոնք ևս գիտակրթական դրամաշնորհներ են տրամադրում Գերմանիայում ուսանելու կամ հետազոտություն անցկացնելու համար:

Եվ, վերջապես, հիմնական դերակատարների հինգերորդ խումբը հենց գերմանական բուհերն ու հետազոտական ինստիտուտներն են, որոնք էլ հենց որոշում են կրթական ծրագրերի բովանդակությունը և «հողի վրա» կազմակերպում գիտակրթական քաղաքականությունը:

2. ԴԱԱԴ–ի դերը բարձրագույն կրթության ոլորտում հայ–գերմանական համագործակցության մեջ

Հայաստանի մասնակցությունը Բոլոնյան գործընթացին և միջազգային մի շարք ծրագրերին (այդ թվում՝ ԴԱԱԴ–ի, Բրիտանական խորհրդի, ԵՄ–ի «ՏԵՄՊՈՒՍ», «Էրազմուս Մունդուս», «Էրազմուս+» ծրագրերին) Հայաստանի կրթական համակարգին տալիս է միջազգայնացման՝ գործընկեր–պետությունների հետ ուսանողների, մասնագետների ու փորձի փոխանակության, տարբեր ոլորտներում միջինստիտուցիոնալ համագործակցության մեծ հնարավորություններ: Այդ ոլորտում աշխարհագրական

գլխավոր ուղղություններից մեկը Գերմանիան է: Ավելին՝ գերմանական կողմի որոշմամբ 2018 թվականից հայաստանյան դպրոցների շրջանավարտները ևս կարող են իրենց ավարտական վկայականների հիման վրա ուղղակիորեն դիմել գերմանական բուհեր՝ այնտեղ բակալավրի ուսում ստանալու համար:⁸ Հետխորհրդային ողջ տարածքում այդ բացառիկ ու առայժմ միակ հնարավորությունը լրացնում են Հայաստանում ակտիվ գործող «Գյոթե» կենտրոնն ու Արտասահմանյան դպրոցների հարցերով կենտրոնակայանը, որոնք առավելապես մասնագիտացած են միջնակարգ կրթության ոլորտում: ԴԱԱԴ–ի հայաստանյան տեղեկատվական կենտրոնի ծրագրերի նախկին համակարգող **Մերի Նավասարդյանի** գնահատմամբ՝ այս ամենը նաև լավ հիմք է ստեղծում հետագայում ԴԱԱԴ–ի գործունեության համար արդեն բարձրագույն կրթության ոլորտում՝ ներառյալ միջբուհական ակադեմիական շարժունությունը:⁹ Վերջինս ոչ միայն անհատական մասնագիտական կատարելագործման, աշխարհաձանաչողության և միջմշակութային հաղորդակցության ու փոխհարստացման հիմնարար միջոց է, այլ նաև տարբեր երկրների բուհերի միջև համագործակցության առանցքային խթանիչը:

Ներկայումս գերմանական ու հայաստանյան բուհերի միջև ինստիտուցիոնալ համագործակցությունն ակտիվ զարգանում է: Պաշտոնական տվյալների համաձայն՝ գերմանական 34 և հայաստանյան 16 բուհերի միջև այս պահին գործում է 47 համագործակցային ծրագիր, իսկ ԵՄ–ի «Էրազմուս+» ծրագրի շրջանակ-

⁸ DAAD, DAAD Globus Länderbericht – Armenien, Bonn: DAAD, 2022, S. 5:

⁹ Նավասարդյան Մ., *Գերմանական ակադեմիական փոխանակության ծառայության գործունեությունը Հայաստանում*, [Հարցազրույց], 13 07 2022:

ներում գերմանական բուհերը մասնակցում են միջբուհական համագործակցության 30 ծրագրերից 11-ին:¹⁰

Ակադեմիական փոխանակության ոլորտում ամենամասշտաբային գործունեությունն ինչպես ողջ աշխարհում, այնպես էլ Հայաստանում ծավալում է ԴԱԱԴ-ը: Ավելին՝ երբեմն գերմանական այլ կառույցների դրամաշնորհային ծրագրերը ևս համակարգվում են ԴԱԱԴ-ի կողմից: ԴԱԱԴ-ը ոչ միայն հայաստանյան բուհերի հետագոտողներին և ուսանողներին է մուտքի հնարավորություն տալիս գերմանական գիտական համայնք, այլ նաև հակառակը՝ նպաստում է գերմանական բուհերի միջազգայնացմանը: ԴԱԱԴ-ի «Ռազմավարություն 2025-ի» համաձայն՝ առաջիկա տարիների համար ԴԱԱԴ-ի գործունեության գլխավոր նպատակներ են սահմանվել՝

1. միջազգային փոխանակման միջոցով կրթության ու գիտության կատարելագործմանը նպաստելն ու հեռանկարների ընդլայնումը,

2. միջազգային համագործակցության ընդլայնումը՝ հանուն գիտության, արդյունաբերության և հասարակության,

3. գլոբալ հանձնառության ստանձնումը և սեփական ներդրումը զարգացման ու խաղաղության գործում:

Ըստ այդմ՝ գործունեության ռազմավարական ուղղություններ են սահմանվել ողջ աշխարհում ներուժ ունեցող մասնագետների բացահայտումն ու աջակցությունը, բուհական ակադեմիական ռազմավարական ցանցի ամրապնդումը, փորձաքննության տրամադրումը բուհերին և գործընկեր կազմակերպություններին՝ թիրախավորելով բարձրագույն կրթության ու գիտության միջազգայնացումը, գերմաներենի՝ որպես գիտության լեզվի և Եվրո-

¹⁰ DAAD, DAAD Globus Länderbericht – Armenien, Bonn: DAAD, 2022, S. 5:

պայի՝ որպես բազմալեզվության կենդանի օրինակի, գիտական և ակադեմիական ազատության խթանումը և այլն:¹¹

Ինչպես նշում է Մերի Նավասարդյանը, ԴԱԱԴ-ն սկսել է «ներթափանցել» Հայաստանի բարձրագույն կրթության ոլորտ 1996–97 թթ., երբ ԴԱԱԴ-ի դասախոս Թոմաս Բլումենտաթը սկսեց գերմաներեն դասավանդել ԵՊՀ-ում և զուգահեռաբար խորհրդատվություն մատուցել ԴԱԱԴ-ի կրթաթոշակային ծրագրերին դիմելու հարցով ու կազմակերպել գերմաներենի քննություն այդ ծրագրերին դիմելու համար: 2002 թ. Երևանում գրասենյակի բացումից հետո ԴԱԱԴ-ն աստիճանաբար իր հովանու տակ վերցրեց բարձրագույն կրթության ոլորտում հայ-գերմանական համագործակցության գրեթե ամբողջ փաթեթը: Սկզբնապես հիմնական շեշտադրումը գերմաներենի և գերմանագիտության զարգացման ու տարածման վրա էր: ԴԱԱԴ-ի գլխավոր նպատակներից էր հասնել գերմաներենի ու գերմանագիտության ուղղությամբ բարձրագույն կրթության ոլորտում հայ-գերմանական համագործակցության բարձր մակարդակի ինստիտուցիոնալացման: Այդ ուղղությամբ արժանահիշատակ է ԵՊՀ և Մանհեյմի համալսարանի միջև երկարամյա համագործակցությունը, այսօր էլ Բյուրսովի անվ. համալսարանն է փորձում Հայդելբերգի համալսարանի ու վրացական կողմի մասնակցությամբ մեկնարկել գերմանագիտության ոլորտում միջինստիտուցիոնալ եռակողմ ծրագիր: Այդուհանդերձ, Նավասարդյանի գնահատմամբ՝ ԴԱԱԴ-ի այդ գերնպատակը լիարժեք չի իրագործվել՝ մնալով առավելապես անհատական մասնակցության մակարդակի վրա:

¹¹ DAAD, Strategy 2025, Bonn/Berlin: Deutscher Akademischer Austauschdienst, 2022, S. 9:

Արդեն 2011–2012 թվականներից սկսած նաև ԴԱԱԴ–ի հետաքրքրության որոշակի աճ նկատվեց ճշգրիտ և բնական գիտությունների նկատմամբ: Դրա շնորհիվ ի հայտ եկավ, օրինակ, «Վիզուալ հաշվարկ» ծրագիրը ԵՊՀ և Ռոստոկի համալսարանի միջև:

Ըստ Նավասարդյանի՝ իրազեկման արշավների շնորհիվ տարիների ընթացքում ԴԱԱԴ–ը դարձավ արտասահմանում ուսանելու և հետազոտելու համար կրթաթոշակներ տրամադրող ամենաձանաչելի կառույցը: Դրա մասին են վկայում թե՛ տարբեր ծրագրերին դիմորդների թվի համեմատությունը, թե՛ հենց ԴԱԱԴ–ի ծրագրերին դիմորդների թվի աճը:¹²

Ուսումնասիրելով ԴԱԱԴ–ի հարավկովկասյան գրասենյակի տրամադրած վիճակագրական տվյալները¹³, նկատում ենք վերջին 5 տարիների կտրվածքով ԴԱԱԴ–ի կրթաթոշակային ծրագրերին դիմորդների և կրթաթոշակակիրների թվի նվազում, բայց, զուգահեռաբար, տոկոսային աճ՝ դիմորդների թվի համեմատ (տե՛ս Աղյուսակ 1):

¹² Նավասարդյան Մ., *Գերմանական ակադեմիական փոխանակության ծառայության գործունեությունը Հայաստանում*, [Հարցազրույց], 13. 07. 2022:

¹³ DAAD Regional Office Tbilisi, **DAAD Scholarship holders 2018–2022**, Electronic, 2022.

**Աղյուսակ 1. ԴԱՄԴ–ի ծրագրերին դիմորդների և
կրթաթոշակակիրների թիվը 2017–2021 թթ.**

ՏԱՐԻ	ԴԻՄՈՐԴ	ԹՈՇԱԿԱԿԻՐ
2017	310	79 (25,4 %)
2018	345	89 (25,7 %)
2019	287	82 (28,5 %)
2020	156	57 (36,5 %)
2021	136	53 (38,9 %)
ԸՆԴԱՄԵՆԸ	1234	360 (29,1 %)

Նվազման գլխավոր պատճառներից մեկը թերևս COVID–19 համաճարակն էր, որի պատճառով չեղարկվեցին կամ սառեցվեցին արդեն հաստատված կրթաթոշակները, կասեցվեցին ծրագրերը: Ակնկալելի է, որ համաճարակային սահմանափակումների մեղմացումից հետո կրթաթոշակակիրների տարեկան թվերը կսկսեն աճել:

Աղյուսակ 2–ից երևում է նաև, որ ամենաշատ կրթաթոշակները, ինչպես նախկինում, այսօր էլ հատկացվում են գերմաներենի կատարելագործմանն ուղղված ամառային կամ ձմեռային դպրոցներին: Երկրորդ տեղում գերմանական բուհերում մագիստրոսական ուսում ստանալու հնարավորություն տվող կրթաթոշակներն են: Իսկ երրորդ տեղում կարճաժամկետ և բուհական դասախոսներին տրվող հետազոտական կրթաթոշակներն են: Ընդհանուր առմամբ դիմորդների ու կրթաթոշակակիրների թվի նվազմանը զուգահեռ նկատելի է նաև կրթաթոշակների բոլոր նշված տեսակների քանակական նվազում:

Աղյուսակ 2. ԴԱՄԴ կրթաթոշակակրի թիվը (ըստ ծրագրի տեսակի)

		2018	2019	2020	2021	2022	Ընդամենը
1	Գերմաներենի կուրսեր	46	53	60	43	43	245 (68 %)
2	Մագիստրոսական	12	12	10	7	5	46 (12.7 %)
3	Մագիստրոսական (տնտեսագիտություն)	4	3	2	2	1	12 (3.3 %)
4	Դոկտորական	1	2	1	0	1	5 (1.3 %)
5	Կարճաժամկետ հետազոտություն	8	5	5	2	1	21 (5.8 %)
6	Երկարաժամկետ հետազոտություն	2	3	1	0	0	6 (1.6 %)
7	Հետազոտություն դասախոսների համար	6	11	3	3	2	25 (6.9 %)

Նավասարդյանի տեղեկացմամբ՝ ԴԱՄԴ-ի կրթաթոշակային ծրագրերի ցանկը ժամանակի ընթացքում ընդլայնվել է, կատարելագործվել է այդ ծրագրերին դիմելու կարգը: Ավելին՝ ԴԱՄԴ-ը նաև ծրագրեր է ֆինանսավորում կրթաթոշակակիր-շրջանավարտների համար, օրինակ, դասախոսությունների նպատակով 3–4 օրով Հայաստանում հյուրընկալելով գերմանացի պրոֆեսորների, շրջայց–իրազեկման արշավներ կազմակերպելով Հայաստանի մարզերում, ինչպես նաև նախկին կրթաթոշակակիրների մասնակցությամբ վարպետաց դասեր:¹⁴

Այսօր ԴԱՄԴ-ը ֆինանսավորում է նաև թեմատիկ ծրագրեր: Դրանցից է «Արևելք–Արևմուտք երկխոսությունը»՝ ուղղված հակամարտությունների կանխարգելմանն ու կառավարմանը, երկխոսության և փոխըմբռնման խթանմանը, որի շրջանակներում

¹⁴ Նավասարդյան Մ., *Գերմանական ակադեմիական փոխանակության ծառայության գործունեությունը Հայաստանում* [Հարցազրույց], 13. 07. 2022:

2021 թ.-ին ԴԱԱԴ-ն աջակցել է երկրաբանության ոլորտում գերմանական կողմից Գիսենի համալսարանի և հայկական կողմից Երևանի պետական համալսարանի ու ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի համագործակցությանը, որին մասնակցում էին նաև վրացական և ադրբեջանական բուհերը: ԴԱԱԴ-ն աջակցել է նաև Վայինշտեֆան-Թրիսդորֆի կիրառական գիտությունների համալսարանի և Հայաստանի ազգային ագրարային համալսարանի համագործակցային ծրագրին, որը ենթադրում է գերմանական բուհում ամբողջովին գերմանալեզու դասընթացներ հայկական գործընկեր-բուհի ուսանողների համար: Վերջին տարիներին ակտիվ զարգանում է նաև հայ-գերմանական միջբուհական համագործակցությունը ԴԱԱԴ-ի «Արևելյան գործընկերություններ» ծրագրի շրջանակներում: 2021 թ. դրությամբ բոլոր կամ առանձին մասնագիտությունների գծով գործել է այդպիսի 5 համագործակցային ծրագիր հայկական ու գերմանական բուհերի միջև:¹⁵

Մերի Նավասարդյանը նշում է, որ սկզբնապես ԴԱԱԴ-ի հայաստանյան դիմորդների մեծ մասը Բժշկական համալսարանի ուսանողներն էին, իսկ Գերմանիայից Հայաստան եկողների մեծ մասը կարճաժամկետ կամ երկարաժամկետ ծրագրով դասախոսներ էին՝ հիմնականում գերմաներենի մասնագետներ, բայց նաև, օրինակ, սոցիոլոգներ, իրավագետներ:¹⁶

ԴԱԱԴ-ի տարածաշրջանային գրասենյակի տրամադրած վիճակագրության մեջ մեզ հետաքրքրում էր նաև, թե վերջին շրջանում հայաստանյան որ բուհերի ուսանողներն ու դասախոս-

¹⁵ DAAD, DAAD Globus Länderbericht – Armenien, Bonn: DAAD, 2022, S. 11:

¹⁶ Նավասարդյան Մ., *Գերմանական ակադեմիական փոխանակության ծառայության գործունեությունը Հայաստանում* [Հարցազրույց], 13. 07. 2022:

ներն են ավելի հաճախ մասնակցում ԴԱԱԴ-ի կրթաթոշակային մրցույթներին: Համադրելով 2018–2022 թթ. տվյալները (տե՛ս Աղյուսակ 3)՝ տեսնում ենք, որ առաջատար եռյակը գլխավորում է Երևանի պետական համալսարանը (կրթաթոշակների 29,9 %), որին հաջորդում է Բրյուսովի անվ. համալսարանը (17,3 %), ապա՝ Հերացու անվ. բժշկական համալսարանը (15,5 %):

**Աղյուսակ 3. ԴԱԱԴ-ի կրթաթոշակակիրների թիվը
(ըստ բուհերի)**

		2018	2019	2020	2021	2022	ԸՆԴԱՄԵՆԸ
1	ԵՊՀ	23	34	20	9	16	102
2	ԲՊՀ	6	14	16	11	12	59
3	ԵՊԲՀ	11	12	11	14	5	53
4	ՀՖՀՀ	4	5	3	8	8	28
5	ՀԱՀ	5	5	9	3	3	25
6	ՀՊՏՀ	3	2	4	6	1	16
7	ՀՌՀ	2	4	3	3	2	14
8	ՀՊՄՀ	2	2	3	1	1	9
9	ՀՀ ԳԱԱ	1	3	2	1	1	8
10	ՎՊՀ	1	2	3	0	1	7

Որպես ուսումնասիրության օբյեկտ նշված բուհերից առանձնացրել ենք ԵՊՀ-ն՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ այն տևական ժամանակ գլխավորում է ԴԱԱԴ կրթաթոշակներ ստացող բուհերի ցուցակը, և ապա, ի տարբերություն նշվածներից շատերի, ԵՊՀ-ն տրամադրում է համընդհանուր՝ բնական, ճշգրիտ և հասարակագիտական բարձրագույն կրթություն:

3. ԵՊՀ համագործակցությունը գերմանական բուհերի հետ

Գերմանիան ԵՊՀ միջազգայնացման գլխավոր ուղղություններից մեկն է թե՛ միջինստիտուցիոնալ համագործակցության, թե՛ ակադեմիական փոխանակության տեսանկյուններից: ԵՊՀ միջազգային համագործակցության վարչության տրամադրած տվյալների համաձայն այս պահին ԵՊՀ–ն ունի միջինստիտուցիոնալ համագործակցության պայմանագիր գերմանական շուրջ 25 բուհի հետ:¹⁷ Միջազգային միջբուհական համագործակցության զարգացածության բարձր մակարդակի գլխավոր ցուցիչը կրթական համատեղ ծրագրերի առկայությունն է: Այդ ոլորտում հիշարժան օրինակներից մեկը ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետում «Սոցիալական աշխատանք» մասնագիտությամբ կրթական ծրագիրն է: Այն ներդրվել է դեռևս 1990–ական թթ. կեսերին ԵՄ «Տեմպուս» ծրագրի շրջանակներում ֆակուլտետի այն ժամանակվա ղեկան, պրոֆեսոր Լյուդմիլա Հարությունյանի ջանքերով և Մայնի Ֆրանկֆուրտի կիրառական գիտությունների համալսարանի Սոցիալական աշխատանքի դպրոցի ու Լոնդոնի տնտեսագիտության դպրոցի հետ համագործակցությամբ: Ընդհանրապես սոցիոլոգիայի ֆակուլտետը ԵՊՀ–ի բավական միջազգայնացված ֆակուլտետներից է: Այն համագործակցության մեծ փորձ ունի Գերմանիայի Բիլեֆելդի, Բեռլինի Հումբոլդտի, Մյունխենի, Պոստդամի, Կասելի, Լայպցիգի, Օլդենբուրգի, Բոխումի Ռուիռի,

¹⁷ ԵՊՀ Միջազգային համագործակցության վարչություն, *ԵՊՀ հետ համագործակցության հուշագիր ունեցող գերմանական բուհերի ցուցակ*, Երևան, ԵՊՀ, 2022:

Կոնստանցի, Մայնի Ֆրանկֆուրտի և Լյուդվիգսհաֆենի կիրառական գիտությունների համալսարանների հետ:¹⁸

Համատեղ ծրագրի ևս մի ուշագրավ փորձ 2010 թ. ԵՊՀ տեղեկատվական տեխնոլոգիաների կրթական և հետազոտական կենտրոնի ու Գերմանիայի Ռոստոկի համալսարանի «Վիզուալ հաշվարկ» (Visual Computing) մագիստրոսական համատեղ ծրագրի մեկնարկն էր: Այն ներդրվել է կենտրոնի գիտական ղեկավար ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Սամվել Շուքրոյանի և Ռոստոկի համալսարանի ինֆորմատիկայի և էլեկտրոտեխնիկայի ֆակուլտետի ղեկան, պրոֆեսոր Զամշիդ Թավանգարիանի ջանքերով ու ԴԱԱԴ-ի ֆինանսավորմամբ: Ինչպես մեզ հետ զրույցում նշեց կենտրոնի տեղեկատվական համակարգերի ամբիոնի դասախոս **Ելենա Պետրոսյանը**,¹⁹ ծրագիրն ուներ նորարարական չորս կողմ: Նախ՝ հայկական իրականության մեջ վիզուալ հաշվարկն ինֆորմատիկայի ոլորտում ինքնին նոր մասնագիտացում է: Երկրորդ՝ երկամյա ուսումնառության առաջին երեք կիսամյակները կազմակերպվում էին Հայաստանում՝ ԵՊՀ-ում, իսկ վերջին՝ չորրորդ կիսամյակը Գերմանիայում՝ Ռոստոկի համալսարանում: Երրորդ նորարարականությունն ուսուցման ձևն էր. այն համակցում էր անցանց, առցանց և հեռավար մեթոդները: Դասերի անցկացման ավանդական ձևերին զուգահեռ ԵՊՀ-ում ուսումնառության ընթացքում դասերի մի մասն առցանց ու հեռավար մեթոդներով անգլերենով անցկացնում էին Ռոստոկի համալսարանի գործընկեր դասախոսները: Այդ դասախոսությունները նաև ձայնագրվում էին՝ դառնալով ուսանողների համար ուսումնական

¹⁸ Մկրտիչյան Ա., *Հարցազրույց պրոֆեսոր Արթուր Մկրտիչյանի հետ*, 19. 07. 2022:

¹⁹ Պետրոսյան Ե., «Վիզուալ հաշվարկ», *Երևանի պետական և Ռոստոկի համալսարանի համագործակցության փորձառությունից*, 15. 07. 2022:

նյութ: Մագիստրոսական ատենախոսության պաշտպանությունն իր հերթին անց էր կացնում Երևանի պետական և Ռոստոկի համալսարանների դասախոսներից բաղկացած խառը հանձնաժողովը՝ անցանց-առցանց համակցված ռեժիմով և տեսահաղորդակցության նոր տեխնոլոգիաների կիրառմամբ: Եվ, վերջապես, չորրորդ նորարարականությունն այն էր, որ ծրագրի շրջանավարտների երեք սերունդ ստացել են կրկնակի՝ ԵՊՀ-ի և Ռոստոկի համալսարանի դիպլոմներ:

Ոչ պակաս ուշագրավ են նաև ակադեմիական շարժունության ցուցանիշները: Վիճակագրական տվյալների համաձայն²⁰ 2016–2021 թթ. ընթացքում ԵՊՀ-ից արտասահմանյան գործուղումների թիվը կազմել է 1792, որի մի կեսը ուսանողների, մյուս կեսը դասախոսների գործուղումներ (տե՛ս նաև Աղյուսակ 4):

Աղյուսակ 4. ԵՊՀ-ից արտասահմանյան գործուղումներն ըստ ուս. տարիների (2016–2021 թթ.)

	2016/17	2017/18	2018/19	2019/20	2020/21	ԸՆԴԱՄԵՆԸ
Մասնագետ	249	202	260	156	17	884
Ասպիրանտ	10	7	14	10	3	44
Ուսանող	198	196	286	160	24	864
ԸՆԴԱՄԵՆԸ	457	405	560	326	44	1792


Համեմատելով գործուղումների աշխարհագրությունը (տե՛ս Աղյուսակ 5 և Գծապատկեր 1)՝ տեսնում ենք, որ գործուղման երկրների առաջատար հնգյակը հինգ տարվա կտրվածքով գլխա-

²⁰ ԵՊՀ Միջազգային համագործակցության վարչություն, *Արտասահմանյան գործուղումների վիճակագրություն. 2016–2021 թթ.*, Երևան, ԵՊՀ, 2022:

վորում է Ռուսաստանը, որին հաջորդում են Գերմանիան, ապա՝ Վրաստանը: Սակայն ուշագրավ է նաև, որ 2017–2018 և 2020–2021 ուսումնական տարիներին առաջատար երկիրը եղել է Գերմանիան:

**Աղյուսակ 5. ԵՊՀ արտասահմանյան գործուղումների
աշխարհագրական ուղղությունները**

		2016/17	2017/18	2018/19	2019/20	2020/21	Ընդամենը
1	Ռուսաստան	73	45	66	45	13	242
2	Գերմանիա	47	79	51	33	16	226
3	Վրաստան	33	42	40	44	0	159
4	Ֆրանսիա	36	23	37	33	8	137
5	Իտալիա	21	27	34	16	0	98




Գերմանիա գործուղվածների կեսից քիչ ավելին պրոֆեսորա-դասախոսական կազմի ներկայացուցիչներ են: Քանակական ցուցանիշով նրանց հաջորդում են ուսանողները (տե՛ս Աղյուսակ 6 և Գծապատկեր 2):

Աղյուսակ 6. Գերմանիա գործուղվածների կարգավիճակը

	2016/17	2017/18	2018/19	2019/20	2020/21	Ընդամենը
Մասնագետ	27	42	30	17	2	118
Ասպիրանտ	1	2	2	2	2	9
Ուսանող	19	35	19	14	12	99
Ընդամենը	47	79	51	33	16	226

Գծապատկեր 2 Գերմանիա գործուղվածների համեմատությունն ըստ կարգավիճակի, 2016–2021



ԵՊՀ-ից միայն ԴԱԱԴ-ի ծրագրերով Գերմանիա ուսումնական կամ հետազոտական կրթաթոշակների բաշխվածությունն ըստ մասնագիտությունների (ֆակուլտետների) արտացոլված է Աղյուսակ 7-ում:²¹

²¹ DAAD Regional Office Tbilisi, *DAAD Scholarship holders 2018–2022*, Electronic, 2022.

**Աղյուսակ 7. ԴԱՄԴ-ի կրթաթոշակակիրների բաշխումն ըստ
ԵՊՀ ֆակուլտետների**

		2018	2019	2020	2021	2022	ԸՆԴԱՄԵՆԸ
1	Եվրոպական լեզուներ և հաղորդակցություն	7	10	7	2	10	36 (35,2 %)
2	Միջազգային հարաբերություններ	3	2	6	2	1	14 (13,7 %)
3	Կենսաբանություն	3	6	1	1	1	12 (11,7 %)
4	Մաթեմատիկա և մեխանիկա	2	3	0	2	0	7 (6,8 %)
5	Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա	0	4	1	0	0	5 (4,9 %)
6	Ֆիզիկա	2	0	1	0	2	5 (4,9 %)
7	Փիլիսոփայություն և հոգեբանություն	1	2	0	1	1	5 (4,9 %)
8	Տնտեսագիտություն և կառավարում	1	2	1	0	0	4 (3,9 %)
9	Արևելագիտություն	1	1	1	0	0	3 (2,9 %)
10	Իրավագիտություն	1	1	0	0	1	3 (2,9 %)
11	Քիմիա	0	1	1	1	0	3 (2,9 %)
12	Սոցիոլոգիա	0	1	1	0	0	2 (1,9 %)
13	Աշխարհագրություն և երկրաբանություն	1	0	0	0	0	1 (0,9 %)
14	Մանկավարժության և կրթության կազմակերպում	1	0	0	0	0	1 (0,9 %)
15	Ռադիոֆիզիկա	0	1	0	0	0	1 (0,9 %)

Ինչպես և ենթադրելի էր, գործուղումների հարաբերական մեծամասնությունը բաժին է ընկնում ԵՊՀ եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետին, որը գլխավորել է ցուցակը բոլոր տարիներին: Նրան հաջորդում են միջազգային հարաբերությունների, կենսաբանության, մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետները, իսկ առաջատար հնգյակի 5–րդ հորիզոնականը եզրափակում են միաժամանակ երեք ֆակուլտետներ՝ ինֆոր-

մատիկայի և կիրառական մաթեմատիկայի, ֆիզիկայի, փիլիսոփայության և հոգեբանության:

Քանի որ վերջին տարիներին «Էրազմուս+»-ի շրջանակներում ևս ակտիվացել է ԵՊՀ ու գերմանական գործընկեր բուհերի միջև շարժունությունը, ԵՊՀ միջազգային համագործակցության վարչությունից խնդրեցինք նաև այդ ուղղությամբ վիճակագրական տվյալներ: Ըստ այդմ²²՝ «Էրազմուս+»-ով ակադեմիական շարժունության ամենահին ու ակտիվ ուղղությունը Սաարլանդի համալսարանն է. 2018–2022 թթ. ԵՊՀ-ից այդ համալսարան 12 գործուղում է եղել: Նրան հաջորդում են Յենայի Ֆրիդրիխ Շիլլեր համալսարանն ու Բեռլինի Ալեքսանդր Ֆոն Հումբոլդտ համալսարանը: Վերջիններիս հետ փոխանակությունն «Էրազմուս+»-ով սկսվել է 2020 թվականից: Ընդհանուր առմամբ՝ այդ երկու ուղղություններով ձևակերպվել են 5-ական գործուղումներ և 2-ական էլ՝ հակառակ ուղղությամբ: Եվ, վերջապես, երրորդ ուղղությունը Լյուդվիգսհաֆենի տնտեսության և հասարակության համալսարանն է, որտեղ 2021–2022 թթ. ձևակերպվել է 4 գործուղում:

4. Ակադեմիական շարժունության անհատական փորձառություն

Գերմանական բուհերի հետ համագործակցության բովանդակային առանձնահատկությունները և դրա ազդեցությունը հայաստանյան գիտակրթական միջավայրի վրա վեր հանելու նպատակով՝ քանակական վերոբերյալ տվյալներին զուգահեռ անհրաժեշտ են որակական տվյալներ: Վերջիններս ձեռք բերելու համար մենք ԵՊՀ-ի հետ կապակցված, տարբեր գիտություններ ներկա-

²² ԵՊՀ Միջազգային համագործակցության վարչություն, ԵՊՀ-ից «Էրազմուս+» ծրագրով գործուղումների վիճակագրություն, 2018–2022 թթ., Երևան, ԵՊՀ, 2022:

յացնող՝ բնական, ճշգրիտ ու հասարակական, և գերմանական բուհեր ակադեմիական շարժունության (ուսումնական և հետազոտական) փորձ ունեցող մի շարք անձանց հետ անցկացրինք փորձագիտական խորքային հարցազրույցներ երեք հարցախմբերով՝ ինչպե՞ս է ազդել շարժունությունը նրանց մասնագիտական և աշխատանքային գիտելիքների, հմտությունների, հայացքների վրա, ինչպե՞ս է այդ ազդեցությունն արտածվել նրանց մասնագիտական-աշխատանքային միջավայրի վրա, և ի՞նչ խնդիրներ են տեսել/տեսնում հայ-գերմանական միջբուհական համագործակցության մեջ:

4.1 Ակադեմիական շարժունության ազդեցությունը

Ընդհանուր առմամբ, ինչպես Մերի Նավասարդյանն է ընդհանրացնում, գերմանական բուհերում հայաստանցի ուսանողներն ու դասախոս-հետազոտողները սովորում են սովորել, հետազոտելու հիմունքներ, օգտվել գրադարանից, լաբորատորիաներից, թանկարժեք սարք-սարքավորումներից:²³

Դա հաստատում են նաև մեր ռեսպոնդենտները: Այսպես, «Օրակլ» ընկերության տարածաշրջանային խմբի ղեկավար **Աննա Վարդանյանցը**, 2010 թ. գերազանցությամբ ավարտելով ԵՊՀ տնտեսագիտության ֆակուլտետի բակալավրիատը, ԴԱԱԴ-ի երկամյա կրթաթոշակային ծրագրով ուսումը շարունակել է Գերմանիայի Տրիերի համալսարանի մագիստրատուրայում: Թեև Հայաստանում նա գերազանց է սովորել, բայց միայն Գերմանիայում է հասկացել՝ ինչպես սովորել: Նրա խոսքերով, եթե ԵՊՀ-ում տրվում է ընդհանուր գիտելիք, որը պետք էր յուրացնել

²³ Նավասարդյան Մ., *Գերմանական ակադեմիական փոխանակության ծառայության գործունեությունը Հայաստանում*. [Հարցազրույց]. 13. 07. 2022:

և քննության ժամանակ գրեթե նույնությամբ «վերադարձնել» դասախոսին, ապա Գերմանիայում սովորեցնում էին գիտելիք ստանալու ձևերը, և դրա պահանջները ևս այլ էին: Կարևոր էր ոչ թե այն, թե ումից, որտեղից ես ստացել գիտելիքը, այլ այն, որ դու կարողացել ես ստացած տեղեկությունը վերածել գիտելիքի ու ներկայացնել այն. «Հկար հարցաշար, որով կարող էիր թեմաներ անգիր անել, պատասխանել քննության ժամանակ ու գնահատական ստանալ: Առանց գիտելիքի՝ գնահատական չէիր կարող ստանալ»: Վարդանյանցի գնահատմամբ՝ Հայաստանում այդ ամենը շատ նեղ, շրջանակավորված, «հարցաշարային» մոտեցումներով էր իրականացվում, մինչդեռ Գերմանիայում դու այդ հարցերում ազատ ես»:

Վարդանյանցի նկատած մյուս առանցքային տարբերությունը մեծ թվով դասընթացների կամընտրականությունն է. եթե հայաստանյան բուհերի կրթական ծրագրերի դասընթացները, դրանց դասավանդման կիսամյակները նախապես արդեն որոշված են «վերևից», ապա Գերմանիայում ուսանողն ինքն է որոշում՝ որ կիսամյակում ինչ դասընթացներ վերցնել: Սակայն Վարդանյանցի գնահատմամբ դա առավելություն է միայն այն դեպքում, եթե ուսանողը լավ իրազեկված է և կարող է «հավաքել» իրեն իսկապես անհրաժեշտ, փոխկապակցված ու փոխլրացնող դասընթացների փաթեթ: Բացի դրանից՝ ինչպես Հայաստանում, այնպես էլ Գերմանիայում կան դասախոսներ, որոնք, հասնելով գիտելիքի ինչ-որ մակարդակի, դադարում են ինքնակատարելագործվել:

Գերմանական կենցաղային մշակությամբ Վարդանյանցին խիստ տպավորել են շիտակությունը, պարտաճանաչությունը, հստակությունը, կազմակերպվածությունը, որոնք, սակայն, նաև

խնդիրներ են ծնում մանր, անգամ կենցաղային հարցերը բարդացնելու, բյուրոկրատացնելու պատճառով:²⁴

Մեր մյուս ռեսպոնդենտը՝ Լեւիսիուսի տուն-արխիվի գիտաշխատող **Հայկ Մարտիրոսյանը**, ավարտելով ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի մագիստրատուրան, իր առաջին՝ 2011 թ. ԴԱԱԴ-ի կրթաթոշակով 10-ամսյա հետազոտություն է իրականացրել Էրլանգեն-Նյուրնբերգի Ֆրիդրիխ Ալեքսանդր համալսարանում: Այդ այցը նա համարում է իր մասնագիտական ու աշխատանքային կյանքի համար շրջադարձային. դրա արդյունքում նա, իր խոսքերով, մի կողմից հասկացել է իսկական գիտական-ակադեմիական մշակույթը՝ արխիվային նյութերի հիման վրա հետազոտական աշխատանքի էությունը, մեթոդաբանությունը, գիտական բառապաշարը, գիտական բազմակարծությունը: Մյուս կողմից՝ հենց այդ այցի ընթացքում ձեռք բերած նյութի, գիտելիքի ու հմտությունների հիման վրա վերջնականապես կողմնորոշվել, թե կոնկրետ ինչի մասին է ուզում գրել իր ատենախոսությունը: Թեկնածուական ատենախոսությունը Հայաստանում պաշտպանելուց հետո՝ 2014 թ. Կաթոլիկ ակադեմիական արտասահմանյան ծառայության (Katholischer Akademischer Ausländer-Dienst, KAAD-ԿԱԱԴ) մեկամյա ծրագրով Մարտիրոսյանը կրկին մեկնել է Գերմանիա՝ այս անգամ իր մենագրության համար նյութեր հավաքելու նպատակով, որի շնորհանդեսը կազմակերպվել է Հայաստանում Գերմանիայի դեսպանատանը 2016 թվականին:

Շուրջ երկու տարի ապարդյուն փորձելով իր մասնագիտությամբ աշխատանք գտնել Հայաստանի գիտական հաստատություններում՝ 2017 թվականին՝ շնորհիվ նաև Էրլանգեն-Նյուրն-

²⁴ Վարդանյանց Ա., *Երկամյա ուսումնառություն Տրիերի համալսարանի մագիստրատուրայում*, [Հարցազրույց], 16. 08. 2022:

բերգի համալսարանի գերմանահայ պրոֆեսոր Խաչիկ Գազերի (Ղազարյան) երաշխավորության, Մարտիրոսյանը Ավետարանական եկեղեցու (Evangelische Kirche in Deutschland, EKD-ԷԿԴ) մեկամյա հետազոտական կրթաթոշակով կրկին մեկնեց Գերմանիա, ապա աշխատանքի անցավ Պոտսդամի Լեփսիուսի անվան տուն–արխիվում՝ որպես գիտաշխատող:

Գերմանական մշակույթում Մարտիրոսյանին ևս տպավորել են հստակությունն ու պատասխանատվությունը, իսկ Հալլե–Վիտենբերգի Մարտին Լյութեր համալսարանում դասավանդման սեփական ու գործընկերների փորձի հիման վրա նա նշում է գերմանական բուհական կրթության մի քանի հատկանիշներ՝ հետազոտահենք կրթությունը, ինքնուրույն աշխատանքի շեշտադրումը, քննական մտածողությունը, գրադարանային աշխատանքի կարևորությունը, պրոֆեսորների բացությունը: Ավելին՝ նկատվում է, որ շատ բաներ ուսանողները յուրացնում են դեռ դպրոցում:²⁵

ԵՊՀ քաղաքագիտության ամբիոնի վարիչ պրոֆեսոր **Աշոտ Ալեքսանյանը** ԵՊՀ–ի՝ գերմանացի գործընկերների հետ անհատական ակադեմիական փոխգործակցության հարուստ փորձ ունեցող մասնագետներից է: 2002 թ.–ից սկսած՝ հիմնականում ԴԱԱԴ–ի, բայց նաև ԵՄ «Էրազմուս» ծրագրի շրջանակներում նա՝ որպես հրավիրված գիտնական, եղել է Հանովերի (2002–2003 թթ., 2008–2009 թթ.), Մյունխենի (2013 թ.) և Յենայի համալսարանների (2016–2017 թթ., 2020 թ., 2021–2022 թթ.) Քաղաքագիտության ինստիտուտներում, Բեռլինի ազատ համալսարանի Արևելյան Եվրոպայի ուսումնասիրությունների ինստիտուտում (2016 թ.): Պրոֆեսոր Ալեքսանյանի գնահատմամբ՝ այդ այցերից

²⁵ Մարտիրոսյան Հ., *Հարցազրույց Լեփսիուսի տուն–արխիվի գիտաշխատող Հայկ Մարտիրոսյանի հետ*, 23. 07. 2022:

յուրաքանչյուրն իր ներդրումն է ունեցել նրա մասնագիտական գիտելիքների և հմտությունների զարգացման գործում: Առաջին այցերը մեծ նշանակություն են ունեցել՝ հարստացնելով նրա գիտելիքներն իր մասնագիտացման թեմայի շրջանակներում, որը արդյունք էր թե՛ ահռելի գրադարանային պաշարներին մուտքի հնարավորության, թե՛ փորձառու գործընկերների, հատկապես պրոֆեսոր Քրիստիանն Լեմկեի հետ ունեցած մասնագիտական քննարկումների:

Ալեքսանյանը նաև ունկնդրել է իր մասնագիտական թեմայով դասախոսություններ, ուսումնասիրել դրանց ծրագրերը, պատճենել և Հայաստան բերել մեծ քանակությամբ մասնագիտական նյութեր: Դա ևս բեկումնային նշանակություն է ունեցել, քանի որ Ալեքսանյանը յուրացրել ու կատարելագործել է այդ ժամանակ դեռևս Հայաստանում չկիրառվող դասավանդման որոշ մեթոդներ ու հմտություններ:

Գիտական մշակույթի տեսանկյունից Ալեքսանյանի վրա մեծ տպավորություն է թողել գերմանացի գործընկերների խիստ բարձր պատասխանատվության զգացումն ու համապատասխան վերաբերմունքն իրենց մասնագիտական-աշխատանքային պարտականությունների հանդեպ: Այդ այցերի շնորհիվ է նաև Ալեքսանյանը ճանաչել ու յուրացրել իսկական հետազոտական աշխատանքի կանոնները, որոնք Հայաստանում այդ ժամանակ պակաս ուշադրության էին արժանանում:²⁶

Տողերի հեղինակ, ԵՊՀ քաղաքագիտության ամբիոնի դոցենտ **Նարեկ Գալստյանը՝** որպես հրավիրյալ հետազոտող, ԴԱԱԴ կրթաթոշակային ծրագրով 2009 և 2013 թթ. եղել է Ենայի համալ-

²⁶ Ալեքսանյան Ա., *Հարցազրույց պրոֆեսոր Աշոտ Ալեքսանյանի հետ*, 27.07.2022:

սարանի Քաղաքագիտության ինստիտուտում: 2018 թ. ԴԱԱԴ-ի «Արևելյան գործընկերություններ» ծրագրով Գալստյանը և ԵՊՀ գիտական քարտուղար Մենուա Սողոմոնյանն ուսումնասիրել են Ենայի համալսարանի Քաղաքագիտության ինստիտուտում բա-կալավրի և մագիստրոսի կրթության կազմակերպումը, կրթական ծրագրերի, ուսումնական պլանների մշակումը, առանձին դասըն-թացների կազմակերպումը: Իսկ 2022 թ. ԵՄ «Էրազմուս +» ծրագ-րով Գալստյանը դասախոսություններ է կարդացել Ենայի համալ-սարանի Քաղաքական գիտությունների ինստիտուտի բակալավ-րիատի և մագիստրատուրայի ուսանողների համար:

Բոլոր այդ այցերը՝ շնորհիվ հրավիրող պրոֆեսոր Օլաֆ Լայ-սեի ու նրա ընտանիքի համակողմանի աջակցության և նախա-ձեռնողականության (անգամ կենցաղային հարցերում), վճռորոշ նշանակություն են ունեցել թե՛ Գալստյանի մասնագիտական գի-տելիքների ու հմտությունների զարգացման, թե՛ Գերմանիայի, գերմանական մշակույթի ճանաչողության տեսանկյունից: Նրան ևս գերմանական գիտակրթական մշակույթում մեծապես տպա-վորել են պարտաճանաչությունը, պատասխանատվությունը, կազմակերպվածությունն ու աջակցության պատրաստակամու-թյունը:

Շատ ուշագրավ է ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետի դեկան պրոֆեսոր **Արթուր Մկրտիչյանի** փորձը: Նա երկու անգամ՝ 1997–1998 և 2001–2002 թթ. հետազոտություններ է անցկացրել Գերմանիայում՝ ԴԱԱԴ-ի կրթաթոշակով՝ Բիլեֆելդի համալսա-րանի սոցիոլոգիայի ֆակուլտետում և Բեռլինի սենատի կրթաթո-շակով՝ Բեռլինի Ալեքսանդր Ֆոն Հումբոլդտ համալսարանի Եվ-րոպական Էթնոլոգիայի ու Բեռլինի Ազատ համալսարանի Արևե-լյան Եվրոպայի ինստիտուտներում: Եղել են նաև կարճաժամկետ

այցեր, այդ թվում՝ ԴԱԱԴ–ի կրկնակի հրավերի, ԵՄ–ի «Տեմպուս/Էրազմուս+» ծրագրի շրջանակներում:

Մկրտիչյանի գնահատմամբ՝ 1997–98 թթ. այցն ունեցել է ձանաչողական և իմացական մեծ նշանակություն թե՛ երկրի մշակույթի հետ հաղորդակցվելու, թե՛ մասնագիտական գրականության մեծ պաշարին մուտք ստանալու, թե՛ տեխնիկական միջոցներով աշխատելու առումներով, որոնք Հայաստանում այդ ժամանակ կամ ընդհանրապես բացակայում էին, կամ խիստ սահմանափակ էին: Ժամանակի ընթացքում տեխնոլոգիական զարգացումն էականորեն մեծացրել է այդ հնարավորությունները հայաստանցի հետազոտողի համար, և այսօր գուցե հետազոտական երկարաժամկետ ուղևորության անհրաժեշտություն արդեն չկա:²⁷

Վերջին երկու՝ ԵՊՀ հեռահաղորդակցության և ազդանշանների մշակման ամբիոնի վարիչ դոցենտ **Հովհաննես Հարոյանի** և ԵՊՀ կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի դոցենտ **Հովիկ Փանոսյանի** դեպքերը բնույթով յուրահատուկ են և միմյանց նման: Այսպես՝ Հարոյանը ԴԱԱԴ–ի կրթաթոշակով հետազոտական այցով եղել է Ենայի Ֆրիդրիխ Շիլլեր համալսարանում (2013 թ.) և Լայբնիցի ֆոտոնիկ տեխնոլոգիաների ինստիտուտում (2017, 2018, 2019 թթ.), այնուհետև 2017–2019 թթ. Գերմանիայի կրթության և հետազոտությունների դաշնային նախարարության և ՀՀ Գիտության պետական կոմիտեի համատեղ դրամաշնորհի շրջանակում ղեկավարել է հետազոտական խումբ: Իսկ Փանոսյանը 2013 թ. վերապատրաստում է անցել Մյունխենի Լյուդվիգ–Մաքսիմիլիան համալսարանում և զբաղվել գիտահետազոտական աշխատանքով:

²⁷ Մկրտիչյան Ա., *Հարցազրույց պրոֆեսոր Արթուր Մկրտիչյանի հետ*, 19. 07. 2022:

Անհատական այդ երկու դեպքերն էլ ունեցել են նախապատմություն: Մինչ Հարոյանի՝ պրոֆեսոր Թոմաս Փերչի հրավերով Ենայի նանօպտիկայի լաբորատորիա (2013 թ.) հետազոտական այցը ռադիոֆիզիկայի ֆակուլտետը գերմանական գործընկերների հետ միջխմբային համագործակցության փորձ ուներ: Ուստի՝ ֆակուլտետի դեկան պրոֆեսոր Խաչատուր Ներկարարյանի խորհրդով Հարոյանը մեկնում է Գերմանիա՝ առավելապես ճանաչողական-հետազոտական նպատակներով:

Փանոսյանին իր թեմատիկ հետազոտության շրջանակում գերմանացի գործընկերոջ՝ պրոֆեսոր Թոմաս Կարելի հետ կապ հաստատելու խորհուրդ տվել է ամառային դպրոցներից մեկի ժամանակ դասախոսող մի արտասահմանցի պրոֆեսոր: Վերջինիս հանդիպելու ու հենց տեղում հետազոտության մանրամասները քննարկելու նպատակով էլ Փանոսյանը, օգտագործելով ԴԱԱԴ-ի կարճաժամկետ հետազոտական այցի կրթաթոշակը, 2013 թ. մեկնում է Մյունխենի համալսարան:

Երկու գիտնականների վրա ամենամեծ տպավորությունը թողել են հյուրընկալած գերմանական բուհերի լաբորատորիաները՝ հազեցած ժամանակակից այնպիսի սարք-սարքավորումներով, որոնք Հայաստանում չկան: Ինչպես նկատում է Հարոյանը, դա շատ կարևոր էր, քանի որ եթե տեսական առումով հայ մասնագետները կարող են համաշխարհային մասշտաբով մրցունակ համարվել, ապա փորձարարական տեսանկյունից նրանք անհրաժեշտ սարք-սարքավորումների բացակայության կամ սակավության պատճառով բավական ետ են մնում արտասահմանյան գործընկերներից:²⁸ Հարոյանին շատ է տպավորել նաև գերմանացի գործընկերների լաբորատոր աշխատանքի մշակույթը՝ ինչ է

²⁸ Հարոյան Հ., *Հարցազրույց Հովհաննես Հարոյանի հետ*, 01. 08. 2022:

լաբորատորիան, ինչ կանոններ են գործում լաբորատոր աշխատանքում և այլն: Մյուս տպավորիչ հանգամանքն աշխատելառձն էր. ամեն ինչ շատ հստակ էր ու կարգավորված: Դու գիտեիր՝ երբ ու որ սարք-սարքավորումներով կարող ես աշխատել: Գերմանական գիտահետազոտական խմբերը շատ ավելի զարգացած էին՝ ունեին իրենց ղեկավար-պրոֆեսորը, պրոֆեսորի ասիստենտները, դոկտորանտները, մագիստրանտները՝ բոլորն իրենց հստակ պատասխանատվության շրջանակով: «Առաջին անգամ հենց այդտեղ նկատեցի, որ ուսանողներն աշխատանքային օրվա ավարտին հաճախ տուն չեն գնում, այլ աշխատում են լաբորատորիաներում»,—հիշում է Հարոյանը: Թեև նրա գնահատմամբ՝ հենց օրնիբուն գիտափորձարարական աշխատանքն է գիտության հիմքը, սակայն այդ երևույթը հայկական իրականության մեջ բացակայում է: Այդուհանդերձ, այնտեղ շատ ավելի բարձր էր նույն այդ ուսանողների մոտիվացիան:

Ինչպես նշում են մեր երկու ռեսպոնդենտները, աշխատելառձի ևս մի տպավորիչ բաղադրիչ էին աշխատանքային խմբերի սեմինար-քննարկումները, որոնք անց էին կացվում ամեն շաբաթ, իսկ ենթախմբերի շրջանակներում՝ ավելի հաճախ: Այդ քննարկումների ընթացքում յուրաքանչյուրը ցույց էր տալիս իր առաջընթացը, առաջացած խնդիրները, քննարկում լուծումները, ի հայտ էին գալիս նաև նոր գաղափարներ, դրվում գիտական նոր հրապարակումների հիմքեր: Այդ ամբողջը գիտական մշակույթի մաս էր՝ ինչպես կազմակերպել հետազոտությունը, ինչպես առանձնացնել ու ներկայացնել ընթացիկ ու ամփոփիչ արդյունքները, ինչպես դա դարձնել գիտական հրապարակման նյութ և այլն: Դոցենտ Փանոսյանին տպավորել էր այն հանգամանքը, որ հրավիրող պրոֆեսոր Կարելը նրան լիարժեք ինտեգրել էր լաբորատոր խմբի բոլոր աշխատանքներին՝ անկախ նրանից, որ Փանոսյանն ընդամենը

կարճաժամկետ այցով այնտեղ գտնվող հրավիրված հետազոտող էր: Այցի ընթացքում Փանոսյանին հաջողվեց ոչ միայն իրագործել իր ծրագրածը, այլ «Արվեց ավելին, քան նախատեսված էր: Եվ մեզնից պահանջվեց յոթ տարի այդ երեք ամիսների ընթացքում կուտակված տվյալները վերլուծելու համար»:²⁹

Հարոյանն ու Փանոսյանը գերմանական ու հայաստանյան գիտակրթական միջավայրերի մի կարևոր տարբերություն ևս ընդգծում են: Ինչպես նկատում է Հարոյանը, Գերմանիայում պրոֆեսոր–ուսանող հարաբերություններում կա խիստ սուբորդինացիա՝ պրոֆեսորը և՛ գիտական ղեկավարն է, և՛ գլխավոր խորհրդատուն, և՛ իր խմբի համար հիմնական ֆինանսներ բերողը: Բայց դրան զուգահեռ՝ պրոֆեսորի և իր խմբի անդամների շփումներն ավելի անմիջական են, պակաս ֆորմալացված, քան մեզ մոտ, պրոֆեսորներն այնտեղ ավելի բաց են մտքերի փոխանակումների համար: «Այնտեղ սովորում էին բոլորը, ըստ որում՝ ոչ միայն վերնից ներքև, այլ նաև ներքևից վերև: Տեխնիկական լուծումներ կան, որոնք ուսանողները շատ ավելի լավ են տիրապետում, քան իրենց պրոֆեսորները»,— նշում է Հարոյանը: Ավելին՝ գիտական այդ մշակույթի յուրահատուկ մասն էին ընդմիջումները, որոնց ընթացքում աշխատակիցները սնվելուն զուգահեռ նաև շփվում էին միմյանց հետ, ձևավորվում էին ավելի մտերիմ, անմիջական հարաբերություններ, տեղի էր ունենում միջմշակութային հաղորդակցություն, փոխանակություն, փոխադարձ իրազեկում:³⁰

Փանոսյանին տպավորել է ոչ միայն հրավիրող պրոֆեսոր Կարելի մասնագիտական–աշխատանքային բարձր պատրաստվածությունն ու պատասխանատվությունը, այլ նաև արտասահման-

²⁹ Փանոսյան Հ., *Հարցազրույց դոցենտ Հովիկ Փանոսյանի հետ*, 27. 07. 2022:

³⁰ Հարոյան Հ., *Հարցազրույց Հովհաննես Հարոյանի հետ*, 01. 08. 2022:

ցի հյուրին կենցաղային հարցերում համակողմանի օգնելու նրա ու իր կնոջ պատրաստակամությունը: Այդ ամենի արդյունքը փոխադարձ լիարժեք վստահության և բարյացակամության մթնոլորտի ձևավորումն էր: Այդ համագործակցության մասնագիտական արդյունքներից մեկն էլ դարձավ 2021 թ. համատեղ գիտական հրապարակումը միջազգային հեղինակավոր ամսագրում:

Տպավորել է նաև այն, որ պրոֆեսոր Կարելի ընտանիքը լավատեղյակ էր հայերի ու Հայաստանի պատմությանը: Նրանք նաև բաց էին միջմշակութային շփումների համար. արագ նկատեցին հայկական ընկերասիրությունն ու հյուրասիրությունը, դպրոցական կրթության արդյունքում բազմակողմանի իրազեկվածությունը և այլն: Փանոսյանի համոզմամբ, այդ ամենը ոչ միայն փոխում է կոնկրետ մարդու պատկերացումները մեկ ուրիշի մասին, այլ նաև հանգեցնում աշխարհայացքային փոփոխությունների, միջմշակութային փոխհարստացման տարբեր ժողովուրդների միջև:³¹

4.2 Փորձառության հետագա ազդեցությունը

Աննա Վարդանյանցն այն ուսանողներից է եղել, որոնք ի սկզբանե նախընտրում են վերադառնալ Հայաստան: «Այնտեղ գնալ–մնալը միշտ կա, դժվարը Հայաստան վերադառնալն ու ինչ–որ բան անելն է: Ոչ բոլորն են պատրաստ այդ դժվարությանը»: Վարդանյանցն ընտրել է «դժվար» տարբերակը՝ չնայած մինչ օրս էլ ստանում է արտասահմանում աշխատելու հրավերներ: Հայաստան վերադառնալուց հետո նա աշխատել է Ամերիաբանկում, Հայփոստում, Մայքրոսոֆթում և Օրակլում: Ցայսօր նա բարձր է գնահատում գերմանական փորձառության դրական ազդեցությունն իր առօրյայում՝ լեզվի ու լեզվակիրների մշակույթի ճանա-

³¹ Փանոսյան Հ., *Հարցազրույց դոցենտ Հովիկ Փանոսյանի հետ*, 27. 07. 2022:

չողություն, բազմազգ միջավայրում ձևավորված միջանձնային ցանցեր, աշխարհաճանաչողության ընդլայնում, տեխնիկական բազում հմտություններ, որոնք հետագայում մեծ դեր են խաղացել աշխատանք փնտրել-գտնելու, աշխատանքային նոր միջավայրին հարմարվելու հարցերում: Նրա համոզմամբ արտասահման մեկնել-ուսանելը խիստ անհրաժեշտ է՝ պետք է գնալ, տեսնել, սովորել, ձանաչել ու վերադառնալ: «Առանց դրա մենք չենք կարող զարգանալ, առանց դրա մենք կմնանք մեր «քառակուսու» մեջ, որը միշտ չէ, որ մրցունակ է գլոբալ մակարդակում»:³²

Հաջողված ու չհաջողված կրթաթոշակային ծրագրերին դիմելու փորձից **Հայկ Մարտիրոսյանը** համոզվել է, որ պետք է մշտապես ակտիվ լինել ու միշտ փնտրել ու դիմել ծրագրերի, քանի որ դա նախ դիմողին մեծ փորձառություն է տալիս, և երկրորդ՝ դրական տպավորություն է ստեղծում նրա նկատմամբ՝ «քեզ ընկալում են որպես հավասարների մեջ առաջինը»: Ավելին՝ իր փորձով և տեղեկություններով Մարտիրոսյանը կիսվում է նաև այլ հայաստանցիների հետ, խրախուսում նրանց դիմել գերմանական կրթաթոշակների: Մարտիրոսյանը նաև ահռելի քանակությամբ արխիվային նյութ է թվայնացրել ու փոխանցել հայկական գիտահետազոտական հաստատություններին, առանձին մասնագետներին: Դրանից բացի՝ աշխատանքի անցնելով *Լեփսիուսի* տուն-արխիվում՝ Մարտիրոսյանն իրեն պարտավորված է զգում ակտիվ պահել տուն-արխիվի գործունեությունը հայկական թեմաներով և մշտապես կապ պահպանել գերմանահայ համայնքի հետ:³³

³² Վարդանյանց Ա., *Երկամյա ուսումնառություն Տրիերի համալսարանի մագիստրատուրայում* [Հարցազրույց], 16. 08. 2022:

³³ Մարտիրոսյան Հ., *Հարցազրույց Լեփսիուսի տուն-արխիվի գիտաշխատող Հայկ Մարտիրոսյանի հետ*, 23. 07. 2022:

ԵՊՀ հետազոտողները հաճախ են փորձում անհատական փոխգործակցությունը գերմանացի գործընկերների հետ վերածել միջինստիտուցիոնալ համագործակցության ԵՊՀ-ի և գերմանական բուհերի միջև: Օրինակ՝ պրոֆեսոր **Աշոտ Ալեքսանյանը** հիշում է, որ ինքն այդպիսի նպատակ ունեցավ 2013 թ.-ին, երբ Մյունխենի համալսարանի պրոֆեսոր Հանս-Բերնդ Բրոզիուսից համապատասխան առաջարկ է ստացել: Բրոզիուսն անգամ այցելեց Հայաստան, հանդիպեց ԵՊՀ որոշ ֆակուլտետների դեկանների հետ: Համագործակցության խորացման համար գերմանական կողմն անհրաժեշտ էր համարում վերանայել ուսումնական պլանները ԵՊՀ-ում: Բայց քանի որ այդ ժամանակ դա հնարավոր չէր, համագործակցությունը խորացնել չի ստացվել: Չստացվեց կայացնել նաև համագործակցությունը միջամբիոնային մակարդակում:

Այդուհանդերձ՝ օգտագործելով ցանցային կապերը՝ Ալեքսանյանը ԵՊՀ գրադարանի տնօրեն եղած ժամանակ կարողացել է Հանովերի համալսարանի հետ համատեղ դրամաշնորհի շահել գրադարանային գործի ոլորտում: Այդ ընթացքում եղել են փոխայցելություններ՝ փորձի փոխանակության և խորհրդատվության նպատակով, գերմանացի գործընկերներն օգնել են ԵՊՀ գրադարանային ֆոնդի թվայնացման հարցում: 2017 թ. հաջողվեց Հանովերի համալսարանի և Բեռլինի Եվրոպական քաղաքականության ինստիտուտի հետ համատեղ ասպիրանտների վերապատրաստման եռամյա դրամաշնորհի շահել, որին մասնակցեցին հայաստանցի մի քանի ասպիրանտներ: Այսօր էլ Ալեքսանյանը քայլեր է անում ԵՊՀ քաղաքագիտության ամբիոնի համագործակցությունն իր անձնական ցանցերի միջոցով գերմանական մի շարք հետաքրքրված բուհերի հետ ինստիտուցիոնալացնելու

ուղղությամբ, որոնցից արդեն նկատելի առաջընթաց կա հատկապես Ենայի համալսարանի ուղղությամբ:

Ավելին՝ Ալեքսանյանը նկատում է, որ երբեմն գերմանացի գործընկերներն իրենք են ձանաչողական կամ հետազոտական նպատակներով ուղղորդում իրենց գործընկերներին կամ ուսանողներին դեպի Հայաստան: Այցելությունների ընթացքում եղել են, օրինակ, հարցազրույցներ հայաստանցի մասնագետների հետ, հրապարակումներ ԵՊՀ գիտական հանդեսներում:

Գերմանական գիտակրթական մշակույթի ձանաչողության կարևորագույն «հավելյալ արժեքներից» մեկն Ալեքսանյանը համարում է այն, որ այդ այցերի ու մասնագիտական և ընկերական զրույցների ընթացքում նա կարողացել է վերագնահատել դպրոցական քաղաքացիական կրթության դերն ազգային կրթության և վերջինիս դերը՝ հասարակության զարգացման, պետության կայացման մեջ: Այցերը ստիպել են նրան նաև վերաիմաստավորել, նորովի ձանաչելու Գերմանիան, նրա պատմությունն ու մշակույթը, գիտությունն ու գիտական մշակույթը, համալսարանական կրթությունն ու կրթական մշակույթը, դասավանդման անգամ այնպիսի «առօրեական» հարցեր, ինչպիսիք են պրոֆեսոր-ուսանող հարաբերությունները, դասապրոցեսի կազմակերպումը:

Դոցենտ **Նարեկ Գալստյանի** այցերը ևս շատ արդյունավետ են եղել ինչպես նեղ թեմաներով մասնագիտացման, այնպես էլ մեծ ծավալի մասնագիտական նյութեր հավաքագրելու առումով: Այդ նյութերի հիման վրա նա և՛ դասախոսություններ է գրել, և՛ մի շարք հրապարակումներ արել, որոնցից երկուսը՝ հենց Գերմանիայում: Այդ այցերը նպաստել են նաև գերմանացի մասնագետների հետ միջանձնային կապերի ձևավորմանը, որոնք էլ իրենց հերթին հետագայում նպաստել են թե՛ միջինստիտուցիոնալ համագործակցության հարթակներ նախաձեռնելուն, թե՛ հա-

յաստանցի երիտասարդ մասնագետներին գերմանական բուհեր ուղղորդելուն: Իսկ փորձի փոխանակության նպատակով 2018 թ. Ենա այցի ընթացքում հավաքած փաստաթղթային ու ծրագրային նյութերի, գործընկեր մասնագետների և ուսանողների հետ հարցազրույցների հիման վրա առաջարկների փաթեթով ծավալուն մի գեկույց է կազմվել, որը ներկայացվել է ԵՊՀ ղեկավարությանը:

Գերմանական բուհեր անհատական գործուղումների մուլտիպլիկացիոն ազդեցության տեսանկյունից շատ ուշագրավ է պրոֆեսոր **Արթուր Մկրտիչյանի** դեպքը: Այդ արդյունքներից մեկը ցանցային կապերի ստեղծումն էր և դրանց օգտագործումը սոցիոլոգիայի ֆակուլտետի զարգացման մեջ արդեն Հայաստանում: Այսպես՝ Մկրտիչյանի վերադարձից հետո ֆակուլտետում սկսեցին դասավանդել սոցիոլոգիական ժամանակակից տեսություններ՝ «կենդանի դասական» համարվող հեղինակների ուսմունքներ: Ավելին՝ ուսանողները հնարավորություն ունեցան հենց Հայաստանում հանդիպելու ու լսելու այդ հեղինակներից Կոնստանցի համալսարանի պրոֆեսոր Թոմաս Լուկմանի և Եյլի համալսարանի առաջատար հետազոտող Իմանուիլ Վալերշթայնի դասախոսությունները: Սոցիոլոգիայի ֆակուլտետը հյուրընկալել է նաև նշանավոր գիտնականների գերմանական գործընկեր բուհերից, օրինակ՝ Օլդենբուրգի համալսարանից դոկտոր Լիդիա Փոթսին, Կոնստանցի համալսարանից դոկտոր Յոխեն Դրեհերին, իսկ Կոնստանցի համալսարանում նրանց է հյուրընկալել պրոֆեսոր Ալեյդա Ամմանը:

Ինքը՝ Մկրտիչյանն աջակցում է ֆակուլտետի մյուս մասնագետներին և ուսանողներին, որպեսզի նրանք ևս Գերմանիայում ուսանելու և հետազոտելու հնարավորություն ստանան: Արդյունքում ֆակուլտետի դասախոսներն ու ուսանողներն անհատական և կոլեկտիվ ձևով հաճախ են այցելում Գերմանիա՝

հետազոտական և ճանաչողական, ինչպես նաև գիտաժողովների մասնակցության նպատակներով: Օրինակ՝ ԴԱԱԴ-ի աջակցությամբ 2011 թ. ուսանողներն ու շրջանավարտներն այցելել են Մայնի Ֆրանկֆուրտի և Բեռլինի Ալիսա Սալոմոնի համալսարաններ: Այսօր էլ ֆակուլտետի շրջանավարտներից ոմանք աշխատում են գերմանական համալսարաններում:

Հաճախ կազմակերպվում են նաև համատեղ միջոցառումներ գերմանական գործընկերների հետ, օրինակ, 2010 թ. Կոնստանցի համալսարանի հետ տասնօրյա աշխատաժողով է կազմակերպվել, որին մասնակցել են հայաստանցի ուսանողները, 2012 թ. Երևանում է կազմակերպվում մի գիտաժողով, որին մասնակցում են նաև Կոնստանցի և Մյունխենի համալսարանները, 2013 թ. տեղի է ունենում Բրեմերհաֆենի աշխատաժողովը ԵՊՀ և գործընկերուհերի, այդ թվում՝ Օլդենբուրգի համալսարանի համագործակցությամբ:³⁴

Դոցենտ **Հովհաննես Հարոյանն** այսօր փորձում է գերմանական գիտական մշակույթի՝ իր արժևորած տարրերը հնարավորինս տեղայնացնել, կիրառել հայաստանյան միջավայրում: Այդ գործում ձեռք բերած փորձը նրան օգնում է նաև արտասահմանյան գիտական այլ շրջանակների հետ աշխատանքներում: Հենց Հարոյանի ու իր հայաստանցի գործընկերների կապերի շնորհիվ 2017–2019 թթ. Լայբնիցի համալսարանի հետ համատեղ հաջողվել է դրամաշնորհի շահել: Ավելին՝ վերջինիս հարցում նախաձեռնողականություն ցուցաբերել են հենց գերմանացի գործընկերները՝ տեղեկացնելով դրամաշնորհային ֆինանսավորմամբ հետազոտություն անցկացնելու հնարավորության մասին:

³⁴ Մկրտիչյան Ա., *Հարցազրույց պրոֆեսոր Արթուր Մկրտիչյանի հետ*, 19. 07. 2022:

Նրա խոսքերով՝ անկախ նրանից դա անհատական, թե ինստիտուցիոնալ համագործակցության արգասիք էր, այդուհանդերձ, հավանաբար ինչ–որ մի բան այնքան լավ էր եղել, որ գերմանացի գործընկերներն իրենք են որոշել համատեղ հետազոտություն նախաձեռնել: Այսօր էլ կողմերը դիմել են նոր, արդեն միջդիսցիպլինար հետազոտության ֆինանսավորման համար և սպասում են արդյունքներին:³⁵

Իր հերթին դոցենտ **Հովիկ Փանոսյանը** նշում է, որ ամբիոնի մակարդակով ինչպես արտասահմանյան այլ բուհերի, այնպես էլ գերմանական բուհերի հետ համագործակցության երկարամյա փորձ կա «Էրազմուս+»–ի և այլ ծրագրերի շրջանակներում: Ըստ որում՝ այդ համագործակցության հիմքերը կոլեգիալ են, այսինքն՝ ամբիոնի դասախոսները «մասնագիտացած» են տարբեր երկրների հետ համագործակցության վրա (ինքը՝ Փանոսյանը, առաջ է տանում նորվեգական ուղղությունը), որի արդյունքներից ևս օգտվում են կոլեգիալ: Այս պահին էլ ՖԱՍԹ–ի շրջանակներում ամբիոնը համագործակցում է Համբուրգի տեխնիկական համալսարանի Կենսահենք լուծումների կենտրոնի հետ, որի տնօրենը գերմանահայ պրոֆեսոր Կարապետ Անդրանիկյանն է: Այդ համագործակցության արդյունքում արդեն կազմակերպվել է միջազգային մի աշխատաժողով, ևս մեկը պլանավորվում է: Համագործակցության վերջնանպատակը ԵՊՀ և Համբուրգի համալսարանի միջև միջինստիտուցիոնալ կայուն կապեր հաստատելն է ամենատարբեր մակարդակներով՝ ուղղված հատկապես գիտահենք կրթության զարգացմանը ԵՊՀ–ում:

Փանոսյանը ևս մշտապես իրազեկում, երաշխավորում ու աջակցում է իր ուսանողներին՝ հետազոտական կամ ուսումնա-

³⁵ Հարոյան Հ., *Հարցազրույց Հովհաննես Հարոյանի հետ*, 01. 08. 2022:

կան նպատակներով այցելելու Գերմանիա: Նրանցից երկուսն այս պահին այնտեղ դոկտորական հետազոտություն են կատարում: Փանոսյանը հույս ունի, որ հայրենիք վերադարձած ուսանողներն իրենց հարստացած գիտելիքով ու կենսափորձով կգարգացնեն մասնագիտական ու աշխատանքային այն միջավայրը, որը հետագայում Հայաստանն ավելի հրապուրիչ կդարձնի թե՛ հայաստանցի, թե՛ արտասահմանյան մասնագետների համար:³⁶

4.3 Խնդիրներ և լուծումներ

Մեր բոլոր ռեսպոնդենտները բացասաբար են գնահատում ԴԱԱԴ–ի երևանյան գրասենյակը փակելը: Ինչպես նկատում է **Մերի Նավասարդյանը**, գրասենյակի առկայությունն ու աշխատակիցների հասանելիությունը էապես նպաստում էր ԴԱԱԴ–ի ձանաչելիությանը, նրա ծրագրերին դիմելու մոտիվացմանը, դուրացնում փոխադարձ կապը գրասենյակի և պոտենցիալ դիմորդների միջև, ինչպես նաև աջակցում վերջիններիս գերմանական բուհերից հրավիրող պրոֆեսոր գտնելու հարցում: Իսկ գրասենյակի բացակայությունը թույլ չի տալիս «զգալ» այդ երկիրը, լավ ձանաչել նրա մարդկանց ու մշակույթը, որն էլ զգալիորեն դժվարացնում է մարդկանց հետ աշխատանքը: Ֆրագմենտացված, միջպետական ոչ բավարար լավ հարաբերություններ ունեցող տարածաշրջաններում մեկ մեծ մասնաձյուղ ստեղծելն ազգային գրասենյակների փոխարեն նպատակահարմար չէ:³⁷

Աննա Վարդանյանցի կարծիքով ԴԱԱԴ–ի գրասենյակը փակելը «բացասական է ոչ միայն նոր դիմորդների համար, այլ

³⁶ Փանոսյան Հ., *Հարցազրույց դոցենտ Հովիկ Փանոսյանի հետ*, 27. 07. 2022:

³⁷ Նավասարդյան Մ., *Գերմանական ակադեմիական փոխանակության ծառայության գործունեությունը Հայաստանում* [Հարցազրույց], 13. 07. 2022:

նաև այն տեսանկյունից, որ այդ գրասենյակը դարձել էր յուրօրինակ տուն, որտեղ շրջանավարտները հանդիպում–շփվում էին, ինչ–որ ծրագրեր քննարկում և իրականացնում»:³⁸

Հայկ Մարտիրոսյանն էլ իր հերթին նկատում է, որ երևանյան գրասենյակի փակվելը արագացնելու է հայաստանցիների մոտ գերմաներենի, գերմանական մշակույթի նկատմամբ հետաքրքրության անկումը:³⁹ **Աշոտ Ալեքսանյանն** էլ ընդգծում է, որ հայաստանցի ուսանողների մոտ իրազեկվածությունն ու հետաքրքրվածությունն առանց այդ էլ բավարար չէր, իսկ գրասենյակի փակելը կարող է ավելի խորացնել խնդիրը:⁴⁰

Ռեսպոնդենտների մատնանշած խնդիրներից մեկն էլ կրթաթոշակների մասին չհամակարգված տեղեկատվությունն է: «Մեր գլխավոր խնդիրն այն է, որ փոքր երկրում, որտեղ կան մի քանի բուհեր, քիչ թվով մասնագետներ, չկա տեղեկության փոխանակում, համակարգում, որ իմանանք՝ որտեղ ինչ հնարավորություն կա, որոնք են մեր բացերը, ինչպես համատեղ ուժերով փակենք այդ բացերը», — նշում է **Աննա Վարդանյանցը**: Եվ դա, նրա համոզմամբ, հնարավոր է անգամ առանց պետական կառավարման մարմինների հատուկ միջամտության. պարզապես մարդիկ պետք է անհատականորեն չլինեն, լինեն բաց միմյանց համար, փոխանակեն իմացածը, ցուցաբերեն ցանցային մոտեցում:⁴¹

³⁸ Վարդանյանց Ա., *Երկամյա ուսումնառություն Տրիերի համալսարանի մագիստրատուրայում* [Հարցարգույց], 16. 08. 2022:

³⁹ Մարտիրոսյան Հ., *Հարցազրույց Լեփսիուսի տուն–արխիվի գիտաշխատող Հայկ Մարտիրոսյանի հետ*, 23. 07. 2022:

⁴⁰ Ալեքսանյան Ա., *Հարցազրույց պրոֆեսոր Աշոտ Ալեքսանյանի հետ*, 27. 07. 2022:

⁴¹ Վարդանյանց Ա., *Երկամյա ուսումնառություն Տրիերի համալսարանի մագիստրատուրայում* [Հարցարգույց], 16. 08. 2022:

Հովհաննես Հարոյանի կարծիքով, «ինչ-որ մեկը պետք է կոնկրետ գրադվի իրազեկման հարցով՝ փնտրի-գտնի համագործակցային ծրագրեր ու դրամաշնորհներ և մասնագետներին տեղեկացնի այդ մասին»: Պետական մակարդակով միջինստիտուցիոնալ համագործակցության հարթակներ ստեղծելուն աջակցելը ևս կարող է վճռորոշ լինել. «2-3 տարին մեկ երկկողմ դրամաշնորհ հայտարարելը չի կարող լուրջ առաջընթաց ապահովել: Անհրաժեշտ են ավելի երկարաժամկետ ու ինստիտուցիոնալացված լուծումներ»: Ըստ նրա՝ համալսարանական մի բնորոշ յուրահատկություն կա՝ համագործակցության ծրագրերի մեծ մասը վերաբերում են հասարակական գիտություններին, մինչդեռ բնական գիտությունները հենվում են գերազանցապես անհատական նախաձեռնողականության վրա: Կան գերմանական հիմնադրամներ, որոնք, սակայն, պահանջում են ինստիտուցիոնալ հայտեր: Այդ ուղղությամբ աշխատանք կատարելու անհրաժեշտություն կա:⁴²

Հովիկ Փանոսյանը կարևորում է երիտասարդների մասնակցությունը գիտաժողովներին, ամառային դպրոցներին, քանի որ դրանք, բացի դրանցով նախատեսված արդյունքներից, նաև հնարավորություն են տալիս ընդլայնելու անձնական կապերի ցանցերը և գտնելու անհրաժեշտ մարդկանց: Բայց նա նաև նկատում է, որ հայաստանցի երիտասարդները, որպես կանոն, բավարար չափով ակտիվ չեն այդ ձևաչափերում, քիչ են օգտագործում դրանց տված «հավելյալ արժեքը»: «Մեր երիտասարդներն ունեն շատ լավ ներուժ, բայց շատ հարցերում կաշկանդված են: Պատճառների թվում են նաև նրանց դասախոսները, գիտական ղեկավարները, որոնք, ինչպես արտասահմանցի գործընկերներ-

⁴² Հարոյան Հ., *Հարցազրույց Հովհաննես Հարոյանի հետ*, 01. 08. 2022:

րը, պետք է լինեն ավելի բաց, պատրաստակամ իրենց ուսանողներին օգնելու հարցում»:⁴³

Աշոտ Ալեքսանյանը խոչընդոտ–խնդիր է համարում նաև հայկական կողմում ֆինանսական միջոցների սղությունը, գործընկերային հարաբերությունների զարգացման ոչ բավարար կարևորումը, անգամ տեխնիկական, կենցաղային պայմանների անբավարարությունը, օրինակ՝ գերմանացի մասնագետներին հյուրընկալելու հարցում, արտասահմանյան գործընկերների գտնելու, համագործակցելու ուղղությամբ համակարգված քաղաքականության բացակայությունը, գերմաներենի՝ որպես մասնագիտական լեզվի անբավարար տարածվածությունը:

Կարևորագույն խնդիր–խոչընդոտներից մեկը, ըստ **Արթուր Մկրտիչյանի**, պետական իշխանության համապատասխան վերաբերմունքի բացակայությունն է թե՛ միջինստիտուցիոնալ համագործակցության հարթակներ ստեղծելու հարցում աջակցության, թե՛ այդ համագործակցության արդյունքներից օգտվելու հարցերում: Որպես հետևանք՝ համագործակցության հարթակներ ստեղծելը և դրա մոտիվացիան մնում են անձնական նախաձեռնության մակարդակում: Ի տարբերություն արտասահմանյան փորձի՝ Հայաստանում պետական կառավարման ինստիտուտների և հասարակագիտական ակադեմիական ենթակառուցվածքների միջև փոխգործակցություն գրեթե չկա: «Պետք լինելու գործոնը շատ կարևոր է: Այն նաև մոտիվացիա է առաջացնում: Իսկ եթե պետք չես, մոտիվացիան մարում է»:⁴⁴ Օրինակ՝ «Լույս» հիմնադրամի թիրախային արտասահմանյան բուհերի ցուցակից գերմանական բուհերը դուրս էին մնացել, որը գերմանացի

⁴³ Փանոսյան Հ., *Հարցազրույց դոցենտ Հովիկ Փանոսյանի հետ*, 27. 07. 2022:

⁴⁴ Մկրտիչյան Ա., *Հարցազրույց պրոֆեսոր Արթուր Մկրտիչյանի հետ*, 19. 07. 2022:

գործընկերների համար հասկանալի չէ, թեև նրանք ամենամեծ կրթաթոշակներ տրամադրողներն են: Մինչդեռ, ինչպես նշում է Մկրտիչյանը, ԴԱԱԴ-ի գործիքներով կարելի էր ավելի մեծ արդյունքի հասնել ավելի քիչ ծախսով, քան, օրինակ, «Լույս» հիմնադրամի այդպիսի գործիքներով:⁴⁵

Այդ խնդրի հետևանքին **Հայկ Մարտիրոսյանը** բախվել է 2011 թ. հոկտեմբերին Բոննում ԴԱԱԴ-ի՝ Հարավային Կովկասի և Կենտրոնական Ասիայի երկրներից կրթաթոշակակիրների հավաքի ժամանակ, որին մասնակցում էին ընդամենը 7 հայաստանցի և ավելի քան 50 ադրբեջանցի: Վերջիններիս մեծ մասը, ադրբեջանցի մի կրթաթոշակակրի հավաստմամբ, Հեյդար Ալիևի անվան հիմնադրամի կրթաթոշակակիրներ էին՝ հիմնականում բժշկական կամ միջազգային հարաբերությունների կրթությամբ:

Բացի դրանից՝ խնդիրներ կան նաև հենց ԴԱԱԴ-ի ընթացակարգերում: Օրինակ՝ ԿԱԱԴ-ը ԴԱԱԴ-ի նկատմամբ ունի երկու առավելություն. նախ՝ ԿԱԱԴ-ի կրթաթոշակային մրցույթները տարեկան երկու անգամ են, ոչ թե մեկ, և, երկրորդ՝ մրցույթի արդյունքները հայտարարվում են ընդամենը մոտ երեք ամիս անց: Այսինքն՝ նույն տարվա առաջին մրցույթին չհաղթելուց հետո դիմորդը հնարավորություն ունի նույն տարում երկրորդ անգամ այդ կրթաթոշակին դիմելու: ԿԱԱԴ-ն տարեկան չորս սեմինարների մասնակցության հնարավորություն է տալիս և ևս մեկ աշխատաժողովի՝ Բոննում: ԿԱԱԴ-ն ավելի շատ է աջակցում և նաև մասնակցում իր կրթաթոշակակիրների ակտիվությանը: Բայց ԿԱԱԴ-ի տարեկան բյուջեն ու կրթաթոշակների թիվն անհամեմատ ավելի փոքր են: Վերջին տարիներին Հայաստանից դիմորդների թիվը կտրուկ նվազել է, որի պատճառներից մեկը, Մարտիրոսյանի կարծիքով,

⁴⁵ Նույն տեղում:

գերմաներենի իմացության պահանջն է, իսկ երկրորդը ԴԱԱԴ-ի գրասենյակի տեղափոխումն է Երևանից Թբիլիսի:⁴⁶

Եզրակացություն

Ամփոփելով վերլուծության արդյունքներն ըստ ներածության մեջ սահմանված հարցերի՝ կարող ենք եզրակացնել հետևյալը.

1. Գիտակրթական դիվանագիտությունը Գերմանիայի պաշտոնական արտաքին քաղաքականության սյուներից մեկն է, որի գլխավոր գործիքներն են ակադեմիական փոխանակությունը և գերմաներենի ու գերմանագիտության ժողովրդականացումը գործընկեր-պետություններում: Գիտակրթական դիվանագիտությունը, փաստորեն, Գերմանիայի «փափուկ ուժի» քաղաքականության մի մասն է, որը, սակայն, մշակվում և իրագործվում է ապակենտրոնացված-ցանցային ձևով: Այդ ցանցում ընդգրկված են ինչպես Գերմանիայի դաշնային ու հողերի իշխանությունները, այնպես էլ գիտակրթական և գիտամշակութային, ինչպես նաև քաղաքական հիմնադրամները, քաղաքացիական հասարակության տարատեսակ ինստիտուտները, բիզնես-ընկերությունները և հենց իրենք՝ գիտակրթական հաստատությունները: Եվ ինչպես այդ ցանցում, այնպես էլ գլոբալ մակարդակով առանցքային դերակատարը Գերմանական ակադեմիական փոխանակության ծառայությունն է, որը համակարգում է ոչ միայն «սեփական», այլ երբեմն նաև այլ կառույցների կրթաթոշակային ծրագրերը:

2. Կոնկրետ Հայաստանում գերմանական կրթական ու հետազոտական ծրագրերով ակտիվ աշխատում են և՛ ԴԱԱԴ-ը, և՛ քա-

⁴⁶ Մարտիրոսյան Հ., *Հարցազրույց Լեփսիոսի տուն-արխիվի գիտաշխատող Հայկ Մարտիրոսյանի հետ*, 23. 07. 2022:

դաքսական մի քանի հիմնադրամներ, ուղղակի կամ անուղղակի հասանելի են նաև մի քանի այլ կառույցների ծրագրեր: Գերմանական բուհերի հետ ակադեմիական շարժունության և համագործակցության այլ ձևերի համար Հայաստանում հասանելի է նաև ԵՄ–ի «Էրազմուս+» ծրագիրը:

3. Մեր անցկացրած փորձագիտական հարցազրույցները վեր հանեցին այդ ծրագրերի ազդեցության մի քանի ընդհանրական արդյունքներ.

- Բոլոր ռեսպոնդենտների համար այդ ծրագրերն արժևորվում են ոչ միայն մասնագիտական (ուսումնական, հետազոտական) արդյունքներով, այլ նաև դրանց «հավելյալ արժեքով»՝ Գերմանիայի ու նրա մշակույթի (այդ թվում և հատկապես՝ գիտակրթական, ակադեմիական) ճանաչողությունը, մշակութային երկխոսությունն ու փոխանակումը, գործընկերների ցանցի ընդլայնումը: Ըստ որում՝ հաճախ այդ «հավելյալ արժեքն» ունեցել է նաև գործնական որոշիչ նշանակություն ռեսպոնդենտների հետագա մասնագիտական և աշխատանքային գործունեության մեջ:
- Այդ ծրագրերի գլխավոր արժեքն անշուշտ այն է, որ դրանք հնարավորություն են տվել մասնակիցներին իրենց մասնագիտական գիտելիքներն ու հմտությունները հարստացնելու, կախված մասնակցի կարգավիճակից՝ յուրացնելու ուսումնառության, դասավանդման, հետազոտման նոր մոտեցումներ ու մեթոդներ, գրադարանային, արխիվային և լաբորատոր աշխատանքի մշակութային նոր նորմեր, կուտակելու մասնագիտական հարուստ նյութեր ու տվյալներ:
- Ավելին՝ ակադեմիական շարժունության ծրագրերն ունեցել են նաև շարունակական ու բազմապատկական ազդեցություն. նախ՝ Գերմանիայում կուտակած փորձն ու

նյութերը ռեսպոնդենտները կիրառում են մասնագիտական–աշխատանքային գործունեության (օրինակ՝ դասավանդման, գիտական հրապարակումների) մեջ, երկրորդ՝ այդ փորձի ու հընթացս ձևավորված գործընկերային ցանցի հիման վրա ռեսպոնդենտները խրախուսում և աջակցում են իրենց շրջապատի մարդկանց (ուսանողներին, դասախոսներին) դիմելու ակադեմիական շարժունության ծրագրերին, ուղղորդում դեպի իրենց հյուրընկալած բուհերն և գործընկեր–պրոֆեսորները, և երրորդ՝ շարժունության ծրագրերի մասնակիցները հաճախ նաև նախաձեռնում են իրենց հյուրընկալած գերմանական բուհերի ու իրենց մայր բուհերի միջինստիտուցիոնալ համագործակցությունը:

4. Հարցագրույցների ընթացքում բացահայտեցինք նաև մի շարք խնդիրներ, որոնք խոչընդոտում կամ կարող են խոչընդոտել բարձրագույն կրթության ոլորտում հայ–գերմանական համագործակցությանը: Մասնավորապես՝

- Ռեսպոնդենտները բացասական են համարում ԴԱԱԴ–ի երևանյան տեղեկատվական կենտրոնի փակվելը՝ նշելով, որ դրա առկայությունն էականորեն դյուրացնում էր կրթաթոշակային ծրագրերի մասին իրազեկումը, դրանց դիմելու գործընթացը, գրասենյակի փակման պատճառով մոտ ապագայում կանխատեսելով այդ ծրագրերի նկատմամբ հետաքրքրության անկում, շարժունության նվազում:
- Խնդիրն ավելի են բարդացնում ինչպես դրամաշնորհային ծրագրերի մասին տեղեկության փոխանակման բուհական միասնական համակարգի բացակայությունը, այնպես էլ կոնկրետ մասնագիտությունների զարգացման ուղղությամբ միջբուհական համագործակցություն խթանելու

հարցում պետական աջակցության անբավարարությունը: Արդյունքում այդ ոլորտը մնում է առավելապես անհատական նախաձեռնությունների մակարդակում, որը, բնականաբար, բավարար չէ եղած ներուժն արդյունավետ օգտագործելու և բուհերի գիտական, ինստիտուցիոնալ ու տեխնիկական կարողություններն ավելացնելու համար: Դա էլ իր հերթին էականորեն սահմանափակում է հայաստանյան բուհերի միջազգայնացման հնարավորությունները:

Բանալի բառեր՝ փափուկ ուժ, գիտական դիվանագիտություն, ակադեմիական շարժունություն, գիտակրթական համագործակցություն, ԵՊՀ, ԴԱԱԴ, Էրազմուս+

Գերմանագիտության զարգացումը անկախ Հայաստանում

Ելենա Էթարյան

Գերմանագիտության ավանդույթը Հայաստանում

Գերմանագիտությունը Հայաստանում ունի երկարամյա ավանդույթ: Խորհրդային Միության տարիներին Հայաստանում գոյություն ուներ միայն մեկ համալսարան՝ Երևանի պետական համալսարանը (ԵՊՀ), և մի շարք ինստիտուտներ,¹ որոնք, սակայն, չունեին գիտական աստիճան շնորհելու իրավունք: Այդ պատճառով խոստումնալից շատ մասնագետներ ստիպված էին ասպիրանտական կրթություն ստանալ Ռուսաստանում, մասնավորապես՝ Մոսկվայում, և քանի որ դիմորդները Խորհրդային Միության բոլոր երկրներից էին, դիմորդների միջև մրցակցությունը մեծ էր, հետևաբար ընտրվում էին ասպարեզի լավագույնները: Հայաստանյան ապագա լավագույն գերմանագետները իրենց ուսումը ասպիրանտուրայում ստանում էին Մոսկվայի Մորիս Թորեզի անվան օտար լեզուների պետական ինստիտուտում, որտեղ դասավանդում էին համաշխարհային հռչակ վայելող առաջատար մասնագետներ, ինչպիսիք էին Ե. Շենդելսը, Օ. Մոսկալսկայան, Է. Ռիզելը, Մ. Ստեպանովան, Ի. Չերնիշյովան: Մոսկվայում թեկնա-

¹ Այսօր Հայաստանում գործում են պետականորեն ճանաչված 52 համալսարաններ, որոնցից 27՝ պետական, 25՝ մասնավոր: Sön DAAD: Armenien. Kurze Einführung in das Hochschulsystem und die DAAD-Aktivitäten. Bonn: o. Verl. 2022, էջ 3:

ծուական թեզերը պաշտպանելուց հետո հայ գերմանագետներից շատերը հետագայում ստանձնում են գերմաներենի ամբիոնների ղեկավարումը Հայաստանի Հանրապետության բուհերում, այսպես՝ Մ. Հարությունյանը, Ա. Տոնոյանը, Ս. Ավետիսյանը, Ի. Առաքելյանը, Կ. Աթոյանը, որոնք իրենց մեծ ներդրումն են ունեցել հայաստանյան գերմանագիտության հետագա զարգացման գործում:

Գրականագիտության ասպարեզում վաստակաշատ գերմանագետներ դոկտոր, պրոֆեսոր Ելենա Կարաբեգովան և դոկտոր, պրոֆեսոր Կարլեն Մատինյանը ասպիրանտուրան ուսումնառել են Մոսկվայի Մ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանում՝ լինելով հոչակավոր գիտնականներ Ա. Դմիտրիևի և Ա. Կարելսկու սաները: Ելենա Կարաբեգովան իր դոկտորական ատենախոսությունը ևս պաշտպանել է Մոսկվայի Մ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանում:

Ասպարեզի մեկ այլ ականավոր գործիչ, օտար լեզուների դասավանդման մասնագետ, մանակավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Մելանյա Աստվածատրյանը ինչպես թեկնածուական, այնպես էլ դոկտորական ատենախոսությունը պաշտպանել է Մոսկվայի մանկավարժական գիտությունների ակադեմիայում:

Խորհրդային Միության փլուզումից հետո որոշ գիտական հաստատություններ ստացան գիտական աստիճան շնորհելու իրավունք (այս պահին գերմանագիտության ասպարեզի մասնագիտական խորհուրդները կենտրոնացված են ԵՊՀ–ում): Սակայն միայն սկսած 2000–ական թվականներից սկիզբ դրվեց թեկնածուական և դոկտորական ատենախոսությունների պաշտպանություններին, որոնց կանդիդատնանք ստորև՝ «Գերմանագիտության զարգացումը և զարգացման հեռանկարները» ենթագլխում:

Գերմաներենի առաջատար ամբիոնները և նրանց միջազգայնացումը

Հայաստանի Հանրապետությունում գերմաներենի առաջին ամբիոնը հիմնադրվել է 1936 թվականին՝ լինելով նաև Վ. Բրյուսովի անվան օտար լեզուների պետական ինստիտուտի (այսօր՝ Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի, ԲՊՀ) օտար լեզվի առաջին ամբիոնը: Այն պատրաստել և շարունակում է պատրաստել գերմաներենի ուսուցիչներ, ինչպես նաև գերմաներենի մասնագետներ: Գերմանագիտությունը Բրյուսովի համալսարանում համադրվում է «Մանկավարժություն», «Լեզվաբանություն», «Միջմշակութային հաղորդակցություն», «Թարգմանչական գործ» մասնագիտացումներին:

Գերմաներենի ամբիոնը աչքի է ընկնում բարձր որակավորմամբ, քանի որ պրոֆեսորադասախոսական կազմի գերակշռող մասը ուսանել է Գերմանիայում կամ Ավստրիայում և շարունակաբար վերապատրաստումներ է անցնում գերմանախոս երկրների տարբեր համալսարաններում ու հաստատություններում: 1990-ական թվականներից սկսած ամբիոնում աշխատում են Գերմանիայից և Ավստրիայից հրավիրված մասնագետներ, պրակտիկանտներ, որոնք և՛ դասավանդում են, և՛ պարբերաբար վերապատրաստում ամբիոնի, ինչպես նաև հայաստանյան այլ բուհերի գերմաներենի դասախոսներին ու ուսուցիչներին: Արտասահմանից հրավիրված գերմաներենի մասնագետները նաև ակտիվ գործունեություն են ծավալում ուսանողների հետ՝ իրականացնելով տարբեր նախագծեր, տպագրելով ուսանողական թերթեր (Kurier) և այլ ուսումնական նյութեր:

Վ. Բրյուսովի անվան օտար լեզուների ինստիտուտի գերմաներենի ամբիոնի առաջին վարիչը եղել է Գ. Անդրեասյանը: Այնուհետև ամբիոնը ղեկավարել են Մ. Հարությունյանը, Ս. Ավետիսյա-

նը, Կ. Աթոյանը, Մ. Բույուքլյանը²: Այսօր ամբիոնը ղեկավարում է Բ. Գ. Թ., դոցենտ Է. Ղազարյանը:

Երևանի պետական համալսարանի գերմանական բանասիրության ամբիոնը՝ որպես ինքնուրույն ամբիոն, իր գործունեությունը ծավալել է 1991 թվականից սկսած: Այն ԵՊՀ-ի առաջատար ամբիոններից է, քանի որ ժառանգել է հարուստ գիտամանկավարժական փորձ: Ամբիոնի պատմությունը կերտել են վաստակաշատ շատ գիտնականներ ու մանկավարժներ, որոնցից էին Բ. Գ. Ղ., ակադեմիկոս Գ. Զահուկյանը, Բ. Գ. Թ., դոցենտ Մ. Հարությունյանը, Բ. Գ. Թ., դոցենտ Ք. Աղայեկյանը, Մ. Շենկմանսը: Ամբիոնի հիմնադիրն էր Բ. Գ. Թ., դոցենտ Ա. Տոնոյանը, որից հետո ամբիոնի ղեկավարումը ստանձնեց Բ. Գ. Ղ., պրոֆեսոր Յու. Գաբրիելյանը՝ 1999–2021 թթ.: 2021 թվականից ամբիոնը ղեկավարում է Բ. Գ. Թ., դոցենտ Գ. Սավոյանը³:

Ամբիոնի պրոֆեսորադասախոսական ուժերով հրատարակվել են տարբեր դասագրքեր, բառարաններ և ուսումնասօժանողակ նյութեր, օրինակ, «Գերմաներեն ձեռնարկ բակալավրիատի ուսանողների համար», «Գերմաներենի պատմության հիմնահարցեր», «Գերմաներենի տեսական քերականություն», «Գերմաներեն լեզվի տիպաբանություն», «Գերմաներենի անցյալի անորոշ դերբայի դրսևորումները և դրանց համարժեքները հայերենում», «Արդի գերմանագիտության քերականական տեսություններ», «Գերմաներենի բառագիտություն» և այլն: Նշված հրատարակումների մեծ մասի հեղինակը պրոֆեսոր Յու. Գաբրիելյանն է, մի մասն էլ հրատարակվել են իր համահեղինակությամբ: Վերջին տարիներ

² https://brusov.am/hy/chairs/germanereni_ambion/#sthash.qUIo8fa7.tD-L3ULXS.dpbs (վերջին մուտք՝ 16.08.2022):

³ Հմմտ. <http://www.ysu.am/faculties/hy/taEeqZkjaU2YsxNhABaMAnZ-t9D/section/structure/amb/138> (վերջին մուտք՝ 18.08.2022):

րի ընդունելության շտեմարանները կազմվել են ԵՊՀ-ի, ԲՊՀ-ի և ՀՊՄՀ-ի (Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի) գերմաներենի դասախոսների համատեղ ջանքերով. «Գերմաներեն 2013 թ.: Պետական ավարտական և միասնական քննությունների առաջադրանքների շտեմարան» (Յու. Գաբրիելյան, Ա. Ավետյան, Ս. Առաքելյան, Կ. Հովհաննիսյան, Լ. Սաֆարյան, Ս. Լույսլյան, Ս. Հայթյան, Զ. Միսկարյան 2013/ Մաս 1, 2, 3), նաև «Գերմաներեն 2014 թ.: Պետական ավարտական և միասնական քննությունների առաջադրանքների շտեմարան» (Յու. Գաբրիելյան, Ա. Ավետյան, Ս. Առաքելյան, Կ. Հովհաննիսյան, Լ. Սաֆարյան, Ս. Լույսլյան, Ս. Հայթյան, Զ. Միսկարյան 2014 / Մաս 1, 2, 3):

ԲՊՀ-ի առաջատար մասնագետները՝ ք.գ.թ., դոցենտ Կ. Հովհաննիսյանի ղեկավարությամբ հեղինակել են ՀՀ հանրակրթական դպրոցի 5-րդ, 6-րդ և 10-12-րդ դասարանների դասագրքերը:

Հայաստանի Հանրապետությունում գերմաներենի՝ որպես հիմնական և երկրորդ օտար լեզվի ուսուցումը ԲՊՀ-ի գերմաներենի ամբիոնի և ԵՊՀ-ի գերմանական բանասիրության ամբիոնի հետ մեկտեղ իրականացնում են Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ռոմանագերմանական լեզուների և դրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնը,⁴ ինչպես նաև Հայ-ռուսական (ՀՌՀ) համալսարանի լեզվի տեսության և միջմշակութային հաղորդակցության ամբիոնը:⁵

⁴ Հմմտ. https://aspu.am/hy/page/otar_lezuneri_fakultet// (վերջին մուտք՝ 20.08.2022):

⁵ Հմմտ. <https://ihumanities.rau.am/am/departament/kafedra-teorii-yazyka> (վերջին մուտք՝ 20.08.2022):

Նշենք նաև, որ Հայաստանում Ֆրանսիական համալսարանում (ՀՖՀՀ) գերմաներենը առաջարկվում է որպես կամընտրական առարկա, իսկ Հայաստանի ամերիկյան համալսարանում (ՀԱՀ) անցկացվում են գերմաներենի դասընթացներ:

Նշված բուհերի դասախոսները ակտիվ մասնակցել են և շարունակում են մասնակցել միջազգային փոխանակման տարբեր ծրագրերի, ինչպես օրինակ, «Էրազմուս»-ի, ԴԱԱԴ-ի (DAAD), ԿԱԱԴ-ի (KAAD), ԱԱԴ-ի (ÖAD): ԲՊՀ-ի գերմաներենի ամբիոնի բ.գ.դ., դոցենտ Ե. Էթարյանը «Ալեքսանդր Ֆոն Հումբոլդտ» հիմնադրամի նախկին կրթաթոշակակիր է:

ԲՊՀ-ի գերմաներենի ամբիոնը նաև ներգրավված է գերմանագիտական հաստատությունների համագործակցության ծրագրում (Germanistische Institutspartnerschaften, GIP), որի նպատակը արտասահմանում գերմանագիտության զարգացումն է: Ծրագիրը միտված է ինչպես դասախոսական անձնակազմի վերապատրաստմանը, այնպես էլ մանկավարժական կրթական ծրագրերի (ՄԿԾ) զարգացմանը: Այստեղ առանցքային դեր են խաղում համագործակցությունները և փոխանակումը գերմանական կրթական հաստատությունների, ուսանողների և գիտնականների միջև: 2021 թվականին ԲՊՀ-ի գերմաներենի ամբիոնը DAAD-ից աջակցություն է ստացել Հայդելբերգի համալսարանի հետ «բանասիրություն-տեխնոլոգիա-թարգմանչական գործ» ուղղություններով համագործակցության համար (2021–2023): Այս նախագծում ներգրավված է նաև Վրաստանը:⁶

«Էրազմուս+» ծրագիրը Եվրոպական միության ամենախոշոր կրթական ծրագիրն է, իսկ DAAD-ն՝ բարձրագույն հաստատու-

⁶ Հմմտ. DAAD: Armenien. Kurze Einführung in das Hochschulsystem und die DAAD-Aktivitäten. Bonn: o. Verl. 2022, S. 11.

թյուններում աջակցության ուղղությունների, ինչպես նաև ռազմավարական համագործակցությունների պատասխանատուն:⁷ 2021 թվականից ԲՊՀ-ի գերմաներենի ամբիոնի և Դյուսելդորֆի Հայնրիխ Հայնեի գերմանագիտության ինստիտուտի միջև կնքվել է «Էրազմուս+» շարժունության ծրագրի (KA 171) համաձայնագիրը: Այն հաստատվել է ևս երկրորդ փուլով, և համագործակցությունը կշարունակվի մինչև 2025 թվականը:

Հայաստանյան գերմանագիտությունը և նրա զարգացման հեռանկարները

Ինչպես հայտնի է, գերմանագիտությունը ավանդաբար տրոհվում է գրականագիտական և լեզվաբանական ճյուղերի: Ստորև կանդրադառնանք այս երկու բնագավառներում՝ Հայաստանի անկախությունից հետո իրականացված թեկնածուական և դոկտորական պաշտպանություններին՝ հետամուտ լինելով վերջիններիս խնդրո առարկաներին, համապատասխան բնագավառներում բացերին և զարգացման միտումներին:

Գերմանական գրականության ոլորտում Ժ.01.07. «Արտասահմանյան գրականություն» մասնագիտությամբ առաջին թեկնածուական և դոկտորական ատենախոսությունների պաշտպանությունը սկսել է 2000 թվականից: Այդ ժամանակվանից մինչ օրս ԲՈԿ-ի (նախկինում՝ ԲՈՀ) արխիվում պահվում են տասնյոթ թեկնածուական և չորս դոկտորական ատենախոսություններ:⁸

⁷ Նույն տեղում:

⁸ https://bok.am/archive?term_node_tid_depth=1063&combine=&combine_1=&field_defense_search_place_target_id=All&field_defense_date_value_1%5Bmin%5D=&field_defense_date_value_1%5Bmax%5D=&field_defense_council_target_id=&page=3 (վերջին մուտք՝ 22.08.2022):

Թեկնածուական ատենախոսություններ են պաշտպանել հետևյալ թեմաներով. «Թինգշփիլի պրորբլեմատիկան» (Գոհար Փանոսյան, 2015), «Հայնրիխ Բյոլի փոքր արձակը (Տաթևիկ Սիմոնյան, 2015), «Անհատի ողբերգությունը Յ. Վ. Գյոթեի ստեղծագործության մեջ և դրա արտացոլումը XX դարի գերմանալեզու հեղինակների երկերում (Սիրվարդ Ստեփանյան, 2015), «Մեղքի և ապաշխարության խնդիրը Գյունթեր Գրասի «Դանցիգյան եռագրության» մեջ» (Սյուզաննա Նավասարդյան, 2014), ««Խումբ 47»-ի գեղարվեստական-գեղագիտական հայեցակարգը և Հանս Վերներ Ռիխտերի արձակը» (Վարդուշ Մակիչյան, 2014), «Էլիաս Կանետիի կենսապատումի ժանրային կառուցվածքը» (Լիանա Սաֆարյան, 2011), «Քրիստոնեական մոտիվները և գաղափարները Ֆրիդրիխ Հյոլդեռլինի ստեղծագործություններում (Սերգեյ Ստեփանյան, 2009), «Վոլֆգանգ Քյոփենի վեպերը» (Հասմիկ Մայսուրյան, 2007), «Հերման Հեսսեի վեպերի պոետիկան՝ արևելյան և արևմտյան մշակույթների համադրման լույսի ներքո» (Յակոբ Ակոպյան, 2007), «Գերմանիայի միավորման թեման 90-ական թվականների գերմանական վեպում»՝ Գյունթեր Գրասի ստեղծագործությունները (Ելենա Էթարյան, 2007), «Դեմոնիզմի կոնցեպցիան Գյոթեի և Բայրոնի ստեղծագործություններում» (Անահիտ Շահմուրադյան, 2006), «Օտարացման և հիշողության թեման» Թ. Բեռնհարդի և Բ. Հայնի արձակում» (Գայանե Գինոյան, 2006), «Հերման Հեսսեի գրական-փիլիսոփայական համակարգը՝ ըստ «Ուլունքախաղ» վեպի» (Տիգրան Սիմյան, 2005), ««Ֆաուստի» հայերեն թարգմանությունները» (Գայանե Թորոսյան, 2005), «Անձի պրորբլեմը Մարիաննե Գրուբերի ստեղծագործություններում» (Էլլա Ավագյան, 2004), «Հայնրիխ Հայնե և հայ գրականությունը» (Նազելի Մարգարյան, 2001), «Ֆրանց Կաֆկայի «Օրագրերը»» (Արայիկ Առաքելյան, 2000):

Այս ոլորտում սակավաթիվ *դոկտորական ատենախոսություններ* չի վերնագրերն են՝ «Գրականության ինքնառեֆլեքսիան գերմանական ռոմանտիզմի դարաշրջանից մինչ արդի գրականություն» (Թոմաս Մանի և Գյունթեր Գրասի ատեղծագործությունների հիման վրա) (Ելենա Էթարյան, 2022), «1918–1939 թթ. գերմանական վեպի գաղափարագեղարվեստական պրոբլեմատիկան» (Տիգրան Սիմյան, 2015), «20–րդ դարի առաջին կեսի գերմանական փիլիսոփայական վեպը (Ժանրային առանձնահատկությունները և պոետիկայի պրոբլեմները Թոմաս Մանի վեպերում) (Արա Առաքելյան, 2014), «XX դարի երկրորդ կեսի ավստրիական դրամատուրգիան» (Կարլեն Մատինյան, 2002):

Վերոնշյալից կարելի է հետևություն անել, որ հայաստանյան գրականագիտության ուշադրության կենտրոնում հիմնականում հայտնվել են գերմանական և ավստրիական գրականությունները, ընդ որում՝ մեծ մասամբ XX դարի երկրորդ կեսի գրականությունները (Թոմաս Ման, Հերման Հեսսե, Հայնրիխ Բյոլ, Գյունթեր Գրաս, Վոլֆգանգ Բյոփեն, Էլիաս Կանետի և այլն), իսկ ատենախոսությունների գերակշռող մասը նվիրված է արձակի ժանրին: Ակներև է, որ շվեյցարական գրականությունը, ինչպես նաև արդի գերմանալեզու գրականությունը (XXI դարասկզբի) հայ գերմանագիտության ասպարեզում կարոտ են ուսումնասիրության:

Գերմանական լեզվաբանության բնագավառում դոկտորական ատենախոսություններ դժբախտաբար դեռևս չեն գրվել, սակայն սկսած 2001 թվականից պաշտպանության են ներկայացվել տասներեք թեկնածուական ատենախոսություններ Ժ. 02.07. «ռոմանագերմանական լեզուներ մասնագիտությամբ»: Ատենախոսությունների թեմաներն են՝ «Կերպի կարգի տիպաբանական առանձնահատկությունները գերմաներենում» (Գոհար Դոխոլյան, 2015), «Ժամանակի քերականական կարգի

տիպաբանական առանձնահատկությունները ժամանակակից գերմաներենում» (Շուշանիկ Տեր-Աղամյան, 2014), (Սիրանուշ Պապոյան, 2014), ««Տուն» հասկացույթը գերմաներենում (հայերենի զուգադրությամբ)» «Գերմաներենի շարահյուսության տիպաբանական առանձնահատկությունները» (Նելլի Խանոյան, 2013), «Գերմաներենի եղանակավորող մասնիկների տիպաբանական առանձնահատկությունները» (Կարինե Հովհաննիսյան, 2013), «Գերմաներենի ժխտման կարգի տիպաբանական առանձնահատկությունները» (Նաիրա Շաչիվյան, 2012), «Ժամանակակից հայերենի և գերմաներենի հոլովական համակարգերի զուգադրական քննություն» (Արծվիկ Սուվարյան, 2008), «Վիճակի կրավորականը գերմաներենում» (Անուշ Հայրապետյան, 2008), «Ձայնդարձի ձևաբանական նշանակությունը գերմանական լեզվում» (Սյուզաննա Ղազարյան, 2007), «Գերմաներենի հնչույթային համակարգի տիպաբանական առանձնահատկությունները» (Սուսաննա Առաքելյան, 2003), «Գոյականի թվի ոճական առանձնահատկությունները ժամանակակից գերմաներենում» (Հրայր Բաղդամյան, 2002), «Գերմաներենի անցյալի անորոշ դերբայի դրսևորումները և նրանց համարժեքները հայերենում (զուգադրական վերլուծություն)» (Հունան Ղուկասյան, 2001), «Գունանիշ ածականների հավելիմաստությունը ժամանակակից գերմաներենում» (Թագուհի Խոջայան, 2001):

Հավելենք նաև, որ 2004 թվականին ատենախոսություն է պաշտպանվել «Ընդհանուր և համեմատական լեզվաբանություն» (Ժ.02.02) մասնագիտությամբ՝ «Ժամանակի բառիմաստային կարգի հոգելեզվաբանական դրսևորումները գերմաներենում և հայերենում» (Էլիզա Ղազարյան) թեմայով, իսկ 2006 թվականին՝ Ժ. 02.03 «Համեմատական և տիպաբանական լեզվա-

բանություն» մասնագիտությամբ («Սեռը և փոխառությունների սեռային իմաստի ընկալումը գերմաներենում և ռուսերենում՝ ստուգաբանական լուսաբանմամբ», Գայանե Սավոյան):

Վերոնշվածից կարելի է բխեցնել, որ գերմանական լեզվաբանության բնագավառում ուսումնասիրությունները տիպաբանական կամ զուգադրական բնույթ են կրում:

70–ական թվականներից սկսած հետազոտական մոտեցումների անկասելի մասնագիտացման հետևանքով գերմանագիտության լեզվաբանական և գրականագիտական ճյուղերի միջև տեղի է ունենում խիստ սահմանազատում: Մշակութաբանության և մեդիաուսումնասիրությունների ազդեցության տակ գրականագիտական գերմանագիտությունը ընդարձակում է իր հետազոտության շրջանակները ուսումնասիրությունների նոր ոլորտներով՝ պոեզիայի ռեցեպցիայով աուդիովիզուալ մեդիաների միջոցով, մոդեռն հեղինակների ստեղծագործությունների գեղագիտության (Produktionsästhetik), արվեստների միջև քրոսովերի (Crossover) ձևերի, նաև այնպիսի երևույթների դիտարկմամբ, ինչպիսիք են ժամանցային (տրիվիալ) և կանանց գրականությունները, ֆեյկետոնը, կոմիքսները:⁹

Ինչ վերաբերում է ժամանակակից լեզվաբանությանը, ապա սկսած 70–ական թվականներից վերջինիս ուշադրությունը սևեռված է եղել սերող քերականությանը, ինչպես նաև գործաբանական անցումային ոլորտներին, օրինակ, հանրալեզվաբանությանը և հոգելեզվաբանությանը: Հետազոտության արդի բնագավառներից են համակարգչային լեզվաբանությունը, նյարդալեզվաբա-

⁹ Stü Schnel 2008: 114, մեջբերումը՝ ըստ Marina Foschi Albert, GLOT-TODIDACTICA XLII/2 (2015), ADAM MICKIEWICZ UNIVERSITY PRESS POZNAN, DOI: 10.14746/gl.2015.42.2.1, էջ 11:

նությունը, հնչյունաբանությունը:¹⁰ Նույնը կարելի է ասել Ճանաչողական գրականագիտության մասին, որը միտված է ապագա ուսումնասիրություններին:

Ամփոփելով գերմանագիտական լեզվաբանության և գրականագիտության հետազոտության հեռանկարների մասին այս ակնարկը՝ կարելի է ասել, որ ապագայում ուսումնասիրության խնդրո առարկա են դիտվելու միջգիտակարգային խնդիրները, ինչպես օրինակ, բանասիրական առանցքային հասկացությունների հիման վրա տեքստի վերլուծության տարբեր մոտեցումները: Բանասիրական առանցքային հասկացություններ ասելով՝ հասկանում ենք տեքստը, բանարվեստը, մեկնարվեստը, ինչպես նաև բանասիրական և ոչ բանասիրական մոտեցումների համադրությունը տեքստերի նկարագրության և խոսույթների նկատառումով, ասել է թե՛ լեզվի պատմությունը, սոցիոլոգիան, լեզվի քննադատությունը, զրույցի հետազոտությունը (*Gesprächsforschung*)¹¹:

Խոսելով գերմանագիտության մասին՝ անհրաժեշտ ենք համարել անդրադառնալ նաև գերմաներենի դասավանդման մեթոդիկայի բնագավառին:

2001 թվականից գերմաներենի նյութի հիման վրա գրվել են չորս թեկնածուական ատենախոսություններ՝ «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա (ըստ բնագավառների)» (ԺԳ.00.02) մասնագիտության գծով՝ «Գերմաներեն բնագրերի ընթերցանության բովանդակության ստուգման ռազմավարությունը ոչ լեզվական ֆակուլտետում», Ամալյա Պետրոսյան, 2021), «Մենախոսության ուսուցումը հաղորդակցական–տեղեկատվական և նախագծային տեխնոլոգիաների կիրառմամբ (գերմաներենը որպես երկրորդ

¹⁰ Skén Klein 2008: էջ 15, մեջբերումը՝ ըստ Marina Foschi Albert, նույն տեղում, էջ 12:

¹¹ Հմմտ., նույն տեղում, էջ 12:

օտար լեզու ոչ լեզվական բուհում)», (Լուսինե Մեսրոբյան, 2009), «Գերմաներեն մասնագիտական կողմնորոշման նվազագույն քերականության ընտրությունը և ուսուցման ռազմավարությունը (պատմագիտական նյութի հիման վրա)» (Սրբուհի Լուկուկյան, 2008), «Տնտեսագիտական տերմինաբանության ընտրության և մեթոդական տիպականացման սկզբունքները (ոչ լեզվական բուհերում գերմաներենի ուսուցման ժամանակ)», Հարություն Ճանճապանյան, 2001):

Թեև նշված ատենախոսությունների խնդրո առարկաները վերաբերում են ոչ լեզվական ֆակուլտետներին կամ ոչ լեզվական բուհերին, հարկ է նշել, որ Հայաստանում գործող մեթոդիկայի մասնագետների մեծամասնությունը սերտ համագործակցում է Գյոթեի անվան գերմանական մշակութային կենտրոնի ներկայացուցչության հետ՝ գերմաներենի ուսուցիչների վերապատրաստումներ անցկացնելով Հայաստանի տարբեր շրջաններում:

Գեղարվեստական թարգմանություններ գերմաներենից

Գիտական մտքի զարգացման հետ մեկտեղ անկախության տարեթվից սկսած գերմանախոս գրականությունից հայերեն են թարգմանվել բազմաթիվ ստեղծագործություններ: Թարգմանիչները հիմնականում կենտրոնացել են XX դարի երկրորդ կեսի գերմանախոս գրականության վրա, այսպես՝ 1991–2001 թթ. թարգմանվել են հետևյալ երկերը¹²՝ Հերման Հեսսե, պատմվածքներ, (Աշոտ Ալեքսանյան, 1991), Ֆրանց Կաֆկա, «Սիրեններ-

¹² Հարկ է նշել, որ խոսքը թարգմանությունների ընտրանու մասին է, հակառակ դեպքում նրանց ընդհանուր ծավալը կգերազանցեր հոդվածի շրջանակները: Գրականության ցանկում տրված է նշված թարգմանիչների աշխատանքների ամբողջական ցանկը:

րի լոռությունը» (Արա Առաքելյան, 1994), Ռոբերտ Մուզիլ, «Երեք կին, նովելներ էսսեններ» (Աշոտ Ալեքսանյան, 1994), Շտեֆան Գեորգե, «Բանաստեղծություններ» (ընտրանի) (Աշոտ Ալեքսանյան, 1997), Ռայներ Մարիա Ռիկե, «Վարդի հոգին» (ընտրանի) (Աշոտ Ալեքսանյան, 1998): Սկսած 2002 թվականից գեղարվեստական թարգմանությունները նոր թափ են հավաքում: Այսպես՝ թարգմանվել են Ֆրիդրիխ Հյոլդեռլին, «Բանաստեղծություններ» (Հակոբ Մովսես), Թոմաս Բերնհարդ, «Հատվածներ պիեսներից» (Կարլեն Մատինյան), Գյունթեր Գրաս, «Թիթելյա թմբուկը» (Կարլեն Մատինյան), Էլիաս Կանետտի, «Զանգված և իշխանություն» (Արա Առաքելյան): 2004 թվականին Աշոտ Ալեքսանյանի թարգմանությամբ լույս է տեսել Հերման Հեսսեի «Դեմիանը», «Սիդիարթան», «Քլինգգորի վերջին ամառը», Ռոբերտ Մուզիլի «Մարդն առանց հատկությունների» (հատվածներ վեպից), իսկ արդեն 2005 թ.–ին՝ Ռ. Մուզիլի «Ճշգրտություն և հոգի: Երկերի ժողովածուն», որը ներառում է հեղինակի էսսեները, ելույթները, հատվածներ օրագրերից և «Մարդն առանց հատկությունների» վեպից: Նույն 2005 թ. Կարլեն Մատինյանը թարգմանում է Պետեր Հանդկեի «Դարպասապահի վախը 11-մետրանոցից» վիպակը, որի երկրորդ՝ վերանայված տարբերակը հրատարակվել է 2020 թվականին: 2007 թվականին Արա Առաքելյանի թարգմանությամբ լույս է տեսնում «Նիբելունգների երգը»: 2010 թվականին թարգմանվում են Ռ. Մուզիլի «Դպրոցահասակ Թյորլեսի հոգեխոտվքը» (Ա. Ալեքսանյան), ինչպես նաև «Հռենոյան քնար, էջեր գերմանական, ավստրիական և ֆրանսիական պոեզիայից» (Ա. Ալեքսանյան): 2012–2013 թթ. Կարլեն Մատինյանը թարգմանում է «Սաքսոն–Անհալտյան, պոեզիա «Վերջապես անցան սառը օրերը» և Պատրիկ Զյուսքինդի «Օծանելիք» վեպը, որին հաջորդում են թարգմանություններ առավելապես ավստրիական գրա-

կանությունից, այսպես՝ Էլֆրիդե Ելինեկ, «Դաշնակահարուհին» (2014), Պետեր Հանդլեկ, «Դանդաղ վերադարձ տուն» (2015), «Դոն ժուան» (2020), «Կարճ նամակ երկար հրաժեշտից առաջ» (2020), «Երկրորդ սուրը» (2022), «Մեծ անկումը» (2022), Ռոբերտ Մենասե, «Մայրաքաղաք» (2020), Ֆրանց Կաֆկա¹³ (Հտ. 2) «Ամերիկա» (2020), (Հտ. 5) «Նամակներ» (2021): Արա Առաքելյանի թարգմանությունների ցանկում ևս ավստրիացի հեղինակներ են ընդգրկված՝ Ստեֆան Զվայգ, «Ընտիր նովելներ» (2016), Ֆրանց Կաֆկա, հինգհատորյակի առաջին հատորը (Կաֆկայի ամբողջ փոքր արձակը, 2019), Ֆրանց Կաֆկա, հինգհատորյակի չորրորդ հատորը (Կաֆկայի օրագրերը, 2022):

Ավստրիական գրականության մի գեղեցիկ նմուշ էլ հայերեն է թարգմանել Լիանա Սաֆարյանը՝ Դանիել Գլաթաուեր, «Հավերժ քոնը» («Զանգակ» հրատ., 2017):

2017 թվականից մինչ օրս թարգմանվել են նաև գերմանական գրականության և փիլիսոփայության այնպիսի գլուխգործոցներ, ինչպիսիք են Ռ. Մուզիլի «Մարդն առանց հատկությունների» (վեպ երկու հատորով) (Ա. Ալեքսանյան, 2017), Գոթֆրիդ Բենի «Նա, ով մենակ է» (Ա. Ալեքսանյան, 2017), Հերման Հեսսեի «Ուխտագնացություն Արևելք» (Ա. Ալեքսանյան, 2018), «Նարցիսը և Ոսկերեքանը» (Ա. Ալեքսանյան, 2019), «Տափաստանի գայլը» (Ա. Առաքելյան, 2013), «Հուլունքախաղը» (Ա. Առաքելյան, 2016), Ֆրիդրիխ Նիցշե, Երկեր 5 հատորով (Հակոբ Մովսես, 2018–2021), Յոհանն Վոլֆգանգ Գյոթեի «Ճանապարհորդություն Իտալիա» (Կարլեն Մատինյան, 2021), Հայնրիխ Բյոլի «Հոգատարության կապանքներում» (Կարլեն Մատինյան, 2021), Յուրգեն Հաբերմասի «Հանրայնության կառուցվածքային փոփոխությունը» երկերը:

¹³ Թեև Ֆրանց Կաֆկայի դեպքում ձիշտ է խոսել գերմանախոս, և ոչ միայն ավստրիացի գրողի մասին:

Ի տարբերություն գիտական աշխատությունների՝ շվեյցարական գրականությունը ևս ներկայացված է գեղարվեստական թարգմանություններում, սակայն դասական գրականությունը միայն ի դեմս Մաքս Ֆրիշի որոշ ստեղծագործությունների՝ թարգմանիչ Կ. Մատինյան՝ «Հոմո Ֆաբեր» (2017), «Կապտամորուսը» (2018), «Մոնթոկ» (2018), «Ենթադրենք անունս Գանթենբայն է» (2020):

2017 թվականին շվեյցարական արդի գրականությունից ևս մի վեպ է դրվել հայ ընթերցողի սեղանին Լիանա Սաֆարյանի թարգմանությամբ՝ Հանայորգ Շերթենլայբի «Գիշերային լողորդը» վեպը, որը «Ջանգալ» հրատարակչության և Շվեյցարիայի դեսպանատան հետ համագործակցության արդյունքն էր:

2010 թվականից ասպարեզ է դուրս գալիս մի նոր թարգմանիչ, որի ուշադրության կենտրոնում ժամանակակից գերմանական և ավստրիական գրականություններն են: Խոսքը Գայանե Գինոյանի մասին է: Նրա անդրանիկ թարգմանությունը Դանիել Քելմանի «Աշխարհի չափագրումն» էր (2010), որին հաջորդեցին հետևյալ գրական երկերի թարգմանությունները՝ Քրիստոֆ Հայնի «Օտար ընկերը» (2011), Բեռնհարդ Շլինկի «Ընթերցողը» (2012), Առնո Գայգերի «Ծեր թագավորը իր քսորավայրում» (2013), Յուլիա Ֆրանկի «Միջօրեի տիկինը» (2014), Կատերինա Փոլադյանի «Այստեղ առյուծներ կան» (2021) և այլն:

Եզրակացնենք, որ նշված գեղարվեստական թարգմանությունները ոչ միայն եզակի մշակութային արժեք են, այլ նաև կարող են հիմք ծառայել թարգմանչական բաժիններում սովորող ուսանողների ավարտական և մագիստրոսական աշխատանքների համար: Արդեն այսօր կանխատեսելի է, որ մեծ շուկա է ստեղծված ապագա գեղարվեստական թարգմանությունների համար, որոնք գլոբալացվող աշխարհում բանալի են օտար մշակույթներ բացա-

հայտելու համար. չէ՞ որ յուրաքանչյուր երկիր ճանաչելու համար հարկ է նաև ճանաչել նրա գրականությունը:

Ամփոփելով՝ կարելի է նշել, որ, ի տարբերություն գերմաներենից հայերեն թարգմանությունների բազմությանը, շատ սակավաթիվ են հայերենից գերմաներեն գեղարվեստական թարգմանությունները: Ուստի այս հոդվածը այս մարտահրավերն ընդունելու կոչ է:

Էլեկտրոնային կայքեր

1. https://aspu.am/hy/page/otar_lezuneri_fakultet/
2. https://brusov.am/hy/chairs/germanereni_ambion/#sthash.qUIo8fa7.tDL3ULXS.dpbs
3. <https://ihumanities.rau.am/am/departament/kafedra-teorii-yazyka>
4. <http://www.y-su.am/faculties/hy/taEeqZkjAU2YsxNhABaMAnZt9D/section/structure/amb/138>

Թարգմանություններ

Աշոտ Ալեքսանյան

1. Հերման Հեսսե, Պատմվածքներ, Ապոլոն հրատ., Երևան, 1991 թ.:
2. Ռոբերտ Մուզիլ, Երեք կին, նովելներ և էսսեներ, «Նաիրի» հրատ., Երևան, 1994:
3. Շտեֆան Գեորգե, Նոր Արքայություն, ընտրանի, ԳԱԹ հրատ., Երևան, 1997:
4. Ռայներ Մարիա Ռիլկե, Վարդի հոգին, ընտրանի, «Նոր-դար» հրատ., Երևան, 1998:
5. Հերման Հեսսե, Դեմիան, Սիդիարթա, Քլինգգորի վերջին ամառը, Հայաստան/Գրական հայրենիք հրատ., Երևան, 2004:
6. Ռոբերտ Մուզիլ, Ընտրանի, էսսեներ և ելույթներ, Օրագրերից, Մարդն առանց հատկ. / Հատվածներ/ Երևան, Նաիրի հրատ., 2005
7. Ռոբերտ Մուզիլ, Դպրոցահասակ թյուրլեսի հոգեխոռվ-քը, վեպ, «Հայաստան»/«Գրական հայրենիք» հրատ., Երևան, 2010:

8. Հռենոսյան քնար, Էջեր գերմանական, ավստրիական և ֆրանսիական պոեզիայից, Եր., «Հայաստան»/ «Գրական հայրենիք» հրատ., Երևան, 2010:
9. Գոթֆրիդ Բեն, Նա, ով մենակ է, Քերթվածք, «Անտարես» հրատ., Երևան, 2017:
10. Ռոբերտ Մուզիլ, Մարդն առանց հատկությունների, Վեպերկու հատորով, «Անտարես» հրատ., Երևան, 2017:
11. Հերման Հեսսե, Ուխտագնացություն Արևելք, Վիպակ, «Անտարես» հրատ., Երևան, 2017:
12. Ռոբերտ Վալզեր, Զբոսանք, Վիպակ, «Անտարես» հրատ., Երևան, 2017:
13. Ռոբերտ Մուզիլ, Երազողները, Դրամա, 2018, Tatron-drama.am կայք, <http://tatron-drama.am/archives/1822>:
14. Քրիստոֆ Ռանսմայր, Վերջին աշխարհը, Վեպ, «Անտարես» հրատ., Երևան, 2019:
15. Հերման Հեսսե, Նարցիսը և Ոսկերեբանը, Վեպ, «Անտարես» հրատ., Երևան 2020:
16. Ռոբերտ Մուզիլ, Ժառանգություն կենդանության օրոք, Քյուրքչյան հրատ., Երևան, 2020:

Արա Առաքելյան

1. Ֆրանց Կաֆկա, Սիրենների լռությունը, «Նաիրի» հրատ., Երևան, 1994:
2. Էլիաս Կանետտի, Զանգված և իշխանություն, «Նաիրի» հրատ., Երևան, 2002:
3. Նիբելունգների երգը, «Անտարես» հրատ., Երևան, 2007:
4. Հերման Հեսսե, Տափաստանի գայլը, «Անտարես» հրատ., Երևան, 2013:

5. Ֆրանց Կազկա, Պատմվ., Ավստրիական արձակ ժողովածուում, «Անտարես» հրատ., Երևան, 2014:
6. Հերման Հեսսե, Հուլունքախաղ, «Անտարես» հրատ., Երևան, 2016:
7. Ստեֆան Յվայգ, Ընտիր նովելներ, «Բուկինիստ» հրատ., Երևան, 2016:
8. Գուստավ Յանոուխ, Զրույցներ Կաֆկայի հետ, «Զանգակ» հրատ., Երևան, 2018:
9. Ֆրանց Կաֆկա, Պատմվածքներ, աֆորիզմներ, Երկեր հինգ հատորով, Հատոր 1, «Անտարես» հրատ., Երևան, 2019:
10. Ֆրանց Կաֆկա, Օրագրեր, Երկեր հինգ հատորով, Հատոր 4, «Անտարես» հրատ., Երևան, 2022:

Հանրապետական մամուլում տարբեր ժամանակներում տպագրվել են նաև Թ. Մանի, Հ. Հեսսեի, Հ. Բյուլլի, Հ. Հոֆմանսթալի և մի շարք այլ գերմանախոս գրողների պատմվածքներ:

Գայանե Գինոյան

1. Դանիել Քելմանն, Աշխարհի չափագրումը, ԻԿԿ հրատ., Երևան, 2010:
2. Քրիստոֆ Հայն, Օտար ընկերը, «Արևիկ» հրատ., Երևան 2011:
3. Բերնհարդ Շլինկ, Ընթերցողը, «Զանգակ-97» հրատ., Երևան, 2012:
4. Առնո Գայգեր, Ծեր թագավորը իր աքսորավայրում, «Զանգակ-97» հրատ., Երևան 2013:
5. Յուլյա Ֆրանկ, Միջօրեի տիկինը, «Անտարես» հրատ., Երևան, 2014:

6. Ինգերորգ Բախմանն, Զիմուլտան, «Զանգակ-97» հրատ., Երևան, 2015:
7. Մելինդա Նադյ Աբոնի, Աղավնիները թռչում են, «Զանգակ-97» հրատ., Երևան 2016:
8. Պետեր Շտամ, Ագնես, «Զանգակ-97» հրատ., Երևան 2017:
9. Ռոբերտ Զեքալեր, Մի ամբողջ կյանք, «Զանգակ-97» հրատ., Երևան, 2018:
10. Լուկաս Բերֆուս, Կոալա, «Զանգակ-97» հրատ., Երևան, 2018:
11. Յոզեֆ Ռոթ, Հոբ, «Զանգակ-97» հրատ., Երևան, 2020:
12. Բերնհարդ Շլինկ, Փախուստ սիրուց, «Զանգակ-97» հրատ., Երևան, 2020:
13. Հայնրիխ Բյոլ, Մարդկայինի էսթետիկա, էսսեներ, Հայնրիխ Բյոլի Հարավային Կովկասի տարածաշրջանային գրասենյակ, Երևան, 2020:
14. Կատերինա Փոլադյան, Այստեղ առյուծներ կան, «Ակտուալ արտ հրատ»., Երևան, 2021:

Կարլեն Մատինյան

1. Գյունթեր Գրաս, Թիթեղյա թմբուկը, «Նաիրի» հրատ., Երևան, 2002 /Երկրորդ վերանայված հրատարակությունը՝ 2014, «Անտարես»:
2. Պետեր Հանդկե, Դարպասապահի վախը 11-մետրանոցից, «Նաիրի» հրատ., Երևան, 2005. /Երկրորդ վերանայված հրատարակությունը՝ 2020, «Անտարես»/:
3. Փառլ Մաար, Մեկ օր կոմանդոր Վալթերի կյանքից, «Գասպրինտ» հրատ., Երևան, 2007:

4. Պատրիկ Զյուսքինդ, Օծանելիք, «Անտարես» հրատ., Երևան, 2013:
5. Գուստավ Մեյրինք, Սարակոյի պաշարումը, «Ավստրիական արձակ» ժողովածուում, «Անտարես» հրատ., Երևան, 2014:
6. Էլֆրիդե Ելինեկ, Դաշնակահարուհին, «Անտարես» հրատ., Երևան, 2014:
7. Պետեր Հանդկե, Դանդաղ վերադարձ տուն, «Անտարես» հրատ., Երևան, 2015:
8. Մանֆրեդ Թայզեն, Ապակյա Արամը, «ԻԲԻ-Արմենիա» հրատ., Երևան, 2015:
9. Լուիզ Զայլեր, Կրուզո, «Անտարես» հրատ., Երևան, 2017:
10. Մաքս Ֆրիշ, Հոմո Ֆաբեր, «Անտարես» հրատ., Երևան, 2017:
11. Մաքս Ֆրիշ, Կապտամորուսը, Մոնթոկ, «Անտարես» հրատ., Երևան, 2018:
12. Մաքս Ֆրիշ, Ենթադրենք անունս Գանթենբայն է, «Անտարես» հրատ., Երևան, 2020:
13. Պետեր Հանդկե, Դոն Ժուան, «Անտարես» հրատ., Երևան, 2020:
14. Պետեր Հանդկե, Կարճ նամակ երկար հրաժեշտից առաջ, «Անտարես» հրատ., Երևան, 2020:
15. Ռոբերտ Մենասե, Մայրաքաղաք, «Անտարես» հրատ., Երևան, 2020:
16. Ֆրանց Կաֆկա, Ամերիկա, Հ. 2., «Անտարես» հրատ., Երևան, 2020:
17. Ֆրանց Կաֆկա, Նամակներ, Հ. 5., «Անտարես» հրատ., Երևան, 2021:

18. Յ. Վ. Գյոթե, Ճանապարհորդություն Իտալիա, «Անտարես» հրատ., Երևան, 2021:
19. Հայնրիխ Բյոլ, Հոգատարության կապանքներում, «Անտարես» հրատ., Երևան, 2021:
20. Պետեր Հանդկե, Երկրորդ սուրը, «Անտարես» հրատ., Երևան, 2022:
21. Պետեր Հանդկե, Մեծ անկումը, «Անտարես» հրատ., Երևան, 2022:
22. Է. Թ. Ա. Հոֆման, Մուռ կատվի կենսահայացքները, «Անտարես» հրատ., Երևան, (տպ. մեջ է):

Հանրապետական մամուլում տպագրվել են տարբեր տարիներին նաև գերմանալեզու գրողներ Օսկար Ելինեկի, Թոմաս Բեննհարդի, Հայմիթո ֆոն Դոդերերի պատմվածքներից, քանաստեղծություններից, պիեսներից/հատվածների/:

Հակոբ Մովսես

1. Ֆրիդրիխ Հյոլդեռլին, Բանաստեղծություններ, «Նաիրի» հրատ., Երևան, 2002:
2. Գեորգ Թրակլ, Բանաստեղծություններ, «Նաիրի» հրատ., Երևան, 2007:
3. Ֆրիդրիխ Նիցշե, Երկեր 5 հատորով (6 գրքով), «Անտարես» հրատ., Երևան, 2018–2021:

Լիանա Սաֆարյան

1. Դանիել Գլաթաուեր, Հավերժ քոնը, «Զանգակ» հրատ., Երևան 2017:
2. Հանսյորգ Շերթենլայբ, Գիշերային լողորդը, «Զանգակ» հրատ., Երևան 2017:

Հրաչյա Ստեփանյան

1. Յուրգեն Հաբերմաս, Հանրայնության կառուցվածքային փոփոխությունը, «Անկյունաքար» հրատ., Երևան, 2021:

Բանալի բառեր՝ հայաստանյան գերմանագիտություն, գերմաներենը՝ որպես հիմնական և երկրորդ օտար լեզու, գերմանական լեզվաբանություն, գերմանական գրականագիտություն, գեղարվեստական թարգմանություններ գերմաներենից հայերեն, փոխանակման ու շարժունության ծրագրեր

Հայագիտության դերը Գերմանիայում

Արմենուհի Դրոստ-Աբգարյան

Ներածություն

Գերմանիայի վերամիավորումից հետո Գերմանիայի Դաշնային Հանրապետության և Հայաստանի Հանրապետության միջև վերջին 30 տարիների ընթացքում գիտության, մշակույթի և կրթության ոլորտներում արդյունավետ համագործակցության կարևոր նշաձող էր գերմանական ակադեմիական հաստատություններից մեկում հայագիտության՝ որպես ինքնուրույն առարկայի, կառուցվածքային ակադեմիական միավորի ստեղծումը: Երկու երկրների միջև մշակութային համաձայնագրի (1996 թ.) շրջանակներում սկզբում ստեղծվեց համալսարանական «Լոյկորեա» հիմնադրամին (Վիթենբերգ) կից միջգիտակարգային հմտությունների կենտրոն («Մեսրոպ» հայագիտական հետազոտությունների կենտրոնը), որը 2010 թվականից ի վեր գործում է Հալլեի Արևելագիտության ինստիտուտում նույն թվականին Գերմանիայի ակադեմիական փոխանակության ծառայության (ԴԱԱԴ) ֆինանսավորմամբ հիմնված հայագիտության պրոֆեսուրային (ամբիոնին) կից:

Հալլեի համալսարանը ԴԱԱԴ-ին ներկայացված հայտում պարտավորվել էր հետազայում ևս շարունակել հայագիտությունը՝ որպես ինքնուրույն տարածաշրջանային առարկա, և ֆինանսավորման ժամկետի ավարտից հետո ստեղծեց անժամկետ արտակարգ պրոֆեսուրա (էքստրաօրդինարիատ), որը հաջողու-

թյամբ աշխատեց մինչև 2021 թվականի վերջը: Այս առարկայի նախատեսված շարունակությունը պլանային կանոնավոր պրոֆեսուրայի (օրդինարիատ) շրջանակներում ընթացքի մեջ է:

Սաքսոնիա-Անհալթ երկրամասի (Գերմանիայի Դաշնային Հանրապետության անունից) և Հայաստանի Հանրապետության միջև գիտամշակութային համագործակցության համաձայնագրին համապատասխան 1998 թվականին հիմնադրված հմտությունների կենտրոնը ստեղծվել է Արևելյան եկեղեցու մասնագետ և արևելագետ պրոֆեսոր Հերման Գոլցի (Հալլե) նախաձեռնությամբ ձևավորված հայագիտական աշխատանքային խմբի առաջարկով: Պրոֆեսոր Գոլցը Հալլեի համալսարանի աստվածաբանական ֆակուլտետում ստեղծել էր դոկտոր Յոհաննես Լեփսիուսի արխիվը, որը Գերմանիայի վերամիավորումից հետո Պոտսդամի Լեփսիուսի տան ֆինանսավորման շրջանակներում շարունակեց վարել Դաշնային կառավարության մշակույթի և զանգվածային լրատվամիջոցների հանձնակատարը: Հերման Գոլցը դարձավ «Մետրոպ» կենտրոնի առաջին տնօրենը, որը հասարակական հիմունքներով ղեկավարեց մինչև իր վաղաժամ մահը՝ 2010 թվականը: Նրա մահից հետո կենտրոնի հասարակական հիմունքներով ղեկավարումը ստանձնեց տողերիս հեղինակը՝ հայկական ուսումնասիրությունների արտապլանային պրոֆեսուրայի շրջանակներում:

Գերմանիայի և Հայաստանի միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման 30-ամյակի կապակցությամբ ցանկալի է, որ Հալլեի համալսարանի՝ Գերմանիայում առաջին կանոնավոր պրոֆեսուրան հիմնելուն ուղղված երկարամյա ջանքերը Սաքսոնիա-Անհալթ երկրամասի (որը Գերմանիայի վերամիավորումից հետո մշակույթի ու կրթության նախարարների մշտական համաժողովի շրջանակներում պատասխանատու է Հայաստանի

հետ Դաշնային Հանրապետության գիտամշակութային կապերի համար) և կրթության ու հետազոտությունների դաշնային նախարարության հետ համագործակցությամբ վերջնական նպատակին հասցվեն նաև համատեղ ստեղծված հատուկ ամբիոնի ղեկավարի թոշակի անցնելուց հետո:

Ներկայում հայագիտական կենտրոնի թափուր մնացած ղեկավարությունը հասարակական հիմունքներով ստանձնել է Քրիստոնեական արևելքի լեզուների և մշակույթների՝ Գերմանիայում նույնպես միակ ամբիոնը, որն առանց այդ էլ ծանրաբեռնված է Քրիստոնյա Արևելքի հինգ այլ տարասեռ լեզուների (ասորերեն, ղպտերեն կամ քրիստոնեական եգիպտերեն, եթովպերեն, քրիստոնեական արաբերեն ու վրացերեն) և տարածաշրջանների հետազոտական ու դասավանդման աշխատանքով:

Չնայած Հալլեն ունի հետազոտության ու դասավանդման լավագույն ենթակառուցվածք, այդուհանդերձ, առարկայի անկախությունը կարող է ապագայում ապահովվել և տևական շարունակություն ունենալ միայն ամբիոնի մակարդակով՝ որպես ինքնուրույն հիմնական մասնագիտություն: Հակառակ դեպքում առարկայի շարունակականության համար անհրաժեշտ երիտասարդ գիտնականների ուսուցումը տևականորեն ապահովել հնարավոր չէ:

Ստորև անդրադարձ է արվում այն հարցին, թե ինչու Գերմանիայում հայկական ուսումնասիրությունները և հայագիտական փորձագիտությունը պետք է զարգանան ակադեմիական մասնագիտացման և քաղաքականության մակարդակով:

Հայերենի նոր միջազգային կարգավիճակը

Խորհրդային Միության փլուզումից և Հայաստանի անկախացումից հետո (1991 թ.) հայերենը դարձել է միջազգային հաղորդակցության լեզու:

Դա նշանակում է, որ Հայաստանի Հանրապետության քաղաքացիների բոլոր փաստաթղթերը, որոնք ներկայացվում են գերմանական մարմիններին, պետք է թարգմանվեն հայերենից և ոչ թե ռուսերենից (ինչպես նախկինում): Եվ ընդհակառակը, Գերմանիայում բնակվող հայերի գերմաներեն պաշտոնական իրավական փաստաթղթերն այժմ պետք է Հայաստանի Հանրապետության մարմիններին ներկայացվեն հայերեն թարգմանությամբ:

Այսպիսով՝ Գերմանիային անհրաժեշտ են սեփական թարգմանիչներ (գրավոր և բանավոր թարգմանությունների համար), որոնք տիրապետում են հայերենին թե՛ որպես ելակետային, թե՛ որպես նպատակային լեզու և արտոնագրված կամ պաշտոնապես ձանաչված են պետության կողմից:

Հայերենի թարգմանիչների հավատարմագրման, արտոնագրման և գնահատման համար պատասխանատու պետական մարմիններին անհրաժեշտ են հայերենի մասնագետներ, ինչպես օրինակ, Հեսսենի Մանկավարժների ակադեմիան (Դարմշտադթ), որը տասնամյակներ շարունակ պետական քննություններ է առաջարկում նաև հայերենով գրավոր և բանավոր թարգմանություններ անողներին համար:

Լեզվական գիտելիքների վերաբերյալ եզրակացություններն անհրաժեշտ են դաշնային ու երկրամասային այնպիսի մարմիններին, ինչպիսիք են, օրինակ, Միգրացիայի և փախստականների դաշնային ծառայությունը՝ առանց փաստաթղթերի Գերմանիա մուտք գործող և ապաստան հայցող անձանց ինքնությունը պարզելու, ինչպես նաև ներգաղթողների համար ինտեգրման դասըն-

թացնե՛ր կազմակերպելու նպատակով: Բանն այն է, որ թվաքանակի առումով հրեաներից հետո հայերը հետխորհրդային հանրապետություններից սերող երկրորդ էթնիկ խումբն են, որ իրենց երկիրը լքում են Եվրոպայի կամ ԱՄՆ–ի ուղղությամբ և հեշտությամբ ինտեգրվում, քանի որ հայկական սփյուռքը (որը հիմնականում կազմված է Առաջին համաշխարհային պատերազմից հետո այլևս գոյություն չունեցող Արևմտյան Հայաստանի վերապրած բնակչության սերունդներից) երեք անգամ գերազանցում է Հայաստանի Հանրապետության ներկայիս բնակչության թիվը:

Վերջին տարիներին Սփյուռքի համայնքները համալրվել են Մերձավոր Արևելքից հայկական ծագմամբ փախստականներով, որոնք քաղաքացիական պատերազմների ու ծայրահեղ իսլամիստական ուժերի ակտիվացման համատեքստում դարձյալ ստիպված են լքել 1915–1916 թթ. ցեղասպանությունից հետո Սիրիայում, Իրաքում, Եգիպտոսում, Լիբանանում և այլ երկրներում իրենց գտած նոր հայրենիքները:

2015 թվականից Գերմանիայի գիմնազիաներում միգրացիոն ծագում ունեցող աշակերտների լեզուները ճանաչվել են որպես երկրորդ օտար լեզու, այդ թվում՝ հայերենը: Այդ նպատակով նաև այս լեզվի համար պետք է անցկացվեն լեզվի գնահատման թեստեր (A1–ից մինչև C1), ինչը հնարավոր չէ իրականացնել առանց հայերենի իմացության:

Նույնիսկ որոշ մասնավոր դպրոցներին, որոնք հայերենի դասընթացներ են առաջարկում Գերմանիայի (հատկապես Բեռլինի և Հարավային Գերմանիայի) հայ համայնքների երեխաների համար, անհրաժեշտ են համապատասխան հմտությունների տիրապետող ուսուցիչներ և հայագիտական պատրաստվածություն ունեցող քննական խորհուրդներ:

Տարածված կարծիքը, թե համապատասխան մասնագետներ կարելի է ներգրավել նաև Հայաստանից, հաճախ չի աշխատում ոչ միայն ֆինանսական հնարավորությունների, այլ նաև այն պատճառով, որ Հայաստանի Հանրապետությունում չկան գերմանախոս հայագետներ:

Հայերեն փորձագիտության անհրաժեշտություն կա նաև քրեական հետախուզության ծառայություններում և դատարաններում, ինչպես նաև քաղաքացիական կացության ակտերի գրանցման բաժիններում՝ հայկական ծագման արվեստի զանձերի մաքսանենգության հետ կապված հանցագործությունների քննության կամ պաշտոնական տեքստերի պատրաստման համար:

Գերմանախոս երկրների թանգարանները, գրադարաններն ու արխիվները նույնպես հայագիտական փորձաքննության կարիք ունեն՝ արտեֆակտների վրայի արձանագրությունները վերծանելու և հայերեն ձեռագրերը, հին տպագրությունները, գրքերն ու արտեֆակտները նույնականացնելու համար:

Հայագիտություն առարկայի ընդհանուր գիտական և քաղաքական նշանակության շուրջ

Սովորաբար հայագիտությունը «փոքր տարածաշրջանային առարկա» է դիտվում: Սակայն դա ճիշտ չէ հայագիտության առանձին հստակ դեպքի պարագայում, քանի որ աշխարհով մեկ տարածված հայկական սփյուռքը, որը դրսևորում է համաման կառուցվածք, ինչ համաշխարհային հրեական սփյուռքը, հայագիտության հետազոտությունների և դասավանդման մեջ միշտ ներառում է գլոբալ բազմաշերտ ասպեկտներ, մասնավորապես միջնադարյանից մինչև արդի հայկական մշակույթի արևմուտք-արևելք սիմբիոզը: Ըստ այդմ՝ հայագիտությունը փոքր տարա-

ծաշրջանային առարկա չէ. այն, ըստ էության, պետք է սահմանվի որպես բազմաշերտ «անդրտարածաշրջանային» գիտություն:

Որպես կոնկրետ պարզաբանում (երկար տեսական բացատրությունների փոխարեն)՝ այդ նպատակին թերևս ծառայեն բազմաթիվ օրինակներից ընդամենը երեքը, որոնց միջոցով ցույց է տրվում հայագիտության ընդարձակ անդրտարածաշրջանայնությունն ու անդրգիտակարգայնությունը՝ համընդհանուր մշակութաբանության, քաղաքագիտության, տնտեսագիտության, կրոնագիտության և այլնի համար իր նշանակությամբ.

1. Վերջերս մահացած ֆրանսիացի երգիչ և դերասան *Շառլ Ազնավուրը* ժամանակակից ֆրանսիական, բայց նաև ամբողջ արևմտյան արվեստի ու մշակույթի ասպարեզի նահապետներից մեկը, միևնույն ժամանակ, որպես Թուրքիայից վտարված հայ ծնողների զավակ, քաղաքական գործունեություն է ծավալել՝ գիտակցաբար ներկայացնելով Հայաստանի շահերը: Նա եղել է Շվեյցարիայում Հայաստանի Հանրապետության պաշտոնական դեսպանը՝ դառնալով Անկարայի և Երևանի միջև դժվարին մերձեցման դերակատարներից մեկը:
2. Գրող *Վիլյամ Սարոյանը* ժամանակակից ամերիկյան գրականության նահապետներից է, միևնույն ժամանակ, սակայն, լինելով ԱՄՆ-ի ամերիկահայ բնակչության մասնիկներից մեկը (նրա ծնողները գաղթել են ներկայիս Թուրքիայում գտնվող հայկական Բիթլիսից)՝ նրա ստեղծագործությունը նաև արևմտահայ և արևելահայ գրականության անքակտելի մասն է: Կալիֆոռնիայի ուղղությամբ հայացք գցելիս չպետք է մոռանալ նաև ամերիկահայ (բողոքական) նահանգապետ *Ջորջ Դոքսմեյջանին* (նրա ծնող-

ները գաղթել են Թուրքիայից), որն այդ պաշտոնը զբաղեցրել է 1983–1991 թվականներին:

3. *Անաստաս* և *Արտեմ Միկոյան* եղբայրները պատկանում էին 20–րդ դարի (խորհրդային) ռուսական քաղաքական և ռազմական պատմության վերնախավին, առաջինը՝ որպես խորհրդային պետության ղեկավար– գործիչ, երկրորդը՝ որպես լեգենդար ՄԻԳ 1–ից մինչև ՄԻԳ 21 կործանիչների ընտանիքի հիմնադիր և նախագծողներից մեկը (ՄԻԳ 21–ը մինչ օրս գոյություն ունեցող այս կոլեկտիվի այն վերջին մոդելն է, որի ստեղծմանն ինքը դեռ մասնակցել էր): Երկուսն էլ հայ են (ծնված Հայաստանի հյուսիսում գտնվող Սանահին գյուղում): Նրանք սկզբում տեղափոխվել են Վրաստան, այնուհետև՝ Ռուսաստան: Երկու երկրներում էլ կան ուժեղ հայ փոքրամասնություններ: Ռուսաստանում, Վրաստանում և ողջ Կովկասում այսօրվա քաղաքական զարգացումների համար այս համայնքները ամենևին էլ *աննշան մեծություն* չեն:

Հայկական մշակույթի և, համապատասխանաբար, հայագիտության անդրտարածաշրջանայնությունը ներառում է Հնդկական թերակղզին և Իրանը, Կովկասը՝ ներառյալ Բաքուն ու Թբիլիսին, ինչպես նաև Ղրիմը մինչև Լվով, Մոսկվան, Սանկտ Պետերբուրգը, Ամստերդամը, Վենետիկն ու Վիեննան, նաև Ստամբուլն ու Հալեպը, Դամասկոսը, Բեյրութը, Երուսաղեմը, այնուհետև Կիպրոսը, Հունաստանը, Բուլղարիան, Ռումինիան, Ֆրանսիան (հատկապես Մարսելը, Լիոնը և Փարիզը), Լոնդոնը և Հյուսիսային Ամերիկայի արևելյան ու արևմտյան ափերը: Արևմտյան–արևելյան հայկական գիտության ու մշակույթի կարևոր կենտրոններ կարելի է գտնել նաև Կանադայում (դրա խորհրդանշական կերպարներից է եգիպտահայ ընտանիքից սերող, միջազգային ճա-

նաչում ունեցող կանադացի կինոռեժիսոր Ատոմ Էգոյանը): Չմոռանանք նաև հարավամերիկյան և ավստրալիական հայկական համայնքների մասին՝ ստիպված լինելով ոչ ամբողջական թողնել այս թվարկումը:

Այսպիսով՝ աշխարհում շարունակական ներկայություն ունեցող մշակույթի ակադեմիական հոգածության պարագայում խոսքը ոչ միայն համաշխարհային պատմության ու մշակույթի վերաբերյալ հազարամյա գրավոր աղբյուրներում ավանդված հաղորդումների պատմական հիշողության կոնսերվացման, այլ նաև տնտեսության, մշակույթի ու քաղաքականության մեջ անտիկ շրջանից մինչև ներկա ժամանակները գոյություն ունեցող համաշխարհային ցանցերի մասին է, ոչ թե ընդամենը տարածաշրջանային ուսումնասիրությունների կարկատված գորգի ինչ-որ փոքրիկ ծվենի մեջ չարժեցող ներդրման, այլ *գլոբալ ուսումնասիրություններում* արվող բազմախոստում ավանդադրման մասին է, որոնք ձգտում են հետազոտելու ու բացահայտելու ինտեգրման, բազմակիության և անդրտեղայնության՝ դեպի սահմանանց միախուսվածություններ մուտքի մեխանիզմները:

Անտիկ շրջանի հունական, լատինական, բայց նաև միջնադարյան գիտնականների, փիլիսոփաների ու գրողների բազմաթիվ աղբյուրներ ավանդվել են միայն վաղմիջնադարյան հայերեն թարգմանություններում. նույնը՝ նաև քրիստոնեական թվականության շարունակականության պարագայում:

Սուրբ Երկիր, բայց նաև Աֆրիկա, Եվրոպա, Ասիա և աշխարհի այլ մասեր արդեն 5-րդ դարից որպես աշխարհի առաջին պաշտոնական եկեղեցու ներկայացուցիչներ, բայց նաև որպես դիվանագետներ, թարգմանիչներ, գիտնականներ, վաճառականներ, գերիներ գնացած հայ ճանապարհորդների ճամփորդական հաղորդումներն արժեքավոր տեղեկություններ են պարունակում

տարբեր տարածաշրջանների ժողովուրդների հոգևոր ու մշակութային պատմության վերաբերյալ:

Արաբների (7-րդ դար), մոնղոլների (13-րդ դար) և խաչակրաց արշավանքների (12-րդ դար) մասին առաջին ականատեսական հաղորդումները մեզ են հասել դասական հայերենով:

Գերմանիայում հայագիտության գիտական և քաղաքական նշանակության շուրջ

Գերմանիան Հայաստանի հետ կապված է ընդհանուր պատմությամբ (հատկապես ընդհուպ մինչև Առաջին համաշխարհային պատերազմի շրջանը): Գերմանա-հայկական հարաբերությունների 800-ամյա ավանդույթ կա (սկսած խաչակրաց արշավանքների ժամանակներից): Կիլիկիայի հայկական փոքր թագավորության՝ Մերձավոր Արևելքի քրիստոնեական վերջին բաստիոնի և, ընդհանրապես, Արևելքի գրեթե ամբողջական իսլամականացումից առաջ վերջին քրիստոնեական պետության առաջին հայ թագավորն օծվել է Մայնցի արքեպիսկոպոս Կոնրադ Առաջին Վիթելսբախի կողմից՝ Գերմանական Ազգի Սրբազան Հոռմեական կայսրության կայսր Ֆրիդրիխ Շիկամորուսի և նրա որդի Հայնրիխ VI-ի հանձնարարությամբ: Կիլիկյան Հայաստանի տիրակալներն էական ներդրում են ունեցել Արևելքի ու Արևմուտքի (հատկապես մոնղոլական էքսպանսիայի շրջանում), իսլամի և քրիստոնեության միջև դիվանագիտական ու մշակութային միջնորդության գործում:

Գերմանիայում հայկական մշակույթով զբաղվելը սկսվում է արդեն գերմանական Ռեֆորմացիայի մտավոր կենտրոններում՝ պիետիստների ու Լուսավորականների շրջանում: Հոռմից բողոքական եկեղեցիների անկախության հիմնավորման և գերմաներենը լատիներենի փոխարեն որպես պատարագի լեզու թույլատ-

րելու նպատակով Մարտին Լութերը (1520 թ.) և Թոմաս Մյունցերը (1525 թ.) վկայակոչում էին հայերի օրինակը, որոնք արդեն 5-րդ դարից սկսած իրենց մայրենի լեզուն բարձրացրել էին պատարագի արարողության լեզվի և Աստվածաշնչի սրբազան լեզվի մակարդակի:¹

«Գերմանական արևելյան ընկերության» և Հալլեի «Ֆրանկեր» հիմնադրամների գրադարաններում, Բեռլինի պետական գրադարանում, Թյուրինգենի համալսարանում, ինչպես նաև Գերմանիայում գտնվող ձեռագրերի առանձին հավաքածուներում բազմաթիվ հայկական ձեռագրեր ու հնատիպ գրքեր կան, որոնք մասամբ դիվանագետների և ճանապարհորդների կամ Վիեննայի ու Վենետիկի Մխիթարյան միաբանության հայ գիտնականների նվերներն են գերմանացի պրոֆեսորներին ու գիտնականներին:

Հալլեի «Ֆրանկեյան» հիմնադրամների (ներկայիս Մաքս Պլանկի ինստիտուտների յուրատեսակ նախատիպը) *Արևելյան կոլեգիայի* (որտեղ գերմանացի գիտնականների հետ միասին աշխատել են նաև հայեր, հույներ և այլ հրավիրյալ հետազոտողներ) համար արևելագիտական գրադարան ստեղծելու ընթացքում Ֆրանկեն ուշադրություն է դարձրել նաև Հայ առաքելական եկեղեցուն և նրա տպագրական գործունեությանը:

Դիվանագետ, պոլիգլոտ, Ռուսաստանի և արևելքի հետազոտող Հայնրիխ Վիլհելմ Լուդովֆը (1655–1712 թթ.)՝ եթովպագի-

¹ Հմմ. Armenuhi Drost–Abgarjan, *Mesrop Maschotz und Martin Luther: Zwei Bibelübersetzer im Christlichen Orient und in Europa*, in: *Orientalische Christen und Europa: Kulturbeggnung zwischen Interferenz, Partizipation und Antizipation* (խմբ.՝ Մարտին Թամբե), Վիսբադեն, 2012, էջ 235–240 (*Göttinger Orientforschungen / Syriaca*, vol. 41) և այնտեղ հատկապես հղումը՝ Müntzer, Thomas; *Schriften und Briefe. Kritische Gesamtausgabe. Unter Mitarbeit von Paul Kirn herausgegeben von Günther Franz*, Գյոթերսլախ, 1968, էջ 213:

տության հիմնադիր Հիոբ Լուդովֆի (1624–1704 թթ.) զարմիկը և ուսանողը, Ամստերդամից 1700 թ. սեպտեմբերին Ֆրանկեին ուղղված նամակում այն համոզված տեսակետն էր հայտնում, որ հայ եկեղեցին հունական եկեղեցուց հետո ամենակարևորն է: Այս տեսակետն արտացոլված է հիմնադրամաների «Հրաշքների սենյակի» գրապահարանի վերնաձևակատի վրա Գոթֆրիդ Ավգուստ Գրյունդլերի կողմից 1736–1741 թվականներին արված գեղանկարի հորինվածքում, որտեղ Աստվածաշնչի սրբազան այբուբենների՝ եբրայերենի և հունարենի կողքին տեղ է գտել հայոց այբուբենը՝ իբրև պաշտոնապես ամենահին քրիստոնյա ժողովրդի (մ. թ. 301 թվականից) գրչության օրինակ: Ֆրանկեի և իր աշակերտների տեսանկյունից քրիստոնեական աշխարհի երկրորդ կարևոր գրի պատկերումը նաև հայոց գրերի ամենահին գեղարվեստական պատկերումն է Եվրոպայում:²

Ի շարունակություն հայ մշակույթի և կրոնի ուսումնասիրության՝ հետագայում այս կարծիքն էր արտահայտում նաև Գոթֆրիդ Վիլհելմ Լայբնիցը, որը բարձր էր գնահատում հայերի ավանդը համաշխարհային մշակույթում: 1710 թվականի ապրիլի 15–ին ֆրանսիացի նշանավոր հայագետ Մաթյուրեն Վեյսիեր Լա Կրոզին (1661–1739 թթ.) Հանովերից ուղղված իր նամակում նա գրում է. «Հայերն արժանի են, որ մենք նրանց համար անենք այն, ինչ պարոն Լյուդովֆն արեց եթովպացիների համար»՝ ծանուցելով ամստերդամյան տպագրիչներ Թովմաս և Ղուկաս Վանանդեցիների ընտանիքի մոտ հայերեն սովորած Յոհան Յոախիմ Շրյոդերի «Հայերենի քերականության» հրատարակումը Լայպցիգում

² Հմմ. Արմենտիի Դրոստ–Արգարյան, *The Oldest Artistic Depiction of Armenian Alphabet in Germany*, in: Cultural, linguistic and ethnological interrelations in and around Armenia, Uwe Bläsing / Jasmine Dum–Tragut (ed.), Քենդրիշ, 2009, էջ 59–64:

(«Thesaurus linguae Armenicae antiquae et hodiernae», Ամստերդամ 1711):³

Գերմանական հայագիտությունը սկիզբ է առել բրեսլավցի Անդրեաս Ակոլուբից (1654–1704 թթ.), որն իր ժամանակի նշանավոր արևելագետներից մեկն էր: Եվրոպայում գործող հայ հոգևորականների ու գիտնականների հետ նա կազմել է գերմանական առաջին հայերեն տպագրությունը («primum in Germania specimen characterum Armenicorum») և Հին Կտակարանից Արդիասի հայկական տարբերակը «Obadiah armenus»–ը՝ լատիներեն թարգմանությամբ հանդերձ (1680 թ.):⁴

Դրանից առաջ հայոց լեզվի և գրի նմուշներ փաստագրված են ոչ միայն Հալլեի և Վիթենբերգի ձեռագրերում, որտեղ հայերենը ակադեմիական ուսուցման առարկա էր համալսարանի հիմնադրումից ի վեր, կամ լյուբեկցի մատենագիր Դեթմարի (14–րդ դար) ձեռագրում,⁵ այլև գերմանական հնատիպ գրքերում, ինչպիսիք են բավարացի ազնվական Յոհաննես Շիլթերգերի (հայերեն տերունական աղոթքը «Ճանապարհորդություն»–ում, 1480), Մայնցի կանոնիկոս Բեռնհարդ ֆոն Բրայդենբախի (հայերեն այ-

³ Transkriptionen des Leibniz–Briefwechsels 1710 für die Leibniz–Akademie–Ausgabe (überprüft). Version 1. Erfasst von Renate Essi, bearbeitet von Malte–Ludolf Babin, hrsg. von der Leibniz–Forschungsstelle Hannover der Akademie der Wissenschaften zu Göttingen beim Leibniz–Archiv der Gottfried Wilhelm Leibniz Bibliothek – Niedersächsische Landesbibliothek. Hannover, 28. Oktober, 2020.

⁴ Abdias hayerên, id est Obadiah Armenus: quo cum analysi vorum Armenicarum grammatica et collatione versionis Armenicae cum fontibus ... exhibetur primum in Germania specimen characterum Armenicorum, Lipsiae, 1680.

⁵ Հմմ. Armenuhi Drost–Abgarjan, *Die Chronik des franziskaner Lesermeisters Detmar und Armenien*, in: In vriumtschaft als es was gedâht, Ammer, Jessica Ammer/Gerhard Meiser/Heike Link, Berlin, Erich Schmidt–Verlag 2020, էջ 110–123:

բուքեն՝ «Peregrinatio in terram sanctam»-ում, 1486), քնագետ և Բրանդենբուրգի կայսրընտիր իշխան Յոհան Գեորգի անձնական բժիշկ Լեոնհարդ Թուռնայսեր ցում Թուռնի (հայերեն սաղմոսների տեքստեր «Magna alchymia»-ում, 1583) տպագիր ճամփորդական հաղորդումները: Մերձավոր Արևելքում հայոց լեզվի և սովորույթների մասին հաղորդող այլ օրինակներ ու նկարագրություններ կարելի է գտնել նաև վերջինիս գործընկեր Լեոնհարդ Ռաուվոլֆի (1582), Անդրեաս Ակոլուֆի ուսուցիչ, լյուքեմբուրգի աստվածաբան և արևելագետ, Վիթենբերգում դասավանդած Ավգուստ Փֆայֆերի (1640–1698 թթ.) և այլոց աշխատանքներում:

Գերմանիայում հայագիտության քնագավառում առաջին ակադեմիական համակարգված աշխատանքներն իրականացվել են 19-րդ դարում՝ աստվածաբանության, հնդեվրոպագիտության, բյուզանդագիտության, սլավոնագիտության, արևելագիտության, սոցիոլոգիայի ու արվեստի պատմության համատեքստում:

Հայնրիխ Պետերմանի (Grammatica Linguae armeniacae, Բեռլին 1836 և 19-րդ դարի 50–60-ական թվականների «Բեռլինի գիտությունների ակադեմիայի գրվածքներ»), Մաքս Լաուերի (5-րդ դարի պատմագիրներ Մովսես Խորենացու և Փավստոս Բուզանդի գործերի թարգմանիչ, 1869–1879 թթ.), հնդեվրոպական լեզուների շրջանակում հայերենի դիրքը որպես առանձին ճյուղ բացահայտած (1877) լեզվաբան Հայնրիխ Հյուբշմանի, բեռլինցի եկեղեցու պատմաբան ու հայրաբան Ադոլֆ Ֆոն Հառնակի և իր հալլեյան գործընկեր Ֆրիդրիխ Լոֆսի, Ֆրիդրիխ Նոյմանի («Հայ գրականության պատմության փորձ», Լայպցիգ, 1836) և իր թյուրինգենյան գործընկերներ Ֆրանց Նիկոլաուս Ֆինքի (Հայ բանասիրական հանդեսի խմբագիր, 1903) և աստվածաշնչագետ Պաուլ Ալեքսանդր Ֆեթերի (1840–1906 թթ.), Բեռլինի համալսարանի

հայագիտության և իրանագիտության առաջին արտակարգ ամբիոնի վարիչ, հետագայում նույն համալսարանի համեմատական լեզվաբանության օրդինարիուս Յոզեֆ Մարկվարտի (1912–1930), ենացի պրոֆեսոր Հայնրիխ Գեյցերի («Հայաստան» հոդվածը բողոքական «Ռեալ» հանրագիտարանում, 1897), Կառլ Ֆրիդրիխ Լեման–Հաուպտի («Հայաստանը նախկինում և այժմ», 1910–1931), Հառնակի ուսանող Պաուլ Ռորբախի և Հյուբշմանի աշակերտ Յոզեֆ Կարստի (որպեսզի ընդամենը մի քանի անուն նշած լինենք) հայագիտական ուսումնասիրություններն ու ռահվիրայական աշխատությունները դրեցին աշխարհահռչակ գերմանական հայագիտական դպրոցի հիմքը:

20-րդ դարի երկու համաշխարհային պատերազմներն ընդհատեցին գերմանական համալսարաններում նաև հայ ուսանողների մի ամբողջ սերունդ պատրաստած այս գիտնականների ռահվիրայական աշխատանքները:

Հայաստանի հետ հետպատերազմյան շրջանում վերսկսված և Գերմանիայի վերամիավորումից հետո ինտենսիվացված գիտական կապերից սպասվող ակնկալիքները միայն հայ–գերմանական հարաբերությունների առեղծվածների համատեղ հետազոտություններ չեն, առեղծվածներ, որոնք վերաբերում են, օրինակ, բավարական տեղական սուրբ Էնգլմարի հայ ուսուցիչ Գրիգոր արքեպիսկոպոսին, որը մահացել և թաղվել է Պասաու / Նիդերնբուրգում (1099), կամ Կիլիկիայի հայ թագավորական տների հետ գերմանական խաչակիրների կապերին:

Գերմանիայում հայագիտության ամբիոնի քաղաքական առանձնահատուկ գործառույթի շուրջ

Վերջին շրջանում բռնկվող, միջազգայնացման միտում ունեցող տարածաշրջանային հակամարտությունները ցույց են տա-

լիս, որ հակամարտություններում պարտված (հիմնականում քանակապես և ուժային քաղաքականությամբ առավել փոքր) կողմերի մասին մասնագիտական իմացության բացը դժվարացնում է օբյեկտիվ գնահատումը, փաստերի վերլուծությունը և լուծման ու հաշտեցման մոտեցումներ գտնելը (հմմ. ռուս–ուկրաինական կամ թուրք–սիրիական կամ թուրք–քրդական հակամարտությունները): Որակյալ քաղաքական խորհրդատվության համար իրականում անփոխարինելի է հակամարտության մեջ ներգրավված երկու կողմերի տեսանկյունների մասնագիտական փորձաքննության ընդգրկումը:

Հայաստանի դեպքում խոսքը մի հին հակամարտության (20–րդ դարի առաջին ոչ գաղութային ցեղասպանությունը, որը մինչ այժմ ժխտվում է պաշտոնական Թուրքիայի կողմից) և մի նոր հակամարտության (Ադրբեջանի Հանրապետության կառավարության կողմից Լեռնային Ղարաբաղի բնիկ հայ բնակչության ինքնորոշման իրավունքը չճանաչելը) մասին է, որոնք Գերմանիայի համար արդիական են ոչ միայն արտաքին քաղաքական, այլ նաև ներքին քաղաքական տեսակետից (քանի որ ի դեմս հայ և ադրբեջանական համայնքների՝ հակամարտության կողմերի ներկայացուցիչներ են նաև Գերմանիայի քաղաքացիները):

Հայկական տեսակետը, օրինակ, արևմտյան տեղեկատվություններում հիմնականում բացակայում էր ԽՍՀՄ փլուզման արդյունքում որոշ այլ հետխորհրդային ինքնավար հանրապետությունների պես անկախացած, չնայած սահմանադրական լեգիտիմությանը՝ միջազգայնորեն չճանաչված հայաբնակ Լեռնային Ղարաբաղի (Արցախի) Հանրապետության դեմ 2020 թվականին ադրբեջանական 44–օրյա պատերազմի ժամանակ:

Համալսարանական ակադեմիական հաստատության շնորհիվ գերմանական կողմը կստանա գիտականորեն հիմնավոր-

ված քաղաքական փորձագիտություն լեզվական առումով դժվարամատչելի, բազմաշերտ ու լայնորեն ճյուղավորված հայկական ոլորտում: Արտակարգ հայագիտական ամբիոնը կանոնավոր ամբիոնի մակարդակին բարձրացնելու միջոցով է միայն, որ հնարավոր է շարունակական հետազոտություններ վարել և դրա շնորհիվ պահպանել արդեն ձևավորված ներուժը նաև լուրջ քաղաքական խորհրդատվության ոլորտում (հաշվի առնելով հայկական տեսակետը), ինչն իրականում կարևոր է Թուրքիայի և Հայաստանի կամ Ադրբեյջանի ու Լեռնային Ղարաբաղի միջև Գերմանիայի նպատակադրված, անհրաժեշտ, դեռևս նոր սկսվող միջնորդական ջանքերի համար:

Ելնելով Առաջին և Երկրորդ համաշխարհային պատերազմների աղետներից հետո Եվրոպայում և աշխարհում վերամիավորված Գերմանիայի վերստին աճող նշանակությունից՝ միանգամայն հետևողական է թվում այն հանգամանքը, որ գերմանական գիտության հորիզոնները կրկին ընդլայնվեցին Հարավային Կովկասի, այստեղ հատկապես Հայաստանի, բայց նաև Հայաստանի հետ լեզվական, մշակութային, քաղաքական ու տնտեսական առումով սերտորեն կապված հայկական սփյուռքի ուղղությամբ:

Բացի գիտա-քաղաքական լայն հորիզոնից՝ հայագիտությունն առանձնահատուկ նշանակություն ունի նաև եվրոպական միավորման գործընթացում Գերմանիայի դերակատարության համատեքստում: Եվրոպական միության հետ Թուրքիայի Հանրապետության մերձեցման դժվարին, բայց ոչ կանգ առած գործընթացի պատճառով եվրոպական, դրանով էլ՝ հատկապես գերմանական քաղաքական օրակարգում է նաև Հայաստանի նկատմամբ Թուրքիայի հարևանության քաղաքականության կնճռոտ հարցը:

Այստեղ Գերմանիան ունի իր քաղաքական, հետևաբար նաև գիտական անելիքը, ինչպես նաև իր հնարավորությունը, ինչպես արդեն արտահայտվել է 2005 թվականին Հայաստանի վերաբերյալ Գերմանական Բունդեսթագի ընդունած պատմական բանաձևի ենթավերնագրում (Բունդեսթագի տպագիր նյութ 15/5689), այնուհետև հայերի ցեղասպանության ճանաչման վերաբերյալ 2016 թվականի հունիսի բանաձևում. «Գերմանիան պետք է նպաստի թուրքերի և հայերի հաշտեցմանը»:

Այս միջնորդական աշխատանքի համար Գերմանիան, անկասկած, արդեն պատրաստ ունի լուրջ և գրեթե ամենագոթուրքագիտություն, որը մեծ թվով որակավորված (ինչպես գերմանական, այնպես էլ թուրքական ծագում ունեցող) մասնագետ-ներկայացուցիչների միջոցով իր հատուկ իմացություններն ու դիրքորոշումներն է հաղորդում Գերմանիայի ակադեմիական հաստատություններում և խորհրդատվական ծառայություններ տրամադրում գերմանական քաղաքականությանը:

Հաշվի առնելով Գերմանիայում թուրքագիտության համար այս խիստ նպաստավոր վիճակը Գերմանական Բունդեսթագի այն քաղաքական կամքի խորապատկերին, որ Գերմանիան պետք է նպաստի թուրքերի և հայերի հաշտեցմանը, և հատկապես նկատի ունենալով Գերմանիայում հայագիտության վիճակը՝ իսկույն երևում է ակնհայտ անհավասարակշռությունը: Պատմականորեն Գերմանիայի և Օսմանյան կայսրության և այսօրվա Թուրքիայի միջև սերտ, երբեմն միակողմանի քաղաքական, տնտեսական ու ռազմական կապերով պայմանավորված՝ Գերմանիայում, ինչպես և գերմանալեզու մյուս երկրներում, չկա հայագիտության ոչ մի կանոնավոր պրոֆեսուրա: Հալլեում գտնվող արտակարգ պրոֆեսուրայի հաստիքը, որը վերջին տասնամյակների գիտական քաղաքականության ձեռքբերումն էր, թափուր է:

Եթե հնարավոր լինի պրոֆեսուրան շարունակել Հալլեում կամ ստեղծել մեկ այլ գերմանական համալսարանում, ապա դա կօգնի նախնականորեն նվազեցնելու գիտաքաղաքական այս մեծ անհավասարակշռությունը: Գերմանական քաղաքականությունը նաև ի վիճակի կլինի իր իսկ գիտության միջոցով լրջորեն, համակարգված ձևով տեղեկատվություն ստանալու հայկական հավաստի աղբյուրներից, ինչն իր հերթին անհրաժեշտ և օգտակար կլինի նպատակադրված միջնորդության ու հաշտեցման աշխատանքի համար:

Բայց նաև միջազգային տեսանկյունից գերմանական հայագիտության ամբիոնը գիտաքաղաքական առումով համահունչ կլինի միջազգային զարգացման միտումներին: Արդեն մի քանի տարի է, ինչ ԱՄՆ–ում՝ արևելյան ափից մինչև արևմտյան ափ, կա արգասավոր գիտական–քաղաքական մրցակցություն թվով ոչ քիչ թուրքագիտական ու հայագիտական ամբիոնների միջև, որը նաև զգալի նշանակություն ունի ԱՄՆ քաղաքականության համար: Աչքի է զարնում նաև այն հանգամանքը, որ ԱՄՆ–ը Երևանում կառուցել է իր ողջ դիվանագիտական պատմության մեջ ամենամեծ դեսպանատան շենքը, ինչպես նաև ստեղծել Ամերիկյան համալսարանը: Սա, անշուշտ, վկայում է համաշխարհային քաղաքականության և մշակույթների հատման կետերից մեկում Հայաստանի քաղաքական կարևորության մասին:

Մեծ Բրիտանիան ևս, ինչպես, բնականաբար, նաև Ֆրանսիան, դասական ակադեմիական գիտահետազոտական և ուսումնական հաստատություններում ունի հայագիտության ամբիոններ: Անգամ Թեհրանի համալսարանն Իրանում ունի պաշտոնական հայագիտական ինստիտուտ, ինչպես և Պեկինում (Չինաստան) արդեն ավելի քան երկու տասնամյակ կանոնավոր ակադեմիական հայագիտություն է իրականացվում:

Խորհրդային Միության փլուզումից հետո Ռուսաստանի Դաշնությունում ևս՝ Սանկտ Պետերբուրգի համալսարանում, կա ինքնուրույն հայագիտական ամբիոն:

Հաշվի առնելով այս և համաշխարհային քաղաքականության առաջատար երկրների հայագիտական մյուս ակադեմիական հաստատությունները, ակներև է, որ Գերմանիան արդեն քանի տասնամյակ գրեթե ամբողջությամբ անտեսել ու մոռացել է իր սեփական ուժեղ հայագիտական ավանդույթները, որոնք այսօր էլ մեծ հարգանք են վայելում Հայաստանում:

Ընդ որում՝ Հայաստանի Հանրապետությունում և աշխարհասփյուռ հայության շրջանում հայկական գիտությունը այսօր էլ երախտապարտ է Գերմանիային այն բանի համար, որ Էրֆուրթից սերող և առաջին հերթին Ստրասբուրգում գործող գերմանացի լեզվաբան *Հայնրիխ Հյուբշմանն* էր (1848–1908 թթ.), որ 19–րդ դարում անառարկելիորեն ապացուցեց, որ հայերենը հնդեվրոպական լեզվաընտանիքի ինքնուրույն ճյուղ է: Նոր արևելահայ գրական լեզվի ստեղծող Խաչատուր Աբովյանը (1809–1848[?] թթ.), սովորել է Դորպատում՝ Ռուսական կայսրության գերմանական համալսարանում, Երևանում հիմնել առաջին գերմանական դպրոցը և հայերեն թարգմանություններ արել Շիլլերից ու Գյոթեից:

Վերևում արդեն հիշատակված իրանագետ ու հայագետ Յոզեֆ Մարկվարտը (1864–1930 թթ.)՝ գերմանա–հայկական գիտական կապերի ծաղկման ժամանակաշրջանի ներկայացուցիչ և Հայաստանում չմոռացված մասնագետ–բանասեր, իր «Հայկական պետականության ծագումն ու վերականգնումը» աշխատությամբ օգտակար է եղել նաև քաղաքականությանը:

Այնուհետև Գերմանիայում (ոչ գիտական պատճառներով) անկում ապրած հայագիտության վերջաբան հանդիսացան որ-

պես հայ կրթաթոշակակիր Գերմանիա եկած դոկտոր Արտաշես Աբեղյանի (1878–1955 թթ.) կյանքն ու գործը: Նա գերմանա–հայկական դասական գիտական հարաբերությունների վերջին ներկայացուցիչն էր, որը գոնե որպես հայերենի դասախոս աշխատեց գերմանական դիվանագիտության համար կարևոր Արևելյան լեզուների բեռլինյան սեմինարում:

Թե որքան դժվար կարող էին լինել 1930–1940–ական թվականներին Գերմանիայում այս հայ գիտնականի կյանքի որոշ փուլերը, ցույց է տալիս այն փաստը, որ հայերը, հրեաների և այլ «ոչ արիական» ժողովուրդների հետ մեկտեղ, սկզբից ևեթ եղել են նացիոնալ–սոցիալիստների կազմած բնաջնջման ցուցակներում, և Հիտլերի պես մեկն իր «Սեդանաճառեր»–ում զգուշացնում էր նաև «հայկական» արյամբ «գերմանական արյան աղտոտումից»:

Այժմ ուրախալի է, որ վերջին տասնամյակներում հայագիտական աշխատանքի համար հիանալի սիներգիաներ ձևավորվեցին նաև Հալլեի Մաքս Պլանկի ազգագիտության ինստիտուտի, Հալլեում տեղակայված «Դաշնային մշակութային հիմնադրամի» ու գիտությունների ազգային ակադեմիայի՝ Լեոպոլդինայի հետ, որը գիտական խորհրդատվություն է տրամադրում քաղաքականությանը:

Գերմանիան՝ որպես հայագիտության միջազգային կեցավայր

Հասկանալի է, որ հայոց լեզու և հայկական մշակույթ ուսումնասիրելու լավագույն միջոցը Հայաստան մեկնելն է: Սակայն հայերենի չիմացությունը խանգարում է դրան, քանի որ կանոնավոր ուսման ընթացքում հայաստանյան բուհերում ուսուցման լեզուն ժամանակակից արևելահայերենն է, որին հաճախ չեն տիրապետում նույնիսկ սփյուռքում մեծացած սերունդները:

Այդ իսկ պատճառով ինչպես Արևմտյան և Արևելյան Եվրոպայից, այնպես էլ Մերձավոր ու Միջին Արևելքից, ԱՄՆ-ից, Ճապոնիայից, Չինաստանից և Ավստրալիայից հայկական մշակույթով հետաքրքրված շատ մարդիկ Գերմանիա են եկել այստեղ հայոց լեզվի ու հայկական մշակույթի բնագավառում սովորելու, գիտական թեզ պաշտպանելու, պրակտիկա կամ ստաժավորում անցնելու համար: Այստեղ դասավանդվում է ինչպես գրաբար, այնպես էլ արդի հայերեն:

Այլ մայր գիտակարգերի հետ հայերենը որպես առարկա համակցելու շնորհիվ Հալլեի համալսարանը ձգում էր ինչպես գերմանացի, այնպես էլ արտասահմանցի ուսանողներին:

Գերմանական հայագիտության միջազգային կարևորագույն այնպիսի միջոցառումներ, ինչպիսիք են Հայաստանին նվիրված համաշխարհային գիտական համաժողովը Հալլեում՝ արտակարգ հաջողված «Կիլիկիայի հայերի փրկված գանձը» միջազգային ցուցահանդեսով (Հալլե – Աթենք – Անթիլիաս/Լիբանան հանգրվաններով), և 2000 թվականին Բեռլինի պետական գրադարանում անցկացված Առաջին հայագիտական համաժողովը, որն ուղեկցվում էր «Արմենի են մարդիկ կոչվում. մշակութային հանդիպում Բեռլինի պետական գրադարանում» ցուցահանդեսով (Մելինե Փեհլիվանյանի կուրատորությամբ), 2012–2013 թվականներին հայ գրատպության հոբելյանին նվիրված «Գրչարվեստ և պատկերների հմայք» ցուցահանդեսը (Հալլեի մշակույթի ֆորումում և Մայնցի Գուտենբերգի թանգարանում), ինչպես նաև Հայկական ուսումնասիրությունների միջազգային մասնագիտական ընկերության գլխավոր համաժողովը Հալլեում (2021 թ.) համաշխարհային համբավ են ձեռք բերել և ունեցել լավ միջազգային մասնակցություն:

Հիմնվելով հայագիտության ոլորտում արդեն իսկ ձեռք բերվածի վրա՝ միջազգային մակարդակով ակնկալվում է Գերմանիայում, հատկապես Հալլեում հայագիտության հետազոտությունների և դասավանդման շարունակություն և ինտենսիվացում:

Գերմանիայի վերամիավորումից հետո Հայագիտական հետազոտությունների ՄԵՍՐՈՊ կենտրոնի հիմնադրմամբ առանձնահատուկ սերտ համագործակցություն է սկսվել Գերմանիայի Դաշնային Հանրապետության և Հայաստանի Հանրապետության միջև գիտության, կրթության և մշակույթի ոլորտներում, ինչը մասնագիտական առումով պարարտ հող է պատրաստել ինչպես Գերմանիայում, այնպես էլ միջազգային հարթությունում գերմանական հայագիտության զարգացման նոր քայլի համար:

Թո՛ղ այդ հողն այսուհետ ևս մշակվի համատեղ ջանքերով, որպեսզի շարունակի պտուղներ տալ ոչ վերջին հաշվով նաև երկու երկրների միջև երկկողմ հարաբերությունների համար՝ խորացնելով փորձված, արգասավոր հին ավանդույթները:

Գրականություն լրացուցիչ ընթերցանության համար

1. Drost-Abgarjan, Armenuhi, Herman Goltz (Hg.): Armenologie in Deutschland: Beiträge zum ersten Deutschen Armenologen-Tag, Münster, 2005.
2. Drost-Abgarjan, Armenuhi: *Josef Markwart (1864–1930): Zum 150. Geburtstag*, in: Christlicher Orient im Porträt – Wissenschaftsgeschichte des Christlichen Orients (Kongreßakten der 1. Tagung der RVO, 4. Dezember 2010, Tübingen). Predrag Bukovec (Hg.), Teilband 1, Hamburg, 2014, 389–406.
3. Christian Hannick: *Streifzüge durch die Geschichte der armenologischen Forschung in Deutschland*, in: Armeni syn die menschen genannt...: Eine Begegnung mit dem historischen Armenien, Berlin, 2001, 99–110.

Բանալի բառեր՝ Հայագիտություն, Քրիստոնեական Արևելք, տարածաշրջանային հետազոտություն, պատմություն, մշակույթ, գերմանա-հայկական գիտական կապեր, Հայաստան, Գերմանիա

Բավարար չէ, բայց անհրաժեշտ է. մշակույթն ու կրթությունը միջազգային հարաբերություններում

Էբարթ Դ. Շթրաթենշույլթ

Մշակույթ, թե՛ տնտեսություն

«Եթե կարողանայի դա նորից անել, կսկսեի մշակույթից»: Այս նախադասությունը վերագրվում է եվրոպական ինտելեկտուալ կառույցների հիմնադիրներից մեկին՝ Ժան Մոնեին:

Իրականում այս մեջբերումը, ըստ ամենայնի, հորինվածք է, Մոնեի մոտ այն հնարավոր չեղավ գտնել: Նաև անհավանական է, որ նա այդպիսի բան ասած լիներ: Մոնեն չափից ավելի պրագմատիկ և իրապաշտ մարդ էր, որպեսզի կարծեր, թե գրական փառատոներով և երգի երեկոներով հնարավոր է հաշտեցնել Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո թշնամացած այնպիսի ժողովուրդների, ինչպիսիք են գերմանացիներն ու ֆրանսիացիները:

Տնտեսությունը եղել և մնում է այն գործոնը, որը միավորում է ժողովուրդներին ու նրանց միասնական պահում: Ավելի ձգարիտ ասած՝ դա տնտեսական միահյուսում է՝ երկկողմ շահավետության և աճող բարեկեցության պայմաններում: Թեև տնտեսությունը երբեք չի եղել եվրոպական միավորումների առաջնային նպատակը, սակայն եղել է գործիք այդ միավորումները ֆունկցիոնալ

դարձնելու համար: Դա է վկայում ածուխի ու պողպատի Եվրոպական միավորման պայմանագրի ներածականը.

— «Ելնելով այն գիտակցումից, որ աշխարհի խաղաղությունը հնարավոր է ապահովել միայն ստեղծագործ աշխատանքի ջանքերով, որոնք համաչափ են սպառնացող վտանգներին,

— համոզված լինելով, որ այն ներդրումը, որ կազմակերպված և կենսունակ Եվրոպան կարող է կատարել քաղաքակրթության համար, էական է խաղաղ հարաբերությունների պահպանման համար,

— գիտակցելով, որ Եվրոպան կարող է կառուցվել միայն իր կոնկրետ նվաճումների միջոցով, որոնք առաջին հերթին փաստացի միասնություն կստեղծեն, և տնտեսական զարգացման համար միասնական հիմքեր ստեղծելու միջոցով,

— ջանալով նպաստել կենսամակարդակի բարձրացմանն ու խաղաղության գործերի առաջխաղացմանը՝ իրենց հիմնական արտադրությունների ընդլայնման միջոցով,

— վճռական է փոխարինել դարավոր մրցակցությունները դրանց հիմնական շահերի միավորմամբ, առաջին հիմնաքարը դնել ավելի լայն ու խոր միության՝ արյունալի բախումների պատճառով վաղուց պառակտված ժողովուրդների միջև՝ տնտեսական համայնքի ստեղծման միջոցով, նաև ստեղծել ինստիտուցիոնալ հիմքեր, որոնք կարող են ճանապարհ ցույց տալ դեպի միասնական ճակատագիր, որն այստեղեղ ընդհանուր է բոլորի համար...»¹

1987 թվականի եվրոպական ներքին շուկայի կամ 1993 թվականի տնտեսական ու արժույթային միության ժամանակ իրավիճակը նույնն էր: Քաղաքականությունը միշտ կանգնած էր առաջին պլանում, բայց այն օգտագործում էր տնտեսությունը՝ որպես

¹ Ածուխի և պողպատի եվրոպական միության հիմնադրման պայմանագիր. 18 ապրիլի, 1951 թ., <http://www.politische-union.de/egksv/index-k.htm> (վերջին մուտք՝ 9.08.2022)

գործիք. լինի դա Եվրոպական միության ներքին շուկայի լճացման հաղթահարումը («եվրասկլերոզ»), թե լինի միավորված ու դրանով իսկ ավելի մեծ Գերմանիայի ինտեգրումը Եվրոպական միության մեջ եվրոյի միջոցով՝ չեզոքացնելով գերմանական մարկի (Ֆրանսուա Միտերան, «Գերմանիայի միջուկային ռումբ») զորության պաշարները:

Ամեն դեպքում պատերազմը, որը սկսեց Ռուսաստանը Ուկրաինայի դեմ 2022 թվականի փետրվարին, ցույց տվեց, որ միայն փոխադարձ շահեկան տնտեսական միահյուսման հայեցակարգը չի երաշխավորում միջազգային խաղաղություն, եթե չկա արժեքների ընդհանուր հիմք: Տնտեսական կապերը, որոնք շահութաբեր են երկու կողմերի համար էլ, միշտ էլ եղել են Ռուսաստանի ու Արևմտյան երկրների միջև: Դրանք, սակայն, չխանգարեցին, որ ռուսական ղեկավարությունը որոշում ընդունի հարձակվելու հարևան երկրի՝ Ուկրաինայի վրա և փաստացի անուղղակիորեն պատերազմ հայտարարի ամբողջ Արևմուտքին:

Այստեղից պետք է սովորենք, որ տնտեսական առավելություններն ու փոխկախվածությունները ինքնաբերաբար կայուն խաղաղություն չեն երաշխավորում: Դրանք անհրաժեշտ են, բայց ոչ բավարար:

Ի՞նչ է մեզ բերում մշակույթը:

Մշակույթ

Մշակույթը նման է սիրուն: Յուրաքանչյուրը ծանոթ է դրան, ու յուրաքանչյուրը կարող է այդ հասկացությունը յուրովի ընկալել, ոչ նույն կերպ: Ընդհանրապես մշակույթը նշանակում է մարդկային փոխհարաբերություններ բնության և հասարակության հետ՝ հիմնված արժեքների ու ավանդույթների վրա: Այսպիսով՝ գոյություն ունի ոչ թե մեկ մշակույթ, այլ տարբեր մշակույթներ՝

կախված սոցիալական վիճակից, օրինակ՝ երիտասարդական մշակույթ, սննդի մշակույթ, բարձր մշակույթ և նաև հիշողության մշակույթ:

Ժողովուրդներին ու ազգերին վերագրվում են էթնիկ և ազգային մշակույթներ, որոնցից յուրաքանչյուրի հիմքում այդ մշակույթին պատկանող ազգերի միջև ընդհանրություններ կան: Բայց հարցական է մնում՝ արդյո՞ք գոյություն ունի ընդհանրապես որևէ պետության մեջ մեկ «ազգային մշակույթ», քանի որ բոլոր պետությունները ենթարկվում են տարբեր մշակութային ազդեցությունների: Այնուամենայնիվ, կան գերիշխող մշակութային կառույցներ: Արդյոք նման՝ «առաջնորդող մշակույթի» մակարդակի բարձրացված կառույցներին պետք է ստորադասված լինեն այլ մշակույթները. այս հարցը մի քանի տարի առաջ Գերմանիայում շատ սուր, բայց և անարդյունավետ քննարկումների նյութ էր դարձել: Այստեղ անհրաժեշտ է նաև տարբերակել մշակութային և օրենսդրորեն նորմավորված արժեքները: Եթե անգամ գերմանական «առաջնորդող մշակույթը» չհամարել առանձնաշնորհ, մայր-օրենքի, այսինքն՝ գերմանական սահմանադրության նորմերը բոլորին երաշխավորում են սեփական իրավունքները, բայց և այլոց իրավունքները:

Ինքնություն

Մշակույթը ազգային ինքնության կարևոր տարր է, դա մի թեմա է, որը հասկանալի է նաև, որ զգալի դեր է խաղում Եվրամիության մեջ մտնող 27 պետություններում:

Բայց ինչպե՞ս կարելի է սահմանել «ինքնություն» հասկացությունը, «ազգային» ու «եվրոպականը»:

Ինքնություն չկա, այն կառուցվում է նախ և առաջ շատ պարզ սկզբունքով. մենք՝ մենք ենք, քանի որ տարբերվում ենք մյուսներից:

րից: Ինքնությունը, ուրեմն, ունի ներառման ասպեկտ՝ հիմնված նմանությունների վրա, և տարանջատման՝ տարբերությունների վրա հիմնված: Այն, որ մեզանից յուրաքանչյուրն իր մեջ կրում է մի շարք հատկանիշներ, տարրական ճշմարտություն է: Մի անձ կարող է միևնույն ժամանակ լինել կին, լինել կաթոլիկ, կին քաղաքական գործիչ, հեծանիվ թշող կին, մայր և շախմատիստուհի. հատկություններից յուրաքանչյուրը հաստատում է որևէ նմանություն, նաև որևէ տարբերություն, որը կարևոր է որոշ իրավիճակներում, իսկ մյուսներում՝ ընդհանրապես ոչ: Միայն հատկությանը տրված իմաստն է նմանությունը վերածում ընդհանուրի:

Վերցնենք, օրինակ, գերմանական ինքնությունը. դրա կառուցման համար օգտագործվել են ընդհանրություններ, որոնք գերազանցում են առանձին անհատական ինքնությունները և կամարակապում դրանք:

Այս դեպքում, իհարկե, ուշադրության կենտրոնում լեզուն է, որը մեզ մոտ ընդհանուր է, և հետո նաև մեր ընդհանուր պատմությունը: Բայց վերջինիս դեպքում ամեն ինչ չէ, որ հեշտ է. շատ էական տարբերություններ են պարունակում, օրինակ, հետևյալ հարցերը՝ արդյո՞ք 1949 թվականից ի վեր ընկած ժամանակահատվածը անցկացրել եք Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում, թե՞ ԳԴՀ-ում, ապրե՞լ եք արդյոք ԳԴՀ-ի՝ Քաղբյուրոյի բնակելի թաղամասում, թե՞ եղել եք բանտում:

Այստեղ կարևոր է նաև մշակութային ժառանգությունը. Գյոթե, Շիլլեր, Հայնե, Հեգել, Կանտ, բավական է հիշատակել միայն մի քանիսին, ում ներդրումով ձևավորվել է այդ ժառանգությունը: Իհարկե, ոչ բոլորին են հայտնի այս հանձարների ստեղծագործությունները, բայց նրանք, այնուամենայնիվ, ստեղծում են մշակութային և հոգևոր կյանքի պատմական որոշակի ելակետային շրջանակ: Ուստի կարևոր է հասկանալ նրանց և փոխանցել այդ

ժառանգությունը: Շատ կարևոր տարր են նաև կրոնական միավորումները, որոնք իրենց դրսևորումն են գտնում ինչպես արժեքային կանոնում, այնպես էլ, օրինակ, քաղաքային ընդհանուր պատկերում (եկեղեցիներ, սինագոգներ, վերջին տարիներին նաև՝ մզկիթներ):

Եվրոպական ինքնություն

Այն, ինչ գերմանական ինքնության դեպքում արդեն իսկ գլխացավանքներ կարող է ստեղծել, եվրոպական ինքնության դեպքում՝ էլ ավելի բարդ է:

Եվրամիության ընտրական կարգախոսը հետևյալն է. «*Միասնականություն՝ բազմազանության մեջ*»: Կարո՞ղ է դա արդյոք նշանակել՝ մեզ միավորում է այն, որ մենք ընդհանուր ոչինչ չունենք: Այստեղ նույնպես վկայակոչվում է ընդհանուր պատմությունը, որն ընդհուպ մինչև անցյալ դարի կեսերը հիմնականում ռազմական հակամարտությունների պատմություն էր:

Եվրոպայում չկա մեկ միասնական լեզու, եթե հաշվի չառնենք «կոտրատված անգլերենը», որը շարունակ կլանում է ամենն իր շուրջը շուրջը:

Կենսական պայմանները շատ տարբեր են նույնիսկ հյուսիսային և հարավային Իտալիայի միջև, էլ չասած՝ Դանիայի և Ռուսիայի կամ Մալթայի և Էստոնիայի միջև:

Իրականում ոչ ոք չի կարողանա մոտենալ եվրոպական ինքնության ընկալմանը, եթե փորձի անել դա բացառիկության հայեցակարգից ելնելով: Ֆրանսիացի փիլիսոփա Ֆրանսուա Ժյուլիենը իր «Չկա մշակութային ինքնություն»² ապրիլի վերնագրով սրա-

² Ժյուլիեն Ֆրանսուա, Չկա մշակութային ինքնություն, 3-րդ հրատ., Բեռլին, 2018:

միտ էսսեռում առաջարկում է փոխարինել ինքնության սահմանազատումը, որը միշտ ոչ միայն ներառում, այլև բացառում է այս կամ այն դրույթը *դիստանցիա* հասկացությամբ: Այս ուրվապատկերի մեջ հստակ ընկալվում է մշակույթների միջև եղած տարբերությունը, բայց դա կիրառվում է ոչ թե սահմանազատման, այլ մի ավելի մեծ ընդհանրության կառուցման համար:

Հաճախ եվրոպական ինքնությունը դիտվում է որպես ազգային հակադրություն: Բայց այդ դեպքում, թերևս, անտեսվում է այն հանգամանքը, որ ազգային ինքնությունը ոչ միայն չի խոչընդոտում եվրոպական ինքնությանը, այլ իրականում հանդիսանում է դրա հիմքը: Միայն նա, ով գիտակցում է սեփական ինքնությունը, կարող է ընդհանուրի մաս կազմել և այդ ընդհանրության մեջ իրեն լավ զգալ: Այսինքն՝ նպատակը կարող է լինել ոչ թե մարդկանց «ապալեհացնելը» կամ «ապագերմանացնելը»՝ նրանց եվրոպականացնելու համար, այլ հակառակը. Եվրոպական միությունը կարող է գոյատևել միայն որպես պետությունների ու մարդկանց միավորում, որոնք իրենց լավ են զգում միմյանց հետ, և այդ պատճառով էլ կամավոր կերպով վերպետական կապի մեջ են մտնում՝ ձևավորելու իրենց համատեղ ապագան: Գերմանական, բուլղարական, լեհական, ֆրանսիական մշակույթը, եթե ընդամենը մի քանի օրինակ նշելու լինենք, ոչ թե հակադրվում են եվրոպական մշակույթին, այլ դրա անկյունաքարերն են:

Եվրոպական ինքնությունը ձևավորվում և կազմվում է ո՛չ թե ազգային մշակույթները միմյանցից սահմանազատելով կամ դրանց միջև եղած տարբերությունների ժխտումով, այլ ավելի շուտ այդ տարբերությունները չափելու և դրանք միմյանց հետ համադրելու միջոցով: Եվրոպան «հալեցման կաթսա» չէ, որի մեջ հալվում ու միախառնվում են ազգային բնութագրերը, այլ, եթե շարունակենք նույն պատկերավոր ձևով, մի ապուրի կաթսա է, որտեղ տարբեր

բաղադրիչներ միանում են իրար՝ մի համեղ ամբողջականություն ստեղծելու, ինչը չէր կարողանա անել առանձին վերցրած ոչ մի բաղադրիչ:

Չեխիայի նախկին նախագահ Վացլավ Կլաուսը մտահոգ էր, որ չեխական ինքնությունը վտանգված է եվրոպականով, և նախազգուշացնում էր, որ չեխական մշակույթը կտարրալուծվի ընդհանուր եվրոպականի մեջ, ինչպես մի կտոր շաքարը՝ սուրճի մեջ:³ Բայց նա անտեսեց այն հանգամանքը, որ շաքարի կտորն ազդում և փոխում է սուրճի խտությունն ու համը:

Այսպիսով՝ ազգային ինքնությունը հակադրված չէ եվրոպականին, հակառակը՝ դա վերջինիս նախադրյալն է: Ով հերքում է ազգային ինքնությունը կամ դիտում դա որպես հարաբերական, նա, կրկին վերադառնալով ապուրի կաթսայի օրինակին, այդ ապուրից մի կարևոր բաղադրիչ է հանում: Ազգային ինքնությունը չպետք է տարրալուծվի ընդհանուր եվրոպականի մեջ, այլ պետք է միանա եվրոպական ինքնությանը:

Ազգային ինքնության զգացումն ու ազգային շովինիզմը նույնը չեն. ինքնությունը նշանակում է ինքնավստահություն: Շովինիզմը նշանակում է մեծամտություն, որն ինքնավստահության ճիշտ հակառակն է: Մեծամտությունը հիմնված է անվստահության և թերարժեքության զգացման վրա. հասկություններ, որոնք հետո փորձում են քողարկել պարծենկոտ վարքագծով կամ, վատագույն դեպքում, ինչպես այժմ նորից վերապրում ենք, պատերազմով:

Բայց ճիշտ է նաև հակառակը. եվրոպական ինքնությունը, այն զգացումը, որ ունենք շատ ընդհանրություններ և կարող ենք նաև

³ Մշակութային ինքնություն և կորստի վախեր, Վիեննայի Օրաթերթ, 18.05.2004 թ.: https://www.wienerzeitung.at/nachrichten/politik/europa/155283_Kulturelle-Identitaet-undVerlustaengste.html (վերջին մուտք՝ 17.08.2022):

շատ բաներ միասին ձևավորել, հենց այն պատճառով, որ մեր նախագծում ներառում ենք ազգային ինքնությունների մշակութային բազմազանությունը, կարևոր նախադրյալ է խնդիրները լուծելու համար, ինչպես նաև գտնելու փոխզիջումներ, որոնցով բոլորը ոչ միայն կարող են պարզապես ապրել, այլև ավելի լավ ապրել:

Հետևաբար մեկի մշակույթը սպառնալիք չէ մյուսինի համար, այլ դրա հարստացումը: Առօրյա կյանքում մեզ վրա զգում ենք այդ բազմազանությունը ամենապարզ ձևով, երբ, օրինակ, հաճախում ենք բազմազան իտալական, հունական կամ թայլանդական ռեստորաններ, որոնք իրենց սննդի մշակույթը բերում են մեր երկիր և դրանով իսկ հարստացնում այն: Կոպիտ ասած՝ իտալական սպագետին չի սպառնում գերմանական կարտոֆիլագնդիկներին, իսկ պիցցերիայի առկայությունը չի խանգարում որևէ մեկին ուտել նախընտրած խոզի տոտիկը:

Հանդուրժողականություն

Գերմանա-ամերիկյան քաղաքագետ Յաշա Մոունքը մատնանշում է այն բանը, որ մշակույթների բազմազանությունը և ժողովրդավարությունը մեկ և նույն երկրում իրար հետ լարված հարաբերակցության մեջ են գտնվում:⁴

Ավտորիտար պետական կառույցում քաղաքացիների իրավահավասարությունը արտահայտվում է նրանում, որ նրանք բոլորը հավասարապես ձնշված են և հետևաբար չունեն այդ կառույցի վրա ազդեցություն գործելու հնարավորություն: Սա ոչ թե ցինիկորեն է ասված, այլ պատկերավոր: Քաղաքացիները, անկախ նրանից, թե որ մշակույթի հետ են կապված, չպետք է պայքար-

⁴ Մոունք Յաշա, Մեծ գիտափորձ: Ինչպես է բազմազանությունը սպառնում ժողովրդավարությանն ու հարստացնում այն, Մյունխեն, 2022:

րեն «իրենց» խմբի վրա ազդեցություն ունենալու համար, քանի որ դրան կիսոչնդոտի ավտորիտար բռնակարգը՝ անկախ իրենց խմբին հատուկ մշակույթից և ինքնությունից: Սրանով, բնականաբար, ոչ թե բռնակարգը արդարացնելու խոսք է ասվում, ինչը նաև Մոունքի մտադրությունը չէ, այլ ցույց է տրվում, թե որքան կարևոր է զարգացնել հասարակական դիսկուրսի և հավասարակշռության ձևերը, որոնք պարադոքսալ կերպով ավելի կարևոր են դառնում, երբ երկիրը ավելի ժողովրդավար է (և ավելի բազմազան):

Դրա նախադրյալը հանդուրժողականությունն է:

Դաշնային նախկին կանցլեր Անգելա Մերկելը Ռեֆորմացիայի 500-ամյակի կապակցությամբ այսպես արտահայտվեց.

«Կարևոր է արդիականացնել հարյուրամյակների ուսանելի պատմությունը, երբ այսօր մեր բաց հասարակություններում, գլոբալացված աշխարհում խոսում ենք հանդուրժողականության անհրաժեշտության մասին: Յուրաքանչյուրը, ով հաստատում է բազմազանությունը, պետք է հանդուրժողականություն ցուցաբերի: Դա մեր մայրցամաքի պատմական փորձն է: Դժվարությամբ յուրացվեց, որ Եվրոպայում խաղաղ գոյակցության հիմքը հանդուրժողականությունն է: Յուրացրինք նաև, որ հանդուրժողականությունը Եվրոպայի հոգին է: Դա յուրաքանչյուր բաց հասարակության հիմնական սկզբունքն է: Առանց հանդուրժողականության չի կարող լինել բաց հասարակություն»⁵

⁵ Դաշնային Հանրապետության կանցլեր Մերկելի ճառը 500-ամյակի հոբելյանի արարողության շրջանակներում, 31 հոկտեմբերի, 2017 թ., Լյուբեքի Վիթենբերգ քաղաքում, հղումը՝ <https://www.bundesregierung.de/breg-de/aktuelles/rede-von-bundeskanzlerinmerkel-im-rahmen-des-500-jahrestages-der-reformation-am-31-oktober-2017-in-der-luther-stadt-wittenberg466600>; (վերջին մուտք՝ 09.08.2022):

Քաղաքական կրթություն

Սակայն հանդուրժողականությունը և մշակույթի ժողովրդավարական ըմբռնումը անհրաժեշտ է սովորել, քանի որ սա է քաղաքական կրթության հիմնական խնդիրը ընդհանրապես և եվրոպական քաղաքական կրթությանը՝ մասնավորապես:

Եվրոպական քաղաքական կրթության խնդիրն է նպաստել ժողովուրդների փոխըմբռնմանը Եվրոպայում և հանուն Եվրոպայի: Համացանցի դարաշրջանում, երբ գրեթե ամբողջ տեղեկատվությունը անմիջապես հասանելի է, խոսքը հիմնականում ոչ թե փաստեր փոխանցելու, այլ դրանց դասակարգման մասին է, տարբեր մշակույթների ըմբռնումը խթանելու, ինչպես նաև հանդուրժողականությանը վարժվելու մասին: Եվրոպական քաղաքական կրթությունը պետք է հնարավորություն տա քաղաքացիներին առերեսվելու եվրոպական զարգացումներին և ձևավորելու սեփական կարծիքը: Միայն նա, ով ունի իր սեփական տեսակետը և կարող է տեղ գտնել հասարակության՝ որպես ամբողջության մեջ, կարող է հիմնավորված վերաբերել իրերի հանդեպ այլ տեսակետներին: Եվ միայն նման մոտեցում դրսևորողը կարող է նպաստել հասարակական երկխոսությանը:

Քաղաքացիների եվրոպական քաղաքական կրթությունը ինքնանպատակ չէ, այլ քաղաքական անհրաժեշտություն և հիմնարար նախադրյալ՝ մեր երկրներում ժողովրդավարության պահպանման համար: Ընդ որում՝ խոսքը այն մասին չէ՝ արդյո՞ք մարդը ճիշտ կամ սխալ է համարում եվրաինտեգրման ընդլայնման ուղին, այլ պարզապես այն փաստի ըմբռնման, որ եվրոպական ինտեգրացիոն կառույցները Եվրամիության շրջանակներում կամ դրանից դուրս մեր կյանքն են որոշում շատ կարևոր ոլորտներում: Մենք կարող ենք խաղաղ ապրել այլ ժողովուրդների հետ միայն այն դեպքում, եթե ընդունում ենք նրանց, իսկ դա նաև նշանա-

կում է՝ հասկանում ենք: Դա, սակայն, չի նշանակում, որ ստիպված ենք փոխառել նրանց տեսակետն ու նրանց մոտեցումը այս կամ այն հարցի մասին: Հենց սրանք են այն տարբերություններն ու բազմազանությունը, որոնք հետաքրքիր են դարձնում Եվրոպան:

Մի պահ մնանք Եվրամիության հետ: Եվրամիությունը բարդ կառույց է. 27 պետություններ պետք է համատեղ որոշումներ ընդունեն և հետո իրականացնեն դրանք: Երկար ժամանակ քաղաքացիները դա թողել էին քաղաքական գործիչներին՝ անվանելով դա «թույլատրելի կոնսենսուս»:⁶ Մարդիկ գիտեին, որ Եվրոպան լավն է, իսկ իշխանության ձևավորման տեխնիկան՝ քաղաքականության և վարչակազմի խնդիրն է:

Սակայն թույլատրելի կոնսենսուսն այլևս չկա, այն խզեց արժույթային միությունը, և այժմ արժույթային միության վայրիվերումների, փախստականների ձգնաժամի, կլիմայի փոփոխության և ռուսական նվաճողական գործողությունների դեմ պատժամիջոցների պայմաններում դա ակնհայտ է դառնում: Եթե նախկինում եվրոպական խնդիրների նկատմամբ բնակչության անտեղյակությունն ու հետաքրքրության բացակայությունը քաղաքական և վարչական վերնախավին գործողությունների լայն հնարավորություններ էր տալիս, այժմ դա արդեն սահմանափակ է: Թույլատրելի կոնսենսուսը դարձել է արգելափակող այլակարծություն, որը սահմանափակում է քաղաքականությունը՝ լիովին անկախ քաղաքական դերակատարների ցանկությունից և հայացքներից:

⁶ Այդ հասկացությունը գալիս է Լեոն Լինդբերգից և Սթյուարտ Շայնգոլդից, որոնք իրենց հերթին դա վերցրել են Վալդիմեր Օւլանդո Քեյ Կրոստերից: Լեոն Լինդբերգ, Սթյուարտ Շայնգոլ, Փոփոխություններ եվրոպական համայնքում, Էնգրլևուդ Քլիֆս, 1970:

Քանի որ բնակչության զգալի մասը այնքան էլ ծանոթ չէ եվրոպական զարգացումներին, հեշտ է հրապարակայնորեն վարկաբեկել առանձին իրադարձությունները կամ զարգացումները և դրանով իսկ վարկաբեկել եվրաինտեգրումը ամբողջությամբ: Անտեղյակության վրա հիմնված թույլատրելի կոնսենսուսի տեղը այժմ պետք է զբաղեցնի հանդուրժողական կոնսենսուսը, որը հիմնված է փոխըմբռնման վրա, և որը չեն դիտում որպես կորուստ՝ զրոյական գումարով խաղի մեջ, այլ որպես միասնաբար խաղաղ և բարգավաճ ապագա ձևավորելու հնարավորություն:

Հաճախ եվրոպական քաղաքական կրթության առջև խնդիր է դրվում համոզելու մարդկանց, որ եվրաինտեգրումը լավ բան է: Սակայն դա եվրոպական կառույցների՝ հասարակայնության հետ կապերի գործն է, որը որպես այդպիսին օրինական է և քննադատության ենթակա չէ: Համենայնդեպս դա կրթության խնդիրը չէ: Այստեղ պետք է փորձել կիրառել քաղաքացիական կրթության համար սահմանված, այսպես կոչված «Բոյթելսբախի կոնսենսուսը», որը ենթադրում է տարաձայնություններ, բազմակարծություն ու ձնշման արգելք և պարտավորեցնում է քաղաքական կրթությանը՝ դրա մասնակցին այնպես դիրքավորել, որ նա «վերլուծի քաղաքական իրավիճակը, ինչպես նաև իր սեփական շահերի դրությունը»:⁷ Խոսքը «հնարավորությունների ընդլայնման» մասին է, այսինքն՝ հնարավորություն տալ մարդկանց ձևավորելու սեփական կարծիքը, այլ ոչ թե փոխառել կազմակերպիչների կարծիքն ու համակվել դրանով: Քաղաքական կրթությունը ինչ-որ բանի քաղաքական գովազդ չէ, որքան էլ այն լավը լինի, այլ ավելի շուտ ինտելեկտուալ ինքնուրույնության խթանում: Հակասության կա-

⁷ Վեիլինգ Հանս-Գեորգ, Կոնսենսուս ըստ Բոյթելսբախի: Հետևյալ գրքում՝ Զիգֆրիդ Շիլլե/Հայնրիխ Շնայդե, Կոնսենսուսի խնդիրը քաղաքական կրթությունում, Շտուտգարտ, 1977, էջ 179:

նոնը պահանջում է՝ այն, ինչ վիճահարույց է հասարակության մեջ, պետք է նույնպես ներկայացվի որպես վիճելի: Կրթական միջոցառումների մասնակիցների վրա չի կարելի ձնշում գործադրել և զրկել նրանց փաստարկներն ու դիրքորոշումները կասկածի տակ դնելու բոլոր հնարավորություններից: Բազմակարծությունը պետք է խթանի, որ մարդիկ խորամուխ լինեն այլոց դիրքորոշումներին և մշակույթներին՝ առանց դրանք ի սկզբանե հերքելու:

Հանդիպում

Պատերազմը ինքնին չի բռնկվում, այն առաջացնում են, և այն պատրաստում են: Պատերազմը միշտ ունի նախապատմություն, որտեղ այլ պետությունների քաղաքացիները, որոնց դեմ ի վերջո պատրաստվում են պատերազմ մղել, նսեմացվում են կամ որպես չարիք են ներկայացվում: Նախապաշարմունքներն ու ատելությունը ինքնաբերաբար պատերազմի չեն հանգեցնում, բայց դրանք պարտադիր պայման են հասարակությանը պատերազմի մեջ ներքաշելու:

Չի կարելի նախապաշարմունքները նույնացնել երբեմն քմծիծաղ առաջացնող կարծրատիպերի հետ, թե, օրինակ, գերմանացիները ճշտապահ են, իսկ իտալացիները՝ լավ սիրահարներ: Ի տարբերություն կարծրատիպերի, նախապաշարմունքները միշտ բացասական են և ծառայում են այլ մարդկանց ստորացնելուն: Մարդը այլ մարդկանց խմբի մեջ փնտրում է ինչ-որ բան, որը տարբերում է իրեն նրանցից, և որոնց ինքը հակադրում է սեփական ենթադրյալ գերազանցությանը: Դա կարող է լինել դիմացինի ազգությունը կամ էթնիկ պատկանելությունը, նրա կրոնը կամ սեռական կողմնորոշումը:

Մինչ դեպի Արևելք զավթողական պատերազմը և հրեաների հալածանքները սկսելը, նացիոնալ-սոցիալիստները տարիներ

շարունակ իրենց քարոզչության մեջ նսեմացնում էին սլավոններին և հրեաներին՝ որպես «ստորին ժողովուրդների», և ավելի ու ավելի ակնհայտորեն էին դուրս մղում հրեաներին հասարակական կյանքից: Ռուսաստանը նույնպես տարիներ շարունակ նախապատրաստում էր իր արշավը Ուկրաինայի դեմ՝ ոչնչացնելով ժողովրդավարությունը սեփական երկրում, զրպարտելով ուկրաինական քաղաքացիական հասարակությանը («արևմտյան երկրների կողմից հրահրված և վճարված») և Ուկրաինայի կառավարությանը («Ֆաշիստներ»), նաև հայտարարելով, որ Ուկրաինան իսկական պետություն չէ:⁸

Շատ մեծ նախապաշարմունքներ ունեցող մարդիկ անընդունակ են ընկալելու իրականությունը, կրթական աշխատանքով նրանց դեպի լավը չես կարող փոխել: Այդ մարդիկ, եթե սթափ նկարագրենք նրանց էությունը, հոգեբույժի կարիք ունեցողներ են: Այդ պատճառով էլ այդքան կարևոր է ամեն ինչ անել, որպեսզի առաջին հերթին երիտասարդները, ովքեր դեռ չունեն բավարար սեփական փորձ, չներքաշվեն ատելություն և նախապաշարմունքներ տարածողների շարքերը:

Կարելի է կարծել, որ միջմշակութային փոխանակումը այսօր այլևս խնդիր չէ: Համացանցը և սոցիալական լրատվամիջոցներ-

⁸ Թե որքան ազդեցիկ էին այդ մտքերը, ցույց է տալիս սոցիալ-դեմոկրատական նախկին Դաշնային կանցլեր Հելմուտ Շմիդթի հարցազրույցը, որը 2014 թվականին Ղրիմի զավթումից հետո հեղինակավոր «Դի Ցայթ» շաբաթաթերթին տված հարցազրույցում ասել էր, որ գոյություն չունի Ուկրաինա ազգային պետություն և որ պատմաբանները մինչ օրս բանավիճում են՝ արդյո՞ք ընդհանրապես գոյություն ունի ուկրաինական ազգ: Այդ ֆոնին Պուտինի գործելակերպը միանգամայն «հասկանալի» է դառնում: Հելմուտ Շմիդթը՝ Ղրիմի հանդեպ Ռուսաստանի իրավունքների մասին. Արևմուտքի չափազանցված ռեակցիան ու պատժամիջոցների անիմաստ լինելու մասին, «Դի Ցայթ», Թիվ 14, 2014, էջ 9: Հելմուտ Շմիդթի այդ խոսքերից էլ ավելի մեծ զարմանք է առաջացնում այն, որ այդ հարցազրույցը Գերմանիայում վրդովմունքի ալիք չառաջացրեց:

րը թույլ են տալիս հեշտությամբ մուտք գործելու այլ երկրներ ու մշակույթներ: Ժամանակակից լրատվամիջոցները իրոք կարևոր օժանդակ միջոց են եվրոպական քաղաքական կրթության համար, սակայն չեն կարող դրան փոխարինել: Մարդը միշտ այնպիսին է, ինչպիսին եղել է, մարդը երկխոսություն է: Նա կարիք ունի կիսվելու, մտքերի փոխանակման և նաև անձնական շփման: Կրթական աշխատանքը չպետք է անտեսի սա և չպետք է փաթեթավորումը շփոթի ներքին բովանդակության հետ: Կրթական աշխատանքը մնում է անհրաժեշտ՝ որպես իրական մարդկանց հանդիպումներ իրական տարածքում, ովքեր մտքեր են փոխանակում իրական գործընթացների մասին և նույնացնում դրանք իրենց հետաքրքրությունների հետ: Սա չես կարող փոխարինել նաև Web 2.0-ով կամ Web 4.0-ով: Եթե չեք հավատում, բավական է միայն նայել համացանցում հայտնված թերթերի ու ամսագրերի ֆորումները: Գրառումների մեծ մասն անիմաստ է: Յուրաքանչյուրը կարող է ցանկացած բան պնդել և ուզած բան գլխից դուրս տալ՝ ոչ մի բան հաշվի չառնելով, և քանի որ այդ ամբողջը հաճախ տեղի է ունենում կեղծանունով, դա ազատում է նրան սեփական խոսքի համար պատասխանատվությունից, և նա կարող է մեծ-մեծ բրդել:

Լավագույն պատվաստումը «վարակվելու վտանգի դեմ» եղել և մնում է հանդիպումը, այլոց հետ ծանոթանալը:

Այդ պատճառով մեծ նշանակություն ունեն այն միջոցառումները, որոնց ժամանակ տարբեր երկրների երիտասարդներ հանդիպում են միմյանց հետ, մտքեր փոխանակում, համատեղ սովորում են և նաև զվարճանում: Մի երիտասարդ գերմանուհի մեկ այլ երիտասարդ լեհի հետ համատեղ շաբաթը անցկացնում է քննարկումներով ու բանավեճերով, մի երիտասարդ ֆրանսիացի, որն աշխատում է երիտասարդ գերմանացու հետ՝ պատերազմական շիրմատեղերի վրա – այդ երիտասարդները տուն կվերադառնան

այն փորձառությամբ, որ թեև ուրիշները որոշ հարցերում տարբերվում են, բայց իրենցից ավելի վատը չեն և բոլորովին էլ ավելի պակաս արժեք չունեն, որ տարբեր մարդկանց տարբեր արժեքներով գնահատելը անիմաստ է և վիրավորական:

Սա նաև ցույց է տալիս, որ խաղաղության դաստիարակությունը չի կարող իրականացվել մարդու անօտարելի իրավունքների մասին քննարկումներից անջատ: Բոլոր մարդկանց իրավունքների և նրանց ազատությունների նկատմամբ հարգանքը, որոնք նույնքան արժանի են պաշտպանության, որքան սեփականները, յուրաքանչյուր խաղաղ և խաղաղասեր հասարակության հիմքն է: Սա չի նշանակում հակամարտությունից զերծ ազգային կամ միջազգային հանրության իդեալ, որը չկա և հավանաբար չի էլ լինի: Խոսքն ավելի շուտ այն մասին է, որ հակամարտությունների կարգավորման գործում կան խաղի կանոններ՝ սեփական հասարակության ներսում և դրանից դուրս, որոնք չպետք է խախտվեն:

Մարդու իրավունքները լավագույն պաշտպանությունն են պատերազմից և բռնությունից, բայց դրանք կարող են կատարել այդ գործառնությո՞ւթը, եթե իրականացվեն ինչպես պետական կառույցներում, այնպես էլ մարդկանց գիտակցության մեջ: Եվրախորհուրդը, որում Ռուսաստանի հեռանալուց հետո միավորվել են 46 եվրոպական պետություններ, ունի ընդունած շուրջ 200 համաձայնագրեր, որոնցից միայն մեկն է, որ պարտադիր է բոլորի համար. դա Մարդու իրավունքների եվրոպական համաձայնագիրն է, որը վավերացվել է բոլոր երկրների կողմից: Այդուհանդերձ, ճշմարտությունն այն է, որ տարբեր երկրներում այն շատ տարբեր կերպով է կիրառվում:

Եվրոպական քաղաքական կրթությունը սկսվել է Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո որպես հանդիպումների աշխատանք: 1950–ականների սկզբից՝ Վեսթերվալդի Մարիենբեր-

գում գտնվող *Եվրոպական տանը* անցկացվում էին հանդիպման սեմինարներ, որոնցում, օրինակ, ֆրանսիացիներն ու գերմանացիները, որոնք ընդամենը մի քանի տարի առաջ պատերազմական հակառակորդներ էին, նստած էին կողք կողքի: Նախաձեռնող ակտիվիստներից մեկը՝ Քլաուս Շյոնդորֆեն հիշում է.

«Այն փաստը, որ մենք՝ պատերազմի սերունդը, իրավունք ունենք այստեղ լինել եվրոպացիներ, կարող ենք խաղաղ պայմաններում գրույցներ վարել ազատության և բարեկամության մասին՝ առանց սահմանները հաշվի առնելու, կարող ենք պլաններ մշակել և գործողություններ ծրագրել, մեզ այնքան շատ ուրախություն պատճառեց, այնքան լիցքավորեց, որ մեզանից շատերը շատ ավելի ուրախ էին, քան ավելի ուշ՝ շքեղ հյուրանոցներում ձանձրալի ժողովների մասնակիցները»⁹.

Տասնամյակների ու դարերի ռազմական բախումներից հետո ժողովուրդների միմյանց ձանաչելը կարևոր քայլ էր: Այսօր դա կրկին արդիական է մեկ այլ պատճառով. Եվրոպան ճակատագրի համայնք է, ինչպես այժմ զգում ենք Եվրամիության սահմաններից դուրս: Մի երկրում անօրինաչափ գործողությունները դժվարություններ են առաջացնում մեկ այլ երկրում: Կարևոր որոշումներն ընդունվում են եվրոպական մակարդակի վրա: Մենք կապված ենք միմյանց հետ, իսկ դա նաև նշանակում է, որ պար-

⁹ Շյոնդորֆե Քլաուս, «Այն ժամանակ, երբ այդ ամենը սկսվում էր»: *Եվրոպական լրագիր*, մայիս, 1981 թ.: Մեջբերումն ըստ Էքարթ Շթրաթենշուլթե, Եվրաքաղաքական դերակատարների գործառույթների ընկալման հարցում շրջադարձը Գերմանիայում՝ եվրոպական ուղղվածություն ունեցող կրթության մեջ, Մաթիաս Յոփ / Անդրեաս Մաուռեր / Հայնրիխ Շնայդեր, Եվրաքաղաքական հիմնարար հասկացությունները՝ շրջադարձային փոփոխում: Վերլուծություններ և հետևություններ քաղաքական կրթության համար, Բոնն, 1998, էջ 519–528:

տավոր ենք իրար մասին գիտենալ՝ ով ենք մենք, ինչու ենք այս-պիսին, ինչպիսին ենք մենք և ինչով ենք «շնչում ու ապրում»:

Հիշողության մշակույթը

Բայց եվրոպական պետությունները ոչ միայն միասնական ապագա ունեն, այլ նաև համատեղ անցյալ: Այդ անցյալը մեծ մասամբ աչքի էր ընկնում պատերազմներով, ցեղասպանությամբ ու ռասիզմով: Այն ակնարկը, որ մենք իսկապես ընդհանուր պատմություն ենք ունեցել, շատ բան չի ասում: Անկասկած, գերմանական համակենտրոնացման ճամբարը լեհական Օսվենցիմում՝ գերմանա-լեհական պատմության մի մասն է, բայց ոչ այնպիսին, որը ձևավորում է գերմանացիների և լեհերի միջև միասնականության զգացումը:

Մենք պարտավոր ենք ակտիվ կերպով վերլուծել մեր միասնական պատմությունը, որում շատ տառապանք ենք պատճառել միմյանց: Չի կարող լինել ժողովուրդների միջև հաշտություն՝ առանց պատմության հետ առերեսվելու և առանց մեր պատրաստակամության՝ մեզ վրա վերցնելու պատասխանատվությունը, և սա կարևոր է հենց գերմանական դիտանկյունից:

Հիշողության վայրեր

Քննարկվող թեմաները վերհանելուն և քննարկելուն մեծապես օգնում են հիշողության վայրերը: Հիշողության վայր շատ բան կարող է լինել. իրականում այն ամենն է, ինչը նպաստում է ընդհանուր ասոցիացիաներ խտացնելուն: Մենք խոսում ենք նաև վիրտուալ հիշողության վայրերի մասին, օրինակ, գրականության մեջ կամ կինոյում: Բայց, հավանաբար, չկան հիշողության ավելի

տպավորիչ վայրեր, քան պատերազմական գերեզմանատներն ու դրանց հետ կապված հուշահամալիրները:

Եվրահանձնաժողովի նախկին նախագահ և Լյուքսեմբուրգի նախկին վարչապետ Ժան-Կլոդ Յունկերը խորհուրդ է տվել բոլոր նրանց, ովքեր կասկածում են Եվրոպային և հուսահատության մեջ են ընկնում Եվրոպայի ամենօրյա խնդիրներից ու դժվարություններից, այցելել զինվորական գերեզմանատներ:¹⁰ Դրանով նա նկատի ունի, որ դա լավագույն տեղն է հիշեցնելու, թե ինչու է այդքան կարևոր եվրոպական համախմբվածությունը՝ լինի դա Եվրոպական միության թե Եվրախորհրդի շրջանակներում: Պատերազմը, որը Ռուսաստանը սկսել է Ուկրաինայի դեմ 2014 թվականից, իսկ 2022 թվականից՝ ուժգնացրել, ցույց է տալիս, թե դա որքան արդիական է:

Պատերազմի զոհերին հիշելիս ուշադրությունը կենտրոնանում է անցյալի վրա, բայց զոհերին ոգեկոչելիս պետք է միշտ աչքիդ առաջ ունենաս նաև ապագան: Պատերազմական գերեզմանատները ուղղակիորեն աղաղակում են մեզ. «Լծվե՛ք հանուն խաղաղության: Այլևս երբե՛ք չլինի պատերազմ»:

Տարեց մարդիկ, ովքեր հասցրել էին վերապրել Երկրորդ համաշխարհային պատերազմը, կամ ծնվել էին պատերազմից անմիջապես հետո և ուղղակիորեն զգացել էին դրա հետևանքները, հեշտությամբ են հասկանում այս ուղերձը: Բայց խնդիրն այն է, որ այս ուղերձը փոխանցվի նաև գալիք սերունդներին, նրանց,

¹⁰ «Ով կասկածում է Եվրոպայի մեջ, ով հուսալքված է Եվրոպայից պետք է հաճախի զինվորական գերեզմանատները: Ոչ մի տեղ չկա ավելի լավ կամ ավելի հրատապ կամ ավելի հուզիչ վայր՝ համոզվելու, թե եվրոպական հակամարտություններն ինչպիսի վատթարագույն արդյունքներ կարող են ունենալ»: Ժողովրդական սգո օր, 2008, վարչապետ Ժան Կլոդ Յունկերի ձառը Բունդեսթագում, 16.11.2008 թ.

որոնք գոնե մինչև 2022 թվականի փետրվարը բախտ են ունեցել և ստիպված չեն եղել վերապրելու պատերազմը:

Այդ պատճառով Գերմանիայում ջանքեր են գործադրվում, որ պատերազմի գոհերի գերեզմանատները պահպանվեն ու խնամվեն ոչ միայն որպես սգո վայրեր, այլև, միևնույն ժամանակ, ձևավորվեն որպես կրթական վայրեր: Գերմանական՝ *Պատերազմական շիրիմների խնամք* ժողովրդական միավորումը այս հարցում շատ ակտիվ է ու նորարար:

Պատերազմական գերեզմանատներին նայելիս շատերի մոտ սարսուռ է առաջանում: Տեսնում ես նույն տեսքն ունեցող գերեզմանների գրեթե անվերջանալի շարք: Բայց պատերազմի սարսափները «շոշափելի» դարձնելու համար անհրաժեշտ է զոհվածների շիրիմները չթողնել անանուն, այլ նրանց տալ անուն, դեմք ու կենսագրություն: Երիտասարդներն այստեղ շատ արագ են հասկանում, որ «մահացած պապիկները» իրենց տարիքին էին, երբ մահացան, և որ նրանց բոլորի կյանքը նույնպես դեռ առջևում էր, ինչպես այն երիտասարդ կանանց ու տղամարդկանց կյանքը, որոնք այժմ կանգնած են այդ գերեզմանների մոտ: Կմտածեք նաև ուկրաինացի և ռուս զինվորների մասին, որոնք 2022 թվականի փետրվարից այրվում են անբարոյական ու անհարկի զավթողական պատերազմում:

Այդ իսկ պատճառով ազգային և միջազգային նախագծերում դպրոցականներն աշխատում են մահացածների կենսագրությունների վրա: 2017 թվականի իրադարձությունը ցույց է տալիս, թե որքան պայթյունավտանգ է դա: Այն ժամանակվա Ազգային սգո օրվա կապակցությամբ ռուսական և գերմանական դպրոցի աշակերտները նման նախագիծ ներկայացրին Գերմանիայի խորհրդարանում՝ Դաշնային Հանրապետության նախագահի ներկայությամբ, և դա հեռարձակվում էր հեռուստատեսությամբ՝ ամբողջ

երկրով: Գերմանացի աշակերտները ուսումնասիրել էին Գերմանիայում զոհված Խորհրդային ռազմագերիների կենսագրությունները, իսկ ռուսները՝ Խորհրդային Միությունում զոհվածներինը: Մի ռուս աշակերտ գեկուցեց իր ձեռք բերած արդյունքների մասին և ավելացրեց մեկ նախադասություն. «Ես տեսա կյանքից հեռացած անմեղ մարդկանց գերեզմաններ, մարդկանց, որոնք չէին ուզում պատերազմել, այլ ցանկանում էին խաղաղության մեջ ապրել»: Այն, որ այդ տղան գերմանացի զինվորներին, որոնք Խորհրդային Միություն էին եկել որպես ագրեսորներ ու բռնազավթիչներ, բնութագրել էր որպես անմեղ, վրդովմունքի մեծ ալիք բարձրացրեց Ռուսաստանում, ինչի հետևանքով, որքան հայտնի է, նա խիստ նկատողություն ստացավ դպրոցի կողմից: Դա անգամ հանգեցրեց նրան, որ իր գերմաներենի ուսուցչուհուն ազատեցին աշխատանքից: Այն, որ պատանին տասնվեց տարեկան էր, և որ ընդամենը երկուս ու կես թույլ ժամանակ ուներ սեփական կարծիքն արտահայտելու, այն, որ նա շփոթված էր քաղաքական գործիչների ու հեռուստալրագրողների ներկայությունից, ոչ մի դեր չխաղաց:

Նույնիսկ բարեմիտ մարդկանց մոտ երբեմն հարց է առաջանում, թե արդյո՞ք ժամանակը չէ աստիճանաբար դադարել հիշատակել զոհվածներին և կենտրոնանալ ապագայի վրա: Դա ամեննչին էլ պարզունակ հարց չէ, սակայն ունի հստակ պատասխան. ապագան գոյություն ունի միայն այն դեպքում, երբ հիշում ես անցյալը, և երբ քո վերաբերմունքն ես ցուցաբերում դրա հանդեպ: Պատերազմական գերեզմանները բնությանը թողնելը, հրաժարվելը հիշատակի միջոցառումներից, որոնք, իհարկե, դեռ շարունակ վերքեր են առաջացնում, հարմար միջոց է թվում, բայց իրականում դա փակուղի է: Հնարավոր չէ դուրս մղել ցավը զոհերի հանդեպ, քանի որ այն, ինչ դուրս է մղվում, չի անհետանում և

մեկ ուրիշ տեղ է ի հայտ գալիս: Այդ պատճառով մենք պետք է այն ճանապարհով գնանք, որը կերտում է ապագան՝ անցյալի իմացությամբ ու հիշողությամբ:

Պատերազմում, որը Ռուսաստանը մղում է Ուկրաինայի դեմ, կրկնվում են նույն սարսափները, որոնք ուկրաինական ժողովուրդը ստիպված է եղել այն ժամանակ կրել գերմանացիների կողմից՝ Երկրորդ համաշխարհային պատերազմում. քաղաքացիական բնակչության ոմբակոծումներ, կտտանքներ, սպանություններ, վայրագություններ, թալան: Ըստ Ռուսաստանի նախկին նախագահ և պաշտպանության խորհրդի ներկայիս փոխնախագահ Մեդվեդևի՝ երկիրը, որի վրա հարձակում է կատարվել, ամենևին էլ պետություն չէ, և այն կվերանա աշխարհագրական քարտեզից:

Այս պատերազմը նույնպես մի օր կավարտվի, բայց, անկախ պատերազմի ելքից, խաղաղության հասնելը դեռ շատ հեռու է մնալու: Ագրեսորների և նրանց զոհերի միջև հաշտեցման երկար գործընթաց պետք է լինի: Գերմանիայում մարդիկ գիտեն, թե դա ինչ է նշանակում, և որքան փշոտ է այդ ճանապարհը: Համենայնդեպս սկզբում պետք է լինի սեփական մեղքի ու պատասխանատվության խոստովանություն: Եվ հետո բազմաթիվ հանդիպումներ ու քննարկումներ կպահանջվեն հասցված վերքերը եթե ոչ բուժելու, ապա գոնե սպիացնելու համար:

Կրթություն և հանդիպումներ, պատմություն և պատասխանատվություն, այլ մշակույթների և մտածելակերպերի ընդունումը ոչ որպես անհոժար մի քայլ, այլ որպես հարստացում, հանդուրժողականությունը՝ որպես հիմնական եվրոպական առաքիլություն, որպես նվիրվածություն ժողովրդավարությանը և մարդու իրավունքներին. սրանք են կարևոր տարրերը ապագայի կերտման գործում:

Դրա հետ մեկտեղ չի կարելի մոռանալ հետևյալը. եվրոպական կրթությունը ինքնանպատակ չէ: Այդ կրթության իդեալը ոչ թե կրթված, այլ ակտիվ մարդն է: Քաղաքացիները պետք է օգտագործեն գործիքակազմն ու ձեռքբերված գիտելիքները՝ եվրոպական որոշումների կայացման գործընթացների մեջ ներգրավվելու համար: Երկարաժամկետ հեռանկարում Եվրամիությունը և եվրոպական պետությունների համադաշնությունը կարող են գոյություն ունենալ միայն այն դեպքում, եթե դրանք ոչ միայն ընդունվեն բնակչության մեծամասնության կողմից, այլև ակտիվ ձևավորվեն նրանց մասնակցությամբ: Կրթությունը չի կարող փոխարինել մասնակցությանը, այլ կարող է միայն աջակցել դրան:

Միայն կրթությունն ու մշակույթը բավարար չեն միջազգային հարաբերություններում խաղաղություն ապահովելու համար: Սակայն դրանք անհրաժեշտ են և հետևաբար՝ նաև կարևոր:

Բանալի բառեր՝ Քաղաքականություն, տնտեսություն, մշակույթ, եվրոպական ինքնություն, հանդուրժողականություն, ժողովրդավարություն, քաղաքական կրթություն, հանդիպում, մասնակցություն

Լռելը ինձ վրա մեծ հետք է թողել

Հարցազրույց գրող Լաուրա Քվիրթնիայի հետ
Հայ-գերմանացի գրող

— Կարո՞ղ է արվեստը նպաստել հաշտությանն ու խաղաղությանը:

Ես միանգամայն համոզված եմ, որ արվեստը, և առաջին հերթին գրականությունը, այդ հարցում կենտրոնական դեր է խաղում: Առաջին հերթին՝ հալածանքները, պատերազմը, ընդհուպ մինչև Ցեղասպանությունը պատկերավոր ներկայացնելու համար: Պատմաբանների կողքին, որոնք ճշմարտությունն են փնտրում, գրական լեզվով պատմողը ձգտում է այդ ճշմարտությունը ուրիշներին այնպես մատուցել, որ նրանք սրտով դա զգան: Լավագույն դեպքում դա օգնում է խոչընդոտելու նաև ապագայի հնարավոր վիշտը:

— Ի՞նչ փորձ եք ձեռք բերել այդ առումով:

Որպես գերմանուհի՝ ես այդ փորձը ձեռք բերեցի դեռևս մանկության ժամանակ: Երբեք չեմ մոռանա «Դանիել Կեսմարդ» գիրքը՝ երիտասարդական մի վեպ, որը պատմում է մի տղայի մասին, որը, որպես «կիսահրեա», ապրում է նացիստական ժամանակաշրջանում: Այդ վեպը կարդացել եմ տասը թե տասնմեկ տարեկան հասակում: Դեռևս այն ժամանակ այդ գիրքը կարդալով՝ ինձ համար պարզ դարձավ, որ մենք Գերմանիայում պարտավոր ենք պայքարելու հանուն «այլևս երբեք ոչ մի պատերազմ» կարգախոսի:

— **Ձեր հայրը հայ է: Արդյո՞ք այդ համատեքստում նրա ծագումը որևէ հետք է թողել Ձեզ վրա:**

Դա ինձ վրա մեծ հետք է թողել: Եվ առաջին հերթին՝ հայերի նկատմամբ տեղի ունեցած Յեղասպանության մասին լռելը: Իմ հայրը ծագումով Ստամբուլից է: Նա դեռևս 60-ական թվականներին ամենօրյա հետապնդումների ու ամենօրյա վախի պայմաններում է մեծացել: Երբ ավելի ուշ տեղափոխվեց Գերմանիա և ունեցավ դուստր, նա ուզեց ինձ հեռու պահել այդ վախից: Այլ կերպ ասած՝ ինձ հեռու էր պահում հայոց պատմությունից:

— **Դուք այդ թեմայով վեպ եք գրել: Դա լռությունը կոտրելու Ձեր ճանապարհն էր:**

Այո՛, դա այդպես էր: Այդուհանդերձ գրելիս ոչ մի քաղաքական նպատակ չեմ հետապնդել: Սակայն համոզված եմ, որ վերքերը, այդ թվում նաև հասարակական, ապաքինվում են միայն, երբ դրանց մասին խոսում են ու գրում: Բայց ինչն ինձ ամենից շատ է մտահոգում, սկսած այս գիրքը հրատարակվելու պահից և շատ մարդկանց հետ այդ մասին իմ խոսելուց հետո, այն է, որ Գերմանիայում ընդհանրապես քչերը գիտեն, որ Թուրքիայում հայեր են ապրել: Դա ցույց է տալիս, թե որքան «արդյունավետ» էր Յեղասպանությունը:

— **Ինչ զգացումներ Ձեզ մոտ առաջացրեց Բունդեսթագի կողմից Յեղասպանության վերաբերյալ բանաձևի ընդունումը:**

Այդ բանաձևի ընդունումից կարճ ժամանակ անց ես Հայաստանում էի՝ մի վերլուծական հոդվածի առիթով, որը նախատեսված էր «Դի Յայթ» շաբաթաթերթի համար, որից էլ ավելի ուշ առաջացավ իմ վեպը գրելու գաղափարը: Մեքենայի ռադիոյով այդ ժամանակ հաղորդեցին Բունդեսթագի որոշման մասին, և

այդ առիթով ինձ հետ խոսք բացեց տաքսու վարորդը: Ես դեռ հիշում եմ, թե ինչ մտածեցի. ինչ լավ քայլ է: Եվ միևնույն ժամանակ մտքովս անցավ նաև՝ բայց ինչո՞ւ այդ քայլն այդքան ուշ արվեց:

— Այդ ժամանակվանից սկսած որևէ բան փոխվե՞լ է Գերմանիայում:

Թույլ տվեք դրան պատասխանեմ մի օրինակով: Ես երկար ժամանակ ապրել եմ Քյոլնում: Այնտեղ արդեն չորրորդ անգամ փորձ արվեց հուշակոթող տեղադրելու՝ ի հիշատակ Հայոց ցեղասպանության զոհերի: Գերմանիայի Դաշնային Հանրապետության նախարար Ջեմ Օզդեմիրը, ով նաև շատ էր նպաստել այդ բանաձևի ընդունմանը, այցելեց այդ հուշակոթող, սակայն մի քանի օր անց այդ հուշակոթողը քաղաքի ղեկավարության կողմից ապամոնտաժվեց, քանի որ վերադասների թույլտվություն չկար այն տեղադրելու համար: Ես ինձ հարց եմ տալիս՝ ինչո՞ւ այս տարիների ընթացքում այդ թույլտվությունը չի տրվել: Չէ՞ որ Գերմանիան պատմական պատասխանատվություն է կրում տեղի ունեցածի համար և խոստացել էր արագացնել այդ հարցի քննարկումը: Ո՛չ, կարծում եմ շատ բան չի փոխվել:

— Վերջին տարիներին Գերմանիայում երիտասարդ գրողները շատ վեպեր են հրատարակել միգրացիոն պատմությունների հետ կապված: Ի՞նչ առնչություն ունի հայկական ընտանիքի մասին գրված Ձեր գիրքը:

Ես կարծում եմ՝ Գերմանիան այժմ մի այնպիսի շրջան է ապրում, երբ հեղինակների նոր սերունդը ուզում է մի փոքր ավելին պատմել միգրացիոն խնդիրների մասին: Երկար ժամանակ այդ ստեղծագործություններում խոսքը միայն «թուրքերի» մասին էր, երբ հիշատակվում էին այն մարդիկ, որոնք Թուրքիայից եկել էին

որպես հրավիրված աշխատողներ (գաաթադրայթերներ): Այդ ժամանակ եկան նաև հայերը, քրդերը, Պոնտոսի հույները, զազաները: Գերմանիան հաճախ է նրանց ապաստան տրամադրել: Ես ուրախ կլինեի, եթե գրականությունն օգներ այդ ամբողջ բազմաշերտությունը տեսանելի դարձնելուն:

Մշակույթը ունիվերսալ լեզու է

Հարցազրույց **Կատերինա Փոլադյանի** հետ
Հայ-գերմանացի գրող

— Ի՞նչ գնահատական կտայիք մշակույթի ոլորտում գերմանա-հայկական գործակցությանը:

Որպես կին գրող՝ ես միշտ մի փոքր միայնակ պայքարող եմ և դրանով պայմանավորված կապված եմ նման գործունեության հետ: Այս աշնանը՝ 2022 թվականի, «Գյոթե» կենտրոնի հրավերով Երևան եմ գալու և ուրախ կլինեմ, եթե կարողանամ այդ այցի շրջանակներում իմ փոքրիկ ներդրումն ունենալ գերմանա-հայկական մշակութային փոխանակման գործում:

— Ո՞ր ոլորտներն են առավել գրավիչ գերմանական հանրության համար:

«Այստեղ առյուծներ են» վերնագրով իմ վեպի ընթերցումներով կատարած շրջագայությունների արդյունքներից ելնելով՝ կարող եմ ասել, որ այն ընթերցասեր հանրությունը, որին հանդիպել եմ, մեծ հետաքրքրություն է ցուցաբերել Հայաստանի և նրա պատմության հանդեպ: Շատ մեկնաբանություններ միևնույն ժամանակ զարմանք առաջացրին՝ տարածաշրջանի մասին նրանց անտեղյակ լինելու աստիճանով: Լավ կլիներ, եթե հայալեզու ստեղծագործությունների գրական թարգմանությունները կարողանային լրացնել այդ բացը: Ընդհանուր առմամբ՝ մշակութային փոխանակման յուրաքանչյուր ձև ես կարևոր ու անհրաժեշտ եմ համարում:

— Ո՞ր երեք գրքերը հայերենից գերմաներեն թարգմանել կտայիք, և ո՞ր երեք գրքերը՝ գերմաներենից հայերեն:

Քանի որ ես, դժբախտաբար, հայոց լեզվին չեմ տիրապետում, ուստի, առանց ստուգել կարողանալու, փոխանցում եմ իմ մի լավ բարեկամի խորհուրդը՝ Գուրգեն Մահարի, «Ծաղկած փշալարեր», Գուրգեն Մահարի, «Այրվող այգեստաններ», Հակոբ Օշական, «Մնացորդաց»-ի 1-ին հատորը:

Վերջերս կարդացի Թարիե Վեսոսի երկու գործերը՝ «Թռչունները» և «Սառցե ամրոցը»: Թեև դրանք գերմաներեն գրքեր չեն, սակայն ունեն այնպիսի գրական արժեք, որ գտնում եմ, որ դրանք պետք է հասու լինեն յուրաքանչյուր լեզվով. գերմաներեն թարգմանության համար խոնարհվում եմ Հինրիխ Շմիդտ-Հենքելի առջև: Եվ, իհարկե, ուրախ կլինեի նաև «Ապագայի երաժշտություն» ստեղծագործության թարգմանության համար: Ինձ շատ հետաքրքիր է, թե ինչպես կընդունի Հայաստանի՝ նախկին Խորհրդային Հանրապետության ընթերցասեր հասարակությունը վեպում տեղ գտած Խորհրդային Միության վերաբերյալ քննադատական վերլուծությունը:

— Ինչպե՞ս կարող է արվեստը նպաստել հաշտությանն ու խաղաղությանը: Ի՞նչ փորձ եք ձեռք բերել այդ առումով:

Ես հասկանում եմ, որ մշակույթը ունի վերսալ լեզու է, որը թեև հաճախ կարող է դառնալ մի դժվար ընկալելի շիլաշփոթ, այդուհանդերձ, այն կամուրջ է մյուս կողմին հասկանալու համար, երբ մարդկանց մեծ մասի համար փակ են դիվանագիտական համաձայնությունների ձանապարհները: Մշակութային երևույթները (դրա տակ հասկանում եմ բոլոր արվեստները՝ թատրոն, երաժշտություն, գեղանկարչություն, գրականություն, պար) կարող են հետաքրքրություն առաջացնել: *Ի՞նչ: Ի՞նչո՞ւ այդպես: Որ-*

տեղից է դա գալիս: Հաշտությունը սկսվում է դիմացինի հանդեպ իրական հետաքրքրությունից և հետաքրքրասիրությունից: Այստեղ կցանկանայի ևս մեկ անգամ մեջբերել Մարգրեթ Աթվուդի բառերը, որը մի առիթով ասել էր. «Գրականությունը [...] թույլ է տալիս մեզ, որքանով դա հնարավոր է, դիմացինի հոգու մեջ ներթափանցել: Կարող ենք պատկերացնել, թե մենք ենք այդ դիմացինը: Եվ որքան ավելի լավ դա մեզ հաջողվի, այնքան ավելի քիչ կվերաբերենք այդ մեկ ուրիշին՝ որպես զգացմունքներից ու մարդկային արժանապատվությունից զուրկ առարկայի: Երբ մեր աչքերի առջև կարողանանք հստակ պատկերացնել դժոխք իջնելը՝ որպես ապագա սպասվելիք մի բան, այդ դեպքում ավելի շուտ կխուսափենք դրանից»:

Պատմությունը կարծես բռնում է Մարգրեթ Աթվուդի ստերը. մարդիկ կրկին ու կրկին իրար վերաբերվում են որպես զգացմունքներից և արժանապատվությունից զուրկ առարկայի, իսկ դժոխք իջնելու պատրաստակամությունը թվում է, թե մշտական է: Սակայն որքան ավելի հուսալքված և դժոխային պետք է պատկերացնենք աշխարհը, որում մշակույթն ու հոգևոր կյանքը չի պայքարում հանուն խելամտության և հասկացության համար: Հասկանալու ինքներս մեզ, մեր մերձավորներին, մեր անցյալն ու ապագան:

— Ձեր պապը վերապրել է Յեղասպանությունը: Ինչ զգացումներ առաջացրեց Բուհդեսթագի համապատասխան բանաձևը: Արդյո՞ք Գերմանիայից սպասում եք դրան հաջորդող քայլերի:

Ինձ համար դժվար է բացահայտ քաղաքական հարցերին պատշաճ պատասխաններ տալը: Եվ կրում եմ իմ հայկական ազգանունը, ինչպես մի հին գլխարկ, որը ես, ինչպես իմ «Այստեղ առյուծներ են» վեպի հերոսուհին է արտահայտվում, չեմ հանում

նաև հաց ուտելիս: Իմ հայրը հայ է, Մոսկվայում ծնված, իմ պապը ծագումով Սև ծովի կողմերից է, որտեղ երեխա ժամանակ վերապրել է Ցեղասպանության աղետը: Բայց դա չի նշանակում, որ Գերմանիայի քաղաքական այդ քայլը ինձ անտարբեր է թողնում. հակառակը, խիստ անհրաժեշտ եմ համարում, որ Գերմանիան՝ իր հեռատեսությամբ ու հաշվենկատությամբ անդրադառնա երկրորդ պլան մղված տարածաշրջանների խնդիրներին: Ըստ իս՝ այդ տարածաշրջանների թվին են պատկանում նաև Բալկանների աճող կոնֆլիկտները:

— Ինչ գնահատական կտայիք այդ թեմայի հանդեպ թուրք քաղաքակիրթ հասարակության ու մտավորականների տրամադրություններին՝ այդ թվում նաև Գերմանիայի թուրքական համայնքներում:

2016–2017 թվականներին ութ ամիս ապրեցի Թուրքիայում և աշխատեցի «Այստեղ առյուծներ են» վեպիս վրա: Կրթաթոշակ ստացա՝ աշխատելու Ստամբուլի *Թառաքիա* մշակութային ակադեմիայում, նստում էի Գերմանիայի դեսպանի պատմական ամառային նստավայրում՝ մի ճառագայթող ձերմակ տուն, նստում էի այնտեղ ու նայում Բոսֆորին ու գիտեի, որ Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ այս նույն տեղում մի գերմանացի դիվանագետ է նստել և հայերի հանդեպ կատարված հանցագործության մասին հաղորդել Բեռլին:

Իմ աշխատանքը դիտարկում եմ որպես մարդկային հիշողության լեզվական վերլուծություն՝ հնարավորությունների, վերապրածի մասին հիշողությունների և ուրվապատկերների: Նաև ուրանալն ու փաստերի դուրս մղումն են այդպիսի ցնորային թվացյալ պատկերներ ստեղծում: Դա կարևոր էր, որ ես այդ խեղաթյուրումները հենց տեղում ուղղակիորեն վերլուծեի, որովհետև վախեն-

նում եմ, որ այդ ուրվապատկերները եղել և մշտապես մնում են հասարակական իրականության մասը ո՛չ միայն Թուրքիայում: Երբ ես թուրք ընկերների հետ խոսում էի վեպի մասին, ինձ հարցրին. «Ինչո՞ւ հանգուցյալներին հանգիստ չես թողնում»: Փորձեցի արտաքուստ ինձ հեռու պահել հայերի կողմից կրած ցավի ճանաչման և թուրքական կողմից դրա համառորեն ժխտման համար մղվող պայքարից: Սակայն անմիջական փորձը՝ ամեն անգամ մեկ այլ դիտանկյունից հեռանկարը տեսնելու, շատ կարևոր էր: Ես մի հետազոտական ճանապարհորդություն կատարեցի Օրդու՝ Սև ծովի ափին: Այն հարցին, թե քանի՞ հայ է դեռ այդտեղ ապրում, ես ստացա հետևյալ պատասխանը՝ երեք: Առաջին համաշխարհային պատերազմից առաջ նրանք 20 000-ից ավելի են եղել: Իսկ երբ խնդրեցի անունների պատմական գրանցամատյանը, ինձ տվեցին մի բուռ պնդուկ:

— Դուք ծնվել եք Խորհրդային Միությունում՝ Մոսկվայում: Ինչպե՞ս եք ընկալում Ուկրաինայի հետ կապված ներկայիս իրավիճակը:

Թեև իրավիճակների մեջ ներթափանցելը որոշակի առումով իմ մասնագիտության մասն է համարվում, ստիպված եմ խոստովանել, որ այս պատերազմի առկայության դեպքում երևակայությանս ուժը ինձ ոչինչ չի հուշում: Չեմ կարող ասել՝ արդյո՞ք իմ վախն ու իմ հուսալքվածությունը ավելի է ուժգնանում՝ կապված իմ ծագման հետ, քանի որ մարդկայնորեն ցավ եմ զգում զոհերի համար և ցասում՝ հանցանք գործողների նկատմամբ: Որպես կին գրող խոր վիշտ ու հուսահատություն եմ զգում, որ այդ ցինիկ, անարդար, դաժան ու բիրտ ուժային բախումների հետևանքով ժողովուրդների միջև մշակութային փոխընկալման ուղիներն անկանխատեսելի ժամանակով փակված կլինեն:

Կամուրջներ՝ մշակույթի և կրթության միջոցով

Հարցազրույց Նաթիա Միկելաձե-Բախսովիանիի հետ
Երևանի «Գյոթե» կենտրոնի ղեկավար

— Ինչպե՞ս եք Դուք գնահատում գերմանա-հայկական գործակցությունը մշակույթի և կրթության ոլորտում:

— Գերմանա-հայկական համագործակցությունը մշակույթի և կրթության բնագավառում ունի յուրօրինակ պատմություն և ավանդույթ: Վերջին տասնամյակում երկու երկրները կարողացան առավել շատ և կարևոր կամուրջներ գցել միմյանց միջև: Շատ կարևոր է նաև այդ գործակցության եվրոպական համատեքստը: Չնայած որ Հայաստանը պատմական տեսանկյունից ավելի շուտ աչքի է ընկնում որպես ֆրանկոֆոն երկիր, Գերմանիան կարողացավ դառնալ երկրի կարևոր գործընկերը և խթանողը: 2017 թվականի վերջում «Գյոթե» ինստիտուտի ներկայացուցչության բացումը էապես նպաստեց այդ գործակցության ինտենսիվացմանը:

— Ի՞նչ կարևոր գործիքակազմեր / միջոցառումներ են մեծ դեր խաղացել այդ գործում:

— Գերմանա-հայկական գործակցության համար կարևոր գործիք է գերմանական կրթական և մշակութային աշխատակիցների և աշխատակցուհիների ներկայությունը երկրում: Միայն տեղում կարելի է ավելի լավ գնահատել, թե ինչ և ինչպես է տեղի ունենում, ինչի կարիք կա, ինչ է թելադրում ժամանակի զարկերակը և

ինչպես կարող է երկիրը՝ տեղային գործընկերային կազմակերպությունների ու մարդկանց հետ, նորանոր նախաձեռնություններ իրականացնել: Նմանապես կարևոր է նաև հայ կրթական և մշակութային միջնորդ աշխատակից-աշխատակցուհիների բնակության նստավայրի առկայությունը, ինչպես նաև կրթական այցերը Գերմանիա: Կրթության և մշակույթի ոլորտի մարդկանց արդյունավետ փոխանակման համար մեծ խոչընդոտ է մուտքի արտոնագրեր ստանալը, որը կապված է առանձնակի բարդացված ընթացակարգի հետ՝ համեմատած եվրոպական հարևան այլ երկրների հետ: Դա հանգեցնում է մեր գործընկեր-գործընկերուհիների հիասթափության, նրանց անվճռականության և արժեզրկում է մեր գործակցությունը այդ բնագավառում:

— Ինչ մարտահրավերներ և հնարավորություններ եք տեսնում ներկայում Հայաստանի և Գերմանիայի միջև մշակութային ու կրթական փոխանակման մեջ:

— Հայաստանն առանձնապես դժվարին աշխարհաքաղաքական դիրք ունի, որը վերջին երկու տարիներին մեծապես ազդում է երկրի միտումների ու զարգացումների վրա: 2020 թվականի վերջում ամբողջ երկիրը գտնվում էր յուրօրինակ շոկային իրավիճակի մեջ: Հսկայական հիասթափությունը եվրոպական կազմակերպություններից և թերահավատությունը ընդհանուր ընդունված նախագծերի հանդեպ 44 օր տևած պատերազմի հետևանքն էին: Մշակութային ու կրթական փոխանակումը ստիպված պետք է նորովի վերսկսվեր և կառուցվեր թերևս մի բոլորովին նոր մակարդակի վրա: Ամենից շատ տուժեց վստահությունը, չափազանց մեծ էին վերքերը, որ առաջացել էին «արտաքին աշխարհի անտարբերությունից»: Այս դժվարին իրավիճակում մեզ հաջողվեց «Գյոթեն» ինստիտուտի և արտաքին գործերի վարչության, ինչպես

նաև գերմանացի այլ գործընկերների կողմից նախաձեռնված միջազգային օգնության հիմնադրամի միջոցով կարևոր ներդրում ունենալ մեր գործընկեր կազմակերպությունների կառուցվածքի պահպանման և ստեղծագործական ազատության գործում:

Մշակութային և կրթական փոխանակումը մշտական գործընթաց է, որը հիմնված է երկու կողմերի վստահության և անկեղծության վրա: Բայց դա առաջին հերթին հիմնված է երկու երկրների մարդկանց ուղիղ փոխանակումների և հանդիպումների վրա: Այդ պատճառով անհրաժեշտ է, որ արդեն տարիների ընթացքում ձեռքբերվածը պահպանվի ու շարունակաբար զարգացվի: ԴԱԱԴ գրասենյակի փակումը (եթե անգամ որոշում կայացնողների համար հիմքեր կան) մեծապես վնասեց, օրինակ, արդեն տարիների ընթացքում հրաշալի գործող ակադեմիական փոխանակումների ավանդույթին: Մշակութային և կրթական արդյունավետ փոխանակում իրագործելու համար առաջին հերթին անհրաժեշտ են անմիջական միջմարդկային շփումներ հավասարը հավասարի հետ, ինչպես դա գեղեցիկ անվանում են այսօր: Այդ փորձը կարող է նաև «Գյոթե» ինստիտուտը կիրառել, քանի որ ավելի քան քսան տարի հեռավար գործելուց և միայն մի փոքրիկ ներկայացուցչություն հենց տեղում ստեղծելուց հետո հնարավոր եղավ էապես ընդլայնել նրա գործընկերային ցանցը և ապահովել մշակութային ու կրթական աշխատանքի շարունակականությունը:

— Մոտ մի հինգ տարի առաջ նաև Երևանում բացվեց «Գյոթե» կենտրոնը (գործընկերային ինստիտուտ): Ինչպե՞ս դա նպաստեց երկու երկրների մշակույթների մերձեցմանը:

— Երևանի «Գյոթե» կենտրոնը, որը պաշտոնապես բացվեց 2017 թվականի դեկտեմբերին, իր հետ բերեց մի նոր տիպի ներկայացուցչական ձև՝ լեզվի ուսուցման կենտրոն, որն արդեն

շուրջ տասը տարի համագործակցում է «Գյոթե» ինստիտուտի հետ, գերմաներենի ընթերցասարահը և ուսուցման փորձագետի գրասենյակը տեղակայված են մեկ հարկի տակ՝ մշակութային միջոցառումների սենյակներով և ծրագրային աշխատանքների գրասենյակով: Դա հնարավոր է դարձրել համատեղ արդյունավետ աշխատելու լեզվի, տեղեկատվության և մշակույթի ոլորտներում, ինչպես նաև ինտենսիվացնել ծրագրային աշխատանքը և ամրապնդել երկրում ներկայացուցչությունը:

Ինչպես ավանդական բարձր արվեստի ոլորտում, այնպես էլ ազատ մշակութային հարթակում բազմաթիվ հնարավոր գործընկերներ կան ինստիտուտում մշակութային ծրագրային աշխատանք կատարելու համար: Երիտասարդ, լավ կրթված և արևմտյան մշակույթով հետաքրքրվող նպատակային լսարանի համար թավշյա հեղափոխությունից հետո մշակութային ծրագրային աշխատանքի հնարավորությունները Երևանում ավելի լավն են, քան մինչ 2018 թվականը:

«Գյոթե» կենտրոնի սերտ գործընկերների թվին, ի թիվս այլոց, պատկանում են հետևյալ կազմակերպություններն ու ատյանները՝ Հայ արվեստի (HAY Art) մշակութային կենտրոնը, Ճարտարապետության թանգարանը, Երևանի արվեստի շաբաթը (Yerevan Artweek), ԱՐԵ (ARÉ) Արվեստի փառատոնը, Բեռլինյան արվեստի թանգարանը Գյումրիում, Արվեստի բարձրագույն դպրոցը Գյումրիում, Ֆիլմադարանը/NGO՝ Ֆիլմարվեստի զարգացման համար, *Ոսկե Ծիրան* միջազգային կինոփառատոնը, Հայաստանի կինոմատոգրաֆիստների միությունը/Կինոտոնը, Հայֆեստ թատերական փառատոնը, կանանց խնդիրներին նվիրված ֆիլմերի փառատոնը (KIN), Կոմիտաս ինստիտուտ-թանգարանը, հին ձեռագրերի ինստիտուտ Մատենադարանը, անիմացիոն ֆիլմերի և կոմիքսների արվեստի

միջազգային փառատոնը (ReAnimania), ՌՈԼԱՆ մանկական և պատանեկան ֆիլմերի փառատոնը, ՌԻՋԱՆ փաստագրական ֆիլմերի փառատոնը, ՆՓԱԿ ժամանակակից արվեստի կենտրոնը, ԹՈՒՄՈ կենտրոնը, առաջադեմ տեխնոլոգիաների ԱՐՄԱՏ միությունը, ՏԵԼ ԴԵՂ թատերախումբը, Հայաստանի *Մշակութային երկխոսություն* կազմակերպությունը, Ազգային պատկերասրահն ու Հայաստանի պատմության թանգարանը:

Արդյունավետ համագործակցություն է տեղի ունենում *ԴՎՎ Ինտերնացիոնալ-ի*, Հարավային Կովկասում «Հայնրիխ Բյոլ» հիմնադրամի, ԴԱԱԴ-ի (Գերմանական ակադեմիական փոխանակումների ծառայություն) և այլ գերմանական մշակութային միջնորդների հետ: Երևանի «Գյոթե» կենտրոնը՝ ԵՈՒՆԻԲ (EUNIC) գործընկերոջ հետ համատեղ, աշխատանքներ է տանում «Եվրոպական մշակութային տուն» հիմնելու և դրանով իսկ երկրի կրեատիվ տնտեսության խթանման համար:

Գերմանալեզու լսարանը քայլ առ քայլ վերածվում է մեկնարկային հարթակի՝ արվեստով ու մշակույթով հետաքրքրված հանրության համար: Միասնական և տարբեր ուղղվածություններ ունեցող միջոցառումների դահլիճը հնարավորություն է տալիս կազմակերպելու տարբեր ձևաչափերի միջոցառումներ, ինչպես օրինակ, ֆիլմերի նախնական ցուցադրումը (ֆիլմային ակումբի հետ համատեղ), ընթերցումներ, ցուցահանդեսներ, հեղինակավոր ընդհանուր քննարկումներ, նաև կրեատիվ աշխատանքային սեմինարներ:

Հաշվի առնելով Հարավային Կովկասի քաղաքական նշանակությունը՝ որպես բուֆերային տարածք ախոյան մեծ պետությունների միջև (Ռուսաստան, Իրան, Թուրքիա) և այժմեական զարգացումները՝ սկսած 2022 թվականի փետրվարի 24-ից, Եր-

ևանի «Գյոթե» կենտրոնը գործում է նաև որպես մի յուրօրինակ հարթակ արտագաղթած արվեստագետների համար:

— Ինչպե՞ս եք գնահատում Հայաստանի երիտասարդ մարդկանց հետաքրքրությունը գերմաներեն լեզվի ու մշակույթի հանդեպ:

— Գերմաներեն լեզվով և գերմանական մշակույթով Հայաստանի երիտասարդ մարդկանց հետաքրքրությունը վերջին տարիներին գնալով ավելի ու ավելի է աճում: Դա հետաքրքրությունն է եվրոպական մշակույթի և եվրոպական արժեքների հանդեպ ընդհանրապես, ինչպես նաև եվրոպական կրթության հանդեպ՝ հատկապես Գերմանիայում: Հետաքրքրությունը գերմաներեն լեզվի նկատմամբ ուղղակիորեն կապված է Գերմանիայում հետագա կրթության և վերապատրաստման պլանների հետ: Ընդհանուր առմամբ կարելի է ասել, որ հետաքրքրությունը գերմաներեն լեզվի և գերմանական մշակույթի հանդեպ վերջին տարիներին զգալիորեն աճել է, և գերմաներենը ֆրանսերեն լեզվի հետ միասին զբաղեցնում է երրորդ տեղը՝ անգլերենից և ռուսերենից հետո: Որպեսզի հետաքրքրությունը եվրոպական լեզուների և մշակույթի հանդեպ արթնացնենք նաև մարզերում, ցանկալի է ավելի շատ ակտիվ գործունեություն ծավալել և ամբողջ երկրով մեկ խթանել այն: Դեռևս շատ բան կենտրոնացված է կրկին մայրաքաղաքում և երկու մյուս հարաբերական խոշոր քաղաքներում՝ Գյումրիում ու Դիլիջանում:

Նոր կառույցների ձևավորման հետ մեկտեղ (ինչպես օրինակ՝ «դպրոցներ. ապագայի գործընկերներ» և «ուսումնառության կամուրջներ» նախաձեռնությունները)՝ ընդլայնվում են Գերմանիայում ուսումնառության հեռանկարները, ինչը լավ մոտիվացիա է երիտասարդ մարդկանց համար՝ դեռևս աշակերտական

տարիքից գերմաներեն սովորելու ցանկություն առաջացնելու համար: Ավելի ու ավելի շատ աշակերտներ են մասնակցում գերմաներենի ամենամյա օլիմպիադային և այլ միջոցառումներին ու նախագծերին: Դա զգացվում է նաև «Գյոթեն» կենտրոնի մշակութային միջոցառումներին ակտիվ մասնակցությունից: Փոխարենը ԴԱԱԴ-ի գրասենյակի փակման հետևանքով ԴԱԱԴ-ի մրցույթներին մասնակցությունը ցավոք սրտի զգալի ետնահանջ է ապրել:

— Ի՞նչ փորձ ունեք հայկական դպրոցների հետ գործակցության առումով: Ո՞ր տարածաշրջաններն են այդ առումով առավել ակտիվ:

— Երևանի «Գյոթեն» կենտրոնը աշակցություն է առաջարկում Հայաստանի ուսուցիչներին, դպրոցներին ու այլ կրթական օջախներին՝ գերմաներեն լեզվի դասընթացների անցկացման գործում, որի շնորհիվ հնարավորություն է ստեղծվում «Գյոթեն» ինստիտուտի հետ համագործակցությամբ մեծ ծրագիր իրականացնելու ուսուցիչների վերապատրաստման ու նոր ուսումնական ձեռնարկներով պրակտիկ դասընթացների անցկացման սեմինարների համար:

Վերը նշված կառույցների գործունեությունը նպաստում է, որ աշակերտները անմիջականորեն առերեսվեն լեզվի և մշակույթի հետ: Գերմաներենի խորացված ուսուցմամբ դպրոցներում համատեղ ու արդյունավետ աշխատում են գերմանացի և հայ դասախոսները: Նվաճված արդյունքները էլ ավելի են բարձրացնում գերմաներեն սովորելու մոտիվացիան և ավելի են ընդլայնում այն դպրոցների ցանցը, ուր ցանկանում են գերմաներեն սովորել: Ցավոք, հիմնականում՝ մայրաքաղաքում: Մարզերում ակտիվ են

«Գյոթեն–ՊԱՇ» դպրոցները՝ Գյումրիում (Շիրակ) և Ճամբարակում (Գեղարքունիք), ինչպես նաև Սարդարապատում (Արմավիր):

— Վերապատրաստման դասընթացներին մասնակցելու պատրաստակամություն ունեն գերմաներենի լեզվի ուսուցիչները:

— Դեռևս համավարակից առաջ մենք կարող էինք մեզ մոտ աշխույժ շարժ նկատել ինչպես դպրոցի ուսուցիչների, այնպես էլ դասախոսների (վերապատրաստումներ «Գյոթեն» ինստիտուտում, ԴԱԱԴ–ում): Այժմ արդեն շատ քան կրկին տեղի է ունենում ներկա փուլում ոչ միայն մեզ մոտ՝ «Գյոթեն» կենտրոնում, այլև բուհերում: Այսպես, օրինակ, ԴԱԱԴ–ի գերմանացի դասախոսների կողմից կազմակերպված վերապատրաստումների շարքը այս տարի տեղի ունեցավ մի քանի բարձրագույն ուսումնական հաստատություններում, և դրանց մասնակցում էին բավականին մեծ թվով մարդիկ: Մասնակիցների տարիքից կարելի է պարզել, որ տեղի է ունենում սերնդափոխություն: Գերմանացի գործընկերների կողմից առաջարկվող վերապատրաստումներից բացի՝ այժմ կազմակերպվում են հայկական կողմի մի շարք վերապատրաստողական կրթական նախաձեռնություններ, որոնց մասնակցում են նաև գերմաներենի ուսուցիչներն ու ուսուցչուհիները: Վերջիններս իրենց առջև նպատակ են դնում ուսուցիչների հետագա վերապատրաստումներն անցկացնել նոր սահմանված չափանիշների համաձայն:

— Ինչ գնահատական կարող եք տալ Հայաստանում գերմաներեն լեզվի ու մշակույթի գործին միջնորդության հարցում Հայաստանի կառավարության ներգրավվածությանը:

— Լեզվի ոլորտում մեր գործընկերների անձնական դիտարկումների համաձայն՝ կարելի է խոսել առնվազն դրական մո-

տեցման մասին: 2022 թվականի մայիսին կրթության նախարարությունում տեղի ունեցած հանդիպման ժամանակ, որտեղ գերմանական կողմից ներկա էին լեզվի ոլորտի՝ Վրաստանի «Գյոթե» ինստիտուտի տարածաշրջանային նոր կին-ղեկավարը, Հայաստանում «Գյոթե» ինստիտուտի դասավանդման կին-փորձագետը և Հայաստանի լեզվի ուսուցման կենտրոնի կին-ղեկավարը, կարելի էր փաստել, որ Հայաստանի ղեկավարությունը լրջորեն հետաքրքրված է համագործակցությամբ: Դա ակնհայտ էր անգամ կարևոր բաժանմունքների ղեկավարների (կրթության զարգացման և նորարարությունների վարչության, ընդհանուր միջնակարգ կրթության վարչության), ինչպես նաև փոխնախարարի ներկայությունից: Որպես կարևոր խնդիր այդ անմիջական ու անկեղծ խոսակցության մեջ այլ հարցերի հետ միասին շոշափվեց նաև համատեղ ջանքերով նոր ուսումնական ձեռնարկներ ստեղծելու հարցը:

— Կարո՞ղ եք մեկ-երկու նախագիծ հիշատակել, որոնք հաջողությամբ անցկացվել են «Գյոթե» կենտրոնի միջոցով և մեծ արձագանքի են արժանացել:

— «Գյոթե» կենտրոնի աշխատանքի հիմնական շեշտադրվող թեմաները թեմատիկ աշխատանքային գործնական հանդիպումներն են և գերմանական ու հայկական ռեֆերենտների հետ սեմինարները, հասարակական հնչեղություն ունեցող թեմաներով ընդհանուր էական քննարկումները, գրականության փոխանակման խթանումը՝ հայ-գերմանական համատեղ թարգմանական խմբերի գործնական աշխատանքների և ընթերցումների միջոցով, քաղաքային զարգացման հարցերին նվիրված միջոցառումների և ժամանակակից այնպիսի արվեստաձևերի զարգացման խթանումը, ինչպիսիք են փոշետպագրությունը,

գրաֆիտին, զարդակադասարային նկարչությունը և էլեկտրոնային երաժշտությունը: Առանձնակի մտադրություն կա նաև մայրաքաղաքից դուրս գտնվող շրջանները ներքաշելու մշակութային անցուղարձի մեջ ու տեղերում նրանց դերն ակտիվացնելու: Մինչ այժմ դա մեզ հաջողվել է թատերական աշխատախմբերի հետ և գործունեության այլ ձևերում՝ Գյումրիում, Գորիսում և Դիլիջանում: Շատ կարևոր է մեր երկարամյա համագործակցությունը «Ոսկե ծիրան» միջազգային կինոփառատոնի հետ և «Արտադրված է Գերմանիայում» գերմանական ֆիլմային ծրագրով, որը երկիր բերեց ոչ միայն այնպիսի ռեժիսորների, ինչպիսիք են Վիմ Վենդերսը, Մարգարետե Ֆոն Տրոտտան, Ֆաթիհ Ակինը և այլ կինոստեղծագործողներ, այլ նաև հնարավոր դարձրեց, որ ֆիլմարտադրության աշխատանքը խթանելու համար աշխատանքային բազմաթիվ գործնական հանդիպումներ ու սեմինարներ անցկացվեն: Մենք կուզենայինք այստեղ առանձնացնել Արևելյան գործընկերության առնվազն երկու արդիական և ընդգրկուն նախագծեր, որոնք նախաձեռնել ու ղեկավարել է Երևանի «Գյոթե» կենտրոնը:

«ԱՐՄԱՏ» երիտասարդական ճամբար Դիլիջանում 2022 թ. հունիսին

Երիտասարդական երկու ճամբարներ՝ Տավուշի մարզի գյուղական վայրում՝ տեխնիկայի, ծրագրավորման, ռոբոտատեխնիկայի և խաղային ոլորտներում, որպեսզի Հայաստանի բոլոր տարածաշրջանների երիտասարդներին ներառեն նորարարական գաղափարներով համացանցի մեջ և նրանց ամեն կերպ աջակցեն ու մոտիվացնեն՝ ապագայում նրանց տեխնոլոգիական գաղափարները զարգացնելու նպատակով: Լրատվական իրազեկությունը և տվյալների պաշտպանությունը առանցքային դեր են խաղում գլոբալ ապատեղեկատվական և ֆեյքային հաղորդակցության դեմ:

«ԿՈՆ Դ համայնքի աշխուժացումը» 2022 թ. սեպտեմբերին

Երևանի ամենահին քաղաքային թաղամասում՝ Կոնդում, որին սպառնում է ավերումն ու ջնդրիֆիկացիան, պետք է թափ հաղորդվի տեղային համայնքի (երիտասարդների ու ծերերի) մշակութային և կրեատիվ գործունեության խթանման համար: Դպրոցի ազատ տարածքում տեղի են ունենում հեռավար և անմիջական (օնլայն և օֆլայն) տարբեր միջոցառումներ, աշխատախմբերի հանդիպումներ, ներկայացվում է փողոցային արվեստ, երաժշտություն, ֆիլմ, կատարողական արվեստ, պատմություններ են ընթերցվում, խոհարարական վարպետության դասընթացներ են անցկացվում: Նպատակը՝ համայնքի ձևավորմանը աջակցություն ցուցաբերելն է և համացանցի կրեատիվ միջոցներով հին թաղամասի շրջահայաց ու զգուշավոր զարգացմանը զարկ տալը: Նախագիծը մի շատ արդյունավետ նախաընթացք է ունեցել 2019–2021 թվականներին՝ Փողոցային արվեստի փառատոնում (Street Art Festival) և «Արվեստի ճամբար Կոնդենսե» (Artcamp KONDenseé) գերմանա–ֆրանսիական նախագծում:

ԳԼՈՒԽ IV

ՀԱՅ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՊԱՏՄԱԿԱՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Երկար ճանապարհ դեպի պառլամենտական ճանաչում. Հայոց ցեղասպանությունը՝ ետնապատկերներ և փոխկապակցություններ

Թեասա Հոֆման

Այսօրվա Հայաստանի Հանրապետությունը, որը գրեթե 30.000 քառակուսի կիլոմետր տարածք ունեցող փոքր երկիր է, իր տարածականությամբ համեմատելի է գերմանական Բրանդենբուրգ Դաշնային երկրամասի հետ: Մինչդեռ 20-րդ դարի սկզբին պատմական հայկական բնակավայրերն ընդգրկում էին տասնապատիկ ավելի մեծ տարածք: Հայաստանն իր գրեթե երեք հազարամյա պատմության ընթացքում բազմիցս դարերով կորցրել է ոչ միայն սեփական պետականությունը, այլև բազմաթիվ ասպանդակումների արդյունքում, տարածաշրջանային գերիշխող թշնամական գերուժերի հետ պայքարում աստիճանաբար կորցրել է նաև իր բնակչությունն ու իր տարածքները: Անտիկ շրջանից սկսած Հայաստանի համար միմյանց դեմ կռիվ էին մղում Իրանն ու Բյուզանդիան, իսկ հետո՝ Իրանն ու Օսմանյան կայսրությունը: 17-րդ դարում Հայաստանի մեծ մասը վերջնականապես անցավ օսմանա-թուրքական իշխանության տակ, իսկ Ռուսաստանը 1827 թվականի հոկտեմբերին Իրանից վերցրեց Հայաստանի հարավ-կովկասյան մնացած մասը: Ցարական «Երևանի նահան-

գր» դարձավ կարճ կյանք ունեցած Առաջին Հանրապետության (1918–1920 թթ.) նախակարապետը:

Ինչպես բոլոր ոչ–մուսուլմանները, հայ քրիստոնյաները նույնպես օսմանյան տիրապետության ժամանակ գրեթե իրավագուրկ էին, մինչև որ 1876 թվականի վերջին առաջին օսմանյան սահմանադրությունը իրավական հավասարության նշան դրեց Օսմանյան կայսրության բոլոր քաղաքացիների միջև՝ անկախ իրենց կրոնական պատկանելիությունից: Սակայն սուլթան Աբդուլ Համիդը, որը քրիստոնյաների ոչնչացման պատճառով Եվրոպայում հայտնի էր որպես «արյունոտ սուլթան», չեղարկեց այդ սահմանադրությունը արդեն իսկ երկու տարի անց՝ 1878 թվականին: Բանն այն էր, որ այդ սահմանադրությունը, ինչպես և դրան նախորդած բոլոր բարեփոխումները, Եվրոպայի ճնշման տակ էին կայացվել, և մուսուլմանական բնակչության շրջանում առանց այդ էլ առանձնապես չէին կարևորվում: Այդ սահմանադրությունը կրկին ուժի մեջ մտավ այսպես կոչված երիտթուրքերի (ինչպես իրենց Եվրոպայում էին անվանում) ռազմական խռովության արդյունքում, ընդ որում՝ երիտթուրքերի ազգայնական դեկլարությունը, որը պաշտոնապես անվանվում էր «Միասնություն և առաջադիմություն» կոմիտե, հերքում էր այն կասկածը, որ նոր իրավահավասարության հիմքի վրա դեռևս կարելի է ստեղծել «օսմանական ազգ»: Մեհմեդ Թալեաթը (1874–1921թթ.)՝ երիտթուրքական ներքին գործերի նախարարը, իսկ 1917 թվականից՝ կառավարության ղեկավարը, արդեն իսկ 1910 թվականի օգոստոսի սկզբին այսպես է արտահայտվել *երիտթուրքերի* գաղտնի հանդիպման ժամանակ. «(...) Ինչ վերաբերում է քրիստոնյա բնակչությանը, ապա սահմանադրությունը երաշխավորում էր մահմեդականների ու գյավուրների (անհավատների) հավասարությունը: Սակայն նման իրավահավասարեցումը անհնարին է: Դրան դեմ է

Շերիաթը [Շարիա. Իսլամական իրավահամակարգ] և անցյալի պատմությունը: Դրան դեմ են խոսում հարյուր հազարավոր մահ-մեղականների զգացումները, և անգամ հենց գյավուրների զգացումները, որոնք ըմբոստանում էին օստոմանացման դեմ»:¹

Օսմանացման և օստոմանացման փոխարեն Թալեաթը և նրա գաղափարակից ընկերները ձգտում էին մասնատվող Օսմանյան կայսրությունը դարձնել հոմոէթնիկ երկիր: Դա կարող էր ամրագրվել լեզվի թուրքացման և մշակութային ու կրոնական իսլամացման միջոցով: Արդեն իսկ 1910–1911 թվականներին իրենց կուսակցական ժողովներին երիտթուրքերը քննարկում էին այն ժամանակ դեռ օսմանական տիրապետության տակ գտնվող հյուսիս–հունական մայրաքաղաք Սալոնիկում, թե ինչպես կարելի է հասնել իրենց նպատակին՝ բազմազգ պետության ժողովրդի տեղափոխման և ցրման—մասնատման միջոցով: Քանի որ խոսքը գնում էր կայսրության երկու ամենախոշոր քրիստոնյա ազգային խմբերի մասին՝ հայերի (1914 թվականին մոտ 2.5 միլիոն) և հույն ուղղափառ քրիստոնյաների՝ (2.5–2.7 միլիոն), ապա, հաշվի առնելով հարյուրամյակների ընթացքում նրանց արդեն շատ արմատավորված էթնո–կրոնական ինքնությունը, նման գաղափարը գրեթե անհնարին էր, այդ պատճառով նրանց միայն մնում էր աչքի տակ ունենալ նշված ազգային խմբերի ֆիզիկական ոչնչացումը:

Բալկանյան պատերազմները (1912–1913 թթ.) և այնտեղ հարյուր հազարավոր վիրավորված մուսուլման փախստականների վերադարձը Օսմանյան կայսրություն էլ ավելի ամրապնդեցին մուսուլման վերնախավի այն կարծիքը, «որ թուրքերը որպեսզի

¹ Մեջբերվում է 1910 թվականի հոկտեմբերի 14–ի Ավստրո–Հունգարիայի փոխհյուպատոս Զիտկովշկիի՝ Ավստրո–Հունգարիայի արտաքին գործերի նախարար Աերենտային ուղղված գաղտնի զեկույցից, Առնենթալ, 14 հոկտեմբերի, 1910 թ.: Տե՛ս հետևյալ հղումով՝ [http://www.armenocide.net/armenocide/armgende.nsf/\\$\\$AllDocs/1910-10-14-DE-00](http://www.armenocide.net/armenocide/armgende.nsf/$$AllDocs/1910-10-14-DE-00)

չոչնչանան, ստիպված են ուրիշներին ոչնչացնել»:² Բալկանյան պատերազմների ժամանակներից ի վեր հույն ուղղափառ բնակչությունը Օսմանյան կայսրությունում կրկնապատկվել էր: Արտաքսումներն ու հալածանքները գործի դնելով՝ սկսած Արևելյան Թրակիայից (1913–1914 թթ.) և շարունակելով 1914 թվականի մայիսից Էգեյան ու Մարմարե ծովերի ափամերձ տարածքներից, Իզմիրում դանիական հյուպատոսի գնահատականներով, արտաքսվել են մոտ 70–80 հազար մարդ:³ Հատկապես Թրակիայի այդ արտաքսումները Բալկանյան պատերազմների ժամանակ նախափորձ դարձան Առաջին համաշխարհային պատերազմում հայերի սպանդների համար, քանի որ պարզ դարձավ, որ վախվորած հունական բնակչության սոսկ արտաքսումը Հունաստան այդքան արդյունավետ չէր, որքան արտաքսումները դեպի ներքին Փոքր Ասիա (Անատոլիա), որտեղ մահացության թիվը հասնում էր գրեթե 50 տոկոսի: Շատ արտաքսվածներ, այնուհանդերձ, պատերազմից հետո ետ էին վերադառնում:

Օսմանական Ադրիանապոլիս (Էդիրնե) և Այդին (Իզմիր) գավառների հույն ուղղափառ բնակչությունը առաջին ու վերջին զոհն էր օսմանական տասնամյա ցեղասպանության՝ ուղղված Օսմանյան կայսրության 3 միլիոն հնաբնակ քրիստոնյաների դեմ, ինչպես նաև 1914 և 1918 թվականներին՝ օսմանների կողմից գրաված հարավ–արևմտյան Իրանի քրիստոնյաների դեմ: Ի տարբե-

² Ադիվար Հալիդե Էդիր, Հալիդե Էդիրի հուշագրությունները, Լոնդոն և Նյու Յորք, Դը Սենթուրի հրատ., 1926 թ., վերատպությունը՝ Պիսկատավեյ, Նյու Ջերսի, «Գորջիաս Պրես», 2004 թ., էջ 333:

³ Իզմիրի դանիական հյուպատոսի՝ Ալֆրեդ վան դեռ Ջեեի 1914 թվականի հուլիսի 25–ի հաղորդագրությունն ուղղված Կոստանդնուպոլսի դանիական դիվանագիտական նախարար Կառլ Էլլիս Վանդելին, Իզմիր, Նոյեմբեր, 1914–1916 թթ.: [http://www.armenocide.net/armenocide/armgende.nsf/\\$\\$AllDocs/1914-06-25-DK-001](http://www.armenocide.net/armenocide/armgende.nsf/$$AllDocs/1914-06-25-DK-001)

րություն օսմանյան հույների, որոնց հալածումն ու ցեղասպանությունը տասնամյակից ավել տևեց, հայերի ոչնչացումը ամբողջ երկրով մեկ սկսած գարնանից տևեց միայն 19 ամիս: Ժամանակային այդ զգալի տարբերությունը թերևս կարող էր այն բանով հիմնավորված լինել, որ հայերի դեպքում չկար ոչ մի պաշտպան պետություն: Գերմանացիների շահերից էր բխում Համաշխարհային պատերազմում Հունաստանի թագավորությունը չեզոք պահելը: Այդ պատճառով գերմանական դիվանագիտությունը հրահրում էր օսմանական պատերազմական իր դաշնակցին՝ ետ պահել օսմանական հույն բնակչությանը, ինչը, համենայնդեպս, չէր խանգարում հույների արտաքսումներին անգամ Համաշխարհային պատերազմի ժամանակ: 1917 թվականին Հունաստանը, այնուամենայնիվ, ներքաշվեց Անտանտի շատ խոր գնացող ներքաղաքական փոփոխությունների մեջ:

Ցեղասպանության տարրերը

Երբ է սկսվում Ցեղասպանությունը: Օսմանյան կայսրության դեպքում դա ի հայտ եկավ արդեն իսկ 1914 թվականի վաղ ամռանը, երբ քրիստոնյաների տներում ոստիկանական շուրջկալություններ են սկսվում՝ իբր լրտեսական գործունեության մեջ կասկածվողների մոտ զենք և այլ իրեղեն ապացույցներ գտնելու պատրվակով, ասես բնակիչների վրա անթիվ հարձակումները նախապատրաստություն լինեին հետագա զանգվածային ոչնչացումների համար: «Եվրոպական» կամ «Մեծ պատերազմի» սկսվելուն պես, ինչպես այն անվանում էին Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակակիցները, տեղային և կենտրոնական օսմանյան պաշտոնյաները 1914 թվականի հուլիսի վերջ – օգոստոսի սկիզբից էլ ավելի սրեցին հակաքրիստոնեական հալածանքները: Մի գաղտնի հաղորդագրության մեջ,

որն ուղղված էր գերմանական արտաքին գործերի նախարարությանը, Կոստանդնուպոլսում գործող գերմանացի լրագրող Ֆոն Թյուշկան այդ երեսպաշտ ու լկտի գործողությունների առիթով հիշեցնում է, որ երիտթուրքերը հենց իրենք կոչ արեցին քրիստոնյաներին զենք գնել ինքնապաշտպանության, ինչպես նաև բռնակարգը պաշտպանելու համար. *«Այն զենքերը, որոնք թուրքերը գտան հայերի մոտ, գլխավորապես նրանք էին, որոնք վերջիններս ստացել էին 1908 թվականին թուրքերից, որպեսզի կարողանան օգնել Կոնիստեին՝ պաշտպանվելու ծայրահեղականներից»*.⁴ Մի երկրում, որտեղ գրեթե բոլոր բնակիչները հասարակական անվտանգության բացակայության պայմաններում և ճանապարհների դարանակալող հանցագործներից պաշտպանվելու համար զենք էին ձեռք բերել, հայերի զինաթափությունը կնշանակեր ծայրաստիճան խտրականության դրսևորում: Ջինաթափումը, որպես կանոն, ուղեկցվում էր զանգվածային ահաբեկչությամբ և կոտանքներով, ինչպես հաղորդում են գավառային Մամուռեթ-ուլ-Ազիզ մայրաքաղաքից, արտասահմանյան միսիոներները (Հարփուր-Մեզրեհ, հայկական Խարբերդ): Անգամ կանայք էին ենթարկվում կոտանքների. Մարիցա Քեյեյանը Հուսեյնիկից (Հարփուրի մոտակայքում) հաղորդում է. *«Մի զինվոր նստեց հողի կնոջ մարմնին, մյուսները հարվածում էին այդ կնոջը, ստիպելով նրան խոստովանել, թե որտեղ է թաքնված իր ամուսինը»*.⁵

⁴ Ֆոն Թյուշկան՝ արտաքին գործերի նախարարության պետական քարտուղարին (Ցիմերմանին), 1 հոկտեմբերի, 1915 թ., Թիվ 3 գրություն: [http://www.armenocide.net/armenocide/armgende.nsf/\\$\\$AllDocs/1915-10-01-DE-001](http://www.armenocide.net/armenocide/armgende.nsf/$$AllDocs/1915-10-01-DE-001)

⁵ Գուստ Վոլֆգանգ (հրատարակիչ), Հայոց Ցեղասպանությունը 1915–1916 թվականներին: Փաստաթղթեր գերմանական արտաքին գործերի նախարարության քաղաքական պահոցից: Շպրինգե, 2005, էջ 502:

Էլիտիցիդ՝ վերնախավի ոչնչացում

1915 թվականի ապրիլի 24–ը հայերի համար փաստորեն համարվում է երիտթուրքերի կողմից բուն ցեղասպանության սկիզբը, որովհետև դա հավասարազոր էր հայ ազգի «գլխատմանը»: Այն Օսմանյան Թուրքիայում ապրող հայերին զրկեց քաղաքական, մշակութային, հոգևոր ու կրոնական առաջնորդների երկու սերունդներից: 1919 թվականից ապրիլի 24–ը ամեն տարի նշվում է որպես սգո և հիշատակի օր:⁶

Հարյուրավոր ականավոր հայերի ձերբակալումը Օսմանյան մայրաքաղաքում 1915 թվականի Սպիտակ կիրակի օրը շատ մեծ անակնկալ էր, թեև արդեն 1915 թվականի մարտին Կոստանդնուպոլսում ձերբակալվել էին 200 հույներ և արտաքսվել Կոստանդնուպոլսից: Հունական դեսպանատունը հիշատակում էր 1915 թվականի մարտի 2–ին մոտ տասը հազար հույն ուղղափառ քրիստոնյաների Կոստանդնուպոլսից արտաքսման մասին:⁷ Սպիտակ կիրակին (11./24.ապրիլ, 1915) մտավ հայկական պատմության մեջ որպես Կարմիր, այսինքն՝ Արյունոտ կիրակի:

Ձերբակալված հայերին Կոստանդնուպոլսի ոստիկանական բաժանմունքը բաժանեց երկու մասի. մտավորականներին պետք է վերահսկեին Չանկըր քաղաքում (Կաստամունու գավառում), իսկ քաղաքական ձերբակալվածներին՝ Այազ⁸ գյուղում

⁶ 1921 թվականին կաթողիկոս Գևորգ Սուրենյանցը 1915 թվականի ապրիլի 24–ը Սգո օր հայտարարեց՝ «հիշատակելու մեր հարյուր հազարավոր մարտիրոսացված նահատակներին, Մեծ պատերազմի ժամանակ»:

⁷ Իոն Թեոդորե, Բրաուն Քերոլ, Հույների հետապնդումը Թուրքիայում Եվրոպական պատերազմը սկսվելուց ի վեր, Նյու–Յորք, Օքսֆորդ համալսարանի հրատարակչություն, Ամերիկա–հունական ընկերության ամերիկյան մասնաճյուղ, 1918 թ., էջ 34–35: Հղումը՝ <https://archive.org/details/persecutionsofgr00greece/page/34/mode/2up/search/March>

⁸ Գևորգյան Ռայմոնդ, Հայոց ցեղասպանությունը, Ամբողջական պատմություն, Լոնդոն, Ի.Բ., Թաուրիս, 2011, էջ 253: <https://virtual-genocide->

(Անկարա գավառում): Քանի որ երկրի դեմ դավաճանության կամ դավադրության ակնհայտ ապացույցներ չկային, ամենահայտնի դեմքերին տեղափոխվեցին Հալեպով կամ Ադանայով դեպի Դիարբեքիր. դրանցից մի քանիսին ճանապարհին սպանեցին, մյուսներին Դիարբեքիրում տանջամահ արեցին:

Ձերբակալվածներից շատերը սերտ կապեր ունեին Գերմանիայի հետ. նրանք կամ Գերմանիայում ուսանել էին, ինչպես ակադմիկոս կոմպոզիտոր և քահանա Կոմիտասը (1869–1935 թթ.) կամ ավելի ուշ՝ եպիսկոպոս Գրիգորիս Պալաքյանը (արևմտահայերեն՝ Բալաքյան, 1875–1934 թթ.), կամ նրանք ամուսնացած էին գերմանական քաղաքացիություն ունեցող անձանց հետ, ինչպես բժիշկ և բանաստեղծ Ռուբեն Չիլինկիրյանը (Ռուբեն Սևակ, 1885 թ. – 19 օգոստոս, 1915 թ.): Զանգվածային ձերբակալություններից անմիջապես հետո այդ գրողների կանանց գերմանացի ծնողները, ինչպես նաև Օսմանյան կայսրությունում գերմանական ֆիրմաների ներկայացուցիչները նախաձեռնեցին իրենց հայ ազգականների ու գործընկերների ազատումը: Ընդգծված կերպով գերմանական դեսպանատունը Կոստանդնուպոլսում մերժում էր պաշտոնական աջակցության բոլոր խնդրագրերը, ինչպես օրինակ, գերմանական Օտտո Շեֆելս ֆիրմայի խնդրագիրը, որի սեփականատերը 1915 թվականի մայիսի 3–ին դիմել էր իր վստահված անձին՝ Վրթանես Մարտիկյանի (փաստաթղթերով՝ Վարթանես Մարդիգյան) վերաբերյալ աջակցության խնդրանքով, մեկ շաբաթ անց հետևեց կարծրատիպային մերժումը. «*Յավոք սրտի, Կայսերական Գերմանական դեսպանատունը ստիպված է խուսափել որևէ պարտավորվածությունից հոգուտ պարոն Մարդիգյանի:*

memorial.de/region/the-black-sea-marmara-and-aegean-littorals-eastern-thrace-and-central-anatolia/angora-ankara-engure-vilayet-province/sancak-of-ankara-angora/kaza-ayas/?searchedfor=Ayas

Ընդհանուր առմամբ, նման քայլը՝ անկախ այն բանից, որ մեր տեղեկություններով նման հարաբերություններն անարդյունավետ են, ի սկզբանե կոիտարկվի որպես անթույլատրելի միջամտություն թուրքական ներքին գործերին»։⁹

Ցնցող է գերմանահպատակ Ռուբեն Չիլինկիրյանի նամակագրությանը հետևելը. քրդական ավազակախմբի ղեկավար Հալոյի կողմից (որի հիվանդ աղջկան ընդամենը մեկ ամիս առաջ բուժել էր Չիլինկիրյանը)¹⁰ երիտասարդ բանաստեղծի ծայրաստիճան դաժան սպանությունից դեռ ամիսներ անց վերջինիս ազգականները աջակցության խնդրանքով դիմել էին գերմանական դեսպանատուն։ Ահասարսուռ խմբային սպանությունը այնպիսի բանաստեղծների, ինչպիսիք են Չիլինկիրյան–Սևակը, Դանիել Վարուժանը (արևմտահայերեն՝ Տանիել Վարուժանը, 1884 թ. – 19 օգոստոսի, 1915 թ.), իր ժամանակի ամենաականավոր հայ բանաստեղծի, ինչպես նաև երեք այլ հայ արտաքսվածների, հանձնարարված է եղել տեղական Երիտթուրքական Կոմիտեի կողմից։¹¹

⁹ Կոստանդնուպոլսում գերմանական դեսպանատան պատասխանը 10 մայիսի, 1915 թ., ուղղված Օտտո Շեֆելս ֆիրմային 1915 թ. մայիսի 3–ին, դեսպանատան մատյան։

¹⁰ Երեք այլ քուրդ հանցակիցների հետ՝ ոստիկանի և ոստիկանական զորքերի զինվորների ուղեկցությամբ, հինգ մտավորականներ պետք է տեղափոխվեին Այաշ։ Նրանք պատասխանատու էին այդ մտավորականների խմբի համար։ Հալոն իր երեք քուրդ հանցակից ընկերների հետ ձերբակալվեց։ Անկարայի ռազմական դատարանի դատավարության ընթացքում Հալոն, ի պաշտպանություն իր անձի, հայտարարեց, որ ինքը զործել է Չանքրի տեղական Իթթիհաթ–Կոմիտեի (թուրքական Միություն և առաջադիմություն կոմիտեի) հանձնարարությամբ։ Տե՛ս Պալաքյան Գրիգորիս, Հայկական Գողգոթա, Հուշեր հայկական ցեղասպանության մասին, 1915–1918 թթ., Թարգմանությունը՝ Փիթեր Բալաքյանի և Արիս Սևազի, Նյու–Յորք, «Աֆրեդ Քնոֆ» հրատ., 2009 թ., էջ 102։

¹¹ Նույն տեղում, էջ 99–102։

Հայկական ծագում ունեցող օսմանյան երկու պատգամավորներ՝ Գրիգոր Զոհրապը (Զոհրաբ, 1861–1915 թթ.), որն իրեն համարում էր ներքին գործերի նախարար Թալեաթի «անձնական ընկերը», և Վարդգես Սերենգյուլյանը (Վարթկես Սերենկույան, 1871– 1915 թթ.) նույնպես սպանվեցին 1915 թվականի օգոստոսին՝ «կառավարության հրամանով»,¹² երբ նրանց տեղափոխում էին Հալեպից՝ Ուրֆայով դեպի Դիարբեքիրի պատերազմական դատարան: Ազատական գաղափարներ ունեցող, քրեական գործերով դատապաշտպան և գրող Զոհրապը իր փարիզյան արտաքսման ժամանակ միջազգային ճանաչում ձեռք բերեց՝ Դրեյֆուսի գործով իր պաշտպանական ճառի շնորհիվ, որի համար արժանացավ *Հրեաների պաշտպանության կոմիտեի* շնորհակալագրին, ինչպես նաև ոսկե մեդալի:

«Արյունոտ կիրակիի» ժամանակ Կոստանդնուպոլսում ձերբակալվածների թվի վերաբերյալ տվյալները էապես տատանվում էին՝ ընթացքը պայմանավորող տասը հանգամանքներից կախված. ի պատասխան 1915 թվականի մայիսի 24–ի դաշնակիցների հայտագրի, կապված հայերի զանգվածային սպանությունների հետ, օսմանյան կառավարությունը հիշատակում է «միայն» 235 մեղադրված ու ձերբակալված հայերի, որոնք ներկայացվում էին որպես «խռովության շարժման մեղսակիցներ»:¹³ Մինչդեռ գերմանացի դիվանագետների ավելի վաղ հաղորդագրու-

¹² Հյուպատոս Վ. Ռյուպերի գաղտնի հաղորդագրությունը կայսրության կանցլերին, 27 հուլիսի, 1915 թ.: Աղբյուր՝ DE/PAAA/R14087 Կենտրոնական գրանցամատյան՝ 1915–A–23991, Դեսպանատան մատյան՝ A53a/1915/4563; [http://www.armenocide.net/armenocide/armgende.nsf/\\$\\$AllDocs/1915-07-27-DE-001](http://www.armenocide.net/armenocide/armgende.nsf/$$AllDocs/1915-07-27-DE-001)

¹³ Ինչպես դաշնագիրը, այնպես էլ «կայսերական կառավարության» պատասխանը հրապարակվել են Ազենս Հավասի կողմից 1915 թ. մայիսի 24–ին, իսկ գերմանական տարբերակը՝ «Wolff's Telegraphisches Büro» մամուլի գործակալության կողմից 1915 թվականի հունիսի 4–ին: Աղբյուրը՝ DE/PA–

թյունների մեջ խոսքը «ավելի քան 400»-ից¹⁴ մինչև 500 ձերբակալվածների մասին է: Յոհաննես Լեփսիուսը 1916 թվականի իր հրապարակումներից մեկում, որպես ընդհանուր թիվ, նշում է 600-ը, որոնցից ավելի ուշ միայն ութը¹⁵ ազատ արձակվեցին Թալեթի կարգադրությամբ:¹⁶ 1915 թվականի մայիսի 24-ի ձերբակալվածների թիվը, ծառայողական գաղտնի հաղորդագրության համաձայն, հասել էր 2345-ի:¹⁷ Ականավոր դեմքերի ձերբակալությունները, կոտանքներն ու սպանությունները տեղի էին ունենում ամբողջ երկրով մեկ: Արևելյան Անատոլիայի մայրաքաղաք Էրզրումում գերմանական գլխավոր հյուպատոսության ղեկավար Մաքս Էրվին ֆոն Շոյբներ-Ռիխտերը (1884–1923 թթ.), օրինակ, հաղորդում է 1915 թվականի մայիսի 4-ին Էրզրումում «մինչև 200 ձերբակալվածների» մասին:¹⁸

AA/R14086; [http://www.armenocide.net/armenocide/armgende.nsf/\\$\\$AllDocs/1915-06-07-DE-001](http://www.armenocide.net/armenocide/armgende.nsf/$$AllDocs/1915-06-07-DE-001):

¹⁴ Կոստանդնուպոլսում դեսպանի՝ Վանգենհայմի հաղորդագրությունը Կայսրության կանցլեր Բեթման Հոլվեգին, 5 հունիսի, 1915 թ.: Աղբյուրը՝ DE/PA-AA/R14086; Կենտրոնական գրանցամատյան՝ 1915-A-18530: [http://www.armenocide.net/armenocide/armgende.nsf/\\$\\$AllDocs/1915-06-05-DE-001](http://www.armenocide.net/armenocide/armgende.nsf/$$AllDocs/1915-06-05-DE-001)

¹⁵ Լեփսիուս Յոհաննես, Զեկույց Թուրքիայում հայ ժողովրդի վիճակի մասին, Պոտսդամ, 1916, «Թեմպել» հրատ., 1919, 1930: Եվ ավելի ուշ՝ Հայդելբերգ, 1980, էջ 191:

¹⁶ Թալեթին ակնհայտորեն հաջողվեց խաբել Կոստանդնուպոլսի հայ համայնքին: Տե՛ս Բալաքյան, Գողգոթա, էջ 74, Բալաքյանի տվյալներով 13 արտաքավածներ ազատ արձակվեցին Չանքըրում, էջ 90:

¹⁷ Ուրաս Էսադ, Հայերը պատմության մեջ, ինչպես հայկական հեքիաթներում: Ստամբուլ: «Ենի Մատբա» հրատ., 1950թ., էջ 612: Մեջբերումը ըստ՝ Աքչամ Թաներ, Հայերը և ցեղասպանությունը, Ստամբուլյան դատական պրոցեսը և թուրքական ազգային շարժումը, Համբուրգ: Համբուրգյան հրատ., 1996 թ., էջ 52:

¹⁸ Շոյբներ-Ռիխտերի հեռագրային զեկույցը Էրզրումից՝ Կոստանդնուպոլսի դեսպանատանը, 4 մայիսի, 1915 թ.: Աղբյուրը՝ DE/PA-AA/BoKon/168, Դեսպանության մատյան՝ A53a/1915/2731; [http://www.armenocide.net/armenocide/armgende.nsf/\\$\\$AllDocs/1915-05-04-DE-011](http://www.armenocide.net/armenocide/armgende.nsf/$$AllDocs/1915-05-04-DE-011):

Զինապարտների և քաղաքացիական բնակիչների հարկադիր աշխատանք

Մինչ օսմանյան սահմանադրության վերականգնումը 1908 թվականին ոչ-մուսուլմանները դուրս էին մնում զինվորական ծառայությունից և դրա համար վճարում էին տարեկան գլխահարկ: Նրանց՝ ռազմական ծառայության ենթարկելը 1909 թվականի հոկտեմբերից ցույց է տալիս, որ անգամ (հարաբերական) խաղաղության ժամանակներում նրանց կարգավիճակը մնում էր շատ անմխիթար, քանի որ շատ «անհավատներ» ստիպված էին ծառայելու տիրահոջակ չզինված «աշխատանքային գումարտակներում»՝ որպես օժանդակ աշխատանք կատարող զինվորական ուժ, եթե նրանք ի վիճակի չէին վճարելու ծառայությունից ազատվելու գումարը:¹⁹

Արդեն 1914 թվականի հուլիսին և օգոստոսին Օսմանյան քրիստոնյաներին, հատկապես հույներին 18–45 տարիքային խմբերում արագացված կերպով հավաքագրեցին աշխատանքային գումարտակներում, որոնց հույները տվել էին տիրահոջակ «ստրուկների աշխատանքային միավորումներ» անվանումը: Պատերազմը իր հետ բերեց համընդհանուր զինապարտություն. մոտ 300 000 հայեր ու 200 000 – 250 000 հույներ հավաքագրվեցին այդ ժամանակ: Մուշ քաղաքում աշխատող շվեդ բուժքույր Ալմա Յոհանսոնը (1880—1974 թթ.) այսպես է հիշում. *«Հենց որ պատերազմը սկսվեց, բոլոր հայերին, որոնք զինվորական տարիքի էին, անխտիր կերպով զինակոչեցին, անկախ այն բանից՝ հիվանդ են, կույր թե հաշմանդամ, բացառությամբ նրանց, ովքեր կարող էին սեփական*

¹⁹ Յյուրիսեր Յան Էրիկ, Օսմանյան աշխատանքային գումարտակները Առաջին համաշխարհային պատերազմում, համացանցային հոդված, 2008 թ., էջ 3, թարգմանված է անգլերենից: Հղումը՝ https://www.academia.edu/847454/Ottoman_Labour_Battalions_in_World_War_I

փրկագինը վճարել: Ընդ որում՝ թուրքերի մեծ մասը՝ ամրակազմ մարդիկ, կարողացան ազատվել զինապարտությունից ընկերության կամ կաշառքի միջոցով»:²⁰

Օսմանյան Թուրքիայի՝ պատերազմական գործողությունների մեջ մտնելուն պես (1914 թ. նոյեմբեր) հայ զինապարտները սկզբից ծառայում էին զինված միավորումներում: Շրջադարձային փուլը եկավ Սարիղամիշում երրորդ օսմանյան բանակի ադետալի պարտությունից հետո՝ հայկական հարթավայրում 1914–1915 թվականների ձմռան կեսերին: Այդ բանակի 90000 վատ զինված, թերսնված ու վատ պատրաստված զինվորներից ողջ մնացին միայն 27000–ը, որոնցից 12000–ին ռուսական բանակը գերի վերցրեց: 1915 թվականի փետրվարի 25–ին պատերազմական նախարար Իսմայիլ Էնվերը հատուկ գրությամբ իր շնորհակալությունն արտահայտեց Կոստանդնուպոլսի պատրիարքին՝ օսմանյան զինված ուժերի կազմում հայ զինվորների ինքնազոհության ու արիության համար, սակայն այդ նույն օրը կարգադրեց զինաթափել հայերին և հավաքագրել աշխատանքային գումարտակներում:²¹

Ըստ նիդերլանդական թուրքագետ Էրիկ Յան Յյուրխենի՝ աշխատանքային գումարտակների թիվը պատերազմի ընթացքում տատանողական էր, «*բայց բոլոր ժամանակներում թվում է, որ սկ-*

²⁰ Արևելքում քրիստոնեական բարեգործության գերմանական օգնության ասոցիացիայի տնօրեն Ֆրիդրիխ Շուշարդտը արտաքին գործերի նախարարության պատվիրակության խորհրդական Ռոզենբերգին. 1915 թվականի նոյեմբերի 22–ի մասնավոր գրություն: Աղբյուրը՝ DE/PA-AA/R14089 Կենտրոնական գրանցամատյան՝ 1915–A–33915; [http://www.armenocide.net/armenocide/armgende.nsf/\\$\\$AllDocs/1915-11-22-DE-001](http://www.armenocide.net/armenocide/armgende.nsf/$$AllDocs/1915-11-22-DE-001)

²¹ Աբչամ Թաներ, Հայերը, էջ 63: Աբչամը հիշատակում է նաև մի ավելի վաղ հեռագիր՝ 1914 թ.–ի սեպտեմբերի 14–ին, որում երրորդ օսմանյան բանակի հրամանատարը բնութագրում է հայ զինվորներին որպես կասկածելի և պահանջում նրանց զինաթափել: Տես նշված գիրքը, էջ 52:

տիվ միավորումների թիվը եղել է 70–ից մինչև 120: Աշխատանքային գումարտակները կատարում էին մի շարք ամենատարբեր ծառայություններ, որոնցից ամենակարևորները, թերևս, Ճանապարհների վերանորոգումն էր և բեռնափոխադրումները»:²² Այդ թվին էին պատկանում նաև վերանորոգման ու շինարարական աշխատանքները, որոնք կատարում էին հայերն ու հույները, ռազմավարական առավել կարևոր վայրերում, ինչպես օրինակ՝ դեպի Բաղդադ ձգվող երկաթգծի աշխատանքները Գալիփոլիոդեր թերակղզու վրա, ուր հայ քաղաքացիական արտաքսվածները, այդ թվում նաև կանայք ու 12 տարեկանից բարձր պատանիները, այնպիսի տեղերով էին կրում բեռները, որտեղ դեռ ոչ մի երկաթգիծ չկար, կամ որտեղ պարտադիր պետք է կառուցվեր թունել:

Գրիգորիս Պալաքյանը իր հուշերում նշում է, որ գերմանական «Հոլցման» ֆիրմայի միջին տարիքի մեկ աշխատողը, որին հանձնարարված էր Բաղդադ երկաթգծի Ամանուս հատվածի շինարարությունը, ստանում էր օրական հացի 500 գրամ չափաբաժին 12 ժամվա համար: Ֆիրմայի ղեկավարության բողոքին ի պատասխան՝ ներքին գործերի նախարար Թալեաթը պահանջեց արտաքսել մնացած 11 500 հայ աշխատողներին Բաղդադի երկաթգծի աշխատանքներից, որոնցից 2600–ը, բացի 200 հայերի, սպանվեցին դեռևս Կիլիկիայում:²³

Ցեղասպանությանն ու ազգն արմատախիլ անելուն ակնհայտորեն ավելի մեծ առաջնայնություն էր տրվում, քան պատերազմով պայմանավորված բոլոր անհրաժեշտ գործողությունները, ինչպես օրինակ, դեպի Բաղդադ երկաթգծի կառուցումը: Թեև օսմանյան զինված ուժերը շատ մեծ կարիք ունեին բանակին աջակցող այդ

²² Ցյուրիսեր., նույն տեղում:

²³ Պալաքյան., Գողգոթա, էջ 268:

աշխատանքային գումարտակների, այդուհանդերձ, այդ գումարտակների կազմում աշխատող զինվորները ավելի վատ պայմաններում էին գտնվում, քան ստրուկները. նրանք թերսնված էին, չափից ավելի էին աշխատում, ամբողջապես հյուծված էին, շատ վատ պայմաններում էին ապրում, չունեին կոշիկ ու հագուստ, նրանց շատ դաժանաբար էին վերաբերվում, անգամ կտտանքների էին ենթարկում, շատերը մահացան համաճարակից՝ հիմնականում տիֆից և խոլերայից, շատերն էլ ինքնասպանություն գործեցին: Օժանդակ աշխատանքային բազմաթիվ զինվորներ իրենց բաժին աշխատանքը կատարելուց հետո զանգվածաբար սպանվում էին: Շվեյցարիայի գերմանացի Յակոբ Քյունցլերը, որը Ուրֆայում գերմանական միսիոներական հիվանդանոցի ղեկավարն էր, իր՝ 1921 թվականին լույս տեսած հուշապատումներում գրում է այդ աշխատանքային գումարտակների Ամանոս հատվածում աշխատող զինվորների վախճանի մասին. «Ի վերջո Բաղդադի երկաթգծի ինժեներները ստիպված էին 1916 թվականի հունիսին մի քանի հազար աշխատողների ազատ արձակելու: Դրանք տղամարդիկ էին, որոնք առաջին հերթին ուղևորվում են Ուրֆա: Նրանք չէին կարող ավելի հեռուն տեղափոխվել: Վերանշեհիրում նրանց սպասում էր այդ նույն ճակատագիրը, որն ավելի վաղ բաժին էր ընկել իրենց եղբայրներին. նրանց բոլորի հարցերը դանակով լուծվեցին»:²⁴

Տեղահանումներն ու ջարդերը

Ռաֆայել Լեմկինը (1900–1959 թթ.)՝ Միավորված ազգերի կազմակերպության Ֆեդասպանության կոնվենցիան կազմած

²⁴ Քյունցլեր Յակոբ, Արյան և արցունքների երկրում: Ծանր ապրումներ Միջագետքում Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ, Պոտսդամ, «Թեմպել» հրատ., 1921 թ., էջ 76:

լեհ–հրեա հեղինակը, Օսմանյան Թուրքիայում հայերի նկատմամբ Ցեղասպանությունը որակում է որպես «կրոնական ազգասպանություն»:²⁵ Ամենայն հավանականությամբ հեղինակը նկատի ուներ պետական հանցագործության մասնակից այն ջիհադիստական տարրերին, որոնք ձգտում էին մոնոթեոնիկ (միաստարր էթնոսի) ազգայնական պետություն ստեղծել: Ջիհադի ավանդական հատկանիշների թվին է պատկանում հակառակորդի հասուն տարիքի տղամարդկանց սպանությունն ու կանանց ու երեխաների գերեվարումը: Սեռերի այդ հստակ բաժանման գործընթացը կրկին ու կրկին տեղ է գտնում քրիստոնյա տղամարդկանց ու կանանց դեմ Ցեղասպանություն իրականացնելու մեջ: Այն բանից հետո, երբ ազգային խտրականության քաղաքականության և հարկադիր աշխատանքի, ինչպես նաև զինված չափա-հասների ու ղեկավար շերտի մեկուսացման միջոցով հայ տղամարդիկ շարքից հանվեցին, գրեթե ամբողջ երկրով մեկ հետևեց մնացած հայ բնակչության տեղահանումը: Բացառություն կազմեցին Կոստանդնուպոլիս, Ջմյուռնիա (Իզմիր) և Ադրիանապոլիս (Էդիրնե) քաղաքները, ինչպես նաև Վան, Բիթլիս և մասամբ նաև Էրզրում գավառները, ուր ներխուժեցին ռուսական զինված ուժերը: Այս պատերազմական շրջաններում, ժամանակային խնդիրներից ելնելով, ջարդերը փոխարինվեցին հարկադիր վերաբնակեցումներով:

Այդ «վերաբնակեցումը» փաստորեն վերածվեց մահվան քայլերթի: Դա վերաբերում էր թե՛ նրանց տեղափոխմանը, թե՛ նաև այն հանգամանքին, որ Միջագետքի կիսաանապատային վայրերը Հյուսիսային Սիրիայում և Հյուսիսային Իրաքում բոլորովին

²⁵ Լեմկին Ռաֆայել, Ամբողջապես ոչ պաշտոնական. Ռաֆայել Լեմկինի ինքնակենսագրությունը, Լոնդոն, Յելի համալսարանի հրատ., 2013 թ., էջ 141:

պիտանի չէին մուսուլման փախստականների ապրելու համար, ինչպես ընդամենը մի քանի ամիս առաջ որակել էր ներքին գործերի նախարար Թալեաթը պառլամենտական քննարկումների ժամանակ:²⁶

Այդ արտաքսումները, որոնք կապված էին հարյուրավոր կիլոմետրեր ոտքով անցնելու հետ, միտումնավոր այնպես էին անցկացվում, որ տեղահանվածների հնարավորինս մեծ մասը մահանար ուժասպառությունից, սովից կամ համաճարակից: Մարդասպան հրոսակախմբերը դարանակալում էին տեղահանվածներին առաջին իսկ հարմար տեղում, որտեղ հնարավոր էր կոտորել հասուն տարիքի տղամարդկանց ու արական սեռի պատանիներին: Այդ մարդասպան ավազակախմբերը կազմվում էին բանտերից ազատ արձակված ծանր հանցագործություն կատարած դատապարտյալներից, ինչպես նաև տեղական բնակչությունից, որը ազատվում էր թալանի, բռնաբարության համար պատիժը կրելուց, բայց որը երաշխավորում էր արտաքսվածների հալածել-քշելը:

Ժամանակակիցները դեռևս 1915 թվականին կանխատեսում էին, որ արտաքսվածների կեսից ավելին ձանապարհին կմահանա:²⁷ Ավելի վաղ Կոստանդնուպոլսում գերմանական դեսպանատունը, հիմնվելով շվեյցարացի բուժքույր Բեատրիս Ռոհենեի (1876–1947 թթ.) ճշգրիտ հաշվարկների վրա, 1916 թվականի հոկտեմբերի սկզբին եկավ այն եզրակացության, որ Օսմանյան Թուրքիայում ապրող 2,5 միլիոն հայերից 2 միլիոնը արտաքս-

²⁶ Ֆուատ Դյունդար, Մի ամբողջ ժողովուրդ անապատ քշելով: Հայկական հարցի միութենականների «հստակ լուծումը». Սունի Ռոնալդ Գրիգոր; Գյոչեք Ֆաթմա Մյուգե; Նախմարկ Նորման Մ., Յեղասպանության հարցը. հայերն ու թուրքերը Օսմանյան կայսրության վերջում. Օքսֆորդ, Նյու Յորք: Oxford University Press, 2011, էջ 280:

²⁷ Օրինակ՝ Գուստը., Յեղասպանություն, էջ 500:

վել էին, և այդ արտաքսվածներից արդեն 1,5 միլիոնը մինչև 1916 թվականի հոկտեմբերը մահացել էին:²⁸ Այդ հաշվարկը միանգամայն համընկնում էր այն հաշվարկների հետ, որը տրամադրել էր Ռայմոնդ Գևորգյանը, ով արտաքսման վերջին երկու փուլերը ուսումնասիրող կարևորագույն մասնագետն է: Համաձայն վերջինիս տվյալների՝ մոտ 870 000 ողջ մնացած հայեր հասել էին Միջագետք, դրանց մեծ մասը օթևան էր գտել Բաղդադի երկաթգծի մոտակայքում գտնվող համակենտրոնացման ճամբարներում, մինչդեռ դրանց փոքր մասը կարողացավ բնակություն հաստատել Հալեպ, Դայր-ազ-Զավր, Ռաս-ուլ-Այն կամ Մոսուլ քաղաքներում: Այդ 870 000 արտաքսվածներից բացի, որոնք 1915 թվականին հասան Միջագետք, ևս 630 000-ը եկան արտաքսման երկրորդ և երրորդ փուլերում 1916 թվականի աշնանը:²⁹

Արտաքին գործերի Քաղաքական պահոցը բազմաթիվ զեկույցներ է պահպանել Միջագետքում արտաքսվածների թշվառ վիճակի մասին, որ հարյուր հազարավոր մարդիկ մահանում էին սովից ու հիվանդություններից (տիֆ, ժանտախտ): 1916 թվականի հունվար-հունիս ժամանակահատվածի վերաբերյալ բուժքույր Բ. Ռոհնեռը (Հալեպ) մեջբերում է անում քահանա Վարթան (Վարդան) Երամայեի խոսքերը «Համանից». *«Արտաքսման ճանապարհին ետ մնացած մեծ խմբերը քշվեցին հարավ: Դա կարծես հոսող մարդկային գետ լիներ: Ողբը աննկարագրելի էր: Պատահում էր, որ*

²⁸ Կոստանդնուպոլսում դեսպանատան հավատարմատարի զեկույցը. Ռադովից՝ Կայսերական կանցլեր Բեթման Հոլվեգին, 4 հոկտեմբերի, 1915: Աղբյուրը՝ DE/PA-AA/R14093, Կենտրոնական գրանցամատյան՝ 1916-A-27493, [http://www.armenocide.net/armenocide/armgende.nsf/\\$AllDocs/1916-10-04-DE-002](http://www.armenocide.net/armenocide/armgende.nsf/$AllDocs/1916-10-04-DE-002)

²⁹ Գևորգյան Ռայմոնդ, Տեղահանության և համակենտրոնացման ճամբարների կացիները Սիրիա-Միջագետքում (1915-1916 թթ.), / «Հայոց ժամանակակից պատմության ակնարկ», Հատուկ թողարկում, Հ. II, 1998, Տ. 606; Գևորգյան, Ցեղասպանություն, էջ 693-698:

սովամահ լինողները դիակների միսն էին այրում... նրանք գարու հատիկներ էին փնտրում–հանում ձիու արտաթորանքի միջից...»:³⁰

Յեղասպանության վերջին փուլը՝ 1916 թվականի գարնան ու աշնան միջև ընկած ժամանակահատվածը, Միջագետքի համալեննորոնացման ձամբարները կոտորածների և ողջակիզումների միջոցով վերացնելն էր: Ռոբերտ Յեքեջյանի (Հալեպ) փորձագիտական գնահատականներով շուրջ 80 000 հայեր ողջակիզվել կամ շնչահեղձ են արվել «հայերի գերեզմաններ» կոչվող անձավներում՝ Շադդադեի գյուղի մոտակայքում: Այդ ամենը վերապրած Յուդաբեր (Յուդապեր) Թիրագյանը (Դիրագույան) Զեյթունից հաղորդում էր. «Մեզ բերեցին Շետրադեի (Շադդադեի) մի անձավ: Դրա խոռոչը այնքան մեծ էր, ինչպես սեղանը, բայց դրա ներքևում մեծ չափերի երկու–երեք սենյակներ էին: Կանանց բռնում էին, ինչպես պարկերը, այրում էին նրանց շորերի փեշերը և ցած նետում: Բոլորը ճշում էին: Երբ հերթը հասավ ինձ, ես ինքս արագ ցած նետվեցի: Արնահոսեցի, դողալով սողացի մի անկյուն, կորցրի գիտակցությունս... Հաջորդ օրը անձավ եկան տղամարդիկ, դրանք արդեն թուրքեր չէին, այլ արաբներ: Նրանք փնտրում էին ոսկեդրամներ: Ես տեսա, թե ինչպես են կնոջ փորը կտրում, որը խոտտովանել էր, որ իր ոսկեդրամը կույ է տվել: Ինձ մի անկյունից մյուս անկյունն էին քարշ տալիս ու մռնչում. «հանվիր, հանվիր:» Երբ ես կրկին ու կրկին համոզում էի, որ ընդհանրապես ոչինչ չունեմ, անգամ որևէ ուտելու կամ խմելու բան, նրանցից մեկը խղձահարվեց: (...) Ես այդ անձավից միակ մարդն էի, որ ողջ մնացի»:³¹

³⁰ Հալեպում Գերմանական հյուպատոսի զեկույցը, Ռյոսլեր՝ Կայսերական կանցլեր Բեթման Հոլվեգին. 17 հունիսի, 1916 թ.: Աղբյուրը՝ DE/PA-AA/R14092, Կենտրոնական գրանցամատյան՝ 1916-A-17939, [http://www.armenocide.net/armenocide/armgende.nsf/\\$\\$AllDocs/1916-06-17-DE-001](http://www.armenocide.net/armenocide/armgende.nsf/$$AllDocs/1916-06-17-DE-001)

³¹ Շմիդթ–Հոլեր Քրիստիան, «Ով ողջ մնաց, նրան մերկ թողեցին», «Դի Յայթ», Թիվ 13, 23 մարտի, 2005 թ., էջ 15:

Ոչնչացման վերջին փուլին հետևեց մնացած հայերի բռնի իսլամացումը, թերևս դրա իրականացումը միասնական և միանշանակ չէր: Գրիգորիս Պալաքյանն իր հուշերում նշում է 1915 թվականի երիտթուրքական գլխավոր համաժողովի մի որոշում, ըստ որի՝ հայ ժողովուրդը գաղտնի կերպով «դատապարտվում էր մահվան», և նրանց իսլամացման յուրաքանչյուր փորձ բացառված էր, քանի որ 1895–1896 թվականների հայերի կոտորածների ժամանակ իրադարձությունները ցույց տվեցին, որ *«հայերը ի վիճակի չէին իրենց կրոնից իրապես հրաժարվելու»*:³²

1917 թվականի փետրվարին Հալեպում և այլ վայրերում գերմանական որբանոցների հարկադիր լուծարումից հետո տղաները, որոնք դեռ 12 տարեկանից ցածր էին, իսլամացվում էին, իսկ ավելի մեծերը՝ «արտաքսվում», այսինքն՝ սպանվում: 14 տարեկանից մեծ աղջիկներին երիտթուրքական իշխանությունները ստիպում էին մուսուլմանների հետ «ամուսնանալ», իսկ դրանցից ավելի փոքր տարիքի աղջիկները պարտավոր էին նույնպես հավատափոխ լինելու և ընդունելու իսլամը: Յոհաննես Լեփսիուսի գնահատականով՝ 1915 թվականին իսլամացած հայերի թիվը կազմում էր 250–300 000, այդ թվում՝ 200 000 առևանգված և վաճառված կանայք, աղջիկներ ու երեխաներ:³³ Արտաքսման ժամանակ և արտաքսումից հետո շատ աղջիկների և կանանց ստիպում էին զբաղվել մարմնավաճառությամբ: Մալաթիայում գործող միսիոներ Էռնստ Քրիստոֆելը զարմանալի անկեղծ բառեր գտավ իր կեղծ բարեպաշտ ժամանակի համար և համընդհանուր

³² Պալաքյան., Գողգոթա, էջ 78:

³³ Լեփսիուս, Գերմանիա, էջ LXV:

բարոյական անկումն ու անօրինությունը համարեց համատարած թշվառության հետևանք:³⁴

Գերմանիան և երիտթուրքերի գործած ցեղասպանությունը

Ինչ էր հայտնի քաղաքական որոշումներ կայացնող գերմանացի այրերին Գերմանիայի պատերազմական դաշնակից օսմանյան պետության կողմից իրականացվող մի ամբողջ քրիստոնյա ժողովրդի ոչնչացման մասին: Եվ առաջին հերթին՝ ինչ հետևություններ արեցին նրանք այդ իմացությունից:

Բացառությամբ Վան և Բիթլիս գավառների, ինչպես վկայում է Գերմանիայի արտաքին գործերի նախարարությունը, քաղաքական պահոցի բոլոր հաղորդագրություններն ու զեկույցները փաստագրում են երիտթուրքերի իրագործած Ցեղասպանությունը գրեթե բոլոր փուլերում և ձևերում՝ ներառյալ թուրքական պետության պատասխանատվության և նպատակադրված ցեղասպանության հարցը: Արդեն իսկ 1915 թվականի մայիսին նախարար Թալեաթը՝ Գերմանիայի գլխավոր հյուպատոս դոկտոր Յոհան Հայնրիխ Մորդմանի (1852–1932 թթ.) հետ զրույցում հիշատակում է, որ իր կառավարության գործելակերպը հայերի հանդեպ հետապնդում էր վերջիններիս նպատակադրված ոչնչացումը:³⁵

³⁴ Քրիստոֆել Էռնստ, Մութ խորքերից. մի գերմանացի միսիոների ապրումները Թուրքա-բուրդաստանում պատերազմի տարիներին (1916–1918 թթ.): Բեռլին–Ֆրիդենաու, Քրիստոնեական առաքելություն Արևելքում, 1921 թ., էջ 29:

³⁵ Կոստանդնուպոլսում գերմանական դեսպանատան գլխավոր հյուպատոս Մորդմանի զրառումները: Աղբյուր՝ DE/PA-AA/BoKon/169, Դեսպանության մատյան՝ A53a/1915/4018; [http://www.armenocide.net/armenocide/armgende.nsf/\\$\\$AllDocs/1915-06-30-DE-001](http://www.armenocide.net/armenocide/armgende.nsf/$$AllDocs/1915-06-30-DE-001); Թալեաթի և Մորդմանի միջև նույն զրույցի մասին տե՛ս նաև դեսպան Վանգենհայմի զեկույցը կանցլեր Բեթման-Հոլվեգին 1915 թվականի հունիսի 17-ին, PA/AA, I A

1915 թվականի հուլիսի 7–ին դեսպան Ֆոն Վանզենհայմը գերմանական կայսերական կանցլերին հաղորդեց, թե ինչ ձևով էր տեղի ունենում այդ «վերաբնակեցումը» ռազմաձակատից բավականին հեռու, և որ այդ ամենը խոսում է այն մասին, որ օսմանյան «Կառավարությունը, փաստորեն հայկական ռասան թուրքական կայսրությունում վերացնելու նպատակ է հետապնդել»:³⁶

Չնայած գերազանց տեղեկացված լինելով երիտթուրքական կառավարության՝ ցեղասպանություն իրականացնելու մտադրությունների մասին, Գերմանիայի քաղաքական որոշումներ կայացնողները լուռ կեցվածք ընդունեցին: Թուրքիայի հետ ռազմական դաշինքը պահպանելը շատ ավելի մեծ առաջնայություն ուներ նրանց համար, քան սովորական մարդկային իրավունքներն ու մարդասիրական մղումները: Իր ձառերից մեկում 1916 թվականի սեպտեմբերի 29–ին արտաքին գործերի պետքարտուղար Արտուր Յիմերմանը մեղադրում է Անտանտին և անգամ հենց հայերին՝ իրենց իսկ ոչնչացման հարցում: Այդ վերաբերմունքի համար հիմք էր եղել բրիտանական լրատվական այն մեկնաբանությունը, որ հայերը հանդես էին գալիս որպես Անտանտի դաշնակից, և դա նոր կասկած էր առաջացրել գերմանացիների մոտ հայերի նկատմամբ՝ որպես ըմբոստների ու դավաճանների:³⁷ Գեր-

Turkey 183, Armenia vol. 37, microfiche no. 7122, [http://www.armenocide.net/armenocide/armgende.nsf/\\$\\$AllDocs/1915-06-17-DE-003](http://www.armenocide.net/armenocide/armgende.nsf/$$AllDocs/1915-06-17-DE-003).

³⁶ Կոստանդնուպոլսում դեսպան Վանզենհայմի հաղորդագրությունը՝ Կայսրության կանցլեր Բեթման Հոլվեգին, 7 հուլիսի, 1915 թ.: Աղբյուրը՝ DE/PA-AA/R14086, Կենտրոնական գրանցամատյան՝ 1915-A-21257; [http://www.armenocide.net/armenocide/armgende.nsf/\\$\\$AllDocs/1915-07-07-DE-001](http://www.armenocide.net/armenocide/armgende.nsf/$$AllDocs/1915-07-07-DE-001).

³⁷ Արտաքին գերատեսչության պետքարտուղար Յիմերմանի գրառումները գերմանական պառլամենտի համար: Աղբյուր՝ Quelle: DE/PA-AA/R14096, Կենտրոնական գրանցամատյան՝ 1917-A-15098, [http://www.armenocide.net/armenocide/armgende.nsf/\\$\\$AllDocs/1917-05-09-DE-001](http://www.armenocide.net/armenocide/armgende.nsf/$$AllDocs/1917-05-09-DE-001):

մանիայի ակնհայտ կրավորական դիրքը սնում էր ոչ միայն նրա պատերազմական հակառակորդներին, այլև պրոպագանդայի համար օգտագործվող այդ կասկածի պատճառով դարձնում էր նրան հայերի ոչնչացման մեղսակից և անգամ նախաձեռնող: Օսմանյան կայսրության քրիստոնյաների միջև, ինչպես նաև օսմանյան մուսուլմանների միջև այդ կասկածը լայն տարածված էր և Գերմանիայի դաշնակից երիտթուրքերը օգտագործում էին այդ կանխակալ մեղադրանքը Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ՝ իրենց գործողությունները արդարացնելու համար: Այսպես՝ Գրիգորիս Պալաքյանը համոզված էր, որ տարիների ընթացքում Օսմանյան կայսրության երկու խոշորագույն քրիստոնյա ազգերի՝ հայերի և հույների համակարգված ոչնչացումը հստակ պլանավորված էր երիտթուրքերի կողմից՝ «Հոհեմցուլերների ռազմական և իմպերիալիստական կառավարության լուռ համաձայնությամբ և անուղղակի քաջալերումով»:³⁸

Արտակարգ հարցերով գերմանացի դեսպան Փաուլ կոմս Վոլֆ-Մերթերնիխը այդ պատճառով 1915 թվականին առաջարկեց հրապարակայնորեն ետ պահել Գերմանիային՝ հայերի հանդեպ երիտթուրքերի վարած քաղաքականությունից. «Նաև գերմանական մամուլը (...) պետք է իր վրդովմունքն արտահայտի հայերի հետապնդման վերաբերյալ և նաև վերջ տա թուրքերին գովաբանելուն: Հայերին իրապես օգնելու համար, — ասում է գերմանացի դեսպանը, — մենք պետք է թուրքական կառավարությանը ասենք, որ նրանք հնարավոր հետևանքների հետ կապված: Եթե մենք ռազմական պատճառներով չհամարձակվենք գործել այդ վստահ քայլը, ապա մեզ ուրիշ ոչինչ չի մնա, քան հեռվից ապարդյուն հակառակումներով (ինչը ավելի շատ զայրացնում է, քան օգուտ տալիս) պար-

³⁸ Պալաքյան, Գողգոթա, էջ 48:

զապես դիտենք, թե ինչպես է մեր դաշնակից-ընկերը շարունակում կոտորածը».³⁹ Բեթման Հոլվեգը, ով փաստացի նաև Գերմանիայի արտաքին գործերի նախարարն էր, կտրականապես մերժեց այդ առաջարկը և 1915 թվականի դեկտեմբերի 17-ին լուսանցքի վրա անսիրտ գրառում արեց, որը հետո շատ հաճախ էր մեջբերվում. «Դաշնակից ընկերոջը ընթացող պատերազմի պայմաններում հրապարակայնորեն պախարակելը կլիներ մի քայլ, որը պատմությունը երբեք չի տեսել: Մեր միակ նպատակն է մինչև պատերազմի վերջը թուրքերին մեր կողմում պահել՝ անկախ այն բանից կկործանվեն հայերը դրանից, թե ոչ».⁴⁰

Գերմանիայի քաղաքական պատասխանատվության չափի հարցը, ինչպես նաև Օսմանյան Թուրքիայում տեղի ունեցած ցեղասպանության ժամանակ առանձին գերմանացիների խաղացած այդ դերը շարունակում է վիճաբարույց մնալ և դեռ ամբողջովին չպարզված. անգամ հարյուրամյա ժամանակային այս հեռավորությունը դեռ հնարավորություն չի տալիս ավելի ամբողջականորեն պարզելու այդ հարցը: Բաց են մնում նաև այն հարցերը, որոնք կապված են հայերի նկատմամբ գործած Ցեղասպանության տնտեսական հետևանքների հետ. որո՞նք էին Գերմանիայի ձեռքբերումներն ու կորուստները: Արտաքսումներն ու առաջին հերթին երիտթուրքական բռնատիրության կողմից հայկական սեփականությունների առգրավումները, ինչպես նաև 1915 թվականի սեպտեմբերի 26-ի՝ արտաքսվածների «լքված սեփականությունների» մասին թուրքական օրենքի կիրառումը հսկայական կորուստներ կրելու ռիսկային իրավիճակի մեջ դրեցին գերմանացի հավատացյալներին: 1916 թվականի ապրիլի 3-ի զեկույցում

³⁹ Գուստ, Ցեղասպանություն, էջ 81:

⁴⁰ Նույն տեղում:

դեսպան Վոլֆ-Մետեռնիխը հաղորդում է, որ գերմանական կորուստների թիվը կգերազանցեր 9,2 միլիոն մարկ (ներառյալ 4,2 միլիոն գերմանական բանկերի վարկերը):⁴¹ Գերմանական դեսպանատան տնտեսական հարցերով այն ժամանակվա խորհրդատու Կոնստանտին Ֆրայիեր Նոյռաթը 1915 թվականի աշնանը սպառնացել էր, որ «այն վնասը, որ հասցրեց գերմանացի հավատացյալներին հայերի հետապնդումը, գերմանացի հավատացյալներին պատասխանատու է դարձնում»:⁴² Սակայն Վոլֆ-Մետեռնիխը՝ որպես Նոյռաթի հաջորդ, յոթ ամիս անց եզրակացրեց, որ դա մեծ դժվարությունների կհանգեցնի և խորհուրդ տվեց այդ կորուստները փոխհատուցել Թուրքիային տրվող գերմանական կանխավճարներից⁴³:

Հայնրիխ Ֆիրբյուխերը (1893–1939 թթ.)՝ հայերի Ցեղասպանության մասին վերջին և վերին աստիճանի քննադատական գրքի⁴⁴ հեղինակը, որը լույս տեսավ Գերմանիայում նացիստական տիրապետությունից առաջ, պատերազմի տարիներին Օսմանյան կայսրությունում թարգմանիչ էր աշխատել գեներալ-ֆելդմարշալ Օտտո Լիման ֆոն Ջանդերսի (1855–1929 թթ.) ենթակայության տակ: Նա հիշատակում է նաև «(...) Թուրքիայի առաջատար գեր-

⁴¹ Կոստանդնուպոլսում արտակարգ միսիայով դեսպանի զեկույցը, 3 ապրիլ, 1916 թ., Վոլֆ-Մետեռնիխ, կայսերական կանցլեր Բեթման Հոլվեգին, DE/PA-AA/R14091, Կենտրոնական գրանցամատյան՝ 1916-A-09024; [http://www.armenocide.net/armenocide/armgende.nsf/\\$\\$All-Docs/1916-04-03-DE-002](http://www.armenocide.net/armenocide/armgende.nsf/$$All-Docs/1916-04-03-DE-002)

⁴² [http://www.armenocide.net/armenocide/armgende.nsf/\\$\\$All-Docs/1915-10-08-DE-005](http://www.armenocide.net/armenocide/armgende.nsf/$$All-Docs/1915-10-08-DE-005)

⁴³ Տե՛ս [http://www.armenocide.net/armenocide/armgende.nsf/\\$\\$All-Docs/1916-04-03-DE-002](http://www.armenocide.net/armenocide/armgende.nsf/$$All-Docs/1916-04-03-DE-002)

⁴⁴ Դեռևս 1933 թվականին Յոզեֆ Գեբելսը և Գերմանական գրավաճառության բորապական միավորումը «Հայաստան 1915» գրանցեցին Հայնրիխ Ֆիրբյուխերի արգելված գրքերի սև ցուցակում:

մանացիներին, որոնք իրենց հնարավորության չափով փորձում էին պաշտպանել հայերին և օգնել նրանց: Այստեղ պետք է հիշատակվեն հյուպատոսներ Ռյուպերը (Հալեպ) և Լոյդֆելդը (Դամասկոս): Գեներալ Լիման ֆոն Սանդերսը սպառնաց, որ գնդակահարել կտա Զմյուռնիայի թուրք ժանդարմներին, եթե նրանք հանգիստ չթողնեն վտանգված հայերին: (...) Մարշալ ֆոն դեռ Գոլցը սպառնաց էսվեր փաշային, որ ետ կքաշվի, եթե նա Էսկան մեղմացումներ չանի իր ենթակայության տակ գտնվող Միջագետքի շրջանում: Հաստատված է նաև, որ դեսպան ֆոն Վագենհայմի հետևորդը՝ կոմս Մետեռնիխը, անդադար բողոքներ էր հղում թուրքական կառավարությանը»:⁴⁵

Ոճրագործությունից դեպի Միավորված ազգերի կազմակերպության՝ ցեղասպանության վերաբերյալ համաձայնագիրը. Բեռլինի քրեական դատավարությունը 1921 թ. հունիսի 2–3–ին

Արձագանքելով հայերի կոտորածին Օսմանյան կայսրության արևելյան գավառներում՝ Ռուսաստանը, Ֆրանսիան և Մեծ Բրիտանիան 1915 թվականի մայիսի 24–ին համատեղ սպառնալից հայտարարագիր ուղղեցին երիտթուրքական կառավարությանը, նշելով, որ դաշնակից պետությունների կողմից՝ կապված «մարդկության ու քաղաքակրթության դեմ Թուրքիայի այս նոր հանցագործության հետ, անձնապես պատասխանատվության կենթարկվեն Օսմանյան կառավարության բոլոր անդամները և նրանց գործակալները

⁴⁵ Ֆիրբյուխեր Հայնրիխ, Ինչ չէր ասում կայսերական կառավարությունը գերմանական հպատակներին. Հայաստան, 1915 թ., Մշակութային ազգի ջարդը թուրքերի կողմից: Համբուրգ–Բերգեդորֆ՝ Fackelreiter-Verlag, (Վերատպումներ՝ Բրեմեն՝ Donat Verlag, 1985; 3–րդ, ընդլայնված հրատարակություն՝ Բրեմեն՝ Donat Verlag, 1987; Բրեմեն՝ Donat Verlag, 2003; 2004; 2005 թ.), էջ 75:

ըը, որոնք մասնակցություն են ունեցել այդ հանցագործությանը».⁴⁶ Գործը դրան չհասավ. նավթի համար մրցավազքը Մերձավոր Արևելքում, ինչպես նաև սեփական այլ շահերը, հոգնածությունը պատերազմից և օտարերկրյա ներխուժումից զերծ մնալու ցանկությունը որոշեցին նախկին դաշնակիցների գործելակերպը:

Օսմանյան ռազմական դատարաններն ամեն դեպքում ձգտում էին ազգային մակարդակի վրա՝ հայերի ոչնչացման համար քաղաքական և կազմակերպչական մեղավորներին պատասխանատվության ենթարկել, հույս ունենալով, որ դրա դիմաց հնարավոր կլինի հաղթող կողմի դաշնակից ուժերից որպես փոխհատուցում պահանջել Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականության ձանաչումը: Մեղադրյալների մեծ մասը, այդուհանդերձ, դեռևս Օսմանյան Թուրքիայի պատերազմական կապիտուլյացիայից առաջ տեղափոխվել էր արտասահման: Ներքին գործերի նախկին նախարար և կառավարության ղեկավար Թալեաթին հաջողվեց գերմանացիների օգնությամբ փախչել Բեռլին: Հենց որ Բեռլինում օսմանյան Թուրքիայի դեսպան Ռիֆաթ Փաշան իմացավ Թալեաթի ժամանման մասին, նա պաշտոնապես դիմեց գերմանական ատյաններին, որպեսզի հասնի Թալեաթի ձերբակալությանն ու արտահանձնմանը: Սակայն արտաքին գործերի նախարար Վիլհելմ Զոլֆը մերժեց երկու անգամ իրեն ուղղված արտահանձնման պահանջը՝ 1918 և 1919 թթ. «Թալեաթը մեր հանդեպ պահպանեց իր հավատարմությունը, և մեր երկիրը նրա համար մնում է բաց»:⁴⁷

⁴⁶ Ֆրանսիա, Մեծ Բրիտանիա և Ռուսաստան. համատեղ հայտարարություն. https://www.armenian-genocide.org/Affirmation.160/current_category.7/offset.50/affirmation_detail.html

⁴⁷ Մեջբերումն ըստ՝ Վահագն Դադրյանի, Գերմանական պատասխանատվությունը հայկական Յեղասպանության համար, Քեմբրիջ, Մ. Ա. հրատ., 1956, էջ 217:

Դրան հետևեց այն, որ 1919 թվականի հուլիսի 5-ին, արժանապատիվ լինելով հանդերձ, նա Կոստանդնուպոլսում հայերին ոչնչացնելու համար մահապատժի դատապարտվեց: Որպես այդ մահապատժին իրականացնողներ հանդես եկան հայկական «Նեմեսիս» գաղտնի կազմակերպության անդամները, որոնք հավաքագրվել էին այդ ժամանակաշրջանում Հայաստանի Հանրապետությունում միանձնյա կառավարող սոցիալ-հեղափոխական *Դաշնակցություն* կուսակցության շարքերից: 1919 թվականի աշնանը այդ կուսակցության ժողովին որոշում կայացվեց *Հատուկ առաքելության* (Հատուկ գործի) վերաբերյալ: Ըստ այդ ծրագրի՝ անհրաժեշտ էր գտնել և սպանել Հայոց ցեղասպանության գլխավոր պատասխանատուներին: Այդ կարևորագույն մեղավորների ցուցակի ամենավերին կետում նշված էր Թալեաթը: Նա սպանվեց 1921 թվականի մարտի 15-ին Սողոմոն Թեհլիրյանի (նաև Թեհլերյան, Թեհլիրյան) ձեռքով բեռլինյան Հարդենբերգ փողոցում՝ իր բնակարանից ոչ հեռու: Սպանություն գործողը, ով 1915 թվականին բազմաթիվ հարազատներ էր կորցրել մահվան քայլերթերի ժամանակ, ձերբակալվեց, իսկ 1921 թվականի հունիսի 3-ին՝ Միջազգային ուշադրությունը գրաված երդվյալների դատավարության ժամանակ արդարացվեց անմեղսունակության հիմնավորումով: Դրա նախօրեին իրենց պաշտպանական խոսքն էին ասել Գրիգորիս Պալաքյանը և Քրիստինա Թերզիբաշյանը, որոնք Ցեղասպանությունը վերապրած վկաներ էին:⁴⁸ Ոչ միայն բազմաթիվ

⁴⁸ Հոֆման Թեսսա, Վրեժխնդրություն հայերի համար, 100 տարի առաջ. Մեհմեդ Թալեաթի դատապարտումը՝ ըստ Միավորված ազգերի Ցեղասպանության կոնվենցիայի: «Դեռ Թագեսշիզե, 2021, մարտի 13, էջ 190: https://www.academia.edu/45551588/Rache_f%C3%BCr_die_Armenier_Vor_100_Jahren_Vom-Anschlag_auf_Mehmet_Talat_in_Berlin_zur_V%C3%B6lkerermordkonvention_der_UN; Նույն տեղում, Հոֆման Թեսսա, Հարյուր տարի առաջ. Մեհմեդ Թալեաթի սպանությունը (1921 թ.

հայեր էին տոնում դատավարության նման հանգուցալուծումը՝ որպես բարձրագույն արդարության հաղթանակ, այլև ժամանակակից գերմանական լիբերալ և սոցիալ-դեմոկրատական մամուլը:⁴⁹ Շատ տպավորված էին նաև երկու երիտասարդ հրեա փաստաբանները՝ Ռոբերտ Մ. Վ. Քեմպները (1899–1993 թթ.) և Ռաֆայել Լեմկինը: Բեռլինի թիվ III երկրամասային դատարանում (Մոաբիթի քրեական դատարանի շենք) Քեմպները՝ որպես իրավագիտության ուսանող, հետևում էր Երդվյալների դատարանի քրեական դատավարությանը: 1935 թվականին, զրկվելով Գերմանիայի քաղաքացիությունից, Քեմպները 1945–1946 թվականներին մասնակցեց Նյուրնբերգի միջազգային ռազմական դատարանի դատավարությանը՝ ԱՄՆ-ի գլխավոր մեղադրողի տեղակալի կարգավիճակով, ինչպես նաև 1947–1948 թվականներին՝ որպես գլխավոր մեղադրող, այսպես կոչված *Վիլհելմշտրասսե-գործով* դատավարությանը՝ ընդդեմ նացիոնալ-սոցիալիստական Գերմանիայի արտաքին գործերի նախարարության բարձրաստիճան պաշտոնյայի: Հետադարձ հայացքով նա 1980 թվականին կրկին հաստատեց բեռլինյան դատավարության եղելությունը. «*Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում հայերի հանդեպ սկսված վայրագություններից հետո հայ ուսանող Թեիլիրյանի արարքը աշ-*

մարտի 15) և Բեռլինի քրեական դատավարությունը Սողոմոն Թեիլիրյանի դեմ (2/3 հունիսի 1921 թ.). Նախապատմություն, ենթատեքստ, ազդեցություն: «Հայոց ցեղասպանության ուսումնասիրությունների միջազգային հանդես», 2020, հատոր 5, համար 1, էջ 67–89, https://www.academia.edu/45388951/A_Hundred_Years_Ago_The_Assassination_of_Mehmet_Talaat_15_March_1921_and_the_Berlin_Criminal_Proceedings_against_Soghomon_Tehirian_2_3_June_1921_Background_Context_Effect

⁴⁹ Հոֆման Թեսսա, Թալաթ փաշայի դատական գործի նոր ասպեկտներ. անհայտ արխիվային փաստաթղթեր չնախատեսված քաղաքական դատավարության նախապատմության և ընթացակարգի վերաբերյալ. «Արմենիան Ռեկու», 1989, Հ. 42, Թիվ 4 /168, էջ 49:

խարհի ուշադրությունը բերեց Յեղասպանության հետ կապված այդ կարևորագույն զարգացման վրա. ոտքի ելան համարձակ տղամարդիկ, որոնք ի շահ մարդասիրության, բացահայտ դեմ ելան Յեղասպանությանը: Նրանք չվարանեցին և չխորշեցին այն անիմաստ թեզից, ըստ որի՝ օտար պետությունն իրավունք չունի միջամտելու մեկ ուրիշ սուվերեն պետության ներքին գործերին»:⁵⁰

Ռաֆայել Լեմկինը բեռլինյան դատավարության մասին իմացավ մամուլից, երբ նա իրավաբանության բաժնի ուսանող էր այն ժամանակվա լեհական Լեմբերգ քաղաքում (Լվով): Անպատժելիության և Լինչի դատաստանի երկրնորանքի մեջ նա բացահայտեց օրենսդրական այն բացթողումը, որը մինչ այդ պահը խոչընդոտում էր ցանկացած խմբային պետական մեծ հանցագործության կանխարգելմանը: Լեմկինի կյանքի գործը դարձավ Յեղասպանության կանխարգելման և պատժի միջազգային համաձայնագիր կազմելն ու այն շրջանառության մեջ դնելը: Նրա առաջին փորձը՝ ներկայացնելու այդ պայմանագրի օրինակը *Ժողովուրդների միավորմանը*, ձախողվեց 1933 թվականին, քանի որ դրան դեմ եղավ նացիստական Գերմանիայի պատվիրակությունը: Միայն հաջորդ Համաշխարհային պատերազմից և Յեղասպանությունից հետո, որը տեղի ունեցավ արդեն կրկնակի չափերով, Միավորված ազգերի կազմակերպությունը կարողացավ 1948 թվականին Յեղասպանության կանխման վերաբերյալ ու Յեղասպանություն գործելու համար պատժի մասին համաձայնագիր ընդունել, որի զգալի մասը կազմել էր Լեմկինը: Այդ համաձայնագրում տեղ գտած Յեղասպանության սահմանումը, ինչպես ցույց են տալիս 1946 թվականի Լեմկինի զեկույցները, էմպիրիկ

⁵⁰ Քեմփներ Ռոբերտ Մ. Վ., Գերմանական երդվյալների դատարանի դատավարությունից 60 տարի առաջ. Հայերի ցեղասպանությունը: Իրավունք և քաղաքականություն, 1980, Թիվ 3, էջ 168:

կերպով ուղղված էին օսմանյան Թուրքիայի հայերի և հույների⁵¹ ոչնչացման դեմ, ինչպես նաև եվրոպական հրեաների ցեղասպանության: Համաշխարհային երկու պատերազմների ժամանակ տեղի ունեցած ժողովուրդների սպանող մեր այսօրվա ընկալման մեջ է մտել որպես *Ցեղասպանություն*, և դա միջազգային իրավունքի միակ պարտավորեցնող իրական օրենքի սահմանումն է:

Մոռացություն, նորովի բացահայտում և «Ճանաչում»

Ցեղասպանությունը օսմանյան Թուրքիայի քրիստոնյաների դեմ արդեն իսկ մոռացության մատնվեց նացիոնալ–սոցիալիստների իշխանության գալու օրից: Այդ թեմայով գրականությունը նացիստներն առանց այլևայլության գրանցեցին «սև ցուցակի» մեջ, այդ թվում Ֆրանց Վերֆելի պատմական վեպը՝ «Մուսա լեռան քառասուն օրը» (1933): 1933 թվականից սկսած գերմանական պետության տարածքում ապրող հայերի համար մի նոր վտանգ առաջացավ. նացիստները կասկածի տակ առան նրանց ռասայական պատկանելիությունը և նրանց սեմիտներ անվանեցին՝ մի թեզ, որը ռասիստական շահարկումների և կանխակալ մոտեցումների համար լավ հող նախապատրաստեց ու զգալիորեն նպաստեց նախորդող տասնամյակների բռնաճնշումների իրականացմանը: Սակայն *Գերմանա–հայկական* ընկերության լոբբիստական աշխատանքի շնորհիվ, որը հայերին ժամանակի ոգուն համահունչ նախաարիացիներ որակեց, կանխվեց ազգի ոչնչացման վտանգը. «*Մենք հրապարակում ենք հուշագրեր հայերի՝ արիական ռասային պատկանելու վերաբերյալ և նրանց՝ ժողովրդի ընտանիքի հետ և Գերմանիայի հետ մշակութային հարաբերություն-*

⁵¹ Տե՛ս Ցեղասպանությունը ազգերի օրենքի ներքո: «Նյու Յորք Թայմս», 5 հունվարի, 1947, Ցեղասպանություն, «Նյու Յորք Թայմս», 26 օգոստոսի 1946 թ.:

ներ հաստատելու վերաբերյալ՝ նկատի առնելով հռչակավոր գիտնականների եզրահանգումները, որոնք միաձայն վկայում են ոչ միայն հայոց լեզվի անկասկած պատկանելիությունը հնդոգերմանական լեզվաընտանիքին, այլև այդ ժողովրդի ազգակցական կապը տվյալ մշակութային շրջանի ժողովուրդների հետ: Մենք բավարարվածությամբ զգացում ապրեցինք, որ փորձագետները, որոնք զբաղվում են ռասայական հետազոտությունների խնդիրներով, որպես անհատական դեպք հաստատեցին հայերի արիական ռասային պատկանելիությունը»:⁵²

Երիտթուրքերի իրականացրած Յեղասպանության վերաբերյալ նաև գերմանական կողմից լռության մատնելու քաղաքականությունը շարունակվեց Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ևս երեք տասնամյակ: Իրավական, պատմական և քաղաքական հիշողության հենքի վրա արված հետազոտությունը՝ Շոահում և Երկրորդ համաշխարհային պատերազմում գործած այլ հանցագործությունների մասին տեղ զբաղեցրին դրա խորապատկերում: Միայն 1970-ական թվականների վերջին Գերմանիայում գործող մարդու և ազգային փոքրամասնությունների իրավունքների համար պայքարող իրավապաշտպանները նորովի բացահայտեցին հայերի և այլ օսմանական քրիստոնյաների նկատմամբ իրականացված Յեղասպանությունը. դրա սկիզբը դրեց Գերմանիայում մարդու իրավունքների հարցերով զբաղվող երկրորդ խոշոր կազմակերպությունը՝ *Ընկերություն հանուն վտանգված ժողովուրդների*: Այդ կազմակերպությունը իր ամսագրի երեք համարը նվիրեց (տարին մեկ համար՝ 1979–1981 թթ.) «ջար-

⁵² Շտիր Էվալդ, Հայ-գերմանական ընկերության պատմության մասին (1914–1939 թթ.): Գերմանա-հայկական ընկերության տեղեկատվական թերթ: Դեկտեմբեր, 1939, Թիվ 5–6, էջ 11 (75):

ղերի» թեմային:⁵³ Այդ թեմայով լույս տեսան նաև երկու գիրք, այդ թվում՝ «Թալեաթ փաշայի դատավարության»⁵⁴ արտատպված արձանագրության սղագրությունը, և բացի դրանից՝ նաև հայոց Ցեղասպանությանը վերաբերող հոդվածները՝ *Ժողովուրդների մշտական գործող տրիբունալում*, փարիզյան Սորբոնում, 1984⁵⁵ թվականի ապրիլին: *Ընկերություն ի պաշտպանություն վտանգված ժողովուրդների* կազմակերպությունը նշված տրիբունալի ստեղծման համանախաձեռնողն էր, իսկ այդ տրիբունալի «դատավճիռը»⁵⁶ էապես նպաստեց հայոց Ցեղասպանության վերաբերյալ Եվրոպական պառլամենտի կողմից մինչ այդ ներկայացված չորս բանաձևերից առաջինի (18.07.1987 թ.)⁵⁷ ընդունմանը:

Որպես բացակայող դատական լրամշակմանը փոխարինող փաստաթուղթ, հայկական սփյուռքը Ցեղասպանության հիսունա-

⁵³ Տե՛ս «Ջարդեր». Ամսագիր հանուն վտանգված ժողովուրդների, տասներորդ տարի, Թիվ 64, նաև՝ Թիվ 72–73 (1980 թվական, մայիս): 1987 թվականին լույս տեսավ մեկ գրքով ժողովածուն՝ «Ջարդեր» շարքից: Դրա առաջին համարը կրում էր հետևյալ վերնագիրը՝ «Հայաստան. Ցեղասպանություն, տեղահանում, աքսոր: Մարդու իրավունքների հարցերին վերաբերող աշխատանք՝ նվիրված հայերին (1979–1987 թթ.)», Թեսսա Հոֆմանի և Ժիրայր Քոչարյանի աշխատասիրությամբ, Գյոթինգեն, «Ընկերություն ի պաշտպանություն վտանգված ժողովուրդների», 1987, էջ 146:

⁵⁴ Հայերի հանդեպ Ցեղասպանությունը՝ դատարանի առջև. Թալեաթ փաշայի գործի դատավարությունը: Թեսսա Հոֆման, Գյոթինգեն, Վիեննա, «Ընկերություն ի պաշտպանություն վտանգված ժողովուրդների» հրատ., 1980 թվական, ապրիլ:

⁵⁵ Լոռիյան հանցագործությունը. Թուրքիայի Հայոց ցեղասպանության դատավարությունը ժողովուրդների մշտական տրիբունալի առաջ, Գյոթինգեն, «Ընկերություն ի պաշտպանություն վտանգված ժողովուրդների» հրատ., 1984:

⁵⁶ Ժողովուրդների մշտական գործող տրիբունալի դատավճիռ, 14 Ապրիլի, 1984/անգլ./ https://www.armenian-genocide.org/Affirmation.66/current_category.5/affirmation_detail.html:

⁵⁷ Նույն տեղում, https://www.armenian-genocide.org/Affirmation.896/current_category.5/affirmation_detail.html:

մյա հիշատակի օրվանից սկսած շրջանառության մեջ դրեց ազգային և միջազգային օրենսդիր մարմիններին ուղղված «Ճանաչման» բանաձևը: Յեղասպանությունը Ճանաչած 31 պետություններից առաջինը Ուրուգվայն էր, որը 1965 թվականին հայերի դեմ գործած հանցանքը որակեց որպես Յեղասպանություն՝ համաձայն ՄԱԿ-ի Համաձայնագրի: Դրանից տասը տարի անց, որպես առաջին եվրոպական պետություն, Յեղասպանությունը Ճանաչեց Կիպրոսը: 1990-ական թվականների վերջին «Ճանաչման» շարժումը հասավ նաև Գերմանիա: Գերմանիայի հայերի Կենտրոնական խորհրդի այդ ժամանակվա նախագահ Բաֆֆի Բեդիկյանը 1999 թվականին նախաձեռնեց *Ճանաչման աշխատանքային խումբ (ՃԱՄ)*,⁵⁸ որը 2004 թվականին գրանցվեց որպես միավորում: Մյունխենի՝ *Հայկական հարցերով* մասնավոր ինստիտուտի, ինչպես նաև Ալի Էռթեմի (1950–2021 թթ.) կողմից հիմնադրված *Յեղասպանության հակառակորդների միավորման* (ՅՀՄ; Ֆրանկֆուրտ/Մայն) հետ համատեղ *Ճանաչման աշխատանքային խումբը* մի միջնորդագիր պատրաստեց, որը 2000 թվականի ապրիլին խորհրդանշային կազմով՝ *Աշխատանքային խմբի* և ՅՀՄ-ի մեկ հայ, մեկ թուրք և մեկ գերմանացի ներկայացուցչի կողմից հանձնվեց գերմանական Բունդեսթագի միջնորդագրերի հանձնաժողովին: Միջնորդագրով դիմողները իրենց խնդրանքը հիմնավորեցին այն բանով, որ Գերմանիան՝ որպես Օսմանյան կայսրության ռազմական դաշնակից, դրանից բխող հատուկ պատմական պատասխանատվություն է կրում, դրան գումարվում է նաև այն փաստը, որ «Գերմանիայի Դաշնային Հանրապետությունը (...) ամենախոշոր թուրքական հա-

⁵⁸ *Ճանաչման աշխատանքային խումբ* ընդդեմ ցեղասպանության, հանուն ժողովուրդների միաբանության: <http://www.aga-online.org/aboutus/index.php?locale=de>

մայնքի հայրենիքն է, ինչպես նաև՝ հայկական ծագումով Գերմանիայի քաղաքացիություն ունեցողների հայրենիքը»:⁵⁹

Դրանից մեկ տարի անց Բունդեսթագը հանձնարարեց Գերմանիայի արտաքին գործերի նախարարությանը՝ տեղեկացնել թուրքական արտաքին գործերի նախարարությանը զանգվածային միջնորդագրի պահանջի մասին: 2005 թվականի հունիսի 16-ին հետևեց Բունդեսթագի առաջին, բայց և դեռ քողարկված «Ճանաչման բանաձևը», որը երիտթուրքական Յեղասպանությունը «կոտորած» էր որակում՝ «տեղահանում» և «ոչնչացում» եզրույթներով: Դրա հետ միասին Բունդեսթագը ափսոսանք արտահայտեց *«Գերմանական կայսրության անփառունակ դերի վերաբերյալ, որը, փաստացի բազում տեղեկատվական վկայություններ ունենալով հայերի կազմակերպված տեղահանման ու ոչնչացման վերաբերյալ, ոչ մի անգամ չփորձեց կանգնեցնել այդ վայրագությունը»*:⁶⁰ Յեղասպանության զոհ դարձած մեկ միլիոնից ավելի հույների մասին, որոնք 1912–1923 թվականներին նույնպես դարձան կոտորածների, տեղահանումների, ստիպողաբար վերաբնակեցումների և հարկադիր աշխատանքների զոհ, ի մի բերեց տեքստը, որն ուներ անհասցե ընդհանուր վերնագիր՝ «քրիստոնյա այլ ազգային խմբեր»:

«Խոսել մեկ ձայնով՝ համակարգող խումբը, ինչպես նաև դրա իրավահաջորդ՝ Օսմանյան կայսրության գործած Յեղասպանության զոհերի էկոմենիկ (տիեզերական) հուշահամալիրը ֆինանսավորող ընկերությունը»,⁶¹ որը դարձավ գրանցված միավորում, փոր-

⁵⁹ Կոչ. «Ժամանակն է Յեղասպանությունը ճանաչելու»: Ճանաչման աշխատանքային խմբի կոչը՝ դատապարտելու Յեղասպանությունը:

⁶⁰ Բեռլին, 16 հունիսի, 2006 թ., Գերմանական Բունդեսթագը «ոչ բացահայտ ձևով» ճանաչում է հայերի Յեղասպանությունը:

⁶¹ <http://www.genozid-gedenkstaette.de/ueberuns/index.php>; FÖGG e.V. Նաև «Յեղասպանության վիրտուալ թանգարան» կայքում: <https://virtual-genocide-memorial.de/>:

ձեց շրջանցել այդ զոհերի խմբերի աստիճանակարգումը՝ շեշտը դնելով զոհերի շահերի ընդհանրության վրա, և 2014–2018 թվականներին կառուցեց մի *Էկումենիկ հուշահամալիր*⁶² Բեռլինի Վեստենդ շրջանում՝ քնապահպանության և հուշարձանների պաշտպանության ներքո գտնվող Լուիզենֆրիդոֆ III Ավետարանչական գերեզմանատանը. այն, ըստ երևույթի, նաև միջազգային չափանիշներով, հայերին, հույներին և սիրիացի քրիստոնյաներին համատեղ ներկայացնող մինչ օրս միակ հուշահամալիրն է։ Այն փաստը, որ այդ հուշահամալիրը կառուցվել է ոչ հրապարակային բաց տարածքում, այլ ընդամենը կիսա–հրապարակային մի տեղում, անգամ կարելի է ասել՝ «Ռայխսթագի գմբեթի ստվերում»,⁶³ ինչպես Բեռլինի՝ Սինտի և Ռոմա գնչուական ժողովուրդների Ցեղասպանության հիշատակին նվիրված հուշահամալիրը, վկայում է հիշատակի պահպանման մշակույթի մեջ հայ–թուրքական համատեքստում դեռևս առկա դժվարությունների մասին։

Փորձագետների և մասնագիտական միավորումների քննադատությունն առ այն, որ հայերի հանդեպ իրականացվածը Բունդեսթագի առաջին բանաձևը ակնհայտորեն խուսափել է *Ցեղասպանություն* որակել, ազդեց 2016 թվականի հունիսի 2–ին ընդունած երկրորդ բանաձևի վրա, որով երիտթուրքերի պետական հանցանքը Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ բացահայտ որակավորվում է որպես Ցեղասպանություն։⁶⁴ Ցավոք, կառավարության վերնախավի պահպանողական և սոցիալ–

⁶² https://www.armenian-genocide.org/Memorial.222/current_category.64/memorials_detail.html

⁶³ Աշխատանքային խմբի վաղ շրջանի նախագահ Ազատ Օրդուխանյանի քնորոշումն է։

⁶⁴ Տե՛ս Ճանաչման աշխատանքային խմբի քննադատական մոտեցման մասին, ինչպես նաև բանաձևի բուն տեքստը։ <http://www.aga-online.org/news/detail.php?locale=de&newsId=632>

դեմոկրատական կուսակցության անդամները ամբողջովին հեռու մնացին քննարկումներից և քվեարկություններից, որոնք նախաձեռնել էին կառավարության մաս կազմող քրիստոնեա-դեմոկրատական միություն/ Քրիստոնեա-սոցիալական միություն կուսակցությունների ֆրակցիան և Կանաչների կուսակցությունը, և դրա արդյունքները ներկայացրել էին որպես բանաձև: Այդ բանաձևի ընդունումից միայն երեք ամիս անց Անգելա Մերկելի կառավարության խոսնակ Շտեֆեն Ջայբերթը փորձեց մամուլի ասուլիսներից մեկում հանգստացնել թուրքերին, համոզելով, որ «Հայկական բանաձևը» իրավական առումով որևէ պարտադրանք չի ենթադրում:⁶⁵

Բունդեսթագի երկրորդ բանաձևը շեշտադրում է կրթական քաղաքականության նպատակադրումները. «Այսօր Գերմանիայում դպրոցական, համալսարանական ու քաղաքական կրթության առջև խնդիր է առաջանում ընդունել և հաջորդ սերունդներին փոխանցել հայերի տեղահանման ու ոչնչացման վերաբերյալ նյութերի լրամշակումը՝ որպես 20-րդ դարի էթնիկ կոնֆլիկտների պատմության վերանայում և դրա անցկացումը ուսումնական ծրագրերի մեջ: Եվ այստեղ առանձնահատուկ կարևոր դեր է բաժին ընկնում առանձին դաշնային երկրամասերին»:⁶⁶ Ճանաչման աշխատանքային խմբի (ՃԱԽ) 2017 թվականի նոյեմբերի հետազոտությունը ցույց տվեց, որ Գերմանական դաշնային ոչ մի երկրամասում օսմանյան Ցեղասպանությունը պարտադիր նյութ չէ ուսումնական ծրագրերի շրջանակում, 16 դաշնային երկրամասերից միայն հինգում կա-

⁶⁵ Տե՛ս Ճանաչման աշխատանքային խմբի 20.09.2016 թվականի գրությունը՝ ուղղված Գերմանիայում հայերի միավորմանը և Բունդեսթագի այն ժամանակվա նախագահ, պրոֆեսոր Նորբերթ Լամերթին: <http://www.agaonline.org/news/detail.php?locale=tr&newsId=637>

⁶⁶ Տե՛ս բանաձևի տեքստը հետևյալ հղումով. <http://www.aga-online.org/news/detail.php?locale=de&newsId=632>

րող են այդ նյութերը կամընտրական սկզբունքով դասավանդվել: Այն, որ իրականում այդ նյութերը ուսումնական դասընթացներից դուրս են մնում, արձանագրել էր Ներքին Սաքսոնիայի մանկավարժ Մարտին Շտուփերիխը դեռևս 2016 թվականի ապրիլին: Դրա պատճառները նա տեսնում էր մի կողմից՝ ուսուցիչների մոտ պատմական տեղեկատվությանը անտեղյակ լինելու, և երկրորդը՝ թուրքերի և թուրքական ծագում ունեցող ծնողների՝ դրան հակադրվելու մեջ. «Գրեթե ամենուր Գերմանիայում փախստականների երեխաները ու հատկապես թուրքական ծագում ունեցող աշակերտներն ու աշակերտուհիները, դասարանի աշակերտների թվում զգալի տոկոս են կազմում: Նրանք և առաջին հերթին նրանց ծնողները հետևում են թուրքական պետության այն պաշտոնական թեզին, որ հայերի նկատմամբ Ցեղասպանություն երբեք տեղի չի ունեցել (...): Եվ քանի որ թուրք ծնողները երբեմն չեն խորշում բացահայտ սպառնալ այն ուսուցիչներին, որոնք իրենց դասընթացների մեջ ներառում են Ցեղասպանության վերաբերող նյութեր, ինչը հաստատում է սեփական և այլոց կարծիքները, հայկական Ցեղասպանության մասին դասավանդելու պատրաստակամությունը ուսուցիչների մոտ, այդուհանդերձ, բավական ցածր է (...): Դասավանդումը, որը ծագումով թուրք աշակերտներին այն տեղեկատվությունն է հաղորդում, որ իրենց ազգային պատմության սկզբում Ցեղասպանություն է տեղի ունեցել, վտանգ է առաջացնում, որ դա այդ աշակերտներին կտանի դեպի ներքին մեկուսացման, ու այդ իսկ պատճառով այդ դասընթացը կլինի ոչ արդյունավետ».⁶⁷

⁶⁷ Շտուփերիխ Մարտին, Հայերի նկատմամբ Ցեղասպանությունը դպրոցական դասապրոցեսում: 26.04.2016 թ. Քաղաքական կրթության դաշնային կենտրոն. <https://www.bpb.de/themen/zeit-kulturgeschichte/genozid-an-den-armeniern/218116/der-voelkermord-an-den-armeniern-im-schulunterricht/>

2016 թվականի Դաշնային բանաձևի ողջունելի կրթաքաղաքական նպատակներն իրականացնելու համար անհրաժեշտ է որոշ ջանքեր ներդնել ինչպես ազգային, այնպես էլ Դաշնային երկրամասերի մակարդակով:

Բանալի բառեր՝ Յեղասպանություն, վերնախավի ոչնչացում (էլիտիցիդ) հարկադիր աշխատանք, տեղահանություններ, հայեր, Քրիստոնյաների ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում, Օսմանյան կայսրություն, Թուրքիա, Գերմանիա, միջազգային հարաբերություններ, գերմանա-թուրքական հարաբերություններ, 1921 թ. Բեռլինյան քրեական դատավարություն, ՄԱԿ-ի ցեղասպանության համաձայնագիր, պատմական պատասխանատվության ստանձնում, հորհրդարանի ցեղասպանության բանաձև

Յոհաննես Լեփսիուսը և գերմանա- հայկական հարաբերությունների պատմական ժառանգությունը

Ռոյ Քնոքե

1918 թվականի նոյեմբերի սկզբին գերմանական տորպեդային նավը՝ գերմանացիների կողմից գրաված Ղրիմի Սևաստոպոլ նավահանգիստ բերեց Օսմանյան կայսրության ներքին գործերի նախկին նախարար և մեծ վեզիր, հայոց Յեղսապանության հիմնական մեղավոր Մեհմեդ Թալեաթին: Կազմակերպվեց հետագա ուղևորություն դեպի Բեռլին, ուր Թալեաթը այլ երիտթուրքերի հետ միասին ժամանեց նոյեմբերի 10-ին: Այդ նույն ժամանակ Յոհաննես Լեփսիուսը վերադարձավ Հոլանդիայից, որտեղ նա գտնվում էր 1916 թվականի ամառվանից և մասամբ այն պատճառով, որ գերմանական գրաքննությունը արգելել էր Օսմանյան կայսրությունում հայերի հալածանքների և սպանությունների մասին նրա հրապարակած փաստագրությունը: Մի որոշ ժամանակահատված՝ մի քանի ամիս, Թալեաթն ու Լեփսիուսը ապրում էին նախկին կայազորային Պոտսդամ քաղաքում՝ իրարից ընդամենը մի քանի օդային կիլոմետր հեռավորության վրա. պատմական տարօրինակ զուգադիպություն:

Մի կողմից՝ ես կուզենայի այս հոդվածում կարճ հայացք նետել Յոհաննես Լեփսիուսի կյանքի ու հայանպաստ գործունեությանը: Մյուս կողմից՝ անհրաժեշտ է, որ ներկայացվի Լեփսիուսի պատմական ժառանգությունն այնպես, ինչպես դա նաև այսօր ար-

վում է Պոտսդամի *Լեփսիուսի Տուն* հետազոտությունների և հանդիպումների կենտրոնի աշխատանքներում՝ դրա հիմնադրման օրվանից նեթ:

Յոհաննես Լեփսիուսը և նրա հայանպաստ գործունեությունը

Պոտսդամում, Փֆինգսթերգ լեռան ստորոտում գտնվող Մեծ գինեգործ վարպետների փողոցի թիվ 45 տունը 1908–1926 թվականներին եղել է Յոհաննես Լեփսիուսի բնակատեղին ու աշխատավայրը: Յոհաննես Լեփսիուսը Ավետարանչական աստվածաբան էր, հումանիստ, հրապարակախոս, Գերմանական Արևելք առաքելության նախագահը և Գերմանա–հայկական ընկերության համահիմնադիրը, ով 19–րդ դարավերջի կոտորածների ու Առաջին համաշխարհային պատերազմում Հայոց ցեղասպանության¹ ժամանակ մարդասիրական օգնություն էր ցուցաբերում և հրապարակայնորեն անխոնջ դատապարտում թուրքերի վայրագությունները:² Նրա զեկույցը *Թուրքիայում հայ ժողովրդի վիճակի մասին*, որը գրվել է 1915–1916 թթ. ձմռանը Պոտսդամում, Օսմանյան կայսրության երիտթուրքական ղեկավարության կողմից հայերի հալածանքների ու բնաջնջման վերաբերյալ եզակի փաստաթուղթ է համարվում և վկայում դրա հեղինակի աննախադեպ քաղաքացիական արիության մասին:

¹ Ցեղասպանության և դրա հետևանքների մասին պատմությունը տե՛ս Թեոսա Հոֆմանի՝ այս հատորում տեղ գտած հոդվածում:

² Լեփսիուսի կենսագրության բազմաթիվ կողմերի մասին տե՛ս Ռոլֆ Հոսֆելդ (Խմբ.), *Յոհաննես Լեփսիուս՝ գերմանական բացառություն: Հայոց Ցեղասպանությունը. մարդասիրություն և մարդու իրավունքներ*, Գյոթինգեն, 2013:

Յոհաննես Լեփսիուսը ծնվել է 1858 թվականի դեկտեմբերի 15-ին Բեռլինում և 19-րդ դարի վերջից սկսած եղել է համաեվրոպական հայանպաստ շարժման ամենահայտնի դեմքը, մի անձ, ով այն աստիճանի քաջատեղյակ էր Օսմանյան կայսրության քաղաքական հարցերին, ինչպես թերևս ուրիշ ոչ ոք Գերմանական կայսրությունում: Նա ծագում էր բեռլինյան բուրժուազիայի կիրթ վերնախավից և հրաշալի կապեր ուներ քաղաքական ու եկեղեցական կարևոր շրջանների ու արքունիքի հետ: Նրա նախնիներից մեկը լուսավորիչ և հրատարակիչ Ֆրիդրիխ Նիկոլային էր, ով ընկերական կապի մեջ էր հրեա փիլիսոփա Մոզես Մենդելսոնի հետ: Նրա հայրը՝ Կառլ Ռիխարդ Լեփսիուսը, տասնիններորդ դարի քառասունական թվականների Եգիպտոս ուղևորված պրուսական չորսամյա արշավախմբի ղեկավարն էր: Հայրը նույնպես խորապես հետաքրքրված էր Արևելքի քրիստոնյա փոքրամասնությունների առջև ծառացած խնդիրներով: Մարոնիտների նկատմամբ ջարդերը Լիբանանում, որոնք հանգեցրին 60-ական թվականներին Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի և Ռուսաստանի զավթախուժմանը և կտրուկ բարեփոխումներին Բեյրութում, Լեփսիուսների ընտանիքում խոսակցության թեմա էր, ինչպես նաև դպրիների իրավիճակը Եգիպտոսում, որին Կարլ Ռիխարդ Լեփսիուսը սեփական փորձից էր ծանոթ: Այն փաստը, որ Յոհաննես Լեփսիուսը աստվածաբանական ուսումնառությունն ավարտելուց հետո մեկնեց Երուսաղեմ որպես քարոզչի օգնական և ուսուցիչ, լիովին համահունչ էր իր «արևելյան» հետաքրքրություններին, որոնց հետ նա առերեսվել էր մանկուց: Երուսաղեմում նա առաջին անգամ բախվեց օսմանյան բազմազգ պետության իրականությանը, որի խնդիրները կորոշեին նրա հետագա կյանքը: Պաղեստինը ինքնին փոքր բազմազգ տիեզերք էր. օսմանյան այս նահանգում ապրում էին մահմեդական և քրիստոնյա արաբներ, ինչպես նաև հրե-

աներ, հայեր, թուրքեր և հույներ:³ Յոհաննես Լեփսիուսը ձևավորվեց այս միջավայրում նույնիսկ ավելի շատ, քան իր ծնողական տանը: Պաղեստինը, ամեն ինչից զատ, առաջին հերթին Աստվածաշնչի երկիրն էր: Աստվածաշնչյան երկրի ուխտը ուներ ոչ միայն կատարածաբանական (Էսխատոլոգիական), այլև քաղաքական նշանակություն, կամ ավելի ճիշտ՝ այդ երկուսը միասին վերցրած: Հոգևորապես բարեփոխված Մերձավոր Արևելքից, ըստ բազմաթիվ բողոքականների, խաղաղությունը պետք է տարածվեր աշխարհով մեկ:⁴ Այս շրջաններում քաղաքական առումով մեծ մասը առաջադեմ ազատական էին ու իրենց հույսերը կապում էին «արևելյան» քրիստոնյաների հետ, այդ թվում առաջին հերթին՝ հայերի, ինչպես նաև Պաղեստինում հուդայականության վերածննդի և իսլամի բարեփոխման հետ: Օսմանյան իրավական մի պետություն, որը քրիստոնյաներին ու հրեաներին քաղաքացիական հավասարություն և անվտանգություն էր առաջարկում. սա էր նրանց տեսլականների իրականացման նախապայմանը: Բոստոնի հետ մեկտեղ Բազելը «բողոքական ինտերնացիոնալի» կարևորագույն հենակետերից մեկն էր համարվում: Այս միջավայրում Լեփսիուսը վերածվեց «նեոպրոտեստանտական ու ազատական լյութերական քրիստոնյայի՝ ոգեշնչված բողոքական ինտերնացիոնալով ու դրա մերձավորարևելյան առաքելությամբ»:⁵

³ Տե՛ս Գրիգ Հերման, *Քահանա Դոկտոր Յոհաննես Լեփսիուս (1858–1926)*, *հայ ժողովրդի օգնական և դատապաշտպան*: Հալլե–Վիթենբերգ համալսարանի 1986 թվականի սիմպոզիումի նյութեր, էջ 27:

⁴ Այդ մասին տես Հանս–Լուկաս Քիզերի ծավալուն ուսումնասիրությունը, *Մերձավոր Արևելք. Ամերիկյան միլենարիզմը և առաքելությունը Միջին Արևելքում*, Ֆիլադելֆիա, 2010:

⁵ Քիզեր Հանս–Լուկաս, *Յոհաննես Լեփսիուս. Արևելքի միսիոներ*: Մերձեցում «հիասքանչ դարաշրջանի» (Belle Epoque) գերմանական բողոքական կենսագրությանը, Զեկույցի ձեռագիր, Պոտսդամ, 2010, էջ 3:

Բայց այս հույսերն ու գաղափարները արագ փլուզվեցին, երբ 1896 թվականի սկզբին Օսմանյան կայսրությունում քրիստոնյա փոքրամասնությունների սարսափելի կոտորածների մասին լուրերը հասան եվրոպական հանրությանը: Լեփսիուսն անձամբ իմացավ այդ մասին Մանսֆելդ քաղաքին կից Ֆրիզդորֆ փոքրիկ բնակավայրում, որտեղ 1887 թվականից ծառայում էր որպես բողոքական քահանա. «Երբ անգլիական թերթերից տեղեկություններ եկան Գերմանիա, որոնք այլևս չէին թաքցնում արյունահեղությունների սարսափելի չափն ու զազանային բնույթը,— ավելի ուշ հիշում է նա,— գերմանական մամուլն ասես միաբերան բացականչեց. «Անգլիական ստե՛ր, անգլիական ստե՛ր»»:⁶ Ամբողջովին հիասթափվելով՝ նա որոշեց իր սեփական հետախուզական ուղևորությունը ձեռնարկել, որպեսզի հիմնովին պարզի այդ հարցն ու լուսավորչական պոռթկումով դրան հակադրի իր սեփական տեսակետն ու սեփական դատողությունը: «Բողոքական ինտերնացիոնալի» ազդակները, որոնք նա ստացել էր Պաղեստինում, այժմ առաջին անգամ քաղաքականապես արդյունավետ դարձան: 1896 թվականի մայիսին և հունիսին հայ ուսանող Ջեյմս Գրինֆիլդի հետ նա ուղևորվեց նախ Կոստանդնուպոլիս: Դրանից հետո Անատոլիական երկաթուղով նրանք գնացին Անգորա, ապա ձիով դեպի Կեսարիա, այդտեղից էլ՝ հարավ, Կիլիկիայի ցածրադիր հարթավայրով և վերջում այցելելով Ադանա ու Տարսոն քաղաքները՝ նորից հասան Միջերկրական ծով: Ամենուր նրանք հանդիպում էին բռնություններից փրկվածների, որոնք կարող էին պատմել 1894–1896 թվականներին հայկական շրջաններում տեղի ունեցած կոտորածների մասին, և սեփական աչքե-

⁶ Լեփսիուս Յոհաննես, Գերմանական Արևելյան առաքելության 30 տարին: *Օրիններ*, 1925, Թ.11/12, էջ 130:

րով տեսան քաղաքների ավերված թաղամասերն ու ավերված գյուղական վայրերը: Գերմանական դեսպանատունը և ամերիկացի միսիոներները, որոնք առաքելության հենակետեր ունեին զանգվածային կոտորածների վայրերում, լրացուցիչ նյութեր տրամադրեցին նրանց: Լեփսիուսը վերջիններիս տվեց նաև գերմանական ավետարանչական շարժումից հավաքած գումարը, որպեսզի Թալասը (Կեսարիայի մոտ) և Ուրֆան (Միջագետք) կառողանային հիսունական որբ երեխաներ ընդունել իրենց մոտ:⁷

Դեռևս Ֆրիզդորֆում 1896 թվականի օգոստոսին «Կայսերական լրաբեր» թերթում տպագրվեց «Ճշմարտությունը Հայաստանի մասին» հոդվածների շարքը, իսկ աշնանը լույս տեսավ «Հայաստանը և Եվրոպան» գիրքը, որը Լեփսիուսին դարձրեց գերմանախոս հայանպաստ շարժման առաջատար դեմք, և որը շուտով ունեցավ վեց հրատարակություն, թարգմանվեց անգլերեն և ֆրանսերեն: Հետաքրքիր է գրքի ենթավերնագիրը՝ «Մեղադրանք մեծ քրիստոնեական տերությունների դեմ և կոչ քրիստոնյա Գերմանիային»: Գրքի շուրջ երեք հարյուր էջերում տեղ է գտել ոչ միայն փաստագրություն «հայկական կոտորածների մասին, որոնց զոհ դարձան 100 000 անմեղ մարդիկ, [և որոնք – Ռ.Ք.] իրականացվեցին խաղաղ և անպաշտպան ժողովրդի նկատմամբ»,⁸ և սուլթան Աբդուլ Համիդ II բռնատիրական քաղաքականության վերլուծությունը, այլև քրիստոնյա մեծ տերությունների մերժողական քաղաքականության քննադատական քննությունը. պետությունների, որոնք 1878 թվականի Բեռլինի պայմա-

⁷ Տե՛ս Հայրունի Աշոտ, Միջամտություն վտանգված հայ ժողովրդի համար: Յոհաննես Լեփսիուսը և նրա առաքելությունը, Պաղերբորն, 2020, էջ 6:

⁸ Լեփսիուս Յոհաննես, Հայաստանը և Եվրոպան: Մեղադրանք մեծ քրիստոնեական տերությունների դեմ և կոչ քրիստոնյա Գերմանիային, Բեռլին-Վեստենդ, 1896, էջ 22:

նագրով փաստացի որոշեցին իրականացնել իրենց իսկ կողմից երաշխավորված հայկական բարեփոխումները: 1897 թվականի սեպտեմբերին Լեփսիուսը բազմաթիվ դասախոսություններ կարդաց, որոնց մասնակցում էին հազարավոր մարդիկ: Այդ մարդիկ վերահսկվում էին ներքին գործերի նախարարության պաշտոնյաների կողմից, նրանք մտավախություն ունեին, որ հակաթուրքական քաղաքական հայտարարությունները կարեն Գերմանական կայսրության հարաբերությունները Օսմանյան կայսրության հետ:

Սակայն ավետարանչական եկեղեցին, որ սարսափած էր այն մեղադրանքներից, որոնք Լեփսիուսը իր հրապարակումներում ու դասախոսություններում հնչեցրել էր գերմանական կայսերական կառավարության դեմ, դիմեց վճռական քայլի: Նա մերժեց նրա՝ հայանպաստ գործունեության համար ավելի երկար արձակուրդ տրամադրելու խնդրանքը:⁹ «Քրիստոնեական աշխարհ» ամսագրի ձախ-լիբերալ խմբագիր Մարտին Ռադեն, ով Լեփսիուսի ընկերն էր, այդ քայլը գնահատեց որպես ևս մեկ ապացույց, որ նոր գերմանական կայսրության սահմանադրական եկեղեցիներն իրականում ոչ այլ ինչ էին, քան «պայծառակերպված ոստիկանական բաժանմունքներ», որոնք հաճախ բացահայտ քաղաքականապես էին գործում, ինչպես պետական պաշտոնյաները:¹⁰ Արդյունքում Լեփսիուսը վայր դրեց իր քահանայական պարտականությունները Ֆրիզդորֆում և 1896 թվականի հոկտեմբերին ընտանիքի հետ տեղափոխվեց Բեռլին, այնուհետև՝ 1908 թվականին Պոտսդամ, որտեղ և ապրում էր հրատարակչական գործու-

⁹ Տե՛ս Քյուին Բարդոլդիմեոս, Յոհաննես Լեփսիուսի դիմումը արձակուրդի համար /1896/, «Գերմանա-հայկական նամակագրությունը 195»-ի մեջ, 2022, էջ 44-46:

¹⁰ Տե՛ս Մայսներ Աքսել, Մարտին Ռադենի «Քրիստոնյա աշխարհը» և Հաստատնը, Բեռլին, 2010, էջ 132:

ներության հաշվին, մասամբ նաև՝ իր իսկ կողմից կյանքի կոչված *Օգնության կազմակերպությանը* տրվող նվիրատվություններով:

Մեկ տասնամյակից ավել Լեփսիուսը ընդլայնում էր իր համախոհների՝ «Հայերի օգնության գերմանական միավորում»-ի ցանցը, ցուցաբերում էր մարդասիրական օգնություն, սակայն հայերի անկայուն քաղաքական իրավիճակը Օսմանյան կայսրությունում չէր փոխվում: 1908 թվականի երիտթուրքական հեղափոխությունն ու դրան հաջորդած սահմանադրական հեղափոխությունը նոր հույսեր արթնացրին: Բայց մեկ տարի անց Ադանայի շուրջ տեղի ունեցած կոտորածները, Բալկանյան պատերազմների հետևանքով հարյուր հազարավոր մուսուլման փախստականների ներհոսքը Օսմանյան կայսրություն և ազգայնական-ռասիստական գաղափարախոսության ներքո երիտթուրքական կուսակցության արմատականացումը էլ ավելի հեռացրին կայսրությունը իրավական երկիր լինելուց. «Պայմանները Հայաստանում երիտթուրքական կառավարության ներքո նույնքան անտանելի են մնացել, որքան սուլթան Աբդուլ Համիդի ժամանակ»,— գրում էր Լեփսիուսը:¹¹ Համընդհանուր կարծիքն այն էր, որ «ևս տասը տարի նման սպառնալից իրավիճակ», և «այլևս չի լինի Թուրքիա»:¹² Քաղաքական այդ անկայուն իրավիճակում Գերմանական կայսրությունն ու Ռուսաստանը բարեփոխման պլան նախաձեռնեցին, որի մեջ ներգրավված էր նաև Լեփսիուսը՝ որպես գերմանական կողմի առաջատար պատասխանատու: Այդ պլանը նախատեսում էր, որ հայերով բնակեցված Անատոլիայի շրջաններում ստեղծվեն երկու գավառներ, որոնք միառժամանակ պետք է

¹¹ Լեփսիուս Յոհաննես, Թուրքիայի ապագան, «Քրիստոնյա Արևելք», Թ.14, 1913, էջ 78:

¹² Լեփսիուս Յոհաննես, Նամակներ Թուրքիայից, «Քրիստոնյա Արևելք», Թ.14, 1913, էջ 114:

ենթարկվեին արտասահմանյան գլխավոր վերահսկչին: Ոստիկանությունն այնտեղ նույնպես պետք է կազմավորվեր հավասարաչափության սկզբունքով՝ հայերի և թուրքերի կողմից: Քրիստոնյաներն ու մուսուլմանները պետք է դատարանի առջև իրավահավասար լինեին: Հայերենը պետք է ձանաչվեր որպես երկրորդ պետական լեզու: 1913 թվականի Հայկական բարեփոխման ծրագիրը խոստանում էր իրական քաղաքական հաջողություն, որի հիմնավորումը պետք է փնտրել քաղաքական-աստվածաբանական էթիկայի սկզբունքներում:¹³ Առաջին համաշխարհային պատերազմը, սակայն, շուտով կկործանի այս բոլոր հույսերը և կհանգեցնի հայերի սիստեմատիկ ոչնչացմանը:

«Սիրելի Ալիս»,— գրում էր Լեփսիուսը Կոստանդնուպոլսից 1915 թվականի օգոստոսի սկզբին՝ Պոտոսում գտնվող իր կնոջը,— «Դա անասելի է, այն ինչ տեղի է ունեցել և դեռ տեղի է ունենում: Համատարած ոչնչացումը դարձել է նպատակ, և այդ ամենը տեղի է ունենում պատերազմական ժամանակի օրենքի քողի ներքո: Առայժմ դրան ավելացնելու բան չունենմ (...): Երբ մի կերպ կարողանում ես հաղթահարել առաջին ծանր տպավորությունները, որպեսզի հոգու ամբողջ ուժով դժվարին վիճակից ելք գտնես, դա ներկայանում է որպես ծայրաստիճան դժվար հոգեբանական փորձություն՝ տեսնել, թե ինչպես են տարբեր մարդիկ մոտենում այդ փաստին: «Ամենասարսափելին է, ինչ տեղի է ունենում այս Համաշխարհային պատերազմում»,— ասաց ինձ մեր դիվանագետներից մեկը,— «նաև այն, թե ինչպես են դրան արձա-

¹³ Տե՛ս Հոսֆելդ Ռոլֆ, Յոհաննես Լեփսիուս՝ գերմանական բացառություն: Հայոց Ցեղասպանությունը. մարդասիրություն և մարդու իրավունքներ, Գյոթինգեն, 2013:

զանքում»:¹⁴ Ինքնագրաքննությունը գերմանական լրատվամիջոցներում, ինչպես նաև գերմանական քաղաքական գործիչների գերիշխող լուրությունը բացատրվում է Օսմանյան կայսրության հետ դաշնակցային կապերին հավատարիմ մնալու ձգտումով:¹⁵ 1915 թվականի հոկտեմբերի 5-ին՝ Կոստանդնուպոլսից վերադառնալուց հետո, Լեփսիուսը Բեռլինի Ռայխսթագում կայացած մամուլի ասուլիսում մեղադրեց գերմանական կառավարությանը օսմանյան ղեկավարության ստրուկը լինելու մեջ և «Թուրքիայում հայ ժողովրդի վիճակի մասին» իր հողվածով փորձեց մոբիլիզացնել հանրությանը, ու այդ նպատակով մասնավոր ծախսերով տպագրեց այդ հողվածի քսան հազար հինգ հարյուր օրինակ: Գերմանիայի արտաքին գործերի նախարարության թուրքամետ աշխատակից Էռնստ Յեքը նախագգուշացրեց Լեփսիուսին. «չտարածել թուուցիկներ ու հանդես չգալ քարոզչական զեկույցներով», իսկ անձնագրային վարչությանը պարտադրեց արգելել նրա մուտքը Շվեյցարիա, որպեսզի վերջինս այնտեղ չշարունակի հակաքարոզչությունը»:¹⁶ 1916 թվականի օգոստոսի 7-ին Լեփսիուսի գրքույկն արգելվում է ռազմական գրաքննության կողմից, և Լեփսիուսը տեղափոխվում է չեզոք Հոլանդիա: Դեռևս Պոստդամում նա աշխատում էր իր հողվածի ֆրանսերեն թարգմանության վրա, որը լույս է տեսնում Փարիզում դեռ մինչև պատերազմի

¹⁴ Յոհաննես Լեփսիուսի նամակը Ալիս Լեփսիուսին: Օգոստոս, 1915, Պոստդամի Լեփսիուսի Տան արխիվ, թիվ ԼԱ 118–1320:

¹⁵ Տե՛ս Հոսֆելդ Ռոլֆ, Քրիստին Փշիխույց (Խմբ.), *Գերմանական Կայսրությունը և Հայոց ցեղասպանությունը*, Գյոթինգեն, 2017:

¹⁶ Էռնստ Յեքը՝ պետքարտուղար Արթուր Յիմերմանին, 1916 թ. հուլիսի 31, ԱԳՆ արխիվ, փաստաթուղթ ՊԱ – ԱԱ Ռ 14092:

ավարտը:¹⁷ 1918 թվականի սկզբին լույս է տեսնում նաև նիդերլանդերեն թարգմանությունը:¹⁸

Առաջին համաշխարհային պատերազմից հետո Լեփսիուսի ձայնը շարունակում էր շատ կարևոր մնալ «հայերի սարսափները» լսելի դարձնելու առումով: Վայմարյան Հանրապետությունում այդ թեման լայն քննարկումների նյութ է դառնում և ենթարկվում լրամշակման:¹⁹ Իր ստեղծած՝ *Օգնության կազմակերպության* «փլատակների» առջև կանգնած՝²⁰ Լեփսիուսը կյանքի վերջին տարիներին կենտրոնանում է հատկապես «հայ ժողովրդի նորագույն պատմության արխիվ» ստեղծելու և «Պոտսդամում հայկական ակադեմիա» հիմնադրելու գաղափարների վրա: Այդ ակադեմիան պետք է խթաներ գերմանա-հայկական գիտական փոխանակումները, և այդտեղ գիտնականներն ու ուսանողները պետք է ոչ միայն համատեղ սովորեին, այլև համատեղ ապրեին:²¹ Արդեն այդ նպատակով առանձնացված տարածքներ էին նախատեսված Պոտսդամի Վիլա Հենքելում, իսկ դրա կահավորման պլանները Լեփսիուսը նախագծել էր դեռևս 1925 թվականի ուշ աշնանը, երբ

¹⁷ Rapport secret du Dr Johannes Lepsius, Président de la Deutsche Orient-Mission et de la Société GermanoArmenénienne sur les massacres d' Arménie, Paris 1918. / Արևելքի միսիոների և Գերմանահայ ընկերության նախագահ դոկտոր Յոհաննես Լեփսիուսի գաղտնի զեկույցը Հայաստանի ջարդերի մասին, Փարիզ, 1918/:

¹⁸ Marteling der Armeniers in Turkije naar berichten van ooggetuigen. Uitgegeven door het Nederlandsch comité tot hulpbetoon aan de noodlijdende Armeniers, Haarlem 1918. /Թուրքիայում հայերի խոշտանգումներն ըստ ականատեսների, հրատարակված է Նիդերլանդների՝ Հիվանդ հայերին օգնելու կոմիտեի կողմից, Հադլեմ, 1918/:

¹⁹ Իհիզ Ստեֆան, Ցեղասպանության արդարացումը Բիսմարկից մինչև Հիտլեր, Հադվարդ, 2016 /անգլ./:

²⁰ Այդ մասին մանրամասն տե՛ս Աշոտ Հայրունու նշված գիրքը, էջ 272–330:

²¹ Մայսներ Աբսել, Հայկական ակադեմիան Պոտսդամում: Աննա Բրիսկինա-Մյուլլեր, Արմենուի Դրոստ-Աբգարյան, Խոսք՝ երկխոսության մեջ: Խոսք՝ Հերման Գուլցի հիշատակին, Բեռլին, 2011, էջ 231–244:

բուժման նպատակով գտնվում էր Մեռանոյում: Այդ պլաններն իրականություն չէին կարող դառնալ, քանի որ 1926 թվականի փետրվարի 3-ին Յոհաննես Լեփսիուսը մահանում է Մեռանոյում:

Լեփսիուսի Տունը Պոտսդամում

Լեփսիուսի գործունեության արդյունքները և նրա ողջ ավանդը մոռացության մատնվելու սպառնալիքի տակ էին՝ նրա խարխլված տան հետ միասին, որը Երկրորդ համաշխարհային պատերազմի վերջից մինչև 1990-ական թվականների սկիզբը օգտագործվում էր Խորհրդային բանակի կողմից որպես ռազմական դրամարկո: Սակայն 1999 թվականի մարտի 31-ին Պոտսդամի քաղաքացիները, ինչպես նաև գերմանական ու հայկական եկեղեցիների շահագրգիռ անձինք Պոտսդամում համատեղ ստեղծեցին աջակիցների գիտական ու հասարակական միավորում՝ *Լեփսիուսի Տուն*, որպեսզի պահպանեն այդ անվանի գործչի տունը և այն արժանավայել տեսքի բերեն: Այդ գործին, որպես գլխավոր պատասխանատուներից մեկը, լծվեց Հերման Գոլցը, որը դրա հիմնադիր անդամներից մեկն էր և Միավորման նախագահության երկարամյա անդամը, սրտացավ նախաձեռնողը: Դեռևս 1970-ական թվականների վերջում նա սկսել էր հավաքել ու դասակարգել Յոհաննես Լեփսիուսի գրական ժառանգությունը, իսկ 1981 թվականին Հալլե-Վիթենբերգ համալսարանի աստվածաբանական ֆակուլտետում հիմնեց հայագիտական-աստվածաբանական կենտրոն, որտեղ մինչ Պոտսդամ տեղափոխումը պետք է պահվեր նաև արխիվը:

Պոտսդամի *Տան* սեփականատիրոջ՝ «Պրուսական պալատների և այգիների» հիմնադրամի հետ սերտ համագործակցությամբ 2002 թվականից սկսվեց Լեփսիուսի հին տան վերանորոգու-

մը, իսկ ներքին ձևավորումն ու կահավորումը՝ համաձայն մինչև 1945 թ. եղած հատակագծի, հանձնարարվել էր Միավորմանը:

2005 թվականին՝ Ցեղասպանության 90-րդ տարելիցին, Բունդեսթագը բանաձև ընդունեց, որով բացահայտորեն դատապարտվում էր Առաջին համաշխարհային պատերազմում հայերի հալածանքն ու սպանությունները: Բանաձևը նաև պարունակում էր Գերմանիայի համատեղ պատասխանատվության ճանաչումը:²² Միաժամանակ Բունդեսթագը որոշեց մոռացության ստվերից դուրս բերել Յոհաննես Լեփսիուսի կյանքն ու գործը: *Լեփսիուսի Տան* կողմից Դաշնային կառավարությանը դիմելուց հետո 2007 թ. վերջին դրամաշնորհ տրվեց *Տան* ներքին ձևավորման ու ծրագրային աշխատանքի մեկնարկի ֆինանսավորման համար: Այս որոշմանը դիմադրեցին թուրքական որոշ միությունների: Եղան բողոքի նոտաներ, սակայն դրանք ֆինանսավորման վրա ազդեցություն չունեցան: 2009 թվականին հնարավոր եղավ սկսել ներքին հարդարման աշխատանքները, որոնք ավարտվեցին 2011 թվականի սկզբին: Այդ ընթացքում միջոցառումները անցկացվում էին *Լեփսիուսի Տան* հարևանությամբ գտնվող շենքերում:

2011 թվականի մայիսի 2-ին աշխատանքները վերջապես ավարտվեցին: Շուրջ երկու հարյուր միջազգային հյուրերի ներկայությամբ *Տունը* պաշտոնապես բացվեց այն ժամանակվա մշակույթի պետական նախարար Բերնդ Նոյմանի կողմից: Այդ ժամանակից ի վեր այն բաց է բոլոր հետաքրքրված քաղաքացիների համար, և այն իր ծրագրով ներկայանում է որպես հետազոտությունների ու հանդիպումների վայր, որը եզակի է Գերմանիայում

²² Այս բանաձևի բարդ ծագումնաբանության մասին տե՛ս Անդրե Ֆլեք, Սփյուռքի ուժային գործոն: Հայկական շահերի ներկայացուցչությունը Գերմանիայում, Բեռլին, 2014, էջ 215–249:

ու Եվրոպայում, որը հիշեցնում է 20-րդ դարի բռնության պատմության հենց սկզբի իրադարձությունների մասին:²³ Հետազոտական ու կրթական հետաքրքրությունը վերաբերում է «Հայկական աղետին»՝ 1915–1916 թթ. Ցեղասպանությանը և դրա բազմազան համատեքստերին՝ հատկապես կապված Գերմանական կայսրության դերի հետ: Դրանց թվում կարևոր ասպեկտ է 19-րդ և 20-րդ դարերի ազգայնացման գործընթացներում բռնության ներուժը, որի միջոցով կարելի է վերականգնել նաև այն համալիր խնդիրների հետ կապը, որոնք այսօր էլ հրատապ են, օրինակ, Մերձավոր Արևելքի տարբեր շրջաններում և այդտեղ ապրող (հիմնականում քրիստոնյա) փոքրամասնությունների համար: Հայերի պատմական օրինակի ուսումնասիրությունը ելակետ է նաև «Ցեղասպանության ուսումնասիրության» ոլորտում համեմատական վերլուծությունների համար, որոնք մշակվում են միջառարկայական նախագծերում ու գիտաժողովներում՝ *Լեխիստուսի Տան* հետ համատեղ կատարվող հետազոտությունների հիման վրա: Ռոլֆ Հոսֆելդի տասնամյա գիտական ղեկավարությամբ Պոտսդամի *Լեխիստուսի Տունը* նպատակային հետազոտություններ է իրականացրել այս թեմատիկ ոլորտների վերաբերյալ:

Տան բացումից ի վեր միջազգային բազմաթիվ գիտաժողովներ ու սեմինարներ են տեղի ունեցել, որոնք փաստագրում են այդ ուղղվածությունը. «Ներթուրքական քննարկումները 1915–1916 թթ. իրադարձությունների վերաբերյալ» (2011), «Ցեղասպանության հարցերով հարկադրական տրիբունալից մինչև Միջազգային քրեական դատարան. միջազգային իրավունքի զարգացումը սկսած 1921 թվականին սպանություն գոր-

²³ *Լեխիստուսի Տունը* ֆինանսավորվում է Պոտսդամ քաղաքի և Բրանդենբուրգ երկրամասի գիտության, հետազոտության և մշակույթի նախարարության կողմից:

ծած Սողոմոն Թեհլիրյանի բեռլինյան դատավարությունից» (2011), «Յոհաննես Լեփսիուս, գերմանական բացառություն» (2012), «Ցեղասպանություն և գրականություն. Ֆրանց Վերֆելը՝ հայ-հրեա-թուրք-գերմանական տեսանկյունից» (2013), «Ժամանակակից փիլիսոփայական և սոցիոլոգիական մոտեցումները Ցեղասպանության հարցերին» (2013) և «Ո՛ւր է գնում Մերձավոր Արևելքը. Էթնոկրոնական փոքրամասնությունները՝ հալածանքների և ինքնահաստատման միջև» (2014), «Դարի հանցագործության վկան. Գերմանական կայսրությունը և հայերի Ցեղասպանությունը» (2015), «Ադետ և Շոահ. ցեղասպանությունների դարը» (2015), «Անվերջ բռնության պատմություն. Կովկասում Էթնոքաղաքական հակամարտությունների պատճառները սկսած 18-րդ դարից» (2016), «Ժողովրդագրական հայեցակարգեր, ազգաբնակչության բաղադրականություն, ցեղասպանություն. Առաջին համաշխարհային պատերազմը՝ որպես ընդմիջում» (2016), «Զանգվածային բռնություն Հարավարևելյան Եվրոպայում. 20-րդ դարից մինչ օրս» (2017), «Անցյալը ներկայում. եվրոպական մոտեցումները Հայոց ցեղասպանությանը» (2017), «Թալեաթ փաշա՝ ժամանակակից Թուրքիայի հայր, Ցեղասպանության ճարտարապետ» (2018), «Առաջին համաշխարհային պատերազմից հետո հավաքական ինքնորոշման ձևերը» (2018), «Երեսուն տարիների ցեղասպանություն. Թուրքիայի կողմից իր քրիստոնյա փոքրամասնությունների ոչնչացման վերազնահատում, 1894–1924» (2019), «Հայ Սփյուռքի պատմությունն ու կենսամիջավայրը. հայացքներ միջնադարից մինչև մեր օրերը» (2019), «Բռնության համակցություններ. մեթոդաբանական նկատառումներ ու թեմատիկ հետազոտություններ Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում և դրանից հետո բռնության ձևերի փոփոխության ու շարունակականության վերաբերյալ» (2019), «Ո՛ւր է գնում Մեր-

ձավոր Արևելքը. քաղաքական շահերը և կարգի հայեցակարգը հակամարտություններում» (2019), «Ցեղասպանությունը Մերձավոր Արևելքում՝ դիտված գենդերային ոսպնյակով» (2020), «Ցեղասպանություն, զանգվածային բռնություն և միջազգային արդարադատություն 1919 թվականից հետո» (2021), «Ցեղասպանությունը՝ մշակութային իրավունքների ոսպնյակով» (2021): Այս և դրանց հարող գիտական միջոցառումների արդյունքում լույս տեսան բազմաթիվ հրապարակումներ:

Հայերի օրինակը նաև հնարավորություն է տալիս համեմատական հարթության մեջ լուսաբանելու ինքնության քաղաքականության և ժխտողականության՝ որպես ցեղասպանության շարունակության հարցերը՝ անցյալի խնդիրները վերանայելու և հաշտեցման գործընթացներում Ցեղասպանության ճանաչման քաղաքական ու հասարակական նշանակությունը կարևորելու համար: Օտար, ինչպես նաև սեփական մշակութային ինքնությունն իմանալն օգնում է ճանաչելու մեր ընդհանրությունները և բաց, հանդուրժող ու կառուցողական կերպով մոտենալու եղած տարբերությունների խնդիրներին: Յոհաննես Լեփսիուսը նույնպես ձեռք բերեց այս ճանաչումը՝ վերապրելով հայերի ճակատագիրն ու ցավակից լինելով դրան: Եվ հենց այդ պատճառով 20-րդ դարի եվրոպական առաջին Ցեղասպանության միջազգային այս կարևորագույն վկայի, պատմաբանի և վավերագրողի, ինչպես նաև Օսմանյան կայսրությունում մասնավոր նվիրատվություններից ֆինանսավորվող *Հայկական օգնության* լայնածավալ կազմակերպության նախաձեռնողի ու առաջնորդի կյանքի, աշխատանքի և ազդեցության ուսումնասիրությունը առանձնահատուկ դեր է խաղում:

Այդ ճանապարհին առաջին կարևոր քայլ կարող է լինել Ռոլֆ Հոսֆելդի հրատարակած *«Յոհաննես Լեփսիուս՝ գերմանական*

բացառություն: Հայոց Ցեղասպանությունը, մարդասիրությունը և մարդու իրավունքները» (2013) ժողովածուն, որտեղ հեղինակների միջազգային խումբը ուսումնասիրում է *Տան* անունը կրողի բազմակողմանի գործունեությունը, և դա կապում քաղաքացիական արիության և միջազգային քաղաքական էթիկայի ու իրավակարգի հարցերի հետ:²⁴

Ելնելով դրանից՝ *Տան* աշխատանքը բացում է այլ թեմատիկ ոլորտներ, ինչպիսիք են ազգայնականության, էթնիկ պատկանելության և բռնի քաղաքականության միջև եղած կապերը, հայերի պատմությունն ու մշակույթը, «հեռավոր Եվրոպան» Անդրկովկասում, միջմշակութային ու միջկրոնական երկխոսությունը, ինչպես նաև մարդու իրավունքների խնդիրը, միջազգային իրավունքն ու հիշողության քաղաքականությունը մինչև այսօր: Միննույն ժամանակ ժամանակակից խնդիրների նկատմամբ բաց լինելը հնարավորություն է տալիս դիտարկելու *Տունը* որպես մի վայր, որտեղ կարող են անցկացվել միջոցառումներ՝ ուղղված հանրության քաղաքական կրթությանը: Այս նպատակին է ծառայում *Լեփսիուսի Տան* ընթացիկ ծրագրի մի մասը, որն իրեն պարտավորված է զգում միջազգային քաղաքական էթիկայի և մշակույթների ու կրոնների միջև երկխոսության խնդիրներին մոտենալ Յոհաննես Լեփսիուսի ոգով: Սա նաև կանոնավոր աշխատանք է ներառում Հայոց ցեղասպանության թեմայով դպրոցական դասարանների հետ և ուսուցիչների վերապատրաստման դասընթացների համար, ինչպես նաև հատուկ մշակված դիդակտիկ նյութեր է ընդգրկում:

Առաջին հարկում գործող մշտական ցուցասրահը՝ *Օգնության կազմակերպության* աշխատանքների վերաբերյալ փաստաթղթե-

²⁴ Յոհաննես Լեփսիուսի համապարփակ ամբողջական կենսագրությունը դեռևս ցանկություն է:

րով և Յեղասպանությունը պատկերող նկարներով, տեղեկություններ և տպավորություններ է ներկայացնում Յոհաննես Լեփսիուսի կյանքի և գործունեության մասին «Հայկական աղետի» նորագույն պատմության համատեքստում: Մասնավոր կալվածքը և ընդարձակ գրադարանը՝ շուրջ 6500 մամուլի միավորներով, գտնվում են վերին հարկում և հասանելի են գիտական աշխատանքի, բայց նաև հանրության համար: *Լեփսիուսի Տան* այսօրվա արխիվի հիմնաքարը դեռևս 1998–2001 թվականներին «Ֆոլքսվագեն» հիմնադրամի «Յոհաննես–Լեփսիուս–արխիվի թեմատիկ–առարկայական մշակումը» նախագծի շրջանակներում դրել են Հերման Գոլցն ու Աքսել Մայսները: 2022 թվականից նախատեսվում է փուլայի սկզբունքով թվայնացնել արխիվը և դրա համապատասխան տեխնիկա ապահովել:

Լեփսիուսի Տան աշխատանքը տեղի է ունենում կայացած միջազգային գիտական ցանցում, քանի որ միայն պայմանագրերի վրա հիմնված սերտ համագործակցությունը Պոտսդամի համալսարանի փիլիսոփայության ֆակուլտետի, Երևանի պետական համալսարանի, Մոզես Մենդելսոնի Եվրոպական հրեական հետազոտությունների կենտրոնի, Հայկական բարեգործական ընդհանուր միության, Մյունխենի ազգերի իրավունքի և ռեզիոնալիզմի միջազգային ինստիտուտի կամ Էրլանգեն–Նյուրնբերգի Ֆրիդրիխ–Ալեքսանդր համալսարանի փիլիսոփայության և աստվածաբանության ֆակուլտետների հետ հնարավոր դարձրեց իրականացնելու վերոհիշյալ իրադարձությունները:

Առանձնահատուկ հիշատակման են արժանի վերջին երկու իրադարձությունները, որոնք լայն ազդեցություն ունեցան: Առաջինը Եվրոպական միության «Եվրոպան քաղաքացիների համար» ծրագրի կողմից ֆինանսավորվող «Գաղափարները և դրանց հետևանքները. ցեղասպանությունը և միջազգային

արդարադատությունը 1919 թվականից հետո»²⁵ նախագիծն է՝ Հայկական բարեգործական եվրոպական ընդհանուր միության, Հրեա ուսանողների եվրոպական միության և Ռոմա ազգության *Ֆիրեն Ամենկա* ՀԿ-ի հետ համագործակցությամբ: Միջազգային ակադեմիական գիտաժողովից հետո դրա դրույթները եվրոպական վեց քաղաքներում ներկայացվեցին ավելի լայն լսարանի: «Տեղեկատվական գրքույկն ու վեբ գրույցները» առցանց ցուցահանդեսը մուլտիմեդիա ձևով փաստագրում է աշխատանքների արդյունքները:

Երկրորդ՝ գրքի շնորհանդես Երևանի Ցեղասպանության թանգարան-ինստիտուտում. Ռուֆ Հոսֆելդի՝ Հայերի ցեղասպանության մասին լայնորեն ճանաչված մենագրության²⁶ հայերեն թարգմանությունը՝ Հարավային Կովկասի Կոնրադ Ադենաուեր հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ:

Առաջիկա տարիներին Պոտսդամի *Լեիսիուսի Տունը* կշարունակի Հերման Գուլցի և Ռուֆ Հոսֆելդի սկսած աշխատանքները: Ընթացքի մեջ է «Գերմանական հետազոտական հիմնադրամի» կողմից ֆինանսավորվող *Լեիսիուսի*՝ Հայկական հարցին վերաբերող ամենակարևոր աշխատությունների վերաբերյալ բազմամյա հրատարակչական նախագիծը: Ընդլայնվում են նաև գերմանա-հայկական ակադեմիական հարաբերությունները՝ Երևանի պետական համալսարանում ուսուցիչների վերապատրաստման նախագծով և հայ ուսանողների հետ ոչ մեծ սեմինարներով:

Լեիսիուսի Տան այսօրվա կարգախոսը հիմնված է *Լեիսիուսի Օգնության կազմակերպության* ավելի վաղ պատկերանշանի վրա: Այն պատկերում է փյունիկ թռչուն և արմավենու ձյունը՝ երկու

²⁵ Տե՛ս հետևյալ հղումով՝ www.genocideandjusticeafter1919.com:

²⁶ Հոսֆելդ Ռուֆ, *Մահ անապատում: Հայոց Ցեղասպանությունը*: Մյունխեն, 2015:

խորհրդանիշեր, որոնք փոխկապակցված են իմաստով ու լեզվով, և որոնք վկայում են տառապանքի ու մահվան, բայց և հարության մասին: Դրանք վերաբերում են հայերի Ցեղասպանությանը և մի *Տան* վերածննդին, որից մի օր սկիզբ առավ մարդասիրական ու հրապարակախոսական տպավորիչ գործունեությունը՝ ընդդեմ մարդկության դեմ գործած մեծ հանցագործության: Եվ այսօր շատ կարևոր է շարունակել այս պատմական ժառանգությունը:

Բանալի բառեր՝ Լեփսիուս, Գերմանական կայսրություն, Օսմանյան կայսրություն, մարդասիրություն, ցեղասպանություն, ցուցահանդես, կրթական աշխատանք, գրադարան, Բունդեսթագ, Ռոլֆ Հոսֆելդ, Հերման Գոլց

Երկկողմ հարաբերությունների զարգացումը Հայաստանի և Գերմանիայի միջև

Մարտին Թովմասյան

1991 թ. սեպտեմբերի 21-ին հայ ժողովուրդը համաժողովրդական հանրաքվեի միջոցով հռչակեց իր անկախությունը՝ դուրս գալով Խորհրդային Միության կազմից:²⁷ Չուշացավ Հայաստանի Հանրապետության անկախության ձանաչման գործընթացը: Մի քանի ամիսների ընթացքում Հայաստանը ձանաչվեց միջազգային հարաբերությունների սուվերեն սուբյեկտների մեծ մասի կողմից, իսկ 1992 թ. մարտին դարձավ ՄԱԿ անդամ պետություն՝ ապահովելով պետությունների համաշխարհային ընտանիքի լիիրավ անդամի իր տեղը:

Արմատապես փոխվեց Հայաստանի Հանրապետության արտաքին հարաբերությունների բնույթն ու ուղղվածությունը: Տասնամյակների ընդմիջումից հետո սկիզբ դրվեց Հայաստանի արտաքին քաղաքականությանն ու դիվանագիտական գործունեությանը: Շատ կարճ ժամանակաշրջանում Հայաստանի Հանրապետության համար ստեղծվեց որակական բոլորովին նոր կարգավիճակ: Այն ձեռք բերեց լիակատար քաղաքական անկախություն, դարձավ միջազգային իրավունքի սուբյեկտ և իր տեղը գրադեցրեց ժողովուրդների իրավահավասար ընտանիքում:²⁸

²⁷ St'ın Armenier Stimmen für Unabhängigkeit, Süddeutsche Zeitung, München, 23.11.1991:

²⁸ Հայաստանի ազգային արխիվ, Ֆոնդ 326, Ցուցակ 9, Գործ 68:

1988 թ. դեկտեմբերի ավերիչ երկրաշարժից դեռևս ուշքի չեկած, սակայն անկախության զգացումներով ոգևորված, բայց դեռևս չպատկերացնելով անկախությանը հաջորդող տնտեսական ծանր վիճակը և «էներգետիկ սովը», Հայաստանը, այնուամենայնիվ, հաստատվեց միջազգային հարաբերությունների հարթակում որպես ինքնիշխան պետություն՝ ունենալով ապագայի վերաբերյալ որոշակի տեսլական: Սակայն այդ ամենին միացավ Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը, որն էլ ավելի էր սրում ժողովրդի սոցիալ-տնտեսական արդեն իսկ ծանր վիճակը: Ուստի՝ անկախության առաջին տարիները գնահատելիս մի շարք վերլուծաբաններ կարծում էին, որ Հայաստանը պետք է լիներ նախաձեռնողական արտաքին քաղաքականության ոլորտում: Սակայն բերված պատճառները թույլ են տալիս ի սկզբանե եզրակացնելու, որ Հայաստանը քիչ հնարավորություններ ուներ ինչ-որ կտրուկ քայլեր ձեռնարկելու, չնայած, հաշվի առնելով ստեղծված դրությունը, բավականին քայլեր կատարեց իր արտաքին կոմպլեմենտար քաղաքականությունը միջազգային հանրությանը ներկայացնելու առումով: Եթե նախկին խորհրդային մի շարք հանրապետությունների առջև ծառացած էր միայն պետականություն հաստատելու խնդիրը, ապա Հայաստանի համար կային բազում խնդիրներ, ուստի, խոսելով հայ-գերմանական հարաբերությունների մասին, հարկ ենք համարում շեշտել, որ երկկողմ հարաբերությունների առաջին տարիները չեն ունեցել որակական մեծ տեղաշարժեր՝ չնայած երկկողմ շփումներն արդեն իսկ դիվանագիտական հարաբերությունների հաստատման հետ մեկտեղ սկսեցին իրենց բնականոն հունով ընթանալ:

Արևմտյան Եվրոպայի երկրների հետ Հայաստանի երկկողմ հարաբերությունները կառուցվում են՝ հաշվի առնելով Հայաստանի առջև ծառացած հետևյալ քաղաքական ու տնտեսական

նպատակները. երկրի անկախության ամրապնդում, ժողովրդավարական կառույցների ստեղծմանն աջակցություն, ԼՂ հակամարտության զարգացման տարբեր փուլերում այդ երկրների համապատասխան բարենպաստ դիրքորոշման ապահովում, եվրոպական կառույցներին Հայաստանի ինտեգրման օժանդակություն, տնտեսական համակարգի վերափոխմանը և նոր հասարակական հարաբերությունների ձևավորման օժանդակություն:¹ Սրանք այն հիմնական մոտեցումներն են, որոնք ընկած են Հայաստանի Հանրապետության երկկողմ արտաքին քաղաքականության ձևավորման գործընթացի հիմքերում:

Այս առումով Գերմանիայի Դաշնային Հանրապետության հետ հարաբերությունները կարևորվում էին ոչ միայն այն պատճառով, որ Գերմանիան տնտեսապես աշխարհի ամենադինամիկ զարգացող երկրներից մեկն է, այլ նաև Եվրոպական միության հիմնական դոնորներից ու եվրոպական ընտանիքում վճռական դերակատարություն ունեցող քաղաքական սուբյեկտներից է:

Հայաստանի անկախությունը, որն իր հետ բերեց նրա՝ որպես միջազգային հարաբերությունների սուբյեկտի ձանաչման, երկրի առջև բացեց իրական հնարավորություններ երկկողմանի կապեր հաստատելու Եվրոպայի պետությունների հետ՝ վերջնական նպատակ ունենալով ինտեգրվել եվրոպական քաղաքական, տնտեսական, մշակութային գործընթացների մեջ: Այս ոլորտներում համագործակցությունը բխում էր Հայաստանի Հանրապետության ազգային և պետական շահերից:

Գերմանիայում դեռ չկար միաձայն համաձայնություն Հայաստանի անկախությունը ձանաչելու վերաբերյալ: Հայաստանի անկախության ձանաչման հարցի հետ կապված Գերմանիայում 1991

¹ Տե՛ս Հայաստանի Հանրապետություն, 18 սեպտեմբեր, 1996 թ.:

թ. վերջին տեղի է ունեցել Քրիստոնեա-դեմոկրատական և Սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների ներկայացուցիչների հանդիպումը: Գերմանիայի քաղաքական կուսակցությունները միակարծիք էին, որ այդ քայլը շուտով տեղի է ունենալու, ինչի մասին Քրիստոնեա-դեմոկրատական կուսակցության պատգամավոր Ֆրիդրիխ Ֆոգելը և սոցիալ-դեմոկրատ Դիտրիխ Շպեռլինգը իրենց մտորումները կիսեցին Բոննում հայ պառլամենտական պատվիրակության հետ հանդիպման ժամանակ: Դիտրիխ Շպեռլինգը նշում էր, որ եթե ձանաչել էին Ուկրաինայի անկախությունը, ապա ոչ մի հիմք չկա ձգձգելու Հայաստանի անկախության ձանաչումը, քանի որ շուրջ երեք միլիոն բնակչություն ունեցող Հայաստանն ինքն է վճռել իր անկախությունը: Սակայն հիշեցնենք, որ ԽՍՀՄ-ը դեռ իրավաբանորեն գոյություն ուներ, ուստի այս հարցում պետք էր մի փոքր զգուշավորություն ցուցաբերել. Գերմանիայի կողմից այդ քայլը միայնակ անել հնարավոր չէր, և այդ հարցը պետք է քննարկվեր արևմտյան պետությունների հետ:²

Սակայն այս իրադարձությունները երկար սպասել չտվեցին, և 1991 թ. դեկտեմբերին Գերմանիայի Դաշնային Հանրապետությունը ձանաչեց Հայաստանի Հանրապետության անկախությունը, իսկ 1992 թ. հունվարի 31-ին հաստատվեցին դիվանագիտական հարաբերություններ:³

Գերմանիան ևս նոր էր անցել պետականության զարգացման հերթական փուլի միջով. 1989 թ. Գերմանիայի Դեմոկրատական Հանրապետությունը խաղաղ հեղաշրջման միջոցով մոտեցրեց գերմանական երկու պետությունների վերամիավորումը: Եվ ահա

² Stü Bonner Parteien für Anerkennung Armeniens, Süddeutsche Zeitung, München, 11.12.1991:

³ Stü հայտագրերի փոխանակում ԳԴՀ և ՀՀ միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատելու վերաբերյալ /31.01.1992/:

1990 թ. ամռանը Բեռլինում սկսվեցին վերամիավորման համաձայնագրի շուրջ խորհրդակցությունները: 1990 թ. հոկտեմբերի 3-ին Գերմանիայի Սահմանադրության 23-րդ հոդվածի համաձայն Գերմանիայի Դեմոկրատական Հանրապետությունը մտավ Գերմանիայի Դաշնային Հանրապետության կազմի մեջ: Եվ ինչպես Բեռլինի ֆիլիհարմոնիայում փայլուն կերպով հայտարարեց Գերմանիայի Դաշնային նախագահ Ռիչարդ Ֆոն Վայցզեկերը՝ «Պատմության մեջ առաջին անգամ եկել է այն օրը, երբ Գերմանիան իր երկարատև տեղն է գտնում Արևմտյան ժողովրդավարների շրջապատում»:⁴

Գերմանիան արևմտյան Եվրոպայի մյուս երկրների նման զգուշավորությամբ և մեծ հետաքրքրությամբ հետևում էր Խորհրդային Միության փլուզմանը: Գերմանիային մասնավորապես մտահոգում էր միջուկային զենքի խնդիրը: Սակայն ամենավտանգավորը տեղական հակամարտությունների միջազգայնացումն ու ընդլայնումն էր: Գերմանիայի կառավարությունը միշտ դրսևորել է հավասարակշռված դիրքորոշում՝ աջակցելով խաղաղ կարգավորման ցանկացած նախաձեռնություն:

1991 թ. դեկտեմբերին Գերմանիայի կողմից Հայաստանի պաշտոնական ձանաչմանը մեկ ամիս անց հաջորդեց երկու երկրների միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատումը, ինչից հետո սկզբնավորվեց հայ-գերմանական կապերի որակական նոր փուլ՝ միջպետական հարաբերությունների զարգացումը: 30-ամյա փոխհարաբերությունները, շարունակական վերընթաց զարգացում են ունեցել միջպետական մակարդակում և հա-

⁴ «Der Tag ist gekommen, an dem zum ersten Mal in der Geschichte das ganze Deutschland seinen dauerhaften Platz im Kreis der westlichen Demokratien findet» Tatsachen über Deutschland, Societäts-Verlag, Frankfurt am Main, in Zusammenarbeit mit dem Auswärtigen Amt, Berlin, 2007, S. 29.

սարակական–տնտեսական կյանքի բոլոր կարևոր ոլորտներում՝ ընդգրկելով համագործակցության նորանոր բնագավառներ: Երկկողմ համագործակցության շրջանակներում քաղաքական երկխոսությունը զգալիորեն զիջել է մշակութային, գիտա–կրթական, տնտեսական և ֆինանսական ոլորտներում համագործակցությանը:⁵ Մինչ 2022 թ. ներառյալ ստորագրված շուրջ 70 միջկառավարական և միջպետական իրավական փաստաթղթերի գերակշիռ մասը վերաբերում են հենց այդ բնագավառներին:⁶

Դիվանագիտական հարաբերությունների հաստատումից մինչև 2022 թ. Հայաստանի և Գերմանիայի միջև դեսպանների փոխանակությունը ընթացել է հետևյալ կերպ. 1992–1994 թթ. Հայաստանում Գերմանիայի դեսպանն էր Գյունթեր Դահլիոֆը, 1994 թ. նրան փոխարինեց դեսպան Նորբերթ Հայնցեն և պաշտոնավարեց մինչև 1996 թ.: 1996 թ.–ից մինչև 1999 թ. Հայաստանում Գերմանիայի դեսպանն էր Կարոլա Մյուլլեր–Հոլթբենփերը: 1999–2001 թթ. ՀՀ–ում ԳԴՀ դեսպանն էր Ֆոլքեր Զայցը: 2002–2004 թթ. Հանս–Վուլֆ Բարթելսն էր Հայաստանում ԳԴՀ դեսպանը, ում փոխարինեց Հայկե Ռենաթե Փայչը, ով Հայաստանում Գերմանիայի դեսպանի պարտականությունները կատարեց 2004–2007 թթ.: 2007–2009 թթ. ԳԴՀ դեսպանն էր Անդրեա Յոանա–Մարիա Վիկտորինը:⁷ 2009–2012 թթ. ԳԴՀ դեսպանն էր Հանս–Յոխեն Շմիդթը, 2012–2015 թթ. Ռայներ Մոռելը,

⁵ Տե՛ս Հուլազգիր. Հայ–գերմանական երկկողմ հարաբերությունները 1999 թ. ՀՀ ԱԳՆ նախարարության պատմադիվանագիտական արխիվ, Ցուցակ 6, Գործ 16:

⁶ Տե՛ս ՀՀ ԱԳՆ պաշտոնական կայքէջ, Իրավապայմանագրային դաշտ, <https://www.mfa.am/hy/bilateral-relations/de>, (վերջին մուտք՝ 01.07.2022):

⁷ Տե՛ս Հայաստանում Գերմանիայի Դաշնային Հանրապետության դեսպանության տրամադրած տեղեկատվությունը /01.10.2009/:

2015–2018 թթ. Մաթիաս Բիսպերը:⁸ 2019–2021 թթ. ՀՀ-ում ԳԴՀ դեսպանն էր դ-ր Միխայել Բանցհաֆը,⁹ իսկ արդեն 2021 թ-ից մինչ օրս ՀՀ ում ԳԴՀ արտակարգ և լիազոր դեսպանն է Վիկտոր Ռիխտերը:¹⁰ Մինչև 1994 թ. Հայաստանում Գերմանիայի դեսպանությունը հաստատվել էր Հրազդան հյուրանոցի 7-րդ հարկում, իսկ արդեն 1997 թ-ից ԳԴՀ դեսպանությունը հաստատվեց Չարենցի փողոցի թիվ 29 շենքում, որն էլ անվճար և անժամկետ օգտագործման հանձնվեց Գերմանիայի Դաշնային Հանրապետությանը:¹¹

Հայկական կողմը 1994 թ. Գերմանիայի Դաշնային Հանրապետություն ուղարկեց իր առաջին դեսպանին՝ դ-ր Ֆելիքս Մամիկոնյանին, որի նստավայրը վերամիավորված Գերմանիայում այն ժամանակվա դեռևս Դաշնային մայրաքաղաք Բոնն էր: 1995 թ. հունվարին Հայաստանի դեսպան Ֆելիքս Մամիկոնյանը պաշտոնապես հանձնեց հավատարմագրերը: Հայաստանի ներկայացուցչության հասցեն էր Վիկտորիայի փողոց 15, Բոնն, Բադ-Գոդեսբերգ (Viktoriastraße 15, Bonn Bad-Godesberg): 1998 թ-ին Բոննում դեսպան նշանակվեց դ-ր Աշոտ Ոսկանյանը:

⁸ Liste der deutschen Botschafter in Armenien, https://web.archive.org/web/20170308103634/http://www.eriwan.diplo.de:80/Vertretung/eriwan/de/01__Botschaft/Botschafter/Ahnengalerie.html, (վերջին մուտք՝ 05.10.2020).

⁹ Արմեն Սարգսյանն ընդունել է Գերմանիայի դեսպանին՝ Հայաստանում դիվանագիտական առաքելությունն ավարտելու առիթով (1lurer.am) /21.09.2021/:

¹⁰ ՀՀ-ում ԳԴՀ դեսպանության պաշտոնական կայքէջ, Botschafter Viktor Richter, <https://eriwan.diplo.de/am-de/botschaft/botschaftergrusswort-lebenslauf/1229654>, (վերջին մուտք՝ 08.08.2022):

¹¹ Տե՛ս ՀՀ կառավարության 1994 թ.-ի փետրվարի 7-ի թիվ 46 կարգադրությունը, ՀՀ ԱԳՆ 09.01.1997 թ., թիվ 7/1997 հայտագիրը, Երևանի քաղաքապետին հասցեագրված ՀՀ ԱԳ նախարարի 15.01.1997 թվակիր նամակը, ինչպես նաև Երևանի քաղաքապետի 17.02. 1997 թ. թիվ 138 որոշումը:

Դաշնային կառավարության նստավայրը Բոննից Բեռլին տեղափոխելու հետևանքով Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչությունը ևս տեղափոխվեց Բեռլին: Գերմանիայի Հայ առաքելական եկեղեցու ու Հայ ձեռնարկատերերի միության աջակցությամբ և Հայաստանի Հանրապետության ֆինանսավորմամբ 1999 թ. հոկտեմբերին միահամուռ ուժերով ձեռք բերվեց Բեռլինում ՀՀ դեսպանության առաջին շենքը: 1999 թ. հոկտեմբերից մինչև 2005 թ. նոյեմբեր ՀՀ դեսպանությունը գտնվում էր Հիլմանի փողոց 5, Բեռլին, Հերմանստրաֆ (Hilmannstraße 5, Berlin–Hermsdorf), որին Գերմանիայում բնակվող հայերը անվանում էին «Հայաստանի տուն» (Das Armenienhaus):

2002 թ. փետրվարին Կարինե Ղազինյանը ստանձնեց Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում արտակարգ և լիազոր դեսպանի պարտականությունները և պաշտոնավարեց մինչև 2009 թ.: 2009–2013 թթ. Բեռլինում ՀՀ դեսպանն էր Արմեն Մարտիրոսյանը, որին փոխարինեց Վահան Հովհաննիսյանը, սակայն 2014թ. ծանր հիվանդության հետևանքով դեսպան Հովհաննիսյանը մահացավ Բեռլինում:¹² 2015–2021 թթ. Բեռլինում ՀՀ դեսպանն էր Աշոտ Սմբատյանը, իսկ արդեն 2021 թ. նոյեմբերի 5–ին ԳԴՀ–ում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան է նշանակվել Վիկտոր Ենգիբարյանը:¹³

Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության պատվավոր հյուպատոսներն են՝

¹² Մահացել է Վահան Հովհաննիսյանը, <https://mediamax.am/am/news/society/12752/>, 28.12.2014:

¹³ ՀՀ ԱԳՆ պաշտոնական կայքէջ, Երկկողմ հարաբերություններ, Գերմանիա, ընդհանուր տեղեկություններ, <https://www.mfa.am/hy/bilateral-relations/de>, (վերջին մուտք՝ 14.08.2022):

Գյունթեր Պիլարսկի՝ Բադեն–Վյուրթեմբերգ երկրամաս, նստավայրը՝ ք. Կարլսռուհե, 2006 թ. սեպտեմբերից,

Միխայել Շմիդտ՝ Սաքսոնիա–Անհալթ երկրամաս, նստավայրը՝ ք. Մագդեբուրգ, 2017 թ. մայիսից,

Քրիստինե Զասսե, Բավարիա երկրամաս, նստավայրը՝ ք. Մյունխեն, 2019 թ. հուլիսից,

Հայկո Հեխտ, Համբուրգ երկրամաս, նստավայրը՝ ք. Համբուրգ, 2019 թ. հոկտեմբերից,

Աքսել Պլասս, Շլեզվիգ–Հոլշտայն երկրամաս, նստավայրը՝ Քիլ, 2020 թ. մայիսից,

Լուկաս Ֆլյոթեր, Հեսսեն երկրամաս, նստավայրը՝ Լայպցիգ, 2020 թ. նոյեմբերից:

2018 թ. հունվարից Հայաստանի Հանրապետությունում Գերմանիայի Դաշնային Հանրապետության պատվավոր հյուպատոսն է Ալեքսան Տեր–Մինասյանը (նստավայրը՝ ք. Գյումրի):¹⁴

2005 թ. նոյեմբերին Հայաստանի Հանրապետության դեսպանությունը տեղափոխվեց նոր դեսպանության շենք,¹⁵ որը գտնվում է Նուսսբաումալլե 4, Շարլոտենբուրգ, Բեռլին հասցեում (Nussbaumallee 4, Charlottenburg, Berlin):¹⁶ 2005 թ. հոկտեմբերին դեսպան Կարինե Ղազինյանը՝ որպես ՀՀ լիազոր ներկայացուցիչ, նոտարով հաստատեց ու կնքեց գնման պայմանագիրը:¹⁷ Դեսպանության շենքի պաշտոնական բացմանը ներկա էր նաև

¹⁴ Նույն տեղում:

¹⁵ Այդ վիլան կառուցվել է 1903 թ.: 1983–1988 թթ. վիլան դատարկ է եղել և չի խնամվել, իսկ արդեն 1988 թ. շինարար ձեռնարկատեր Ինգո Վագները ձեռք բերեց այն: 1994–1998 թթ. շենքը լիովին վերանորոգվեց տոսկանական ոճով:

¹⁶ ԳԴՀ–ում ՀՀ դեսպանության պաշտոնական կայք էջ <http://www.botschaft-armenien.de/botschaft/botschaftshaus.htm>, հասանելի՝ 20.01.2010:

¹⁷ Նույն տեղում:

Հայաստանի Հանրապետության նախագահ Ռոբերտ Քոչարյանը: Դեսպանության նոր շենքի բացման արարողության ժամանակ ՀՀ արտաքին գործերի նախարար Վարդան Օսկանյանը նշեց. «Դեսպանության շենքը Գերմանիայում ներկայացնում է Հայաստանը, որ պետք է այն պատշաճ լինի և երկիրը և համայնքը ներկայացնելու համար, և սրանով մենք հաստատում ենք մեր անկախ պետականության գոյությունն ու ներկայությունը»: Բացմանը ներկա էր նաև Բունդեսթագի նախագահ Նորբերտ Լամմերտը, ով հանդես եկավ ողջույնի խոսքով:¹⁸

Հայաստանի ու Գերմանիայի միջև քաղաքական հարաբերությունները գնահատվում են լավ: Գերմանիան խրախուսում և աջակցում է Հայաստանին ԵՄ և ՆԱՏՕ– ի հետ ավելի սերտ գործակցության համար:¹⁹

Հայ–գերմանական բարձր մակարդակով պաշտոնական փոխալոցությունները ընդհանուր առմամբ սահմանափակ են եղել՝ ի տարբերություն միջխորհրդարանական ակտիվ փոխադարձ շփումների:²⁰ Մի կողմից դա բացատրվում է Հայաստանի իշխանությունների քաղաքականությամբ, Գերմանիայի առաջարկություններն օգտագործելու նրանց անպատրաստությամբ, իսկ մյուս կողմից, հաշվի առնելով ստեղծված ներքաղաքական, արտաքին քաղաքական ու ֆինանսական ծանր իրավիճակը Հայաստանում, հաճախ նաև հնարավորությունների սղությամբ:

¹⁸ Տե՛ս Հայաստանի Հանրապետություն, 02.03.2006:

¹⁹ Տե՛ս ԳԴՀ արտաքին գործերի նախարարության պաշտոնական կայքէջ, Politische Beziehungen, <http://www.auswaertigesamt.de/diplo/de/Laenderinformationen/Armenien/Bilateral.html>, (հասանելի՝ 10.10.2009):

²⁰ Տե՛ս Հայաստանի Հանրապետություն, 22.06.2004:

Մենք ժամանակ կորցրինք, քանի որ հարաբերությունների հենց հաստատման առաջին տարիներից էր զգացվում Գերմանիայում Հայաստանի դեսպանության անհրաժեշտությունը:

Դեռևս հարաբերությունների առաջին տարիներին հատկանշական էր, որ Հայաստանը նշում էր Գերմանիայի Հեսսեն երկրամասի հետ համագործակցելու պատրաստակամության մասին: Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Դավիթ Վարդանյանը, ով 1991 թ. դեկտեմբերին գլխավորում էր Հայաստանի խորհրդարանական պատվիրակությունը Հեսսեն, այցելության ժամանակ կարևորում էր, որ ժողովրդավարական իշխանության համակարգերի ձևավորման և ձեռնարկությունների սեփականաշնորհման ճանապարհին Հեսսենի փորձը, որը կարող էր օգտակար լինել Հայաստանի համար: Այս պատվիրակությունը հայկական առաջին լեգիտիմ պատվիրակություն էր Գերմանիայի Հեսսեն երկրամասում:²¹

Հայ-գերմանական հարաբերությունների հաստատման սկզբնական շրջանում կարևորում ենք առանձին պետական և հասարակական գործիչների հետ հանդիպումները: Անկախությունից առաջ ու անկախության հռչակումից ի վեր պարբերաբար Հայաստան էր այցելում ԳԴՀ Հեսսեն երկրամասի «Արևմտյան Գերմանիա-Խորհրդային Միություն» ընկերության նախագահ, մինչև 1998 թ. Գերմանիայի Բունդեսթագի պատգամավոր, սոցիալ-դեմոկրատական կուսակցության անդամ Դիտրիխ Շպեռլինգը:²² Շպեռլինգը մասնակցել էր նաև Հայաստանում անկախության հանրաքվեին՝ դիտորդի կարգավիճակով: 1992 թ. Հա-

²¹ St 'u Frankfurter Rundschau, 05.12.1991:

²² St 'u ԱԳՆ պատմադիվանագիտական արխիվ, Գործ 16, Ցուցակ 6, էջ 23:

յաստան այցելության ժամանակ նա մի շարք հանդիպումներ ունեցավ հայ քաղաքական շրջանակների հետ: 1992 թ. օգոստոսի 18-ին ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալ Գևորգ Ղազինյանի հետ զրույցի ժամանակ Շպեռլինգը նշեց, որ այցի նպատակն էր աջակցել Լեոնային Ղարաբաղի հակամարտության լուծման առաջընթացին: Հայ-գերմանական հարաբերությունների զարգացման գործին, ըստ Շպեռլինգի, կնպաստեր ժամանակավոր հավատարմատար Վոլֆգանգ Բոնթի Երևան ժամանումը: Նա շեշտել է նաև Գերմանիայում Հայաստանի պաշտոնական ներկայացուցիչ ունենալու և Հայաստանում հայ-գերմանական մշակութային միություն ստեղծելու անհրաժեշտությունը: Այդ միությունը, ըստ նրա, Հայաստանում կհամախմբեր գերմաներեն լեզվով զբաղվողներին:²³ Նման հանդիպումները կարևոր էին հայ-գերմանական երկխոսության խորացման առումով:

Հարաբերությունների հաստատման առաջին իսկ տարում Հայաստանում էր Գերմանիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցության Խորհրդարանական խմբակցության նախագահ Հանս-Յոխեն Ֆոգելը, ով 1992 թ. մարտի 2-ին հանդիպում ունեցավ Հայաստանի նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի հետ: ՀՀ նախագահին ընդգծեց համակողմանի փոխշահավետ կապեր հաստատելու կարևորությունը: Այստեղ հետաքրքրական էր Լևոն Տեր-Պետրոսյանի դիտարկումները նախկին Խորհրդային Միության փլուզումից հետո Անկախ պետությունների համագործակցության շրջանակներում դիտվող քաղաքական գործընթացների վերաբերյալ, Լեոնային Ղարաբաղում ստեղծված իրավիճակի և հիմնահարցի խաղաղ կարգավորման հնարավորությունների մասին: Հանրապետության նախագահը նշեց, որ ժողովուրդնե-

²³ Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ, Ֆոնդ 326, Ցուցակ 9, Գործ 84, էջ 21–24:

րի պայքարի գնով ձեռք բերված ժողովրդավարական նվաճումների համար վտանգը սոցիալական լարվածության չթուլացող աճն էր, և եթե չհաջողվի կարճ ժամկետում բավարարել բնակչության նվազագույն պահանջները, չէր բացառվում ԱՊՀ անդամ բոլոր պետություններում դժգոհության ալիքի վրա քաղաքական արկածախնդիրների և դեմագոգների հրապարակ իջնելը, որը մեծ վտանգ կարող էր լինել ոչ միայն այդ հանրապետությունների հետագա ճակատագրերի, այլև Եվրոպական պետությունների ու միջազգային հանրության համար:²⁴ Այս հանդիպման ընթացքում նախագահ Տեր-Պետրոսյանը դիվանագիտորեն փորձեց ներկայացնել Հայաստանում տիրող սոցիալական խնդիրները՝ ակնկալելով գերմանական կողմի արձագանքները:

Արդեն 1992 թ. Հայաստանում էր Գերմանիայի գործերի հավատարմատար Վոլֆգանգ Բոեթը, ով պարբերաբար հանդիպումներ էր ունենում Հայաստանի տարբեր քաղաքական, հասարակական գործիչների և պաշտոնատար անձանց հետ: Հանդիպումների հիմնական նպատակը համակողմանի տեղեկատվություն ունենալն էր, որին սպասում էին Գերմանիայում, և որն էլ իր հերթին Գերմանիային հնարավորություն կտար ավելի ստույգ և հավաստի տեղեկատվություն ունենալու Հարավային Կովկասի տարածաշրջանից, այս դեպքում՝ Հայաստանից:

Հատկապես հետաքրքրական են Վ. Բոեթի և Հայաստանի արտաքին գործերի նախարարի տեղակալ Գևորգ Ղազինյանի հետ ունեցած 1992 թ. սեպտեմբերի 15-ի գրույցի մանրամասները: Վ. Բոեթը լավատեսությամբ էր մոտենում գերմանա-հայկա-

²⁴ Տե՛ս Հայաստանի Հանրապետություն, 03.03.1992, էջ 1:

կան համագործակցությանը՝ ընդգծելով այդ հարցում դեսպանության առկայության կարևորությունը:²⁵

Այս հանդիպումից պարզորոշ երևում էր՝ գերմանական կողմը նկատում էր, որ դիվանագիտության տեսանկյունից որոշ հարցերի քննարկման ժամանակ հայկական կողմը երբեմն անպատրաստվածության տպավորություն էր թողնում, ինչը, սակայն, բնական էր մի պետության համար, որը շուրջ յոթանասուն տարի ինքնուրույն արտաքին քաղաքականություն չէր վարել՝ դե ֆակտո երկար տարիներ զրկված լինելով անկախությունից: Երկկողմ բանակցությունների օրակարգում զգացվում էր հայկական կողմի հետևողական վերաբերմունքը Ղարաբաղյան հակամարտության կարգավորման հարցում՝ շեշտը դնելով ազգերի ինքնորոշման սկզբունքի վրա և տեղեկացնելով Ղարաբաղյան հակամարտության իրական պատկերը, որն ամեն կերպ փորձում էր խեղաթյուրել ադրբեջանական կողմը:

Հայ-գերմանական երկկողմ քաղաքական շփումների ձևավորման փուլում կարևոր նշանակություն ուներ նաև ռուսական գործոնը: ԽՍՀՄ-ը փլուզվել էր, և նոր աշխարհակարգի հաստատման հետ մեկտեղ Ռուսաստանը պետք է փորձեր իր ավանդական ազդեցության գոտիները մշտական ուշադրության տակ պահել: Սահմանափակ ռեսուրսներ ունեցող Հայաստանի համար շատ դժվար էր մանևրել արտաքին քաղաքականության մեջ, սակայն պաշտոնական Երևանին որոշ չափով հաջողվել էր կոմպլեմենտար արտաքին քաղաքական կուրս կառուցել: Հարկավոր էր ընդունել ստեղծված իրավիճակի պայմանները և արտաքին ու անվտանգության քաղաքականություն իրականացնելիս հնարա-

²⁵ Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ, Ֆոնդ 326, Ցուցակ 9, Գործ 84:

վորինս փորձել օգտվել «սահմանափակ շարժման» ազատություն-
նից:

Ինչպես գերմանական պարբերականներից մեկն է իրավա-
ցիորեն պնդում, Հարավային Կովկասի երկրները արտաքին քա-
ղաքականության շատ տարբերվող մոտեցումներ ունեին: Վրաս-
տանն ի սկզբանե առավելությունը տվեց արևմտյան ինտեգրա-
ցիոն կուրսին և ԱՄՆ հետ հարաբերությունների զարգացմանը:
Ադրբեջանը փորձում էր չեզոքության ստատուսի շրջանակներում
կառուցել իր արտաքին քաղաքականությունը, իհարկե, հաշվի
առնելով Թուրքիայի հետ իր հարաբերությունների առանձնա-
հատկությունները: Իսկ Հայաստանը, ինչպես ավանդաբար, հիմ-
նականում կողմնորոշված էր դեպի Ռուսաստան. պաշտոնական
Երևանի հնարավորություններն այս առումով այնքան էլ լայն չէ-
ին՝ հաշվի առնելով ինչպես Ղարաբաղյան հակամարտության,
Ռուսաստանի հետ տնտեսական կապերի, Ռուսաստանի մեծա-
թիվ հայ համայնքի և այլ գործոններ²⁶:

Հակամարտությունները մեծ ազդեցություն ունեն հակա-
մարտող կողմերի, արտաքին քաղաքական կուրսի ձևավորման
գործում: Լեռնային Ղարաբաղում 1992–1994 թթ. ընթացող պա-
տերազմը մեծապես սահմանափակում էր ՀՀ արտաքին քաղա-
քական հնարավորությունները: Գերմանիայի Դաշնային Հանրա-
պետությունը նույնպես բացառություն չէր, որի հետ հարաբերու-
թյունների հաստատման առաջին տարիներին երկկողմ գործակ-
ցությունը պասիվ բնույթ էր կրում: Մյուս կողմից՝ այստեղ կային

²⁶ St' u Orient: deutsche Zeitschrift für Politik, Wirtschaft und Kultur des
Orients, Armeniens Aussenpolitik zwischen den Ansprüchen der Mächte:
Grundlagen des Konzepts der Komplementarität/ Rainer Freitag–Wirming-
haus, 46(2005)1–4, էջ 89:

նաև անվտանգության խնդիրներ, որի պատճառով գերմանական կողմից այցելությունները սակավաթիվ էին:

Պատկերը փոխվեց, երբ 1994 թ. մայիսի 5-ին Ռուսաստանի, Կիրգիզիայի և ԱՊՀ միջխորհրդարանական ժողովի միջնորդությամբ Կիրգիզիայի մայրաքաղաքում Հայաստանը, Ադրբեջանը և Լեռնային Ղարաբաղը ստորագրեցին Բիշքեքյան արձանագրությունը, որի հիման վրա էլ Մոսկվայում մայիսի 12-ին կողմերը պայմանավորվեցին կրակի դադարեցման շուրջ:²⁷

Այս փաստաթուղթը հնարավորություն տվեց հակվելու վերակառուցման և կայունության քաղաքականություն իրականացնելուն: 1992–1994 թթ. հայ–գերմանական փոխադարձ շփումների ցածր մակարդակը հենց պայմանավորում ենք ինչպես Լեռնային Ղարաբաղի հակամարտությամբ, այնպես էլ Գերմանիայի՝ դեռևս մի քանի տարի առաջ վերամիավորված երկրի, բազմաթիվ խնդիրներով զբաղվածության հանգամանքով:

Հակառակ 1992–1993 թթ. գերմանական կողմից փոխադարձ այցելությունների պասիվությանը՝ հայկական կողմից մի քանի բարձրաստիճան պաշտոնյաների մակարդակով այցելություններ եղան Գերմանիա: 1992 թ. մայիսի 4–11-ը ԳԴՀ Բունդեսթագի նախագահ Ռիտա Ջյուսմուրթի հրավերով պաշտոնական այցով Գերմանիայում էր գտնվում Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի պատվիրակությունը, որը գլխավորում էր Գերագույն խորհրդի նախագահ Բաբկեն Արարբջյանը: Հատկանշական էր նաև 1993 թ. Հայաստանի արտաքին գործերի նախարար

²⁷ Տե՛ս ՀՀ նախագահի աշխատակազմի պաշտոնական կայքէջը, <http://president.am/library/armenia/arm/?armenia=4&pn=4>, (հասանելի՝ 10.03.2008):

Վահան Փափագյանի աշխատանքային այցը Գերմանիայի Դաշնային Հանրապետություն:²⁸

Երկկողմ դիվանագիտական հարաբերությունների հաստատումից հետո այս երկու հանդիպումները բավականին բովանդակային էին գերմանական կողմի համար, քանի որ երկու երկրների դիվանագետների միջև կայացած զրույցներից հետո Գերմանիան պետք է ձանաչեր նաև Հայաստանի իշխանություններին, ծանոթանար նրանց մոտեցումներին ու տրամադրվածությանը, ինչը նրանց հնարավորություն կտար հստակ տեսլականներ ունենալ հետագա հարաբերությունների զարգացման համար:

1994 թ. Բիշքեքյան զինադադարի համաձայնագիրը նոր խթան եղավ և ակտիվություն առաջ բերեց երկկողմ շփումների համար, մասնավորապես գերմանական կողմից Հայաստան այցելությունների դինամիկան սկսեց նոր ընթացք ստանալ:

Գերմանական կողմից բարձր մակարդակի պաշտոնական այցերից հատուկ նշանակություն ունեցավ 1995 թ. մայիսին ԳԴՀ Տնտեսական համագործակցության և զարգացման դաշնային նախարար Կարլ-Դիտեր Շպրանգերի այցը Հայաստան, ում այցելության ընթացքում ուղեկցում էր Բունդեսթագի պատգամավոր Միխայել Գլոսը:²⁹

Շպրանգերը հանդիպումներ ունեցավ ՀՀ փոխնախագահ Գագիկ Հարությունյանի, վարչապետ Հրանտ Բազրաժյանի և այլ բարձրաստիճան պաշտոնյաների հետ: Հանդիպման ընթացքում Հայաստանի ղեկավարությունը ներկայացրել էր տնտեսական բարեփոխումների ընթացքը, Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացը և երկկողմանի

²⁸ Տե՛ս Հայաստանի Հանրապետություն, 22 հունիս, 2004:

²⁹ Տե՛ս Spranger in Armenien, http://www.rzuser.uni-heidelberg.de/~ax6/nkp2-3/nkp2-3_Bez.html#SprangerInArmenien, (հասանելի՝ 21.03.2005):

համագործակցության զարգացման հեռանկարները: Շաբանգերը ողջունում էր այն փաստը, որ Հայաստանի ազգային դրամն արդեն կայունացել է, և դա վկայում էր, որ արդեն հաղթահարելի էր ռեֆորմներին բնորոշ տնտեսական անկման նվազագույն կետը:³⁰

Շաբանգերի Հայաստան այցելությունը կարևորում ենք նրանով, որ երկու երկրների միջև պայմանագրային հարաբերությունների համար ամուր հիմքեր ստեղծվեցին: Համագործակցությունն ամրապնդվեց Շաբանգերի և Հայաստանի էկոնոմիկայի նախարար Արմեն Եղիազարյանի կողմից մայիսի 25-ին համաձայնագրի ստորագրմամբ: Այն նվիրված էր ՀՀ կառավարության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության միջև ուսումնասիրությունների ու մասնագետների հիմնադրամ ստեղծելուն:³¹

1995 թ. մայիսի 5-ին Հայաստանի Հանրապետության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության միջև ֆինանսական համագործակցության մասին պայմանագիր կնքվեց:³²

Հայաստան կատարած եռօրյա այցը Գերմանիայի տնտեսական համագործակցման և զարգացման նախարար Կարլ-Դիթեր Շաբանգերը ամփոփեց մամուլի ասուլիսով, որտեղ նա նշեց. «Դաշնության կողմից առաջին նախարարի այցը անկախ Հայաստան կարևորագույն քայլ է երկկողմ հարաբերությունների և համագործակցության ընդլայնման զարգացման համար: Հանդիպ-

³⁰ Տե՛ս Գրիգոր Մելիքյան, Հայ-գերմանական համագործակցությունը ընդլայնվի, *Հայացք*, 20.-31. 05 1995, էջ 2:

³¹ Համաձայնագիր ՀՀ կառավարության և Գերմանիայի կառավարության միջև ուսումնասիրությունների և մասնագետների հիմնադրամ ստեղծելու վերաբերյալ (ստորագրվել է 25.05.1995):

³² Տե՛ս Համաձայնագիր ՀՀ կառավարության և ԳԴՀ կառավարության միջև ֆինանսական համագործակցության մասին /«Արտակարգ ծրագիր փախստականների համար» նախագիծ/ (ստորագրվել է Երևանում՝ 05.05.1995):

ման առանցքում էին ֆինանսական խնդիրները և տարածաշրջանային հարցերը: Պարոն Կ.–Դ. Շարանգերը հավելեց նաև. «Գերմանիան ջանում է անել ամեն ինչ, որպեսզի օգնի Հայաստանին ներկա տնտեսական դժվարությունները հաղթահարելու համար»: Պատրաստակամություն կար նաև Հայաստանին օգնելու էներգետիկ խնդիրները հաղթահարելու գործում:³³

Գերմանիայի կառավարական նման ներկայացուցչական պատվիրակությունը առաջինն էր իր ձևի մեջ Հայաստանում, որի ընթացքում արդեն իսկ ունեցանք միջկառավարական համաձայնագրի ստորագրում: Փաստորեն, շուրջ մեկ տարի առաջ կնքված հրադադարը հնարավորություն էր տալիս երկկողմ համագործակցությունը դնել նոր՝ ավելի արդյունավետ ու առարկայական հարթության վրա:

1995 թ. դեկտեմբերին տեղի ունեցավ Գերմանիայի Դաշնային Հանրապետության արտաքին գործերի նախարար Քլաուս Բինքելի այցը Հայաստան:³⁴ Բինքելը մի շարք հանդիպումներ ունեցավ Հայաստանի բարձրաստիճան պաշտոնյաների հետ: Իր հայ գործընկերոջ հետ քննարկվեցին մի շարք առանցքային հարցեր: 1995 թ. դեկտեմբերի 21–ին այցն ամփոփվեց մամուլի ասուլիսով և երեք միջկառավարական համաձայնագրերի կնքմամբ. Գերմանիայի Դաշնային Հանրապետության և Հայաստանի Հանրապետության միջև կնքված պայմանագրերն էին՝ Հայաստանի Հանրապետությունում գերմանական ռազմաշիրիմների վերաբերյալ

³³ Spranger Carl–Dieter, Bundesminister für wirtschaftliche Zusammenarbeit und Entwicklung, Armen Jegiasaryan – Wirtschaftsminister Armeniens, zu den Ergebnissen ihrer Gespräche in Eriwan, Fernseh– und Hörfunkspiegel, 26.05.1995:

³⁴ Տե՛ս Հայաստանի Հանրապետություն, 22.06.2004:

համաձայնագիրը,³⁵ մշակութային համագործակցության մասին համաձայնագիրը³⁶ և կապիտալ ներդրումների խրախուսման և փոխադարձ պաշտպանության մասին համաձայնագիրը³⁷:

Հայաստանի արտաքին գործերի նախարար Վահան Փափազյանը համաձայնագրերի կնքումից հետո մամուլի ասուլիսի ժամանակ արժևորեց և բարձր գնահատեց Քլաուս Բինքելի այցը Հայաստան՝ այն համարելով ոչ միայն Հայաստանի, այլ նաև ընդհանուր Հարավային Կովկասի նկատմամբ Գերմանիայի աճող հետաքրքրության ապացույցը: Վահան Փափազյանը մեջբերեց. «Այսօրվա այցը և ստորագրված փաստաթղթերը անկասկած նշանակալի խթան կհանդիսանան երկկողմ հարաբերությունների հետագա զարգացման համար»:³⁸ Նախարար Փափազյանը նշեց, որ ժամանակն է ստեղծել մի նախագիծ, որը հետագայում կվերածվեր երկկողմ համաձայնագրի, որտեղ հստակ կլինեն հայ-գերմանական համագործակցության սկզբունքները: Փափազյանը բարձր էր գնահատում նաև Գերմանիայի ջանքերը՝ որպես ԵԱՀԿ-ի Մինսկի խմբի անդամ, Լեռնային Ղարաբաղի խնդրի քաղաքական կարգավորման գործում: Այս հանդիպման ժամանակ Քլաուս Բինքելը նշեց, որ Գերմանիան մեծ քաղաքա-

³⁵ Տե՛ս Համաձայնագիր ՀՀ կառավարության և ԳԴՀ կառավարության միջև ՀՀ-ում գերմանական ռազմաշիրիմների վերաբերյալ: Ստորագրվել է Երևանում 21.12.1995:

³⁶ Տե՛ս Համաձայնագիր ՀՀ կառավարության և ԳԴՀ կառավարության միջև մշակութային համագործակցության մասին: Ստորագրվել է Երևանում 21.12.1995:

³⁷ Տե՛ս Համաձայնագիր ՀՀ և Գերմանիայի Դաշնային Հանրապետության միջև կապիտալ ներդրումների խրախուսման և փոխադարձ պաշտպանության մասին: Ստորագրվել է 21.12.1995:

³⁸ Տե՛ս Klaus Kinkel, Außenminister der Bundesrepublik Deutschland z.Z. in Eriwan, Wagan Papasjan, Außenminister der Republik Armenien, zu den deutsch-armenischen Beziehungen sowie zum Karabach-Konflikt, Fernseh- und Hörfunkspiegel, 22.12.1995:

կան նշանակություն է տալիս Կովկասյան տարածաշրջանին:³⁹ Քինքելը առաջին պետական գործիչներից էր, ով նշում էր, որ Եվրոպայի և Ասիայի սահմանագծում Կովկասը ունի լուրջ ստրատեգիական նշանակություն Եվրոպայի ընդհանուր կայունության համար: Գերմանիայի արտգործնախարարը հաստատում էր, որ Գերմանիան կշարունակի աջակցել Հայաստանին մյուս Հարավ-կովկասյան երկրների հետ մեկտեղ, որպեսզի տարածաշրջանում կայունություն ապահովվի:⁴⁰ Քինքելը առանձին խոսեց Մեծամորի ատոմակայանի մասին, փաստելով, որ Գերմանիան չի խրախուսում ատոմակայանի վերագործարկումը, քանի որ Մեծամորը գտնվում է անկայուն սեյսմիկ գոտում: Բայց նա համոզված էր, որ ստեղծված էներգետիկ ձգնաժամը պետք է հաղթահարել, և այդ ձանապարհին Հայաստանում պետք էր խրախուսել ջեկ-երի կառուցումը՝ առաջարկելով Գերմանիայի աջակցությունը:⁴¹

Մեր գնահատմամբ՝ Քինքելի այցը հայ-գերմանական հարաբերություններին նոր խթան հաղորդեց. իրավապայմանագրային հարաբերությունների ամրագրումը հնարավորություն տվեց գերմանացի ներդրողներին Հայաստանում գործունեություն ծավալելու համար, ինչը կնպաստեր Հայաստանի տնտեսական զարգացմանը: Մշակութային հարաբերությունների համար տրվեց պաշտոնական նոր հնարավորություն՝ զարգացնելու հայ-գերմանական մշակութային գործակցությունը: Հայաստանի արտաքին գործերի նախարարի առաջարկը՝ երկկողմ սկզբունքների մասին համաձայնագիր նախապատրաստելու վերաբերյալ, մեր խորին

³⁹ Klaus Kinkel, Deutschland mißt der Kaukasusregion große politische Bedeutung bei.

⁴⁰ Տե՛ս նույն տեղում:

⁴¹ Տե՛ս Kinkel bietet Armenien Unterstützung an, Frankfurter Allgemeine, 22.12.1995:

համոզմամբ, քաղաքական առումով կարևոր նշանակություն կարող էր ունենալ: Չնայած, ինչպես երևում է Քլաուս Քինքելի խոսքերից, այստեղ մտայնությունը հիմնականում վերաբերում էր տարածաշրջանային համագործակցությանը, հայ-գերմանական երկխոսության առումով այս հանդիպումը կարելի է համարել արգասաբեր և նպատակային:

Ընդհանուր առմամբ՝ 1995 թվականը հայ-գերմանական հարաբերություններում ակտիվության տարի էր: Ստորագրվեցին հինգ միջկառավարական համաձայնագրեր, որոնք ընդգրկում էին համագործակցության տարբեր ոլորտներ:

1996-ի տարեսկիզբը նշանավորվեց մարտ ամսին Գերմանիայի Բունդեսթագի փոխնախագահ Հանս Քլայնի այցով Հայաստան: Քլայնը կարևորում էր և խոսում էր հայ-գերմանական տնտեսական և միջխորհրդարանական հարաբերությունների զարգացման մասին, որի համար պետք է ջանքեր գործադրեին երկու կողմերն էլ⁴²: Քանի որ Գերմանիան պառլամենտական երկիր է, այս հանդիպումը անհրաժեշտ էր հետագա միջխորհրդարանական շփումները զարգացնելու համար:

1997 թ. հոկտեմբերին Գերմանիայի Դաշնային Հանրապետության արտաքին գործերի քարտուղար Հ. Շեֆերը այցելեց Հայաստան⁴³: Շեֆերի այցը Քլաուս Քինքելի 1995 թ. այցի տրամաբանական շարունակությունն էր, որը քաղաքական առումով շատ ենթ կարևորում, քանի որ Գերմանիան պարբերաբար երկկողմ հանդիպումների շրջանակներում տեղեկանում էր Հայաս-

⁴² St' u Hans Klein, Vizepräsident des Deutschen Bundestages, z.Z. in Eriwan, zur deutsch-armenischen Zusammenarbeit, Fernseh- und Hörfunkspiegel, 19.03.1996:

⁴³ St' u Հայ-գերմանական երկկողմ հարաբերություններ, Հայաստանի Հանրապետություն, 17.11.2004:

տանի դիրքորոշման մասին՝ կապված Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման գործընթացի հետ, ինչպես նաև ծանոթանում Հայաստանում տեղի ունեցող իրադարձություններին:

1997 թվականը հայ-գերմանական հարաբերությունների զարգացման համար բավական պասիվ բնույթ է ունեցել՝ չնայած երեք միջկառավարական համաձայնագրեր են կնքվել՝ սննդամթերքի ապահովման բնագավառում համագործակցության մասին,⁴⁴ ֆինանսական համագործակցության մասին⁴⁵ և ևս մեկ ֆինանսական համագործակցության⁴⁶ վերաբերյալ: Ընդհանուր առմամբ՝ հայ-գերմանական իրավապայմանագրային հարաբերությունների գերակշիռ մասը ներառում են ֆինանսական ու տնտեսական ոլորտները:

1998 թ. հայ-գերմանական հարաբերությունները վերընթաց զարգացում են ունեցել: Նախորդ տարվա համեմատությամբ նկատելի առաջընթաց էր արձանագրվել համագործակցության կարևորագույն բոլոր ոլորտներում՝ ներառյալ քաղաքական փոխհարաբերությունները, առևտրա-տնտեսական և մշակու-

⁴⁴ Տե՛ս Համաձայնագիր ՀՀ կառավարության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարության միջև «Սննդամթերքի ապահովման համագործակցության մասին»: Ստորագրվել է Երևանում հայտագրերի փոխանակմամբ 21.05.1997 թ.-ին:

⁴⁵ Տե՛ս Համաձայնագիր ՀՀ կառավարության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարության միջև «Էներգետիկայի բնագավառում անհապաղ օգնության միջոցառումներ» նախագծի շրջանակում ֆինանսական համագործակցության վերաբերյալ: Ստորագրվել է Երևանում 25.07.1997 թ.:

⁴⁶ Տե՛ս Համաձայնագիր ՀՀ կառավարության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարության միջև ֆինանսական համագործակցության վերաբերյալ «Էներգետիկայի բնագավառում անհապաղ օգնության միջոցառումներ/Քանաքեռի հիդրոէլեկտրակայան» նախագիծ: Ստորագրվել է Երևանում 25.07.1997 թ.:

թային կապերը: Երկկողմ և բազմակողմ շփումների ընթացքում կրկին ընդգծվել է երկու երկրների շահագրգռվածությունը՝ խթանելու փոխշահավետ հիմքերի վրա զարգացող հայ-գերմանական գործակցությունը:⁴⁷

Քաղաքական բնագավառում երկկողմ հարաբերությունների համար հետաքրքրություն էին ներկայացնում այնպիսի իրադարձություններ, ինչպիսիք էին Հայաստանում՝ նախագահական, իսկ Գերմանիայում՝ Բունդեսթագի ընտրությունները, և դրանց արդյունքում նոր կառավարության ձևավորումը: Սակայն ներքաղաքական այս տեղաշարժերը որևէ ձևով չեն ազդել երկկողմ համագործակցության վրա: Գերմանիայի «Կարմիր-կանաչ» կոալիցիայի մուտքը Գերմանիայի կառավարություն պահպանել էր արտաքին քաղաքականության շարունակական բնույթը:⁴⁸

Չնայած Գերմանիայի արտաքին քաղաքականության շարունակական բնույթը պահպանվել էր, բայց մենք կարծում ենք, որ յուրաքանչյուր նոր իշխանություն ունի իր առանձնահատուկ մոտեցումները, ուստի անհրաժեշտ էր կապեր հաստատել նոր ընտրված պատգամավորների հետ և անմիջական շփումների միջոցով ավելի ամրապնդել երկկողմ համագործակցությունը, որն իր մեջ կներառեր համագործակցության նորանոր ոլորտներ:

1998 թ. Գերմանիան ավարտել էր «ԵՄ-Հայաստան Գործընկերության և համագործակցության մասին» համաձայնագրի վավերացման գործընթացը: Քաղաքական քննարկումների առանցքային թեման եղել է Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի

⁴⁷ Տե՛ս Հայաստանի արտաքին գործերի նախարարության պատմադիվանագիտական արխիվ, Գերմանիա, Տարեկան հաշվետվություն 1998 թ., Գործ 19-ը, Ցուցակ 7, էջ 11:

⁴⁸ Տե՛ս Հայաստանի արտաքին գործերի նախարարության պատմադիվանագիտական արխիվ, Գերմանիա, Տարեկան հաշվետվություն 1998 թ., Գործ 19-ը, Ցուցակ 7, էջ 11:

կարգավորումը, ինչին զուգահեռ, գերմանական կողմը մեծացող հետաքրքրություն է ցուցաբերել Հայաստանի ներքաղաքական զարգացումներին, հատկապես՝ մարտ ամսին անցկացված նախագահական ընտրություններին: Քաղաքական առումով 1998 թ. կարևորում ենք հայկական կողմից բարձր մակարդակի երկու այցերով՝ հունվարի 24-ից փետրվարի 4-ը Ամենայն հայոց Կաթողիկոս Գարեգին Ա-ի և մայիսի 3-5-ը Հայաստանի արտաքին գործերի նախարար Վարդան Օսկանյանի այցը Գերմանիա:⁴⁹

Հայ առաքելական եկեղեցու առաջնորդը Գերմանիայում հանդիպումներ ունեցավ կանցլեր Հելմուտ Բոլի, Բունդեսթագի նախագահ Ռիտա Ջյումուրի, ԱԳ նախարար Ք. Քինքելի, ինչպես նաև կրոնական գործիչների հետ: Գերմանական կողմը հատկապես շեշտում էր կաթողիկոսի հանդիպումների քաղաքական կոնտեքստ ունեցող հարցերի քննարկումը:⁵⁰

Քաղաքական կոնտեքստ ասելիս պետք է ընդունենք այն փաստը, որ Գերմանիայում միանգամից նման բարձր մակարդակի հանդիպումներ ունենալը բավականին մեծ հաջողություն էր: Գերմանական աղբյուրները նշում էին, որ Կաթողիկոսի այցը կրում էր ինչպես դիվանագիտական, այնպես էլ կրոնական բնույթ: Բայց «դիվանագիտություն» ասելով հասկանում ենք քննարկումների կոնտեքստը, որոնց ժամանակ Վեհափառը Գերմանիայից աջակցություն էր հայցում ոչ միայն Եվրախորհրդին Հայաստանի ան-

⁴⁹ Տե՛ս Հայաստանի արտաքին գործերի նախարարության պատմադիվանագիտական արխիվ, Տարեկան հաշվետվություն 1998 թ., Գերմանիա, Գործ 19, Ցուցակ 7, էջ 12:

⁵⁰ Տե՛ս Westlich ausgerichtet, Karekin I./Deutschlandbesuch mit politischer, pastoraler und ökumenischer Note, Rheinischer Merkur. 06.02.1998:

դամակցության, այլ նաև ԵՄ–Հայաստան սերտ գործընկերության հարցում:⁵¹

Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Առաջինի այցը մենք գնահատում ենք առաջինը իր տեսակի և հանդիպման մակարդակի առումով, քանի որ բացի կրոնական հարցերի քննարկումներից, այստեղ հնչեցին քաղաքական հարցադրումներ և տեղի ունեցան կարծիքների փոխանակություն: Մինչ այս հայկական որևէ պատվիրակություն նմանօրինակ բարձրաստիճան հանդիպումներ չէր ունեցել:

1998 թ. Հայաստանի արտաքին գործերի նախարար Վարդան Օսկանյանը, ամփոփելով իր այցելության արդյունքները Գերմանիայի Դաշնային Հանրապետություն, հատուկ նշում էր, որ դեռևս մեկնումից առաջ այն ընկալումը կար, որ հայ–գերմանական հարաբերությունները արմատական հեղաշրջման կարիք ունեն: Օսկանյանի այցի ընթացքում ամենաբարձր մակարդակով քննարկվել են Հայաստանի համար կենսական նշանակություն ունեցող խնդիրներ: Վարդան Օսկանյանը Գերմանիայի հետ հարաբերությունները գնահատելիս եզրակացնում էր, որ դրանք նոր փուլ են մտնում և ամենօրյա աշխատանքի կարիք ունեն: Քննարկման առարկա է եղել նաև միջազգային կազմակերպություններին Հայաստանին անդամակցության խնդիրը, և այդ խնդրում Գերմանիայի աջակցության հետ կապված հարցեր: Մենք կարևորում ենք Օսկանյանի հանդիպման ընթացքում Լեռնային Ղարաբաղի կամարտության կոնստեքստում ունեցած քննարկումները, որտեղ

⁵¹ St' u Im Wiederaufbau, Die Armenische Kirche auf der Suche nach einem neuen Selbstverständnis, Herder–Korrespondenz, Aschot Manutscharjan, Heft 5, 05.1998:

նախարարը ներկայացրեց այս ուղղությամբ Հայաստանի դիրքորոշման հստակեցումներ:⁵²

Հանդիպման ընթացքում Գերմանիայի Դաշնային Հանրապետության և Հայաստանի Հանրապետության կառավարությունների միջև Բոննում ստորագրվեցին համաձայնագրեր՝ օդային հաղորդակցության մասին⁵³, համատեղ հայտարարություն ՀՀ և ԳԴՀ հարաբերությունների հիմունքների վերաբերյալ⁵⁴ և արձանագրություն մշակութային արժեքների հանձնման մասին⁵⁵: Ստորագրված փաստաթղթերից համատեղ հայտարարության մեջ հիմնականում ուրվագծվում էին համատեղ գործունեության ոլորտները⁵⁶:

Վարդան Օսկանյանի Գերմանիա այցի հիմնական առանցքը Հայաստանում պահվող մեծ քանակով գերմանական ձեռագրերը Գերմանիային վերադարձնելու հարցն էր: Մայիսի 3-ին ԳԴՀ արտաքին գործերի նախարարության «Աշխարհի դահլիճ» անունը կրող սրահում բազմաթիվ պաշտոնյաների, լրագրողների և հյուրերի ներկայությամբ տեղի ունեցավ 575 ձեռագրերի պաշտոնական հանձնման արարողություն: Ձեռագրերի հանձնումը մեծ արձագանք գտավ Գերմանիայում: Գերմանացիները կարծում էին,

⁵² Տե՛ս Հայ-գերմանական հարաբերությունները նոր փուլ են մտնում, Գազիկ Մարտոյան, Հայաստանի Հանրապետություն, 08.05.1998 թ.:

⁵³ Տե՛ս Համաձայնագիր ՀՀ կառավարության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարության միջև «Օդային համագործակցության մասին»: Ստորագրվել է Բոննում 04.05.1998 թ.:

⁵⁴ Տե՛ս «Համատեղ հայտարարություն ՀՀ և ԳԴՀ միջև հարաբերությունների հիմունքների մասին»: Ստորագրվել է 04.05.1998 թ.:

⁵⁵ Տե՛ս Արձանագրություն «ՀՀ կառավարության և ԳԴՀ կառավարությանը մշակութային արժեքների հանձնման մասին»: Ստորագրվել է Բոննում 04.05.1998 թ.:

⁵⁶ Տե՛ս Հայ-գերմանական հարաբերությունները նոր փուլ են մտնում, Գազիկ Մարտոյան, Հայաստանի Հանրապետություն, 08.05.1998 թ.:

որ Ռուսաստանը դեմ կլիներ ձեռագրերի հանձնմանը, քանի որ պատերազմից հետո Ռուսաստան տեղափոխած ձեռագրերը համարում էր իր սեփականությունը, բայց այս քայլը ավելի շատ բարի կամքի դրսևորում էր:⁵⁷

Բացի դրանից՝ նախարարը մի շարք հանդիպումներ ունեցավ ԳԴՀ տնտեսական համագործակցության և զարգացման նախարար Կ.-Դ. Շպրանգերի, Բունդեսբանկի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Կ.-Հ. Հորնհուսի, «Կովկաս» պատգամավորական խմբի նախագահ Վ. Վիմմերի և այլ պաշտոնատար անձանց հետ: Այցը եզրափակվեց Արտաքին քաղաքականության գերմանական ընկերակցությունում, որտեղ Վ. Օսկանյանը հանդես եկավ «Հայաստանի տարածաշրջանային քաղաքականության մասին» ելույթով, ինչը մեծ հետաքրքրություն առաջացրեց քաղաքական և հասարակական տարբեր շրջանակներում:⁵⁸

Այսպիսով՝ կարող ենք փաստել, որ 1998 թվականը շատ արգասաբեր տարի էր հայ-գերմանական պաշտոնական հարաբերություններում: Հայ-գերմանական հարաբերությունների նորագույն շրջանի առաջին փուլ կարող ենք համարել 1991–1998 թթ. ընկած ժամանակահատվածը: Հարաբերությունները, որոնք սկսվել էին դեռևս անկախության ճանաչմամբ, զարգանում էին բավականին դանդաղ տեմպերով: Հաշվի առնելով Հայաստանի պատրաստակամությունը, բայց հնարավորությունների սղությունը, կարող ենք հարաբերությունների այս փուլը բավարար գնահատել, քանի որ արդեն հիմքեր էին ստեղծվել, և համագոր-

⁵⁷ St'e'u Wir wollen guten Willen zeigen, Rheinische Post, 07.05.1998:

⁵⁸ St'e'u ՀՀ ԱԳՆ պատմադիվանագիտական արխիվ, Վ. Օսկանյանի այցը Գերմանիայի Դաշնային Հանրապետություն, 1998 թ., Գործ 197, Ցուցակ 3, էջ 144:

ծակցության ոլորտները տարեցտարի ընդլայնվում էին: Երկկողմ հարաբերություններում պաշտոնական շփումները փաստացի իրողություններ էին, որի արդյունքում ձեռք բերված համաձայնությունները կյանքի էին կոչվում: Հայ-գերմանական հարաբերությունները տեսական մակարդակից անցում կատարեցին գործնական դաշտ:

1999 թ. Հայաստանը շարունակում էր Գերմանիայի հետ արդեն 1998 թ-ից սկսված ինտենսիվ գործակցությունը: Հայ-գերմանական քաղաքական երկխոսության շարունակության առումով 1999 թվականը նշանավորվեց Գերմանիայի կողմից Եվրոպական միության նախագահության ստանձմամբ: Եվրոպական միության Գերմանիայի նախագահության ակտիվ ջանքերի շնորհիվ Լյուքսեմբուրգում հունիսի 22-ին տեղի ունեցավ Հարավային Կովկասի երկրների հետ Եվրոպական միության գործընկերության և համագործակցության մասին համաձայնագրի գործողության մեջ մտնելու հանդիսավոր արարողությունը:⁵⁹

Ի պատասխան 1998 թ. Հայաստանի կողմից Գերմանիային վերադարձված մեծաքանակ ձեռագրերի փոխանցման քայլին՝ 1999 թ. մարտին ՀՀ նախագահի նստավայրում տեղի ունեցավ Գերմանիայի արտաքին գործերի նախարարության քաղաքական արխիվում պահվող և Ստամբուլում Գերմանիայի դեսպանատան 1889–1923 թթ. ընդգրկող ժամանակահատվածի արխիվային փաստաթղթերի ու վավերաթղթերի մանրալուսապատճենների ժողովածուի հանձնումը Հայաստանի Հանրապետության գիտությունների ակադեմիայի ֆունդամենտալ գրադարանին:⁶⁰

⁵⁹ Տե՛ս Հայաստանի արտաքին գործերի նախարարության պատմադիվանագիտական արխիվ, 1999 թ. հաշվետվություն, Գերմանիայի Դաշնային Հանրապետություն, Գործ 19, Ցուցակ 7, էջ 16:

⁶⁰ Նույն տեղում:

Սա բավականին խոր դիվանագիտական քայլ էր: Գերմանացիները սրանով հնարավորություն տվեցին թուրքական կառավարության կողմից իրականացված Հայոց Ցեղասպանության մասին նոր փաստեր ունենալու:

1999 թ. մայիսի 30-ին կայացած Հայաստանի ազգային ժողովի ընտրությունները, որին ուշի ուշով հետևում էր գերմանական կողմը: Գերմանական կողմից ընտրություններին մասնակցում էին 8 դիտորդներ: 1999 թ. սեպտեմբերի 3–7-ը Բունդեսթագի և Բունդեսլաթի հիմնադրման 50-ամյակին նվիրված տոնակատարություններին մասնակցելու նպատակով Գերմանիայում էր գտնվում Հայաստանի ազգային ժողովի պատվիրակությունը՝ Կարեն Դեմիրճյանի գլխավորությամբ: Գերմանական կողմը հետևում էր Հայաստանում ներքաղաքական զարգացումներին, մասնավորապես 1999 թ. հոկտեմբերի 27-ին Հայաստանի ազգային ժողովում կատարված ողբերգական իրադարձություններին ու դրա հետևանքներին:⁶¹ Հոկտեմբերի 27-ին տեղի ունեցած իրադարձությունները խոչընդոտեցին հայ-գերմանական հարաբերությունների ընթացքը, և դա հատկապես արտահայտվեց ֆինանսական համագործակցության շրջանակներում, քանի որ դրա պատճառով Գերմանիայի վստահությունը Հայաստանի հանդեպ թուլացավ: Այդ մասին են վկայում գերմանական մամուլի բոլորն արձագանքը հոկտեմբերի 27-ի իրադարձություններին, որոնք արտացոլվեցին 1999 թ. հոկտեմբերի 29-ից լույս տեսած հոդվածներում և հրապարակումներում՝ *Ֆրանկֆուրտեր Ալգեմայնե Ցայթունգ* (*Frankfurter Allgemeine Zeitung*), *Ջյուդոյչե Ցայթունգ* (*Süddeutsche Zeitung*), *Շփիգել* (*der Spiegel*), *Ֆոկուս* (*Focus*), *Ֆրանկֆուրտեր Ռունդշաու* (*Frankfurter Rundschau*), *Բեռլիներ Մորգեն-*

⁶¹ Նույն տեղում, էջ 15:

phnau (*Berliner Morgenpost*), *Դի Վելթ* (*die Welt*) և այլ լրատվամիջոցներում և հեռուստա–ռադիո հաղորդումներում:⁶²

1999 թ. դեկտեմբերին Հայաստանի ազգային ժողովում ստեղծվել էր հայ–գերմանական միջխորհրդարանական նոր խումբ: 1999 թ. նոյեմբերի 19–23–ը կայացավ ՀՀ արտգործնախարար Վարդան Օսկանյանի այցը Գերմանիա: Օսկանյանը հանդիպումներ ունեցավ ԳԴՀ արտգործնախարար Յոշկա Ֆիշերի, Բունդեսթագի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Հանս–Ուլրիխ Քլոգեի, Բունդեսթագի Գերմանա–կովկասյան պառլամենտական խմբի ղեկավարության, ինչպես նաև Գերմանական ներդրումների և զարգացման ընկերության պատասխանատուների հետ: Նախարար Օսկանյանի քննարկման հիմնական թեմաները հետևյալն էին՝ ԵԱՀԿ Ստամբուլյան գազաթնաժողովի արդյունքների ամփոփումը, Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի խաղաղ կարգավորման հարցը և հայ–գերմանական երկկողմ հարաբերություններին առնչվող հարցեր: Համաձայնություն ձեռք բերվեց հոկտեմբերյան իրադարձությունների հետևանքով հետաձգված տնտեսական համաժողովը անցկացնել 2000 թ. ապրիլին: Նախարարը Ֆրանկֆուրտում մասնակցեց գերմանա–հայոց կենտրոնական խորհրդի տարեկան ընդհանուր ժողովի և խորհրդի 30–րդ հորելյանական միջոցառումներին, ինչպես նաև հանդիպումներ ունեցավ Բեռլինի հայ համայնքի ներկայացուցիչների հետ:⁶³

⁶² Տե՛ս ՀՀ ԱԳՆ պատմադիվանագիտական արխիվ, Գործ 18, Ցուցակ 5, էջ 198:

⁶³ Տե՛ս Հայաստանի արտաքին գործերի նախարարության պատմադիվանագիտական արխիվ, ՀՀ ԱԳ նախարար Վ. Օսկանյանի աշխատանքային այցը Գերմանիա, Գործ 18, Ցուցակ 5, էջ 209–210:

Գերմանիայում առաջացել էր թերահավատություն, ուստի, մեր կարծիքով, Վարդան Օսկանյանի այցը բավական նշանակալի էր, քանի որ նրա անմիջական հանդիպումների ժամանակ պարզորոշ երևաց, որ Հայաստանը անում է ամեն ինչ, որպեսզի կարճ ժամանակում հարթի հոկտեմբերի 27-ի հետևանքները և շարունակի կայուն գործակցությունը, ինչը գերմանական կողմը հատուկ կարևորում էր:

2000 թ. գերմանական կողմից էական ակտիվություն նկատվեց Հարավկովկասյան տարածաշրջանի նկատմամբ: Հատկապես խորհրդանշական էր Բունդեսթագի խորհրդարանական պատվիրակությունների առատությունը՝ մայիսի 2–5-ը Բունդեսթագի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի, մայիսի 28–30-ը՝ Բունդեսթագի փոխնախագահ Անկե Ֆուքսի, Բունդեսթագի տնտեսական համագործակցության և զարգացման հանձնաժողովի հուլիսի 16–18-ի և դեկտեմբերի 12-ին Բունդեսթագի բյուջետային հարցերի հանձնաժողովի նախագահ Հանս Գեորգ Վագների այցերը Հայաստան:⁶⁴ Պատվիրակությունները հանդիպումներ են ունեցել ՀՀ նախագահի, ԱԳ նախարարի, ԱԺ խմբակցությունների ղեկավարների և Ամենայն Հայոց կաթողիկոսի հետ: Հանդիպումների ժամանակ քննարկումներն ընթացել են հետևյալ թեմաների շուրջ՝ երկկողմ հարաբերությունների զարգացումը, անդրկովկասյան երեք հանրապետությունների փոխհարաբերությունները, տարածաշրջանային զարգացումները, տարածաշրջանի անվտանգության համակարգին առնչվող հարցեր, տարածաշրջանային հակամարտություններ, ԼՂ հիմնախնդրի

⁶⁴ Տե՛ս Հայաստանի արտաքին գործերի նախարարության պատմադիվանագիտական արխիվ, Հաշվետվություն 2000 թ. ընթացքում հայ-գերմանական փոխհարաբերությունների վերաբերյալ, Գործ 19, Ցուցակ 7, էջ 25–28:

կարգավորման գործընթաց, ժողովրդավարական բարեփոխումներ, երկկողմ տնտեսական համագործակցություն, Հայաստանի տնտեսության մեջ գերմանական կապիտալի ծավալի մեծացում և այլն:⁶⁵

2000 թվականը նշանավորվեց նաև Հայաստանի արտաքին գործերի նախարար Վ. Օսկանյանի՝ նոյեմբերին Գերմանիա կատարած այցով, որի ընթացքում բացի երկկողմ հանդիպումները՝ Վ. Օսկանյանը մասնակցեց «Հերբերթ Քվանտ» (Herbert Quandt) հիմնադրամի կազմակերպած «Եվրոպան 21-րդ դարում» կոնֆերանսին: 2000 թ. հունիսի 1-31-ը Գերմանիայի Հանովեր քաղաքում անցկացվող «EXPO 2000» միջազգային ցուցահանդեսին Հայաստանը մասնակցեց իր անհատական տաղավարով, 2000 թ. մայիսի 11-ին Բեռլինում հաջողությամբ անցկացվեց Հայաստանի տնտեսությանը նվիրված գործարար համաժողով:⁶⁶

Քաղաքական և մշակութային առումով մեծ էր 2000 թ. սեպտեմբերի 2-10-ը Հալլե-Վիթենբերգում կայացած «Հայաստան 2000» միջազգային հայագիտական կոնֆերանսի նշանակությունը, որը կազմակերպել էին Մարտին Լյութեր համալսարանի «Մեսրոպ» հայագիտական կենտրոնը: Այս կոնֆերանսը ևս մեկ անգամ փաստում էր հայ-գերմանական դրական և բարեկամական հարաբերությունների մասին:⁶⁷

2000 թվականը մենք բնորոշում ենք հայ-գերմանական հարաբերությունների համար որպես խորհրդարանական համագործակցության, ինչպես նաև համագործակցության տարբեր ոլորտ-

⁶⁵ Տե՛ս Հայաստանի արտաքին գործերի նախարարության պատմադիվանագիտական արխիվ, 2000 թ. հայ-գերմանական փոխհարաբերությունների վերաբերյալ, Գերմանիա, Գործ 19, Ցուցակ 7, էջ 25:

⁶⁶ Նույն տեղում:

⁶⁷ Տե՛ս Armenien-Konferenz in Halle, Traditionell gute Beziehungen zu Deutschland, Frankfurter Allgemeine Zeitung, 08.09.2000:

ներում ինտենսիվության տարի: Բացի քաղաքական շփումներից՝ առկա էին տնտեսական համագործակցության զարգացման հեռանկարները՝ հաշվի առնելով ոլորտի զարգացմանն ուղղված վերը նշված հանդիպումները և անցկացված միջոցառումները: Կարծես ձեռք առնված միջոցները և հայկական կողմի պատրաստակամությունը գերմանական կողմի հետ համագործակցելու համար նոր հնարավորություններ ստեղծեցին: Այս կերպ փորձ էր արվում թուլացնելու Գերմանիայում Հայաստանի նկատմամբ 1999 թ. հոկտեմբերի 27-ի հետևանքով ձևավորված անվստահությունը:

2000 թ.-ից Բունդեսբազը մեծ հետաքրքրություն է ցուցաբերում Հարավկովկասյան երկրների հանդեպ, ինչի մասին են վկայում 2001–2002 թթ. խորհրդարանական պատվիրակությունների երկկողմ փոխայցելությունները:⁶⁸

2000 թ. մայիսի 9–ից 11-ը Գերմանիայում անցկացվեց հայ-գերմանական միջկառավարական բանակցությունները: Պատվիրակությունը գլխավորում էր ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարար Վ. Խաչատրյանը: Բանակցությունների ընթացքում քննարկվեցին համագործակցության ներկա վիճակին առնչվող հարցեր և սահմանվեցին հետագա համագործակցության ուղղությունները: Այս միջկառավարական բանակցությունները հատկանշական էին նրանով, որ գերմանական կողմը հայտնեց, որ ՀՀ-ին ցուցաբերվող օժանդակության արդյունավետության առումով նպատակահարմար են համարում կրճատել համագործակցության հիմնական ուղղությունների թիվը և կենտրոնանալ «տնտեսական բարեփոխումներ և շուկայական զարգացում»

⁶⁸ Տե՛ս Խաչատրյան Ա. Վ., ՀՀ-ի և ԳԴՀ-ի միջև դիվանագիտական հարաբերությունների պատմությունից, «Լրաբեր հասարակական գիտությունների», № 2–2, Երևան, 2008:

ուրորտների վրա, ինչպես նաև ծրագրեր իրականացնել ժողովրդավարության, քաղաքացիական հասարակության և պետական կառավարման ոլորտում՝ ներառյալ համայնքային զարգացմանն ուղղված ծրագրեր, իսկ մյուս ոլորտներում համագործակցությունը կշարունակվի տարածաշրջանային համագործակցության մակարդակով:⁶⁹

Այսպիսով՝ Հայաստանի զարգացմանն ուղղված հայ-գերմանական համագործակցությունը մի քանի կարևոր ոլորտներում ավելի սերտ դառնալու հնարավորություն ստացավ, ինչն ավելի արդյունավետ ու շոշափելի կլիներ, քան եթե այն ընդգրկեր բազմաթիվ ոլորտներ:

2000 թ. ԴԳՀ-ում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Աշոտ Ոսկանյանի ունեցած հանդիպումներից առանձնակի ուշադրություն ենք դարձրել 2000 թ. հոկտեմբերի 10-ին ԴԳՀ արտաքին գերատեսչությունում ԴԳՀ ԱԳՆ-ի առաջին քաղաքական վարչության պետ դ-ր Քլաուս Էրիխ Շարիոթի հետ ունեցած հանդիպմանը, որի ընթացքում պարոն Շարիոթը դեսպան Ոսկանյանին ներկայացրեց արտասահմանյան երկրներում ԴԳՀ դեսպանների ընդհանուր համաժողովի շրջանակներում Հարավային Կովկասի երկրներում ԳԴՀ դեսպանների տարածաշրջանային ենթահանձնաժողովի արդյունքները, մասնավորապես Եվրախորհրդում Հայաստանի անդամակցության հարցում ԳԴՀ աջակցության վերաբերյալ: Այս հարցում կարևորվեց Լեռնային Ղարաբաղի խնդրի լուծման գործում հայկական կողմի պատրաստակամության և նոր քայլեր ձեռնարկելու անհրաժեշտությունը: Ըստ Շարիոթի՝ համաժողովին հատուկ ընդգծվել է, որ հարավկովկա-

⁶⁹ Տե՛ս Հայաստանի արտաքին գործերի նախարարության պատմադիվանագիտական արխիվ, Գործ 20, Ցուցակ 7, էջ 22:

այսն տարածաշրջանի երկրներում զարգացումները միանշանակ հանգեցնում են եվրոպական կառույցների հետ համագործակցության ակտիվացման, ինչպես նաև տարածաշրջանի՝ բնական ռեսուրսներով հարուստ լինելու մասին, ինչը մեծացնում է Գերմանիայի տնտեսական ներկայության հնարավորությունը:⁷⁰

2000 թ. Գերմանիայի կեցվածքը Հարավկովկասյան տարածաշրջանի նկատմամբ շեշտակի զարգացում է ապրել, ինչի մասին է վկայում նաև ԳԴՀ արտաքին գերատեսչության առաջին քաղաքական վարչության պետ պարոն Շարիորթի այն թեզը, որ տարածաշրջանը մերձավոր արտասահման է Գերմանիայի համար: Դեռպես Ոսկանյանի բնորոշմամբ՝ Գերմանիան ցանկանում է Կովկասը որպես կամուրջ տեսնել Եվրոպայի և Կասպից էներգակիր շրջանի միջև, իսկ զուտ քաղաքական դաշտում նշում, որ պետք է ձգտենք մեղմել «նախ կոնֆլիկտի կարգավորում, հետո հարաբերությունների ինտենսիվացում» սկզբունքը և ապահովենք ավելի ձկուն համագործակցություն:⁷¹

2002 թ. Հայաստանում Գերմանիայի դեսպան նշանակվեց Հանս-Վուլֆ Բարտելը, հավատարմագրերը նախագահին հանձնելու արարողությանը հաջորդած քննարկմանը նախագահ Քոչարյանը հատուկ ընդգծեց, որ Հայաստանը առանձնակի նշանակություն է տալիս Գերմանիայի հետ գործընկերությանը:⁷²

⁷⁰ Հայաստանի արտաքին գործերի նախարարության պատմադիվանագիտական արխիվ, Գործ 17, Ցուցակ 6, էջ 87–88:

⁷¹ Հայաստանի արտաքին գործերի նախարարության պատմադիվանագիտական արխիվ, Աշոտ Ոսկանյան, ԳԴՀ-ում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան, Հայաստանի և Հարավային Կովկասի հանդեպ գերմանական քաղաքականության մեջ նկատվող վերջին զարգացումները, Գործ 17, Ցուցակ 6, էջ 107–109:

⁷² Տե՛ս Գերմանիոյ նոր դեսպան Հանս-Վուլֆ Պարթելը իր հավատարմագրերը յանձնեց ՀՀ Նախագահին, *Ազատ օր.* էջ 4, 17226, 9-ը մարտի 2002, Աթենք:

2002 թ. մարտի 21-ին իր հավատարմագրերը ԳԴՀ նախագահ Յոհաննես Ռաուին հանձնեց դեսպան Կարինե Ղազինյանը: Նա նախագահ Ռաուին փոխանցեց նաև ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանի ուղերձը՝ հայ-գերմանական հարաբերությունների 10-ամյակի կապակցությամբ:⁷³

Կարինե Ղազինյանը, ստանձնելով ԴԳՀ-ում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպանի պաշտոնը, նոր լիցք հաղորդեց հայ-գերմանական հարաբերությունների զարգացմանը, ինչի մասին են վկայում դեսպանավարման շրջանում բարձրաստիճան պաշտոնյաների երկկողմ փոխալսելությունները և գերմանական քաղաքական ու մշակութային շրջանակներում դեսպանի ակտիվ գործունեությունը:

Հայ-գերմանական քաղաքական երկխոսությանը զգալիորեն նպաստել են 2003–2007 թթ. ընթացքում տեղի ունեցած մի շարք բարձրաստիճան պաշտոնյաների երկկողմ այցելությունները, ինչն անկասկած, փոխհարաբերությունների խորացման երկուստեք շահագրգռվածության վկայությունն էր: 2003 թ. հունվարի 14–15-ը նախագահ Ռոբերտ Քոչարյանը Գերմանիա կատարած այցի ընթացքում հանդիպումներ ունեցավ ԳԴՀ նախագահ Յ. Ռաուի, վարչապետ Գ. Շրյոդերի, Բունդեսքազի նախագահ Վ. Թիրզեի և Հյուսիս Հռենոս–Վեստֆալիայի վարչապետ Փեթեր Շթայնբրուքի հետ, ինչպես նաև Քյոլնի հայ առաքելական եկեղեցու առաջնորդարանում հանդիպում ունեցավ Գերմանիայի հայ համայնքի ներկայացուցիչների հետ: Այցը կոչված էր խթանելու երկկողմ հարաբերությունների զարգացումը, նոր մակար-

⁷³ Հայաստանի ԱԳՆ պատմադիվանագիտական արխիվ, Գործ 28, Յուրակ 8, էջ 62:

դակի բարձրացնելու քաղաքական երկխոսությունը և նպաստելու տնտեսական հարաբերությունների աշխուժացմանը:⁷⁴

Բեռլինում իր ելույթում Քոչարյանը ընդգծեց Գերմանիայի հետ գործակցության Հայաստանի պատրաստակամության և ցանկության մասին, մասնավորապես. «Մեր այցելությունը Գերմանիա տեղի է ունենում Եվրոպական միության ընդլայնման պատմական ժամանակաշրջանում: Մենք հույս ունենք, որ Եվրոպայի միավորման այս գործընթացը կես ճանապարհին կանգ չի առնի: Մեր պատմությամբ, մշակույթով, փիլիսոփայությամբ, լեզվով և հավատքով պատկանում ենք եվրոպական քաղաքակրթությանը: Հայաստանի զարգացումն ու բարգավաճումը կարող է միայն խրախուսված լինել ժողովրդավարության և ազատության ամուր հիմքի վրա»: Ամփոփելով խոսքը՝ նախագահը վերահաստատեց Գերմանիայի հետ գործակցությունն ընդլայնելու պատրաստակամությունը:⁷⁵

Քաղաքական երկխոսությունը էապես ակտիվացել էր, որի համար փոխադարձ շահագրգռվածություն կար, որը մի կողմից պայմանավորված էր հարավկովկասյան տարածաշրջանային զարգացումների նկատմամբ Գերմանիայի և ԵՄ աճող հետաքրքրությամբ՝ տարածաշրջանում եվրոպական ներգրավվածությունը ուժեղացնելու նպատակով, իսկ մյուս կողմից՝ Հայաստանի քաղաքական օրակարգում եվրոպական ինտեգրացիայի կարևորմամբ:

Գերմանիայի հետ քաղաքական երկխոսությունը Հայաստանը կարևորում էր ինչպես երկկողմ հարաբերությունների, այնպես էլ եվրոպական և եվրա-ատլանտյան համագործակցության

⁷⁴ Հայաստանի ԱԳՆ պատմադիվանագիտական արխիվ, Գործ 13, Յուգակ 13, էջ 104:

⁷⁵ Տե՛ս Քոչարյանը կրնդգծէ Հայաստանի դերակատարութեան կարևորութիւնը, *Ազատ օր*. 2003, 15-ը հունվար, 17476, Աթենք, էջ 1:

զարգացման համատեքստում: ՀՀ-ԵՄ հարաբերություններում շրջադարձային էր 2004 թ. հունվարին Հայաստանի ընդգրկումը (Հարավկովկասյան մյուս հանրապետությունների հետ միասին) Եվրոպական հարևանության քաղաքականության մեջ (ԵՀՔ), որտեղ մեծ դեր է խաղացել Գերմանիան՝ ԵՄ-ում ակտիվորեն պաշտպանելով Եվրոպական հարևանության քաղաքականության տարածումը նաև Հարավային Կովկասի երկրներում: Այս առումով կարևոր և շարունակական քայլ էր նաև 2006 թ. նոյեմբերի 14-ին ԵՄ-Հայաստան գործողությունների ծրագրի ընդունումը: Հայաստանը ողջունում էր Եվրոպական հարևանության քաղաքականության մասին Եվրոպական հանձնաժողովի 2006 թ. դեկտեմբերի 4-ի արձանագրությունը, որով նախատեսվում էր խորացնել Եվրոպական հարևանության տնտեսական և առևտրային բաղադրիչը:⁷⁶

Եվրոպական ինտեգրացիայի գործընթացներում Հայաստանի շահագրգռվածությունը չէր կարող անպատասխան մնալ ԵՄ երկրների՝ այդ թվում Գերմանիայի ուշադրության կենտրոնից: Ինչպես ԵՄ ինտեգրացիոն գործընթացներում, այնպես էլ համագործակցության յուրաքանչյուր բնագավառում գերմանացիները ակնկալում են հայկական կողմի նախաձեռնողականությունը, որը նաև հիմք է ստեղծում գործակցությունը շարունակելու և հետագայում ամրապնդելու համար:

2003 թ. նոյեմբերի 12-13-ը ԳԴՀ Տնտեսական համագործակցության և զարգացման դաշնային նախարար տիկին Հայդեմարիա Վիչորեկ-Ցոյլի հրավերով Գերմանիայում էր ՀՀ արտգործնախարար Վ. Օսկանյանը, ով մասնակցեց և ելույթ ունեցավ

⁷⁶ Հայաստանի արտաքին գործերի նախարարության պատմադիվանագիտական արխիվ, Գործ 13, Ցուցակ 13, էջ 102:

«Հարավային Կովկաս, մարտահրավերներ և զարգացման հեռանկարներ» միջազգային քաղաքական երկխոսությանը միտված համաժողովին, ինչպես նաև հանդիպում ունեցավ ԳԴՀ արտաքին գործերի նախարար Յ. Ֆիշերի և Վրաստանի ու Ադրբեյջանի արտաքին գործերի նախարարների և ԳԴՀ Տնտեսական համագործակցության ու զարգացման նախարար տիկին Վիշորեկ-Ցոյլի հետ: 2004 թ. ապրիլի 22-ին տարածաշրջանային մեկօրյա այցով Հայաստանում էր ԳԴՀ արտաքին գործերի նախարար Յոշկա Ֆիշերը, ով հանդիպումներ ունեցավ նախագահ Ռ. Քոչարյանի հետ, ապա Ֆիշերը այցելեց Հայոց ցեղասպանության գոհերի հուշահամալիր: Սա առաջին անգամն էր, որ Գերմանիայի կառավարության անդամը այցելում էր ցեղասպանության հուշահամալիր:⁷⁷

2003 թ. Քոչարյանի այցից հետո քաղաքական երկխոսության շարունակականության ապահովման առումով կարևոր էր նրա 2004 թ. նոյեմբերի 17–20–ը կայացած աշխատանքային այցը Գերմանիայի Դաշնային Հանրապետություն: Քոչարյանը հանդիպումներ ունեցավ նախագահ Հորսթ-Քյոիլերի, վարչապետ Գ. Շրյոդերի հետ, ինչպես նաև մասնակցեց «Հերբերթ Քվանդթ» հիմնադրամի կողմից կազմակերպված 10–րդ եվրոպական ֆորումին՝ ելույթ ունենալով «ԱՊՀ–Եվրամիություն տնտեսական համագործակցությունը Հայաստանի տեսանկյունից» թեմայով:⁷⁸ Քոչարյան–Քյոիլեր հանդիպման ընթացքում ԳԴՀ նախագահը շեշտեց, որ Գերմանիան կշարունակի աջակցել Հայաստանին քաղաքական և տնտեսական բարեփոխումներ իրականացնելու գործում և հավաստիացրեց, որ գերմանական պատրաստակամությունը պայ-

⁷⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 105:

⁷⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 105:

մանավորված է Հայաստանում բարեփոխումների արդյունքներով և հեղինակություն վայելող միջազգային կառույցների տրված գնահատականով⁷⁹:

Վերը նշվածից ելնելով՝ Գերմանիան ուշի ուշով հետևում էր Հարավկովկասյան հանրապետություններում տեղի ունեցող իրադարձություններին և այդ երկրներում ընթացող բարեփոխումներին, որն էլ հենց հիմք էր տալիս ԵՄ-ի հետ հարաբերությունների սերտացման համար:

2004 թ. հունիսին Բեռլինում անցկացվեց հայ-գերմանական տնտեսական համաժողով, որին մասնակցելու նպատակով Գերմանիայում էր ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանի գլխավորած պատվիրակությունը, որը հանդիպումներ ունեցավ արտաքին գործերի նախարար Յ. Ֆիշերի և ԳԴՀ տնտեսական համագործակցության և զարգացման նախարար տիկին Վիշորեկ-Ցոյլի հետ:⁸⁰

«Ազգ» օրաթերթին տված հարցազրույցի ժամանակ դ-ր Բաֆֆի Քանդյանը և ԳԴՀ-ում ՀՀ դեսպան Կարինե Ղազինյանը, ամփոփելով Բեռլինում կայացած տնտեսական երկրորդ ֆորումի աշխատանքները, բարձր գնահատեցին ֆորումի անցկացումը և հետագա նշանակությունը: Դ-ր Քանդյանը, մտաբերելով 2000 թ. նույն վայրում անցկացված առաջին բիզնես ֆորումը, որը լի էր հոկտեմբերի 27-ից բխող անորոշությամբ, անվստահության մթնոլորտով, և 4 տարի առաջ հնչած դժգոհություն-դիտողությունները համեմատելով արդեն 2004 թ. «Բիզնես 2-րդ» համաժողովի ընթացքում հնչած գնահատականների հետ, հույս էր հայտնում, որ ապագայում

⁷⁹ «Գերմանիա պիտի շարունակե աջակցիլ Հայաստանին» հայտարարեց նախագահ Քեօիլը, *Ազատ օր.* Աթենք, 20-ը նոյեմբեր, 18025, 2004, էջ 1:

⁸⁰ Հայաստանի արտաքին գործերի նախարարության պատմադիվանագիտական արխիվ, Գործ 13, Ցուցակ 13, էջ 105:

ներդնելու պատրաստակամությունը գերմանական կողմից չի նվազի, հայկական կողմն էլ խոչընդոտները վերացնելու խոստումները չի հետաձգի:⁸¹

2004 թ. Հայաստանի Հանրապետությունում Գերմանիայի Դաշնային Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան նշանակվեց տիկին Հայկե Փայչը⁸²: Հայ-գերմանական երկկողմ հարաբերությունների նախկին դինամիկան և բովանդակությունը իրենց շարունակությունը ունեցան 2006 թ. մարտին ՀՀ նախագահի և փետրվարին՝ ԱԳ նախարարի այցելությունների ընթացքում: Քաղաքական երկխոսությունը բավական ակտիվորեն շարունակվել է երկու երկրների արտաքին քաղաքական գերատեսչությունների միջև: Տարվա ընթացքում Հայաստան են այցելել նաև ԳԴՀ ԱԳՆ տարբեր ստորաբաժանումների բարձրաստիճան պաշտոնյաները:

Քաղաքական առումով 2005 թ. ամենակարևոր իրադարձությունը, թերևս, Բունդեսթագի հունիսի 16-ի «1915 թ. ապրիլի 24-ին հայերի տեղահանությունների և ջարդերի 90-րդ տարեդարձի հիշատակի կապակցությամբ Գերմանիան պետք է իր օժանդակությունը բերի թուրքերի և հայերի հաշտեցմանը» վերնագրով բանաձևն էր:⁸³ ԳԴՀ-ում ՀՀ դեսպան տիկին Ղազինյանը հետևյալ կերպ մեկնաբանեց բանաձևի ընդունումն ու դրա քաղաքա-

⁸¹ Անահիտ Հովսեփյան, Ակնհայտ է Գերմանիա-Հայաստան հարաբերությունների դինամիկան, *Ազգ օրաթերթ*, 2004, 122, 2 հուլիսի, էջ 4:

⁸² Հայաստանի արտաքին գործերի նախարարության պատմադիվանագիտական արխիվ, Գործ 14, Ցուցակ 13, էջ 78:

⁸³ Deutscher Bundestag, Antrag der Fraktionen SPD, CDU/CSU, BÜNDNIS 90/DIE GRÜNEN und FDP, Erinnerung und Gedenken an die Vertreibung und Massaker an den Armeniern 1915 – Deutschland muss zur Versöhnung zwischen Türken und Armeniern beitragen, Drucksache 15/5689, 15.06.2005:

կան նշանակությունը՝ նշելով. «Այս տարի հունիսի 16–ին Բունդեսթագի՝ Հայոց ցեղասպանության վերաբերյալ կայացրած որոշմամբ 2005 թ. դարձավ մեր երկկողմ հարաբերություններում հաջող մեկնարկի տրամաբանական շարունակություն: Այս երկրի քաղաքական դեկավարությունը, որը միշտ ընդգծել է, թե սխալ է համարում պատմական հարցերը տարբեր երկրների խորհրդարաններ մտցնելն ու դրանց գնահատականներ տալը, թեկուզև համոզված է Հայոց ցեղասպանության եղելությանը, Մեծ եղեռնի 90–ամյա տարելիցին հետ կանգնեց իր որդեգրած քաղաքականությունից և Բունդեսթագում անցկացրեց մի բանաձև, որում Թուրքիային կոչ է անում ձանաչել իր անցյալը, վերացնել Հայաստանի մեկուսացումը, դիվանագիտական հարաբերություններ հաստատել մեր երկրի հետ և արժանի դառնալ եվրոպական ընդհանուր պատմության և հիշողության կրողների շարքը մտնելուն»:⁸⁴

2005 թ. Բունդեսթագում ցեղասպանության բանաձևի քննարկումը և ընդունումը տեղի էր ունենում Գերմանիայի համար ներքաղաքական թեժ ժամանակահատվածում, քանի որ 2005 թ. աշնանը տեղի ունեցան խորհրդարանական ընտրությունները, որի արդյունքում սոցիալ–դեմոկրատ Գերհարդ Շրյոդերին փոխարինեց քրիստոնեա–դեմոկրատ Անգելա Մերկելը:⁸⁵

2006. նոյեմբերի 15–16–ը տեղի ունեցավ ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի թվով արդեն երրորդ այցելությունը ԴԳՀ, որը կայացավ իսկապես կարևոր ժամանակահատվածում՝ Գերմանիայի կողմից ԵՄ և Մեծ ութնյակի նախագահությունը ստանձ-

⁸⁴ Անահիտ Հովսեփյան, «Ազգ» օրաթերթ, 2005, 146, 19 օգոստոսի, էջ 4:

⁸⁵ Bundestagswahl 2005, Schröder am Ende – Merkel führt große Koalition, <http://www.n24.de/n24/Wissen/History/d/3530874/schroeder-am-ende---merkel-fuehrt-grosse-koalition.html>, հասանելի՝ 11.06.2015:

նելու նախաշեմին: Գերմանիայի ԵՄ նախագահության արդեն հայտարարված առաջնայնություններից էր «ԵՄ նոր հարևանության» ծրագրին նոր լիցքեր հաղորդելը և ծրագրում ընդգրկված երկրների հետ ավելի սերտ աշխատանքը, որոնց թվում էին նաև Հարավային Կովկասի երեք հանրապետությունները: Այցի շրջանակներում ստորագրվել է համաձայնագիր «ՀՀ և ԳԴՀ կառավարությունների միջև առանց թույլտվության գտնվող անձանց հետ ընդունելու և տարանցիկ փոխադրելու մասին»: Նախագահ Քոչարյանը հանդիպումներ է ունեցել կանցլեր Անգելա Մերկելի, Բունդեսբանկի նախագահ Նորբերտ Լամմերթի, Բեռլինի քաղաքապետ Քլաուս Վոլֆերայթի հետ: Իր հանդիպումներում նախագահն իր գոհունակությունը հայտնեց վերջին հինգ տարիներին հայ-գերմանական երկկողմ համագործակցության դինամիկ զարգացման համար և ներկայացրեց մեր երկրում վերջին 15 տարիներին կատարված պետականաշինության և բարեփոխումների զարգացումները: Այցն ամփոփվեց Գերմանիայում ազդեցիկ դեր ունեցող «Բերտելսման» հիմնադրամում՝ նախագահի ելույթով:⁸⁶

Նախագահ Քոչարյանի այցը թերևս երրորդն էր իր պաշտոնավարման շրջանում, բայց առաջինն էր Գերմանիայի նորընտիր իշխող շրջանակների հետ: Այն նախորդ այցերի տրամաբանական շարունակությունն էր և կարևորվում էր, որ նախագահը գերմանացի գործընկերների ուշադրությունն էր հրավիրում Հայաստանում տեղի ունեցող բարեփոխումներին, որը լավ ազդակ էր հարաբերությունների խորացման և ինտենսիվացման համար:

Գերմանիայի կառավարության կազմավորումից հետո 2006 թ. մարտի 1-ին մեկօրյա այցով Գերմանիայում էր ՀՀ արտգործնա-

⁸⁶ Հայաստանի արտաքին գործերի նախարարության պատմադիվանագիտական արխիվ, Գործ 13, Ցուցակ 13, էջ 105:

խարար Վ. Օսկանյանը, իսկ արդեն 2006 թ. սեպտեմբերի 22–23–ը նախարարը մասնակցեց Բեռլինում Բերտելսման հիմնադրամի ֆորումին:

2007 թ. փետրվարի 20–ին տարածաշրջանային այցելության շրջանակներում Երևան այցելեց ԴԳՀ արտգործնախարար Ֆրանկ–Վալտեր Շթայնմայերը: Այցի ընթացքում հանդիպեց ՀՀ վարչապետ Ա. Մարգարյանին, արտգործնախարար Վ. Օսկանյանին, Հայաստանի ընդդիմադիր կուսակցությունների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ: Այցելեց Սուրբ Էջմիածին և Մեծ Եղեռնի հուշահամալիր: Շթայնմայերի տարածաշրջանային այցով ԵՄ նախագահությունը ցանկանում էր ընդգծել Հարավային Կովկասում ակտիվորեն ներգրավելու իր մտադրությունը: Նման դիրքորոշման հիմքում ընկած էր ԵՄ առանձնահատուկ շահագրգռվածությունը՝ ապահովելու հարևանության կայուն զարգացումը, որի առիթով Գերմանիայի ԱԳ նախարարը կարևորեց Հայաստանում բարեփոխումների հետևողական շարունակությունը, ընտրությունների արդար անցկացումը և ԼՂ հիմնախնդրի շուտափույթ խաղաղ կարգավորումը:⁸⁷

Շթայնմայերի սույն այցելությունը տարբերվում էր մյուսներից նրանով, որ Գերմանիայում հետաքրքրված էին նաև Հայաստանում քաղաքացիական հասարակության զարգացման և ժողովրդավարության պահպանման ու զարգացման անհրաժեշտությամբ, ինչի մասին են վկայում նրա հանդիպումները քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ:

2007 թ. ապրիլի 16–20–ը Բեռլինի քաղաքապետ Ք. Վոլերայթի հրավերով Գերմանիայում էր Երևանի քաղաքապետ Երվանդ Զախարյանը: Քաղաքապետարանում տեղի ունեցած բանակցու-

⁸⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 106:

թյունների շրջանակներում Երվանդ Զախարյանը իր գործընկեր-
ջը ներկայացրեց Երևան–Բեռլին համագործակցությունը առող-
ջապահության և կրթության ոլորտում, երկու քաղաքների հիվան-
դանոցների և դպրոցների միջև համագործակցության ներուժը:⁸⁸

Երկկողմ հարաբերությունների զարգացման համար կարևոր
և անհրաժեշտ ազդակ են նմանատիպ ապակենտրոնացված հա-
մագործակցության օրինակները, ինչը մի կողմից հնարավորու-
թյուն է տալիս ավելի ստորին մակարդակում ճանաչելու միմյանց,
մյուս կողմից՝ ակտիվ համագործակցելու հնարավոր հարթակ էր
ստեղծվում:

Երկկողմ հարաբերությունների զարգացման համար կար-
ևորվում են նաև պատվո հյուպատոսությունների ստեղծումը, որի
գոյությունը հայ–գերմանական հարաբերություններում բավա-
կանին երկար սպասեցնել տվեց: 2007 թ. ապրիլին Գերմանիայի
Բադեն–Վյուրթենբերգ երկրամասի Կարլսռուհե քաղաքում կա-
տարվեց ԳԴՀ–ում առաջին ՀՀ պատվո հյուպատոսարանի պաշ-
տոնական բացումը: Պաշտոնական բացման արարողությանը
պատվո հյուպատոս Գյունթեր Պիլարսկուն շնորհավորեց Բա-
դեն Վյուրթենբերգ երկրամասի վարչապետ պարոն Օթինգերը
(Günther Oettinger) և Երևանի քաղաքապետ Երվանդ Զախա-
րյանը:⁸⁹

2007 թ. օգոստոսի 16–ին ՀՀ նախագահին իր հավատար-
մագրերը հանձնեց դեսպան Անդրեա Մարիա Վիկտորինը:⁹⁰

⁸⁸ Տե՛ս նույն տեղում:

⁸⁹ Հայաստանի արտաքին գործերի նախարարության պատմադիվանա-
գիտական արխիվ, Գործ 18, Ցուցակ 14, էջ 37:

⁹⁰ Հայտագիր, ԳԴՀ դեսպանություն. Երևան, Հայաստանի արտաքին
գործերի նախարարության պատմադիվանագիտական արխիվ, Գործ 14,
Ցուցակ 13, էջ 71:

2007 թ. խորհրդարանական ընտրությունները և 2008 թ. դրանց հաջորդող նախագահական ընտրությունները նոր հիմք հանդիսացան հայ-գերմանական հարաբերությունների զարգացման համար և տրամաբանական շարունակություն ունեցան նախորդ տարիների ձեռքբերումները և պայմանավորվածությունները իրականացնելու համար:

2008 թ. հայ-գերմանական երկկողմ շփումներում կարևորում ենք 2008 թ. հունվարին Հայաստանի մասնակցությունը առաջին անգամ Բեռլինում ամենամյա կազմակերպվող «Կանաչ շաբաթ» գյուղատնտեսական ցուցահանդեսին, որին Հայաստանը ներկայացել էր 10-ից ավելի հայկական ընկերություններով: 2008 թ. փետրվարին ՀՀ արտգործնախարար Օսկանյանը մասնակցեց Մյունխենի «Անվտանգության 43-րդ» կոնֆերանսին, որը Օսկանյանի՝ որպես արտաքին գործերի նախարարի, վերջին այցելությունն էր Գերմանիայի Դաշնային Հանրապետություն:⁹¹ 2008 թ. Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում իր դեսպանավարման շրջանը ավարտեց դեսպան Կարինե Ղազինյանը, ում ավանդը մեծ է հայ-գերմանական հարաբերություններին նոր ազդակ և ինտենսիվություն հաղորդելու գործում: 2009 թ. ՀՀ նախագահի հրամանագրով Արմեն Մարտիրոսյանը նշանակվեց ԳԴՀ-ում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան:⁹²

Վահան Հովհաննիսյանը (2013) փոխարինեց Արմեն Մարտիրոսյանին: 2015 թ. ԳԴՀ-ում արտակարգ և լիազոր դեսպան նշանակվեց Աշոտ Սմբատյանը, ով իր պաշտոնավարման ընթաց-

⁹¹ Հայաստանի արտաքին գործերի նախարարության պատմադիվանագիտական արխիվ, Գործ 14, Ցուցակ 13, էջ 69:

⁹² ՀՀ նախագահի հրամանագիրը Ա. Մարտիրոսյանին ԳԴՀ-ում արտակարգ և լիազոր դեսպան նշանակելու մասին, 2009 թ. Հայաստանի արտաքին գործերի նախարարության պատմադիվանագիտական արխիվ, Գործ 12, Ցուցակ 15, էջ 100:

քում մեծապես նպաստեց հայ-գերմանական հարբերությունների զարգացմանը: Դրա մասին են վկայում երկկողմ փոխայցելությունների ինտենսիվությունն ու բարձր մակարդակը, Բեռլինում «Թումո» կենտրոնի բացումը, 2016 թ. Հայոց ցեղասպանության ճանաչման վերաբերյալ բանաձևի ընդունումը, հայ-գերմանական միջխորհրդարանական կապերի ամրապնդումն ու զարգացումը և տնտեսական կապերի աշխուժացումը:

2008–2018 թթ. Հայաստան–Գերմանիա համագործակցությունը շարունակել է զարգացում ապրել և տեղի են ունեցել բարձր մակարդակի հետևյալ փոխայցելությունները՝ նախագահ Սերժ Սարգսյանի 2009 թ. փետրվարի, 2010 թ. հունիսի, 2016 թ. ապրիլի և 2018 թ. փետրվարի Գերմանիայի Դաշնային հանրապետություն կատարած այցերը, ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանի 2011 թ. հոկտեմբերին, 2012 թ. փետրվարին, 2013 թ. մարտին, 2013 թ. հոկտեմբերին, 2014 թ. հունիսին, 2015 թ. դեկտեմբերին, 2016 թ. նոյեմբերին կայացած այցերը: ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանի 2011 թ. սեպտեմբերին և վարչապետ Տիգրան Սարգսյանի 2012 թ. դեկտեմբերին տեղի ունեցած այցերը: Գերմանական կողմից Հայաստան այցերից առանձնակի պետք է շեշտել ԳԴՀ փոխվարչապետ, ԱԳ դաշնային նախարար Գիլդո Վեստերվելլեի 2012 թ. մարտին, Բունդեսթագի նախագահ Նորբերթ Լամմերթի 2013 թ. մարտին կատարած այցերը, ինչպես նաև ԳԴՀ ԱԳ դաշնային նախարար Ֆրանկ–Վալտեր Շտայնմայերի 2014 թ. հոկտեմբերի և 2016 թ. հունիսին Հայաստան կատարած այցերը:⁹³

2018 թ. Հայաստանում տեղի ունեցան բողոքի լայնածավալ ցույցեր ընդդեմ իշխանության, որի արդյունքում «թավշյա հե-

⁹³ Տե՛ս ՀՀ ԱԳՆ պաշտոնական կայքէջ, Երկկողմ հարաբերություններ, Գերմանիայի, ընդհանուր տեղեկություններ <https://www.mfa.am/hy/bilateral-relations/de>, 01.07.2022.

դափոխության» միջոցով իշխանափոխություն տեղի ունեցավ, և ընտրությունների միջոցով իշխանության եկավ Նիկոլ Փաշինյանը:⁹⁴

2019 թ. հունվարի 31-ից փետրվարի 1-ը տեղի ունեցավ Նիկոլ Փաշինյանի պաշտոնական այցը, որին նախորդել էր 2018 թ. օգոստոսին Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելի այցը Հայաստան: Փաշինյան-Մերկել հանդիպմանը Մերկելը Բեռլինում նշեց, որ լավատեսական տրամադրություններ է զգացել Հայաստանում և նշել, որ հետևում է Հայաստանում տեղի ունեցող իրադարձություններին, իսկ Բունդեսթագի նախագահի հետ հանդիպմանը Վոլֆգանգ Շոյբլեն նշում էր, որ Հայաստանը կարևոր գործընկեր է Գերմանիայի համար, և Գերմանիան պատրաստ է կիսվելու խորհրդարանական կառավարման ոլորտում իր կուտակած փորձով և հաջողություններով:⁹⁵ Կոնրադ Ադենաուեր հիմնադրամում կայացած հանդիպմանը Փաշինյանը Գերմանիան ներկայացրեց որպես Հայաստանի կարևոր գործընկեր և պատրաստակամություն հայտնեց այս հարաբերությունները ամրապնդելու և նոր տնտեսական համագործակցություններ ձևավորելու համար:⁹⁶

ՀՀ-ԳԴՀ երկկողմ քաղաքական փոխհարաբերությունների առաջին շրջանը կրում էր առավելապես ճանաչողական բնույթ:

⁹⁴ Philipp Dienstbier, „Die Partnerschaft mit der EU ist von entscheidender Bedeutung für ein demokratisches Armenien“ Armenischer Premierminister Nikol Paschinjan in der KAS <https://www.kas.de/de/veranstaltungsberichte/detail/-/content/auf-ideen-und-prinzipien-der-stiftung-gebaut>, 10.11.2020.

⁹⁵ ՀՀ վարչապետի աշխատակազմի պաշտոնական կայքէջ, <https://www.primeminister.am/hy/foreign-visits/item/2019/01/31/visit-to-Federal-Republic-of-Germany/>, 12.07.2022:

⁹⁶ Philipp Dienstbier, „Die Partnerschaft mit der EU ist von entscheidender Bedeutung für ein demokratisches Armenien“ Armenischer Premierminister Nikol Paschinjan in der KAS <https://www.kas.de/de/veranstaltungsberichte/detail/-/content/auf-ideen-und-prinzipien-der-stiftung-gebaut>, 10.11.2020:

Գերմանական կողմը միտված էր առավել խոր պատկերացում կազմելու Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցող քաղաքական գործընթացների վերաբերյալ, իսկ հայկական կողմն առաջին քայլերն էր անում եվրոպական խոշոր ուժային կենտրոններից մեկի հետ բարեկամական հարաբերությունների հաստատման ուղղությամբ: Երկկողմ հարաբերություններում նոր փուլի մեկնարկը կարելի է համարել Ռոբերտ Քոչարյանի պաշտոնավարման շրջանը, որը առանձնակի նշանակություն դարձրեց և նոր լիցքեր հաղորդեց հայ-գերմանական հարաբերություններին: Խոսելով հայ-գերմանական միջխորհրդարանական հարաբերությունների մասին՝ անհրաժեշտ է ընդգծել Գերմանիայի դերը երկու առումով՝ Գերմանիան՝ որպես տնտեսապես հզոր, կայացած ժողովրդավար խորհրդարանական երկիր, և Գերմանիան՝ որպես Եվրոպական միության կորիզը կազմող երկիր, որի հետ խորհրդարանների մակարդակով համագործակցության ինտենսիվացումը դրական արդյունք ունի տարբեր ոլորտներում հայ-գերմանական համագործակցության վրա:

Բանալի բառեր՝ Հայ-գերմանական հարաբերություններ, 30-ամյա երկկողմ հարաբերություններ, քաղաքական շփումներ, երկկողմ փոխայցելություններ, հարաբերությունների զարգացման դինամիկա, քաղաքականություն, դիվանագիտություն

Ազատության մարտահրավերը

Հարցազրույց Աշոտ Ոսկանյանի հետ
Գերմանիայում Հայաստանի Հանրապետության դեսպան
(1998–2002 թթ.)

— Հայ-գերմանական հարաբերությունների համատեքստում
ինչ ձեռքբերումներ կառանձնացնեք, որոնք արձանագրվել են
Ձեր պաշտոնավարման տարիներին:

— Չեմ կարծում, որ իմաստ ունի անվանական թվարկել կնքված
պայմանագրերը և տնտեսական համագործակցության առանձին
փուլերը՝ լինեն դրանք քաղաքական համաձայնագրեր, միջկա-
ռավարական հանձնաժողովի նիստեր, տեխնիկական օգնության
փաստաթղթեր, հանքարդյունաբերության կամ այլ ոլորտների
հետ կապված համագործակցություն, թե մշակութային միջոցա-
ռումներ: Դա այն ընթացիկ աշխատանքն է, որի նմանը կատար-
վում է բոլոր դեսպանություններում և որի մասին դիվանագիտա-
կան տարեգրերում հեշտությամբ կարելի է տվյալներ գտնել: Այս-
տեղ ես նախ և առաջ կուզեի շեշտել, որ դա փոխադարձ ճանաչման
և հարաբերությունների հասունացման շրջան էր: Հանգամանք,
որ ինքնին հասկանալի է Հայաստանի նորանկախ հանրապետու-
թյան առումով, բայց վերաբերում է նաև Գերմանիային, որը նույն-
պես փոփոխություններ էր ապրում այդ տարիներին: Մինչ օրս իմ
արխիվում պահում եմ գերմանական գործընկերներից ստացված
«Die Zeit» շաբաթաթերթի համարներից մեկը՝ բեռլինյան պա-
տը քլունգով քանդող երիտասարդի նկարով, որը տեղադրված էր

առաջին էջում հետևյալ վերտառությամբ՝ «O Freiheit, kehrest du zurück?»: *Վերադարձող ազատության* այդ զգացողությունը, թեև տարբեր կերպով, սակայն հավասարապես ապրում էին ինչպես Հայաստանում, այնպես էլ Գերմանիայում:

Հայաստանի դիվանագիտական կառույցը, այդ տարիներին ներգրավված լինելով մի շարք կենսական հարցերի և նախ և առաջ Արցախի խնդրի լուծման գործում, հատուկ ուշադրություն էր սկսել դարձնել իր ինստիտուցիոնալ կառուցվածքների ամրապնդմանը: Մոտավորապես նույն ժամանակ տեղի ունեցավ ԳԴՀ մայրաքաղաքի, հետևաբար նաև ԳԴՀ ԱԳՆ-ի (ինչպես և մեր դեսպանության) տեղափոխումը Բոննից Բեռլին, որի նշանակությունը միայն խորհրդանշական չէր:

— Ո՞ր հիշարժան այցերն ու քաղաքական իրադարձություններն են հատկապես բնորոշում այդ տարիների դիվանագիտական օրակարգը:

— Իհարկե կարևոր իրադարձություններից էր 1998 թվականի մայիսին ՀՀ ԱԳ նախարար Վարդան Օսկանյանի այցը Գերմանիա՝ ի պատասխան ԳԴՀ ԱԳ նախարար Կլաուս Կինկելի 1995 թվականի դեկտեմբերին Երևան կատարած այցին: Ավելորդ չէ նշել, որ դա նորանշանակ նախարարի առաջին այցն էր արտասահման, այնպես որ նրա արտագնա աշխատանքը սկսվեց Գերմանիայից: Բացի միջպետական զանազան խնդիրներից՝ այդ այցը հատուկ խորհրդանշական նշանակություն ստացավ Երկրորդ համաշխարհային պատերազմի հետևանքով Գերմանիայից Հայաստան տեղափոխված 575 մշակութային իրերը վերադարձնելու շնորհիվ: Խոսքս տարբեր գրքերի, ձեռագրերի և երաժշտական պարտիտուրաների մասին է, որոնք խորհրդային զորքերի կողմից տարվել էին Բրեմենի, Լյուբեկի, Համբուրգի, Բեռլինի և այլ

քաղաքների գրադարաններից: Մասնավանդ նկատի ունենալով, որ այլ երկրների հետ նույնօրինակ բանակցություններում գերմանացի գործընկերները որոշ դժվարությունների էին հանդիպում, Հայաստանի իշխանությունների բարի կամքի այդ դրսևորումը բարձր գնահատվեց գերմանական իշխանությունների կողմից:

Հիշատակման արժանի է նույն թվականին Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Ա-ի՝ Գերմանիա կատարած հայրապետական այցը, որի ընթացքում, բացի համայնքային բազմաթիվ միջոցառումներին մասնակցելուց, նա հանդիպումներ ունեցավ Նորդռայն-Վեստֆալեն երկրամասի վարչապետ, ԳԴՀ ապագա նախագահ Յոհաննես Ռաուի և ԳԴՀ կանցլեր Հելմուտ Քոլի հետ: Երկու հանդիպումներն էլ վկայում էին այն մեծագույն ուշադրության մասին, որը գերմանական քաղաքական գործիչները տաժում էին հայ ժողովրդի պատմության, մշակույթի և նրա քրիստոնեական արմատների նկատմամբ: Առանձին հիշատակման է արժանի կանցլեր Քոլի հարցը Թուրքիայում հայ փոքրամասնության վիճակի մասին և նրա պատրաստակամությունը՝ միջնորդ ծառայելու հայերի իրավունքների պաշտպանության խնդրում:

Դեսպանությանը կարևոր գործերից էին Հանովերի համաշխարհային ցուցահանդեսին՝ Expo 2000-ին Հայաստանի մասնակցության կազմակերպական աշխատանքները: Այդ բոլոր առումներով հաջողված ցուցադրության մեջ Հայաստանը հանդես եկավ յուրահատուկ՝ Նոյի տապանի կերպով կառուցված հարթակով և ուշագրավ ազգային օր կազմակերպեց: Այս կապակցությամբ ուզում եմ պատմել դիվանագիտական մի կուրյոզի մասին, որի կարգավորումը բավական ջանքեր պահանջեց: Հայաստանի տաղավարի կենտրոնում տեղակայված էր Հայաստանի ու Արցախի՝ մետաղից դաջված միացյալ քարտեզը: Յուցահանդեսի բացումից շատ չանցած՝ Ադրբեջանի դեսպանությունը բողոք

ներկայացրեց գերմանական կողմին՝ պահանջելով հայկական տաղավարից հանել Արցախին վերաբերող հատվածը: Կազմակերպիչները դիմեցին մեզ՝ քարտեզից հրաժարվելու խնդրանքով: Տեղի ունեցան բազմափուլ բանակցություններ, որոնք իրենց բարձրակետին հասան ԳԴՀ ԱԳՆ-ի բարձրագույն ներկայացուցիչներից մեկի հետ իմ հանդիպման ընթացքում: Լսելով իմ պնդումը, որ ոչ միայն ես, այլև ՀՀ ԱԳ նախարարն է վիճակի չէ լուծելու այդ հարցը (հրաժարվել Արցախի պատկերից), պաշտոնյան հարցրեց. «Հապա ո՞վ կարող է այդ խնդրին լուծում տալ, պարո՞ն դեսպան»: Ասացի. «Չեմ կարող ասել ով, բայց գիտեմ, որ ՀՀ նախագահը նույնպես այդ խնդիրը լուծել չի կարող»: Գուցե պատասխանս շատ դիվանագիտական չէր, բայց կարծում եմ օգտակար էր այն առումով, որ որոշակի պատկերացում էր տալիս գերմանացի գործընկերներին այն համազգային կոնսենսուսի մասին, որն իշխում էր Հայաստանում Արցախի խնդրի վերաբերյալ: Համենայնդեպս, Հայաստանի և Արցախի միացյալ քարտեզն անձեռնմխելի մնաց մինչև ցուցահանդեսի փակման օրը՝ հոկտեմբերի 31-ը:

Այդ տարիներին առաջ եկած յուրահատուկ խնդիրներից դժվար է չհիշատակել «Լեփսիուսի տան» հարցը: Խոսքը Պոտսդամում գտնվող առանձնատան մասին էր, որը գերմանական կառավարությունը դեռ քսաներորդ դարասկզբին հատկացրել էր Յոհաննես Լեփսիուսին: Այստեղից է հայտնի հոգևորականն ու հասարակական գործիչը, չնայած իշխանությունների չկամությանը, Ռայխսաթագի պատգամավորներին և լայն հասարակայնությանը ուղարկել իր հայտնի՝ «Թուրքիայում հայ ժողովրդի վիճակի մասին» զեկույցը: Բայց քսաներորդ դարավերջին շենքը խարխված էր և փաստորեն չէր օգտագործվում: Պրոֆեսոր Հերման Գոլցի և Լեփսիուսի ժառանգների նախաձեռնությամբ խնդիր առաջադրվեց շենքը նորոգելու և այնտեղ Հայոց ցեղասպա-

նության հետ կապված փաստաթղթերի արխիվ ու գրադարան ստեղծելու մասին: Դժվարություններն այստեղ երկակի էին՝ ֆինանսական (նորոգումը զգալի գումար էր պահանջում) և քաղաքական, որը կապված էր թուրքական կողմի, մասնավորապես՝ Պոտսդամում Թուրքիայի հյուպատոսի կատաղի դիմադրության հետ: Այդ գործը տարիների ջանք պահանջեց, և ամենատարբեր պաշտոնյաներ ներգրավվեցին (այդ առումով չեմ կարող շնորհակալությամբ չհիշատակել Պոտսդամի քաղաքագլուխ Մաթիաս Պլացեկի օժանդակությունը): Նպատակին հասնելը հեշտ չէր, այդ ուղղությամբ աշխատանքները շարունակվել են նաև իմ վերադարձից հետո: Բայց այսօր կարող ենք գոհունակությամբ արձանագրել, որ խնդիրը լուծված է. Լեփսիուսի տունը վերածվել է գործող հիմնարկի և պատվով է կատարում իր առաքելությունը:

— Քաղաքական ո՞ր ուժերը կամ գործիչներն էին հատկապես հետաքրքրվում Հայաստանին վերաբերող թեմաներով: Ինչպիսի՞ ասոցիացիաներ էր առաջացնում Հայաստանը նրանց և հասարակության մոտ:

— Իմ պաշտոնավարության սկզբում Գերմանիայի կառավարության ղեկին էին քրիստոնեա-դեմոկրատները, որոնց հետագայում փոխարինեցին սոցիալ-դեմոկրատական իշխանությունները: Միանգամից ասեմ, որ երկու դեպքերում էլ հանդիպել եմ հավասարապես բարյացակամ և ուշադիր վերաբերմունքի: Պատահական չէ, որ հայաստանյան գործերին ամենաշատ ներգրավված երկու պատգամավորները՝ սոցիալ-դեմոկրատ Դիտրիխ Շպերլինգը և քրիստոնեա-դեմոկրատ Վիլլի Վիմերը ներկայացրել են այդ երկու կուսակցությունները: Առանձնապես ուզում եմ շեշտել դոկտոր Դ. Շպերլինգի ավանդը, որը զգալիորեն դուրս է գալիս զուտ դիվանագիտական շփումների շրջանակից՝ սկսած

Գերմանիայում գործող պետական ծառայության համակարգի ուսումնասիրությանն ուղղված իմ ջանքերին ցույց տված օժանդակությունից, երբ դեռ ՀՀ ԳԽ մշտական հանձնաժողովի նախագահն էի, մինչ Հայաստանի եվրոպական ինտեգրմանը նվիրված երևանյան գիտաժողովին իր մասնակցությունը, երբ արդեն վերադարձել էի:

Հայաստանով հետաքրքրվածները քիչ չէին, քաղաքական կուսակցությունների շրջանակն էլ բավական լայն էր՝ կանաչներ Կլաուդիա Ռոթից և Ջեմ Օզդեմիրից մինչ Քրիստոնեա-սոցիալական միության անդամ Կարլ-Թեոդոր ցու Գուտենբերգը և այն ժամանակ դեռ քրիստոնեա-դեմոկրատ Էրիկա Շթայնբախը: Փորձագիտական շրջանակի հետ շփումները կարևոր էին, այստեղ հիշատակելի են նախ և առաջ պրոֆեսոր Վոլֆգանգ Կաշուրան, դոկտոր Ուլե Հալբախը և դոկտոր Դիտմար Շորկովիցը:

Բոլորին անդրադառնալ իհարկե հնարավոր չէ: Բայց կան երկու անուններ, որոնց շրջանցել չեմ կարող՝ արդեն վերը հիշատակված Հալլեի համալսարանի պրոֆեսոր Հերման Գուլցը և Հայոց ցեղասպանության փաստաթղթերի անխոնջ հետազոտող Վոլֆգանգ Գուստը:

Առաջինի՝ հայկական մշակույթի նկատմամբ նվիրվածության մասին կարելի է անվերջ խոսել, բայց դրա կարիքը չկա. այդ մասին խոսում է Հալլե-Վիտտենբերգի համալսարանում իր հիմնադրած «Մեսրոպ» հայագիտական կենտրոնը, որն իր՝ մեզնից հեռանալուց հետո դեկավարում էր տիկին Արմենուհի Դրոստ-Աբգարյանը: Պրոֆեսոր Գուլցի եռանդուն մասնակցությամբ է, որ 2000 թվականին Հալլեում կազմակերպվեց Կիլիկյան աթոռի թանգարանում պահվող գանձերի ցուցադրությունը, և իր հեղինակությամբ էլ հրատարակվեց այդ գանձերին նվիրված փառահեղ ալբոմ-մենագրությունը:

Դոկտոր Վ. Գուստի մասին խոսելիս սահմանափակվեմ մեկ հատկանշական դրվագով: Դեսպանությունում մեր հանդիպումներից մեկի ժամանակ հարցրի. «Ի՞նչ եք կարծում՝ Հայոց ցեղասպանության խնդրում «գերմանական մեղսակցության» (deutsche Mitschuld) վրա ձեր կենտրոնացումը կարո՞ղ է արդյոք բացասական հոգեբանական ազդեցություն թողնել պատգամավորների վրա՝ բարդացնելով ցեղասպանության ճանաչման վերաբերյալ որոշման քվեարկությունը Բունդեսթագում: Նա ասաց. «Պարոն դեսպան, այդ քաղաքական հաշվարկները Ձեր խնդիրն են, ոչ իմը: Ես գիտնական եմ, և իմ միակ նպատակը ճշմարտությունն է: Իսկ թե ով ինչ քաղաքական եզրակացություն կանի դրանից, իմ թեման չէ»: Այս պարզ արձանագրությունն ի ցույց է դնում մի սկզբունքային դիրքորոշում, որ լրացուցիչ արժանահավատություն է տալիս նրա կատարած ահռելի աշխատանքին:

— Վերը որոշ դրվագների անդրադառնալիս ակամա շոշափեցիք Հայոց ցեղասպանության ճանաչման հարցը, որին բոլոր երկրներում այս կամ այն չափով առնչվում է Հայաստանի Հանրապետության ամեն մի դեսպան:

— Ես կանգ չեմ առնի Գերմանիայում այդ հարցի ծավալման վրա՝ կապված Բունդեսթագի 2016–ի հունիսի 2–ի համապատասխան բանաձևի ընդունման հետ. այդ մասին շատ է խոսվել և դեռ խոսվելու է: Բայց ահա մի մանրամասն, որը հետաքրքիր է հիշատակել: Խնդիրն այն էր, որ Գերմանիայում՝ թուրքական կառավարության բռնաճնշումների դատապարտման խնդրով շահագրգիռ էին ոչ միայն հայերը, այլ նաև երկրում բնակվող մյուս ազգային փոքրամասնությունները՝ հույները, քրդերը, ասորիները: Մանավանդ վերջիններս, զուրկ լինելով սեփական պետականությունից, մեծ շահագրգռվածություն էին ցուցաբերում

համագործակցելու Հայաստանի հետ: Դեսպանությունն այդ ազդակներին վերաբերվում էր ամենայն ուշադրությամբ և պատրաստականությամբ: Մինևույն ժամանակ մենք չէինք ցանկանում, որպեսզի Ցեղասպանության հանցագործության դատապարտման հիմնարար խնդիրը մանրանա և դիտարկվի որպես «թուրքերից նեղացած փոքր ժողովուրդների» Resentiment–ի խմբային դրսևորում: Դրանից ելնելով՝ Գերմանիայի՝ Քրիստոնյա ժողովուրդների խորհրդի հրավերով կարդացած իմ զեկուցման մեջ աշխատեցի Հայոց ցեղասպանության ճանաչման հարցը ներկայացնել ավելի լայն հեռանկարում՝ այն դիտարկելով որպես եվրոպական ապագա համակեցության գրավական և մարտահրավեր:¹ Գոհունակությամբ կարող եմ արձանագրել, որ դա այն ուղղությունն էր, որը որդեգրեց նաև Գերմանիայի Բունդեսթագն իր պաշտոնական որոշման մեջ:

— Եթե համեմատեք Գերմանիայում Հայաստանի մասին պատկերացումների զարգացումը անկախությունից սկսած, ինչպիսիք դինամիկա կարձանագրեք:

— Մինչ անկախությունը հայերը Գերմանիայում հայտնի են եղել նախ և առաջ երկու գործոնների շնորհիվ՝ 1915 թվականին հայ ժողովրդի ապրած մեծագույն ողբերգության՝ Հայոց մեծ եղեռնի, և դարավոր մշակութային ժառանգության: Խորհրդային Միության փլուզումը արմատապես նոր իրավիճակ ձևավորեց: Պայքարը հանուն Արցախի ժողովրդի ինքնորոշման իրա-

¹ 2001 թվականի ապրիլին Բեռլինի Կայզեր Վիլհելմ եկեղեցու հիշատակի մատուռում (Kaiser-Wilhelm-Gedächtniskapelle zu Berlin) ներկայացված այդ զեկուցման ընդլայնված տարբերակը տես. A. Voskian, Die Versöhnung als politische Aufgabe: Eine Herausforderung für Europa – ADK. Armenisch-Deutsche Korrespondenz, Jg. 2001–Heft 2 (Nr. 112), էջ 34–37:

վունքի, որի հիմքում որպես միջոց և նպատակ դրվեց խաղաղ միջոցներով ողջ հայկական հասարակության ժողովրդավարացման խնդիրը, ինչը չէր կարող համակրանք չառաջացնել Եվրոպայում՝ այդ թվում Գերմանիայում, որտեղ Հայաստանը բաղթան հանրապետությունների հետ մեկտեղ սկսեց դիտվել որպես նախկին խորհրդային տարածքի «ժողովրդավարության կղզյակներից» մեկը: Իմ պաշտոնավարության տարիներին դա հարաբերությունները կառուցելու կարևոր գործոն էր: Զգալի դեր խաղացին նաև Հայաստանի եվրոպական ձգտումները: Հիշեցնեմ, որ Հայաստանն առաջինն էր հարավկովկասյան հանրապետություններից, որ անկախության հռչակումից անմիջապես հետո դիմեց Եվրոպայի խորհրդին անդամակցելու համար (պատիվ եմ ունեցել անձամբ հանձնելու այդ գրությունը Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին):

Գոյատևելով դժվարին տարածաշրջանում՝ փակ սահմաններով և թշնամական շրջապատում, և որպես անխուսափելի ռազմավարական դաշնակից ունենալով՝ Ռուսաստանը, Հայաստանը միշտ աշխատել է հավասարակշռված քաղաքականություն վարել՝ հնարավորինս սերտ կապեր պահելով Եվրոպական միության երկրների և նախ և առաջ Գերմանիայի հետ: Դրա դրսևորումներից էր մեր երկրի ներգրավումը Եվրոպական արևելյան հարևանության և այլ նման ծրագրերի մեջ: Իրավիճակը սկսեց փոխվել, երբ ողջ ծավալով սրվեցին Ռուսաստանի Դաշնության և արևմտյան երկրների միջև հարաբերությունները: Հայաստանը, որ հաճախ աշխարհաքաղաքական ընտրություն կատարելու անհրաժեշտության առջև էր կանգնած, նաև այստեղ է փորձել կառուցողական մոտեցում ցուցաբերել: Այդ մասին է խոսում այն հանգամանքը, որ Հայաստանը, անդամակցելով հանդերձ Եվրասիական միությանը, հնարավորություն է գտել պահպանելու

ԵՄ–ի հետ համագործակցության վերանայված ձևաչափը: Կարծում եմ՝ այդ դիրքը գնահատվել է գերմանական գործընկերների կողմից, որոնք շատ լավ հասկանում են, որ դիվանագիտությունը «հնարավորի արվեստ է»:

Մեր երկրի նկատմամբ համակրանքի նոր ալիք առաջացրին 2018–ի իրադարձությունները, որի վառ դրսևորումը եղավ ԳԴՀ վարչապետ տիկին Անգելա Մերկելի այցը Հայաստան: Ցավոք, դրան հաջորդած հախուռն տարիները՝ Կովիդ–19–ի համաճարակը և առաջին հերթին Երկրորդ Արցախյան պատերազմը տեկտոնական ցնցումներ առաջացրին հայկական հասարակության մեջ, որը չէր կարող իր ազդեցությունը չունենալ արտաքին հարաբերությունների ոլորտի վրա: Բնական է, որ այսօր շատ քան նորոգման կարիք ունի:

— Ինչպե՞ս եք գնահատում Արցախի հարցում Գերմանիայի պաշտոնական դիրքորոշումը: Ինչպիսի՞ տրամադրություններ եք այդ հարցում նկատում հասարակական ոլորտում:

— Արցախի հարցում իմ համագործակցությունը գերմանացի գործընկերների հետ սկսել է դեռևս 1995 թվականին Վիեննայում, երբ զբաղեցնում էի ԵԱՀԿ–ում Հայաստանի մշտական ներկայացուցչի պաշտոնը: Մենք միշտ գնահատել ենք Գերմանիայի դրական դերակատարությունը որպես ԵԱՀԿ Մինսկի խմբի ակտիվ անդամի, որն ամենայն հարգանքով է վերաբերվել Արցախի խնդրի հիմքում դրված ժողովուրդների ինքնորոշման սկզբունքին և գործուն ջանքեր է գործադրել համատեղ և փոխզիջումային լուծումներ գտնելու ուղղությամբ: Ըստ այդմ՝ մեր համագործակցությունը չի սահմանափակվել Արցախի կարգավիճակին վերաբերող նեղ հարցով: Այսպես, օրինակ, հետաքրքիր է հիշատակել Եվրոպայում սովորական սպառազինություններին վերաբերող

պայմանագրի վրա աշխատանքը, որի ընթացքում երկու երկրների շահերի համընկնումներ ի հայտ եկան:

Գերմանիայում աշխատելու տարիներին հատկապես կարևոր եմ համարել Արցախյան հիմնախնդրի էական կողմերը վերլուծելու և այն խորապես հասկանալու ձգտումը, որը միշտ դրսևորել են գերմանացի գործընկերները՝ ինչպես պետական և դիվանագիտական, այնպես էլ փորձագիտական մակարդակով: Այդ գործընթացի էական բաղկացուցիչ մասն էին քննարկումները, որոնց պարբերաբար հրավիրվում էին հարավկովկասյան երեք երկրների դեսպանները: Մանավանդ բովանդակալից էին Արևելյան և միջազգային հետազոտությունների դաշնային ինստիտուտի (Bundesinstitut für ostwissenschaftliche und internationale Studien) կազմակերպած բանավեճերը: Չգիտեմ՝ արդյո՞ք հարաբերությունների սառեցման ու փոխադարձ թշնամացման այսօրվա պայմաններում նման եռակողմ քննարկումներ դեռևս տեղի են ունենում, թե ոչ:

Արցախի խնդրով անմիջականորեն զբաղվող ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահությունը տարիներ շարունակ հանդես է եկել որպես այն հազվագյուտ հարթակներից մեկը, որում երեք համանախագահների՝ Ռուսաստանի, ԱՄՆ-ի և փաստացի, թեև ոչ պաշտոնապես, Եվրամիությունը ներկայացնող Ֆրանսիայի միջև հիմնարար հարցերի վերաբերյալ համաձայնություն է գոյություն ունեցել: Այստեղ էլ Գերմանիան՝ որպես Եվրամիության կարևորագույն անդամ և ՄԽ հեղինակավոր անդամներից մեկը, անկասկած մեծ դեր է խաղացել:

Սակայն իրավիճակն արմատապես փոխվեց Արցախյան երկրորդ պատերազմի արդյունքում: Հայաստանի հասարակությունը ստիպված էր արձանագրելու, որ Թուրքիայի բացահայտ օգնությամբ գործող ադրբեջանական զինված ուժերի բարբարոս հար-

վածն Արցախի հայկական բնակչությանը, արգելված գինամիջոցների կիրառությունը, պատմական հուշարձանների ջախջախումը որևէ գործնական արձագանք չառաջացրեց ԵՄ երկրներում, որոնք անկախ նրանից, թե փաստերն ինչ էին ասում, շարունակեցին հավասարության նշան դնել բացահայտ ռազմական ագրեսիա իրականացնողների ու պաշտպանվողների միջև: Որքան էլ ցավալի լինի, ճշմարտությունն այն է, որ պատերազմի ողջ ընթացքում միայնակ մնացած Հայաստանի հասարակության մոտ ԵՄ կառույցների և առանձին երկրների, այդ թվում Գերմանիայի խուսափողական կեցվածքը չէր կարող հիասթափություն չառաջացնել: Մանավանդ, երբ այդ վերաբերմունքը սկսեց համեմատության մեջ դրվել ուկրաինական իրադարձություններին արևմտյան արձագանքի հետ: Այդ գնահատականը միայն իմ դիտարկումների վրա չէ հիմնված: Նաև Հայաստանում պաշտոնավարող եվրոպական դիվանագետները ոչ պաշտոնական զրույցներում ընդունում են, որ Եվրոպայի վարկն այսօրվա հայաստանյան հասարակությունում զգալիորեն ընկել է:

Մինսկի խմբի փաստացի կազմալուծման պայմաններում վիճակը շտկելը հեշտ չի լինելու: Բայց խնդիրները մնում են՝ Արցախի բնակչության անվտանգության ապահովումից մինչև Հայաստանի Հանրապետության վտանգված սահմանները և անորոշ կարգավիճակ ունեցող, փաստացի անվերահսկելի «միջանցքներով» նրա ինքնիշխան տարածքի մասնատման վտանգները: Արդյո՞ք և ինչպե՞ս կարող է Գերմանիան օգտակար լինել այդ խնդիրների լուծման ընթացքում, այսօր ակնհայտ չէ: Հնարավորությունները, բայց նախ և առաջ ցանկություններն այստեղ պետք է որոշվեն համատեղ:

— Ինչպիսի մարտահրավերներ եք տեսնում այսօր երկու երկրների դիվանագիտական հարաբերություններում:

— Արցախի խնդիրը շոշափելով՝ արդեն սկսել ենք խոսել մարտահրավերների մասին: Առանձնապես ինքնատիպ չեմ լինի, եթե ասեմ, որ աշխարհին արմատապես փոխվել է, և հենց դա է հիմնական մարտահրավերը: Համարձակվում եմ ենթադրել, որ ուժային աշխարհաքաղաքական վերաձևումների միտումը, որի մասշտաբներն ակնհայտ դառան Ուկրաինայում ծավալված պատերազմի արդյունքում, իր առաջին դրսևորումներից մեկն է ունեցել 2020-ի Արցախյան պատերազմում: Այսօր Հայաստանը թշնամական Ադրբեյջանի սպառնալիքների ներքո փորձում է գոյատևել մի տարածաշրջանում, որում խաչաձևվում են Ռուսաստանի, Թուրքիայի, Իրանի, նաև Իսրայելի, Միացյալ Նահանգների և միացյալ Եվրոպայի շահերը: Եվ սա այն դեպքում, որ աշխարհը, եթե զբաղված էլ չէ Ուկրաինայով, ապա կենտրոնացած է սեփական էներգետիկ կարիքների և տնտեսական անկման հեռանկարի վրա: Հարցը, որը ստիպված ենք տալ միմյանց, հետևյալն է՝ որտեղ է տեսնում Գերմանիան *սև-սպիտակի բաժանված աշխարհի գորշ գոտում հայտնված* Հայաստանը:

Որպեսզի հարցս վերացական չթվա, հիշեցնեմ, որ 2009-ին սկզբնավորված ԵՄ Արևելյան գործընկերության վեց հետխորհրդային պետություններն այսօր ցրված են առնվազն չորս, եթե ոչ հինգ կլաստերներով: Առաջինում Ուկրաինան և Մոլդովան են, որոնց շնորհիվ է ԵՄ թեկնածուի կարգավիճակ, հաջորդում՝ Վրաստանը, որին նույն այդ կարգավիճակը չի տրամադրվել, վերջինում Բելառուսն է, որը հայտնի պատճառներով ընդհանրապես դուրս է մնացել խաղից: Հայաստանի և Ադրբեյջանի նկատմամբ վերաբերմունքն առայժմ ձշտված չէ:

Հասկանալի է, իհարկե, որ Գերմանիան ներկայումս ավելի մեծ տնտեսական շահեր ունի Ադրբեջանում, քան Հայաստանում: Դժվար չէ տեսնել (դա ակնհայտորեն երևում է նաև էներգետիկ ոլորտին վերաբերվող եվրոպական վերլուծականներից), որ ընթացող համաշխարհային ճգնաժամի պայմաններում էներգետիկ ռեսուրսներով հարուստ Ադրբեջանը՝ որպես այլընտրանքային մատակարարող և, որ շատ ավելի կարևոր է, — որպես Կենտրոնական Ասիան Եվրոպայի հետ կապող տարանցիկ երկիր, գտնվում է Գերմանիայի քաղաքական և տնտեսական շրջանների ուշադրության կենտրոնում: Պարզ չէ, սակայն, արդյո՞ք Գերմանիայի համագործակցությունը Ադրբեջանի հետ ընթանալու է Հայաստանի հաշվին: Արդյո՞ք Գերմանիան պատրաստ է վճարելու Ադրբեջանի պահանջած քաղաքական ռենտան՝ ելնելով բացառապես գործնական շահերից՝ անտեսելով Ադրբեջանի կողմից միջազգային իրավունքի կոպիտ խախտումները ոչ միայն Լեռնային Ղարաբաղում, այլև բուն Հայաստանում, ներառյալ Հայաստանի Հանրապետության միջազգայնորեն ճանաչված սահմաններում գտնվող տարածքների սողացող անեքսիան: Թե՛ն, այնուամենայնիվ, իր արտգործնախարար Անալենա Բերբոկի խոստովին համաձայն կվարի «արժեքների վրա հիմնված արտաքին քաղաքականություն»:

Մանավանդ, որ արժեքներն էլ շահավետ են լինում: Կարծում եմ՝ անհեռատեսություն կլիներ Արևմուտքի և Ռուսաստանի ազդեցության գոտիների արանքում գտնվող աշխարհաքաղաքական կարևոր տարածաշրջանում համեմատաբար արևմտյան կողմնորոշում ունեցող, երիտասարդ ժողովրդավարությունը զուտ տնտեսական պատճառներով ստորադասել ավտորիտար բռնապետությանը:

— Հասկապես դժուար է որոշել, երբ հարաբերությունների խորացման ներքին տեսանկյունից:

— Նախ ուզում եմ հույս հայտնել, որ նույնիսկ այսօրվա անբարենպաստ պայմաններում Հայաստանը և Գերմանիան հնարավորություններ կգտնեն շարունակելու արդեն իսկ ընթացող ծրագրերը: Որպես հեռանկար կանգ առնեմ երեք հիմնական կետերի վրա:

Առաջինը SS ոլորտն է, որը Հայաստանում երկար տարիների զարգացում է ապրել: Այն շոշափելի ներդրում ունի երկրի համախառն ներքին արդյունքի մեջ և սերտորեն կապված է եվրոպական և ամերիկյան ընկերությունների հետ: Հայկական SS ընկերությունները լավ համբավ ունեն որպես բիզնես գործընկերներ Արևմուտքում, որտեղ ներկայումս SS մասնագետների զգալի պակաս կա, որն ըստ երևույթին, դեռ կաճի առաջիկա տարիներին: Պատերազմի բռնկումից հետո Ռուսաստանը, Բելառուսը, ինչպես նաև Ուկրաինան զգալիորեն կորցրել են իրենց նշանակությունը որպես գերմանական ընկերությունների համար SS ծառայությունների գնման շուկաներ: Միաժամանակ նշածս երեք երկրներից բազմաթիվ SS մասնագետներ, ինչպես նաև մասնավոր SS ընկերություններ տեղափոխվել են Հայաստան: Այստեղ, անկասկած, դեր է խաղացել նաև այն տղերանտ վերաբերմունքը, որը Հայաստանում գտնում են ներգաղթողները՝ անկախ իրենց ժամանման երկրից: Այս գործընթացի շնորհիվ առանց այն էլ ուժեղ SS ոլորտը Հայաստանում էլ ավելի ուժ ու որակ է ձեռք բերել: Կարծում եմ՝ գերմանական ընկերությունները բիզնեսի լավ հնարավորություններ ունեն այստեղ՝ փորձված գործընկերների հետ:

Երկրորդը կենտրոնացած է երկարաժամկետ ծրագրի վերաբերում: Գիտենք, որ Եվրոպան այժմ փնտրում է այլընտրանքային արևելք-արևմուտք տրանսպորտային երթուղիներ՝ գոնե մասամբ փոխա-

րինելու հյուսիսային տրանսպորտային միջանցքը, որը Չինաստանից Եվրոպա էր տանում Ռուսաստանի ու Բելառուսի տարածքով և ավանդաբար կազմում էր երկաթուղային և ավտոմոբիլային բեռնափոխադրումների առյուծի բաժինը: Քննարկման առարկա է Ղազախստանով, Կասպից ծովով, Ադրբեջանով, Վրաստանով և Թուրքիայով անցնող Միջին միջանցքը, բայց դրա հզորությունը Ռուսաստանի տարածքով անցնող հյուսիսային երթուղին փոխարինելու համար բավարար չէ: Այն լավագույն դեպքում կարող է սպասարկել Հյուսիսային երթուղու ապրանքների ծավալի 20%-ը: Կա մի քանի հանգամանք, որ խոչընդոտում է այդ միջանցքի հզորությունների արագ ընդլայնումը, այդ թվում Կասպից ծովում տրանսպորտային նավերի անբավարար քանակությունը, որոնք կարող են կառուցվել միայն ծովի ափերին, և որոնց թիվը արագ չի ավելանա բավարար նավաշինական հզորությունների բացակայության պատճառով: Այս պարագաներում կարող է իր դերը կատարել Իրանի, Հայաստանի, Վրաստանի և Թուրքիայի տարածքով հարավային տրանսպորտային միջանցքը՝ որպես Կասպից ծովի փակուղին շրջանցող և զգալիորեն ավելի մեծ թողունակություն խոստացող մեկ այլ այլընտրանք: Հարավային երթուղին նաև կկանխեր նոր կախվածությունների ստեղծումը՝ մատակարարման ուղիների հետագա դիվերսիֆիկացման միջոցով: Այստեղ Հայաստանը կարող է կարևոր դեր խաղալ, մանավանդ եթե հաշվի առնենք, որ Ադրբեջանը Թուրքիայի հետ կապող ճանապարհը շատ ավելի կարճ կլինի Հայաստանով անցնելու դեպքում: Այնպես որ՝ սա երկուստեք շահավետ տարբերակ է:

Երրորդ կետը վերաբերում է Հայաստանում քաղաքացիական հասարակության հետագա զարգացմանը: Հարցադրումը կարող է անսպասելի թվալ, քանի որ Գերմանիան, ի դեմս իր բազմաթիվ ֆոնդերի ու կազմակերպությունների, միշտ էլ հետաքրքրված է

եղել քաղաքացիական հասարակության զարգացման խնդիրներով և մեծ ջանքեր է գործադրել այն խրախուսելու համար: Սակայն հետպատերազմյան Հայաստանում քաղաքացիական հասարակության կազմակերպությունները նույնպես զգալիորեն հեղինակազրկվել են, քանի որ ի վիճակի չեն եղել համարժեքորեն գնահատելու և դիմակայելու պատերազմի և հետպատերազմական շրջանում առաջ եկած մարտահրավերներին: Պատճառը, ըստ իս, քաղաքացիական հասարակության նեղ ինքնըմբռնումն է, նրա հանգեցումը առանձին, ավանդական խնդիրներով «մասնագիտացած» ՀԿ-ների և ակտիվիստական խմբերի գործունեությանը: Վերջիններիս օրակարգը՝ փոքրամասնությունների իրավունքների պաշտպանություն, բնապահպանություն, տարբեր տիպի advocacy և այլն, սահմանափակ է և ուղղված է որքան էլ արժեքավոր, բայց խորագույն ձգնաժամ ապրող հայաստանյան հասարակության համար ոչ կենտրոնական, լուսանցքային հարցերի կարգավորմանը: Զարմանալի չէ, որ այդ վաղուց արդեն ինքնաբավ դարձած խմբերը հասարակության մեջ մեծ համարում չունեն: Այս դեպքում լուծում կարող էր լինել վերադարձը քաղաքացիական հասարակության ավելի լայն, ոչ ձևական ըմբռնմանը՝ հիմնված դասական՝ հեգելյան և հաբերմապան հղացքների վրա: Դա առավելապես կհամապատասխաներ Գերմանիայում ձևավորված տեսական ավանդույթին և հնարավորություն կտար քաղաքացիական նախաձեռնությունների առավել դիֆերենցված շրջանակ խրախուսելու, որի գործունեությունն ավելի մոտ է հայաստանյան հասարակության հիմնական մասի պատկերացումներին ու կարիքներին:

ՎԵՐՋԱԲԱՆ

ՄԻ ՀԱԶՈՂ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐ

Հանս-Յոսիֆ Զոլմս

Ամփոփումը՝ որպես հեռանկարներ մատնանշող ընդ- հանուր պատկեր

2022 թվականի հունվարի 31-ին Գերմանիայի Դաշնային Հանրապետության և Հայաստանի Հանրապետության միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման 30-ամյակի կապակցությամբ առաջարկվող այս հատորը, անկասկած, կարելի է մեծ հաջողություն որակել: Սրա համար պետք է շնորհակալություն հայտնենք նախաձեռնողներին ու հրատարակիչներին: Քանի որ հեռու լինելով պաշտոնական և նշանակում է նաև՝ ձևական և, ի վերջո դիվանագիտորեն «չեզոք» գույքագրումից՝ գերմանա-հայկական հարաբերությունների 30 տարիները այս հատորյակում լուսաբանվում են շատ տարբեր տեսանկյուններից՝ հիմնված անձնական փորձառությունների և նույնչափ տարբեր փորձաքնությունների վրա: Այսպիսով՝ տվյալ հատորի հեղինակներից շատերը եղել են ոչ միայն չեզոք դիտորդներ ու թղթակիցներ, որոնք հետևում և գնահատում են իրադարձությունները դրանց կատարվելուց հետո, այլև եղել են և հիմնականում շարունակում են նաև այժմ մնալ տարբեր աստիճանի դերակատարներ՝

իրենց կողմից այստեղ նկարագրված գործունեության ոլորտներին՝ քաղաքականության և դիվանագիտության, տնտեսության, հասարակական գործունեության, գիտության և կրթության, ինչպես նաև մշակույթի: Արդյունքում՝ հատորը բավարարում է ոչ միայն փաստաթղթավորման ինքնըստինքյան հասկանալի պատասխանատվությունը, այլև հասնում է իսկության ու բացության, որը դուրս է չեզոք նկարագրության շրջանակներից և շոշափում է անմիջական մտահոգությունները, որը նաև թույլ է տալիս համադրելու անձնական գնահատականներն ու արժևորումները պատմական փաստերի՝ որպես օբյեկտիվ նկարագրությունների հետ: Այն փաստը, որ գնահատվող զարգացումները չեն նկարագրվում որպես անվերապահ, և որ մշտապես առկա է ուսումնասիրության կենտրոնում գտնվող ժամանակաշրջանի իրադարձությունների, զարգացումների ու որոշումների պատմական տեղայնացում, որը անդրադառնում է մասամբ ոչ վաղ անցյալի, մասամբ՝ ավելի խոր պատմության իրողություններին, այս հատորը դարձնում է արժեքավոր և անաչառ այն սահմաններում, որոնք որևէ այլ հիմնարար նախապայման չեն պահանջում գերմանա-հայկական նորագույն պատմության հետագա բոլոր ուսումնասիրությունների համար:

Թեմատիկ ամփոփման սկզբնամասի համար կարելի է հակիրճ և հստակ ձևակերպել, որ այստեղ հավաքված նյութերը շատ հստակ ցույց են տալիս, որ Գերմանիայի Դաշնային Հանրապետության և Հայաստանի Հանրապետության միջև 1992 թվականի հունվարի 31-ին դիվանագիտական հարաբերությունների հաստատման արդյունքում գերմանա-հայկական հարաբերությունները շատ դրական զարգացում ապրեցին՝ ի շահ երկու կողմերի: Ընթերցողին նաև շատ համոզիչ կերպով պարզ է դառնում, որ հարաբերությունների նման դրական զարգացումը հնարավոր է եղել միայն շնորհիվ նրա, որ այդ գործընթացը ուղեկցվել և խթանվել է

այս գործի մեջ ներգրավված այնպիսի դերակատարների կողմից, որոնք աչքի են ընկել անձնական մեծ նվիրվածությամբ, այսինքն՝ սրտացավությամբ և ոգևորությամբ, ինչպես նաև մեծ փոխըմբռնմամբ: Եթե չհաջողվեր պետական կառավարման գործողությունների կողքին նպատակաուղղված դնել քաղաքացիական հասարակության գործողությունները, երբեք հնարավոր չէին լինի արձանագրված հաջողությունները, ինչպես նաև փոխադարձ մերձեցման գործընթացի դրական ընթացքը: Այս առումով ներկա հատորը նաև տեղեկացնում է այն քաղաքականության հաջողության մասին, որը նպատակասլաց փորձում է զարգացնել և պահպանել քաղաքացիական հասարակության գործունեությունը, որը լրացնում է քաղաքական համակարգը: Այս հատորի նախաձեռնության և խմբագրության փաստը շատ համոզիչ կերպով ապացուցում է դա:

Այստեղ արվող հակիրճ ամփոփումը պետք է ընկալվի ոչ թե որպես վերը նշված առանձին հոդվածների հիմնական դրույթների ժամանակագրական կրկնություն՝ ըստ դրանց հաջորդականության, այլ ավելի շուտ որպես ընդհանուր հայացք, որը հատորում զետեղված նյութերի պես, իհարկե, կրկին չի բացառում սուբյեկտիվ մոտեցումը: Դա արտացոլվում է մշակույթի ոլորտի վրա կենտրոնանալու մեջ:

«Երկկողմանի շահերի» մասին...

Եթե խոսվում է «երկկողմանի շահերից բխող հաջողության» մասին, ապա, իհարկե, նման հաջողությունը կարելի է հավաստել միայն դրված նպատակների ու ձևակերպված ակնկալիքների հիմնապատկերի վրա: Իր իսկ որոշման և դեպի անկախություն տանող ցանկալի քայլի հիման վրա Հայաստանը 1990–ականների սկզբին հստակ ակնկալում էր արտաքին օգնություն և աջակ-

ցություն՝ վիթխարի փոխակերպման գործընթացն ապահովելու համար, որը պետք է ընդգրկեր բոլոր քաղաքական ու սոցիալական ոլորտները: Այս առումով հաշվի առնելով պատմական իրավիճակը և Հայաստանի աշխարհաքաղաքական դիրքը՝ բոլոր ներգրավվածների համար անվիճելի էր, որ դիվանագիտական հարաբերությունների սկզբնական շրջանում որոշակի անհամաչափ հարաբերություններ կլինեն «մեծ» Գերմանիայի և «փոքր» Հայաստանի միջև, և դա էլ, անկասկած, բխում էր «երկկողմանի շահերից»։ Խոսքը առաջին հերթին Հայաստանին՝ միջազգային հարթակում անկախ գործընկեր դառնալուն աջակցելու մասին է, որը նաև կնպաստեր սեփական շահերը պաշտպանելուն:

Ձևակերպված «երկկողմանի շահը» հեշտ է որոշել տնտեսական ոլորտում, բայց ավելի դժվար՝ քաղաքական ոլորտում: Վերջինիս հետ կապված, սակայն, ի սկզբանե պարզ էր, որ գերմանական կողմը ելնում էր և իրավունք ուներ ելնելու սեփական դիրքորոշման նպատակամիտությունից, և հետևաբար նաև ակնկալում էր, որ այն այդուհետ կաջակցվի նաև միջազգայնորեն: Այսպես՝ Ալբերտ Հ. Վայլերը ձևակերպում է, որ հարաբերությունների հաստատման անհրաժեշտ ելակետը այն էր, որ ինչպես հայկական կողմն է խոստովանում, նրանք կիսում են «մեր [այսինքն՝ խոսքը գերմանականի մասին է] ընդհանուր ժողովրդավարական արժեքները»: Տրամաբանական կապով պայմանավորված և իրական պայմաններին համապատասխան ներկա հատորը որոշակի կերպով էապես կենտրոնանում է նաև հայկական կողմի վրա: Այն, որ սա ծրագրային առումով ապագայում այլ տեսք պետք է ստանար, հույս է ներշնչում այն հեռանկարայնությունը, որը փորձ է արվել ներկայացնելու գերմանական և հայկական կողմից (Մանսման, Քանդյան): Ի հակադրություն դրան՝ անցյալի համար բնորոշ են եղել նաև բացթողումներ, ինչպես նաև ձախողումներ

(Արմենուիի Դրոստ–Աբգարյան), ինչը կարելի է բացատրել հարաբերությունների անհամաչափությունից բխող պայմաններով (հայագիտության վիճակը Գերմանիայում):

Հարաբերությունների առանձնահատկությունների և հիմքերի մասին

1991 թվականի վերջին Խորհրդային Միության փլուզումից հետո, ինչպես նաև դրան նախորդած 1991 թվականի սեպտեմբերի 21–ին Հայաստանի անկախության վերաբերյալ անցկացված հանրաքվեից և 1992 թվականի սկզբին Գերմանիայի Դաշնային Հանրապետության կողմից Հայաստանի ձանաչումից հետո դիվանագիտական հարաբերությունների հաստատումը երկու երկրների միջև միանգամայն տրամաբանական էր: Այս հարաբերությունների ընդլայնումը, որը սկիզբ է առել ներկայումս, ակնհայտ է քաղաքականության, բիզնեսի ու մշակույթի տարբեր ոլորտներում (ներառյալ կրթությունը և գիտությունը), առանց նախապայմանների չէր: Պատմական առանձնահատուկ պայմաններից ելնելով՝ ի սկզբանե խոսվել է այդ հարաբերությունների առանձնահատուկ լինելու մասին, և այդ առանձնահատուկ բնույթը բազմիցս մատնանշվել է, որպեսզի պարզ դառնա, թե հարաբերությունների կոնկրետ որ զարգացման համար ինչպիսի հիմք է դրվել, և որին ինչ ուղղություն է տրվել: Եվ այսպիսով՝ վերջին 30 տարիների զարգացման վերաբերյալ գրեթե բոլոր նկատառումների ու գնահատականների միջով կարմիր թելի պես անցնում է երկու թեմա. մի կողմից՝ 1915–1916 թվականների Հայոց ցեղասպանության թեման է և Գերմանիայի մոտեցումը դրան, մյուս կողմից՝ բազմաբնույթ փոխադարձ շահերի շեշտադրումն է, որոնցից մի քանիսը դարերի խորքն են գնում ու վկայում Հայաստանի շահերի մասին Գերմանիայում և Գերմանիայի շահերի մա-

սին՝ Հայաստանում, ինչպես նաև խոր և փոխադարձ գրավչության մասին: Եվ սա շատ պարզ է դարձնում, որ անցած 30 տարիների զարգացումը շատ դեպքերում ընդամենը հղում է կատարում դեպի ավելի վաղ տեղի ունեցածի վերսկսումը կամ շարունակությունը, ցույց է տալիս, որ թեև նորագույն շրջանի այս զարգացումը հաճախ շարունակական է, սակայն դրա բացահայտումն ու ներկայիս պատկերացումը անհրաժեշտ են եղել և մնում դրա հաջող վերսկսման համար:

Առաջին հերթին անհրաժեշտ է անդրադառնալ Ցեղասպանության պատմական փորձին, որն այնքան կարևոր է համայն հայության ինքնագիտակցության ձևավորման համար («Հակական ինքնության առանցքը», Օթթո Լուիսթերհանդ) և Գերմանիայի արձագանքին դրա հանդեպ: Այս հատորում տեղ գտած Թեսսա Հոֆմանի հոդվածը ներկայացնում է այն աստառը, որի հենքի վրա ընկճող կերպով, բայց հստակորեն հետազոտվում է հանգամանքների բերումով ստեղծված պատմական իրավիճակը և Գերմանական կայսրության մեղքը: Դիվանագիտական հարաբերությունների հաստատումից ի վեր այս խնդրին առհասարակ անդրադառնալը ներկայանում է մի կողմից՝ որպես (չ)արտահայտված ակնկալիք հայկական կողմից, իսկ մյուս կողմից՝ որպես գերմանական կողմի կոնկրետ քաղաքական գործողությունների հիմնարար շարժառիթ: Հայաստանի իշխանության կողմից համապատասխան ակնկալիքի ենթադրությունը հասկանալի է դարձնում այն փաստը, որ Հայաստանի անկախությունից անմիջապես հետո տեղական իշխանական շրջանակներում առնվազն գոնե քննարկվել է, թե արդյոք և որ «ցեղասպանությունը պետք է լինի մեր արտաքին քաղաքականության հիմնական ուղղություն:

նր»:¹ Անկախ այս քննարկման արդյունքից, որը միանշանակ չորակեց դա որպես «հիմնական ուղղություն», զարգացումը ցույց տվեց, որ հայկական կողմի համար պարզ էր, որ Գերմանիային պետք է համոզել առերեսվելու այն խնդրի հետ, որ անհրաժեշտ է ճանաչել Թուրքիայի պատասխանատվությունը հայերի վտարման ու սպանության համար և 1915–1916 թվականների իրադարձությունները որակել որպես «ցեղասպանություն»՝ ՄԱԿ–ի 1948 թ. համաձայնագրի ոգուն համահունչ: Թեև 2000 թվականի ապրիլին Գերմանիայի Բունդեսթագին հայկական կողմից ներկայացված համապատասխան միջնորդության առաջին փորձը ձախողվեց (Բաֆֆի Քանդյան), սակայն դա հետագայում հաջողվեց շնորհիվ «2016 թվականի հունիսի 2–ին Գերմանական Բունդեսթագի կողմից՝ Հայոց ցեղասպանության ճանաչման, որը շրջադարձային կետ հանդիսացավ հայ–գերմանական հարաբերություններում» (Թիլ Մանսման: Սա նաև Աշոտ Սմբատյանի գնահատականն է): Դրա հետ մեկտեղ, Ալբերտ Հ. Վայլերի կողմից այս հատորում արված անձնական դիտողություններից շատ պարզ է դառնում, որ նման զարգացում կարող էր իրականացվել միայն գերմանական բնակչության մեծ մասի և նաև քաղաքական դերակատարների հստակ աջակցության շնորհիվ: Այսպիսով՝ Ցեղասպանության հանդեպ Գերմանական Ռայխի կողմից ցուցաբերած հանդուրժողականությունը, որն աներկբա ապացուցել են պատմաբանները, և նրա ներգրավվածության փաստը հանգեցրեց Հայաստանի նկատմամբ Գերմանիայի և գերմանացիների «հատուկ պատաս-

¹ 1990–ականներին Հայաստանի նախագահի խորհրդական և Ազգային անվտանգության խորհրդի անդամ Ժիրայր Լիպարիտյանի հարցազրույցից՝ «Հայերի ցեղասպանություն — «Կար ուղղակի գերմանական մեղք», CICERO 21.4.2015 թ., <https://www.cicero.de/aussenpolitik/armenier-es-interessiert-mich-nicht-ob-merkel-den-voelkermord-anerkennt/59150> (վերջին մուտք՝ 15.11.2022)

խանաավության» գիտակցմանը (Թիլ Մանսման): Հասարակական ու գիտական բազմաթիվ նախաձեռնությունների աջակցությունը (հատկապես Յոհաննես Լեփսիուսի պատմական նվաճումների ճանաչմանն ուղղված ջանքերի, տե՛ս Ռոյ Քնոքեի հոդվածը այս հատորում) անհետաձգելի դարձած այդ հարցի պայմաններում մի շարք քաղաքական պատասխանատու գործիչների մոլեց ընդգծված արտահայտելու (ոչ անձնական) մեղքի զգացումը համապատասխան քաղաքական գործողությունների միջոցով (Ալբերտ Հ. Վայլեր): Թե որքանով է սկզբունքորեն կարևորվել 2016 թվականին Գերմանիայի Բունդեսթագի ընդունած բանաձևը երկու երկրների հարաբերությունների հետագա զարգացման համար, ցույց է տալիս Գերմանիայում այն ժամանակվա ՀՀ դեսպան Աշոտ Սմբատյանի գնահատականը, որը համոզմունք արտահայտեց, որ այդ բանաձևը «նոր էջ բացեց հայ-գերմանական հարաբերություններում», և «գերմանական հասարակության [...] ուշադրությունը հրավիրեց բուն Հայաստանի վրա»:

Յեղասպանության հարցի կողքին շեշտը դրվում է Հայաստանի և Գերմանիայի փոխադարձ հետաքրքրության վրա, որը պատմական խորքերն է գնում, և երկու ժողովուրդների միջև պատմական վաղեմի ընդհանրությունների շեշտադրումը հիմնավորող ետնապատկեր է ծառայում Հայաստանի ու Գերմանիայի միջև ներկայիս 30-ամյա հարաբերությունների զարգացման նախապատմության համար՝ որպես ներկա գույքագրման հաջորդ կարմիր թելը. սա կարելի է շատ դիպուկ բնութագրել որպես «մշակութային և հոգևոր-պատմական հղման շրջանակ» (Էքարթ Շթրաթենշուլթե), որն օգնեց ձևավորելու այս զարգացումը: Գերմանական կողմը հիացած է Հայաստանի հարուստ և հնագույն մշակույթով և շեշտադրում է Հայաստանն ու Գերմանիան կապող ընդհանուր արժեքա-

մակարգի գիտակցումը («Արժեքների հորիզոն», Թիլ Մանսման), հատկապես քրիստոնեության այդքան վաղ հաստատումը Հայաստանում (Շթեֆան Մալերիուս, Ալբերթ Հ. Վալյեր)։ պատմականորեն ընդհանուր քրիստոնեական արմատների շեշտադրումը հետևում է այն պատկերացմանը, որ ոչ վերջին հաշվով, իսկ հնարավոր է անգամ հենց շնորհիվ «կրոնական կապերի է դրսևորվում արժեհամակարգերի ընդհանրությունը» (Էքարթ Շթրաթենշուլթե)։ Իսկ այսպիսով հնարավոր էր, որ ելնելով համընկնող կրոնական կապերից և ավանդույթներից՝ ընդունվեր ու (առանց բարձրաձայնելու) ենթադրվեր թեկուզ մասնակիորեն համընկնող արժեքային կանոն։ Քաղաքական մերձեցման գործընթացում շատ սկզբունքային և էական դեր է խաղում «դեպի արժեքներ կողմնորոշումը, որոնցից մի քանիսը միշտ են եղել ընդհանուր» (Աշոտ Ալեքսանյան)։ Այստեղից էլ միանգամայն տրամաբանական էր, որ նման ենթատեքստերի հիման վրա գերմանացիների արված հայտարարությունները սեփական պարտավորության հիմնավորման վերաբերյալ այնուհետև նույնպես շատ ուշադիր ընկալվեցին հայերի կողմից։ Գործնականության վրա հիմնված կամ գոնե դրանք լրացնող ընդհանուր արժեքային համակարգի կարևորությունը էական էր հարաբերությունների սկզբից։ Այս առումով ուկրաինական պատերազմի հետ կապված ներկայիս զարգացումները միայն հաստատել են, որ «սոսկ փոխադարձ շահի համար տնտեսական փոխկախվածության հայեցակարգը» բավարար չէ, եթե «չի տրված արժեքների ընդհանուր հիմք [...]» (Էքարթ Շթրաթենշուլթե)։ Սրան անդրադառնալը բնական էր և համաձայնեցված՝ առանց բացահայտորեն պահանջելու, որ «արժեքների վրա

հիմնված արտաքին քաղաքականությունը»² պարտադրվի որպես առաջնորդող սկզբունք, ինչպես դա տեղի է ունենում ներկայում: Այս առումով, ելնելով 30-ամյա հարաբերությունների ընթացքից, կարելի է դատել, որ հաջող զարգացումը պայմանավորված է ոչ միայն գոյություն ունեցող արժեքների ընդհանուր կանոնին միանալուց, այլ նաև, մասնավորապես, նոր արժեքներ ընդունելու Հայաստանի պատրաստակամությունից, այսինքն՝ «ավելի մեծ» գործընկերների արժեքների նկատմամբ բաց լինելուց: Ընդ որում՝ երկու կողմերի համար էլ ի սկզբանե պարզ էր, որ խոսքը «քաղաքական արժեքների փոփոխության երկար գործընթացի մասին» է (Աշոտ Ալեքսանյան), որի անհրաժեշտ ելակետը հայկական կողմի ինքնուրույնաբար արված խոստովանությունն է առ այն, որ կողմնակից է «մեր [այսինքն՝ գերմանական] ընդհանուր ժողովրդավարական արժեքներին» (Ալբերտ Հ. Վայլեր): Թե որքան հաջող և կայուն է ի վերջո «քաղաքական արժեքների փոփոխության գործընթացը», ցույց է տալիս «հետաքրքրությունը եվրոպական մշակույթի և ընդհանրապես եվրոպական արժեքների նկատմամբ», որը գնալով ավելի նկատելի է հատկապես հայ երիտասարդների մոտ, որից բխում է նաև վերջին տարիներին Հայաստանի «երիտասարդների աճող հետաքրքրությունը գերմաներեն լեզվի և գերմանական մշակույթի նկատմամբ [...]» (Նաթիա Միկելաձե-Բախսոլիանի): Հատկապես վերջին նշված հանգամանքը ցույց է տալիս, որ ընդհանուր արժեքների գիտակցված շեշտադրումը, որն ուղղված է ընդհանուր հիմքերի ստեղծմանը, հանգեցրեց քա-

² 2012 թվականին Գերմանիայի Դաշնային Հանրապետության նախկին արտգործնախարար Գիդո Վեստերվելեն խոսել է արտաքին քաղաքականություն վարելու մասին, որը ոչ միայն առաջնորդվում է շահերով, այլև «արժեքային ուղղվածություն ունի»: <https://www.deutschlandfunk.de/wir-machen-eine-werteorientierte-aussenpolitik-100.html> (վերջին մուտք՝ 15.11.2022):

դաքսական սերտաճման, որն այնուհետև դրական ազդեցություն ունեցավ մարդկանց առօրյա իրականության վրա:

Ընդհանրությունների թվին, որոնք ձևավորվեցին հատկապես 19-րդ դարից սկսած, և որոնք 1990–ականների սկզբին կարող էին հենակետ ծառայել հարաբերությունների հաստատման ու զարգացման համար, դասվում է գիտական հետաքրքրությունը միմյանց նկատմամբ: Բողոքական–ուղղափառ հետազոտական մոտեցումների համատեքստում 19-րդ դարի վերջին սերտ գիտական համագործակցություն զարգացավ,³ որի արդյունքում հայ հոգևորականների բազմաթիվ ներկայացուցիչներ (հատկապես Էջմիածնի հոգևոր ձեմարանից) կրթություն ստացան Գերմանիայում (հատկապես Լայպցիգում):⁴ Դրան զուգահեռ 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին բազմաթիվ երիտասարդներ ուղարկվեցին սովորելու Գերմանիա՝ նպատակ ունենալով գիտելիքներ ձեռք բերելու հայկական գիտական վերնախավ ստեղծելու համար:⁵ Մարդիկ, ովքեր ուսումն ավարտելուն պես վերադառնում էին տուն, գործում էին որպես ձեռք բերածի տարածողներ, բազմապատկողներ, հատկապես գերմանական մշակույթի, որը դրական էր ընկալվում: Այս դրական գնահատականը շարունակում է մինչ օրս իր ազդեցությունն ունենալ այդ «բազմապատկողների» ժառանգների վրա, նույնիսկ եթե կենսաբանական պատ-

³ Այդ մասին տես Հագիկ Ռաֆի Գազերի համապատասխան հրապարակումները <https://www.theologie.fau.de/institut-kg-landing/co-neu/prof-dr-hacik-rafi-gazer/> (վերջին մուտք՝ 15.11.2022):

⁴ Ի թիվս այլոց բավական է նշել միայն Կոմիտասին, որը Բեռլինում ուսումնառությամբ էական առաջարկներ է ստացել իր աշխատանքի համար:

⁵ Արփինեն Մանիերո, Վիճահարույց ձանապարհի դեպի կրթություն. Հայ ուսանողները Գերմանիայում և Շվեյցարիայում 19-րդ դարի կեսերից մինչև 20-րդ դարի սկիզբը: Գյոթինգեն, 2020, <https://www.theologie.fau.de/institut-kg-landing/co-neu/prof-dr-hacik-rafi-gazer/> (վերջին մուտք՝ 15.11.2022):

Ճառներով դա ավելի հազվադեպ ես հանդիպում: Թե ինչ հիմնա-
րար նշանակություն ունի «մշակույթը»՝ հանդուրժողականության
և հարգանքի վրա հիմնված փոխըմբռնման համար, շատ համոզիչ
կերպով ցույց է տալիս Էքարթ Շթրաթենշույթի հողվածն այս հա-
տորում: Քանի որ ակադեմիական առարկաների շրջանակներում
ավանդաբար բանասիրությունում է հետաքրքրություն դրսևոր-
վում սեփական մշակույթի կամ ընդհանրապես մշակույթի նկատ-
մամբ, որն այնուհետև հանգեցնում է գործնական արարքների,
ապա դրանց առարկայական համալսարանական փոխկապակց-
վածությունը նույնպես ակադեմիական հետաքրքրության վրա
հիմնված և փոխադարձ ընկալման հնարավորություն ընձեռող
փոխըմբռնում հաստատելու համապատասխան միջոց է: Սրա
հետ կապված հարկ է նշել, որ Հայաստանում գերմանագիտու-
թյան առաջին ամբիոնը հիմնադրվել է Բրյուսովի անվան պետա-
կան համալսարանում դեռևս 1936 թվականին, իսկ Երևանի պե-
տական համալսարանում այն ստեղծվել է միայն 1991 թվականին
(Ելենա Էթարյան): Հայկական այս հետաքրքրությունը Գերմա-
նիայի հանդեպ շատ վաղ՝ դեռևս 16-րդ դարի սկզբից, համընկ-
նում էր Հայաստանի նկատմամբ գերմանական հետաքրքրու-
թյան հետ, որը սնուցվում էր տարբեր շարժառիթներով (Արմենու-
հի Դրոստ-Աբգարյան): Հայ բանասիրությունը Գերմանիայում
հիմնվել է դեռևս 17-րդ դարի վերջին, ուստի զարմանալի չէ, որ
հայոց լեզվի ըմբռնման վերաբերյալ բազմաթիվ գիտական աշ-
խատություններ գրվել են գերմանացի գիտնականների կողմից, և
որ գերմանական հայագիտությունը կարողացավ համապատաս-
խան համբավ ձեռք բերել անգամ բուն Հայաստանում:

«Մշակույթը» որպես գործունեության կենտրոնական դաշտ

Ընդհանուր արժեքների մատնանշումը և գիտության շրջանակներում արված փոխադարձ տարբեր հղումները էական հիմքեր որակվեցին, որոնց վրա 1990–ականների սկզբից կարողացել է հիմնվել Հայաստանի և Գերմանիայի միջև հարաբերությունների զարգացման քաղաքական գործընթացը: Մասնավորապես, գիտության ոլորտը, որը ընդլայնվել է՝ ներառելով կրթության և մշակույթի ոլորտները, ներկայացվեց որպես մի բնագավառ, որի վրա այնուհետև կառավարության գործողությունները առանձնահատուկ կերպով կենտրոնացան: Առնվազն գերմանական կողմի համար աներկբա է, որ «գիտական և կրթական դիվանագիտությունը [...] եղել և մնում է Գերմանիայի պաշտոնական արտաքին քաղաքականության հիմնասյուներից մեկը» (Նարեկ Գալստյան): Այդուհանդերձ, դիվանագիտական հարաբերությունների վերջին 30 տարիների ընթացքում այս ոլորտում նպատակադրված առաջընթացը կարող էր հաջողվել միայն այն դեպքում, եթե, բացի պետական դերակատարներից, ներգրավված լինեին քաղաքացիական հասարակության բազմաթիվ սուբյեկտներ (ներառյալ խոշոր կուսակցական հիմնադրամները) իրենց անկախ և բացառապես բովանդակության վրա կողմնորոշված ծրագրերով: Նարեկ Գալստյանը (տես նույն տեղում) ընդունելի է համարում «մեղմ ուժի քաղաքականությունը, որը [...] մշակվում և իրականացվում է ապակենտրոնացված, ցանցային ձևով: Այս ցանցը ներառում է Գերմանիայի դաշնային և երկրամասային մարմինները, գիտակրթական, գիտամշակութային, ինչպես նաև քաղաքական հիմնադրամները, քաղաքացիական հասարակության տարբեր ինստիտուտները, ձեռնարկատիրական ընկերությունները և հենց գիտակրթական հաստատությունները»: «Գյոթե» ինստիտուտի

կողքին («Գյոթե» կենտրոնի բացումը 2017 թ.) մասնավորապես պետք է հիշատակվի Գերմանական ակադեմիական փոխանակումների ծառայությունը (DAAD)՝ որպես գիտական և մշակութային ոլորտում կենտրոնական հաստատություն, որը հիմնականում ֆինանսավորվում է պետականորեն, բայց նրա աշխատանքը կապված է միայն գիտության ոլորտի հետ: Բոլոր ոլորտներում ակադեմիական փոխանակման խթանման հետ մեկտեղ ԴԱԱԴ-ն նաև զբաղվում է գերմաներեն լեզվի տարածմամբ: Դա եղել է ԴԱԱԴ-ի ուշադրության կենտրոնում 2000-ականների սկզբից, ինչպես նաև գերմանագիտության խթանումը (որպես՝ գիտության վրա հիմնված գերմաներենի ուսուցիչների վերապատրաստման երաշխիք), իսկ հետագայում՝ սկսած 2010-ականների սկզբից, ընդլայնել է իր կրթաթոշակային ծրագրերը՝ ներառելով բնական և ճշգրիտ գիտությունները (Նարեկ Գալստյան): Թերևս նաև այս զարգացումը պետք է դիտարկել լեզվի առաջնության անմիջական համատեքստում, քանի որ նման ծրագրերի միջոցով կատարվող գիտնականների փոխանակումը նույնպես նպաստում է գերմաներենի՝ որպես գիտական լեզվի առաջնությանը: ԴԱԱԴ-ի և «Գյոթե» ինստիտուտի հաջողությունները լեզվի առաջնության հարցում խոսում են ինքնին (տես ԴԱԱԴ-ի գերմաներենի դասընթացների կրթաթոշակառուների թվի աճը մինչև 2020 թվականը՝ կրթաթոշակային այլ ծրագրերի թվի միաժամանակյա նվազմամբ կամ լճացումով, Նարեկ Գալստյան): Լեզվի հանդեպ հավատարմությունը հիմնված է ակնհայտ, բայց ոչ պարզունակ այն փաստի գիտակցման վրա, որ (միայն) լեզուն է, որ ապահովում է այլ մշակույթ և, հետևաբար, նաև սկզբունքորեն այլ աշխարհի մուտք գործելու բանալին:

Այն, թե լեզվին տիրապետելը որքան կարևոր և թերևս անբաժանելի նախադրյալ է ցանկալի հաջողության հասնելու համար,

շատ գործնականորեն ցույց են տալիս Գերմանիայի և Հայաստանի միջև իրավական համագործակցության հասնելու ջանքերը. Օթթո Լուիսթերիանդը միանգամայն համոզիչ կերպով ցույց է տալիս, որ (և ինչպես) վերջին հաշվով փայլուն թարգմանիչ Լևոն Սարգսյանի լեզվական գիտելիքների շնորհիվ Հայաստանում հնարավոր եղավ հաջող կողմնորոշվել դեպի գերմանական իրավական սկզբունքներն ու նորմերը: Նման հաջող փորձի մասին է հաղորդում Նարեկ Գալստյանը, ով Գերմանիայում կատարած հետազոտությունների փորձի հիման վրա շեշտադրում է «լեզվի և լեզվի կրողի մշակույթի իմացության» կարևորությունը: Այս կարևորության ըմբռնումը ակնհայտ է հայկական բուհերի համար, քանի որ նրանցից յուրաքանչյուրը գերմանագիտության ամբիոն ունի (Բրյուսովի անվան համալսարանը՝ 1936 թվականից, Պետական համալսարանը՝ 1991 թվականից): Գերմանագիտության հաջողությունը, որը բխում է նաև Գերմանիայի շահերից, կարելի է տեսնել մի կողմից այնտեղ անցկացվող գերմաներենի ուսուցիչների վերապատրաստման մեջ (որպես հիմնական պահանջ հայաստանյան դպրոցներում գերմաներենի ցանկալի դասի), տեղացի գերմանագետների կողմից կատարվող թարգմանությունների մեջ, մասնավորապես գերմանալեզու գրական տեքստերի (Ելենա Էթարյան), և մյուս կողմից՝ գերմանագիտության մեջ ստեղծված կամ նախաձեռնված գերմանական համալսարանների հետ կանոնավորված շփումների և գործակցության մեջ. այստեղ հատկապես արժե հիշատակել Գերմանական հետազոտությունների ինստիտուտի գործընկերային գործունեությունը (GIP), որը ֆինանսավորվում է ԴԱԱԴ-ի կողմից, և որը նաև առանցքային դեր է խաղացել համալսարանական համագործակցության զարգացման համար (Հալլե-Վիթենբերգի Մարթին-Լութեր համալսարան): Ցավոք, մտավախություն կա, որ այդ

չափազանց դրական զարգացումը չի կարող շարունակվել այն ծավալով, որին սովոր էինք: Հաշվի առնելով լեզվի խթանման հաջողությունը, որը մեծապես պայմանավորված է ԴԱԱԴ-ի ջանքերով, հայկական կողմը շատ է ցավում, որ ԴԱԱԴ-ն փակել է իր տեղեկատվական կենտրոնը Երևանում: Ինքնահաշվետվություններից մեկում, որը, ի թիվս այլ բաների, ընկած է ակադեմիական մակարդակով Հայաստանի և Գերմանիայի միջև հարաբերությունների զարգացման գնահատականի հիմքում (Նարեկ Գալստյան), բացահայտ կերպով նշվում է, որ «Երևանյան կենտրոնի փակումը կարազացնի հայերի մոտ հետաքրքրության կորուստը գերմաներեն լեզվի և գերմանական մշակույթի նկատմամբ»: Այս առումով, օրինաչափ է հարցնել, թե արդյո՞ք ԴԱԱԴ-ի այն ժամանակվա որոշումը իմաստուն էր, թե՞ միգուցե հակաարդյունավետ:

Գործընկերների միջև հարաբերությունների և միջոցառումների առումով արձանագրված անհամաչափությունն արտահայտվում է նաև լեզվի և մշակույթի խթանման մեջ: Գերմանիայի կողմից գերմաներեն լեզվի և գերմանական մշակույթի շատ հաջող քարոզչությունը Հայաստանում միայն մասամբ է համապատասխանում Հայաստանի կողմից Գերմանիայում հայոց լեզվի և մշակույթի քարոզչության ծավալին: Արմենուհի Դրոստ-Աբգարյանը (տե՛ս այս ժողովածուում) տպավորիչ կերպով նկարագրում է Գերմանիայում հայագիտության ներկայիս բավական անկայուն վիճակը: Հայագիտության զարգացումը, որն առաջին հերթին պայմանավորված էր գերմանական կողմի հանձնառությամբ (այստեղ հատկապես պետք է նշել առանձին անհատների, ինչպես նաև կրկին ԴԱԱԴ-ի հանձնառությունը) և, մասնավորապես, Հալլեի համալսարանում ստեղծված ՄԵՍՐՈՊ (MESROP) կենտրոնի հայագիտական հետազոտությունները այժմ ձախողման վտանգի տակ են: Որքան անվիճելի է, որ գերմանական կողմից, — ինչ-

պես կոչ է անում Արմենուհի Դրոստ-Աբգարյանը,— պետք է համապատասխան քայլեր ձեռնարկվեն, նույնքան անվիճելի է միևնույն ժամանակ, որ այդ հարցի լուծման համար անհրաժեշտ է, որ հայկական կողմը նույնպես պատրաստակամություն ցուցաբերի Գերմանիայում սեփական լեզվի և մշակույթի տարածման խնդրով զբաղվելու, ինչպես Գերմանիան է իր հերթին անում Հայաստանում՝ գերմաներեն լեզվի և գերմանական մշակույթի տարածման համար: Հարաբերությունների ներկայացված անհամաչափությունը հաղթահարելիս կարելի է ցանկություն և հույս արտահայտել, որ Հայաստանն ու Գերմանիան առնվազն այստեղ քննարկվող քաղաքական դաշտում գիտակցեն իրենց որպես «պատասխանատվության համայնք»:

Որպես լավ օրինակ, թե ինչպես կարելի է եղած անհամաչափությունը հաղթահարել, կարող է ծառայել «ԹՈՒՄՈ» կենտրոնի⁶ հիմնումը Բեռլինում, ինչը ուղղակի արձագանքն էր 2018 թվականին Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելի Երևան կատարած այցին (Բաֆֆի Քանդյան, Աշոտ Սմբատյան, Մարտին Թովմապյան): «ԹՈՒՄՈ» կենտրոնը կարելի է համարել հայկական դպրոցների և համալսարանների (իսկ դա նշանակում է՝ նաև կրթական համակարգի) արդյունավետության (անուղղակի) օրինակ՝ «նրանց պատմականորեն ուժեղ կենտրոնացվածությամբ բնական գիտությունների վրա» (Շթեֆան Քեզեբայն): Այնուամենայնիվ, այս միջոցը առայժմ մնում է որպես բացառություն, որը, ինչպես հայտնի է, միայն հաստատում է կանոնը:

⁶ «ԹՈՒՄՈ» անվան բացառապես պատմողական բացառության մասին տես. <https://tumo.org/tumo-a-drop-of-honey/> (վերջին մուտք՝ 15.11.2022)

Մշակույթ և...

Գիտության և կրթության, և իհարկե, այդ թվում նաև «մշակույթ» գործունեության դաշտի վրա կենտրոնացումը նպատակ ունի ընդգծելու դրանց հիմնարար նշանակությունը միջպետական հարաբերությունների հաստատման և զարգացման, ինչպես նաև Հայաստանի ներքին զարգացման համար: Հատկապես «մշակույթ» գործունեության դաշտում է ստեղծվում քաղաքացիական հասարակության այն հիմքը, որից կարող է առաջանալ լայն և, ի վերջո, նաև՝ ժողովրդավարական ճանապարհով օրինականացված աջակցությունը՝ միջկառավարական հարաբերությունների զարգացմանը ընդհանրապես՝ ազդեցություն թողնելով գործունեությունների մյուս ոլորտների վրա: Ի թիվս այլ բաների՝ դա ակնհայտ էր քաղաքական կուսակցությունների արմատավորման, նրանց սահմանադրման և քաղաքական կառույցներում խորհրդարանական ներգրավվածության առումով. դա ակնհայտ է իրավական նորմերի նոր ձևակերպման, և դա կրկին ու կրկին ակնհայտ է հատկապես տնտեսական ոլորտում: Որովհետև Խորհրդային Միությունից անջատվելուց և պլանայինից՝ շուկայական տնտեսության ցանկալի փոխակերպումից հետո առաջացան գործելու առանձնահատուկ պահանջներ (Քեզեբայն), որոնք նույնպես նպատակաուղղված էին նման տնտեսության լայն ընդունմանը:⁷ Այդպիսի փոխակերպման անմիջական սոցիալական հետևանքների⁸ (ոչ միայն տեսական) հնարավոր-

⁷ Հարկ է միայն ի միջի այլոց նշել, թե ինչպես է նման տնտեսական մեթոդի ընդհանուր ընդունման հարցը կրկին կենտրոնական և պայթուցավտանգ դարձել՝ կլիմայական ձգնաժամի վերաբերյալ ներկայիս բանավեճերի պատճառով, որոնք ընթանում են ոչ միայն Եվրոպայում:

⁸ Դիվանագիտական հարաբերությունների հաստատման ժամանակ Գերմանիան նույնպես վերափոխման գործընթացի մեջ էր, կային հսկայական սոցիալական ցնցումներ և քաղաքական հակամարտությունների վտանգ:

րության ետնապատկերին նման տնտեսության ընդունման հարցը դառնում է առավել կարևոր: Դրան հասնելու համար անհրաժեշտ է քաղաքացիական հասարակություն, որը համոզված է համապատասխան քաղաքական գաղափարներում, ինչպես նաև այն բանում, որ մշակութային գործունեությունը կենտրոնական տեղ է զբաղեցնում այդ գործում: Եթե միանգամայն տրամաբանական է մեկ շնչով հիշատակել ժողովրդավարական սահմանադրական պետությունը, սոցիալական շուկայական տնտեսությունը և ազատ քաղաքացիական հասարակությունը (Օթթո Լուիս-թերհանդթ), ապա, ընդհակառակը, սա նաև նշանակում է, որ եթե տնտեսական վերափոխումը ձախողվի, այն ի վերջո կհանգեցնի ժողովրդավարական գործընթացի ձախողման, կամ առնվազն կվտանգի այն: Այստեղ ևս մեկ անգամ հաստատվում է մշակութի գործունեության դաշտի կենտրոնական նշանակությունը և դիվանագիտական հարաբերությունների 30 տարիների ընթացքում այդ գործունեության դաշտի վրա ուշադրության համապատասխան կենտրոնացման ճիշտ լինելը:

Այնուամենայնիվ, անվիճելի է մնում, որ տնտեսական երկխոսությունը նպաստում է նաև քաղաքական երկխոսությանը (Շտեֆան Քեզեբայն), և որ «տնտեսություն» գործունեության դաշտը, ամենայն հավանականությամբ, կնպաստի այն ապացույցների տրամադրմանը, որ երկու կողմերն էլ կարող են անմիջապես հաշվի առնել, որ դիվանագիտական հարաբերությունների հաստատման շնորհիվ հնարավոր դարձած երկկողմ հարաբերությունների զարգացումը բխել և բխում է «փոխադարձ շահերից»: Չնայած բոլոր տատանումներին՝ համապատասխան առանցքային թվերը դրական զարգացում են ցույց տալիս (Մերի Նավասարդյան / Սոս Խաչիկյան): Դրանից զատ, սակայն, ներկայումս պարզ է դառնում հրատապությունը՝ կապված գլոբալ կոնֆլիկտային իրավիճակ-

ների և խնդիրների հետ, որ տնտեսական հարաբերությունների ընդլայնումը մի կողմից կարող է այժմ արդեն լինել իրոք «փոխշահավետ», և որ այդ տնտեսական հարաբերությունների ընդլայնումը կարող է մյուս կողմից նշանակալից դարձնել նաև բազմակողմ բաղադրական երկխոսությունը. սա, ի թիվս այլ բաների, ազդում է էներգետիկայի ոլորտի վրա (վերականգնվող էներգիայի ընդլայնում), թվայնացման վրա և կապված առաքման շղթաների ներկայիս գլոբալ խափանումների հետ (ինչի հսկայական համաշխարհային տնտեսական հետևանքները բոլորին տեսանելի դարձան)՝ տրանսպորտային երթուղիների ապահովման վրա («Հայաստանի մասնակցությունը ցամաքային տրանսպորտային ցանցում», այսինքն՝ «միջանկյալ տրանսպորտային երթուղու օգտագործումը Ասիայի և Եվրոպայի միջև» Մերի Նավասարդյան / Սոս Խաչիկյան, նաև՝ Աշոտ Ոսկանյան):

Հայացք դեպի ապագա...

Վերջապես, վերջին նշված ասպեկտը, որը «տնտեսություն» գործունեության դաշտից տեղափոխում է մեզ բաղադրական դաշտ, այժմ թույլ է տալիս ևս մեկ անգամ անդրադառնալ քաղաքականության և դիվանագիտության այդ ոլորտին: Սակայն ոչ թե հանրագումարի բերելու առումով, այլ հույսերի ու ցանկությունների: Ըստ «մեծ» Գերմանիայի և «փոքր» Հայաստանի հարաբերությունների մեջ կրկին առկա թափանցիկ անհամաչափության, այդ հարաբերությունները այստեղ ձևակերպվում են առաջին հերթին հայկական կողմից: Անկախ բոլոր գլոբալ խնդիրներից և հակամարտություններից՝ Հայաստանն իրեն տեսնում է անմիջական գոյաբանական սպառնալիքի ներքո, ինչը առավել քան պարզ դարձավ բոլորի համար Ադրբեյջանի կողմից վերջին ռազմական ագրեսիայի միջոցով: Այստեղ հայ հանրության մոտ մեծ

կասկածներ են առաջանում Ռուսաստանի՝ որպես «պաշտպան տերության»՝ Հայաստանի համար անվտանգության երաշխիքներ տրամադրելու պատրաստակամության կամ կարողության վերաբերյալ: Ադրբեջանի⁹ ռազմական հարձակման դեպքում դիտարկվում է համապատասխանաբար գնահատվում է Եվրամիության արձագանքը ընդհանրապես և Գերմանիայինը՝ մասնավորապես: Հատկանշական է, երբ Գերմանիայում Հայաստանի երկու նախկին դեսպանները (և, հավանաբար, այդ իսկ պատճառով իրենց հայտարարությունների նկատմամբ դիվանագիտական զսպվածության պակաս ցուցաբերող) նշում են, որ «արժեքային արտաքին քաղաքականությունը», որը Գերմանիան քարոզում է արդեն մի ամբողջ տարի, գործողությունների հիմք է հանդիսանում նաև Ադրբեջանի նկատմամբ (Աշոտ Սմբատյան, Աշոտ Ոսկանյան): Ակնհայտ է, որ այս համալիր խնդիրների հետ առնչվելն ուղղակիորեն ազդում է նաև Գերմանիայի ակնկալիքների իրականացման վրա՝ կապված Հայաստանի՝ ավելի ուշ կամ ավելի շուտ դեպի Եվրամիություն կողմնորոշման և դրա հետ կապված՝ նաև Ռուսաստանի նկատմամբ դիրքորոշման վրա: Գերմանիայի կողմից պետք է ընդունել և շատ լուրջ մոտենալ այն հարցին, որ Հայաստանում՝ որպես գոյապահպանական ընկալվող սպառնալիքներով պայմանավորված «արդիական [և էական] են դարձել ազգային ինքնության և արժեքային ասպեկտների ձևավորման խնդիրները» (Աշոտ Ալեքսանյան): Այս առումով առավել քան պարզ է, որ Գերմանիան պետք է վստահելի և հետևողական դիրքորոշում որդեգրի՝ գործընկերային հարաբերությունների հա-

⁹ Մանրամասների համար տե՛ս Բաֆֆի Քանդյան, Հատուկ էսկալացիա. Ադրբեջանը հարձակվում է Հայաստանի վրա: Ո՞րն է սրա շարունակությունը: Հայ-գերմանական նամակագրություն. 198 հատոր, 2022, թողարկում 3, էջ 5–8, հատկապես էջ 5:

մար հայկական ինքնապատկերի (իմիջի) անվիճելի ճանաչման և արժևորման հարցում: Գործընկերային քննարկումը ենթադրում է նաև, որ կարելի է ակնկալել ձշմարտություններ, նույնիսկ եթե դրանք ցավալի են: Այդ առումով հաշտեցնող և, հուսանք ընդունելի գնահատականը պատկանում է Թիլ Մանսմանին. «Հայաստանի միջնաժամկետ և երկարաժամկետ անվտանգային շահերը կարող են ապահովվել թերևս միայն իր հարևանների հետ հաշտության միջոցով»:

Մենք՝ գերմանացիներս, գիտենք, թե որքան բարդ և երկարատև են նման գործընթացները: Բայց նաև գիտենք, որ դրանք կարող են հաջողակ լինել: Մեր սեփական պատմության ետնապատկերի վրա մեր պատասխանատվության պարտքը պետք է լինի այդ գործընթացներում այն ժողովուրդներին և պետություններին աջակցելը, որոնք կիսում են նույն արժեքները, ինչ մենք: Ես հիացած եմ այն պրագմատիզմով, որ ցուցաբերում են հայերն այս հարցում՝ չնայած որ վերապրել են Ցեղասպանություն: Հեշտ և, ի վերջո, հասկանալի կլինեն Ադրբեջանի և Թուրքիայի նկատմամբ համառ, շարունակաբար մերժողական դիրքորոշում որդեգրել: Հայ ժողովուրդը հաճախ պրագմատիկ իմաստություն է ցուցաբերում այս հարցում, որով ես հիացած եմ»:

Այս իմաստով, «փոխադարձ շահերից» ելնելով, կարելի է ակնկալել ևս 30 տարվա լավ և արդյունավետ համագործակցություն:

Հավելված

Հեղինակների անվանացանկ



Աշոտ Ալեքսանյան, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի քաղաքագիտության ամբիոնի վարիչ, ինչպես նաև Եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնի դասախոս: Հիմնական հետաքրքրություններն են քաղաքացիական հասարակությունը, սոցիալական գործընկերությունը, մարդու քաղաքական իրավունքներն ու ազատությունները: 2002–2016 թթ. եղել է Գերմանիայի ակադեմիական փոխանակման ծրագրի (DAAD) և ԵՄ «Էրազմուս Մունդուս»-ի հրավիրված գիտնական (Հանովերի, Մյունխենի Լյուդվիգ-Մաքսիմիլիան, Յենայի Ֆրիդրիխ Շիլլեր, Լյուվենի Կաթոլիկ և Բեռլինի Ազատ համալսարանների քաղաքագիտության ինստիտուտներում):

2016 թվականից նա Յենայի Ֆրիդրիխ Շիլլեր համալսարանի քաղաքագիտության ինստիտուտի հրավիրված գիտնական է:



Նարեկ Գալստյան, քաղաքական գիտությունների թեկնածու, դոցենտ: Աշխատում է Երևանի պետական համալսարանի քաղաքագիտության ամբիոնում և Եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնում: 2006 թ–ից դասավանդում է «Փոքր պետությունների արտաքին քաղաքականություն», «Տարածաշրջանագիտության հիմունքներ», «Եվրոպական ինտեգրման տեսություն և արդիականություն», «ԵՄ արտաքին և անվտանգության քաղաքականություն» առարկաները: 2007–2014 թթ. աշխատել է Հայաստանի եվրոպական համալսարանում, միջազգային հարաբերությունների ֆակուլտետում: 2009, 2013, 2018, 2022 թվականներին ԴԱԱԴ հրավիրյալ հետազոտող է եղել Ֆրիդրիխ Շիլլեր համալսարանում: 2017 թ–ից Եվրոպական հարևանության խորհրդի (Բրյուսել, Բելգիա) Գիտական խորհրդի անդամ է, 2017 թ–ից անդամակցում է Եվրոպական ուսումնասիրությունների Կովկասի ընկերակցությանը (Թբիլիսի, Վրաստան), իսկ 2011 թ–ից՝ Հայաստանի քաղաքական գիտության ասոցիացիային (Երևան, Հայաստան):



Արմենուհի Դրոստ–Աբգարյան, դոկտոր, Քրիստոնեական արևելքի սեմինար / Արևելագիտության ինստիտուտի, Հալլե–Վիթենբերգի Մարտին–Լյութեր համալսարանի պրոֆեսոր (2022 թվականից թոշակի անցած),

ԴԱԱԴ-ի (DAAD) հայագիտության պրոֆեսոր (2010–2014 թթ.), հայագիտության արտապլանային պրոֆեսոր (2014–2021 թթ.), Հայագիտական հետազոտությունների Մեսրոպ (Mesrop) կենտրոնի հիմնադիր–անդամ, իսկ 2010 թվականից նույն կենտրոնի ղեկավար (1998–2021 թթ.), Հայագիտական ուսումնասիրությունների միջազգային ընկերության (AIEA) խորհրդի անդամ (Ժնև, 2013–2017 թթ.), Պոտսդամի Լեփսիուսի տուն–արխիվի խորհրդի անդամ (2007–2010 թթ.), Մարտին–Լյութեր համալսարանի և ԵՊՀ-ի միջև համալսարանական գործակցության համակարգող (2008–2018 թթ.): 2019 թվականից Լեհաստանի գիտությունների ակադեմիայի հայկական մշակույթի հարցերով գիտական խորհրդի անդամ:



Հանս Յոախիմ Զորյան, դոկտոր, պրոֆեսոր, պատվավոր դոկտոր, 2020 թվականից համալսարանի թոշակավորված պրոֆեսոր՝ Հալլե–Վիթենբերգի Մարտին–Լյութեր համալսարանի «Գերմաներեն լեզվի և հին գերմանական գրականության պատմության» ամբիոնում (1996–2020 թթ.), Հերդերի անվան դոցենտություն (2022 թվականից) Երևանի Բրյուսովի անվան պետական համալսարանում, «Լայպցիգի՝ սաքսոնական գիտությունների ակադեմիայի» և «Գերմաներենի ուղղագրության խորհրդի» իսկական անդամ, ԴԱԱԴ-ի գծով՝ Հալլե–Վիթենբերգ համալսարանի Գերմանագիտության ինստի-

տուտի և Բրյուսովի անվան համալսարանի գերմաներեն լեզվի ամբիոնի միջբուհական բազմամյա գործընկերության ղեկավար, Հալլեի համալսարանի և Բրյուսովի համալսարանի միջև համալսարանական գործընկերության համակարգող (2017–2020 թթ.), 2015 թ–ից՝ Բրյուսովի համալսարանի պատվավոր դոկտոր:



Ելենա Էթարյան, բանասիրական գիտությունների դոկտոր, Բրյուսովի պետական համալսարանի (ԲՊՀ) գերմաներենի ամբիոնի դոցենտ, ԲՊՀ–ի շրջանավարտ (1990–1995 թթ.): 1992–1993 թթ. գերմանագիտություն է ուսանել Ռոստոկի համալսարանում, 1999–2000 թթ. համեմատական գրականագիտություն՝ Թյուրինգենի համալսարանում: Ալեքսանդր ֆոն Հումբոլդտ հիմնադրամի շրջանակներում 2017–2019 թթ. դոկտորական ատենախոսության նպատակով հետազոտություն է իրականացրել Դյուսելդորֆի Հայնրիխ Հայնե համալսարանում: Մասնագիտական վերապատրաստումներ է անցել Յենայի, Մայնցի, Գյոթինգենի, Հայդելբերգի, Հալլե–Վիթենբերգի համալսարաններում: Քանիցս կրթաթոշակներ է ստացել գերմանական տարբեր՝ DAAD, KAAD, Ալեքսանդր ֆոն Հումբոլդտ հիմնադրամներից: Գերմանախոս երկրների հայ նախկին կրթաթոշակակիրների միության (AADL) փոխնախագահն է, KAAD–ի ընտրող հանձնաժողովի անդամ: Անդամակցում է նաև FaDaF–ին և IVG–ին:

2021 թ.-ից սկսած ԲՊՀ-ի գերմաներենի ամբիոնի և Դյուսելդորֆի Հայնրիխ Հայնե համալսարանի գերմանագիտության ինստիտուտի միջև կնքված «Էրագմուս+» շարժունության ծրագրի (KA 171) պատասխանատուն է: 2022 թվականից 066 «Արտասահմանյան գրականություն» մասնագիտական խորհրդի անդամ:



Մարտին Թովմասյան, Երևանի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետի արտաքին կապերի գծով դեկանի տեղակալ (2019 թ.-ից): Միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի դասախոս:

Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի ակադեմիական համակարգող: Գերմանիայի Բունդեսբազի միջազգային խորհրդարանական կրթաթոշակառու. Կարլ Ֆրիդրիխ Գերդելեր քոլեջի կրթաթոշակակիր («Ռոբերտ Բոշ» հիմնադրամ, DGAP):



Օթթո Լուխերհանդթ, իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր, Հանրային իրավունքի և Արևելյան Եվրոպայի իրավունքի համալսարանի պրոֆեսոր, ինչպես նաև Համբուրգի համալսարանի իրավագիտության ֆակուլտետի Արևելյան Եվրոպայի իրա-

վունքի հետազոտությունների բաժնի տնօրեն (1991 թվականից մինչև 2008 թվական՝ թոշակի անցնելը): 1972 թվականից հեղինակ է ավելի քան 300 հրապարակումների (բացի գրախոսությունները)՝ Խորհրդային Միության իրավունքի, նրա իրավահաջորդ պետությունների իրավական համակարգերի, Արևելակենտրոնական և Հարավարևելյան Եվրոպայի պետությունների ու միջազգային իրավունքի վերաբերյալ: 1992 թվականից ի վեր Գերմանիայի դաշնային կառավարության (GTZ/GIZ և IRZ հիմնադրամների և EU-TACIS ծրագրերի) իրավախորհրդատու ամբողջ հետխորհրդային տարածաշրջանում՝ կենտրոնանալով Ռուսաստանի, Ուկրաինայի, Հայաստանի և Կենտրոնական Ասիայի վրա: Նշանակալի է ներդրումը Հայաստանի Հանրապետությունում GTZ/GIZ ընկերության իրավաբանական խորհրդատվության ծրագրում (1995–2020 թթ.): Հեղինակել է Լեոնային Ղարաբաղի Հանրապետության/Արցախի ինքնորոշման իրավունքի վերաբերյալ մեկ տասնյակից ավելի աշխատություններ (1992 թվականից): Պարգևատրվել է Հայաստանի Հանրապետության «Մխիթար Գոշ» մեդալով՝ Հայաստանի իրավական համակարգի արդիականացմանը նպաստելու համար (2013 թ.):



Սոս Խաչիկյան, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ: Աշխատում է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում, Ինֆորմատիկայի և վիճակագրության ֆակուլտետի դեկանն է (2018 թ–ից): Եղել է ՀՊՏՀ Եղեգնաձորի մասնաճյուղի տնօրեն (2011–2018 թթ.), դասավանդել է Պետական կառավարման ակադեմիայում, Եվրոպական տարածաշրջանային ակադեմիայում և բարձրագույն կրթական այլ հաստատություններում: Միջազգային հետազոտական ծրագրեր է իրականացրել Քեմբրիջի համալսարանում (ՄԹ, 2005 թ.), Մասաչուսեթսի համալսարանում (ԱՄՆ, 2009 թ.), Բրեմենի և Ցվիկաուի համալսարաններում (Գերմանիա, 2007–2022 թթ.) և այլն: Համակարգել է քաղաքացիական կրթության, սոցիալական նորարարության, տեխնոլոգիական լուծումների ու կրթության վերաբերյալ նախագծեր: Որպես ՄԱԿ–ի Զարգացման ծրագրերի, Գերմանական միջազգային համագործակցության և այլ միջազգային ծրագրերի փորձագետ՝ նա կենտրոնացել է տեղական ինքնակառավարման և տարածքային կառավարման խնդիրների վրա:



Թեասա Հոֆման, պատվավոր պրոֆեսոր, փիլիսոփայության դոկտոր, բանասեր (սլավոնագիտություն, հայագիտություն), հասարակագետ և ցեղասպանագետ, ուսումնասիրության շրջանակը՝ Օսմանյան Թուրքիայի ցեղասպանությունը: Հայաստանի և նրա սփյուռքի պատմության և ներկա իրավիճակի մասին բազմաթիվ գիտա-հանրամատչելի գրքերի ու հրապարակումների հեղինակ է: 1983–2015 թթ. Բեռլինի Ազատ համալսարանի Արևելյան Եվրոպայի ինստիտուտի գիտաշխատող: 2019 թվականից «Ցեղասպանության վիրտուալ հուշահամալիր» (<https://virtual-genocide-memorial.de>) կայքի պատվավոր գիտական խմբագիր: «Ճանաչում-ընդդեմ ցեղասպանության, հանուն միջազգային փոխըմբռնման» (AGA) աշխատանքային խմբի՝ շահույթ չհետապնդող իրավապաշտպան կազմակերպության նախագահ, 2015 թվականից Երևանի պետական համալսարանի պատվավոր պրոֆեսոր:



Շտեֆան Մալերիուս, Կոնրադ Ադենաուեր հիմնադրամի «Քաղաքական երկխոսություն. Հարավային Կովկաս» տարածաշրջանային ծրագրի ղեկավար (05.2022 թվականից): Թիմի ղեկավարի տեղակալ, Կոնրադ Ադենաուեր հիմնադրամ (ԿԱՀ, Բեռլին) (01.2017 – 02.2022), թիմի ղեկավար, Եվրոպական հանձ-

նաժողով (ԿԱՀ, Կիև) (09.2013 – 12.2016), գրասենյակի ղեկավար, Կոնրադ Ադենաուեր հիմնադրամ (Վիլնյուս) (04.2007 – 10.2011), Համբուրգի (Գերմանիա) համալսարանի սլավոնագիտության և գերմանագիտության մագիստրոսի կոչում:



Թիլ Մանսման, Բունդեսբազի անդամ (2017 թվականից), Ֆինանսական հանձնաժողովի և տնտեսական համագործակցության և զարգացման հանձնաժողովի իսկական անդամ, ՖԴՓ (FDP) կուսակցության խորհրդարանական խմբակցության զարգացման քաղաքականության խոսնակ, կրթության և հետազոտությունների դաշնային նախարարության կանաչ ջրածնի նորարարության պատասխանատու (2022 թվականի օգոստոսից), Արևմտյան Աֆրիկայի հարցերով խորհրդարանական խմբի փոխնախագահ, Բեռլին–Թայբեյ բարեկամական խմբի և Գերմանա–հարավկովկասյան խորհրդարանական խմբի անդամ, Գերմանա–հայկական ֆորումի նախագահ և Բնակչության ու զարգացման խորհրդարանական խորհրդի անդամ, Զարգացման գործակցության գերմանական գնահատման ինստիտուտի խորհրդի անդամ (2018 թվականի հոկտեմբերից), Պարենի համաշխարհային աշխատանքային խմբի անդամ:




Նարեկ Միկելյան-Բախսովհանի, գերմանագիտության շրջանավարտ, գրական թարգմանիչ (վրացերեն–գերմաներեն) և մշակույթի պատասխանատու, Երևանի «Գյոթե» կենտրոնի ղեկավար (2017 թվականից), Թբիլիսիի (Վրաստան) «Գյոթե» ինստիտուտի ծրագրի աշխատակից և թարգմանիչ (1995–2017 թթ.), սովորել է Լայպցիգի համալսարանի ասպիրանտուրայում և գրական թարգմանություններ բաժնում՝ Թբիլիսիի թարգմանչական քոլեջում (1991–1994 թթ.), սովորել է Լայպցիգի համալսարանի գերմանագիտության և գրականագիտության մագիստրատուրայում (1983–1988 թթ.):



Մերի Նավասարդյան, Գերմանական տնտեսական միավորման (ԳՏՄ) գործադիր տնօրեն (սկսած 2020 թ–ից), DAAD/ԳԱՓԾ տեղեկատվական կենտրոնի ղեկավար (2018–2020 թթ.), DAAD/ԳԱՓԾ ծրագրերի գլխավոր խորհրդատու (2006–2018 թթ.), DAAD/ԳԱՓԾ և գերմանախոս երկրների շրջանավարտների միավորման նախագահ (սկսած 2011 թ–ից), դասախոս ԵՊՀ–ում և Բրյուսովի անվան համալսարանում (սկսած 2011 թ–ից), Երևանի պետական բժշկական համալսարանի գերմանախոս ծրագրերի համակարգող (1998–2006 թթ.):



Էբարթ Շթրաթենշուլթե, պրոֆեսոր, դոկտոր, դասախոս և հրապարակախոս, Բեռլինի Ազատ համալսարանի պատվավոր պրոֆեսոր քաղաքագիտության ոլորտում, դիպլոմավորված սոցիոլոգ: Պետական քննությամբ ստացել է գիմնազիաներում դասավանդելու իրավունք: Մարբուրգի Ֆիլիպս համալսարանում ատենախոսություն է պաշտպանել փիլիսոփայության դոկտորի աստիճանի համար, 1993–2017 թվականներին ղեկավարել է Բեռլինի Եվրոպական ակադեմիան: Եղել է Բեռլինի Միջեվրոպական հետազոտությունների ինստիտուտի ղեկավարի տեղակալը (1978–1981), ապա ղեկավարը (1981–1989 թթ.), Բեռլինի Սենատի գրասենյակի բաժնի վարիչ (1989–1993 թթ.), Europe Direct տեղեկատվական կենտրոնի անդամ (Եվրահանձնաժողովի խոսնակների թիմում), Եվրոպական ինտեգրման աշխատանքային խմբի նախագահության անդամ, Կիևի Տարաս Շևչենկոյի անվան համալսարանի պատվավոր դոկտոր:



Աշոտ Ոսկանյան, փիլիսոփայության դոկտոր, դոցենտ: Հայաստանի Ամերիկյան համալսարանի հրավիրյալ դասախոս: Ավելի քան հիսուն գիտական՝ հայերեն, ռուսերեն, գերմաներեն, անգլերեն և ֆրանսերեն հրապարակումների հեղինակ է, որոնց թվում՝

«Հասկացման անխուսափելիությունը. դրվագներ փիլիսոփայական հերմենևտիկայի և կազմաքանդման պատմությունից» (Եր., 2015) և «Չարենցի ժամանակը (Ոգու մասին)» (Եր., 2017) մենագրությունները: 1993 թ–ին հիմնադրել է Հումանիտար հետազոտությունների հայկական կենտրոնը, որի նախագահն է մինչ այժմ: Կենտրոնի երեք տարեգրքերի կազմողն ու գլխավոր խմբագիրն է՝ «Ինքնություն» (Եր., 1995), «Հայաստանը Եվրոպայի ձանապարհին. Ինքնություն–2» (Եր., 2005): Երրորդ տարեգիրքը բաղկացած է երկու հատորից՝ «Հայաստան 2018. Իրողություններ և հեռանկարներ» Ինքնություն 3 (1), (Եր., 2019) և Ինքնություն 3(2) (Եր., 2020): Քսան տեսադասախոսություններից բաղկացած փիլիսոփայության դասընթացը է ներկայացրել Boon.TV համացանցային հարթակում: Եղել է առաջին անկախ խորհրդարանի՝ ՀՀ Գերագույն խորհրդի պատգամավոր և էթիկայի մշտական հանձնաժողովի նախագահ (1990–1995 թթ.): Հետագայում՝ ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր, ինչպես նաև ՀՀ Սահմանադրական հանձնաժողովի անդամ և Ազգային եկեղեցական ժողովի պատվիրակ: 1997 թ. նշանակվել է ՀՀ դեսպան Ավստրիայում, Հունգարիայում, Չեխիայում և Սլովակիայում, ինչպես նաև ՀՀ մշտական ներկայացուցիչը ԵԱՀԿ–ում և ՄԱԿ–ի՝ Վիեննայում տեղակայված կազմակերպություններում: 1995–2002 թթ.՝ ՀՀ դեսպան Գերմանիայում: 2002–2017 թթ. զբաղեցրել է տարբեր պաշտոններ ՀՀ ԱԳՆ–ում:



Աշոտ Սմբատյան, (ծն. 1969 թ. ապրիլի 30, Հայաստան) միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո սովորել է Երևանի պետական համալսարանի մաթեմատիկայի ֆակուլտետում: ԴԱԱԴ-ի (DAAD) կրթաթոշակառուի կարգավիճակով սովորել է Դրեզդենի տեխնիկական համալսարանում և Լայպցիգի համալսարանում: 1993–1996 թթ. որպես կրկնուսույց աշխատել է Բեռլինի Հումբոլդտի համալսարանի մաթեմատիկայի ֆակուլտետում և տնտեսագիտություն ուսանել Բեռլինի Հումբոլդտ համալսարանում: Գերմանական «Շնորհալի երեխաների» ընկերությունում հետագա մանկավարժական գործունեությունից հետո՝ 1999 թվականին, աշխատանքի է անցել Հայաստանի Հանրապետության դեսպանատանը (Բոնն)՝ զբաղեցնելով անձնական օգնականի պաշտոնը: Տարբեր պաշտոններ է զբաղեցրել Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում գտնվող Հայաստանի Հանրապետության դեսպանությունում և ՀՀ արտաքին գործերի նախարարությունում: 2012 թվականին ավարտել է Միջազգային դիվանագիտական ուսումնառությունը (Բեռլինի Արտաքին ծառայության ակադեմիա): 2015 թվականի մայիսին նշանակվել է Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության դեսպան: 2018 թվականի դեկտեմբերի 13-ից համատեղությամբ պաշտոնավարում է նաև Լիխթենշթայնի Իշխանությունում՝ որպես Հայաստանի Հանրապետության հավատարմագրված դեսպան (նստավայրը՝ Բեռլին): Ունի

դիվանագիտական աստիճան՝ արտակարգ դեսպանորդ և լիազոր նախարար:



Ալբերտ Վալյեր, Հյուգենլանդ-Թելեր վարչական համայնքի նախագահ, Քրիստոնյա-դեմոկրատական միության «Լեռնաշխարհ/Միլդա» տեղական միավորման նախագահ, *Յենս* խմբի փոխնախագահ, 2004 թվականից *Միլդա* համայնքի պատվավոր քաղաքապետ, Թյուրինգիայի՝ ուսուցիչների վերապատրաստման ինստիտուտի դոցենտ, գործակցում է Բադ Բեռլա քաղաքի ուսումնական ծրագրերի զարգացմանն ու ՋԼՄ-ներին: 2013–2021 թվականներին Գերմանիայի Բունդեսթագի պատգամավոր, Գերմանա–հայկական ֆորումի հիմնադիր (2015 թվականի մայիս), Հայաստանի ճարտարապետության և շինարարության ազգային համալսարանի պատվավոր դոկտոր:



© Andreas Labes

Կատերինա Փոլադյան, գրող, Լյուսեբուրգի Լոյֆանա համալսարանի կիրառական մշակութային հետազոտությունների բաժնի արվեստագիտության մագիստրոս: Ստեղծագործությունները՝ «Մեկ գիշերում, ինչ–որ մեկ այլ տեղ» (վեպ, «Ռոփոլտ» հրատ., Բեռլին, 2011), «Միզուցե Մարսել» (վեպ, «Ռոփոլտ» հրատ.,

Բեռլին, 2015), «Սիբիրից այն կողմ» (գրական ճանապարհորդություն Հենինգ Ֆրիչի հետ միասին, «Ռովոլտ» հրատ., Բեռլին, 2016), «Այստեղ առյուծներ են» (վեպ, «Ս. Ֆիշեր» հրատ., 2019, առաջադրվել է Գերմանական լավագույն գրքի մրցանակի և արժանացել Նելլի-Ջաքսի մրցանակի), «Ապագայի երաժշտություն» (վեպ, «Ս. Ֆիշեր» հրատ., 2022, առաջադրվել է Լայպցիգի գրքի տոնավաճառի և Վիլհելմ-Ռաբերի մրցանակի, արժանացել է Դրեզդեն քաղաքի *Շամիսոն* և *Ռայնգաու* գրական մրցանակներին:



Րաֆֆի Քանդյան, Գերմանա-հայկական միության (ԳՀՄ-DAG) նախագահ, նույն միության ԱԴԿ (ADK) ամսագրի խմբագիր, Գերմանա-հայկական միության գիտաժողովների և Բեռլինյան զեկուցաշարի ղեկավար: Կազմել է «Հայաստան. *տվե՞ք լույս* և *ազատություն*» գրականություն և արվեստ Հայաստանից» և «Արծաթե բանալիով փակված. գրականություն Հայաստանից, Ադրբեջանից, Վրաստանից» (հայերեն մասը) անթոլոգիաները: Առանձին հատորներով հրատարակության է պատրաստել Պարույր Սևակի «Երգ երգոց» և Զարեհ Խրախունու «Քար Հայաստանի» ստեղծագործությունները: Գերմանա-հայկական միության պատվավոր անդամ, Հայաստանի գրողների միության արտասահմանյան անդամ, Հայաստանի գրողների միության «Կանթեղ» մրցանակակիր, Հայաստանի մշակույթի նախարարության կրկնակի ոսկե

մեդալակիր, Հայ առաքելական եկեղեցու «Սուրբ Սահակ, Սուրբ Մեսրոպ» շքանշանակիր, պարգևատրվել է Հայաստանի Հանրապետության **Մովսես Խորենացու մեդալով**:



Շթենֆան Քեզերայն, քաղաքագիտություն է ուսումնասիրել Բեռլինի Ազատ համալսարանում՝ հիմնական ուղղվածությունը՝ միջազգային հարաբերություններ, եվրոպական արտաքին քաղաքականություն և քաղաքական փիլիսոփայություն: 2007 թվականից

Գերմանական տնտեսության Արևելյան հանձնաժողովի տնօրենների խորհրդի անդամ է: Սկզբնապես պատասխանատու լինելով միության զարգացման նախագծերի և կրթաթոշակային ծրագրերի մշակման ու իրականացման համար՝ 2016 թվականից համակարգում է աշխատանքային խումբը, իսկ 2018 թվականից Արևելյան Եվրոպայի բաժնի տարածաշրջանային տնօրենն է և պատասխանատու է Հայաստան, Ադրբեջան, Բելառուս, Վրաստան, Մոլդովա և Ուկրաինա երկրների համար: Ուկրաինայի և Հայաստանի միջերկրային կոմիտեների անդամ է և ակտիվ գործունեություն է ծավալում *Ռոթթրի Գերմանիա* հարավկովկասյան տարածաշրջանային ֆորումում:



Ռոյ Քնոքե, դոկտոր, Պոստդամի
Լեփսիուսի տուն–արխիվի տնօրեն,
2013 թվականից Պոստդամի համալսարանի դասախոս՝ Յեղասպանագիտության և մարդասիրության պատմության ոլորտներում: 2022 թվականից համագործակցում է Էրլանգեն–Նյուրնբերգի Ֆրիդրիխ–Ալեքսանդր համալսարանի «Յոհաննես Լեփսիուս. ուսումնասիրություններ հայկական հարցի վերաբերյալ» գերմանական գիտա–հետազոտական միավորման (DFG) նախագծի աշխատանքներին:



© Marlena Waldthausen

Լաուրա Քվիրթսիա, «Ժամանակ» (DIE ZEIT) շաբաթաթերթի բաժնի վարիչի տեղակալ: Ծնվել է Բրեմենում 1987 թվականին, հայրը՝ հայ, մայրը՝ գերմանուհի: 2022 թվականի գարնանը նրա առաջին վեպը («Փողոցում մեզ այլ կերպ են անվանում») լույս է տեսել «Բլեթ–Գոթա» հրատարակչությունում: Վեպում նկարագրվում է հայ ընտանիքի չորս սերունդների ճակատագրերը՝ Բրեմենի ու Ստամբուլի, Երուսաղեմի ու Երևանի միջև:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Այս ժողովածուում ընդգրկված հոդվածների բովանդակության, ինչպես նաև արտահայտած կարծիքների ու տեսակետների համար պատասխանատվություն են կրում բացառապես հեղինակները:

Տեքստի, ինչպես նաև բոլոր անուն–անվանումների գրության միասնական ձև ապահովելու համար զգուշավոր միջամտություն է արվել:

Ինչ վերաբերում է հետազոտական գրականությանը՝ աղբյուրներին կամ հղումներին, հոդվածներում օգտագործվում են երկու տարբերակ՝ մեծ մասամբ ծանոթագրություններ, և նաև՝ հղումներ մատենագիտական ցանկին:

Հայ-գերմանական դիվանագիտական հարաբերությունների 30 տարի

Կոնրադ Ադենաուեր հիմնադրամ

<i>Թարգմանիչներ՝</i>	Կառլեն Մատինյան
<i>Խմբագիր՝</i>	Հրաչյա Ստեփանյան
<i>Շապիկի ձևավորումը՝</i>	Ալա Խառատյան
<i>Տեխնիկական խմբագիր՝</i>	«Թումո» դիզայն-ստուդիայի
<i>Համակարգչային էջադրումը՝</i>	Նվարդ Փարսադանյան
<i>Սրբագրությունը՝</i>	Լիլիթ Կարապետյանի Լուսինե Դավթյանի

Տպագրությունը՝ օֆսեթ: Չափսը՝ 60x84 1/16
Թուղթը՝ օֆսեթ: Ծավալը՝ 31 տպ. մամուլ

Տպագրվել է «Զանգակ-97» ՍՊԸ-ի տպարանում
ՀՀ, 0051, Երևան, Կոմիտասի 49/2
Հեռ.՝ (+37410) 23 25 28, էլ. փոստ՝ info@zangak.am
Էլ. կայքեր՝ www.zangak.am, www.book.am
Ֆեյսբուքյան կայքէջ՝ www.facebook.com/zangak

